

Հայրենիք – Ափսոսք.
Կամփոջող անուն

Կ. ԱՄԱՉԱՄԴՅԱՆ

100

9(44.925)
Հ-30
հշ.

Հայրենիք-Սփյուռք. Կամրջող անուն

Վ. Համազասպյան



6144

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ

*Կազմեցին և ծանոթագրեցին՝
Սոնյա Միրզոյանը և Մարինե Մարտիրոսյանը
Հրատարակչական խմբագիր և լրացումներ՝
Գևորգ Յազըճյան*

Հայրենիք – Սփյուռք. կամրջող անուն: Վ. Համազասպյան
Հ 304 Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ
(1964-1985թթ.): Փաստաթղթերի ժողովածու/ Կազմող և ծանոթագրություն՝
Սոնյա Միրզոյանը և Մարինե Մարտիրոսյանը. – Եր.: «Մուղնի», 2011. – 376 էջ:

Շուրջ 22 տարի Վարդգես Համազասպյանի անունը միափյուսվել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության հետ: Գիտական աշխատանքով զբաղվելու իր նախասիրությունը նա շարունակել է նաև Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ղեկավարման բարդ ու ժամանակատար աշխատանքին զուգահեռ՝ ստեղծելով սփյուռքահայ գաղութների վերաբերյալ ծավալուն գիտական աշխատություններ ու հոդվածներ, որոնցից շատերը տպագրվել են հենց սփյուռքահայ մամուլում:

1964 - 1985 թվականներին Վ. Համազասպյանը ղեկավարել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի աշխատանքները: Հենց այդ տարիներին էլ ի հայտ եկել Համազասպյան գործչի, հայրենասերի, պատմագետի, «ղիվանագետի», ինքնատիպ ու կոլորիտով հարուստ մարդու կերպարը:

ՀՏԴ 008
ԳՄԴ 71



**Գիրքը լույս է տեսնում
Եղիշե Վարդգեսի Համազասպյանի
նախաձեռնությամբ
հայրիկի 100 ամյակի առթիվ**

Եղիշե Համազասպյանը շնորհակալություն է հայտնում
Հայաստանի Ազգային Արխիվին՝
հանձին Ս. Միրզոյանի, Մ. Մարտիրոսյանի,
հրատարակչական խմբագիր՝ Գ. Յազըճյանին,
«Մուղնի» հրատարակչությանը՝
հանձին Ռուզան Պետրոսյանի, Վարդան Դավաթյանի

Ինձ հաճախ հարցնում են. այնպիսի ունիկալ հիմնարկում, ինչպիսին Սփյուռքահայության հետ Մշակութային կապի Կոմիտեն էր, երկարամյա իմ աշխատանքի ընթացքում ո՞ր ղեկավարի հետ էր ավելի հեշտ ու արդյունավետ աշխատել:

Պատասխանս լինում է. բախտ պետք էր ունենալ՝ աշխատանքային գործունեության ընթացքում Վարդգես Համազասայանի նման ղեկավարի, ապա՝ նրան փոխարինող Կարլեն Դավթյանի հետ հանդիպելու համար:

Տարիքի, ժամանակի բերումով, անձամբ չեմ կարող գնահատել Վարդգես Համազասայանի՝ մինչև Սփյուռքահայության հետ Մշակութային կապի Կոմիտեի Նախագահ լինելու տարիներն ու գործունեությունը, սակայն Վ. Համազասայանի մասին, ինչպես ասում են՝ միայն աջ ու ձախից չէ, որ դրվատական, գովեստի ու գնահատանքի կարծիքներ եմ լսել. նա ծնողներիս ժամանակակիցն էր, նրանց մասնագիտություններն ու կրթությունը նույնն էին, և լավ եմ հիշում ծնողներիս գնահատանքը: Գիտեմ նաև, թե ինչ դժվարին ժամանակներում է Համազասայանը եղել Հայաստանի Գրողների միության քարտուղարը, ինչ հավասարակշիռ քաղաքականություն է վարել և, որ կարևորն է, միշտ պատենշ ու պատվար է եղել ազգային արժեքների դեմ կատարվող ոտնձգություններին:

Համազասայանի մանկավարժական ու վարչական կարողությունների առհավատչյան են առ այսօր մանկավարժության, գիտության և այլ ասպարեզներում գործող նրա բազմաթիվ ուսանողները, որոնք անցել են Համազասայանի դպրոցը՝ Մանկավարժական ինստիտուտում նրա ռեկտոր աշխատելու տարիներին:

Եթե Վարդգես Համազասայանի աշխատանքային ողջ գործունեությունը նման էր այսբերգի, որի միայն կատարը կարելի էր տեսնել մինչև Սփյուռքահայության հետ Մշակութային կապի Կոմիտեի նախագահությունն ստանձնելը, ապա վերջին ակորդը դժվարին, լրջագույն, պատասխանատու, լարված, երբեմն՝ արտաքինից չընկալվող, չհասկացվող ազգանվեր ու ազգօգուտ գործունեությունն այսբերգի անտեսանելի խորքն էր՝ իր ծանրակշռությամբ, իր քաղաքական, ազգային ու, կասեի, պատմական նշանակությամբ:

Չնայած հասարակական կազմակերպություն կոչվելուն ու կարգավիճակին՝ Սփյուռքահայության հետ Մշակութային կապի Կոմիտեն կարճ ժամանակում դարձավ հանրապետության առաջատար հիմնարկներից մեկը, քանզի նրա աշխատանքի ծիրն ընդգրկեց հանրապետության կյանքի տարբեր ոլորտներ, իսկ արտերկրի հետ առնչվելու նրա առաքելությունը Կոմիտեն դարձրեց ավելի քան քաղաքական օրգան:

Կոմիտեի դերն ավելի մեծացավ ու նշանակալի դարձավ, երբ Մոսկվայում ստեղծվեց «Ռոդինա» միութենական ընկերությունը, որի առաջատարը, բնականաբար, դարձավ Հայաստանը:

Մոսկվա-Երևան հարաբերություններն օր օրի աճեցին ու ամրապնդվեցին, հատկապես, Համագասպյան-Պատրիարքի շնորհիվ, քանզի իր ոչ միայն փորձն ու տարիքը, այլև բացառիկ հաղորդականությունն ու առինքնող անհատականությունը մեծապես գնահատվեցին «Ռոդինա»-ի ղեկավարության կողմից, և արտասահմանյան գործուղումների, հատկապես հայրենիք հյուրեր ընդունելու հարցում, Հայաստանը սկսեց ստանալ «գալի բաժինը»:

Ներկայացվող նյութի ծավալի մեջ անհնար է ներկայացնել այն ամենը, ինչ տվեց ու կատարեց Վ. Համագասպյանն իր, ես կասեի, աշխատանքային գործունեության բարձրակետ՝ Սփյուռքահայության հետ Մշակութային կապի Կոմիտեի Նախագահ եղած տարիներին: Օրինակներն ու ապացույցները բազմաթիվ են, պատմության մեջ մնալու արժան, որոնցից միայն մեկը հիշեմ՝ ասելով սակայն, որ չնշված օրինակները պակաս կարևոր ու բախտորոշ չեն եղել Սփյուռքի համար:

Բեյրութը կրակի մեջ էր, իսկ հայ համայնքը՝ երկու կրակի: Հայությունը մնացել էր իսլամ ու քրիստոնյա կոնֆլիկտի կիզակետում, և ճշտագույն, ոսկերչական նրբություններ էին հարկավոր նրան փրկելու, երկու մեծագույն ուժերի բախման ժամանակ՝ մեկին կամ մյուսին չհարելու:

Այդ օրերի մասին կան որոշումներ ու փաստաթղթեր, սակայն, ինչպես հաճախ, գործի արտաքին, երևացող կողմը, փաստաթուղթն այլ է լինում, իրականությունը՝ այլ:

Մոսկվա, ՀՀ Կենտկոմ, մեկ խոսքով ասած՝ իդեոլոգիա, քաղաքական շահ և ազգային շահ մեկ գլխարկի տակ չէին մտնում:

Առավել՝ Սփյուռքի քաղաքական կուսակցությունների, մեղմ ասած, ոչ համահունչ կարծիքները: Ահա այստեղ էր, որ Վարդգես Համագասպյանը խաղաց մեծագույն դերը, և նրա մաքուրային դիվանագիտությունը թնջուկ հարցը բալեց, որդեգրվեց դրական չեզոքության քաղաքականությունը, որը և ապահովեց հայության խաղաղ կեցությունը Լիբանանում մինչև այսօր...

Սիրո, գնահատանքի, երախտագիտության, հարգանքի ու ակնածանքի Համագասպյանն արժանացավ իր անկեղծ ու անաչառ հայրենասիրության շնորհիվ, ազգային շահերի անգիջում պաշտպան լինելու շնորհիվ, չնայած Սփյուռքի հատվածականությանն ու ժամանակների դժվարին պայմանների ճնշմանը՝ հավասարակշիռ գործունեություն ծավալելու շնորհիվ, իր բարի ու կամեցող բնավորության շնորհիվ, և ամենակարևոր հատկանիշի՝ պետական մտածողության շնորհիվ:

Ռոմեն Կոզմոյան

Շուրջ 22 տարի Վարդգես Համագասպյանի անունը միահյուսվել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության հետ:

Վարդգես Եղիշեի Համագասպյանը ծնվել է 1911թ. Վաղարշապատում (Էջմիածին), բժշկի ընտանիքում: Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, ավարտել այն 1940թ., որից հետո երկու տարի աշխատել է Մատենադարանում որպես գիտական քարտուղար: Հաշվի առնելով նրա պատրաստվածությունը, բանիմացությունը, զարգացվածությունն ու ներքին կուլտուրան՝ Հայաստանի ղեկավար մարմինները նրան են վստահում կուսակցական պաշտոններ, Գրողների միության պատասխանատու քարտուղարի իրավասությունները: Այնուհետև 1951-1968թթ. նա նշանակվում է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, միաժամանակ ստանձնելով հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարչի պարտականությունները:

Իրականացնելով վարչա-կառավարչական աշխատանքներ, Վ. Համագասպյանը միաժամանակ կատարել է ուսումնասիրություններ պատմագիտության ուղղությամբ ու գրել մի շարք գիտական աշխատություններ, 1948թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Թոնդրակեցիների շարժումը 9-11-րդ դարերում» թեմայով:

Գիտական աշխատանքով զբաղվելու իր նախասիրությունը նա շարունակել է նաև Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ղեկավարման բարդ ու ժամանակատար աշխատանքին զուգահեռ՝ ստեղծելով սփյուռքահայ գաղութների վերաբերյալ ծավալուն գիտական աշխատություններ ու հոդվածներ, որոնցից շատերը տպագրվել են հենց սփյուռքահայ մամուլում:

1964-1985 թվականներին Վ. Համագասպյանը ղեկավարել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի աշխատանքները: Հենց այդ տարիներին է ի հայտ եկել Համագասպյան-գործչի, հայրենասերի, պատմագետի, «դիվանագետի», ինքնատիպ ու կոլորիտով հարուստ մարդու կերպարը: 1960-ական թվականների կեսերն ու 70-ականները լի էին քաղաքական բարդ իրադարձություններով ու վարչական սահմանափակումներով: Այդ կառույցի ղեկավարը պիտի կարողանար իր պատրաստվածությամբ ու դիվանագիտական խորաթափանցությամբ լուծել ու հարթել տվյալ ժամանակաշրջանի համար բավական խրթին Հայրենիք-սփյուռք կապերի խնդիրները, եզրեր գտնել ու նաև ոչ միայն խելքով, այլև իր մարդկային հմայքով կամուրջ ստեղծել Հայրենիքի ու աշխարհասփյուռ հայության միջև, ինչը և մեծ պատասխանատվությամբ իրականացնում էր Վ. Համագասպյանը:

Խնդիրների բարդությունը նաև նրանում էր, որ նշված տարիներին Խորհրդային Հայաստանը գտնվում էր ԽՍՀՄ-ի կազմի մեջ և արտերկրի հետ կապված հարցերի մեծ մասը պիտի համաձայնեցվեր միութենական համապատասխան մարմինների հետ:

Կազմակերպման առաջին իսկ տարում Համագասայանը կոմիտեում ձևավորում է այնպիսի բաժիններ, որ հնարավոր լինի հարաբերվել արտերկրի մեր հայրենակիցների հետ հնարավորինս բեղուն ու բազմաբովանդակ: Հատկանշական է, որ նրա ջանքերով կապեր էին ստեղծվել թե՛ հայրենակցական միությունների, թե՛ բարեգործական ու այլ բնույթի կազմակերպությունների և թե՛ անհատ գործիչների հետ:

Նրա ներդրումը կար նաև այն հարցում, որ Հայաստանի կառավարությունը պարբերաբար փոփոխություններ էր կատարում կոմիտեի կառուցվածքում, ստեղծում նորանոր բաժիններ, հաստատում նոր հաստիքներ, ճշգրտումներ ու հավելումներ կատարում կառույցի ֆինանսական հարցերում, որպեսզի Կոմիտեն առավելագույնս օգտագործի իր հնարավորությունները սփյուռքի հետ կապերի ամրապնդման գործում:

Վերոհիշյալի մասին են հավաստում Համագասայանի բազմաթիվ պաշտոնական ու ոչ պաշտոնական գրություններն ու նամակները, ուղղված վերադաս մարմիններին:

Հիանալի զգալով ու պատկերացնելով սփյուռքահայի, այլ երկրում ապրող հայ մարդու հոգեբանությունը, Վ. Համագասայանը սփյուռքի ամեն մի կազմակերպության, ամեն մի անհատ գործչի յուրովի մոտեցում էր ցուցաբերում, շատ անգամ իր խոսքն ու նամակները համեմում էր ժողովրդական ասացվածքներով ու ասույթներով՝ առանձնակի համ ու հոտ տալով իր շարադրանքին:

Ժողովածուում զետեղված փաստաթղթերը վկայում են, որ բացի աշխատանքի նկատմամբ նրա նվիրվածությունից, մեծ պատասխանատվությունից ու հետևողականությունից, թերևս նրա անհատական մարդկային արժանիքները ևս մեծ դեր են ունեցել շատ սփյուռքահայ գործիչների հետ առնչվելուն ու համատեղ հարցերի հանգուցալուծում գտնելուն:

Բավական է հիշատակել մի քանի փաստ, որպեսզի պարզ դառնա, թե ինչ ներդրում է ունեցել Վ. Համագասայանը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում իր գործունեության ավելի քան 20 տարիների ընթացքում: 1964թ. (մայիսի 25-ին) երբ ստեղծվեց Կոմիտեն, հենց այդ տարում իսկ նա կապեր հաստատեց սփյուռքահայ 50 կազմակերպությունների և 350 անհատ գործիչների հետ, իսկ արդեն 1982թ.¹ 50 երկրների 1020 կազմակերպությունների և 8000 անհատ գործիչների հետ:

Սփյուռքահայ մանուկին հայեցի կրթություն տալու նպատակով, Խորհրդային Հայաստանից այդ տարիներին տարբեր երկրներ է առաքվել 15.000 օրինակ դասագիրք, 25.000 միավոր գեղարվեստական և երաժշտական գրականություն, միաժամանակ «Սովետական Հայաստան» ամսագրի ու «Հայրենիքի ձայն» թերթի հազարավոր օրինակներ,¹ կապեր են հաստատվել հայազ-

գի անվանի արվեստագետների, հասարակական, ազգային գործիչների հետ ու նրանցից շատերը Խորհրդային Հայաստան են հրավիրվել, ինչի շնորհիվ էլ ավելի են ամրապնդվել փոխադարձ կապերը: Այդ գործունեության արգասիքն եղավ բազմաթիվ անվանի գործիչների անձնական արխիվների ու արվեստի նմուշների մշտական հանգրվանումը Հայրենիքում:

Վարդգես Համագասայանի կյանքի ու գործունեության Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում աշխատանքի այդ բեղուն ժամանակահատվածը ներկայացնող, հայտնաբերված շուրջ 800 փաստաթղթերից սույն ժողովածուի մեջ ընդգրկվել են 220-ը, որոնց գերակշիռ մասը հրապարակվում է առաջին անգամ:

Ժողովածուում չընդգրկված փաստաթղթերի մի մասն օգտագործվել է նախաբանում և ծանոթագրությունների մեջ:

Հրապարակվող փաստաթղթերը բազմազան են՝ զեկուցագրեր, տեղեկագրեր, գրություններ, նամակներ և այլն:

Հրապարակվող փաստաթղթերը դասակարգված են ժամանակագրորեն, հիմքում դրվել է փաստաթղթերի ստեղծման թվականը:

Փաստաթղթերի հնագրագիտական մշակման ընթացքում պահպանվել է դրանց ոճը, կատարված աննշան փոփոխությունները ուղղագրական կամ շարադրական բնույթի են: Վավերագրերը ներկայացված են բնագրի լեզվով: Տեքստային ծանոթագրությունները նշված են աստղանիշով, իսկ բովանդակության ծանոթագրությունները՝ թվանշաններով և տեղադրված են տողատակում:

Յուրաքանչյուր փաստաթղթից հետո ցույց է տրված նրա հիմքը՝ ֆոնդի, ցուցակի, գործի, թերթերի համարները, իսկությունը և փաստաթղթերի վերաբրտադրման եղանակը: Քանի որ բոլոր փաստաթղթերը գտնվում են Հայաստանի Ազգային արխիվի ֆոնդերում, այդ պատճառով փաստաթղթերի տողատակում արխիվը չի նշվել:

Անվանական և աշխարհագրական ցուցիչների յուրաքանչյուր անվանման կողքին նշված է այն փաստաթղթի համարը, որի մեջ հիշատակվում է տվյալ անձը կամ տեղանունը:

Աշխարհագրական ցուցիչում «Հայաստան» (ներառյալ՝ Սովետական Հայաստան, Խորհրդային Հայաստան, ՀԽՍՀ, Հայրենիք, Մայր Հայրենիք) և «Երևան» տեղանունները, իսկ անվանական ցուցիչում՝ Վարդգես Համագասայանի անունը չեն նշվել, քանի որ համարյա բոլոր փաստաթղթերում դրանք հիշատակվում են:

Ժողովածուն ունի գիտատեղեկատու մաս, որի բաժիններն են.

Կազմողների կողմից (Ժողովածուի սկզբում):

Փաստաթղթերի բովանդակության ծանոթագրություններ (տողատակում):

Անվանական ցուցիչ:

Աշխարհագրական տեղանունների ցուցիչ:

Ժողովածուում հրապարակվող փաստաթղթերի ցանկ (այս երեքը՝ ժողովածուի վերջում):

1. Տե՛ս Հայաստանի Ազգային արխիվ, ֆոնդ 875, ցուցակ 14, գործ 30, թերթեր 2-8 (այսուհետև՝ ՀԱԱ ֆ., ց., գ., թ. կամ թթ.):

ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Совет Министров Армянской ССР постановляет:

1. Образовать Армянская комитет по культурным связям с соотечественниками за рубежом.

2. Утвердить штатное расписание Армянского комитета по культурным связям с соотечественниками за рубежом согласно приложению № 1.

3. В связи с образованием Армянского комитета по культурным связям с соотечественниками за рубежом утвердить штатное расписание Армянского общества дружбы и культурной связи с зарубежными странами согласно приложение № 2.

4. Поручить Госплану Армянской ССР и Министерству финансов произвести изменения в народнохозяйственном плане и бюджете, вытекающие из настоящего постановления.

5. Сохранить право получения процентной надбавки за знание иностранных языков и расходов на представительные цели, установленное для Армянского общества дружбы и культурной связи с зарубежными странами.

6. Установить Армянскому комитету по культурным связям с соотечественниками за рубежом два лимита пользования служебными легковыми автомобилями.

Обслуживание легковыми автомобилями возложить на Министерство автомобильного транспорта.

Председатель Совета Министров Армянской ССР

А. Кочинян²

Управляющий Делами

Совета Министров Армянской ССР

Г. Мелконян

Ֆ. 113, ց. 94, գ. 191, քք. 1-2: Բնագիր: Մեքենագիր:

2. Քոչինյան Անտոն Երվանդի (1913, գյուղ Շահալի, այժմ՝ Վահագնի, Լոռու մարզ – 1990, Երևան) – ՀԽՍՀ պետական և ՀԿԿ գործիչ: Սկզբնական շրջանում ղեկավար պաշտոններ է զբաղեցրել Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միությունում, այնուհետև՝ պետական և կուսակցական մարմիններում, այդ թվում՝ 1952-1966թթ. եղել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ, 1966-1974թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱԽԱԿՐՑ ԴԵՍՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԵՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ՝ ՈՒՐՈՒԳԱԿԱՅ ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍԱՍԲՈՒԹՅԱՆ՝ 100-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱԼԳԵՅՎԵԼԻՔ ՉՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուրուգվայի Զեյթունցիների հայրենակցական միության ղեկավարներից պրն. Արիս Ահարոնյանը իր 21 մայիսի 1964 թվակիր նամակում հայտնում է, որ Զեյթունի ապստամբության 100-ամյակին նվիրված Ս. Էջմիածնում կանգնեցվելիք աղբյուր-հուշարձանի համար կազմված է տիկնանց մի հանձնախումբ: Զեյթունցի կանայք մտադիր են հուշարձանի օգտին հավաքել շուրջ 6-7 հազար դոլարի գումար:

Միաժամանակ պրն. Ա. Ահարոնյանը հայտնում է, որ իրենց հայրենակցականը մտադիր է 1965թ. ապրիլը նշել ա. պատարագով, որի ժամանակ զեյթունցիների զավակներից կազմված երգչախումբը կատարելու է Ս. Եկմայանի⁶ բազմաձայն պատարագը և «Զեյթունցիներ» քայլերգը /Ս. Եկմայանի մշակմամբ/: Սակայն Միությունը ձեռքի տակ չունի այդ ստեղծագործությունների պարտիտուրաները:

Ի գիտություն հայտնելով Ձեզ վերը շարադրվածը՝ խնդրում ենք՝ հնարավորության դեպքում, օգնել նրանց՝ հիշյալ ստեղծագործությունների պարտիտուրաներն ուղարկելով:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, թ. 1: Պատճեն: Մեքենագիր:

3. Վ. Համազասպյանը նմանատիպ բովանդակությամբ մի նամակ է հղել նաև ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժնին. տե՛ս ֆ. 875, ց. 1, գ. 3, թ. 10:

4. Դավաթյան Կարլեն Առնի (1929, Ալավերդի - 14.10.2008, Երևան) - Բանասեր, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր (1988): Եղել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ (1963-1970), ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի ու ագիտացիայի բաժնի վարիչ (1971-75), ՀԿԿ Կենտկոմի՝ գաղափարախոսության գծով քարտուղար (1976-85), 1985թ. ղեկավարելից մինչև 1991թ. փետրվարի 21ը՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ: Հեղինակ է սփյուռքահայ մամուլի և ՌԱԿԻ պատմության, Արշակ Զոպանյանին, Գալուստ Գյուլբենկյանին նվիրված և այլ մենագրությունների:

5. Զեյթունի հայերի առավել հայտնի ապստամբություններն են 1862, 1877-78, 1895թթ. ժողովրդական ընդվզումները, որոնք հայկական ինքնապաշտպանական զինված ելույթներ էին թուրքական բռնապետության դեմ:

6. Եկմայան Մակար Գրիգորի (1856, Վաղարշապատ (Էջմիածին) - 1905, Թիֆլիս) - Մեկել է Ալաշկերտի շրջանի Եկմալ գյուղից գաղթած ընտանիքում: Երգահան, խմբավար, մանկավարժ: Նիկողայոս Թաշճյանի ղեկավարությամբ վարժվել է հայկական նոտագրությանը: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանն ու Ս. Պետրբուրգի կոնսերվատորիան: Դասավանդել է Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և կրթել բազմաթիվ ապագա անվանի արվեստագետներին:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՅ Վ.Ս. ՄԱԼՅԱՆՎԻՆ՝ ՍՓՅՈՒՌՔԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Армянский Комитет по культурным связям с соотечественниками за рубежом на первом же заседании президиума приступил к организационному оформлению творческих секций Комитета. Решением президиума созданы следующие секции Комитета:

1. Группа по содействию армянским зарубежным земляческим союзам /за рубежом имеются свыше 30 земляческих союзов и в основном они находятся в США/.

2. Секция народного образования /по связям с зарубежными армянскими школами/.

3. Секция литературы.

4. Секция искусства.

Секция искусства имеет следующие подсекции:

а. Музыки

б. Архитектуры

в. Театр-кино.

г. Изоискусства.

5. Женская секция /за рубежом имеются многочисленные армянские женские организации/.

6. Молодежная секция и спорта /одной из основных задач этой секции будет работа среди зарубежных студентов обучающихся в ВУЗ-ах г. Еревана/.

Руководителями и в состав секций избраны видные писатели, ученые и общественные деятели республики. Так, например, председателем секции литературы избрана известная поэтесса Сильва Капутикян⁷, женской секцией поэтесса Маро Маркарян⁸, секции искусства директора института искусства АН, доктор наук Рубен Зарян⁹, подсекции театр-кино заслуженный деятель

7. Կապուտիկյան Սիլվա (Սիրվարդ) Բարուկյանի (1919, Երևան - 2008, Երևան, թաղված է Կոմիտասի անվան զրոսագու պանթեոնում) - Անվանի բանաստեղծուհի, հրապարակագիր, հասարակական գործիչ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1970), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1994): Մի շարք բանաստեղծությունների ժողովածուների, հուշագրություն-ուղեգրությունների զրբերի հեղինակ է, որոնց մի մասը թարգմանվել է նաև այլ լեզուներով: Երևանում գործում է Ս. Կապուտիկյանի տուն-թանգարանը:

8. Մարգարյան Մարո Եղիշեի (1915, Շուվալեր բաղաբ, Ջավախք - 1999, Երևան, թաղված է Բյուրականում) - Բանաստեղծուհի: 1967-1984թթ. աշխատել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում որպես Սփյուռքի հետ կապերի բաժնի պետ:

9. Զարյան Ռուբեն Վարուի (1909, Ալեքսանդրապոլ - 1994, Երևան) - Թատերագետ, գրականագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1961), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1986): Դասախոսություններով հանդես է եկել աշխարհի տարբեր երկրներում: Հեղինակ է հայ արվեստի և գրականության անվանի գործիչների մասին հուշագրությունների:

искусств Саркис Меликсетян¹⁰, подсекции архитектуры председатель Союза архитекторов, доктор наук Вараздат Арутюнян¹¹ и многие другие. Проходят заседания секций и утверждаются планы работ.

В настоящее время Комитет совместно с Министерством просвещения Арм. ССР ведет большую работу с учителями армянских зарубежных школ, которые приглашены на курсы усовершенствования.

По предварительной договоренности с советскими представительствами в состав группы вошли представители разных политических и религиозных течений.

Учителя приглашены из Ливана, Сирии, США, Кипра, Эфиопии – всего 17 человек, ожидается приезд еще 3, вместо предусмотренных 30 мест. Из некоторых стран не смогли выехать из-за политического режима /Турция /Стамбул/, Египет/.

В группу подобраны как представители прогрессивного крыла, а также рамкавары /армянская либерально-буржуазная партия/, Благотворительный союз и 2 представителя дашнакской партии.

Подобный подход, исходя из практики 2-х прошедших лет, оправдывает себя.

В этом году в республику для отдыха в пионерские лагеря приглашены дети школьного возраста из Франции /10 человек/, Сирии /10/, Ливана /10/ и Египта /5/.

Последние не смогли приехать по вине египетских властей. В настоящее время дети отдыхают в лучших пионерских лагерях республики.

Непосредственно организаций отдыха детей занимаются ЦК ЛКСМ Армении, наш Комитет и Министерство Просвещения Арм. ССР.

Решением инстанций в республику приглашены группы врачей-армян из Ливана в составе 7 человек, сроком на десять дней, художники Онник Аветисян¹² из Ливана¹³ сроком на 15 дней, пианист Мискичян из Стамбула сроком на

10. Մելիքսեթյան Սարգիս Ալեքսանդրի (1899, Գանձակ – 1980, Երևան) – Թատերագետ, արվեստագիտության դոկտոր (1971), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1956), թատերական թանգարանի նախաձեռնող և հիմնադիր-տնօրեն, այնուհետև՝ Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի տնօրեն (1964-1980): Հեղինակ է թատերագիտական մի շարք մենագրությունների:

11. Հարությունյան Վարադատ Մարտիրոսի (1909, Վան – 2008, Երևան) – Հարտարապետ, հայկական ճարտարապետության պատմաբան, մանկավարժ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1961), ՀՀ ԳԱ ակադեմիկոս (1996): Հայկական ճարտարապետության ու նրա պատմության նվիրված բազմաթիվ աշխատությունների հեղինակ է:

12. Ավետիսյան Օննիկ Հակոբի (1898, Բուրսա, Թուրքիա – 1974, Կահիրե) – Գեղանկարիչ, քանդակագործ, արվեստաբան, մանկավարժ: Սովորել է Վիեննայում, ավարտել Հռոմի Գեղարվեստի ակադեմիան: Ցուցահանդեսներ է ունեցել Եգիպտոսում, Կիպրոսում, Լոս Անջելեսում: Հեղինակ է «Հայ նկարիչներ և քանդակագործներ» ֆրանսերեն հատորի (Կահիրե, 1959): Եղել է Կահիրեի Հայ գեղարվեստափրաց միության աստեղապետ:

13. Երկիրը սխալ է նշված: Արդարև, տվյալ ժամանակահատվածում Օ. Ավետիսյանը բնակվում և ստեղծագործում էր Եգիպտոսում:

15 дней, редактор газеты “Ашхар” А. Алексанян¹⁴ на лечение сроком на один месяц, известный французский художник Жеранян¹⁵.

Комитет приобрел и отправил десяти зарубежным армянским колониям фильм “Гоар Гаспарян”, производство студии Арменфильм. Отправка фильмов за рубеж носит систематический характер и имеет большой успех.

Одним из первых мероприятий Комитета в республике была организация вечера посвященного десятилетию со дня смерти известного зарубежного деятеля, переводчика, литературоведа, поэта Аршака Чопаняна¹⁶.

По приглашению армянских прогрессивных организаций Сирии и Ливана готовится к выезду в указанные страны /октябрь/ армянский государственный ансамбль песни и пляски. Вопрос поездки перед инстанцией нашим Комитетом.

Комитет вошел в инстанцию /проект и финансовые подчеты представлены/ о создании еженедельной газеты “Голос Родины”, органа Армянского Комитета по культурным связям с соотечественниками за рубежом¹⁷. Совместно с Министерством просвещения Арм. ССР Комитет скоро отправит зарубежным армянским школам первый учебник /азбука/ специально подготовленный для них. Намечается отправка учебников и для старших классов по истории, литературе и географии.

Печатные органы Вашего Комитета пока не получаем.

Систематически в Ваш адрес будем высылать печатный орган нашего Комитета, журнал “Советакан Айастан”¹⁸.

Ответственный секретарь прогрессивной лиги армян США Ваан Казарян¹⁹

14. Ալիքսանյան Ավետիս Հովհաննեսի (1910, Կ. Պոլիս – 1984, Փարիզ) – Գրող, հրապարակախոս, խմբագիր: Աշխատակցել է սփյուռքահայ մի շարք թերթերի: 1960 թվականից մինչև մահը խմբագրել է Փարիզի երկվեզու՝ հայերեն-ֆրանսերեն «Աշխարհ» շաբաթաթերթը:

15. Ժերանյան Ռիշար (Խաչատուր) Անդրանիկի (ծն. 1921, Սեբաստիա) – Գեղանկարիչ: Կրթությունն ստացել է Ֆրանսիայում՝ Մարսելում, ապա Փարիզում: Գրան Շոմիեր և Ժյուլիեն ակադեմիաներում: Անհատական շուրջ 50 ցուցահանդեսներ է ունեցել եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում:

16. Չոպանյան Արշակ Հովհաննեսի (1872, Կ. Պոլիս – 1954, Փարիզ) – Գրող, գրաքննադատ, բանասեր, թարգմանիչ, «Անահիտ» հանդեսի հրատարակիչ և խմբագիր (1898-1949), հասարակական և ՌԱԿ գործիչ: Սովորել է ծննդավայրի Մաքրոսիյան և Կեդրոնական վարժարաններում: Հրատարակել է հայ գրականագիտության անոնցված բազմաթիվ գրքեր և ուսումնասիրություններ: Ֆրանսիական քաղաքական շրջանակներում մեծ աշխատանքներ է տարել Հայ դատի ուղղությամբ:

17. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի օրգան «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի առաջին համարը լույս է տեսել 1965թ. օգոստոսի 1-ին:

18. «Սովետական Հայաստան» ամսագիրը սկզբում լույս է տեսել որպես Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության (ծանոթ է ռուսերեն անվան ԱՕԿՍ հապավումով) օրգան, իսկ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հիմնումից հետո անցել վերջինիս ենթակայության տակ:

19. Ղազարյան Վահան Ղազարուհի (1905, Սեբաստիա – Խմբագիր, հրապարակագիր, հասարակական գործիչ (ԱՄՆ): Ցեղասպանության տարիներին կորցրել է ծնողներին, քրոջը և երկու եղբայրներին, ապաստան գտել Սեբաստիայի որբանոցում, որի հետ տեղափոխվել է Հունաստան: Սովորել է Մալոնիկի «Անատոլիա» կոլեջում: 1928թ. հաստատվել է ԱՄՆ-ում: 1937թ. եղել է Ամերիկահայ առաջինական միության համահիմնադիրներից, 1963թ. ղգ՝ Կենդոնական

как устно, так и письменно выразил свою благодарность за оказание ему и его семье внимание во время нахождения в Москве со стороны работников Комитета и в особенности его председателя товарища Маляева В. М.

Днями вышли утвержденный план работы III квартала Комитета и адреса наших зарубежных связей.

Ֆ. 875, ց. 1, գ. 3, թթ. 32-39: Պատճեն: Մեքենագիր:

վարչության ընդհանուր քարտուղարը, նույն կազմակերպության «Լրաբեր» շաբաթաթերթի երկարամյա խմբագիրը: Եղել է նաև Համասերաստահայ վերաշինաց միության հիմնադրողներից, խմբագրել միության «Նոր Մեքաստիա» ամսագիրը:

Վ. ՀԱՄԱՁԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԵՐՔԱՂՆՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ
Գ. ՀԱՍՐԱԹՅԱՆԻՆՆՔ՝ ՀԱՄԱԵՐՁՆԿԱՅԻՆԱԿԱՆ ՎԵՐԱԾԻՆԱՅ ԵՎ ՉՆՔՈՒՇԻ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԻՐԵՆՑ
ԲՆՕՐՐԱՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՈՎ ՓՈՐՈՑՆԵՐ ԿԱՄ ԹԱՂԱՄԱՍԵՐ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մեր կոմիտեին են դիմել Չնքուշի հայրենակցական և Համաերզնկացիական վերաշինաց միությունները /ԱՄՆ/, խնդրելով իրականացնել այդ միությունների շուրջ համախմբված հայրենակիցների բաղձանքը՝ հայրենի հողի վրա կոչելու իրենց նախկին բնակավայրերի անուններով ավան, թաղամաս, կամ փողոց:

Ի մասնավորի Չնքուշի հայրենակցական միությունը խնդրել է Սովետաշենի 14-րդ փողոցից մինչև 18-րդ փողոցն ընկած շրջանը անվանել Չնքուշի թաղամաս, ուր և բնակություն են հաստատել չնքուշցի հայ ընտանիքները:

Նպատակահարմար է նաև Շահումյանի շրջանի /Նոր Մեքաստիա/ փողոցներից մեկը կոչել Նոր Երզնկա կամ Երզնկա անունով:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, թ. 43: Պատճեն: Մեքենագիր:

20. Հասարակության Գրիգոր (1918, Միսիանի շրջան, գ.Աղբենդ (այժմ՝ Աշոտական) համտ. էջ 20, ձևք. 21, 23 – 2001, Երևան) – ՀԽՍՀ պետական և հասարակական գործիչ: 1962-1975թթ. եղել է Երևանի Քաղաքային խորհրդի Գործադիր կոմիտեի նախագահը:

Վ. ՀԱՄԱՉԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻՆՆԻ²¹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԳԻ-ՊԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄՈՒՅԹԻ
ԼԻԲԱՆԱՆ ՈՒ ՍԻՐԻԱ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Вице-консул Генконсульства СССР в Алеппо товарищ Тер-Микаелян Б.²² сообщает, что культурное общество "Нор серунд" /Сирия/ приглашает Государственный ансамбль песни и пляски Армянской ССР в составе 65 человек на гастрольные поездки в Сирию и Ливан в октябре с. г. с обязательством организовать их успешные гастролы в указанных странах.

Культурное общество "Нор серунд" все необходимые финансовые расходы в пределах Сирии и Ливана берет на себя.

Представители указанного общества просили известить их о дате прибытия ансамбля в августе с. г. для проведения необходимых формальностей с местными властями и аренды помещений.

Наш Комитет предлагает в состав группы включить секретаря Союза писателей товарища Ованесяна Г. К.²³ и директора института искусств АН Арм. ССР товарища Заряна Р. В.

Предполагаемые гастролы ансамбля в значительной степени поспособствуют росту патриотических настроений среди армян, проживающих в САР и Ливане.

Председатель Комитета

В. Амазаспян

Ֆ. 875, ց. 1, գ. 3, ք. 45: Պատճեն: Մեքենագիր:

21. Բաղդասարյան Հովհաննես Մնացականի (1914, գյուղ Սոնգյուղյու, այժմ՝ Հայրենյաց, Արթիկի շրջան - 1997, Երևան) - Պատմական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ պետական և ՀԿԿ գործիչ: 1961-1966թթ. աշխատել է ՀԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղար:

22. Բորիս Տեր-Միքայելյան:

23. Հովհաննիսյան Հրաչյա Կարապետի (1919, գյուղ Շահաբ, Կոտայքի մարզ - 1997, Երևան) - Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1974), Հայաստանի Գրողների միության վարչության քարտուղար, 1988-1990թթ. աշխատել է Արտասահմանյան երկրների հետ Բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերությունում, Հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեում, որոշ տարիներ եղել է «Գրական թերթի» և «Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագիրը:

Վ. ՀԱՄԱՉԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻՆՆԻ²⁴ Դ. ՎԱՐՈՒԺԱՆԻ ԿՆՈՋՆ ՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԳՐՔԻ ՀՈՆԱՐԱՐԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տաղանդավոր բանաստեղծ Դանիել Վարուժանի²⁴ կլինն ու ժառանգները, որ բնակվում են Ամերիկայի Միացյալ Նահանգներում, գտնվում են բավականին թշվառ կացության մեջ: Այժմ Հայպետհրատի կողմից տպագրվում է Դ. Վարուժանի «Նամականի»-ն, որի հեղինակային տեքստը 12 մամուլ է: Այս գրքի լույս ընծայմանը նպաստեց Վերոնիկ Վարուժան-Մաֆրազյանի²⁵ Երևանի Գրականության և արվեստի թանգարանին նվիրած բանաստեղծի հարուստ արխիվը:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը գրքի հոնորարից որոշ գումար հատկացնելու Դ. Վարուժանի ժառանգներին:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, ք. 47: Պատճեն: Մեքենագիր:

24. Վարուժան Դանիել (Զպուրքյարյան Դանիել Գրիգորի) (1884, գ. Բրգնիք, Սևբաստիայի նահանգ - 1915) - Արևմտահայ բանաստեղծ, գրական, հասարակական գործիչ, մի քանի բանաստեղծական ժողովածուների հեղինակ: Մեծ եղեռնի զոհերից:

25. Դանիել Վարուժանի դուստրն է: Մաֆրազյանը ամուսնու ազգանունն է:

Վ. ՀԱՄԱԶԱՍՏԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻՆ
ԱՆՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԿԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԴԱԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԲԱՆԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Временный поверенный в делах СССР в Ливане товарищ Серегин Н. сообщил, что дирекция колледжа "Айказян"²⁶ и администрация "Барегорцакан"²⁷ приглашают в Ливан сроком на один год для преподавания и организации работы на кафедрах армянского языка /арменоведения/ в колледже "Айказян" и в школе "Овакимян-Манукян"²⁸ профессора Аракела Аракеляна²⁹ или одного из ведущих ученых республики.

Товарищ Серегин пишет, что руководство рамкаварской партии весьма заинтересовано в приезде ученого в Ливан, поскольку вновь организованная кафедра армянского языка /арменоведение/ остро нуждается в квалифицированном специалисте.

Посольство поддерживает просьбу рамкаваров и считает целесообразным приезд одного советского ученого в Ливане. Все расходы, связанные с пребыванием ученого в Ливане, администрация колледжа и школы берут на себя.

Так как профессор Аракел Аракелян по состоянию здоровья не может выехать, то наш Комитет предлагает кандидатуру члена корреспондента АН Арм. ССР тов. Моруса Асратяна³⁰, на что имеется согласие указанных организаций.

Просим Ваших указаний.

Председатель Комитета

В. Амазаспян

Ֆ. 875, ց. 1, գ. 3, ք. 53: Պատճեն: Մեքենագիր:

26. Հայկազյան քոլեջը հիմնվել է 1955թ.՝ Բեյրութում, 1997թ. սկզբից՝ համալսարան: Հայ ավետարանական համայնքի սեփականությունն է:

27. Ակատի ունի Հայկական բարեգործական ընդհանուր միության՝ Բեյրութում 1910թ. հիմնված մասնաճյուղի (Լիբանանի) Շրջանակային հանձնաժողովը:

28. «ՀԲԸՄ-ի Հովակիմյան-Մանուկյան մանչերու երկրորդական վարժարանը» հիմնվել է 1947թ. սեպտեմբերին՝ Բեյրութում: Այդ անունով է կոչվել 1951թ.ին: Այս դպրոցի շենքում էր գործում «ՀԲԸՄ-ի Երվանդ Հյուսիսյան հայագիտական հիմնարկը»:

29. Առաքելյան Առաքել Գևորգի (1887, գյուղ Խնածախ, Ասկերանի շրջան, Լեռնային Ղարաբաղ - 1980, Երևան) - Բանասեր, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1955): Դասախոսել է Երևանի բուհերում և Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում, եղել է Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ: Մի շարք աշխատությունների հեղինակ է:

30. Հասարակական գիտություն (Մարգար) Ստեփանի (1902, գյուղ Ախլաթյան, Միսիանի շրջան - 1979, Երևան) - Պատմաբան, բանասեր, սայաթուղթագետ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1961), ՀԽՍՀ ԳԱ թղթակից-անդամ (1963): Ուսանել է Երևանի պետական համալսարանում: Եղել է Հոկտեմբերյան հեղափոխության թանգարանի, Մաշտոցի անվան Մատենադարանի և Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն: Դասախոսել է Երևանի պետական համալսարանում և այլ բուհերում, այդ թվում՝ 1965-66թթ.՝ Բեյրութի Հայկազյան կոլեջում: Մի շարք պատմաբանասիրական աշխատությունների և գիտական բազմաթիվ հոդվածների հեղինակ է:

Վ. ՀԱՄԱԶԱՍՏԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՍԻՐԻԱ ԵՎ ԼԻԲԱՆԱՆ ՄԵԿԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Как нам сообщает вице-консул Генконсульства СССР в Алеппо товарищ Тер-Микаелян Б., к нему обратились представители спортивных клубов Алеппо "Ахли" и "Истеклял"³¹ с предложением, чтобы футбольная команда Армянской ССР в составе 22 участников прибыла в САР и Ливан в период с 1 октября по 15 ноября с.г. сроком на 22 дня. За это время команда проведет 3 встречи в САР и 2 в Ливане. Клубы "Ахли" и "Истеклял" берут на себя организацию выступлений советской футбольной команды в указанных странах и все необходимые расходы.

В свою очередь, спортивные клубы "Ахли" и "Истеклял" могут направить в СССР сборную футбольную команду в составе 22 человек, для встречи с футбольными коллективами Армянской ССР и в других городах по усмотрению советской стороны. Срок пребывания команды в СССР - 22 дня.

Представители клубов "Ахли" и "Истеклял" просили заблаговременно известить их о принятом решении.

Председатель Комитета

В. Амазаспян

Ֆ. 875, ց. 1, գ. 3, ք. 54: Պատճեն: Մեքենագիր:

31. «Ալիլ» Հալեպի արաբական ակումբներից մեկի անունն է, «Իսթիկլալ»՝ Սոցիալ-դեմոկրատ հեյկալյան կուսակցության հովանու տակ գործող Հայ մարմնամարզական միության (ՀՄՄ)՝ Սիրիայի իշխանությունների պահանջով արաբական անվանում ստացած ակումբի անունը:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԽՍՐՄ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ս. Ս. ՄԱՆՈՎԻՆ՝ Վ. ԹԵՔԵՅԱՆԻ³²
ԿԻՍԱՆԴՐԻՆ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Прогрессивный Армянский Культурный Союз в Ливане³³ обратился в наш Комитет с просьбой изготовить в Советской Армении бюст видного зарубежного армянского писателя Вагана Текеяна.

По согласованности с соответствующими органами республики, действительный член Академии Художеств СССР, скульптор Ара Саркисян³⁴ изготовил его в качестве дара.

Вес бюста – 100 кг., высота – 75 см., ширина – 45 см., глубина – 50 см.

Просим Вашего разрешения на отправку бюста в Бейрут, школе Текеяна³⁵.

Председатель комитета

В. Амазаспян

Ֆ. 875, գ. 1, ց. 3, ք. 57: Պատճեն: Մեքենագիր:

32. Թեքեյան Վահան Գալուստի (1878, Կ. Պոլիս – 1945, Կահիրե) – Արևմտահայ բանաստեղծ, հրապարակախոս, հասարակական-կուսակցական գործիչ, մանկավարժ: Ռամկավար ազատական կուսակցության հիմնադիրներից և առաջին ղեկավարներից է: Եղել է Կահիրեի Հայ գեղարվեստասիրաց միության ատենապետ: Խմբագրել է բազմաթիվ պարբերականներ, այդ թվում՝ ՌԱԿ պաշտոնաթերթերը «Արևը» (Կահիրե) և «Զարթոնքը» (Բեյրութ): Բանաստեղծական մի քանի ժողովածուների հեղինակ է: Նրան շնորհվել է «Հայ բանաստեղծության իշխան» պատվավոր կոչումը:

33. Խոսքը վերաբերում է 1947թ. Բեյրութում ՌԱԿ-ի հովանու տակ հիմնված «Թեքեյան մշակութային միության Հիմնադիրներու մարմնին»:

34. Սարգսյան Արա Միհրանի (1902, Կ. Պոլիս – 1969, Երևան) – Քանդակագործ, մանկավարժ, հասարակական գործիչ, ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս (1958), ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ (1963): Կրթությունն ստացել է ծննդավայրի գեղարվեստի վարժարանում, բարձրագույն գեղարվեստական կրթությունը՝ Վիեննայի Գեղարվեստի ակադեմիայի բարձրագույն դպրոցում: Դասախոսել է ՀԽՍՀ գեղարվեստական բուհերում: Հռչակվել է իր կերտած դիմաքանդակներով: Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երևանում և Մոսկվայում: 1973թ.ից Երևանում գործում է Արա Սարգսյանի տուն-թանգարանը:

35. Բեյրութի Վահան Թեքեյան վարժարանը հիմնվել է 1951թ.ին: Սեփականությունն է Թեքեյան մշակութային միության:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՂԱՍԱՐՅԱՆԻՆ՝ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԿԵԼԻՔ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻՆ ԱՐԳԵՆՏԻՆԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արգենտինահայ մշակութային միության Կենտրոնական վարչությունն իր 14 սեպտեմբեր 1964 թվակիր նամակով հայտնում է, որ Բուենոս Այրեսում ստեղծված է Համազգային տոնակատարության հանձնախումբ, որը պատրաստվում է ա.թ. հոկտեմբերի 25-ին անցկացնել հայ մշակույթի տոնը:

Հանձնախումբը որոշել է հիշյալ հանդեսում բանախոսելու համար Արգենտինա հրավիրել բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին, որի ճանապարհատունի և Արգենտինայում մնալու բոլոր ծախսերը հանձնախումբը վերցնում է իր վրա:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, գ. 1, գ. 3, ք. 58: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄԱՆՅԱՆԻ ԼԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻ
ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԼԻԲԱՆՍ ՄԵՎԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Зарубежными армянскими прогрессивными спортивными организациями ежегодно, в Ливане проводится т.н. «Навасардские игры». Игры эти проводятся в два года раз, с участием армянских колоний Ближнего Востока: Ливана, Сирии, Иордании, Египта, Кипра, Греции. Очередные VII игры должны состояться в 1965 году в Бейруте. В предыдущих играх, в 1963 году на праздник съехалось из указанных стран около 1500 юношей и девушек, главным образом учащихся армянских средних учебных заведений и молодежи вообще. В программе соревнований – баскетбол, легкая атлетика, футбол, теннис /на-стойный и большой/, велосипедные гонки, массовые гимнастические выступления.

Еще в 1963 году Центральное правление Армянского молодежного союза³⁶ выслало в адрес Армянского общества дружбы³⁷ приглашение в Ливан известных армянских спортсменов. Но ввиду того, что сроки между приглашением и отъездом оказались недостаточными для подготовки к отъезду, соответствующая группа не смогла выехать.

Предполагается, что приглашение будет подтверждено и в этом году – на 1965 год /устная договоренность имеется/.

Наш Комитет считает целесообразным участие спортивной делегации Советской Армении на указанных играх с целью демонстрации достижений республики в физическом воспитании и спорте не только для армянских зарубежных колоний, но для Арабского Востока в целом. Подобное мероприятие будет иметь большое политическое значение в деле поддержки прогрессивных армянских молодежных организаций в их борьбе против реакционных дашнакских организаций.

В случае положительного решения вопроса, необходимо:

1. Включить в план мероприятий Республиканского Совета спортивных организаций отправку спортивной делегации Советской Армении на указанные игры.

2. Делегация должна состоять из ведущих спортсменов Советской Армении и СССР. /Засл. мастеров спорта Гр. Шагинян³⁸, Вл. Енгибарян³⁹, И. Новико-

36. Խոսքը վերաբերում է 1931թ. Բեյրութում հիմնված Հայ երիտասարդաց ընկերակցության (ՀԵԸ), որը հետագա տարիներին ՀԲԸՄ-ի կառույցներից մեկը դարձավ:

37. Լրիվ անվանումն է՝ Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերություն (ծանոթ էր ռուսերեն անվան ԱՕԿՄ հապավումով):

38. Շահինյան Հրանտ Համազասպի (1923, գյուղ Գյուլագարակ, Լոռու մարզ – 1996, Երևան) – Մարմնամարզիկ, սպորտի վաստակավոր վարպետ (1951), ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ (1966), ԽՍՀՄ բացարձակ և օլիմպիական խաղերի չեմպիոն (1952), ՀԽՍՀ Սպորտկոմիտեի նախագահ (1967-1969):

39. Ենգիբարյան Վլադիմիր Նիկոլայի (ծն. 1932, Երևան) – Բռնցքամարտիկ, սպորտի վաս-

տակավոր վարպետ (1953), ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ (1968), Եվրոպայի, աշխարհի և օլիմպիական խաղերի չեմպիոն:

Просим Ваших указаний.

Председатель Комитета

В. Амазаспян

Ֆ. 875, ց. 1, գ. 3, ք. 80-81: Պատճեն: Սերբնագիր:

տակավոր վարպետ (1953), ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ (1968), Եվրոպայի, աշխարհի և օլիմպիական խաղերի չեմպիոն:

40. Նովիկով Իգոր Ալեքսանդրովիչ (1929, քաղաք Դրեզնա, Մոսկվայի մարզ – 2007, Մանկյոն Պետերբուրգ) – Հնգամարտիկ, սպորտի վաստակավոր վարպետ (1957), ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ (1967): 1934-1992թթ. ապրել է Հայաստանում: Ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Օլիմպիական խաղերի, աշխարհի և ԽՍՀՄ թիմային և անհատական առաջնությունների չեմպիոն:

41. Ազարյան Ալբերտ Վաղարշակի (ծն. 1929, Կիրովական, այժմ՝ Վանաձոր) – Մարմնամարզիկ, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ (1954), ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ (1967): Սպարտակիադաների, Եվրոպայի, Ասիական խաղերի, աշխարհի և օլիմպիական խաղերի չեմպիոն:

42. Տեր-Հովհաննիսյան Իգոր Արամի (ծն. 1938, Կին) – Հեռացատկորդ: ՀԽՍՀ սպորտի վաստակավոր վարպետ (1960): ԽՍՀՄ, Եվրոպայի, աշխարհի և օլիմպիական խաղերի չեմպիոն: Հնդգրկված է աշխարհի 10 լավագույն հեռացատկորդների շարքում:

43. Մուշեղյան Նորայր Թադևոսի (ծն. 1935, Երևան) – Ըմբշամարտիկ, ՀԽՍՀ սպորտի վաստակավոր վարպետ (1963), ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ (1980): Սպարտակիադաների, ԽՍՀՄ և աշխարհի չեմպիոն: «Զորավար Անդրանիկ» հայոց համազգային միության նախագահն է 1986թ.ից:

4. ՀԱՄԱՀԱՄԱՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
3. ՁԱՐԴՔԱՆԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆԱՐԱՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԿԱՐ
Ա. ԲՈՂԻՆՅԱՆԻՆՆԵՐԻ ՄՓՅՈՒՆՔԱՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊԵՏՈՒՄ
ՆՊԱՏԱԿՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն լայն կապեր ունի սփյուռքի հարյուրավոր կազմակերպությունների՝ հայրենակցական ու մշակութային միությունների, դպրոցների ու ակումբների, թերթերի ու հանդեսների խմբագրությունների և բազմաթիվ անհատ մտավորականների հետ:

Կոմիտեն իր առջև դրված նպատակներն իրագործելու համար կազմակերպում է խմբային ու անհատ գործիչների հրավիրումը Հայաստան, որը մեծապես նպաստում է սփյուռքի և Հայաստանի միջև կապերի զարգացմանը: Ինչպես Ձեզ հայտնի է՝ այս հրավերները կատարվում են համապատասխան մարմինների որոշման համաձայն:

Սակայն Կոմիտեի աշխատանքային երեք ամիսների փորձը ցույց տվեց, որ սփյուռքահայ շատ նշանավոր գործիչներ Հայաստան են այցելում նաև տուրիզմի գծով:

Քիչ չեն տուրիզմի գծով եկող այնպիսի արվեստագետների ու մտավորականների թիվը, որոնք գալիս են սովետական դեսպանությունների ու հյուպատոսարանների խորհուրդներով ու հավաստիացումներով, որ նրանց՝ Հայաստանում գտնվելու միջոցին, Կոմիտեն կդարձնի իր հյուրը, միաժամանակ համապատասխան աշխատանք տանելով իրենց հետ:

Այդպիսիք են վերջին այցելություններից՝ Ամերիկահայ առաջադիմական միության գլխավոր քարտուղար Վ. Ղազարյանը,⁴⁵ «Արարատ-գրական» հանդեսի խմբագիր Հ. Նորունին⁴⁶ /Բեյրութ/, դոկտոր Ռ. Ճեպեճյանը⁴⁷ /Հալեպ/, հա-

44. Ձարոյան Յակով Նիկիտայի (1908, Արդվին – 1980, Մոսկվա, թաղված է Երևանում) – Պետական, կուսակցական գործիչ: 1960-1966թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարը: Ղեկավարության տարիներին, նրա ջանքերով հնարավոր եղավ հարց հարուցել ԽՍՀՄ իշխանությունների առջև՝ Մեծ Եղեռնի իրողությունը հիշատակելու և հայոց միլիոնավոր նահատակների հիշատակին հուշակոթող կառուցելու խնդրի կապակցությամբ:

45. Տե՛ս ծանոթագրություն թիվ 19, էջ 17-18:

46. Նորունի (Նորաշխարհյան) Հակոբ Լևոնի (1926, գյուղ Յոդուն-Օլուք, Մուսալեռ – 1985, Երևան) – Գրող, հրապարակագիր, խմբագիր: Ավարտել է Բեյրութի Ֆրանսիական համալսարանը: Եղել է ՄՀՀԿ հովանու տակ գործող Նոր սերունդ մշակութային միության վարչության նախագահը, 1956-1965թթ.: «Արարատ-Գրական» հանդեսի խմբագիրը, աշխատակցել մի շարք այլ պարբերականների: Հայրենադարձվել է 1975 թվականին: Արժանացել է ԽՍՀՄ «Ժողովուրդների բարեկամության» շքանշանին:

47. Ճեպեճյան Ռոբերտ (1909, Այնթապ – 2001, Հալեպ) – Անվանի ակնաբույժ, մշակութային և հասարակական գործիչ: Ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկության ֆակուլտետը, կատարելագործվել՝ Փարիզում: Հռչակվել է Հալեպում 1948թ.ին հիմնած իր անձնական ակնաբուժական հիվանդանոցով և վերջինիս շենքում տեղակայված «Վիդեո Ճեպեճյան» գրադարանով, ուր պահվում են հայկական մամուլի եզակի հավաքածուներ, ցեղասպանության և դրան հաջորդած տարիների հայոց գաղթականների լուսանկարներ և այլ արժեքներ: 1955թ. ին Հալեպում Ջարեհ Կապլանի հետ հիմնել է «Մարտիրոս Սարյան» նկարչական ակադեմիան,

սարակական գործիչ Ա. Դարբինյանը⁴⁸ /Փարիզ/, քանդակագործ Ն. Ջարյանը⁴⁹ /Հոռոմ/, և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ այս ճանապարհով եկող գործիչներից ոմանք մեծ ծառայություններ ունեն հայ մշակույթի պրոպագանդման, հայ արժեքների Հայաստան փոխադրման գործում ու ջերմ պաշտպաններ են Մայր Հայրենիքի և սփյուռքի միջև կապերի ընդլայնմանը: Իսկ սփյուռքում հարգանք ու ժողովրդականություն վայելող այս գործիչների նկատմամբ մեզ մոտ առանձնահատուկ վերաբերմունք ցույց տալը՝ մեծ արձագանք է գտնում արտասահմանի հայության լայն զանգվածների շրջանում:

Լինում են և դեպքեր, երբ հանրապետության գիտական-մշակութային որոշ կազմակերպություններ միջնորդում են Կոմիտեին՝ Հայաստանում գտնվող սփյուռքահայ գործիչներին մի քանի օրով հյուր դարձնելու, նրանց համերգները, ցուցահանդեսները, ռադիոհեռույթները, հանդիպումները և այլն կազմակերպելու համար:

Նկատի ունենալով տուրիզմի հետագա զարգացումը առաջիկա տարիներին և այդ պատճառով ակնկալվող սփյուռքահայ հայտնի գործիչների ու արվեստագետների առավել շատ այցելությունները Հայաստան, ինչպես և մեր աշխատանքների մեջ բարդություններ ու անկանոնություններ թույլ չտալու համար /քանի որ նման հյուրերի վրա կատարվող ծախսերը իրագործվում են բանավոր համաձայնությունների ու կարգադրությունների միջոցով/, խնդրում ենք համապատասխան կարգադրություն անել, որպեսզի նախագահությունը կամ նախագահը լիազորվեր իր հայեցողությամբ /այս ուղղությամբ/ տնօրինելու որոշ ֆինանսներ:

Եթե ընդունելի չէ այս, ապա ցանկալի կլինեք, որ կառավարությունը մշակեր մի այնպիսի ձև, որ նման հարցի դեպքում այն լուծվեր գործնականորեն արագ ու կարճ ժամանակամիջոցում:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, թթ. 67-68: Պատճեն: Մեքենագիր:

որի տնօրենությունը հանձնել է ՀԲԸՄ-ին: Հայաստան է ուղարկել հայ մշակույթի բազմաթիվ արժեքներ՝ արվեստի, մամուլի հավաքածուներ, գրքեր, նաև՝ ակնաբուժական գործիքներ ևն.:

48. Դարբինյան Աղասի Արտակի (1906, Վան – 1987, Փարիզ) – Ֆրանսահայ հասարակական, մշակութային գործիչ: Մեծ ավանդ ունի ֆրանսահայ համայնքի և Հայաստանի մշակութային կապերի զարգացման գործում: Հայաստան է ուղարկել հայ մշակույթի բազմաթիվ արժեքներ՝ արվեստի գործեր, արվեստի, ձեռագրեր ևն.:

49. Ջարյան (Շիրազյան) Նվարդ Կոստանի (1917, Ֆրեդեցիա – 2005, Մանտա Մարինելլա) – Քանդակագործ: Կրթությունն ստացել է Վենետիկի, Միլանի ու Հռոմի գեղարվեստների բարձրագույն վարժարաններում: Ստեղծել է արվեստի բարձրարժեք գործեր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԻՍՅ ՀԱՄԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Ա. ՔՈԶԻՆՅԱՆԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԱՆ Խ. ԴԵՐՁԱԿՅԱՆԻ ԿՏԱԿԸ ԻՐ ՆՊԱՏԱԿԻՆ
ԾԱՌԱՅԵՑՆԵՆՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Փաստաբան Արման Կիզիրը /Լուս Անջելես-ԱՄՆ/ հայտնում է, թե անցյալ տարի այնտեղ մահացած դոկտոր Խաչիկ Դերձակյանը Հայկական բարեգործական ընդհանուր միությանն է կտակել 176.375 դոլարի մի գումար, որ շարունակ ավելանում է մի շարք արժեթղթերից ամեն ամիս հասած շահութաբաժիններով:

Կտակի կարևորությունը նրանումն է, որ այն հանձնվել է ՀԲԸՄ-ին գործածելու ուսման կարոտ ու խոստումնալից այն ուսանողների համար, նախընտրաբար և նախնականորեն Հայաստանից, որոնք ցանկանում են մասնագիտություն ստանալ Հայաստանի կամ օտար համալսարանների մեջ՝ վերադառնալու համար Հայրենիք ու այնտեղ ծառայելու հայ ժողովրդին:

Հանգուցյալը ցանկանում էր գումարը կտակել Երևանի պետական համալսարանին, սակայն որոշ մարդիկ պնդում էին նրա միտքը, ասելով, թե «Հայաստան դրամ չերթար և երթալ ան՝ իր նպատակին չի ծառայեր»:

Ա. Կիզիրը խնդրում է, որ այս իրողությունը հայտնենք Հայաստանի պետական իշխանություններին ու հաստատություններին, այս հարցով զբաղվելու և ըստ այնմ շփման մեջ մտնելու Բարեգործականի հետ՝ հանգուցյալի կտակը իրագործելու նպատակով:

Խնդրում ենք Ձեր կարծիքը այս մասին:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, թ. 69: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ
ՎԱՐԻՉ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆՆԵՐԻՆ՝ Ա. ԱՆՊՈՅԱՆՆԵՐԻՆ՝ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ
ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում կայացավ խորհրդակցություն՝ ընկ. ընկ. Վարդգես Համազասպյանի, Աշոտ Հովհաննիսյանի,⁵² Լևոն Խաչիկյանի,⁵³ Էդուարդ Թովիյանի,⁵⁴ Հրաչյա Քոչարի,⁵⁵ Սարգիս Մելիք-Լևոն Խաչիկյանի,⁵⁶ Էդուարդ Թովիյանի,⁵⁷ Արմեն Զիլինգարյանի⁵⁸ մասնակցությամբ, սերյանի,⁵⁶ Աշոտ Հարությունյանի,⁵⁷ Արմեն Զիլինգարյանի⁵⁸ մասնակցությամբ, որը քննարկեց հայ բանասեր-պատմաբան Արշակ Ալպոյաճյանի՝ Եգիպտոսից

50. Վարդգեսյան Ստեփան Հմայակի (1923, գյուղ Ագատավան, Արտաշատի շրջան) – ՀԽՍՀ պետական և ՀԿԿ գործիչ: Մովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Եղել է ՀՊԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար, շրջկոմների առաջին քարտուղար, երկու նախարարությունների ղեկավար, ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ, ՀԿԿ Կենտկոմի բաժինների վարիչ: Զբաղվել է նաև գրականությամբ, գրել երգեր, պիեսներ, հուշագրություն ևն., որոնք լույս են տեսել շուրջ 10 գրքով:

51. Ալպոյաճյան Արշակ Աստվածատուրի (1879, Կ. Պոլիս – 1962, Կահիրե) – Պատմաբան, բանասեր, մանկավարժ, հասարակական գործիչ: Կրթությունն ստացել է ծննդավայրի Պերպերյան և Կեդրոնական վարժարաններում: Հայտնի է բնօրրանների (Կեսարիա, Մալաթիա, Եփրոնիա, Կուտիս), հայ գաղթականության պատմության, ազգային ակնավոր գործիչների կյանքին ու գործունեությանը նվիրված բարձրարժեք երկերով:

52. Հովհաննիսյան Աշոտ Գարեգինի (1887, Շուշի – 1972, Երևան) – Կուսակցական և պետական գործիչ, պատմաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1960): 1921-1927թթ. վարել է ՀԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարի պաշտոնը: Հայտնի է հայկական ազատագրական շարժման և հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը նվիրված գիտական մեծարժեք աշխատություններով:

53. Խաչիկյան Լևոն Ստեփանի (1918, Երևան – 1982, Երևան) – Բանասեր-աղբյուրագետ, պատմական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1968), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1971): 1954թ.ից մինչև մահը վարել է Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենի պաշտոնը: Ունի գիտական բարձրարժեք աշխատություններ:

54. Թովիյան Էդուարդ Ստեփանի (1911, գյուղ Էվջիլյար, Մուրմալուի գավառ – 1975, Երևան) – Գրականագետ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1970): Եղել է Հայաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար (1944-1946 և 1954-1975), ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամ (1963-1971):

55. Քոչար Հրաչյա (Գաբրիելյան Հրաչյա Քոչարի, 1910, գյուղ Գումլուբուջա, Բագրևանդի գավառ, Արևմտյան Հայաստան – 1965, Երևան) – Գրող, հրապարակախոս, խմբագիր: Մասնակցել է երկրորդ աշխարհամարտին և հայտնի է նաև իր ճակատային գրական ստեղծագործություններով:

56. Տե՛ս թիվ 10 ծանոթագրությունը, էջ 16:

57. Հարությունյան Աշոտ Հովսեփի (1911, գյուղ Արծվանիկ, Ղափանի շրջան – 1986, Երևան) – Պատմական գիտությունների դոկտոր: Մովորել է Երևանի խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, ռազմական ակադեմիայում: 1941-1968թթ. գործել է խորհրդային բանակում, հասել գեղապետի աստիճանի: 1963թ.ից մինչև մահը վարել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր Արխիվային վարչության պետի և «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի գլխավոր խմբագրի պաշտոնները:

58. Զիլինգարյան Արմեն Արշակի (1910, Ալեքսանդրապոլ – 1986, Երևան) – Գեղանկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1960): Մովորել է Լենինգրադի Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիայում: Ձևավորել է թատերական ներկայացումներ և գեղարվեստական գրականության հատորներ:

ստացված արխիվը, գրադարանը ինչպես նաև այլ նյութերը համապատասխան հիմնարկություններին հանձնելու հարցը:

Խորհրդակցության մասնակիցները որոշեցին.

Արշակ Ալպոյաճյանի արխիվը հանձնել Մատենադարանին, իսկ նրան պատկանող գրականությունը /2000 գիրք/ Ակադեմիայի հիմնարար գրադարանին: Որոշվեց նաև ստացված մյուս նյութերը հանձնել Պետական արխիվային վարչությանը՝ հատուկ հանձնաժողովի միջոցով համապատասխան կազմակերպություններին տալու համար:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, ք. 73: Պատճեն: Սեքրետագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԼԱՄԱԿԸ ԴԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲՆԱԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՌՈՒՄԻՆԱԴԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ Հ. ՍԻՐՈՒՆՈՒՆ՝⁵⁹ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԱԴԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում է ապրում արևմտահայ մտավորականության ճանաչված ներկայացուցիչ, անվանի հայագետ Հակոբ Սիրունին:

Արդեն ծերության թռչակի անցած գիտնականը մինչև վերջերս աշխատում էր Ռումինական ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում և պետական արխիվում:

Երկար ժամանակ զբաղվելով հայագիտությամբ, Հակոբ Սիրունին հեղինակ է մի քանի տասնյակ հրատարակված արժեքավոր բանասիրական աշխատությունների, որոնք նվիրված են հայոց լեզվին, հայ գրականությանը, հայ արվեստին, հայ ժողովրդի պատմությանը, ունի նաև շուրջ 20 չհրատարակված գործեր՝ նվիրված հայ կյանքին, հայ նշանավոր գրողներին, հայագիտությանն ու արևելագիտությանը:

Անվանի հայագետի ու արևելագետի աշխատություններից շատերը, հրատարակվելով Ռումինիայում, լայն ճանաչում են բերել նրան:

Այժմ, Հակոբ Սիրունու ձեռքի տակ կան արխիվային արժեքավոր փաստաթղթեր, նշանավոր անձանց ձեռագրեր:

Նրա աշխատություններից /«Պոլիսը և նրա դերը»/ հրատարակվել են նաև Սովետական Հայաստանի պարբերականներում:

Հակոբ Սիրունին, լինելով Դանիել Վարուժանի ընկերը, ժամանակին նրա հետ խմբագրել է «Նավասարդ» ամսագիրը: Նույն ամսագիրը նա հրատարակել է նաև Բուխարեստում՝ 1923-26 թվականներին:

Ժամանակին Հակոբ Սիրունին Պոլսում եղել է մի շարք թերթերի խմբագիր, գրել է բանաստեղծություններ, եղել է թատերագետ:

Հակոբ Սիրունին զգալի աշխատանք է կատարել Բուխարեստի հայ և ռումինական մշակութային կյանքի կազմակերպման և արխիվների հավաքման գործում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հակոբ Սիրունին հայ համայնքի հանձնարարությամբ, ռումինահայ հանձնաժողովի կազմում, օգնություն է կազմակերպել հայ ռազմագերիներին, հանդիպումներ է ունեցել նրանց հետ:

Նա վայելում է Ռումինիայի գիտնականների հարգանքը և Ռումինիայի Արևելագետների ընկերության անդամ է:

Հակոբ Սիրունին ճանաչված հեղինակություն է նաև մեր հանրապետության գիտնականների շրջանում:

59. Սիրունի (Ճուլյան) Հակոբ Առաքելի (1890, Աղաբազար – 1973, Բուխարեստ) – Հայագետ, արևելագետ, գրող, գրականագետ, հրապարակախոս, հասարակական գործիչ: Կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա Կ. Պոլսի Էսայան վարժարանում, ուսանել Կ. Պոլսի համալսարանի իրավաբանության ֆակուլտետում: Խմբագրել ու հրատարակել է բազմաթիվ պարբերականներ: Պոլսի հայկական գաղթօջախի պատմության, արևմտահայ գրողների կյանքի ու վաստակի և շատ ուրիշ հարցերի մասին մեծարժեք աշխատությունների հեղինակ է:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, ելնելով վերը նշվածից և նկատի ունենալով, որ Հայաստանի պատմաբանների, արևելագետների ու բանասերների համար նշանակություն կունենան նրա հետ մոտիկից հանդիպումները, նպատակահարմար է գտնում առաջիկա ամիսներին Մովետական Հայաստան հրավիրել Հակոբ Սիրունուն:

Խնդրվում է Ձեր կարգադրությունը՝ դրականորեն լուծելու մեր կոմիտեի միջնորդությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, թթ. 71-72: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԻՄՆ ՀԱՄԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն իր առջև դրված նպատակներն իրագործելու, սփյուռքի և Մովետական Հայաստանի միջև կապերը զարգացնելու համար, ձգտում է ընդլայնել գոյություն ունեցող կապերը:

Այժմ մենք կապ ունենք սփյուռքի մոտավորապես 600 զանազան կազմակերպությունների՝ մշակութային միությունների, դպրոցների, թերթերի ու հանդեսների խմբագրությունների, ակումբների, հայրենակցական միությունների, ինչպես նաև անհատ գործիչների, որոնց կարգին՝ գրողների, գիտնականների, արվեստագետների հետ և այլն:

Մինչև տարվա վերջը կունենանք 150-200 նոր հասցեների հավելում, իսկ այսուհետև, մեր կանխատեսումների համաձայն, մեզ հետ կապ պահպանող կազմակերպությունների ու անհատների թիվը տարեկան կավելացնենք ոչ պակաս քան 200-ով:

Կապերի այսպիսի ընդլայնման պայմաններում ստեղծագործական ողջ աշխատանքի ծանրությունը /կապերի զարգացում և ընդլայնում, նամակագրության վարում, պահանջների բավարարում, տեղեկագրերի կազմում/ ընկած է լինելու կապերի բաժնի չորս ավագ ռեֆերենտների վրա: Այստեղ յուրաքանչյուր ռեֆերենտ սպասարկում է մինչև 10 և ավելի երկրների հայության հետ տարվող կապերը:

Այս տարվա վերջին մեր ստացած նամակների թիվը կհասնի մոտավորապես 2.000-ի: Եվ այսքան նամակ պատասխանել ժամանակին, բավարարելով նրանցում բարձրացված պահանջները, ուժերից վեր է դառնում այս բաժնի համար: Նամակներ կան, որոնցից յուրաքանչյուրն իր լուծումը ստանալու համար պահանջում է մինչև մեկ ամիս և առավել ժամանակաշրջան, քանի որ մեր աշխատանքները առնչվում են հանրապետության զանազան հիմնարկությունների հետ:

Կապերի բաժնի ռեֆերենտները աշխատում են նաև Կոմիտեի հյուրերի, ինչպես և զբոսաշրջիկների հետ: Իսկ այսպիսի հյուրեր ենք ընդունում տարվա բոլոր ամիսներին և առավելաբար մայիս-հոկտեմբեր ժամանակամիջոցում:

Ռեֆերենտները կատարում են և այլ բնույթի աշխատանքներ՝ երեկոների կազմակերպում, գրականության և մամուլի առաքման կազմակերպում, բաժանորդագրություն և զանազան կողմնակի աշխատանքներ /Հայրենիք վերադարձողների դիմումներին ընթացք տալը, իրենց հարազատներին փնտրող մարդկանց խնդրանքների բավարարումը, արտասահման մեկնող անհատ ու խմբական զբոսաշրջիկների նախապատրաստումն ու նրանց փաստաթղթերի ձևակերպումը/, որոնք խլում են աշխատանքային օրվա ժամանակի մեծ մասը:

Ծանրաբեռնված է աշխատում նաև մամուլի բաժինը, որը նյութեր է մշակում սփյուռքահայ մամուլի համար:

Վերը թվարկված աշխատանքներից զատ, Կոմիտեի աշխատակիցների

պարտականությունների մեջ է մտնում մասնակցել 15 օրյա բյուլետենի կազմությանը և թղթակցել Կոմիտեի ռադիոամսագրին:

Ինչպես գիտեք, Կոմիտեին կից, հասարակական կարգով գործում են մի շարք հանձնախմբեր՝ կրթական, գրականության, տիկնանց, հայրենակցական և այլն, որոնց շուրջ ընդգրկված են հանրապետության անվանի մտավորականներն ու գործիչները: Սակայն այս աշխատանքների վարումը դարձյալ ընկնում է բաժինների աշխատակիցների վրա: Մեր աշխատակիցների համար քիչ ժամանակ է մնում սփյուռքը, նրա խնդիրներն ու քաղաքական ուղղություններն ուսումնասիրելու համար: Աններելի դանդաղություն էնք հանդես բերում հայրենակցական միությունների հետ տարվող մեր կապերում: Սփյուռքում գործող մի քանի տասնյակ հայրենակցական միությունների գլխավոր նպատակն է՝ հայ աշխատավորությանը Հայրենիքի շուրջ համախմբելը և մասնակցելը նրա կառուցմանը:

Հայաստանում Արևմտյան Հայաստանի բնակավայրերի անուններով ավաններ ու թաղամասեր կոչելը ստանում է կարևոր նշանակություն, քանի որ հայ զանգվածների հայացքները ուղղում է Սովետական Հայաստանին, ուր իրագործվում են համայն հայության երազանքները: Իսկ առաջներում թույլ են տրվել շատ սխալներ հայրենակիցների հետ գործակցելիս: Հաճախ անտեսվել են նրանց պահանջները, անկատար մնացել խնդրանքները, և չնայած այդ բոլորին, հայրենակցական միություններն այսօր ջախջախիչ մեծամասնությամբ դարձյալ Հայրենիքի հետ են և պատրաստ իրենց լուսման ներդնելու նրա կառուցման, վերելքի գործին:

Ձեզ հայտնի են Համաաբաստահայ վերաշինաց, Արաբկիրի, Մալաթիայի, Համաքղեցիական և այլ միությունների նվիրատվությունները Հայաստանին:

Այժմ մի շարք հայրենակցականներ՝ Թլկատիների, Մալաթիայի, Հաճրնի և այլն ունեն դրամական հատկացումներ Հայաստանի համար, սակայն մի շարք պատճառներով հնարավոր չէ ժամանակին դրանց իրագործումը: Դրամական մեծ ֆոնդեր են պահ դրված՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության մոտ, որ նվիրատվություններ են Հայաստանին:

Այսպիսի նվիրատվությունները գլխավորապես կատարվում են հայ աշխատավորության կողմից, իսկ դրանց չընդունումը բացասաբար է անդրադառնում առաջադիմականների տարած պայքարին, քանի որ հայրենակցականների մեծ մասը հայաստանասեր ուժերի ձեռքում է ներկայումս, իսկ մի քանիսը գործակցում են Ամերիկահայ առաջադիմական միության հետ:

Նկատի ունենալով այն, որ առաջիկա շրջանում խիստ կընդարձակվեն մեր կապերը, խնդրում ենք ավելացնել Կոմիտեի ստեղծագործական աշխատակիցների թիվը՝ վեց ու կես հաստիք միավորով:

Անհրաժեշտ ենք գտնում ստեղծել՝

ա/ Նամակների բաժին՝ երկու ավագ ռեֆերենտներով և մեկ բաժնի վարիչով

բ/ Ունենալ կապերի բաժնի վարիչ

գ/ Հայրենակցական և բարեգործական միությունների բաժին՝ վարիչի /մեկ/ և իրավախորհրդատուի /կես/ հաստիքներով՝ նվիրատվությունների ու կտակների հարցերով զբաղվելու համար:

դ/ Կոմիտեի նախագահի ևս մեկ տեղակալ՝ սփյուռքահայ մամուլի և հայրենակցական, բարեգործական միությունների գծով:

Վստահ եղեք, որ Կոմիտեի բոլոր աշխատակիցները չեն խնայի ուժերը իրենց առջև դրված խնդիրները պատվով կատարելու համար:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, թթ. 74-77: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՐՂԱՍԱՐՅԱՆԻՆ
ՖՐԱՆՍԱԶԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՐԱԿԵՐՈՎ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ
ԱՆՎԱՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՖՐԱՆՍԻԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտնում ենք, որ Ֆրանսահայ մշակութային միության կենտրոնական վարչությունը մեծ աշխատանք է տանում լայնորեն նշելու Հայաստանում սովետական կարգերի հաստատման 44-րդ տարեդարձը Ֆրանսիայում: Այդ առթիվ վարչությունը և ԺԱՖ-ը⁶⁰ մեր կոմիտեին հրավեր է ուղարկել, խնդրելով Փարիզ ուղարկել Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանին և մեկ անսամբլ: Կոմիտեն նպատակահարմար է համարում Փարիզ ուղարկել Կոմիտասի⁶¹ անվան կվարտետը, Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանին և եթե հնարավոր է՝ բանաստեղծ Գևորգ Էմինին⁶² և ժողովրդական դերասան Շարա Տալյանին⁶³ մեկ դաշնակահար նվագակցողի հետ:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, ք. 83: Պատճեն: Սեքրետարի:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Յ. ՋԱՐՈՒՅԱՆԻՆ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅ ՄԻ ՇԱՐՔ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՊԱՌՎՈՐ ՔԱՆԱԿՆ ԱՎԵԼԱՅՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայումս արտասահմանում հրապարակվում են 130-ից ավելի հայկական թերթեր ու հանդեսներ, որ բարձրագույն մի թիվ է սփյուռքահայ մամուլի ողջ պատմության մեջ:

Հրատարակվող պարբերականների գերակշռող մասը կուսակցական ու նման թեքում ունեցող մամուլ է, թեև շատ երկրների քաղաքական պայմանների պատճառով հայ մամուլը չվտանգելու համար խուսափում են կուսակցական կոչվելուց, կամ նման պայքար տանելուց:

Սփյուռքում հրապարակվում են՝ կոմունիստական, հնչակյան, ռամկավարական, դաշնակցական և զգալի թվով չեզոք թերթեր:

Ներկա շրջանում ամենատարածուն մամուլն ունի «Դաշնակցություն» կուսակցությունը, որը և հրատարակում է բոլորից շատ օրաթերթեր, գրեթե բոլոր հայաշատ գաղութներում՝ «Ազգակ» /Բեյրութ – Լիբանան/, «Յառաջ» /Փարիզ – Ֆրանսիա/, «Հուսաբեր» /Կահիրե – ՄԱՌ⁶⁴/, «Ազատ օր» /Աթենք – Հունաստան/, «Հայրենիք» և «Ասպարեզ» /Դու Յոք, Ֆրեզնո – ԱՄՆ/, «Արմենիա» /Բուենոս Այրես – Արգենտինա/, «Ալիք» /Թեհրան – Իրան/:

Ստամբուլահայ երկու օրաթերթերը՝ «Ժամանակ» և «Մարմարա» պետք է դիտել որպես չեզոք, թեև տրադիցիաներով կուսակցական են՝ ինչպես «Ժամանակը», որ ռամկավարական է:

Առաջադիմական ուժերը միասին վերցրած հրատարակում են չորս օրաթերթ, որից երեքը՝ ռամկավարական՝ «Պայքար» /Բոստոն – ԱՄՆ/, «Զարթոնք» /Բեյրութ – Լիբանան/, «Արև» /Կահիրե – ՄԱՌ/ և մեկ հնչակյան՝ «Արարատ» /Բեյրութ/:

Կոմունիստները չունեն և ոչ մեկ օրաթերթ, թեև նախապատերազմյան և հետպատերազմյան շրջանում հրատարակել են: Կոմունիստական «Աշխարհ» /Փարիզ/, «Մեր նշանաբանն է «Յառաջ» /Բեյրութ/, «Սևան» /Բուենոս Այրես/ պարբերականները շաբաթաթերթեր են, «Լրաբեր»-ը /Դու Յոք/՝ երկօրյա թերթ:

Որքան մեզ հայտնի է անձամբ սփյուռքահայ խմբագիրների ու գործիչների հետ ունեցած գրույցներից, խիստ անմխիթարական է առաջադիմական մամուլի նյութական հիմքը: Շատ թերթեր չունեն տառամայրեր, օժանդակ նյութեր, այլև ի վիճակի չեն պահելու վարձատրվող գրական աշխատողներ: Աշխատողներ չունենալն է գլխավոր պատճառը, որ առաջադիմական որոշ թերթեր՝ «Լրաբեր», «Սևան» լույս են տեսնում ոչ պահանջված մակարդակով: Նրանք գրեթե «ապրում են» մեր կոմիտեի մամուլի բաժնի պատրաստած նյութերով, սովետահայ ու սփյուռքահայ մամուլից արտատպություններ կատարելով: Նրանք քիչ են մեկ-

64. Միացյալ Արաբական Ռեպուբլիկա (Հանրապետություն) – 1958թ.ին Եգիպտոսի և Միջին հարավում ստեղծված պետական միավոր: Միությունից 1961թ.ին Սիրիայի անջատումից հետո Եգիպտոսը շարունակեց պահպանել այդ անվանումը՝ դա վերագրելով միայն իրեն իրեն:

60. Ֆրանսահայ երիտասարդական միության ֆրանսերեն անվան հապավումն է:

61. Կոմիտաս վրդ. (Սողոմոնյան Սողոմոն Գևորգի, 1869, Կոտլիսա – 1935, Փարիզ, թաղված է Երևանում՝ իր անունը կրող զբոսայգու պանթեոնում) – Երգահան, երգիչ, խմբավար, մանկավարժ և հասարակական գործիչ: Սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, երաժշտական բարձրագույն կրթությունն ստացել Բեռլինում: Միջազգային երաժշտական ընկերության հիմնադիրներից է: Հավաքել և նոտագրել է հայկական ժողովրդական երգեր, մշակել դրանց մեծ մասը և հայ երգը ներկայացրել աշխարհին՝ Ռուսաստանում Կ. Պոլսում, Եգիպտոսում, արևմտաեվրոպական երկրներում և այլուր տված բազմաթիվ համերգներով: Հորինել է բազմաթիվ ստեղծագործություններ, հատկապես՝ աշխատանքային ու հոգևոր երգեր: Հայկական ազգային երգահանական դպրոցի հիմնադիրն է:

62. Էմին Գևորգ (Մուրադյան Կարլեն Գրիգորի) (1919, Աշտարակ – 1998, Երևան, թաղված է Աշտարակի Կարմրավոր եկեղեցու բակում) – Բանաստեղծ, թարգմանիչ: Գրել է նաև սցենարներ, որոնց հիման վրա ստեղծվել են փաստավավերագրական կինոնկարներ: Երկերի մի մասը թարգմանաբար լույս է տեսել օտար լեզուներով:

63. Տալյան Շարա Մկրտչի (1893, Թիֆլիս – 1965, Երևան) – Երգիչ (տենոր, հետագայում՝ բարիտոն), թատերական, երաժշտական և հասարակական գործիչ, ՀԽՄՀ ժողովրդական արտիստ (1939): Սովորել է ծննդավայրի Ներսիսյան դպրոցում և Պետրոգրադի (Մանկու Պետերբուրգ) կոնսերվատորիայում: Դերեր է ստանձնել հայկական օպերաներում: Մեծ է նրա ավանդը հայկական միջնադարյան տաղերի, աշուղական ու ժողովրդական երգերի տարածման մեջ:

նաբանում տեղական կյանքը, հայ գաղութի առօրյան, որը անհետաքրքիր ու միակողմանի է դարձնում թերթը:

Այդ է պատճառը, որ քիչ է նրանց տարածումը և, նույնիսկ, Բեյրութի նման հայաշատ ու հայախոս քաղաքում «Արարատ» և «Զարթոնք» թերթերի տպաքանակը չի անցնում 2-3 հազարը /իսկ այս թերթերը տարածվում են նաև մյուս գաղութներում/: Այսպիսի քիչ տպաքանակի պատճառով առաջադիմական թերթերը չեն կարողանում հոգալ իրենց ծախսերը, պահել գրական աշխատողներ կամ շաբաթաթերթերից վերածվել երկօրյա-եռօրյայի ու օրաթերթերի:

Դաշնակցական մամուլն իր կազմակերպվածությամբ /նրանք հրատարակում են նաև մի շարք հանդեսներ/ ուժեղ պայքար է տանում առաջադիմական թերթերի դեմ՝ նեղացնելով նրանց տարածման շրջանակն ու թուլացնելով ազդեցությունը:

Կարծում ենք, թե ներկա պայմաններում հասունացել է սփյուռքի մի քանի հայաշատ կենտրոններում, գլխավորապես Փարիզում ու Նյու Յորքում, ստեղծելու առաջադիմական օրաթերթեր: Որքան մեզ հայտնի է՝ «Աշխարհ»-ը պատրաստ է վերածվելու օրաթերթի:

Այս իրագործելու համար, ինչպես և առաջադիմական թերթերին օգնած լինելու նպատակով, նախ և առաջ անհրաժեշտ է ավելացնել այդ թերթերի որոշ տպաքանակի սպառումը Սովետական Հայաստանում: Դրանով հնարավոր կլինի կայունացնել այդ թերթերը և թույլ տալ նրանց պահելու գրական աշխատողներ, կամ շաբաթաթերթից վերածվելու երկօրյա-եռօրյայի կամ օրաթերթի: Դա խթան կհանդիսանա նաև բարձրացնելու հրատարակվող նյութերի գաղափարական ու գրական մակարդակը, հետևաբար և ավելի հաջող ու ամենօրյա պայքար տանել դաշնակցականների հակասովետական պրոպագանդայի դեմ՝ հայ աշխատավորության լայն զանգվածները համախմբելով Մայր Հայրենիքի շուրջը:

Նպատակահարմար է առաջին հերթին նկատի ունենալ հետևյալ թերթերի տպաքանակի ավելացումը՝ «Լրաբեր», «Աշխարհ», «Յառաջ» /Բեյրութ/,⁶⁵ «Զարթոնք», «Արարատ», «Սևան», «Արև»:

Գումիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, թթ. 85-87: Պատճեն: Մեքենագիր:

65. Փակագծերում հատուկ նշվել է Բեյրութը՝ այդ քաղաքում լույս տեսնող, կոմունիստներին համակիր «Մեր նշանաբանն է յառաջ» (ավելի տարածված է գործածվող կրճատ «Յառաջ» անունը) թերթը տարբերակելու համար Փարիզում լույս տեսնող նույնանուն, Դաշնակցության համակիր օրաթերթից:

ԹԵՀՐԱՆՈՒՄ ԽՍՅՄ ԴԵՄԱՆՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՊՏՈՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻԶ
Վ. ԲԵԶԳԻՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Как Вам известно, армянская колония в Иране насчитывает около 140 тысяч человек и до 80 тысяч из них проживают в Тегеране. Армяне-соотечественники питают горячую любовь к СССР и родине их предков - Советской Армении, многие из них посещают Консульство и клуб Посольства и, с целью знакомства с жизнью Армянской ССР, высказывают просьбу дать им ознакомиться с газетами и журналами, издающимися в Советской Армении.

Однако, из-за отсутствия такой печати, мы не всегда в полной мере можем удовлетворить запросы армян.

В этой связи мы просим по возможности направлять в адрес Консульского отдела литературу, издаваемую в Армянской ССР, в частности номера газет "Советакан Айастан", "Авангард", журналов "Советакан Айастан", "Советакан Арвест". Нас бы удовлетворило, если бы Вы высылали нам по 10 экземпляров каждой газеты и каждого журнала.

Кроме того, мы просили бы Вас обеспечить нас фотоматериалами для стенда клуба местной советской колонии об армянах-репатриантах; новых городах и поселках, где живут и трудятся репатрианты; архитектурном проекте Еревана и его новостройках; достижениях в области промышленности, сельского хозяйства, науки и техники; культурной жизни в городах и сельских местностях и т.п.

Мы будем очень благодарны Вам за присланные литературу и фотоматериалы.

Заведующий Консульским отделом
Посольства СССР в Иране

В. Безгин

Ֆ. 875, ց. 1, գ. 1, թ. 58. Բնագիր: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՐԱՎՍԼԱՎԱԴԱՅ Ա. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆԻՆ՝⁶⁶
ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի հայրենակից,

Ուրախությամբ ստացել ենք Ձեր 20-ը նոյեմբերի թվակիր նամակը, ուր կան մի շարք խնդիրներ:

Ձեր պահանջած գրականության ցանկը հանձնված է մեր կոմիտեի առարման բաժնին և հնարավորության սահմաններում կաշխատենք ձեռք բերել դրանք և ուղարկել Ձեր նշած հասցեով:

Ուրախ ենք, որ ստանում և կարդում եք մեր կոմիտեի օրգան «Սովետական Հայաստան» ամսագիրը և կապ եք պահպանում մեզ հետ:

Ցանկալի կլինի նաև, որպեսզի Դուք ևս հնարավորության սահմաններում գրեիք մասնավորապես Բելգրադի և ընդհանրապես Հարավսլավիայի հայկական մշակութային կյանքի մասին:⁶⁷

Տեղյակ եմ պահում, որ Կոմիտեի կողմից կատարված առաքումները անվճար են:

Բարևներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 517, ք. 1: Պատճեն: Մեքենագիր:

66. Աստվածատրյան Արշալույս (1883, գյուղ Քանաքեռ, այժմ՝ Երևանի մաս - 1973, Բելգրադ) - 23-ի և Հայաստանի առաջին հանրապետության գործիչ: Ավարտել է Երևանի թեմական դպրոցը, աշխատել ուսուցիչ զավթներում, 1914թ.ին ավարտել Թիֆլիսի պետական մանկավարժական ինստիտուտը: 1918թ. սկզբին եղել է Արևելյան Հայաստանի բացարձակ իշխանության եռանդամ մարմնի՝ Հատուկ կոմիտեի անդամ, հետագայում՝ Երևանի քաղաքագլուխ: 1921թ. վտարանդվել է Պարսկաստան, 1923թ. անցել Պրագա՝ ուսանելու, ապա անցել Մերքիա, 1939թ.ին հաստատվել Բելգրադում, աշխատել ատամնատեխնիկ: Հեղինակել է «Մարդարապատի պատմաաշխարհությունը» երկը՝ ի պատասխան խորհրդահայ պատմաբան Հարություն Թուրքյանի «Մարդարապատի հերոսամարտը» մենագրության: 23-ի Բոստոնի «Հայրենիք» ամսագրում լույս են տեսել նրա շուրջ 20 հուշագրական հոդվածները՝ նվիրված 19-րդ դարավերջի - 20-րդ դարասկզբի հայկական ազգային ազատագրական շարժման և նրա գործիչներին:

67. Փաստաթղթում տպվել է «Հարավսլավիայի մշակութային կյանքի մասին», ինչը ճիշտ ձևակերպում չէ:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՐԱՐ
Յ. ՋԱՐՈՐՅԱՆԻՆ՝ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅԵՐԻ ԿՈՐԱՅ ՄԵԾ ԵՂԵՆԻՆ 50-ԱՄՅԱԿԸ
ՆՇԵԼՈՒՆ ԱՐՁԱԳԱՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես գիտեք՝ սփյուռքահայ համայնա բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները, իրենց մամուլով, հավաքություններով մեծ նախապատրաստական աշխատանք են ծավալել արժանավայել նշելու Եղենիի հիսնամյակը: Առանձնապես տենդի մեջ է դաշնակցությունը, որն ամեն կերպ աշխատում է խաղալ սփյուռքահայության ազգային զգացմունքների հետ և այդ տարեթիվը օգտագործել իր քաղաքական նպատակների համար: Այդ համահայկական շարժումի առթիվ հայտնի են նաև հայոց Էջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսների կոնդակները:⁶⁸ Եղենիի 50-ամյակից հետո չեն կանգնած նաև Հայ Ավետարանական և Հայ Կաթողիկ եկեղեցիները: 1964 թվականի նոյեմբերի 14-ին Հոռմի Պապ Պողոս VI-ը⁶⁹ հատուկ նամակով արտոնել է Կիլիկիայի հայ կաթողիկ եկեղեցու պատրիարք Պաթանյանին⁷⁰ Հոռմի Ս. Պետրոս եկեղեցում պատարագ մատուցել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայ ժողովրդի զոհերի հիշատակի հիսնամյակի առթիվ: Պատարագը մատուցվել է նոյեմբերի 18-ին: Ներկա է եղել Հոռմի Պողոս VI Պապը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը լայնորեն լուսաբանել են օրվան նվիրված արարողությունը:

Այս փաստերը հանձնելով Ձեր ուշադրությանը, ցանկանում ենք մեկ անգամ ևս շեշտել այն մեծ կարևորությունը, որ արտասահմանում տալիս են Եղենիի հիսնամյակին, և որ Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի պատկերությունը քաղաքական կարևոր նշանակություն ունեցող այդ տարեդարձի նկատմամբ անհասկանալի կլինի սփյուռքահայությանը և առաջադիմական ուժերին, որոնք բոլոր հնարավորությունները ունեն Հայրենիքի հետ միասին գլխավորելու սփյուռքահայության հայրենասիրական շարժումը:

Կից ուղարկում ենք Հոռմում հրատարակված պատարագի ծրագրի և Պապի նամակի թարգմանությունները:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, քթ. 88-89: Պատճեն: Մեքենագիր:

68. Մեծ եղենիի 50-ամյակը համազգային տարողությամբ նշելու մասին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Խորեն Ա-ի կոնդակները հրապարակվել են 1964թ. օգոստոսի համապատասխանաբար 17-ին և 16-ին:

69. Պողոս VI (աշխարհիկ անունը՝ Զիովաննի Բատիար Մոնտինի) (1897-1978) - Հոռմի 263-րդ պապը: Գահակալել է 1963-1978թթ.: Իրականացրել է մի շարք բարեփոխություններ: 1970թ. Վատիկանում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը և Պողոս VI պապը քննարկել են եկեղեցիների մերձեցման ու Հայ և Կաթողիկ եկեղեցիների փոխադարձություն հարցերը:

70. Իգնատիոս-Պետրոս ԺՁ Պաթանյան - Տանն Կիլիկիո կաթողիկոս հայոց կաթողիկոս-պատրիարքը 1962-1976թթ.:

Վ. ՀԱՄԱՁԱՍՏԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԻՍՅ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՎԵԼԱՅՆԵԼՈՒ ԽՆԴԻՐ ՄԱՍԻՆ

Ֆինանսների մինիստրությունը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին 1965 թվականի ծախսերի համար նախատեսել է 135 հազար ռուբլի: Այդ գումարը չի կարող բավարարել Կոմիտեի 1965 թվականին նախատեսած գործունեությանը:

Կոմիտեն արտասահմանյան երկրներում գործող 852 մշակութային և հայրենակցական միություններին, դպրոցներին, ակումբներին, գրադարաններին ու հասարակական գործիչներին բաժանորդագրել է Հայաստանում լույս տեսնող 24 անուն թերթեր և ամսագրեր, շուրջ 9 հազար օրինակով, որը կազմում է 21 հազար ռուբլի: Եթե նկատի ունենանք, որ սփյուռքահայության հետ կապերը Կոմիտեի ստեղծվելուց հետո ընդլայնվում են, և այն, որ 1965 թվականի դեկտեմբերին մեզ նախատեսված գումարով պետք է բաժանորդագրություն անցկացնել նաև 1966 թվականի համար, ապա պարզ կդառնա, որ նախատեսված գումարը չի բավարարի մեր պահանջի նույնիսկ մեկ երրորդը: /Նախատեսված է 14 հազար ռուբլի, ծախսը կազմում է 42 հազար ռուբլի/:

1965 թվականին սփյուռքահայ 250 դպրոցների համար Կոմիտեն պետք է ուղարկի 29 հազար դասագիրք 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ դասարանների համար: Այս դասագրքերի միայն առաքման համար անհրաժեշտ կլինի լրացուցիչ 10 հազար ռուբլի, որը չի նախատեսված 1965 թվականի բյուջեով:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ բաժնեգրության հետ միասին սփյուռքահայությանը անվճար ուղարկվում է պատմական, գեղարվեստական, քաղաքական և գիտական գրականություն, որոնց առաքման ծախսը կազմում է ընդհանուր գումարի 40 տոկոսը: 1965 թվականին նախատեսված է 18 հազար ռուբլի, իսկ մենք 6 ամսվա ընթացքում ուղարկել ենք 11 հազարի գրականություն, իսկ եթե սրան ավելացնենք 4-րդ և 7-րդ դասարանների դասագրքերը, որի առաքման ծախսերը կազմել են 3 հազար ռուբլի, ապա պարզ կդառնա, որ միայն դասագրքերի առաքման վրա կծախսվի 16 հազար ռուբլի: Լուրջ գումար են կազմում նաև արտասահմանյան զբոսաշրջիկներին ու հյուրերին տրվող հուշանվերները: Կոմիտեն կարիք ունի մեծ գումարի՝ հուշանվերների բազա ստեղծելու համար, նկատի ունենալով, որ ԱՕԿՄ-ը համապատասխան քանակությամբ հուշանվերներ չի առանձնացրել Կոմիտեին հանձնելու համար:

1965 թվականի բյուջեով հյուրերի ընդունելության համար նախատեսված է 14 հազար ռուբլի: 1964 թվականի 6 ամսվա փորձը ցույց տվեց, որ այդ գումարը միանգամայն անբավական է 1965 թվականին մեր ծրագրով նախատեսված միջոցառումները իրագործելու համար:

Կոմիտեի մամուլի բաժինը սպասարկում է սփյուռքահայ առաջադեմ շուրջ 60 թերթերի և տասնյակ ամսագրերի: Այդ թերթերի և ամսագրերի համար անցյալ տարի ուղարկվել են շուրջ 400 նյութ և բազմաթիվ նկարներ: Բյուջեի

նախատեսված գումարը Կոմիտեին կգրկի այդ թերթերին նյութերով բավարարելուց և դրանով էլ մեր խոսքը սփյուռքահայ մասսաներին հասցնելուց:

1965 թվականին, Սովետական Հայաստանի 45-ամյակի առթիվ Կոմիտեն նախատեսել է սփյուռքահայ կազմակերպություններին և դպրոցներին ուղարկել 20 ֆոտո-հավաքածուներ՝ ցուցահանդեսներ կազմակերպելու համար: Նախատեսված է սփյուռքահայ լայն շրջանակներին ծանոթացնել մեր արդյունաբերության, քաղաքների, արվեստի և գիտության նվաճումները:

Այդ նպատակի համար նախատեսված գումարները այնքան չնչին են, որ չեն ապահովի մեր ծրագրի 50 տոկոսը: Մենք չենք խոսում արդեն կինոֆիլմերի, սփյուռքահայ առանձին գործիչների նվիրված երեկոների և կերպարվեստի ցուցահանդեսների մասին:

Ուստի խնդրում ենք Ձեզ նկատի ունենալ վերևում նշված մեր պատճառաբանությունները և հնարավորության սահմաններում նախատեսել լրացուցիչ 45 հազար ռուբլի:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, թթ. 90-92: Պատճեն: Մեքենագիր:

ՍՓՈՒՌԱՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝
ՄԵԾ ԵՂԵՈՒՆԻ 50-ԱՄՅԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

1. Արևմտահայաստանի բնակավայրերի անուններով ավաններ և փողոցներ կոչել Երևանում, Լենինականում, Կիրովականում, Հրազդանում:

ա/ Նոր Խարբերդի մեջ կոչել Կեսարիայի, Կյուրիևի և Մորենիկի անուններով փողոցներ:

բ/ Նոր Մալաթիայում՝ Տիգրանակերտի և Թումարզայի փողոցներ:

գ/ Նոր Երզնկա ավան /Կիրովականում/, Նոր Սիս /Լենինականում/:

դ/ Չնքուշի թաղամաս Սովետաշենում:

ե/ Մուսալեռցիների փողոց Երևանում:

զ/ Զեյթունցիների փողոց Երևանում:

2. Երևանում փողոցներ կոչել Հայոց եղեռնին արձագանքած, հայ ժողովրդի մեծ բարեկամներ Ֆրանց Վերֆելի, դոկտ. Յոհան Լեփսիուսի, Պ. Յավրովի, Անատոլ Ֆրանսի, Ժան Ժորեսի, այլոց անուններով:

3. Դպրոցներ կոչել Եղեռնի զոհեր, հայ գրականության ականավոր դեմքեր Գրիգոր Զոհրապի, Երուխանի, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի, Դանիել Վարուժանի, Ռուբեն Զարդարյանի, Թվատինցիի⁷² անուններով:

4. Կանգնեցնել Դանիել Վարուժանի, Սիամանթոյի և Գրիգոր Զոհրապի կիսանդրիները նրանց անունը կրող դպրոցներում:

5. Նոր Խարբերդի գրադարանը կոչել Թվատինցիի անունով /Հովհաննես Հարությունյան/:

6. Ապրիլ ամսի սկզբներից հրապարակային ձևով նշել Եղեռնին զոհ գնացած գրողների և բանաստեղծների մահվան 50-ամյակը /առանձին-առանձին կամ հավաքաբար/:

7. Այլ Մյասնիկյանի անվան հանրային պետական գրադարանում բացել հայ և օտար հեղինակների՝ Եղեռնին նվիրված գրքերի ցուցահանդես:

8. Հանձնարարել Հայկ. ՍՍՌ կապի միևստրությանը հարց բարձրացնելու՝ հրապարակելու համար նամականիշ /մարկա/:

9. Հանրապետությունում և Երևանի շրջակայքում հողամասեր առանձնացնել 3 միլիոն ծառ տնկելու համար: Դրանով կանմահացվի 1895-96թթ., 1908-09-10թթ. և 1915-20թթ. թուրք բռնակալության կողմից զոհված 2-3 միլիոն հայերի հիշատակը:

10. Նոր Խարբերդի աղբյուր-հուշարձանի բացումը հեռարձակել Հայաս-

71. Փաստաթղթում գրության հասցեատերը չի նշված: Հավանաբար նախատեսվել է ներկայացնելու ՀԽՍՀ Նախարարների խորհրդին: Թվականը տեղադրել ենք էլնելով բովանդակությունից:

72. Թվատինցի (Հարությունյան Հովհաննես, 1860, գյուղ Թվատին, Խարբերդի շրջան – 1915) – Բանաստեղծ, պատմվածքագիր, մանկավարժ, հասարակական գործիչ: Կրթությունն ստացել է Խարբերդի Սմբատյան վարժարանում: 1887թ. Խարբերդում հիմնել և միջև մահը տնօրինել է քաղաքի Ազգ. Կեդրոնական վարժարանը: Մեծ եղեռնի զոհերից:

տանի ռադիոյի բոլոր ալիքներով /նաև Ծիծեռնակաբերդում նախատեսվող բարձրաքանդակի, ինչպես և ժողովի⁷³ արարողությունները/:

11. Մամուլում հրապարակել հոբելյանական հանձնաժողովի կազմը:

12. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գծով հողվածներ, ակնարկներ և զանազան նյութեր ուղարկել սփյուռքահայ թերթերին և հանդեսներին:

13. «Սովետական Հայաստան» հանդեսի ապրիլյան համարը ամբողջությամբ նվիրել Եղեռնի 50-ամյակին:⁷⁴

14. Ապրիլյան եղեռնի 50-ամյակին մասնակցելու համար Հայաստան հրավիրել բոլոր մայրցամաքների գլխավոր հայ գաղութներից՝ մեկական հոգի: Հետևյալ երկրներից՝ ԱՄՆ, Կանադա, Արգենտինա, Ուրուգվայ, Բրազիլիա, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Հունաստան, Ռումինիա, Բուլղարիա, Լեհաստան, Կիպրոս, Իրան, Սիրիա, Լիբանան, Հորդանան, Իրաք, Հնդկաստան, Եգիպտոս, Քուվեյթ, Ավստրալիա:

15. Պատրաստել Եղեռնին նվիրված ֆոտոցուցահանդեսներ Երևանում: Մասնավորապես ընդգրկել նկարիչների ու քանդակագործների աշխատանքները:

16. Հուշարձան կանգնեցնել հավերժացնելու համար Եղեռնին զոհ գնացած ականավոր մտավորականների հիշատակը: Երաշխավորել հրատարակելու համար Մորգենթաուի «Ամերիկյան դեսպանի հիշատակները»⁷⁵ և Ֆրիդոլֆ Նանսենի «Խաբված ժողովուրդը» գրքերը:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե

Ֆ. 875, ց. 1, գ. 40, թթ. 1-2: Պատճեն: Մեքենագիր:

73. Նկատի ունի Հայոց ցեղասպանության 50-ամյակի հանդիսավոր նիստը՝ պետական և կուսակցական ավագանու մասնակցությամբ:

74. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի մյուս օրգանը՝ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը լույս էր տեսնելու 50-ամյակի հանդիսավոր նշումից հետո՝ 1965թ. օգոստոսի 1-ին:

75. Այսպես է բնագրում: Հիշտ անունն է «Ամերիկայի դեսպանի հուշերը»:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԿԿ ԿԵՆՏՐԱԼՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ. ԲԱՐՂԱՍԱՐՅԱՆԻՆ՝ «ԱՐԵՎ» ՕՐԱԹԵՐԹԻ ՀԻՄՆԱՐԻՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԼՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՐԵՆԻ ԱՆՎԱՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ
ԿԱՀԻՐԵ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եգիպտոսի Կահիրե քաղաքում լույս տեսնող «Արև» առաջադիմական օրաթերթի խմբագրության անունից թերթի պատասխանատու խմբագիր Էդմոն Կոտալյանի⁷⁶ ստորագրությամբ ստացվել է նամակ: Նամակից տեղեկանում ենք, որ առաջիկա ամիսներին պետք է նշվի թերթի հիմնադրության հիսնամյակը:

Այս առիթով, «Արև»-ի խմբագրությունը Եգիպտոս է հրավիրում բանաստեղծ Գևորգ Էմինին և ասանունների վարպետ Սուրեն Քոչարյանին:⁷⁷ Խմբագրությունը նույն առիթով մեր նախընտրությանն է հանձնում նաև գրականության բնագավառում ուշագրավ դարձած այլ գրողների Եգիպտոս ուղարկելու հարցը:

Հետևաբար, մենք նպատակահարմար ենք գտնում Գևորգ Էմինի և Սուրեն Քոչարյանի հետ միասին Եգիպտոս ուղարկել նաև բանաստեղծ Վահագն Դավթյանին⁷⁸ և «Սովետական Հայաստան» ամսագրի պատասխանատու խմբագիր Աշոտ Թադևոսյանին:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Հ. Գ. Ներքևի ուղարկում ենք «Արև» օրաթերթի խմբագրության նամակի պատճենը: Նույն:

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թ. 6: Պատճեն: Մեքենագիր:

76. Կոտալյան Էդմոն (ծնված 1904 թ. Երվանդ Ազատյան)՝ Նազարեթի (ծն. 1935, ավան Ռալար, Լիբանան) – Հրապարակախոս, խմբագիր, գրաքննադատ, ՌԱԿ, ԹՄՄ, ՀԲԸՄ և հասարակական գործիչ: Ավարտել է Բեյրութի ՀԲԸՄ Հովակիմյան-Մանուկյան վարժարանը և Բեյրութի Ամերիկյան համալսարանը: Եղել է ՌԱԿ օրգան Կահիրեի «Արև» օրաթերթի խմբագիր, Ալեք Մանուկյան մշակութային հիմնադրամի ատենապետ, ՀԲԸՄ պատվո խախազան Ա. Մանուկյանի անձնական գրասենյակի վարիչ, ՌԱԿ Կենտրոնական վարչության նախագահ: Ունի մի քանի հրատարակված մենագրություններ:

77. Քոչարյան Սուրեն Հովակիմի (1904, Թիֆլիս – 1979, Մոսկվա, թաղված է Երևանում) – Ավանավոր ասանունը, Եստրադայի արտիստ, ՀԽՍՀ (1945) և ՌԽՖՍՀ (1967) ժողովրդական արտիստ: Ստեղծել է 30-ից ավելի հայերեն և ռուսերեն գրական կոմպոզիցիաներ:

78. Դավթյան Վահագն Արմենակի (1922, Արարկիր – 1996, Երևան, թաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում) – Բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր և հասարակական գործիչ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1971), ՀԽՍՀ ԳԱ թղթակից-անդամ (1986), ՀՀ ԳԱԱ անդամ (1996): Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը: 1962-1966թթ.՝ «Գրական թերթի», 1965-1967թթ.՝ «Հայրենիքի ձայնի», խմբագիր, 1981-1999թթ.՝ «Սովետական Հայաստան» (այսպես՝ «Վերածնված Հայաստան») ամսագրի գլխավոր խմբագիր, 1967-1981թթ.՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի տեղակալ, 1990-1994թթ.՝ Հայաստանի Գրողների միության նախագահ: Ունի բանաստեղծությունների բազմաթիվ հատորներ, եկվոպացի գրողների գործերի թարգմանություններ:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Ա. ԲՈԶԻՆՅԱՆԻՆ՝ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒ ՍՓՅՈՒՈՔԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ
ԸՆԴԱՅՆՄԱՆ ԱՌԱՋԻԿԱ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հիմնադրումից հետո լայն ծավալ ստացան արտասահմանի հայության հետ տարվող մշակութային աշխատանքները: Բավական է ասել, որ հիմնադրությունից հետո անցած 6 ամիսների ընթացքում Կոմիտեի հետ մշտական կապ պահպանող կազմակերպությունների՝ մշակութային ու հայրենակցական միությունների, դպրոցների, խմբագրությունների և անհատ գործիչների թիվը ավելացավ 250-ով՝ հասնելով 852-ի:

Կապերի այսպիսի ընդլայնմանը հնարավոր եղավ հասնել Կոմիտեի աշխատանքների համար ոչ այնքան նպաստավոր պայմաններում:

Կոմիտեն իր ուշադրության կենտրոնում պահելով Մերձավոր և Միջին Արևելքի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հայաշատ գաղութները, առաջիկայում իր գործերի մի մասը ծանրացնելու է արտագաղթի պատճառով /Եգիպտոսից, Սիրիայից, Կիպրոսից, Հունաստանից և այլն/ նոր ստվարացող մի շարք գաղութների՝ Ավստրալիայի, Կանադայի, հարավ-ամերիկյան երկրների, Անգլիայի վրա՝ նրանց հետ նոր կապեր ստեղծելու նպատակով:

Մեր կոմիտեի աշխատանքների մասին շատ կարճ շրջանում տեղեկացան բովանդակ սփյուռքում: Եվ ներկա շրջանում Մայր Հայրենիքի նկատմամբ սփյուռքահայության աճող հետաքրքրության պայմաններում, բնականաբար աճում է և մեր դերն ու նշանակությունը:

Սփյուռքահայությունն իր ազգապահպանման համար մղվող դժվարագույն պայմաններում կարիք ունի մեծ օժանդակության ու բարոյական նեցուկի:

Այժմ զանազան պահանջներով մեզ են դիմում շատ կազմակերպություններ, որոնց թվում և սովետական դեսպանություններ, խնդրելով առաքել բազմաքանակ պարբերականներ, գրականություն և այլ նյութեր՝ տեղի հայության համար:

Միայն վերջերս այդպիսի խնդրանք են առաջին անգամ ներկայացրել Իրանի և Հորդանանի սովետական դեսպանությունները: Կապեր են ստեղծվում Հոլանդիայի և Քուվեյթի հայ գաղութների հետ: Բավական է ասել, որ փոքրիկ Քուվեյթում վերջին մի քանի տարվա ընթացքում գոյացել է 6 հազարից ավելի հայություն և այդ թիվը օրեցօր աճում է:

Մեր առջև ծառացող խնդիրներն ու հարցերը ինքնըստինքյան շատանում են: Ներկայումս Կոմիտեի տարած աշխատանքների շնորհիվ սփյուռքում լայն ծավալ է ստացել հայ մշակութային արժեքների՝ արվեստի, գրականության, գեղանկարչական գործերի, ազգային զարդարվեստի առարկաների, թանգարանային իրերի և այլնի փոխադրությունը Հայաստան:

Իրենց աշխատանքներն են աշխուժացրել նաև սփյուռքում գործող մի քանի տասնյակից ավելի հայրենակցական միությունները, որոնք իրենց նյութական և դրամական միջոցներով ցանկանում են մասնակից դառնալ Հայաստանի

ձեռնարկումներին: Այստեղ էլ մեզ շահագրգռում է Հայաստանին կտակված ժառանգությունների փոխադրումը:

Կոմիտեի բազմազան աշխատանքները հաջողությամբ տանելու համար ներկայումս ստեղծել ենք 3 բաժին, սակայն փաստացիորեն աշխատում է մեկ բաժնի վարիչ: Մնացյալ աշխատակիցները ավագ ռեֆերենտներ են:

Ավագ ռեֆերենտի նույն պաշտոնի և հավասար վարձատրության պայմաններում մեր աշխատակիցների վրա, նայած նրանց ունակություններին, գիտելիքներին ու կազմակերպչական շնորհքին, դրվում են տարբեր ծանրաբեռնվածության ու կարևորության աշխատանքներ:

Օրինակ, ավագ ռեֆերենտ Գր. Գույումջյանը սպասարկում է 8 երկրի հայ գաղութները, որոնց մեջ՝ ԱՄՆ-ի, Կանադայի, Իրանի, Հունաստանի, Ավստրալիայի, Գիպրոսի և այլն: Հնդհանուր առմամբ կապ է պահպանում 313 կազմակերպությունների ու անհատ գործիչների հետ: Տարվա ընթացքում ստացել և պատասխանել է 402 նամակների՝ բավարարելով խնդրանքներն ու ընթացք տալով բարձրացված հարցերին: Այս բոլորի հետ կատարել է այլ պարտականություններ՝ մասնակցել բաժանորդագրության աշխատանքներին, բյուլետենների կազմությանը, իսկ ամռան ամիսներին աշխատել հարյուրավոր տուրիստների, Կոմիտեի հյուրերի հետ: Նա միաժամանակ Հայրենակցական միություններին օժանդակող հանձնախմբի քարտուղարն է:

Այժմ, երբ Կոմիտեն վեր է ածվում մշակութային մեծ կազմակերպության, իսկ նրա վրա դրվող խնդիրները շատանում են, առաջնակարգ կարևորություն է դառնում մեզ համար, այլև խիստ անհրաժեշտություն, որ Կոմիտեում աշխատանքի ընդգրկվեն բարձրորակ մասնագիտական կադրեր, որոնք տիրապետեն նաև օտար լեզուների: Բանն այն է, որ աշխատանքի ընթացքում ամեն մի ռեֆերենտի առջև ծագում են գաղութներին հուզող շատ բարդ խնդիրներ, որոնց բարեհաջող լուծման համար յուրաքանչյուր ռեֆերենտից պահանջվում է ունենալ բարձր ու խոր գիտելիքներ:

Սակայն ռեֆերենտի ներկայիս աշխատավարձի չափը /93 ռուբլի/ հնարավորություն չի տալիս աշխատանքի վերցնելու բարձրորակ մասնագետներին:

Սփյուռքի կոմիտեն այսօրվա դրությամբ իր ծանրաբեռնվածությամբ, որն արտահայտվում է ունեցած մեծ կապերով, իր առջև ծառացող խնդիրների կարևորությամբ ու տարողությամբ, ուղարկվող ու ստացվող գրականության քանակով, նամակագրությամբ և այլ ցուցանիշներով, տասնապատիկ անգամներ գերազանցում է Մշակութային կապի ընկերության⁷⁹ նախկին աշխատանքների ծավալը:

Հարկ է նշել, որ Կոմիտեի հիմնադրության ժամանակ անվանական /պերսոնալ/ ամբողջ դրամը 180 ռուբլի գումարով անցավ Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի ընկերությանը: Առաջին օրվանից մեզ խոստացան կարճ շրջանում լուծել Կոմիտեին նույնպես անվանական դրամ նախատեսելու հարցը, սակայն մինչև օրս դրա արդյունքը չենք տեսել:

79. Նկատի ունի Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերությանը՝ ՍՕԿՄ-ին:

Պահանջվող անվանական դրամը ամբողջովին բաժանվելու է բաժնի վարիչի և այն ավագ ռեֆերենտների վրա, որոնց տարած աշխատանքը կարևոր է դիտում Կոմիտեի նախագահը: Այդ ձևով կուժեղանա շահագրգռությունը աշխատանքի նկատմամբ:

Ուստի խնդրում ենք կարգադրություն անել մեր կոմիտեին, Ձեր հայեցողությամբ, հատկացնելու անվանական դրամի գումար:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թթ. 2-5: Պատճեն: Սեքենագիր:

Վ. ՀԱՄԱՁԱՄՊՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ. ԲԱՂՎԱՍՏԱՆԻՆ՝ Ա. ՄԱՅԱԿԱՆՅԱՆԻՆ՝⁸⁰ ԵՎ Պ. ՍԵՎԱԿԻՆ՝⁸¹ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ
50-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԵՅՐՈՒԹ
ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բեյրութի «Նոր սերունդ» մշակութային միության վարչությունը Լիբանան է հրավիրում պատմական գիտությունների դոկտոր Արամայիս Մնացականյանին և բանաստեղծ Պարույր Սևակին՝ մասնակցելու Ապրիլյան եղեռնի 50-ամյակին նվիրված պաշտոնական հանդիսությանը:

Մեր կոմիտեն նպատակահարմար է գտնում ընդունել նշված ընկերների Լիբանան այցելելու առաջարկը:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը և կարգադրությունը համապատասխան օրգաններին:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, ք. 12: Պատճեն: Մեքենագիր:

80. Մնացականյան Արամայիս Նավասարդի (1911, գյուղ Բյուրական, Աշտարակի շրջան – 1984, Երևան) – Պատմական գիտությունների դոկտոր: Վարել է խմբագրական ու կուսակցական պատասխանատու պաշտոններ: Աշխատությունները նվիրված են հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարին:

81. Սևակ (Ղազարյան) Պարույր Ռաֆայելի (1924, գյուղ Չանախչի, այժմ՝ Զանգակատուն, Արարատի շրջան – 1971, մահացել է Երասխականի մոտ՝ ավտովթարից, թաղված է ծննդավայրում՝ սեփական տան բակում) – Բանաստեղծ, մշակութային գործիչ, գրականագետ, թարգմանիչ, ազգային գաղափարախոս: Ավարտել է Երևանի պետական համալսարանը և Մոսկվայի Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտը: Բանասիրական գիտությունների դոկտոր: 1966-1971թթ. եղել է Հայաստանի Գրողների միության վարչության քարտուղար: Թղթակցել է մի շարք պարբերականների: Հայտնի է իր բանաստեղծական տաղանդի անհատականությամբ, խոհա-փիլիսոփայական մտքի թռիչքով:

Վ. ՀԱՄԱՁԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՂՎԱՍՏԱՆԻՆ՝
ՄԱՐՍԵԼԱՅԱՅԵՐԻ ՀՐԱՎԵՐՈՎ Հ. ԲԱՂԱՆՅԱՆԻՆ՝⁸² ՖՐԱՆՍԻԱ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ֆրանսահայ երիտասարդական միության Մարսելի շրջանային վարչության նախագահ Հակոբ Վարժապետյանն իր 20 նոյեմբերի 1964 թվակիր նամակով դիմել է Կոմիտեին խնդրելով, որպեսզի Մարսել ուղարկվեն սովետահայ երկու արվեստագետներ, որոնք պետք է մասնակցեն 1965 թվականի մարտի 27-ին կազմակերպվելիք հայկական ֆոլկլորի երեկոյին:

Նշված երեկոյին մասնակցելու և ելույթ ունենալու համար Կոմիտեն նպատակահարմար է գտնում Ֆրանսիա ուղարկել ժողովրդական արտիստ Հովհաննես Բաղդասյանին և մեկ նվագակցող-դաշնակահարի:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, ք. 11: Պատճեն: Մեքենագիր:

82. Բաղդասյան Հովհաննես Համբարձումի (1924, գյուղ Շավարին, Համադան քաղաքի մոտ, Պարսկաստան – 2001, Երևան) – Երգիչ (տենոր), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1961), ՀԽՍՀ Հեռուստատեսության և ռադիոյի ժողովրդական գործիքների անսամբլի մենբերիչ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ԵՎ Վ. ԴԱՎԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ «ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՅՆ» ԹԵՐԹԻ ԴՐԱՏԱՐԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1965 թվականի օգոստոսի 1-ից լույս է տեսնում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը: Թերթի մեկ համարի հոնորարը սահմանված է 280 ռուբլի: Կես տարվա աշխատանքի փորձը ցույց տվեց, որ այդ գումարը խիստ անբավարար է հրատարակելու գրական-գեղարվեստական թերթում ունեցող մի թերթ, որն իր էջերում համարյա թե չի օգտագործում պաշտոնական նյութեր և որին աշխատակցում են բացառապես գիտական բարձր կոչումներ ունեցող մարդիկ, գրականության ու արվեստի նշանավոր դեմքեր: Իսկ թերթի վճարած հոնորարը համարյա թե կեսն է այն հոնորարի, որ վճարում են, ասենք, ռադիոն ու հեռուստատեսությունը, «Գրական թերթ»-ը, «Սովետական գրականություն», «Սովետական Հայաստան», «Սովետական արվեստ» և այլ թերթեր ու ամսագրեր: Պարզ է, որ նման վարձատրությամբ թերթը չի կարող երկար ժամանակ իր շուրջը համախմբված պահել թղթակցական բարձրորակ ակտիվ:

Ուստի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թերթի տիրաժի բարձրացման և տպագրվող հայտարարությունների հաշվին համարյա թե դուրս է եկել պետական դոտացիայից՝ այսինքն 38.900-ի դիմաց ստանում է միայն 9.000, խնդրում ենք բարձրացնել թերթի հոնորարը և այն հավասարեցնել առնվազն «Գրական թերթ»-ի հոնորարին, այսինքն դարձնել 405 ռուբլի:

«Հայրենիքի ձայն»-ը յուրաքանչյուր համարում տպագրում է 20-25 հայտարարություն, մոտավորապես այնքան, որքան տպագրում են մյուս թերթերը: Բայց եթե մյուս թերթերն ունեն հայտարարությունների բաժին համապատասխան հաստիքներով, ապա մեր թերթի հաստիքներում դա չի նախատեսված: Ուստի խնդրում ենք համապատասխան կարգադրություն անել հայտարարությունների գործով զբաղվելու համար ավելացնել մեկ հաստիք՝ 90 ռուբլի աշխատավարձով:

Սփյուռքահայության հետ մշակութային
կապի կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագիր՝

Վահագն Դավթյան

Ֆ. 875, ց. 2, գ. 2, թթ. 1-2: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
ՄԻ ԽՈՒՄԲ ՀԱՅՐԵՆԻ ԱՆՎԱՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 50-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ԼԻԲԱՆԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բեյրութի Թեքեյան մշակութային միության վարչությունը Մեծ Եղեռնի 50-ամյակի հանդիսությանը մասնակցելու համար ապրիլ ամսին Լիբանան է հրավիրում ՀՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանին,⁸³ երգչուհի Զարուհի Դոլուխանյանին,⁸⁴ Գ. Մունդուկյանի անվան հայկական պետական թատրոնի խմբին:

Նպատակահարմար է շրջագայության ընթացքում տեղում կազմակերպել «Հայ թատրոնի 2000-ամյակը» ցուցահանդեսը և Լիբանան ուղարկել գրականության և արվեստի թանգարանի դիրեկտոր Սարգիս Մելիքսեյանին:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կից ներկայացնում ենք Թեքեյան մշակութային միության վարչության նամակի պատճենը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թ. 25: Պատճեն: Մեքենագիր:

83. Համբարձումյան Վիկտոր Համազասպի (1908, Թիֆլիս – 1996, գյուղ Բյուրական, Արագածոտնի մարզ, թաղված է Բյուրականում) – Աստղաֆիզիկոս, տեսական աստղաֆիզիկայի խորհրդային դպրոցի հիմնադիրը: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ և ԽՍՀՄ գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս (1943 և 1953), ՀԽՍՀ և Վրացական ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1940 և 1968), սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս (1968, 1978), ՀՀ ազգային հերոս (1994), Բյուրականի աստղադիտարանի հիմնադիր և երկարամյա տնօրեն: Եղել է ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ 1974-1994, պատվով պրեզիդենտ՝ 1994-1996: Հայտնի է աստղաֆիզիկայի բնագավառում իր բազմաթիվ գիտական հետազոտություններով ու հայտնագործություններով:

84. Դոլուխանյան (Դոլուխանովա) Զարուհի (Զարա) Աղասու (օրիորդական ազգանունը՝ Մակարյան) (1918, Մոսկվա – 2007, Մոսկվա) – Օպերային երգչուհի (մեցցո-սոպրանո), ՀԽՍՀ, ՌՍՖՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի (1955, 1956 և 1991): Ավարտել է Մոսկվայի Գենեսիսի անվան երաժշտական ինստիտուտը: Մենաշարերգներով հանդես է եկել աշխարհի տարբեր երկրներում:

Շ. ՍԻՄՈՆՅԱՆԻ,⁸⁵ Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԵՎ Զ. ՀԱՍՐԱԹՅԱՆԻ⁸⁶ ՀԱՄԱՏԵՂ
ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԴԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ 3. ԶԱՐՈՔՅԱՆԻՆ
ՍՓՅՈՒՔԱՅԱՅ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ներկայումս սփյուռքում գործում է 365 դպրոց, որից 50-ը կիրակնօրյա՝ 65 հազար սովորողներով:

1964 թվականին առաջին անգամ Լիբանանից, Սիրիայից և Ֆրանսիայից Սովետական Հայաստան այցելեց սփյուռքահայ դպրոցականների առաջին խումբը՝ 30 աշակերտներով:

Նրանք երկու ամսվա ընթացքում ծանոթացան ռեսպուբլիկայի պատմական և տեսարժան վայրերին, հանգստացան Ծաղկաձորի, Հանքավանի և Կիրովականի պիոներական ճամբարներում, հանդիպումներ ունեցան գրողների, արվեստագետների, արտադրության մարդկանց հետ: Վերադառնալով Հայաստանից, նրանցից շատերը թերթերում տպագրեցին Հայրենիքից ստացած իրենց տպավորությունները, շնորհակալության խոսք ասելով ռեսպուբլիկայի կառավարության մինիստրությանը, մեր կոմիտեին, ՀԼԿԵՄ Կենտկոմին:

Սփյուռքահայ երեխաների՝ Հայաստան հրավիրելու փաստը լայն արձագանք գտավ նաև սփյուռքի մամուլում:

Սփյուռքահայ երեխաների Հայաստան այցելելը նպաստեց հանրապետության և արտասահմանի հայ երեխաների բարեկամական նոր կապերի ընդլայնմանը, Սովետական Հայաստանի իրականության ճանաչմանն ու հայրենասիրության դաստիարակման գործին:

1964 թվականին Հայաստան այցելած երեխաների առաջին խումբը նոր շարժում առաջ բերեց սփյուռքահայ դպրոցներում, և այժմ ավելի քան մեծ է ամռան ամիսներին Հայաստան գալու ձգտումը: Այդ մասին ստացվում են բազմաթիվ նամակներ, դիմումներ՝ դպրոցներից, առանձին կազմակերպություններից և անհատներից:

Ուստի Լուսավորության մինիստրությունը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, ՀԼԿԵՄ Կենտկոմը անհրաժեշտ են գտնում 1965 թվականին ավելի մեծացնել Հայաստան հրավիրվող երեխաների թիվը և հրավիրել 100 երեխաների, ընդ որում՝ 25-ը՝ Լիբանանից, 20-ը՝ Սիրիայից, 10-ը՝ Ֆրանսիայից, 10-ը՝ ԱՄՆ-ից, 5-ական՝ Իրանից, Եթովպիայից, Քուվեյթից, Արգենտինայից, Եգիպտոսից, Հունաստանից, Կիպրոսից:

Հնարավոր է նշված թվից 20 տեղ հատկացնել «Պիոներ կանչ» թերթի հայտարարած՝ «Բմ պատկերացումների մեջ ինչպիսին է Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը» մրցանակաբաշխությունում հաղթողներին:

Միաժամանակ ցանկանում ենք նշել, որ ինչպես ցույց տվեց անցած տար-

վա փորձը, նպատակահարմար չէ հրավիրված խմբերին միաժամանակ պահել և՛ Ծաղկաձորի, և՛ Հանքավանի, և՛ Կիրովականի ճամբարներում: Լավ կլինի առանձին երկրների երեխաների պահել առանձին ճամբարներում և միայն էքսկուրսիաների միջոցով ծանոթացնել մյուս վայրերում գտնվող ճամբարների կյանքին:

Անցած փորձը ցույց տվեց նաև, որ սփյուռքահայ երեխաների Հայաստան հրավիրելու հարցը նախապատրաստված չի եղել, որի պատճառով եղել է հապճեպություն:

Նպատակահարմար է հրավիրման նախապատրաստական աշխատանքներն այս տարի սկսել մարտ ամսից և համապատասխան երկրների դեսպանությունների միջոցով կազմակերպել 10-14 տարեկան երեխաներին Հայաստան ուղարկելը:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը և կարգադրությունը:

ՀՄՄՈՒ Լուսավորության մինիստր՝

Շ. Սիմոնյան

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար՝

Ջ. Հասրաթյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թթ. 13-14: Պատճեն: Մեքենագիր:

85. Սիմոնյան Շավարշ Ստեփանի (1912, քաղաք Ղազախ, Ուսիք – 1974, Երևան) – ՀԽՍՀ պետական գործիչ, մանկավարժ, հոգեբան: ԽՍՀՄ ՄԳԱ թղթակից անդամ (1967), 1955-1972թթ. ՀԽՍՀ Լուսավորության նախարար:

86. Ջենմա Հասրաթյան:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ ՀԱՅ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ Լ. ԽԱԶԻԿՅԱՆԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՍ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դարերից մեզ ժառանգություն հասած հայերեն ձեռագրերի ընդհանուր քանակի կեսից ավելին պահվում է արտասահմանյան տարբեր երկրներում:

Մաշտոցի անվան Մատենադարանից հետո ամենամեծ ձեռագրական հավաքածուն գտնվում է Երուսաղեմի հայկական պատրիարքության մատենադարանում, ուր պահվում է շուրջ 4000 հին հայերեն ձեռագիր: Ե՛վ քանակի, և՛ բովանդակության տեսակետից արժեքավոր են նաև Վենետիկում, Վիեննայում, Զմմառում /Բեյրութի մոտ/ և Սպահանում պահվող հայերեն ձեռագրերը, սակայն նրանք համեմատաբար ավելի են ուսումնասիրված և հայտնի՝ իրենց բովանդակությամբ, քան Երուսաղեմի ձեռագրերը, որոնց շարքում կան հին հայ մատենագրության չուսումնասիրված բազմաթիվ հուշարձաններ:

Բացի ձեռագրերից, Երուսաղեմի վանքում են պահվում հայոց պատմության նոր և նորագույն շրջանին վերաբերող խիստ արժեքավոր արխիվային ֆոնդեր, թանգարանային հազվագյուտ իրեր և այլ պատմա-ազգագրական նյութեր:

Այդ բոլորի հանգամանակից ուսումնասիրության համար անհրաժեշտ կլինեն տարբեր մասնագետների երկարատև ու համառ ջանքեր: Մակայն վաղուց հասունացել է թվարկված ձեռագրական ու թանգարանային զանազան մասին ընդհանուր ծանոթություններ ձեռք բերելու և մի շարք կարևոր հուշարձանների միկրո-պատճենահանման գործը տեղում կազմակերպելու հարցը:

Այդ կարևոր գործը ձեռնարկելու նպատակով անհրաժեշտ կլինի երկու ամիս ժամանակով Երուսաղեմ /Հորդանան/ գործուղել Մատենադարանի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Լևոն Խաչիկյանին:

Նա տեղում կուսումնասիրի հայերեն ձեռագրերի հարուստ հավաքածուն և արխիվային ֆոնդերը, կպարզի դրանց հետագա ուսումնասիրության եղանակները, կպատվիրի ամենակարևոր սկզբնաղբյուրների միկրո-պատճեններ և գործնական կապեր կստեղծի հայ մշակույթի մեծարժեք հուշարձանների պահոց հանդիսացող Երուսաղեմի մատենադարանի ու թանգարանի տնօրինության հետ:

Խնդրում ենք հաշվի առնել այս աշխատանքների կարևորությունը սովետական հայագիտության զարգացման համար և Երուսաղեմ գործուղել Լ. Խաչիկյանին:

Եթե հնարավոր է, խնդրում ենք գործուղել նաև Մատենադարանի սեկտորի վարիչ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Սեն Արևշատյանին⁸⁷, որը տեղում կօգնի՝ ուսումնասիրելու այդ ձեռագրերը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թթ. 16-17: Պատճեն: Սեբեմագիր:

87. Արևշատյան Սեն Սուրենի (ծն. 1928, Երևան) – փիլիսոփա, հայագետ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից-անդամ (1982), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996): Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1959թ.ից աշխատում է Մաշտոցի անվան Մատենադարանում, 1982-2007-ին՝ տնօրեն: Աշխատությունները վերաբերում են հայ հին և միջնադարյան փիլիսոփայության պատմության, աղբյուրագիտության և տեքստաբանության հարցերին: Ունի հրատարակված բազմաթիվ գիտական հոդվածներ և մենագրություններ, այդ թվում՝ 1980թ.ին Երևանում լույս տեսած «Դավիթ Անհաղթը՝ հին Հայաստանի ականավոր փիլիսոփա» աշխատությունը:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ս. ԳԱԼԵՆՏԵՐԻՆ՝⁸⁸ ՍԺՅՈՒՌՔԱՅԱՅ
ԱՐԿԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թանկագին բարեկամ,

Մեծ ուրախությամբ ծանոթացանք Ձեր 26 դեկտեմբերի, 1964 և 2 հունվարի, 1965 թվադրյալ նամակների շահեկան ու բազմակողմանի բովանդակությամբ:

Պարտք ենք համարում Ձեզ հայտնել, որ Ձեր զույգ նամակներում շոշափված կենսական հարցերը արժանացան մեր կոմիտեի ջերմ հավանությանը:

Մենք համակարծիք ենք Ձեզ հետ հատկապես այն հարցում, որ երգի ու պարի ներկայացուցիչներից բացի, եթե պատմաբաններ, գիտնականներ ու երաժշտության տեսաբաններ էլ այցելեն սփյուռքի հայաշատ գաղթօջախները, արդյունքը կլինի անսպասելիորեն օգտավետ՝ հայապահպանման սուրբ գործի համար:

Մենք Ձեր ուշադրությանն ենք ուզում հանձնել այն հանգամանքը, որ սփյուռքահայության, նմանօրինակ խմբերի այցը, պետք է սկիզբ առնի Ձեզանից: Այլ խոսքով, հրավերը պաշտոնապես պետք է ուղղվի մեր կոմիտեին՝ Ձեր կազմակերպության անունից: Ահա այն ատեն միայն, մենք սիրով կընդառնա՝ Ձեր բաղձանքին, սփյուռք ուղարկելով գիտնականներ, երաժշտագետներ, գրողներ, արվեստի նշանավոր գործիչներ, երգիչ-երգչուհիներ և այլն:

Հայաստանի երգի ու պարի վաստակավոր համույթին և մասնավորապես արվեստագետ⁸⁹ Ռուբեն Զարյանին նվիրված Ձեր խանդավառ խոսքերն ու հիացումը խորապես հուզեցին մեզ: Մենք նրանց և մեր անունից խորին շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, Ձեր ոգևորիչ և սրտաբաց վերաբերմունքի համար: Շնորհակալություն ենք հայտնում նաև այն արժեքավոր նկարների համար, որոնք որպես նվեր ուղարկել եք մեր հասցեին: Նկարների ստացման մասին մենք անհապաղ տեղյակ կպահենք Ձեզ:

Այս օրերին, Ձեր հասցեով մենք առաքեցինք որոշ քանակությամբ գեղարվեստական գրականություն: Կաշխատենք հաճախ անել նույնը:

Տեղեկացանենք, որ Ձեզ բաժանորդագրել ենք հայրենական հրատարակություններից «Սովետական Հայաստան» և «Սովետական արվեստ» ամսագրերին:

Ի դեպ շատ ցանկալի է հաճախ լսել Ձեզ և վերահասու դառնալ Ձեր շահեկան առաջարկություններին:

Ընդունեցե՛ք, հարգելի Գալենտեր, մեր ջերմ ողջուններն ու լավագույն ցանկությունները:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 579, թթ. 24-25: Պատճեն: Մեքենագիր:

88. Գալենտեր Սուրեն (1891, Կ. Պոլիս – 1975, Հալեպ) – Հայկապահայ ազգային գործիչ, բարերար, Թեքեյան-Մահարի մշակութային միության անդամ, բրդի և գորգերի վաճառական:

89. Փաստաթղթում «արվեստագետ» բառը Ռուբեն Զարյանի համար օգտագործվել է «արվեստաբան» իմաստով:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Յ. ԶԱՐԲԵՅԱՆԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՍԺՅՈՒՌՔԱՅԱՅ
ԿԱՆԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սովետական իշխանության հաստատման օրից սովետական կանայք մեծ դեր են կատարել հայրենիքի վերելքի, հզորացման և աշխարհի խաղաղության պահպանման գործում:

Այդ բոլորն իրենց հստակ ու վառ արտացոլումն են գտել Սովետական Միության մի շարք հանրապետությունների /Ուզբեկստան, Կիրգիզիա, Թուրքմենիա, Ադրբեջան, Մերձբալթյան երկրներ/ կանանց համագումարներում, որոնց ներկա են եղել ոչ միայն միութենական հանրապետությունների կանանց պատվիրակություններ, այլև Ասիայի, Աֆրիկայի և արտասահմանյան մի շարք այլ երկրների կանանց ներկայացուցիչներ:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կանանց հանձնախումբը անհրաժեշտ է գտնում նման համագումար հրավիրել նաև Հայաստանում, օրակարգի հետևյալ հարցերով:

Հայ կնոջ ներդրումը մեր հայրենիքի վերաշինման ու բարգավաճման գործում:

ա/ Գրականություն, արվեստ, մշակույթ

բ/ Գիտություն, գյուղատնտեսություն, արդյունաբերություն

Միութենական հանրապետությունների կանանց բարեկամական կապերը և փոխօգնությունը:

Երջանիկ մայրության և մանկության ու խաղաղության հարցերը:

Սփյուռքահայ առաջադիմական կանանց կազմակերպությունները և նրանց կապերը օտարերկրյա առաջադեմ կանանց կազմակերպությունների հետ:

Սփյուռքահայ ու Հայրենիքի կանանց մերձեցումը, համագործակցությունը՝ ազգապահպանման և ինտերնացիոնալ դաստիարակման մեծ գործի համար:

Նկատի ունենալով, որ սփյուռքի գրեթե բոլոր գաղթօջախներում գործում են մեծ թվով հայրենասեր կանանց կազմակերպություններ, անհրաժեշտ ենք համարում հրավիրել առնվազն 25-30 հոգի:

Ցանկալի կլինեն համագումարը կազմակերպել աշնանը, երբ անկախ հրավիրյալներից Հայաստանում կլինեն մեծ թվով հյուրեր, զբոսաշրջիկներ և այլ պատվիրակություններ: Այսպիսով, համագումարը կունենա ավելի շատ սփյուռքահայ ունկնդիրներ:

Համագումարի հրավիրման մասին հայտարարվելու դեպքում, կլինեն նաև սեփական ծախսով եկողներ:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը:

Սփյուռքահայության հետ մշակութային
կապի կոմիտեի կանանց հանձնախումբ

Սփյուռքահայության հետ մշակութային
կապի կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թթ. 19-20: Պատճեն: Մեքենագիր:

№ 34

3 մարտի 1965թ., Երևան

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԽՍՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ՝⁹⁰ ՍԺՅՈՒՔԱՅԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մեր կոմիտեն և Լուսավորության մինիստրությունը նպատակահարմար
են գտնում 1965 թվականին Հայաստան՝ վերապատրաստման դասընթացնե-
րի հրավիրել սփյուռքահայ ուսուցիչների՝ 14 երկրներից, հետևյալ բաշխումով՝
Լիբանան 10, Սիրիա 7, Կիպրոս 6, Եգիպտոս 1, Հունաստան 1, ԱՄՆ 2, Հորդա-
նան 1, Քուվեյթ 1, Ֆրանսիա 2, Իրան 1, Իրաք 1, Եթովպիա 1, Հնդկաստան 1:

Հաշվի առնելով անցած երեք տարիների փորձը, երբ յուրաքանչյուր տարի
զանազան պատճառներով 30-ի փոխարեն Հայաստան են գալիս 20-22 մարդ,
Կոմիտեն նպատակահարմար է գտնում ռեգերվում ունենալ ևս 5 հոգի:

Ցանկալի է, որպեսզի ուսուցիչների խմբի հետ Հայաստան հրավիրվեն
Մեսրոպյան վարժարանի տնօրեն Գևորգ քահանա Տեր-Արմենակյանը /Ռաս-
ուլ-Այն, Սիրիա/, Հելլեն /Հոփսիմե/ Քյաթիբյանը /Բուստոն, ԱՄՆ/, Նազարեթ
Բոյաջյանը, Հերմինե Քեշիշյանը, Ասատուր Պետյանը, Ենովա Պետյանը, Հա-
րություն Էսեգյուլյանը, Մեպուհ Աբգարյանը /Նիկոսիա, Կիպրոս/ Օննիկ Սյուր-
մելյանը, Վազգեն Թուրունջյանը,⁹¹ Հակոբ Թորոսյանը /Բեյրութ/:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թ. 22: Պատճեն: Մեքենագիր:

90. Մարտիրոսյան Բալաբեկ (1905-1972) – ՀԽՍՀ պետական գործիչ: 1958-1972թթ. եղել է ՀԽՍՀ
արտաքին գործերի նախարարը, 1959-1961թթ.՝ համատեղության կարգով, ՀԽՍՀ Մինիստրների
սովետին առընթեր Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական կոմիտեի
նախագահը:

91. Թուրունջյան Վազգեն (1915, Կ. Պոլիս – 2006, Բեյրութ) – Լիբանանահայ արվեստագետ,
լուսանկարիչ, գեղանկարիչ, մանրանկարիչ և մանկավարժ: Գեղանկարչություն է դասավանդել
Բեյրութի մի քանի հայկական դպրոցներում:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Զ. ՍԻՐՈՒՆՈՒՆ ՆՐԱՆ ՊԱՇՏՈՆԱԴԵՍ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի բարեկամ,

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն ս.թ. ապրիլին պաշտոնապես հրավիրում է Ձեզ Հայաստան 15 օր ժամանակով: Խնդրում ենք հայտնել Ձեր ժամանման օրվա մասին:

Ձեզ՝ Հայաստան հրավիրելու կապակցությամբ պաշտոնական հրավեր է ուղարկված նաև Ձեր հիմնարկության⁹² անունով:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 514, ք. 5: Պատճեն: Մեքենագիր:

92. Հավանաբար նկատի ունի Ռուսիայի Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը, որի գիտաշխատողներից էր Հակոբ Միրունին:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ՏՆՕՐԵՆ Լ. ԽԱԶԻԿՅԱՆԻՆ՝ ՍԱՆ ՊԱՌԷԼՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՈՒՂԱՐԿԵԼՈՒՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սան Պաուլոյի /Բրազիլիա/ համալսարանում վերջերս բացվել է հայագիտական ամբիոն: Այս տարվա սեպտեմբերին ծրագրված է հայոց լեզվի և պատմության մշտական գործող ամբիոն բացել նաև Լոս Անջելեսի /ԱՄՆ/ համալսարանում:

Մեր կոմիտեն որոշել է այս նորաբաց ամբիոնների գրադարաններին նվիրաբերել 500-ական օրինակ գեղարվեստական ու հայագիտական բնույթի գրքեր:

Խնդրում ենք Ձեր օժանդակությունը բերել այս գործին:

Նախընտրելի է, որ ուղարկեք Մատենադարանի աշխատակիցների հրատարակած աշխատություններից և այլ գրքեր:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, ք. 38: Պատճեն: Մեքենագիր:

Կ. ՀԱՄԱՉԱՄՊՅԱՆԻ ԼԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
 3. ՉԱՐՈՔՅԱՆԻՆ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՖՈՆԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
 ԵՎ ՍՓՅՈՒՌԱԿԱՅ ԱՌԱՋԱՐԻՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՈՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Создание нашего Комитета нашел широкий отклик во всех зарубежных армянских колониях и за последний год наши связи значительно расширились. Достаточно отметить, что если в 1964 году /к созданию Комитета/ поддерживалась связь с 620 зарубежными организациями и отдельными деятелями, то сейчас их число составляет 900.

На состоявшемся в апреле с. г. в Пленуме Союзного Комитета по культурным связям с соотечественниками за рубежом дали высшую оценку деятельности нашего Комитета. Одновременно сообщаем, что руководство Комитета рекомендовало разработать мероприятия по созданию зарубежных валютных фондов и по созыву в одной из стран конгресса прогрессивных армянских зарубежных организаций. Эти два вопроса обсуждались на президиуме нашего Комитета.

Президиум нашел целесообразным как создание зарубежных валютных фондов, так и созыв конгресса в 1966 г. в одной из зарубежных стран с повесткой дня: "Борьба за мир, за демократию и мирное сосуществование". Естественно это мероприятие одновременно должно проходить под девизом сохранения нации и языка, а также сплочения всех прогрессивных сил вокруг Матери-Родины – Советской Армении.

Одновременно сообщаем, что в деле расширения наших контактов и нашего влияния на зарубежные армянские организации имели место для досадных срывов:

До сих пор не решен вопрос увеличения тиража тех газет, которые завозятся в республику, хотя и были даны им неоднократные обещания. Как нам сообщили инстанция отказала.

Провал поездки во Францию квартета Комитаса и других товарищей нанес большой материальный ущерб Культурному союзу армян Франции /0,5 млн. франков/, а также повлиял на наш политический престиж.

Не состоялась поездка нашей делегации на празднование 50-летия газеты "Арев" /Египет/, хотя и они из-за приезда нашей делегации это мероприятие с февраля отложили на май месяц с. г.

Сорвалась поездка в Сирию и Ливан детского унисона что имел бы большой политический эффект, а также артистки Зары Долухановой.

До сих пор нет окончательного решения о приглашении в республику Колеровградского ансамбля.

Срыв этих мероприятий не способствует расширению наших связей и не дает возможностей нашему Комитету ставить вопрос об организации дальнейших поездок зарубеж художественных и других коллективов.

Просим Вашего указания соответствующим отделам обсудить поставленные вопросы.

Председатель Комитета

В. Амазаспян

Ֆ. 875, ց. 1, գ. 25, քք. 35-36: Պատճեն: Սերբնազիր:

Վ. ՀԱՄԱՉԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻ
ՄԻ ՇԱՐՔ ՍՓՅՈՒՔԱՅԱՅ ԱՆՎԱՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՐԱԿԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մեր կոմիտեն նախատեսել է 1965 թվականին Սովետական Հայաստան հրավիրել սփյուռքահայ ներքոհիշյալ գրողներին, արվեստագետներին ու հասարակական գործիչներին:

1. Խորեն Տեր-Հարություն⁹³ – ամերիկահայ քանդակագործ /Նյու Յորք/
2. Մարտենց Մարտիկ⁹⁴ – «Լրաբեր» թերթի խմբագիր /Նյու Յորք/
3. Հազարյան Հարություն⁹⁵ – Հնագետ-կոլեկցիոներ /Նյու Յորք/
4. Համաստեղ⁹⁶ – ամերիկահայ գրող /Մեդֆորդ/
5. Նուրիկյան Բենիամին⁹⁷ – ամերիկահայ գրող /Սփրինգլայթ/
6. Զուլումյան Գառնիկ /Գառգու/⁹⁸ – ֆրանսահայ նկարիչ /Փարիզ/
7. Ռոզի Արմեն – ֆրանսահայ երգչուհի /Փարիզ/
8. Սեզա Սիրան⁹⁹ – «Երիտասարդ Հայունի» հանդեսի խմբագիր /Բեյրութ/

93. Տեր-Հարություն (Տեր-Հարությունյան) Խորեն Հարությունի (1909, գյուղ Աշոտավան, Խարբերդի գավառ, Արևմտյան Հայաստան – 1991, Նյու Յորք՝ ավտովթարից, թաղված է Երևանում) – Ամերիկահայ քանդակագործ և գեղանկարիչ: Մեծ Եղեռնից հետո հանգրվանել է ԱՄՆ-ում: Անհատական ցուցահանդեսներ է ունեցել ԱՄՆ-ում, Անգլիայում, Իտալիայում, Ֆրանսիայում: Իր բարձրարժեք գործերի համար բազմաթիվ մրցանակների է արժանացել:

94. Մարտենց Մարտիկ Տիգրանի (իսկական ազգանունը՝ Մարտիրոսյան, 1902, Կ. Պոլիս – 1979, Երևան) – Լրագրող, խմբագիր, հասարակական գործիչ: 1945-1967թթ. եղել է Նյու Յորքում լույս տեսնող «Լրաբեր» թերթի պատասխանատու խմբագիրը:

95. Հազարյան Հարություն (1891, Կեսարիա – 1981, Նյու Յորք) – Մշակութային գործիչ, արվեստի գործերի հավաքող, բարեգործ: Սովորել է ծննդավայրի Գյումրուշյան վարժարանում: Ջրադվել է արվեստի գործերի առուվաճառքով: Գլխավորել է Կեսարիայի հայրենակցական միությունը, մասնակցել է Խորհրդային Հայաստանում Նոր Կեսարիա ավանի հիմնադրմանը: Գեղանկարչական գործեր, շուրջ 400 հայերեն ձեռագրեր և այլ արժեքներ է նվիրել Խորհրդային Հայաստանի թանգարաններին, Հայաստանի Պետական պատկերասրահին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Մաշտոցի անվան Մատենադարանին:

96. Համաստեղ (Կելենյան Համբարձում Նովիաննեսի, 1895, գյուղ Փերչենձ, Խարբերդի գավառ – 1966, Լոս Անջելես, թաղված է Բոստոնում) – Գյուղագիր, արձակագիր: Աշխատել է «Հայրենիք» օրաթերթի խմբագրությունում: Հեղինակն է «Մզիտակ ձիավորը» վեպի: Ունի պատմվածքների մի քանի ժողովածուներ:

97. Նուրիկյան Բենիամին Ղազարի (1894, գյուղ Հյուսեյնիկ, Խարբերդի գավառ – 1988, Նյու Ջերզի, ԱՄՆ) – Արձակագիր, խմբագիր և թարգմանիչ: Հիմնադրել և խմբագրել է «Նոր գիր» գրական ամսագիրը: Հեղինակել է մի շարք պատմվածքներ, աշխատակցել մի քանի պարբերականներին: Ունի առանձին հրատարակված գրքեր:

98. Զուլումյան Գառնիկ Հարությունի (Գառգու) (1907, Հալեպ – 2000, Փարիզ) – Ֆրանսահայ աշխարհահռչակ գեղանկարիչ, Ֆրանսիայի Գեղարվեստի ակադեմիայի անդամ (1979): Անհատական ցուցահանդեսներ է ունեցել աշխարհի համարյա բոլոր երկրներում՝ հիացնելով իր ուրույն ոճի ստեղծագործություններով: Արժանացել է տարբեր պետությունների բազմաթիվ բարձր մրցանակների:

99. Սիրան Սեզա (իսկական անունով՝ Ջարիֆյան Սիրանուշ Տամատի, ամուսնական ազգանունը՝ Քյուփեյան, 1903, Կ. Պոլիս – 1973, Բեյրութ) – Գրող, խմբագիր և հասարակական գործիչ, Բեյրութի «Երիտասարդ հայունի» թերթի հիմնադիր, հրատարակիչ և խմբագիր:

9. Ճիտեճյան Երվանդ – լիբանանահայ բժիշկ, հասարակական գործիչ /Բեյրութ/

10. Ճիտեճյան Նինա – լիբանանահայ գրականագետ, հասարակական գործիչ /Բեյրութ/

11. Ալեքսանդր Սարուխան¹⁰⁰ – եգիպտահայ ծաղրանկարիչ /Կահիրե/

12. Արմեն Ծատուր – եգիպտահայ գրող /Հելիոպոլիս/

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը և կարգադրությունը՝ ՀՍՍՌ Արտաքին գործերի մինիստրությանը՝ համապատասխան երկրների սովետական դեսպանությունների միջոցով իմանալու նրանց հրավիրման հնարավորությունն ու նպատակահարմարությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թ. 40: Պատճեն: Մեքենագիր:

100. Սարուխան Ալեքսանդր Հակոբի (1898, ավան Արտանուշ, Վանի նահանգ – 1977, Հելիոպոլիս՝ Կահիրեի մոտ) – Երգիծանկարիչ, գրաֆիկ, հրապարակագիր, հասարակական գործիչ: Կրթությունն ստացել է սկզբում Բաթումիում, ապա Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանում: Սովորել է Վիեննայի Գեղարվեստի ակադեմիայի գրաֆիկայի բաժնում: Հայտնի է իր երգիծական կտավներով: Պատկերազարդել է Հակոբ Պարոնյանի ու Երվանդ Օտյանի երգիծական վիպակները: Եղել է Կահիրեի Հայ գեղարվեստաիրաց միության ատենապետ:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻՆ
ԱՍԵՐԻԿԱԳԱՅՆԵՐԻ ԿՈՂՄԻՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նյու Յորքի /ԱՄՆ/ և Դեսինի /Ֆրանսիա/ հայկական գաղթօջախներից մեր
կոմիտեին ներկայացրել են հետևյալ խնդրանքները.

Ամերիկահայությունը Նյու Յորքում սկսել է կառուցել Հայկական մշակու-
թային կենտրոն և Մայր տաճար: Շինարարական այս մեծ ծրագիրը իրականու-
թյուն է դառնալու երկու տարվա ընթացքում, որի արժեքն է, ոչ պակաս քան 4
միլիոն դոլար:

Շինության հանձնախմբի կողմից ներկայացված է հետևյալ խնդրանքը.

ա/ Ցանկանում ենք Մայր Հայրենիքից ունենալ հնություն ներկայացնող մի
արժեք, որ կարող է լինել խաչքար /մեկ մետր կամ ավելի երկարությամբ ու
համեմատական լայնքով/ կամ այլ բան՝ Մայր տաճարի շրջափակում դնելու
համար:

բ/ Որ Հայաստանի արվեստագետները պատրաստեն հուշարձանի մի նա-
խագիծ Մշակութային տան կամ Մայր տաճարի շրջափակում կանգնեցնելու
համար:

Այդ հուշարձանի նախագիծը մեկ կառուցվածքի մեջ պետք է ներկայացնի
հայության երեք շրջանները /անցյալի փառքը՝ Վարդանանց ոգին, 1915թ. նա-
հատակությունը, հայության ներկա փառքը, կամ ապագան/:

Այն արվեստագետների գործերը, որոնք առաջնություն կշահեն, Շինության
հանձնախմբի կողմից կարժանանան վարձատրության ու նվերի:

Դեսինի մեջ կազմված հանձնախումբը, շնորհիվ տեղի քաղաքապետության
բարյացակամության, կարողացել է քաղաքի փողոցներից մեկը կոչել տալ «24
ապրիլ 1915 հայկական ցեղասպանության փողոց» ինչպես և Ժորեսի անվան
հրապարակի վրա Մեծ եղեռնի հիշատակի ոգեկոչման համար հիմնադրել մի
հուշարձան, որի պատվանդանի հիմնաքարի գետեղման արարողությունը կա-
տարել է քաղաքապետը:

Նրանց ներկայացրած խնդրանքն է՝ իրենց ուղարկել Եղեռնի 50-ամյակի
առթիվ Հայաստանում հայտարարված լավագույն հուշարձանի կոնկուրսի նա-
խագծերից, որոնք ստացել են մրցանակային տեղեր, սակայն չեն կառուցվելու:

Խնդրում ենք թույլ տալ Նյու Յորքի Շինարարության հանձնախմբին ուղար-
կելու մի խաչքար, Կոմիտեի անունից հայտարարելու փակ կոնկուրս՝ Նյու Յոր-
քում դրվելիք հուշարձանի համար, ինչպես և Միխստրների սովետի հայտա-
րարած կոնկուրսի նախագծերից մի քանիսն ուղարկել Դեսին:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թթ. 43-44: Պատճեն: Սեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻՆ
ՆՈՐ ՀԱՃԵՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 50-ԱՄՅԱ ՏԱՐԵՂԱՐՁԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այս տարվա օգոստոսի 25-ին լրանում է Հաճնո հայրենակցական միության
/Արգենտինա/ հիմնադրության 50-րդ տարեդարձը:

Միությունը պատրաստվում է մեծ շուքով նշելու այդ նշանակալի տարե-
դարձը, որ միաժամանակ կապվելու է Սովետական Հայաստանում Նոր Հաճըն
ավանի հիմնադրության հետ /1958թ./:

Հաճնո հայրենակցականը, որ մասնաճյուղեր ունի մի շարք երկրներում,
կրթական-մշակութային ու հայրենասիրական մեծ աշխատանքներ է տանում
սփյուռքահայության մեջ:

Նոր Հաճընի հիմնադրումից հետո, օտար ավերում ապրող հաճընցիները
ավելի ուժեղացրին իրենց կապը Մայր Հայրենիքի հետ և սկսեցին իրենց բաժի-
նը բերել այդ ավանի բարգավաճմանը:

Հաճընի հայրենակցականի 50-րդ տարեդարձի առթիվ ամոհան ամիսներին
Հայաստան կժամանեն հաճընցի զբոսաշրջիկների մեծ խմբեր:

Մեր կոմիտեն ծրագրել է առաջիկայում նշել Հաճընի միության հորեյանը,
որը կարող է մեծ արձագանք ունենալ սփյուռքում:

Խնդրում ենք Ձեր թույլտվությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թ. 42: Պատճեն: Սեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԼԻԲԱՆԱՆԱԳԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ
Վ. ԹՈՒԹՈՒՆՉՅԱՆԻՆ՝ ՓՈԽԱՂԱՐՉ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգարժան պարոն,

Հուլիս 2-ի Ձեր նամակից ուրախությամբ տեղեկացանք, որ լիբանանահայ նկարիչների կյանքի ու գործունեության վերաբերյալ Ձեր հավաքած տեղեկությունների առաջին մասը, ինչպես նաև մեկական օրինակ նրանց ստեղծագործություններից ցանկանում եք ուղարկել Երևանի պետական պատկերասրահին: Սիրով ու շնորհակալությամբ կընդունենք Լիբանանի մեր հայ արվեստագետների սրտաբուխ նվերը Հայրենիքին:

Հայտնենք Ձեզ, որ այդ ստեղծագործությունները Հայաստան կարող եք ուղարկել սեպտեմբեր ամսին՝ Սիրիայից Հայրենիք ներգաղթող հայերի խմբի հետ:

Կխնդրեինք ընդունել մեր կանխահայտ շնորհակալությունները՝ Ձեր հայրենանվեր գործի համար:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 555, թ. 1: Պատճեն: Սեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ԵՎ ԳՐ. ԳՈՒՅՈՒՄՉՅԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱՄԱԿԸ
ԵՐՔԱՂԵՈՐՅՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՅ ԳՐ. ՀԱՄԱՐԱԹՅԱՆԻՆ՝ ՆՈՐ ԱՐԱՔԿԻՐԻ
ՀԻՄՆԱՂՐՄԱՆ 40-ԱՄՅԱ ՏԱՐԵՂԱՐՉԸ ՆՇԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարվա նոյեմբերի 29-ին լրանում է Նոր Արաբկիրի հիմնադրության 40-րդ տարեդարձը:

Նոր Արաբկիրի հիմնադրության նախաձեռնողը Արաբկիրի միությունն էր /ԱՄՆ/, որ անցած 40 տարիների ընթացքում իր մեծ նպաստն է բերել Նոր Արաբկիրի բարգավաճմանը, ինչպես և նյութապես օժանդակել Հայրենիք վերադարձող արաբկիրցիներին:

Ներկայումս Նոր Արաբկիրում բնակվում են 3 հազարից ավելի նախկին արաբկիրցիներ և նրանց սերունդները:

Սովետական Հայաստանում Նոր Արաբկիրի հիմնադրության 40-րդ տարեդարձը արժանավայել կերպով նշելու նպատակով, մեր կոմիտեում ստեղծվել է տոնակատարության հանձնաժողով, որը մշակել է մի շարք միջոցառումներ այդ առթիվ:

Տոնակատարության օրերին Երևան կժամանի Արաբկիրի միության պատվիրակությունը: Սպասվում է նաև արաբկիրցի զբոսաշրջիկների մեծ խմբի գալուստը Հայաստան:

Ձեր ուշադրությանը ներկայացնելով վերոհիշյալը, խնդրում ենք քննության առարկա դարձնել Նոր Արաբկիրի 40-ամյակի տոնակատարության հանձնաժողովի նիստի հետևյալ առաջարկները:

ա/ Դպրոցականների փողոցը վերանվանել Արաբկիրի փողոց:

բ/ Այդ փողոցի սկզբնամասում կանգնեցնել աղբյուր-հուշարձան՝ նվիրված Նոր Արաբկիրի 40-ամյակին:

գ/ Բարեկարգել դեպի Արաբկիրի քիմիական չոր մաքրման ֆաբրիկա տանող ճանապարհը /Պրավդայի փողոց/:

դ/ Պրավդայի փողոցի վրա բացել պարենային խանութ, դեղատուն և տարբեր կրպակներ /գովաջուցիչ ջրերի, թերթերի վաճառման և այլն/, ինչպես և տեղադրել հեռախոսախցիկներ:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Նոր Արաբկիրի 40-ամյակի տոնակատարության
հանձնաժողովի քարտուղար՝

Գր. Գույումջյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թթ. 54-55: Պատճեն: Սեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԱՌՉՈՒՄԻՆ ՆՐԱ ԿՏԱԿՆԵՐԻՑ ՍՏԱՑԱԾ
ՏՊԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱՐԱՐՁ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՂՆԴԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի բարեկամ,

Շտապում եմ հայտնել Ձեզ իմ խորին շնորհակալությունները այն ջերմ ընդունելության և սիրալիր վերաբերմունքի համար, որ ցույց տվեցիք ինձ և, անշուշտ, իմ ընկերներին՝ Ֆրանսիա կատարած մեր այցելության օրերին:

Մեզ համար շատ նվիրական և անմոռանալի են Ձեր՝ Ֆրանսիայի ժամանակակից ամենամեծ նկարիչներից մեկի արվեստանոցում անցկացրած պահերը: Ինձ այնպես դուր եկան Ձեր արդիական մտքի թռիչքները, այն նորը, որ Դուք բերում եք Ֆրանսիայի և համաշխարհային կերպարվեստին: Ձեմ մոռանում այն մեծ կտավը, որտեղ Դուք մեծ վարպետությամբ վրձնել էիք մարդու անհետացումը ժամանակակից տեխնիկայի դարում, ինչպես մեկ-երկու անխոս էլեկտրալարերի մեջ դրել էիք այրվող, փոթորկվող և բոցավառվող մեծ միտք: Եվ այսպես, Ձեր բոլոր ստեղծագործությունները, անկախ նրանից, թե ինչ թեմատիկա են ընդգրկում,¹⁰¹ և հիացմունքի նոր գրավական են բոլոր արվեստագետների համար: Ձեր մակագրությամբ մեզ նվիրած գործերը ամենաթանկ հիշատակներն են, որոնք ամեն օր հիշեցնում են Ձեր ներկայությունը մեր շրջապատում, մեր բնակարանում:

Մեր ծանոթության դեռ առաջին քայլերն են և շատ ուրախ եմ, որ մեր հանդիպումը այդքան ջերմ և մտերմիկ անցավ: Հետագայում ևս մենք կաշխատենք ավելի սերտ կապերի մեջ լինել Ձեզ հետ՝ Ձեր ստեղծագործությունները դարձնելով մեր հայրենիքի սեփականությունը:

Հուսանք, որ 1966 թվականին կբացվի Ձեր գործերի ցուցահանդեսը մայրաքաղաք Երևանում և այս անգամ արդեն, Դուք, հարգելի բարեկամ, հնարավորություն կունենաք անձամբ տեսնելու և զգալու այն սերը, որ տածում է մեր մտավորականությունը Ձեր արվեստի և Ձեր նկատմամբ:

Լավագույն ցանկություններով՝

Գոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 451, թթ. 2-3: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՂՂԱՍՈՐՅԱՆԻՆ
ԿՈՄԻՏԵԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գրական հանձնախումբը նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին նախատեսել է հետևյալ միջոցառումները.

1. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Երևանում է գտնվում լիբանանահայ գրող, հասարակական գործիչ, «Նաիրի» շաբաթաթերթի խմբագիր Անդրանիկ Մառուկյանը,¹⁰² նոյեմբերի առաջին կեսին, հանձնախումբը կոմիտեի դահլիճում ծրագրել է հանդիպման երեկո՝ հետևյալ օրակարգով.

Ձեկուցում՝ Շահե Տատուրյան¹⁰³

Ելույթներ՝ Վահագն Դավթյան

Գևորգ Էմին

Գրիգոր Քեշիշյան¹⁰⁴

2. Նոյեմբերի երկրորդ կեսին Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում կազմակերպել «Հայրենաբաղձ հնչյուններ» գրական-երաժշտական երեկո՝ նվիրված սփյուռքահայ գրականությանն ու երաժշտությանը:

Օրագիր՝ գրական բաժնում տեղ են գրավելու Վահան Թեքեյանի, Վահե

102. Մառուկյան Անդրանիկ Թորոսի (1913, ավան Կյուրին, Մեքսիկայի նահանգ - 1989, Փարիզ) - Գրող, հրապարակագիր, խմբագիր և հասարակական գործիչ: Կրթությունը ստացել է Հալեպի Ազգ. Հայկազյան վարժարանում և Համազգայինի Բեյրութի Նշան Փալանճյան ճեմարանում: 1935-1942թթ. դասավանդել է Հալեպի Ազգ. Զավարյան վարժարանում: Ստեղծագործական աշխատանքներից զատ ունի նաև հրապարակախոսական գրվածքներ: 1941թ. հիմնել և մինչև 1980-ականների կեսերը խմբագրել է սփյուռքահայ հասարակական կյանքում մեծ ավանդ ունեցած «Նաիրի» շաբաթաթերթը (Հալեպ, ապա Բեյրութ): Ունի ուղեգրությունների, հուշագրությունների, բանաստեղծությունների մի քանի ժողովածուներ, ինքնակենսագրական բնույթի վեպ և վիպակ:

103. Տատուրյան Շահե-Ջատիկ Սամվելի (1911, Կյուրին, Մեքսիկայի նահանգ - 1990, Երևան) - Հասարակական գործիչ, հրապարակագիր, խմբագիր, Ֆրանսիական դիմադրության շարժման հայկական կազմակերպության ղեկավարներից, Հայ ազգային ճակատի հիմնադիրներից: Աշխատակցել է մի շարք պարբերականների: 1947թ.ին հայրենադարձվել է, 1948-1982թթ. աշխատել ՀԽՍՀ Հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեում (1972-1982թթ.)՝ կոմիտեի նախագահի տեղակալ:

104. Քեշիշյան Գրիգոր Սամվելի (1921, Ադանա - 1980, Երևան) - Գրող, թարգմանիչ: Ավարտել է Բեյրութի Սահակյան և Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունները, Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը: Աշխատել է Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունում: Հուշագրական բնույթի պատմվածքների և վիպակների հեղինակ է:

101. Բառը բաց է թողնված:

Վահյանի,¹⁰⁵ Գառնիկ Աղդարյանի,¹⁰⁶ Անդրանիկ Ծառուկյանի, Մուշեղ Իշխանի,¹⁰⁷ Վազգեն Շուշանյանի,¹⁰⁸ Միսաք Մանուշյանի,¹⁰⁹ Մարի Աթմաճյանի,¹¹⁰ Շահան Շահնուրի,¹¹¹ Կարապետ Սիտալի,¹¹² Զավեն Սյուրմեյանի,¹¹³ Դևի,¹¹⁴ իսկ

105. Վահե-Վահյան (Ապտալյան Սարգիս Հակոբի, 1908, Կյուրին, Սերաստիայի նահանգ – 1998, Բեյրութ) – Բանաստեղծ, խմբագիր, գրականագետ, թարգմանիչ, հասարակական գործիչ, մանկավարժ։ Մովորել է Այնթապի և Հալեպի կրթական հաստատություններում, ավարտել Բեյրութի ամերիկյան համալսարանը՝ ինժեների մասնագիտությամբ։ Բեյրութում հիմնել և խմբագրել է «Անի» գրական հանդեսը (1946-1956)։ Հայ գրականություն և դասավանդել ՀՀԸՄ-ի Բեյրութի վարժարաններում, եղել ՀՀԸՄ-ի Երվանդ շյուսիսյան հայագիտական հիմնարկի տնօրենը։ Ունի բանաստեղծությունների բազմաթիվ ժողովածուներ, թարգմանություններ։ Կազմել է հայ գրականության անթոլոգիաները։

106. Աղդարյան Գառնիկ Հովսեփի (1925, Հալեպ – 1986, Բեյրութ) – Բանաստեղծ, հրապարակագիր, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ։ 1980-1986թթ.՝ Լիբանանի կոմկուսի Կենտկոմի անդամ։ Ունի բանաստեղծությունների և պատմվածքների ժողովածուներ։ Երևանի՝ Լեռնական թիվ 133 միջնակարգ դպրոցում գործում է Գ. Աղդարյանի թանգարանը։

107. Մուշեղ Իշխան (Ճենտերեճյան Մուշեղ Սրապիտի, 1914, Սիվրիհիսար, Անկարայի նահանգ – 1990, Բեյրութ) – Բանաստեղծ, արձակագիր, թատերագիր, մշակութային և կրթական գործիչ։ 1915թ. ընտանիքով արտոնվել է Դեր Զոր։ Ավարտել է Դամասկոսի Հայոց ազգային վարժարանը, Բեյրութի Հայ ճեմարանը, ուսանել Բյուսելի համալսարանում։ Խմբագրել է ՀՀԴ Բեյրութի «Ազգակ» օրաթերթը։ Երկար տասնամյակներ հայ գրականություն և դասավանդել Բեյրութի Հայ ճեմարանում (հետագայում՝ Նշան Փալանճյան ճեմարան)։

108. Շուշանյան Վազգեն (Օննիկ) Գրիգորի (1903, Ռոդոսթո – 1941, Փարիզ) – Գրող։ 1915թ. արտոնվել է Սերձավոր Արևելքի անապատները։ Ունի տպագրված մոտ 20 վեպ, վիպակ և պատմվածքների ժողովածու։

109. Մանուշյան Միսաք Գևորգի (1906, Աղլյանա, Թուրքիա – 1944, Փարիզ) – Բանաստեղծ, Ֆրանսիայի Դիմադրության շարժման Լեռնադուն գործիչ։ Գնդակահարվել է Խաղաղ զինվորականների կողմից։ Հետմահու պարգևատրվել է Ֆրանսիայի «Պատվո լեգեոնի» շքանշանով։

110. Աթմաճյան Մարի Միհրանի (1913, Բաֆրա, Թուրքիա – 1999, Փարիզ) – Բանաստեղծուհի, գրական-հասարակական գործիչ։ Երկար տարիներ եղել է Ֆրանսահայ գրողներու միության նախագահը։

111. Շահան Շահնուր (Քերեսթեյան Շահնուր Զաքարի, 1903, Կ. Պոլիս – 1974, Փարիզ) – Գրող։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ Թղթակցել է մի շարք պարբերականների։ Լույս է ընծայել վեպեր, գրաքննադատական հոդվածներ, որոնցից առավել նշանակալի է առաջինը՝ «Նահանգը առանց երգի»։ Գրել է նաև ֆրանսերեն՝ Արմեն Լյուրեն ծածկանունով։

112. Սիտալ (Շահիյան) Կարապետ Շահենի (1891, գյուղ Կաճես, Շատալի գավառ – 1972, Ֆիլադելֆիա) – Բանաստեղծ, հրապարակագիր։ Ավարտել է Վանի Ամերիկյան բարձրագույն վարժարանը, Թավրիզի Ամերիկյան կոլեջը։ Հեղինակ է մի շարք բանաստեղծությունների, ժողովածուների ու հրապարակագրական երկերի։ Կյանքի վերջին տարիներին եղել է Ամերիկահայ առաջինական միության պատվո նախագահը։

113. Սյուրմեյան Լուս-Զավեն (Սյուրմեյան Զավեն Լուսի, 1907, Տրապիզոն – 1995, Լոս Անջելես) – Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, գրականագետ, Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր։ Ունի նաև վեպեր, թարգմանություններ, այդ թվում՝ «Մասնա ծոեր» էպոսի հայերենից անգլերեն թարգմանությունը։

114. Դև (Ղարաբեկյան Մարգար Ավետիսի, 1901, Թեհրան – 1976, Թեհրան) – Բանաստեղծ, գեղանկարիչ։ Նրա բանաստեղծությունների շարադրանքով երգեր են հորինվել։

երաժշտական բաժնում՝ Համբարձում Պերպերյանի,¹¹⁵ Բարսեղ Կանաչյանի,¹¹⁶ Գոհարիկ Ղազարոսյանի,¹¹⁷ Մեսումենցի,¹¹⁸ Արա Պարթևյանի,¹¹⁹ Ալան Հովհաննեսի,¹²⁰ Էդուարդ Հակոբյանի,¹²¹ Գալանտերյանի¹²² ստեղծագործություններից։

3. Դեկտեմբերի սկզբին նախատեսվել է Կոմիտեի դահլիճում նշել ամերիկահայ գրող Համաստեղի ծննդյան 70-ամյակը։

Զեկուցող՝ Սուրեն Աղաբաբյան¹²³

Ելույթներ՝ Գևորգ Էմին

Անահիտ Սահիլյան¹²⁴

Մարո Մարգարյան

115. Պերպերյան Համբարձում Պաղտատարի (1905, Աղանա – 1999, Բոստոն, Թադվան է Ռոբերթսոնում) – Երգահան, խմբավար, մանկավարժ։ Ավարտել է Աթենքի կոնսերվատորիան։ Մովալել է երաժշտական հասարակական գործունեություն։ ԱՄՆ-ի ու Կանադայի ՀՀԸՄ հայ գաղթականների ընդհանուր երաժշտական ղեկավարն ու տնօրենն էր։ Հեղինակ է մի քանի օպերաների։

116. Կանաչյան Բարսեղ (1885, Ռոդոսթո – 1967, Բեյրութ) – Երգահան, խմբավար։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում և Սիվրիհիսարի վարժարանում, երաժշտականը՝ Վանույում և Բուխարեստում։ Եղել է Կոմիտասի սանը Կ. Պոլսում։ Հեղինակ է խմբերգերի, մեներգերի և «Աբեղա» օպերայի (ստեղծված Լևոն Շանթի «Հին աստվածներ» պիեսի թեմայով)։

117. Ղազարոսյան Գոհարիկ (1911, Կ. Պոլիս – 1957, Փարիզ) – Երգահան, դաշնակահարուհի։ Հեղինակ է կամերային երկերի, դաշնամուրային կոնցերտների, բալետի։ Ստեղծել է «պատմողական» հայկական երգի ինքնատիպ տեսակ։ Համերգներով հանդես է եկել Եվրոպայի և ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում։

118. Մեսումենց Ավետիս Գևորգի (1905, Արաբկիր – 1981, Փարիզ) – Երգահան։ Ավարտել է Լիոնի կոնսերվատորիան։ Ղեկավարել է Փարիզի «Մայա-Նովա» ազգագրական համույթը։ Հեղինակ է բազմաթիվ մեներգերի, գուգերգերի, խմբերգերի, կամերային երկերի, բալետի և օպերաների։

119. Պարթևյան Արա Միհրանի (1903, Կ. Պոլիս – 1986, Փարիզ) – Երգահան, դիրիժոր, խմբավար։ Հեղինակ է օպերայի, մեներգերի, ռոմանսների, խմբերգերի։ Հանդես է եկել հեղինակային համերգներով։ Շուրջ 40 տարի Փարիզում ղեկավարել է հայկական երգչախումբ։

120. Հովհաննես Ալան (Զարմաշյան Ալան Հարությունի, 1911, Մոմերվիլլ, ԱՄՆ – 2002, Սիբիր, Վաշինգտոնի նահանգ) – Երգահան։ Մովորել է Բոստոնի կոնսերվատորիայում։ Հորինել է օպերաներ, սիմֆոնիաներ, կոնցերտներ, սիմֆոնիկ և հոգևոր երկեր են։ Ունի հայկական ոճի բազմաթիվ երկեր, որտեղ կիրառել է հայկական ժողովրդական, աշուղական և հոգևոր երաժշտության ավանդույթները։

121. Հակոբյան Էդուարդ Ստեփանի (1920, քաղաք ալ-Ֆայյում, Եգիպտոս – 2004, Կահիրե) – Խմբավար, երգահան, երաժշտ-հասարակական գործիչ։ Ավարտել է Կահիրեի Ազգային Գաղափարական վարժարանը, Փարիզի «Մեզար Ֆրանկ» երաժշտանոցը։ Ղեկավարել է հայկական մի քանի երգչախմբեր։ Գրել է լարային տրիո, սիմֆոնիկ պարեր, սիմֆոնիկ սյուիտ են։ Հանդես է եկել հեղինակային համերգներով։ Հեղինակ է հայկական երաժշտությանը նվիրված ուսումնասիրությունների։

122. Գալանտերյան Նիկոլ Կասպարի (1881, Ալն – 1944, Թեհրան) – Երգահան, երաժշտության ուսուցիչ։ Մովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Կազմակերպել է երգչախմբեր։ Հայ բանաստեղծների ստեղծագործությունների բառերով հորինել է երգեր՝ քաղաքային ժողովրդական երգի ոճով։ Ունի մանկական օպերաներ, մանրանկարներ։

123. Աղաբաբյան Սուրեն Բարդուղի (1922, Ղարաբիլիսա, այժմ՝ Վանաձոր – 1986, Երևան) – Գրականագետ, գրաքննադատ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՀՄ գիտության վաստակավոր գործիչ (1974)։ Աշխատությունները նվիրված են խորհրդահայ գրականության պատմության և տեսության հարցերին։

124. Սահիլյան Անահիտ Արամի (1917, գյուղ Վարդաբլուր, Լոռու մարզ – 2010, Երևան) – Արձակագիր, հրապարակագիր։ Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության

Անհրաժեշտ ենք համարում Համաստեղի ծննդյան առթիվ նյութեր հրապարակել գրական մամուլում, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում, «Մովետական Հայաստան» ամսագրում և ռադիոյով:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թթ. 68-69: Պատճեն: Մեքենագիր:

№ 45

23 նոյեմբերի 1965թ., Երևան

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միյուրճահայ գաղութներում գործում են շատ թատերախմբեր, երգչախմբեր, պարախմբեր, ինչպես և մայրենի լեզվի ու պատմության ուսուցման դասընթացներ /գլխավորապես այն երկրներում, ուր չկան հայկական ամենօրյա դպրոցներ/:

Տարբեր գաղութների առաջադիմական կազմակերպություններից հաճախ մեզ դիմում են, խնդրելով կատարելագործման համար Հայաստան հրավիրել իրենց միությունների շնորհալի անդամներին:

Վերջին մի քանի տարիներին Հայաստան են եկել իրենց արվեստը կատարելագործելու երգչուհի Ժանեթ Գույումջյանը,¹²⁵ պարուհիներ Սոնա Փուլատյանը /Բեյրութ/, Միրտա Վարդանյանը /Բուենոս Այրես/ և այլն:

Սակայն այս կարևոր գործը առաջ է տարվում շատ անկազմակերպ, որի պատճառով մենք ի վիճակի չենք լինում ընթացք տալ միությունների ներկայացրած խնդրանքներին:

Այս գործը կարգավորելու համար Կոմիտեն ամեն տարի կատարելագործման համար Հայաստան կարող է հրավիրել 5-6 հոգու՝ 3 ամսից մինչև մեկ տարի ժամանակով:

Նպատակահարմար ենք գտնում առաջին հերթին ընդառաջել հայոց լեզվի ու գրականության, հայոց պատմության, ինչպես և ազգային պարարվեստի, երգարվեստի, երաժշտության, թատերական արվեստի, խմբավարության գծով մասնագիտանալ ցանկացողներին:

Կոմիտեի միջոցների հաշվին կատարելագործման համար եկող անձանց թոշակավորման հարցը համապատասխան կլինի արտասահմանյան ուսանողներին մեզ մոտ տրվող թոշակի չափին:

Հայաստանում իրենց մասնագիտությունը բարձրացնելուց հետո նրանք կարող էին օգտակար դեր խաղալ հայ գաղութների մշակութային կյանքն աշխուժացնելու ուղղությամբ:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 5, թթ. 1-2: Պատճեն: Մեքենագիր:

125. Գույումճյան-Իլանճյան Ժանեթ – Լիբանանահայ երգչուհի: Կրթությունն ստացել է ծննդավայր Բեյրութում: Համերգներով հանդես է եկել տարբեր երկրներում:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՀԻՍՅ ՀԱՆԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԳԱՅ
Ա. ՔՈՂԻՆՅԱՆԻՆ՝ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԱՅՆՄԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն ամեն կերպ ձգտում է ընդլայնել սփյուռքի և Սովետական Հայաստանի միջև գոյություն ունեցող կապերը:

Եթե Կոմիտեի հիմնադրության ժամանակ /25 հունիս 1965թ./ մենք կապ ունեինք սփյուռքահայ շուրջ 600 զանազան կազմակերպությունների, մշակութային միությունների, դպրոցների, ակումբների, թերթերի ու հանդեսների խմբագրությունների, հայրենակցական միությունների, ինչպես նաև անհատ գործիչների հետ, ապա ներկայումս այդ թիվը հասել է 1400-ի:

Կապերի այսպիսի ընդլայնման պայմաններում ստեղծագործական աշխատանքի ողջ ծանրությունը ընկնում է կապերի բաժնի ռեֆերենտների վրա /կապերի զարգացում և ընդլայնում, հյուրերի հետ աշխատանք, նամակագրության վարում և այլն/: Եվ այս բաժինն աշխատում է առանց բաժնի վարիչի, որի պատճառով խիստ դժվարանում է միավորել նրանց աշխատանքը:

Կոմիտեին կից հասարակական կարգով գործում են մի շարք հանձնախմբեր՝ կրթական, գրականության, տիկնանց, հայրենակցական և այլն, որոնց շուրջ ընդգրկված են հանրապետության անվանի մտավորականներն ու գործիչները:

Սակայն այս աշխատանքների վարումը ներկայումս ընկած է բաժինների աշխատակիցների վրա: Նպատակահարմար է, որ բոլոր սեկցիաների գծով աշխատեր մեկ հոգի՝ բաժնի վարիչի հաստիքով:

Կոմիտեն ունի մեկ հաշվապահի հաստիք, որը սպասարկում է միաժամանակ «Սովետական Հայաստան» հանդեսի և «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագրություններին, առանց վարձատրության:

Մեր աշխատանքների ծավալը ընդարձակվելու կապակցությամբ, խիստ մեծացել են նաև հաշվային աշխատանքները:

Այժմ մեկ հաշվային աշխատողով հնարավոր չէ նորմալ կերպով տանել այդ բոլոր գործաբանները: Բացի այդ, Կոմիտեն չունի զանապահի հաստիք, որի պատճառով սպասարկումը թերի կերպով կատարվում է «Սովետական Հայաստան» հանդեսի խմբագրության զանապահի կողմից, առանց վարձատրության:

Կոմիտեի շենքում տեղավորված են չորս հիմնարկություններ, շուրջ 70 աշխատողներով, որոնց ամբողջ գույքը գտնվում է մեր բալանսում:

Աշխատանքային օրը վերջացնելուց հետո շենքը մնում է առանց պատասխանատու անձի հսկողության, չի նախատեսված պարետ: Պարետի, էլեկտրոմոնիտորի և կինոտեխնիկի բացակայության պատճառով, իսկ եթե նկատի ունենանք այն, որ հաճախ մեր դահլիճում ցուցադրվում են կինոնկարներ, ապա այս պարագան կարող է անցանկալի երևույթների պատճառ դառնալ:

Նկատի ունենալով այս բոլորը և այն, որ առաջիկա շրջանում կընդարձակ-

վեն մեր ունեցած կապերը, խնդրում ենք ավելացնել Կոմիտեի ստեղծագործական և տնտեսական աշխատակիցների թիվը հաստիքային 4 միավորով: Այն է.

Կապերի բաժնի վարիչ – 1

Սեկցիաների գծով բաժնի վարիչ – 1

Գանձապահ-հաշվետար – 1

Պարետ – 1

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 2, թթ. 3-4: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ
ԱՐՈՆՁԵՐ ՄԱՍՈՒԼԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
Ց. ԲՐՈՒՏՅԱՆԻ¹²⁶ «ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՏՊԱԳՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ցիցիլիա Բրուտյանի «Սփյուռքի հայ երաժիշտները» ծավալուն աշխատությունը, որը հեղինակի մտահղացմամբ պետք է ամփոփվի երեք հատորներում, մեծ հետաքրքրություն ու արժեք է ներկայացնում, որովհետև այն գալիս է լրացնելու մի խոշոր բաց, որը մինչև այժմ կա հայ երաժշտության պատմության մեջ:

Աշխատությունը լրացնելու է հայ երաժշտության պատմության սփյուռքահայ հատվածը, որն ըստ էության համազգային օրինական կեսն է և առանց որի ճիշտ ու ամբողջական չեն կարող լինել հայ երաժշտության պատմությունն ու նրա ուսումնասիրությունը:

Ց. Բրուտյանը իր տասնամյա քրտնաջան աշխատանքի շնորհիվ հսկայական նյութ է կուտակել, որի մի զգալի մասը ամփոփել է արդեն աշխատության առաջին հատորում և որը հանձնել է Պետհրատին՝ հրատարակության համար: Մեծ քանակությամբ փաստական նյութերի, հեղինակի՝ սփյուռքահայ արվեստագետներից մեծագույն մասի հետ հաստատած անմիջական կապերի գրավոր արտացոլումը և շարադրանքի ազատ գեղարվեստական ոճը հատորը դարձնում են առավել արժեքավոր ու հետաքրքիր:

Առաջին և երկրորդ հատորները ներկայացնելու են սփյուռքահայ երաժիշտների գեղարվեստական դիմանկարները, իսկ երրորդը՝ երաժշտական կոլեկտիվների, հայ գաղութների ընդհանուր պատկերը և ողջ նյութից բխող ընդհանրացումներն ու եզրակացությունները:

Գիրքը արժեքավոր է ոչ միայն որպես երաժշտագիտական գործ, այլև մի աշխատություն, որը մեծ չափով կնպաստի Մայր Հայրենիքի ու աշխարհի չորս ծագերի հայ բեկորների միավորման, դրանք Մայր Հայրենիքի հետ կապելու հայրենասիրական մեծ գործին: Աշխատանքի այսպիսի արժեքավորումն արտահայտված է Արամ Խաչատրյանի¹²⁷ և ՍՍՌՄ ժողովուրդների երաժշտու-

126. Բրուտյան Ցիցիլիա Գևորգի (1920, Թիֆլիս – 2000, Երևան) – Երաժշտագետ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1967): Կրթությունն ստացել է Լենինականում (այժմ՝ Գյումրի), ավարտել է Երևանի կոնսերվատորիայի երաժշտության տեսության ու պատմության բաժինը, Մոսկվայի կոնսերվատորիայի ասպիրանտուրան: Հրատարակել է հայկական երաժշտության պատմության և հայ երաժիշտների վերաբերյալ գրքեր:

127. Խաչատրյան Արամ Եղիայի (1903, Թիֆլիս – 1978, Մոսկվա, թաղված է Երևանում՝ Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում) – Աշխարհաեռչակ երգահան, խմբավար, դասախոս և հասարակական գործիչ, ԽՍՀՄ (1954), Հայկական (1955), Վրացական (1963) և Ադրբեջանական ԽՍՀ (1973) ժողովրդական արտիստ, արվեստագիտության դոկտոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1963), սոցիալիստական աշխատանքի հերոս (1973): Ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիան, որտեղ և հետագայում դասախոսել է: Համերգներ է տվել ԽՍՀՄ հանրապետություններում և արտասահմանյան ավելի քան 30 երկրներում: Մտեղծագործել է բալետներ, սոնատներ, ռապսոդիաներ, երաժշտական ուրիշ ժանրերի երկեր: Հայկական կինոերաժշտության հիմնադիրն է: 1984թ.-ից Երևանում գործում է Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը:

թյան խոշոր մասնագետ պրոֆ. Վիկտոր Բելյանի՝ Ց. Բրուտյանի աշխատության առթիվ տված կարծիքների մեջ:

«Հայրենաբաղձ հնչյունները»-ի երկու հատորների սփյուռքահայ արձագանքներն արդեն իսկ վկայում են Ց. Բրուտյանի աշխատանքի արժեքը:

Սփյուռքահայ կոմիտեն քննարկելով Ց. Բրուտյանի աշխատության ամբողջացման և այն սփյուռքի ու Հայրենիքի լայն հասարակայնությանը մատչելի դարձնելու հարցը, նպատակահարմար գտավ խնդրել ՀՍՍՌ-ի Մամուլի կոմիտեին, առաջիկա տարիներին տպագրելու նաև աշխատության հաջորդ երկու մասերը, որոնք չեն ընդգրկված առաջին հատորի մեջ, իսկ առաջին հատորը տպագրել մեծ տպաքանակով /10.000 օրինակ/, որի զգալի մասի իրացումը Սփյուռքահայ կոմիտեն վերցնում է իր վրա:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 25, թթ. 70-71: Պատճեն: Մեքենագիր:

ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ՝ ՍՓՅՈՒՌՔԻՅ
ՍՏԱՅՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՍՍՌ Մինիստրների սովետի 1965թ. հունվարի 21-ի թիվ 29 կարգադրությամբ ՀԿԿ Կենտկոմի ցուցումով հաստատված է հանրապետական հանձնաժողով՝ որին և իրավունք է վերապահված արտասահմանյան երկրներից ստացվող բոլոր տեսակի արխիվային նյութերը, գրականությունը, ինչպես նաև թանգարանային արժեք ունեցող իրերը բաշխելու ըստ պատկանելիության: Հանձնաժողովի իրավունքների ու պարտականությունների մասին իրազեկ է դարձվել այն բոլոր հիմնարկ-ձեռնարկություններին, որոնց գործունեությունն առնչվում է արտասահմանյան երկրների հետ: Սակայն, հակառակ այդ կարգադրության, Ձեր կոմիտեի առանձին աշխատողներ զբաղվում են սփյուռքահայությունից ստացված արխիվային նյութերը, գրականությունը և թանգարանային արժեք ներկայացնող իրերն ինքնակամորեն բաշխելու գործով: Կենտկոմի և Մինիստրների սովետի նման որոշման նպատակն է հաստատուն կարգ սահմանել պատմագիտական նշանակություն ունեցող վավերագրերը, գրականությունը և թանգարանային իրերը բաշխելու գործում: Նման հեղինակավոր հանձնաժողովը, որի կազմը հաստատված է կառավարության կողմից, ի վիճակի է ավելի նպատակահարմար ձևով բաշխել, քան թե առանձին անհատները: Ձեզ նույնպես հայտնի է, որ բազմաթիվ դեպքեր են եղել, երբ սփյուռքից ստացված վավերագրերը անհետացել են, ընկել են անհատ մարդկանց ձեռքը: Բացի դրանից, սփյուռքի ոչ բոլոր հայրենակիցներն ու կազմակերպությունները գիտեն ՀՍՍՌ-ում գործող կուլտուր-լուսավորական հիմնարկների կառուցվածքն ու դերը, որի համար երբեմն իրերն ու վավերագրերը ուղարկվում են ոչ ըստ պատկանելիության:

Թվում է, ոչ մի հիմք չկա խախտելու Մինիստրների սովետի հիշյալ որոշումը, որը բոլոր շահագրգռված կազմակերպություններին սպասարկում է, ելնելով ընդհանուր շահերից:

Տեղյակ պահելով Ձեզ այդ մասին, հարգելի Վարդգես Եղիշևիչ, խնդրում եմ համապատասխան կարգադրությունը, որպեսզի Ձեր աշխատակիցներն այլևս չխախտեն Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետի վերը նշված որոշումը:

Հարգանքներով՝

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր
արխիվային վարչության պետ՝

Ա. Հ. Հարությունյան

Ֆ. 875, ց. 4, գ. 2, թթ. 3-4: Բնագիր: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ՝ ՍՓՅՈՒՐՔԱՅԱՅ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո աշխարհով մեկ սփռված հայերն իրենց հայացքը կարոտով ու սպասելիքներով ուղղեցին ավերածությունների ու մոխիրների միջից բարձրացող Մայր Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին:

Օտար ափերում ապրող հայերը 20-ական թվականներից սկսած, Հայաստանի Օգնության Կոմիտեի /ՀՕԿ/ միջոցով իրենց նպաստը բերեցին Հայաստանի վերաշինմանն ու բարգավաճմանը:

Հայաստանի կառավարությունը ընդառաջեց հայրենակցական միությունների խնդրանքներին՝ իրար հետևից հիմնադրելով Նոր Արաբկիրը, Նոր Մալաթիան, Նոր Մեքաստիան, Նոր Խարբերդը և այլ ավաններ:

Անցած ամբողջ շրջանում մոտ 200 հազար տարագիր հայեր հնարավորություն ստացան վերադառնալ Հայրենիք, ուր իրենց հայաստանցի եղբայրների հետ միասին մասնակցեցին երկրի կառուցմանն ու ծաղկմանը:

Դեռ 20-ական թվականներից սկսած, մի շարք հայրենակցական միություններ Հայաստան սկսեցին փոխադրել դրամական մեծ գումարներ, մեծ մասամբ դրանք հատկացնելով իրենց անունները կրող ավաններին:

Այս երևույթը նոր թափ ստացավ հետպատերազմյան տարիներին: Միայն վերջին մի քանի տարիներին, Հայաստանի տարբեր հաստատությունների համար դրամական հատկացումներ են կատարել Արաբկիրի միությունը՝ Արաբկիրի քիմիական չոր մաքրման ֆաբրիկային սարքավորում գնելու նպատակով /մինչև 150 հազար դոլար/, Համասեբաստահայ վերաշինաց միությունը՝ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի բիոքիմիայի լաբորատորիայի համար գիտական գործիքներ գնելու համար /75 հազար դոլար/, Մալաթիայի կրթասիրաց ընկերությունը՝ Նոր Մալաթիայի հիվանդանոցի կահավորման համար /30-35 հազար դոլար/, Համախարբերդցիական միությունը /20 հազար դոլար/, Համաքղեցիական վերաշինաց միությունը /18 հազար դոլար/ և այլն:

Տարիների ընթացքում որոշ հայրենակցական միությունների դրամական հատկացումները հասել են մեծ չափերի: Միայն Մալաթիայի կրթասիրաց ընկերությունը, մինչև այժմ, Հայաստանի զանազան հաստատությունների, ինչպես և այլ ազգագույն նպատակների համար տրամադրել է 500.000 դոլար:

Հայտնի է, որ Մեղրույան եղբայրների կտակի մի կարևոր կետը /կտակը ձևակերպվել է 1926թ./ վերաբերվում է Երևանի պետական համալսարանին: Այդ կտակի հատկացումները /տարեկան 10 հազար դոլար/ կանոնավորաբար ստացվեցին մինչև 30-ական թվականների վերջերը:

Ներկայումս պետական համալսարանի չստացած գումարը հասել է մեծ չափերի, շուրջ 300.000 դոլարի:

Հետագա տարիներին Հայաստանի տարբեր հաստատությունների և, մանավանդ, համալսարանի անունով կատարվել են մի շարք այլ կտակներ, սակայն

քաղաքական աննպաստ պայմանների պատճառով, դրանք որպես ավանդ հանձնվել են հայկական եկեղեցիներին և գլխավորապես Հայկական Բարեգործական ընդհանուր միությանը:

Բոլոր կտակարարները ավանդ դնելով իրենց գումարները, հույս են ունեցել, որ մի օր այդ դրամները կօգտագործվեն իսկական նպատակի համար:

Իբրև ավանդ, Բարեգործականի գանձարկը են մտել հսկա գումարներ: Կարելի է հիշատակել Մարկոսյան ֆոնդը՝ 450 հազար դոլարով, որի 70 տոկոսը վերաբերվում է Հայաստանին: Կա Պետրոս Մարգարյանի /Սփրինգֆիլդ-ԱՄՆ/ 250 հազար դոլարի ֆոնդը՝ Հայաստանի ուսանողների համար:

Դեռ վերջերս հայտնի դարձավ դոկտոր Խաչիկ Դերձակյանի 176 հազար դոլարի կտակը /տարեկան 10 հազար դոլարի շահույթով/, որը գործադրվել է հայ երիտասարդության բարձրագույն ուսում ստանալու նպատակին: Կտակարարը կտակից օգտվելու նախընտրությունն ու նախապատվությունը տալիս է Հայաստանի ուսանողներին, որոնք բարձրագույն ուսում ստանալով արտասահմանում, պետք է վերադառնան Հայրենիք և ծառայեն ժողովրդին:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում Հայաստանի և ոչ մի հիմնարկություն ու պաշտոնական մարմին չի հետաքրքրվել նման կտակներով և ոչ էլ պահանջել դրանց գործադրումը:

Առաջին անգամ մեր կոմիտեն հարաբերության մեջ մտավ Բարեգործականի հետ, ներկայացնելով պահանջ՝ Դերձակյան կտակից օգտվելու համար: Բարեգործականն օրինական գտնելով մեր դիմումը, դրական պատասխան տվեց մեզ և ներկայումս պահանջում է արտասահմանում բարձրագույն կրթություն ստանալ ցանկացողներին, կամ վեց ամսից մինչև 1 տարի ժամանակով մասնագիտությունը կատարելագործել փափագող մարդկանց անունները:

Բարեգործականի ֆոնդում կան նաև հայրենակցական միությունների ավանդ թողած շատ կտակներ:

Ընդհանուր առմամբ, Բարեգործականի ներկայիս 17 միլիոն ֆոնդի մեջ 9 միլիոնը ավանդներ են, որոնց մեծ մասը վերաբերում է Հայաստանին:

Հայտնի է, որ Գ. Գյուլբենկյան¹²⁸ հիմնարկությունը աշխարհի ֆինանսապես ամենահզոր բարեսիրական հիմնարկություններից մեկն է, որի ֆոնդը ներկայումս հասնում է 1 միլիարդ դոլարի:

Այս հիմնարկությունն ունի հայկական բաժին, որ սփյուռքահայության կրթական և այլ կարիքների համար միջին հաշվով տարեկան ծախսում է մինչև 1-5 միլիոն դոլար:

Գ. Գյուլբենկյան հիմնարկությունը 1964 թվականին հատկացումներ է կա-

տարել նաև Հայաստանի Գիտությունների ակադեմիային, Մաշտոցի անվան Մատենադարանին և Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերությանը, ընդհանուր 50 հազար դոլարով /չհաշված Ս. Էջմիածնի տրվող հատկացումը/:

Մեր Կոմիտեն վերջերս հարաբերություններ մշակեց նաև Գ. Գյուլբենկյան հիմնարկության հետ:

Այդ ֆոնդի հայկական ձեռնարկների բաժնի վարիչ Ռոպեր Գյուլբենկյանը¹²⁹ հոկտեմբեր 21-ի նամակով մեզ հայտնում է, որ հիմնարկությունը ծրագրում է գումարներ տրամադրել նաև Հայաստանի գիտական և ուսումնական այլ կազմակերպություններին ևս:

Այժմ նրանք մեզնից պահանջում են, որ իրենց ուղարկենք Հայաստանի գիտական և ուսումնական հաստատությունների համար անհրաժեշտ գիտական սարքավորումների ցանկերը, որպեսզի դրանք ներկայացնեն հիմնարկության կենտրոնական վարչական ժողովին՝ հատկացումներ տրամադրելու նպատակով:

Առաջիկա շրջանում Հայաստանի զանազան հաստատությունների գծով նվիրատվություններ են կատարելու Մալաթիայի կրթասիրաց, Համասերաստահայ վերաշինաց, Արաբկիրի, Մորենիկի, Հաճրնի, Բալուի Պաղին գյուղի և այլ հայրենակցական միություններ:

Սփյուռքում կան 200-ից ավելի տարբեր գյուղերի անուններով ուսումնասիրաց, կրթասիրաց միություններ, որոնք վաղուց դադարեցրել են իրենց գործունեությունը, սակայն բոլորն էլ ունեն դրամական ֆոնդեր: Եթե բավարարենք նրանց խնդրանքները, ապա հնարավոր կլինի Հայաստան փոխադրել մինչև մեկ միլիոն դոլար դրամ, կամ նյութական արժեքներ:

Հայաստանի տարբեր հաստատությունների գծով նվիրատվություններ են կատարել նաև կոմիտեի հետ կապերի մեջ գտնվող մի քանի հայրենասեր բարերարներ:

Հայտնի միլիոնատերեր Արշակ Տիգրանյան¹³⁰ ու Մարտիրոս Փիլոյանը /Կալիֆորնիայի նահանգ/ Կոմիտեի անունով ուղարկել են 2.000 դոլարի արժողությամբ 4 լուսապատճենահանող մեքենաներ, որոնք եթե օգտակար լինեն մեր աշխատանքներին, շարունակելու են դրանց առաքումը:

Հանրապետական առաջին պոլիկլինիկային բժշկական գործիքներ է ուղար-

129. Գյուլբենկյան Ռոբերտ(տ)(ո) Վահանի (1923, Ալմիր - 2009) - Հասարակական գործիչ, արևելագետ-աղբյուրագետ, Պորտուգալիայի պատմության ակադեմիայի իսկական անդամ (1989), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (1992), Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության վարչական խորհրդի նախագահ, Գալուստ Գյուլբենկյանի եղբորորդին: Նրա նախաձեռնությամբ Հիմնարկությունը ստեղծել է առ այսօր շարունակվող «Հայկական մատենաշար» հրատարակությունների շարքը:

130. Տիգրանյան Արշակ - Ամերիկահայ մեծահարուստ, բարերար: Մնվել է Իզմիրում: Մեծարժեք նվիրատվություններ է կատարել ինչպես Հայաստանի թանգարաններին, այդ թվում՝ բազմաթիվ ձեռագրեր՝ Մատենադարանին, Ֆրանսահայ գեղանկարիչների կտավներ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, արխիվային նյութեր՝ Գրականության և արվեստի թանգարանին: Եղել է Հայ կրթական հիմնարկության հիմնադիրներից, Հայ սիմֆոնիկ երաժշտության ընկերակցության (Կալիֆոռնիա) նախագահը: Նրա տրամադրած միջոցներով 1980ականների սկզբին Հոլիվուդում հիմնվել և գործում է Թեբեյան մշակութային միության Արշակ Տիգրանյան վարժարանը:

128. Գյուլբենկյան Գալուստ Մարգարի (1869, Կ. Պոլիս - 1955, Լիսաբոն) - Ինժեներ-նավթագործ, մեծահարուստ: Բարձրագույն կրթությունն ստացել է Օքսֆորդի համալսարանում: 1911-1912թթ. հիմնել է Օսմանյան նավթային ընկերությունը: Եղել է Օսմանյան Պետության Փարիզի ու Լոնդոնի դեսպանատների տնտեսական խորհրդական: 1930թ. ընտրվել է ՀԲԸՄ նախագահ, երկու տարի անց, իր դեմ ՀԽՍՀ իշխանությունների անհիմն վերագրումներից հետո՝ հրաժարական ներկայացրել: Սեփականատերն էր Իրաքի նավթի ընկերության արժեթղթերի 5 տոկոսին: Ըստ նրա կտակի, 1956թ. Լիսաբոնում հիմնվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնարկությունը, որը, այլոց շարքում, գումարներ է հատկացրել ու հատկացնում սփյուռքի և ՀԽՍՀ-ՀՀ ուսումնական ու գիտական հաստատություններին:

կելու բարերար Ալեք Փիլիպոսը /Ֆրեզնո/, Պետական սիմֆոնիկ նվագախմբին երաժշտական գործիքներ /10 հազար դոլարի/՝ Հովսեփ Իգնատիոսյանը /Լոս Անջելես/:

Կոմիտեի հաշվին դրամ են ուզում փոխանցել /չեքով/ Մարտիրոս Փիլոյանն ու Արշակ Տիգրանյանը:

Կոմիտեի կարիքների համար 7.000 դոլարի թուղթ է ուղարկել բարերար Երվանդ Հյուսիսյանը¹³¹ /Միլան/:

Ժամանակակից տեխնիկայի սարքավորումներ ուղարկելու ուղղությամբ մեծ նվիրատվություններ ունեն Մուշեղ Ճիերճյանը /Մոնակո/, Նապոլեոն Բյուլլոնկյանը¹³² /Լիոն/, Հրաչյա Միրիճնյանը /Բոստոն/ և ուրիշներ:

ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում ստեղծվել է մի հանձնախումբ, որի նպատակն է լինելու նյութական արժեքներ ուղարկել Հայաստան:

Նման հանձնախմբեր կարող են առաջանալ ԱՄՆ-ի այլ քաղաքներում, ինչպես նաև Եվրոպայի ու հարավամերիկյան հայ գաղութներում, ուր ապրում են 200-ից ավելի հայ միլիոնատերեր /Արգենտինայում՝ Տիարպեթիրյան,¹³³ Արգու-մանյան,¹³⁴ ԱՄՆ-ում՝ Կարազոյան,¹³⁵ Ա. Մեդրակյան և այլն/:

Կոմիտեն կարող է իր ձեռքը վերցնել այս կարևոր գործը և ամերիկյան մայրցամաքում, Եվրոպայում ու Մերձավոր Արևելքում առաջ բերել Հայաստանի անուսով ֆոնդեր, որի շուրջ ընդգրկվեին հայաստանապետ, հեղինակավոր մարդիկ:

Այդպիսի ֆոնդերի ստեղծումը պահանջում է կյանքը, որովհետև շատ հայրենասեր մեծահարուստներ ցանկանում են իրենց ժառանգությունը թողնել Հայաստանին, սակայն մի շարք երկրներում ներկա աննպաստ քաղաքական պայմանների պատճառով չեն կարողանում իրագործել իրենց նպատակը:

Խնդրում ենք նկատի ունենալ վերը նշված կազմակերպությունների, անհատ մարդկանց ցանկությունները և հնարավորության սահմաններում ընդառաջել:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 35, թթ. 1-5: Պատճեն: Մեքենագիր:

131. Հյուսիսյան Երվանդ (1888, Թոքատ – 1977) – Մեծահարուստ, հասարակական գործիչ, ՀԲԸՄ-ի Կեդրոնական վարչական ժողովի փոխնախագահ և նրա Եվրոպական իրավալիճակի (Եվրոպայի Կեդրոնական հանձնաժողովի) նախագահ, ՀԲԸՄ և Մայր Աթոռի բարերար: Ավարտել է ծննդավայրի ճեմարանը: Կարողությունը կուտակել է հիմնականում Եթովպիայում: 1946թ. հաստատվել է Միլանիում: Իտալահայ գաղութի հասարակական եռանդուն գործիչներից է եղել: Իր տրամադրած միջոցներով 1960ականների սկզբին հիմնվել և սկսել է գործել ՀԲԸՄ Երվանդ Հյուսիսյան հայագիտական հիմնարկը:

132. Փաստաթուղթով գրված է «Պլլլլլլլլլլլլ» տեսքով: Բյուլլոնկյան Նապոլեոն (1905, Մալաթիա – 1984, Լիոն) – Ֆրանսահայ գործարար, մեծահարուստ, բարեգործ: Մեծ օժանդակություններ է մատուցել Խորհրդային Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններին: Նրա միջոցներով հիմնվել և գործում է Լեա և Նապոլեոն Բյուլլոնկյան հիմնարկությունը:

133. Օհանես Տիարպեթիրյան:

134. Պողոս Արգումանյան: Նրա տրամադրած միջոցներով հիմնվել և գործում է Պողոս Արգումանյան հիմնարկությունը, որի բարեգործություններն ուղղված են Արգենտինայի գաղթօջախի կարիքների բավարարման:

135. Միհրան Կարազոյան:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԵՍՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ
Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ՝ ՍՓՈՒՈՒՔԱՅԱՅ ՀԱՅՐԵՆԱՎԱԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒԼԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայրենակցական միությունները սփյուռքի ներկա պայմաններում մեծ ու շնորհակալ աշխատանք են տանում:

Նրանց ազդեցությունը ժողովրդական լայն զանգվածների վրա հսկայական է:

Հայրենակցական միությունների գերակշռող մասը Սովետական Հայաստանի կազմավորման առաջին իսկ օրից Հայրենիքի կողքին գտնվեց ու բարոյապես թե նյութապես նեցուկ կանգնեց նորաստեղծ կարգերին:

Բոլոր հայրենակցական միությունների գլխավոր նպատակը Հայաստանի շինարարական ու մշակութային աշխատանքներին մասնակցելն է:

Մի շարք հայրենակցականներ Կոմիտեի հիմնադրությունից հետո դիմել են մեզ, խնդրելով միջնորդել կառավարության առջև, որևէ ձևով հավերժացնելու համար Արևմտյան Հայաստանում ու Կիլիկյան Հայաստանում իրենց բնակած քաղաքների ու գյուղերի, ինչպես նաև արևմտահայ նշանավոր գործիչների հիշատակը:

Այդպիսի խնդրանքներ ներկայացրին նաև Կոմիտեի հրավերով վերջերս Հայաստան այցելած Մալաթիայի կրթասիրաց, Համախարբերողիական, Համա-սեբաստահայ վերաշինաց և Արաբկիրի միությունների ներկայացուցիչները, որոնց Դուք լսեցիք հանգամանորեն՝ Ձեր կազմակերպած ընդունելության ժամանակ:

Նրանց ներկայացրած խնդրանքները հետևյալներն են, որոնք, մեր կարծիքով, անհրաժեշտ է առաջին հերթին բավարարել:

1. Շահումյանի շրջանի 19-րդ փողոցը կոչել Մեբաստիայի անունով:
2. Շահումյանի շրջանի Լենինականի փողոցը՝ մինչև 19-րդ փողոցի հատման տեղը, կոչել Մալաթիայի անունով:
3. 26 կոմիսարների շրջանի Դպրոցականների և Վրացական փողոցները /փաստորեն մի փողոց է/ իրենց նրբանցքներով, կոչել Արաբկիրի անունով:
4. «Արաբկիր» ֆաբրիկայի առջև կառուցել աղբյուր-հուշարձան ի հիշատակ առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին զոհված արաբկիրցիների: Կառուցումն իրագործվելու է Արաբկիրի միության /ԱՄՆ/ հատկացումներով:
5. Նոր Խարբերդի կուլտուրայի տան գրադարանը կոչել հայտնի գրող Թվկատիցիի¹³⁶ անունով:

Տարբեր հայրենակցական միությունների կողմից մեզ ներկայացված մյուս խնդրանքները հետևյալներն են, որոնք համապատասխան կազմակերպությունների կողմից կարող էին ընթացք ստանալ առանց որևէ դժվարության:

136. Տե՛ս թիվ 72 ծանոթագրությունը, էջ 46:

1. Շահումյանի շրջանի 11-րդ փողոցը կոչել նշանավոր բանաստեղծ Ռուբեն Որբերյանի¹³⁷ անունով:

2. Շահումյանի շրջանի 15-րդ փողոցը կոչել Տիգրանակերտի անունով:

3. Շահումյանի շրջանում կառուցվող նոր կինոթատրոնը կոչել «Մեքաստիա»:

4. Շահումյանի շրջանի կուլտուրայի տան առջև կառուցել աղբյուր-հուշարձան՝ առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին զոհված մալաթիացիների հիշատակին: Կառուցումն իրագործվելու է Մալաթիայի կրթափրաց ընկերության /ԱՄՆ/ հատկացումներով:

5. Նոր Խարբերդ ավանի մեջ կոչել Կեսարիայի, Կյուրինի, Մորենիկի, Պաղինի, Դատեմի, Թումարգայի անուններով փողոցներ:

6. Նոր Խարբերդի միջնակարգ դպրոցը անվանել սովետահայ նշանավոր գրող Վահան Թոթովենցի¹³⁸ անունով:

7. Սովետաշենում Չնքուշի անվան փողոց:

8. Արարատյան դաշտի մեջ մտնող գյուղերից մեկի անունը դնել Նոր Երիզա /Երզնկա/ ավան:

9. Երևանի նորաբաց փողոցներից մեկը կոչել մուսաբեկների անունով: Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 5, ք. 3-5: Պատճեն: Մեքենագիր:

137. Որբերյան Ռուբեն (1874, Մալաթիա – 1931, Փարիզ) – Բանաստեղծ: Ավարտել է Խարբերդի «Եփրատ» կոլեջը: 1895-1896թթ. ջարդերից հետո մեկնել է Ջմյուռնիա, որտեղ որպես ուսուցիչ աշխատել է հայկական դպրոցում: 1903-1920թթ. ծառայել է Ջիբուտի կավահանգստում (արևելյան Աֆրիկա)՝ անգլիական մի ընկերության գրասենյակում: Ունի նաև անգլերենից թարգմանություններ:

138. Թոթովենց Վահան Հովհաննեսի (1894, Մեզիրե, Խարբերդի նահանգ – 1938, Երևան) – Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ: Ավարտել է ծննդավայրի Ազգ. Կեդրոնական վարժարանը, աշակերտել Թլկաթի նցուն և Ռուբեն Ջարդարյանին, հետևել Վիսկոնսինի համալսարանի (ԱՄՆ) դասընթացներին: Մասնակցել է հայկական կամավորական շարժումին, 1917-1918թթ. գորավար Անդրանիկի հետ Թիֆլիսում հրատարակել է «Հայաստան» պարբերականը: Մի շարք երկերի հեղինակ է: Նրա վեպերից թարգմանվել են օտար լեզուներով: Դասավանդել է անգլերեն ու արտասահմանյան գրականություն Երևանի պետական համալսարանում, միաժամանակ եղել է համալսարանի գիտական-քարտուղարը:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՐԴ՝ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԱՊՐՈՂ ՀՆՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

В дни нашего пребывания /с 3-го августа по 3-е октября/ во Франции – нас было трое: Амазаспян В., Топчян Э., Ханзадян С.¹³⁹ Кроме встреч с соотечественниками, общественными и культурными организациями армянской колонии, состоялись встречи с промышленниками, коммерсантами, производственниками, владельцами крупных и мелких предприятий /армянами/, которые выявили желание на свои средства выслать оборудование для наших предприятий, а также передать нам все новое, что существует за рубежом и что они желают внедрить в Армению.

В Париже живет Арам Саркисян, имеющий крупное предприятие, где занимаются обработкой кожи /начиная от кожи пресмыкающихся и кончая кожей верблюда/. Арам Саркисян предложил нам на свои средства приехать в Ереван/ он был в Ереване и познакомился с процессом обработки кожи у нас, по этому поводу сделал несколько замечаний: кожа после обработки получается грубая и, несмотря на то, что шьются хорошие туфли, потребитель всегда будет недоволен их грубостью/, привезти с собой химикаты для обработки кожи/, месяц-два пробыть в Ереване, обучить технологическому процессу обработки кожи, чтобы у нас производилась кожа такого же качества, какую производит его предприятие для всей Франции.

Для изготовления конденсаторов всех видов на нашем алюминиевом заводе предложил свои услуги Момджян Амазасп, имеющий алюминиевый завод недалеко от Парижа, где изготавливаются конденсаторы разных видов /даже для ракетной техники/. По-моему, Момджяна можно пригласить в Ереван и договориться с ним о получении материала «фольга», а также о передаче его опыта нам. Компания Момджяна называется «ГАМ» /Габриель и Алиса Момджяны/.

В Париже мы встретились с Маркаряном, который приехал из Стамбула 20 лет тому назад, он занимается производством парфюмерии. Впоследствии, как сообщил нам Арам Саркисян, Маркарян по специальности – химик – инженер, настроен весьма патриотически, может сделать многое для создания у нас парфюмерного производства, тем более, что в республике для этого есть база. Как высказался Саркисян: «Маркарян – специалист, создающий в своей лаборатории то, что обеспечивает парфюмерию Франции».

В Париже живет В. Даниелян, который занимается производством обуви. Даниелян желает выслать своим землякам в Башкент /он родом из этого села/ 800

139. Խանզադյան Սերո Նիկողայի (1915, գյուղ Խնձորեսկ, Գորիսի շրջան – 1998, Երևան, քաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում) – Գրող, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1972), սոցիալիստական աշխատանքի հերոս (1984), Հայ գրողների միության նախագահ (1990-1994): Ունի վեպեր, պատմվածքներ, ռազմաճակատային ակնարկներ: Երկերը թարգմանվել են մի քանի լեզուներով:

пар обуви, одновременно прося разрешения на высылку полного /или частично/ оборудования для создания в Башкенте /Кармир/ обувной фабрики.

В Париже мы встретились с коммерсантом Карписом Джрбашяном, монополистом оптовой торговли и обеспечивающим Францию сухими фруктами и консервами. Джрбашян был в Ереване в 1962г. и видел производство консерв. Он предлагает нам закупать консервы и сухие фрукты с армянской маркой для продажи их во Франции, даже если это принесет ему убыток.

В Лионе и вне его есть пластмассовые заводы, принадлежащие крупному капиталисту Бюллюкяну. В 1964г. Бюллюкян был в Ереване, видел наше пластмассовое производство. Он очень обижен на то, что до сих пор наши производители не послали ему того, что обещали; он же по этой причине, в свою очередь, не имел возможности выполнить свое обещание: выслать оборудование для производства пластмассовых камней для часов. Он также собирается выслать ножи для алюминиевого завода, но не знает точно, какие нужны. Бюллюкян просит, чтобы специалисты сами поехали и выбрали нужные ножи. Он также просил, чтобы на его средства отсюда поехали 3-4 специалиста, которые могли бы на месте изучить технологию производства пластмассовых камней для часов и пластмассовых изделий вообще.

В Валансе мы были на крупном предприятии, выпускающем готовые шерстяные изделия. Предприятие это принадлежит Левону Джейраняну, причем там же работают его три сына и брат. Предприятие полностью механизировано-автоматизировано, есть автоматы, которые выполняют несколько операций одновременно. Джейранян желает приехать в Ереван и видеть производство шерстяных изделий.

В Монако состоялась встреча с Мушегом Джиреджяном, считающимся самым крупным представителем производства пластмассы во Франции /его предприятие дает 3/4 всей продукции Франции/. В мае 1964г. Джиреджян 15 дней пробыл в Ереване, к сожалению, никто об этом не знал, он сам знакомился с республикой; желает впредь ежегодно быть в Армении. Мы осмотрели его предприятие, причем он сказал, что уже 2 года подряд приезжают из Москвы, чтобы закупить у него некоторые машины, но он не хочет их продавать, т.к. желает подарить их Советской Армении. Он желает полностью или часть оборудования своего предприятия подарить нам. Джиреджян вручил нам образцы продукции, выпускаемой его предприятием. 24-го октября Джиреджян будет в Ереване и на месте можно будет обсудить вышеизложенные вопросы. Джиреджян просит разрешения для постройки на его средства гостиниц, домов отдыха и подобных зданий в достопримечательных местах республики. Но так как он желает ежегодно быть в Армении, то просит, чтобы одна квартира в одном из этих домов была предназначена для него.

В Париже мы встретились с доктором-профессором Гарником Алексаняном, который является крупным специалистом в области нефтяной и угольной промышленности, участвовал в международных конгрессах, имеет большой опыт в этом деле. Алексанян имеет свою лабораторию, где разрешает вопрос добычи

нефти на больших глубинах; по этому поводу он имеет несколько статей и работ. Алексанян желает иметь связь с армянскими геологами и учеными.

Мы беседовали также с людьми, имеющими у себя крупные ценности, библиотеки, архивы, картины и т.д.

Продовец ковров, Айк Агабекян, имеет полную коллекцию картин крупного армянского художника Эдгара Шагина¹⁴⁰, некоторые картины которого находятся в нашей картинной галерее. Он заявил, что если в ближайшем времени не обанкротится, то это собрание подарит картинной галерее республики.

Вдова Парсамяна¹⁴¹ имеет ценные архивные материалы и библиотеку – что она обещала подарить республике.

В Эксе состоялась встреча с Ваганом Португальяном, сыном известного Португальяна,¹⁴² основателя партии “Арменакан”. Ваган Португальян является крупным юристом и председателем Верховного суда Марсельского департамента. Он обещал передать нам свои архивы и библиотеку, если даже не удастся приехать на Родину.

Интересной была встреча со всемирно известным художником Гарзу /Гарник Зулумян/, проживающем в Париже. Нам удалось убедить его, чтобы он в будущем году приехал в Советский Союз с выставкой своих произведений.

Повсеместно мы встречались с художниками, писателями, учеными, желавшими все свои знания, умения и силы вложить в дело дальнейшего процветания Советской Армении.

Председатель Комитета

В. Амазаспян

Ֆ. 875, ց. 1, գ. 38, քր. 1-5: Պատճեն: Սերբնազի:

140. Շահին Էդգար Պետրոսի (1874, Վիեննա – 1947, Փարիզ) – Գեղանկարիչ: Սովորել է Կ. Պոլսի Սիսիթարյան վարժարանում և Վենետիկի Սուրադ-Ռաֆայելյան վարժարանում, գեղանկարչական կրթությունն ստացել Փարիզի Ժյուլիեն ակադեմիայում: Տվել է անհատական բազմաթիվ ցուցահանդեսներ աշխարհի բազմաթիվ երկրներում: Զբաղվել է նաև գրքերի ձևավորման աշխատանքներով:

141. Պարսամյան Սկրտիչ Ասատուրի (1886, գ.Ապուլեիս, Ակևի շրջան – 1965, Փարիզ) –Արձակագիր, գրականագետ, խմբագիր, մանկավարժ: Հեղինակել է դպրոցական դասագրքեր, աշխատասիրել և խմբագրել «Ակն և ակնցիք» հատորը (Փարիզ, 1952):

142. Փորթուգալյան Սկրտիչ Ռաֆայելի (1848, Կ. Պոլիս – 1921, Մարսել) – Հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակագիր, մանկավարժ, խմբագիր, հայկական ազգային ազատագրական շարժման գաղափարախոս, քարոզիչ և կազմակերպիչ: Մեծ է եղել նրա ազդեցությունը հատկապես Վանում: Իր գործունեության համար, թուրքական իշխանությունները նրան հալածել են ու արտաքսել երկրից: Մարսելում հիմնել ու խմբագրել է «Արմենիա» պարբերականը, որի գաղափարներով 1885թ. Վանում նույն տարին հիմնվել է Արմենական գաղտնի կազմակերպությունը:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՐԱՐ Դ. ԲԱՐԱՍԱՐՅԱՆԻՆ
ՍՓՅՈՒՌԱՔԱՅ ԶԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶՐԱԿԵՐՈՎ ՄԻ ՇԱՐՔ ԶԱՅՐԵՆԻ
ԱՐԿԵՍԱԳԵՏՆԵՐԻ ԶՅՈՒՐԱՆԱՐԵՐԻ ՄԵԿԵՆԸՈՒ ՄԱՍԻՆ

Մեր կոմիտեի հասցեով, նրա ստեղծման առաջին օրից, բազմաթիվ հրավերներ են ստացվել սփյուռքահայ տարբեր գաղթօջախների մշակութային և մարզական կազմակերպությունների կողմից: Սակայն մինչև օրս մեր կոմիտեն հնարավորություն է ունեցել իրականացնելու այդ հրավերների միայն մի մասը, իսկ շատ հրավերներ մնացել են անպատասխան կամ չիրականացված:

Այսպես, մինչև օրս չի լուծված Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի պատանի ջութակահարների, Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնի՝ Սիրիա և Լիբանան կատարելիք այցի խնդիրը:

Կահիրեում լույս տեսնող «Արև» թերթի 50-ամյակի առթիվ թերթը Եգիպտոս էր հրավիրել գրողների և արվեստագետների/Գևորգ Էմին, Վահագն Դավթյան, Սուրեն Քոչարյան/:

Դեռ 1965թ. հոկտեմբեր ամսին Հայաստանի բասկետբոլի խումբը լինելով Սիրիայում և Լիբանանում, հրավեր է ստացել նաև Եգիպտոսի Հայ մարմնակրթական ընդհանուր միության¹⁴³ «Նուբար» ակումբի կողմից: Սակայն խումբը չի մեկնել Եգիպտոս՝ տեղիք տալով դժգոհությունների, պատճառելով նյութական վնասներ:

Հայ մարմնակրթական ընդհանուր միության¹⁴⁴ «Նուբար» ակումբի ղեկավարությունն իր դժգոհությունն է արտահայտել 1965թ. նոյեմբերի 18-ի նամակով, որի պատճենն ուղարկում ենք Ձեզ՝ որպես ի գիտություն:

Սկսած ունենալով վերև ասվածը, խնդրում ենք 1966 թվականի ընթացքում լուծել հետևյալ հրավերների հարցը.

1. Երևանի Չայկովսկու անվան դպրոցի պատանի ջութակահարների խումբը՝ Սիրիա և Լիբանան.
2. Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնը՝ Լիբանան.
3. Մի խումբ գրողների այցը Եգիպտոս.
4. Միլվա Կապուտիկյանի և Առնո Բաբաջանյանի¹⁴⁵ այցը Արգենտինա:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 5, թ. 7 ա: Պատճեն: Մեքենագիր:

143. Փաստաթղթում նշվել է «Հայ մարմնամարզական ընդհանուր միություն» սխալ տեսքով: Համահայկական սկսուտական և մարզական կազմակերպություն, որը, բացի Եգիպտոսից, վայելում է ՀՅԴ հովանավորությունը, իսկ Եգիպտոսի շրջանակը գործակցում է ՀԲԸՄ կառույցների հետ:

144. Փաստաթղթում նշվել է «Հայ մարզական ընդհանուր միություն» սխալ տեսքով:

145. Բաբաջանյան Առնո Հարությունի (1921, Երևան – 1983, Երևան) – Երգահան, դաշնակահար, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1971): Ավարտել է Երևանի և Մոսկվայի կոնսերվատորիաները, ապա դասավանդել առաջինում: Հորինել է մի շարք դաշնամուրային կոնցերտներ, սոնատներ ու երգեր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՍՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱԽԱԳԱՅ Լ. Ա. ՊԼԵԿՈՎԻՆ
ԱՆԳԼԻԱՅԻ ԶԱՅ ԶԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

Сообщаем, что председатель культурного комитета Армянского дома в Лондоне Хачатурян, действительно, проводит большую патриотическую работу по ознакомлению армян, проживающих в Англии, с жизнью Советской Армении.

Патриотическая деятельность Хачатуряна нам была известна еще до открытия Армянского дома в Лондоне (1960г.).

Однако, следует отметить, что за последние пять лет обстановка в армянской колонии Англии изменилась и осложнилась в результате реэмиграции армян из Ближнего Востока, в частности, из Кипра в Англию.

В настоящее время, на наш взгляд, намечается тенденция проводимым мероприятиям придавать выписку Армянского дома, а не только самого Хачатуряна, т. к. по заявлению некоторых кругов «он монополизирует всю деятельность и выставляет себя единственным другом Советской Армении».

Действительно, в октябре 1965г. в Ереван в составе делегации армян, проживающих в Англии, на празднование интронизации 10-годовщины католико-косу всех армян Вазгена I,¹⁴⁶ прибыл Х. Галстян,¹⁴⁷ который является одним из руководителей Армянского дома в Лондоне.

Галстян был принят в нашем комитете и он поставил вопрос о том, чтобы отправляемые в Англию фильмы и др. материалы в адрес нашего посольства, своевременно передавались руководству Армянского дома и редакции «Арегак»¹⁴⁸ для дальнейшего использования.

Следует отметить, что долгие годы армянская колония в Англии не имела печатного органа и издание газеты «Арегак» является заслугой Х. Галстяна. Газета поделом ведет положительную работу по пропаганде нашей действительности и редактор газеты А. Гузелян¹⁴⁹ нам известен как патриотически на-

146. Վազգեն Ա (Առնո-Կարապետ Արախամի Պալճյան, 1908, Բուխարեստ – 1994, Ս. Էջմիածին) – Հնտովել է Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1955թ. սեպտեմբերի 30-ին, օծվել՝ հոկտեմբերի 2-ին: Կրթությունն ստացել է ծննդավայրում, ավարտել Բուխարեստի համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետը: Խմբագրել ու հրատարակել է «Հերկ» (1936-1937, Բուխարեստ) գիտա-հասարակական ամսագիրը: 1943-ին Աթենքում ձեռնադրվել է վարդապետ և նշանակվել Ռուսինիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ (1947-55թթ.)՝ առաջնորդ: Եպիսկոպոս՝ 1951-ից: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ առաջին ազգային հերոս և ՀՀ «Հայրենիք» բարձրագույն առաջին շրջանակի (1994): Նրա գաղափարական ժամանակաշրջանը հատկանշվել է Մայր Աթոռի հզորացումով, շինարարական մեծ իրագործումներով և սփյուռքի թեմերի հետ կապերի ամրապնդումով:

147. Հիշտ պիտի լինե՞ր գրել Ա. Գալստյան, քանի որ խոսքը վերաբերում է Լոնդոնի հաստատված իրանահայ գործարար, հասարակական գործիչ, «Արեգակ» թերթի հիմնադիր, արտոնատեր և հրատարակիչ Հայկ Գալուստյանին:

148. Հայկական ամսաթերթ: Լույս է տեսել Լոնդոնում՝ 1964-1967թթ.:

149. Գյուլբեյան Ասատուր Կարապետի (ծն. 1932, գյուղ Մովսիս-օրդու, Ալեքսանդրետի սանջակ) – Սփյուռքահայ մտավորական, գրող, մանկավարժ, խմբագիր: Ավարտել է Հալեպի Կիլիկյան ճեմարանն ու Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքը: Համապատասխանաբար 1 և

строенный журналист и педагог (посетил Советскую Армению в 1964 году¹⁵⁰ в составе зарубежных учителей из Калькутты).

Наш комитет считает, что было бы целесообразней совместить деятельность Хачатуряна и Галстяна в Армянском доме в Лондоне и оказать содействие газете "Арегак".

Материалы для армянской колонии в Англии отправляются в адрес нашего посольства.

Председатель комитета

В. Амазаспян

Ֆ. 875, ց. 2, գ. 9, թթ. 4-5: Պատճեն: Մեքենագիր:

7 տարի հայոց լեզու, գրականության և պատմություն է դասավանդել Հայեպի Կիլիկյան ճեմարանում և Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում: 1964թ. հաստատվել է Լոնդոնում, խմբագրել «Արեգակ» և «London Armenian Weekly» պարբերաթերթերը, գործուն մասնակցություն ունեցել անգլիաձայն համայնքի հասարակական կյանքին: Ունի հրատարակված պոեմ, բազմաթիվ հոդվածներ, էսսեներ և բանաստեղծություններ:

150. Ասատուր Գյուզելյանը առաջին անգամ Խորհրդային Հայաստան այցելել է 1963թ.՝ ՀԽՍՀ Լուսավորության նախարարության հրավերով:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՐԱՐ Ա. ԲՈՂԻՆՅԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՐԱՋՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես Ձեզ հայտնի է, անցած 20 տարում ավելի քան 100 հազար սփյուռքահայեր են ներգաղթել Սովետական Հայաստան, որոնց համար, ինչպես ԽՍՀՄ, այնպես էլ հանրապետության պետական և կուսակցական կազմակերպությունները մեծ հոգատարություն են ցուցաբերել, ստեղծելով նրանց համար աշխատանքի և կենցաղի պայմաններ:

Ներգաղթողներից շատերը կրթություն և դաստիարակություն ստանալով մեր երկրում, դարձան հանրապետության և միության անվանի մարդիկ՝ մտավորականներ և մասնագետներ: Պետք է անկեղծորեն ասել, որ ներգաղթի առաջին տարիներին Հայաստանի պետական, կուսակցական մարմինները շատ ավելի մոտիկից էին զբաղվում ներգաղթողների կյանքի ու դաստիարակության հարցերով: Նույնիսկ կուսակցական կազմակերպությունները /սկսած ռայկոմից մինչև սկզբնական կուսակցական կազմակերպությունները/ կազմում էին ներգաղթողների մեջ կատարվող աշխատանքների պլան: Սակայն ինչպես ցույց են տալիս մեր դիտումները, և ներգաղթածներից բազմաթիվ նամակների ուսումնասիրությունները, որոնք ուղղված են մեր գրողներին, արվեստագետներին, թերթերի խմբագրություններին, նրանց կողմից բարձրացված մի շարք հարցեր համապատասխանում են իրականությանը և հետևանք են տեղի կազմակերպությունների անպատասխանատու, բյուրոկրատական, ոչ պետական վերաբերմունքի դեպի նրանց կարիքները և հոգսերը: Այդ մոտեցումը հաճախ հասցնում է նրան, որ առաջացնում են դժգոհություններ կարգերի, Հայրենիքի նկատմամբ, իսկ առանձին անկայուն մարդկանց դրդում թողնել Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

Մեր կարծիքով, այս բոլորը արդյունք է այն բանի, որ հանրապետությունում չկա մի կազմակերպություն, որը հանգամանորեն և պարբերաբար զբաղվի ներգաղթողների հարցերով, իսկ այն կազմակերպությունները, որոնք պարտավոր են զբաղվելու հայրենադարձների կենցաղի ու դաստիարակության հարցերով, միայն կոմպանիոն բնույթ են տալիս իրենց կատարած աշխատանքին:

Վերջին շրջանի մի շարք հայրենադարձների դիմումներ Հայրենիքից հեռանալու մասին, հենց այդ են վկայում:

Ուստի խնդրում ենք Ձեզ հատուկ քննության ենթարկել ներգաղթի գծով տարվող աշխատանքը և, եթե հնարավոր է, ստեղծել հատուկ հանձնաժողով, որը մշակի նրանց մեջ կատարվող աշխատանքի պլանը և հետևի նրա իրագործմանը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 5, թթ. 9-10: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԵՍՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Բ. ՍՈՒՐԱՂՅԱՆԻՆ՝¹⁵¹ ԳՈՐԴԱՆՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԴՐՈՑՆԵՐԻՆ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արդեն մի քանի տարի է մեր կոմիտեն, ինչպես նաև ռեսպուբլիկայի Լուսավորության մինիստրությունը սփյուռքահայ դպրոցներին /նրանց խնդրանքով/ որպես նվեր ուղարկում են ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության դպրոցական լաբորատոր սարքավորումներ, որոնք որոշակիորեն նպաստում են տվյալ հաստատության կրթական գործի կազմակերպմանը, ինչպես նաև տեղի իշխանությունների առջև հայկական դպրոցի հեղինակության բարձրացմանը:

1965-66 թվականներին հայկական մի շարք դպրոցների լաբորատոր սարքավորումներ ուղարկելու միջնորդություններ են ուղարկել տեղի սովետական դեսպանությունները:

Հորդանանում Սովետական Միության դեսպան Պ. Սլյուսարենկոն ՀՍՍՌ Արտաքին գործերի մինիստր ընկ. Բ. Գ. Մարտիրոսյանին ուղղված՝ 1965թ. դեկտեմբերի 30-ի նամակում գրում է.

«Հաշվի առնելով հորդանանահայության կողմից Սովետական Հայաստանի հետ մշակութային կապերն ընդլայնելու բուռն ձգտումը, Հորդանանում Սովետական Միության դեսպանությունը նպատակահարմար է գտնում դրականորեն լուծել Երուսաղեմի Ս. Թարգմանչաց վարժարանի տնօրինության պահանջը, և խնդրում է ՀՍՍՌ Արտգործմինիստրությանը նշված վարժարանին որպես նվեր ուղարկել ֆիզիկայի լաբորատոր սարքավորում»:

Մինչև այժմ Եգիպտոսի, Սիրիայի և Լիբանանի 5 դպրոցների ուղարկել ենք լաբորատոր սարքավորումներ, որի համար դպրոցների տնօրենները երախտագիտություն են հայտնել օգնության համար:

Սակայն այժմ ՍՍՌՄ Արտաքին առևտրի մինիստրությունը տեղեկացնում է մեզ, որ որևէ սարքավորում որպես նվեր արտասահման ուղարկելու համար պետք է նախապես ունենալ ՍՍՌՄ Մինիստրների սովետի թույլտվությունը:

Խնդրում ենք Ձեր միջնորդությունը՝ ՍՍՌՄ Մինիստրների սովետի առջև՝ թույլատրելու ներքոհիշյալ երկրների դպրոցներին 1966 թվականի ընթացքում ուղարկելու ֆիզիկայի լաբորատոր սարքավորումներ:

1. Բեյրութի Սահակյան լիսեին
2. Բեյրութի Լևոն Նազարյան վարժարանին
3. Բեյրութի Վիեննական Մխիթարյան վարժարանին
4. Կահիրեի Գալուստյան վարժարանին
5. Երուսաղեմի Թարգմանչաց վարժարանին:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 9, թթ. 6-7: Պատճեն: Մեքենագիր:

151. Մուրադյան Բաղդա Հմայակի (1915, գյուղ Չիբուխչի, այժմ՝ Վարդանաշեն, Արմավիրի մարզ - 1991, Երևան) - ՀԿԿ և ՀԽՍՀ գործիչ: Եղել է Երևանի Կիրովի անվան քիմիական գործարանի («Նախիրիտ» գիտաարտադրական միավորում) տնօրեն, ՀԿԿ Երևանի քաղկոմի քարտուղար, ՀԽՍՀ Պետականի նախագահի տեղակալ, 1966-1972թթ.՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԱՌՁՈՒՄՆԵՐ ՆՐԱ ՑՈՒՑԱՅԱՆԱԴՆԵՐԻ
ՀԱՅՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեծահարգ Գառգու (հանաքով գրեցի Գառնիկ),

Սիրելի բարեկամ,

Օրերս շնորհակալությամբ ստացա Նիսում բացված Ձեր ցուցահանդեսի նկարացանկը: Մեծ հետաքրքրությամբ և սիրով թերթեցի այն:

Ձեր կտավները մեկ անգամ տեսնելը բավական է, որպեսզի հետո անսխալ որոշես Ձեր այնքան ինքնատիպ ու յուրօրինակ ձեռագիրը: Ցուրաքանչյուր ստեղծագործությամբ ջանում եք հաղորդել երևույթների էությունը, տալ նրանց հոգեբանական բնութագրությունը: Ձեր ողջ ստեղծագործության մեջ ամենաուշագրավն, անշուշտ, այն է, որ Դուք ամբողջ ուշադրությունն ուղղում եք ոչ թե արտաքին, այլ ներքին էության վրա: Այդ է թերևս այն գլխավոր պատճառը, որ Ձեր կտավները հազեցած են մեծ հուզականությամբ:

Մեծ հետաքրքրությամբ և ուշադրությամբ հետևում եմ սփյուռքահայ մամուլում ձեր արվեստի մասին գրված հոդվածներին և Ձեզ վերաբերող բոլոր նորություններին: Ես մեկ անգամ ևս ինձ վեհացած զգացի, երբ կարդացի Ձեր մտորումներն ու մեկնումները արվեստի մասին: Ձեր գործը հենց այդ մեկնումների վառ արտահայտումն է: Մամուլից արդեն տեղյակ էի փետրվար ամսին Նիսի «Palais de la Mediterranée»-ի սրահում բացվելիք Ձեր ցուցահանդեսի մասին, որը համոզված եմ, մեծ հաջողություն ունեցավ:

Շուտով «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում կտպագրվի նկարագրողուններով ընդարձակ հոդված Ձեր արվեստի մասին:

Սիրելի բարեկամ, հաճախ եմ մտաբերում Ձեզ հետ անցկացրած ժամերը, հիշում Ձեզ ոչ միայն որպես փայլուն արվեստագետի, այլև որպես համակրելի մարդու և հետաքրքիր գրուցակցի:

Համոզված եմ, որ առաջիկայում կրկին կհանդիպենք, այս անգամ արդեն Մայր Հայրենիքում, և Դուք առիթ կունենաք Հայրենիքը տեսնելու սեփական աչքերով, Հայաստանում ցուցահանդես կազմակերպել՝ հարազատ ժողովրդին ներկայացնելով Ձեր արվեստը: Ուրեմն՝ մինչև նոր հանդիպում:

Կխնդրեի ջերմ բարևներս հաղորդել Ձեր հարգարժան տիկնոջը:¹⁵²

Լավագույն բարեմաղթություններով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 451, թ. 1 ա: Պատճեն: Մեքենագիր:

152. Նան Գառգու:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՈՒ ԽԱԶԱՏՐՅԱՆԻ՝¹⁵³
ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Председатель Советского комитета по культурным связям с соотечественниками за рубежом тов. Маляев В. нам сообщил, что консульский отдел Посольства СССР в Аргентине просит Армянский комитет по культурным связям с соотечественниками за рубежом;

а) внести предложение в правительство республики об окончании материальной помощи "Армянскому культурному союзу" в Аргентине;

б) ежегодно принимать на учебу в высшие учебные заведения республики по одному человеку из числа детей соотечественников армян, имеющих среднее образование, предоставлением стипендии и оплатой проезда;

в) приглашать в Армению в качестве гостей Комитета активистов "Армянского культурного союза", его клубов и филиалов;

г) организовать курсы повышения квалификации руководителей школ по изучению армянского языка, редакторов прогрессивных газет, а также руководителей кружков художественной самодеятельности сроком от 6 месяцев до 1 года;

д) направить в адрес консульского отдела для передачи "Армянскому культурному союзу" книги, журналы, песенки, ноты, грампластинки, национальные костюмы, а также хроникально-документальные и художественные фильмы на армянском языке для демонстрации в клубе Посольства;

е) изучить возможность проведения конференции представителей прогрессивных организаций американского контингента для установления контактов и координации работы.

Просим Ваших указаний.

Председатель Комитета

В. Амазаспян

Ֆ. 875, ց. 2, գ. 5, թթ. 22-23: Պատճեն: Մեքենագիր:

153. Խաչատրյան Ռոբերտ Հրաչյայի (1921, Թիֆլիս – 1996, Մոսկվա, թաղված է Երևանում) – ՀԿԿ և ՀԽՍՀ գործիչ: Ավարտել է Բաքվի համալսարանի պատմության ֆակուլտետը: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Աշխատել է ՀԿԿ Կենտկոմի վարչամեթոդական (1966-1973թթ.)՝ ՀԿԿ Կենտկոմի՝ գաղափարախոսության գծով քարտուղար, ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում՝ իբրև սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի վարիչ: Եղել է ՀԽՍՀ մշակույթի նախարար:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԱՌՁՈՒԻՆ ՆՐԱՆ ՊԱՇՏՈՆԱԴՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱԿԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մեծահարգ բարեկամ

Սիրելի Գառգու,

Առանց սպասելու իմ նախորդ նամակի պատասխանին, ուրախությամբ պիտի հայտնեմ, որ Հայաստանի կառավարությունը պաշտոնական որոշում ընդունեց հրավիրելու Ձեզ և Երևանում կազմակերպելու Ձեր ստեղծագործությունների ցուցահանդեսը: Ես կարծում եմ, որ Դուք ինչպես խոստացաք Փարիզում մեր հանդիպման ժամանակ, կընդունեք մեր կառավարության հրավերը և կլինեք մեր կոմիտեի ցանկալի հյուրը Ձեր նախընտրած ամիսներին: Մեր կարծիքով, նպատակահարմար է, որ Դուք Ձեր տիկնոջ հետ միասին լինեք մեր գեղատեսիլ Երևանում Հայաստանի ոսկե աշնանը՝ սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամիսներին, որը առատ կյուր կտա Ձեր մտահղացումներին և հետագա ստեղծագործություններին: Ձեր այցելության ընթացքում Դուք հնարավորություն կունենաք լինել ոչ միայն Երևանում, այլև Հայաստանի բոլոր տեսարժան վայրերում, մոտիկից կճանաչեք այն երկիրը, որի հետ կապված եք եղել հոգով:

Թե ինչ ստեղծագործություններ կցանկանաք բերել Հայաստանում ցուցադրելու համար, այդ արդեն մնում է Ձեր հայեցողությանը: Մեր կարծիքով, ավելի նպատակահարմար է վերցնել այնպիսի գործեր, որոնք դժվարություններ չեն հարուցի. նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ Ձեր աշխատանքներից որոշ կտավներ կան նաև Հայաստանում: Ձեր ցանկության դեպքում, նրանք ևս կարող եք ցուցադրել: Բոլոր դեպքերում, այդ հարցի որոշումը թողնում ենք Ձեզ և Ձեր փոխադրական հնարավորություններին:

Երբ հայտնի լինի Ձեր ուղևորության ժամկետը, մենք այստեղ կկատարենք բոլոր նախապատրաստական աշխատանքները: Գալու օրը մենք կդիմավորենք Ձեզ Մոսկվայում:

Խորին հարգանքով,

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 451, թ. 1: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Բ. ՄՈՒՐԱՂՅԱՆԻՆ՝ ՍՓՅՈՒՌ ՌԻԴԱՐԿՈՂ ԱՌԱՔՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԱԾ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր Կոմիտեն այժմ կապեր ունի աշխարհի 55 երկրների շուրջ 2000 սփյուռ-
քահայ կազմակերպությունների և անհատ գործիչների հետ:

Կոմիտեն նրանց հասցենեղով ուղարկում է գրականություն, թերթեր, ամ-
սագրեր, լուսանկարային հավաքածուներ և, հնարավորության սահմաններում,
կատարում նրանց այլ խնդրանքները:

Սփյուռքահայ շատ դպրոցների, մշակութային և մարզական կազմակեր-
պությունների օգնելու նպատակով Կոմիտեն անցած տարիներին ուղարկել է
դպրոցական լաբորատոր սարքավորումներ, հայկական երաժշտական գործիք-
ներ, մարզական գույք, կինոնկարներ, տպագրական տառեր, ձայնապնակներ,
կերամիկական հուշանվերներ, մագնիտաֆոնի ձայնագրված ժապավեններ:

Յուրաքանչյուր անգամ, այս կամ այն խնդրանքը կատարելու համար Կոմի-
տեն համապատասխան թույլտվություն է ստացել ՍՍՀՄ Արտաքին առևտրի
մինիստրության համապատասխան բաժիններից:

1966 թվականի մայիս ամսից ընդ է նման առաքման, հատկապես լաբորատոր
սարքավորումների ուղարկման համար պահանջվում է ՍՍՀՄ Մինիստրների
սովետի որոշումը:

Հարկ կլինի այսուհետև հաճախ դիմելու ՍՍՀՄ Մինիստրների սովետին՝
այդ նպատակով ստանալու զանազան թույլտվություններ:

Ուստի խնդրում ենք ՀՍՍՀ Մինիստրների սովետի միջոցով մեր կոմիտեի
համար ՍՍՀՄ Մինիստրների սովետից ունենալ սկզբունքային թույլտվություն
հետևյալ առաքումների համար.

Դպրոցական լաբորատոր սարքավորումներ
Երաժշտական գործիքներ
Ձայնապնակներ
Ձայնագրված երաժշտական ժապավեններ
Կինոնկարներ
Մարզական գույք
Տպագրական տառեր:

Խնդրում ենք Ձեր միջնորդությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 9, թթ. 18-19: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ՝
Ա. ԱԼՊՈՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ինչպես Ձեզ հայտնի է, հանգուցյալ եգիպտահայ պատմաբան Արշակ Ալպո-
յաճյանը իր չափազանց հարուստ և արժեքավոր հայագիտական արխիվը կտա-
կել է Սովետական Հայաստանին:

Մեծավաստակ գիտնականի մահվանից հետո, եգիպտահայ մի խումբ հայ-
րենասեր մտավորականներ՝ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Մամբրե
արքեպիսկոպոս Սիրունյանի գլխավորությամբ ձեռնարկել են Ալպոյաճյանի
արխիվի և գրադարանի դասավորման և ցուցակագրման աշխատանքները: Այդ
աշխատանքն արդեն ավարտված է: Այժմ նրանք ցանկանում են, մեր թելադ-
րանքի համաձայն, արխիվն ուղարկել Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն
Առաջինին՝ Գրականության և արվեստի թանգարանին հանձնելու նպատակով:

Նպատակահարմար ենք գտնում, որ Ալպոյաճյանի արխիվի փոխադրու-
թյան գործը կազմակերպվի Կահիրեի ՍՍՌՄ դեսպանության միջոցով: Թերևս
հնարավոր լինի՝ Ալպոյաճյանի արխիվը պարունակող արկղերը բարձել նավի
վրա՝ որպես հայրենադարձներից մեկի անձնական գույքը՝ հետագայում այն
մեր հասցեով ուղարկելու համար:

Խնդրում ենք Ձեր միջնորդությունը՝ վերոհիշյալ հարցի վերաբերյալ մեր
կարծիքը Կահիրեի ՍՍՌՄ դեսպանությանը հայտնելու համար:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 1, գ. 3, թ. 10: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ԼԱՍՏԱԿԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Բ. ՄՈՒՐԱՐՅԱՆԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՋԵՏԻՄ ՈՐՈՇԱԿԻ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ
ՏԱՐԱԴՐԱՄ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

За последние два года, после создания Армянского комитета по культурным связям с соотечественниками за рубежом, проделанная определенная работа по налаживанию и усилению контактов с зарубежными армянскими организациями, земляческими союзами, благотворительными обществами и многими видными представителями армянских колоний за границей.

В настоящее время Комитет поддерживает свыше 2.000 связей с армянскими организациями и отдельными лицами в 44 странах мира, в том числе с 800 организациями, 280 школами, 80 изданиями и др.

Для ознакомления зарубежных армян с жизнью и достижениями республики, а также проведения деловых встреч по насущим вопросам зарубежной армянской действительности, за истекший период Комитет приглашал в Советскую Армению или принимал у себя в качестве гостей многочисленных армянских прогрессивных общественных деятелей, представителей интеллигенции, руководителей зарубежных армянских организаций, союзов и обществ.

Совместно с другими ведомствами и организациями Комитет принимал активное участие в отправке в зарубежные армянские центры представителей нашей культуры, литературы, науки и искусства.

Однако все усилия Комитета в деле осуществления поставленных перед ним задач значительно ограничиваются из-за отсутствия возможностей непосредственного контакта с зарубежными армянскими колониями для оказания на них нужного воздействия и изучения обстановки на местах.

Комитет даже лишен возможности принимать посылаемые из-за границы официальные приглашения, имеющие для его деятельности весьма существенное значение.

Все это не только вредит большому и важному делу, но и вызывает недоумение и недовольство у наших зарубежных соотечественников и их организации, а нашим врагам дает пищу для антисоветской пропаганды.

В ближайшее время вызывается острая необходимость в командировании руководящих работников Комитета, его изданий, а также наших активистов в США, Латинскую Америку, Францию и стран Ближнего Востока для изучения обстановки, установления полезных контактов, пропаганды нашей действительности, а также ведения деловых переговоров с представителями зарубежных армянских организаций, земляческих союзов и благотворительных обществ, а также с редакциями армянских газет и журналов.

На основании изложенного, просьба предусмотреть в бюджете 1967 года на вышеуказанные нужды Комитета, определенную сумму в иновалюте.

Председатель Комитета

В. Амазаспян

Ֆ. 875, ց. 2, գ. 9, թթ. 20-21: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՐԱՐ
Ո. ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ Գ. ԳՅՈՒԼԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԼՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ Վ. ՄԱԿՅԱՆԻՆ¹⁵⁴
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գ. Գյուլբենկյան հիմնարկությունը աշխարհի ճանաչված բարեսիրական միություններից մեկն է, որի ներսում գործում է «Հայկական ձեռնարկներ» բաժինը:

Հիմնարկությունը սփյուռքահայության կրթական և մշակութային կարիքների համար տարեկան հատկացնում է մինչև 1,5 միլիոն դոլար:

Առաջին անգամ լինելով, 1963 թվականին հիմնարկությունը 3000 դոլարի հատկացում կատարեց Մատենադարանին, իսկ 1965թ. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի միջնորդությամբ կատարվեց 100.000 դոլարի հատկացում /պետ. համալսարանին՝ 60.000, բժշկական ինստիտուտին՝ 20.000, ԳԱ ագրոքիմիայի լաբորատորիային՝ 20.000/:

Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը 1966թ. գարնանը Բեյրութում գտնվելու միջոցին հանդիպել է Գ. Գյուլբենկյան հիմնարկության «Հայկական ձեռնարկներ» բաժնի քարտուղար Վահրամ Մավյանին:

Վերջինիս մեծ ոգևորությամբ է արտահայտվել Հայաստանից ստացած պատվերների մասին:

Վ. Մավյանը հավաստիացրել է, որ հիմնարկությունը 1966թ. վերջին ավելի մեծ քանակությամբ գործիքներ և սարքավորումներ կուղարկի Հայաստանի գիտական հաստատություններին:

Այս գործը հաջողությամբ պսակելու համար նպատակահարմար է Հայաստան հրավիրել Գ. Գյուլբենկյան հիմնարկության «Հայկական ձեռնարկներ» բաժնի քարտուղար Վահրամ Մավյանին:

Այս տարվա աշնանը /հոկտեմբերին/ կայանալու է Հայաստանի գրողների հերթական համագումարը, որի աշխատանքներին որպես Կոմիտեի հյուր /կամ Գրողների միության հյուր/ ցանկալի կլինեն, որ մասնակցեր բանաստեղծ, գրող Վահրամ Մավյանը:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն, Վ. Մավյանը փափագում է մասնակցել համագումարի աշխատանքներին:

Վ. Մավյանը տպվել է «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի 3-րդ համարում /1965թ./, 1966թ. 13-րդ համարում /«Անկապ օրագիր»/ և «Սովետական գրականություն» հանդեսի այս տարվա 3-րդ համարում:

Սովետահայ գրականագետները բարձր կարծիք են արտահայտում նրա ստեղծագործությունների մասին:

154. Մավյան Վահրամ Հակոբի (1926, Երուսաղեմ – 1983, Լիսաբոն, թաղված է Բուրջ Համ-մուդում, Լիբանան) – Գրող, ուսուցիչ, հասարակական գործիչ: Կրթությունն ստացել է ծննդավայրի Սրբոց թարգմանչաց վարժարանում, անգլիական կոլեջում, բարձրագույնը՝ Բելֆաստի համալսարանում: Լիսաբոնում եղել է Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական բաժնի վարչության անդամ: Ունի բանաստեղծությունների և սփյուռքի կյանքից վերցրած պատմվածքների ժողովածուներ:

Վ. Մավյանը ծնվել է 1926թ. Երուսաղեմում, ուր և ստացել է իր նախնական կրթությունը տեղի Թարգմանչաց վարժարանում:

Աշխատակցել է «Նոր գիրք», «Անի», «Սիոն» հանդեսներին:

1965թ. Երուսաղեմում լույս է տեսել նրա «Համեցող վերադարձ» բանաստեղծությունների ժողովածուն:

Վերջերս հրատարակվել է նաև «Հայու բեկորներ» պատմվածքների ժողովածուն:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 5, թթ. 24-25: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԴԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՄԵՔՍԻԿԱՅԱՅ ԳՈՐԾԻՉ Մ. ՀԱՅՃԱՆԻՆ¹⁵⁵ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱԿԻՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մկրտիչ Հաճյանը գրող, լրագրող, երաժշտագետ, գրականագետ է, որ ներկայումս բնակվում է Մեխիկո /Մեքսիկա/ քաղաքում:

Նրա հետ կապ է ստեղծվել 1964 թվականից: Առաջին նամակով նա փափագ էր հայտնել սերտ հարաբերությունների մեջ մտնել Մայր Հայրենիքի ու նրա մտավորականների հետ, ստանալ պարբերական մամուլ ու գրականություն:

Մ. Հաճյանի խնդրանքները բավարարվեցին և նա սկսեց ստանալ պարբերական մամուլ ու գրականություն, որը օգտագործում էր առաջադիմական մամուլում իր ունեցած ելույթներում:

Մ. Հաճյանը իր վերջին՝ 28 հունիսի 1965 թվակիթ նամակով Կոմիտեին հայտնում էր, որ 1965թ. մայիսի 7-ից սկսած «Պայքար» օրաթերթում /Բոստոն/ «Ուրբաթե-ուրբաթ» հոդվածաշարքերի հեղինակն է դարձել, որով արձագանքում է հայ հասարակական կյանքի բազմազան երևույթներին /գրականություն, երաժշտություն, կինո և այլն/:

Մ. Հաճյանը 1958 թվականից ապրում է Մեքսիկայում: Նա իր մասին ասում է. «Առհասարակ գրականությամբ և երաժշտությամբ չէ, որ կշահիմ ապրուստս: Ճարտարարվեստի նվիրված եմ հիմեն ի վեր և միշտ գյուտեր կընեմ: Վերջին գյուտս արհեստական մարմարիոնի պատրաստություն մըն է, որուն համար հոս գործարան մը հիմնեցի:

Այս մարմարիոնս աշխարհի մեջ մեկ հատիկ է և իրականին բոլոր հատկություններն ունի:

Մեքսիկայի մեջ արդեն շատ մը շենքերու մեջ հաջողությամբ կգործածվի: Որնէ երկրի մեջ կրնա նոր ճարտարարվեստի աղբյուր դառնալ»:

Շատ նպատակահարմար կլիներ, եթե Մ. Հաճյանն այս աշխանը հրավիրվեր Հայաստան, մասնակցելու համար Գրողների միության հերթական համագումարին: Նա շատ լավ կարող էր լուսաբանել համագումարի աշխատանքները սփյուռքում: Հանրապետության համար օգտակար կլիներ լսել արհեստական մարմարի արտադրության բնագավառում նրա արձանագրած հաջողությունների մասին:

Տարակույս չկա, որ նա իր գյուտը կփոխանցի մեր մասնագետներին:

Մ. Հաճյանը ծնվել է 1915թ. Իջմեում¹⁵⁶ /Պոլսին մոտ/:

155. Հաճյան Մկրտիչ Շահենի (1915, գյուղ Իջմե, Կեյվեի գավառակ, Նիկոմեդիայի նահանգ, Թուրքիա – 1985, Մեխիկո) – Գրող, արհեստական մարմարի գյուտարար, երաժշտության քննադատ, զեղանկարիչ, թատերագիր, թարգմանիչ: Ավարտել է Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանն ու նույն քաղաքի համալսարանի ղեղագործության ֆակուլտետը: Ունի մի շարք լույս ընծայված բանաստեղծություններ, թատերական պիեսներ, թարգմանություններ: 1958թ. հիմնել է արհեստական մարմարի արտադրության՝ աշխարհում առաջին գործարանը (Մեքսիկա): Նկարչական ցուցահանդեսներ է ունեցել մի շարք երկրներում:

156. Բնագրում՝ Էջմե: Հիշտն է՝ Իջմե:

Սովորել է Պոլսի հայկական վարժարաններում, իսկ հետո ավարտել է համալսարանի ղեղազորական բաժինը:

Ավարտել է նաև Փարիզի կոնսերվատորիայի կոմպոզիտորական բաժինը:

1933թ. մինչև օրս աշխատակցում է սփյուռքահայ թերթերին ու հանդեսներին՝ ստորագրելով գրաքննադատական հոդվածներ, նորավեպեր և այլն: Ունի թարգմանություններ օտար լեզուներից:

Մ. Հաճյանը հրապարակել է նաև բանաստեղծությունների մի ժողովածու և մտադիր է նորը հրատարակելու:

1945-52թթ. Մ. Հաճյանը հայոց լեզու և գրականություն է դասավանդել Պոլսի Կեդրոնական ու Էսայան բարձրագույն վարժարաններում, միննույն ժամանակ խմբագրելով «Սուրբ փրկիչ» ամսաթերթն ու «Ժամանակ» օրաթերթի ներքին ոչ-քաղաքական երկու էջերը:

1952-1956թթ. ապրել է Ֆրանսիայում /Փարիզ, Մարսել, Նիս քաղաքներում/:

Ֆրանսիական կառավարությունը նրան շնորհել է «Երաժշտական քննադատ»-ի կոչում:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 5, թթ. 26-27: Պատճեն: Սեբեմագիր:

ԳԱՌՉՈՒԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ ԻՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱՆՈՒ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Սիրելի եւ շատ յարգելի Վ. Համազասպյան,

Նախ եւ առաջ կը խնդրեմ, որ ներողամիտ գտնուիք ինձի հանդէպ, այսքան ուշ պատասխանելու համար Ձեր 25 յունիսի նամակին: Չեմ գիտեր միւս արուեստագետները արդեօ՞ք ինձի պէս են, այսօր կը պատասխանեմ կ'ըսեմ, վաղը կը գրեմ եւ այսպէսով օրերը եւ շաբաթները կ'անցնին: Հաւանաբար պիտի ըսէք թէ «այս արեւմտահայերը չափազանց անքաղաքավար մարդիկ են»: Հայերէն գրելն ալ թէեւ ինձի հաճոյք կը պատճառէ, բայց ի հարկէ աւելի դժուարութեամբ կը գրեմ, քան ֆրանսերէնը, եւ այս պարագան ալ պատճառ կ'ըլլայ որ շուտով չպատասխանեմ հայերէն գրուած նամակներուն:

Սիրելի եւ շատ յարգելի բարեկամ. Հայաստանի պաշտօնական հրաւերը մեզի շատ մեծ հաճոյք պատճառեց, եւ որքան երջանիկ պիտի ըլլանք, որ մեր սիրելի Հայաստանը տեսնելու մեր երազը վերջապէս իրականութիւն պիտի դառնայ: Հաճեցէ՛ք մեր ջերմ շնորհակալութիւնները յայտնել Հայաստանի կառավարութեան եւ Սփիւրքի հետ մշակութային կապի կոմիտէին անդամներուն:

Ուրեմն, ինչպէս որ Ձեզի ըսած էի, ուրախութեամբ առիթը պիտի ունենանք հոկտեմբեր ամսուն Հայաստան գալու: Ծառ հաւանաբար սեպտեմբեր 20-25-ին Մոսկուա հասնինք եւ Հայաստան կենանք մինչեւ հոկտեմբերի 20-ը կամ մինչեւ վերջը: Քիչ մը աւելի կամ քիչ մը նուազ՝ ատիկա իմ անձնական գործերէս կախում ունի:

Կը խորհիմ թէ այս առաջին անգամ Ձեզի կը բերեմ ամբողջ իմ փորագրութիւններու գրեթէ ամբողջ հաւաքածուն, այսինքն Lithographies եւ gravures-ները, ինչպէս նաեւ գրքերէս մեկական օրինակ: Կը կարծեմ թէ շատ հետաքրքրական ցուցահանդէս մը պիտի ըլլայ, ոչ միօրինակ, այլ ընդհակառակը՝ գոյնզգոյն այս գործերը չպիտի ձանձրացնեն ժողովուրդը. կը յուսամ թէ Երեւանի մեր արուեստագետ ընկերները հետաքրքրութեամբ պիտի դիտեն այս ստեղծագործութիւնները: Հարիւրէ աւելի կտորներ պիտի պարունակէ ցուցահանդէսը: Գործերուն փոխադրութիւնը դժուարութիւն չպիտի յարուցանէ կարծեմ: Ուրիշ անգամ, կը յուսամ անշուշտ, երկրորդ ցուցահանդէսս կազմակերպել իւղանդէսներով, որոնց փոխադրութիւնը աւելի բարդ խնդիր է եւ որոշ դժուարութեան պատճառ կ'ըլլայ:

Երկու շաբաթ է ի վեր հոս՝ Vichy քաղաքն ենք, որովհետեւ տիկինս այստեղի ջուրերը կը խմէ: Օգոստոս 12-ին ալ այստեղէն դէպի La Preste պիտի երթանք, որ սպանական սահմանագլխին մօտ ուրիշ ջուրերու կայան մըն է եւ շատ օգտակար պիտի ըլլայ մեզի: Սեպտեմբերի սկիզբը նորէն Բարիզ պիտի վերադառնանք: Վերադարձիս, քանի մը օրուայ համար Զուիցերիա պիտի մեկնիմ, Ժընեւ, ուր շատ կարեւոր ցուցահանդէս մը ունիմ այս միջոցիս, որ սկսաւ յուլիս 7-ին եւ պիտի տեւէ մինչեւ սեպտեմբերի վերջը: Ձեզի Catalogue մը պիտի

դրկեմ: Եթե ինձի գրեք, հետևաբար մինչև սեպտեմբերի սկիզբը այս հետեւեալ հասցէին գրեցէ՛ք:

CARZU

Սպասելով Ձեր նամակին, կը խնդրէի, որ ընդունիք իմ շատ անկեղծ յարգանքներս եւ սրտագին բարեւներս:

Գառգու

Ֆ. 875, ց. 2, գ. 451, թթ. 5-6: Ինքնագիր:

№ 65

9 օգոստոսի 1966թ., Երևան

Վ. ՀԱՄԱԶԱՍԿԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐԱԼՈՒ ՍՈՍԻԱԼ ԲԱՐՏՈՒՂԱՐ
Ա. ԲՈՂԻՆՅԱՆԻՆ ՀԱԼԵՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԱԶԱԿՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայրենիքում հյուրընկալված օրերին, Սիրիայի Հալեպ քաղաքի Հնչակյան կուսակցության /Կիլիկյան շրջանակի խնամակալության/ ընդհանուր քարտուղար Ավետիս Էքմեքջյանը ներկայացրել է խնդրագիր՝ ուղղված մեր կոմիտեի նախագահությանը հետևյալի մասին:

Կիլիկյան խնամակալության, Կիլիկյան ճեմարանի և երիտասարդական, մարզական կազմակերպությունների գործունեությունը աշխուժացնելու համար, Հնչակյան կուսակցությունը կարիք ունի մեր աջակցությանը, ուստի ապավինելով մեր բարյացակամությանը, ներկայացնում է իր հետևյալ կարիքները.

ա/ Կիլիկյան ճեմարանի ու վարժարանի համար մեկ դաշնամուր

բ/ Կիլիկյան ճեմարանի համար սեփական շենք գնելու նպատակով ստեղծել ֆոնդ

գ/ Հալեպում ծրագրված հայկական թերթի լույս ընծայման համար անհրաժեշտ է մեկ տպագրական մեքենա՝ 70-100 մեծությամբ

դ/ Թերթի համար մեկ տողաշար /լինոտիպ/ չորս կարաքով:

Նկատի ունենալով Սիրիայի Հնչակյան կուսակցության անվերապահ կեցվածքը Հայրենիքի կողքին և նրա հայրենասիրական ծավալուն գործունեությունը, նպատակահարմար ենք գտնում ընդառաջել Ա. Էքմեքջյանի դիմումին:

Վերոհիշյալներից իրականացնելի և կարևոր են դաշնամուրի ու տողաշար /լինոտիպ/ մեքենայի վերաբերյալ խնդրանքները:

Դաշնամուրը անհրաժեշտ է Կիլիկյան ճեմարանի ու վարժարանի սաների դասերին, ինչպես նաև նրանց և երիտասարդական կազմակերպությունների, Հնչակյան կուսակցության կազմակերպած հանդեսների համար:

Խիստ անհրաժեշտություն է սիրիահայության շրջանում հայրենասիրական շարժման վերելքին նպաստելու և զաղթօջախը առավել ևս համախմբելու նպատակով նախատեսված հայկական թերթի լույս ընծայումը առաջադիմական Հնչակյան կուսակցության կողմից: Լինոտիպի կարիքի բավարարումը առաջնահերթ խնդիր է:

Նախատեսված է առաջիկայում Դամասկոսում կազմակերպել ՍՍՀՄ արդյունաբերության և գյուղատնտեսության ցուցահանդես: Էքմեքջյանը կուսակցության անունից խնդրում է մեր կոմիտեին՝ միջնորդել համապատասխան մարմինների առջև, որպեսզի թույլ տրվի ցուցահանդեսից վերցնել իրենց համար անհրաժեշտ վերոհիշյալ ապրանքները՝ արժեքը պարբերաբար վճարելու պայմանով:

Օգտակար ենք համարում դաշնամուրը և տողաշար մեքենան ապառիկ գնելու պայմաններ ստեղծել Հնչակյան կուսակցության /Կիլիկյան շրջանակի խնամակալության/ համար: Հնարավորության դեպքում՝ վերոհիշյալ ապրանքների նվիրումը առավել ևս նպատակահարմար կլիներ:

Նշված խնդրանքների իրագործումը կնպաստի ինչպես սիրիահայ առաջադիմական դիրքերի ամրապնդման, նույնպես և՝ Հնչակյան կուսակցության հետ Հայրենիքի Բարեկամական կապերի է՛լ ավելի սերտացմանը:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 5, թթ. 30-31: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱՀԱՄԱՅԱՆԻ ՆԱԽԱԿԸ ԳԱՌՁՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՆՐԱ ԿՏԱՎՆԵՐԻ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Խորին շնորհակալությամբ ստացանք Ձեր օգոստոսի 4-ի թվակիրը:

Շատ զգացված ենք հրավերն ընդունելու համար և անչափ ոգևորված՝ Ձեր ցուցահանդեսը Հայրենիքում կազմակերպելու հրաշալի հեռանկարով: Հեռանկար, որը խոստանում է երջանիկ պահեր մեր արվեստասեր հասարակությանը ամենամոտիկ ու մտերիմ օրերին: Մի փոքր անհանգստացած էինք բավական ժամանակ Ձեր պատասխանը չունենալու պատճառով, բայց թերթերից տեղեկացանք Շվեյցարիայում Ձեր ցուցահանդեսը կազմակերպելու մասին, ենթադրեցինք, որ շատ զբաղված եք: Ինչպես միշտ, համոզված ենք, որ այս անգամ ևս կհիացնեք հանդիսատեսին և ինքներդ էլ կունենաք ստեղծագործական նոր լիցք ու թռիչքներ: Ձեզ նման բացառիկ տաղանդներն են արդեն հարստացնում ու գեղեցկացնում մարդկային կյանքը: Ի սրտե ցանկանում եմ ամեն տեսակի հաջողություններ:

Ձեր վերջին նամակից իմացանք, որ մտադիր եք Մոսկվայում մնալ մոտ մեկ ամիս. եթե կարելի է գիտենանք՝ ի՞նչ նպատակով, գուցե պետք ունենաք մեր օգնության կամ միջնորդության: Որևէ դժվարություն ստեղծվելու դեպքում, կխնդրեինք լուր տալ մեզ, սիրով կընդառաջենք Ձեզ բոլոր հարցերում:

Գրել էիք, թե տիկինը փոքր-ինչ տկար է և պետք է գործածի հանքային ջրեր: Այս առթիվ բարեբաղդություն ունենք հայտնելու, որ Հայաստանում ևս կան շատ օգտակար հանքային ջրեր՝ ջերմուկ, արզնի, սևան և այլն: Կան հանքային ջրերի առաջնակարգ առողջարաններ, և եթե պետք լինի, այս իմաստով ևս կարող ենք Ձեզ համար ստեղծել լավագույն պայմանները:

Կրկին հայտնում եմ բոլորիս խորին շնորհակալությունը, ցանկանում եմ Ձեզ հաջողություն և բարի հանդիպում Հայրենիքում:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 451, թ. 4: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՊՐՈԴԱԳՆԱԴԱՅԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ
Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ՝ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ԿԱՊԱՉ
ԻՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1966 թվականի փետրվարի 12-ից մինչև մարտի 4-ը, Լիբանանահայ բժշկական միության հրավերով ՍՍՌՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, բժշկական գիտությունների վաստակավոր գործիչ,¹⁵⁷ պրոֆեսոր Լ. Ա. Հարությունյանը¹⁵⁸ և գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ա. Ջ. Ճաղարյանը¹⁵⁹ գտնվում էին Բեյրութում: Պրոֆեսորները այցելել են մշակութային միություններ, հիվանդանոցներ, դպրոցներ, բարեգործական ընկերություններ, հայ մամուլի խմբագրատներ, հանդիպումներ ունեցել տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների և առանձին անձանց հետ, հանդես եկել մի շարք դասախոսություններով:

Օսանոթանալով պրոֆեսորների տպավորությունների և հաշվետվության հետ, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն ներկայացնում է մի շարք առաջարկներ:

Փորձի փոխանակման նպատակով Հայաստան հրավիրել՝

1. Գեղագիտական վիրաբուժության հայտնի մասնագետ Մելքոն Էպլի-դաթյանին¹⁶⁰ դիմաձևոտային վերականգնողական օպերացիաներ կատարելու նպատակով /իր հետ բերելու է նաև հատուկ գործիքներ/:

2. «Ֆրոստ» կանադական դեղագործական ընկերության մասնագետներին:

3. Ֆրանսիական դպրոցի ներքուվիրաբույժ պրոֆեսոր Կերկերյանին (ծնթ. Գևորգ Կերկերյան):

4. Լիբանանահայ բժշկական միության ատենապետ, հասարակական գործիչ Հակոբ Կասաբյանին:

5. Ատամնաբույժ Գույումջյանին, իր վեց տարեկան որդու՝ Ավետիս Գույումջյանի՝ «Լիբանանյան Մոցարտի» հետ:

6. Սրտաբան Փիլոյանին:¹⁶¹

157. Փաստաթղթի հեղինակը սխալ է նշում տիտղոսը: Ճիշտն է՝ «ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ»:

158. Հարությունյան Լևոն Ասատուրի (1903, գյուղ Կյաղիկաթըլմիշ, Կարսի մարզ - 1973, Երևան) - Համաճարակաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ (1961), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1956): Ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը, հետագայում բարձր պաշտոններ զբաղեցրել նույն ինստիտուտում:

159. Ճաղարյան Անդրանիկ Ջուլիզուդի (1916, գյուղ Դաշբուլաղ, այժմ՝ Աստղաշեն, Ասկերանի շրջան - 1985, Երևան) - Վիրաբույժ, մարդաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1963): Ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը: ՀԽՍՀում սրտաբանության կազմակերպիչներից է: Վերականգնել է Պետրոս Դուրյանի և Հայկական լեռնաշխարհի բնիկների ղեմերը՝ գանգերի հիման վրա:

160. Մելքոն Էպլիդաթյան (1919, Կ. Պոլիս - 2005, Բեյրութ) - Գեղագետ-վիրաբույժ, ՀՅԴ անդամ, Լիբանանի խորհրդարանի պատգամավոր (1972-1992): Հեղինակն է «Գաղթակալանեկ խորհրդարան» երկհատոր հուշագրական երկի:

161. Խոսքը վերաբերում է բժիշկ-սրտաբան Ռուբեն Փիլոյանին: Բժիշկ (թերապևտ) է եղել նաև կրտսեր եղբայրը՝ Լևոնը:

7. Ջաքար և Արփինե Փեհլիվանյաններին: Ամուսնուն անեսթեզիոլոգիական գծով դասախոսություններ կարդալու, կնոջը՝ համերգներով հանդես գալու նպատակով:

Ընկերներ Հարությունյանը և Ճաղարյանը մի շարք դիտողություններ են արել «Արմենիա» ջերմանավի մասին: Ելնելով դրանից, հարկ է դիմել համապատասխան կազմակերպություններին՝ ձեռք առնելու մի շարք միջոցառումներ:

1. Նավի վրա ռուսերեն գրառումների կողքին փակցնել նույն բովանդակությամբ հայերեն գրառումներ:

2. Նավի վրա ավելացնել նաև նրա հայկական անունը:

3. Շտկել Երևան քաղաքի համայնապատկերը:

4. Հնարավորություն ստեղծել, որպեսզի մեր շնորհալի նկարիչ-ձևավորողները ազգային ոճով ձևավորեն նավը:

5. Նավն ապահովել հայերեն գրքերով, հուշանվերներով, կինոժապավեններով և ձայնապնակներով: Կազմակերպել զրույցներ, դասախոսություններ Հայաստանի մասին:

6. Առաջին իսկ պատեհ առիթով Երևան հրավիրել նավի զլխավոր ինժեներ Բրիտափոր Լեոնտինիչ Միրզոյանցին և նավի հրամկազմին:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 5, քք. 33-34: Պատճեն: Մեքենագիր:

ԳԱՌՁՈՒԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻՆ ԻՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Շատ յարգելի եւ շատ սիրելի Համազասպեան,

Ուրախութեամբ ստացայ Ձեր 18 օգ. թուակիր նամակը եւ շատ շնորհակալ եմ: Ինչպէս որ Ձեզի տեղեկացուցի, միջոտ մտադիր ենք սեպտեմբերի 25-ի ատենները Մոսկուա մեկնիլ եւ մի քանի օր մնալէ վերջ դէպի Հայաստան երթալ: Կը յուսանք մօտաւորապէս ամիս մը Երեւան մնալ:

Կ'երեւի թէ սխալ հասկցաք վերջին նամակիս մէջ գրածս. Մոսկուա ամիս մը մնալու բնաւ նպատակ չունինք, մի միայն 3 կամ 4 օր: Հետեւաբար, որեւէ դժարութիւն չեմ կարծեր որ ըլլայ:

Մենք մտադիր ենք երկաթուղիով Բարիզէն Մոսկուա մեկնիլ եւ այնտեղէն ալ շատ հաւանաբար նոյնպէս նոյն միջոցով Երեւան հասնիլ:

Գիտեմ թէ քիչ մը յոգնեցուցիչ պիտի ըլլայ մեզի համար, բայց նոր երկիրներ պիտի տեսնենք այսպիսով:

Ուրեմն, ցտեսութիւն կ'ըսեմ Ձեզի եւ շուտով կը յուսանք Ձեզ ողջագուրել Երեւանի մէջ:

Շատ անկեղծ եւ շատ սրտագին բարեւներով՝

Գառգու

Յ. Գ. Մի քանի օրէն նորէն Բարիզ կը վերադառնանք, հետեւաբար, եթէ նորէն գրելու ըլլաք, Բարիզի մեր հասցէն միջոտ նոյնն է:

Ֆ. 875, ց. 2, գ. 451, թ. 8 և շրջերեսը: Ինքնագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ¹⁶² ԱՐԵՎՏԱՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆԵԼՈՒ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Հայրենակցական միությունները սփյուռքի ներկա պայմաններում մեծ ու շնորհակալ աշխատանք են տանում ժողովրդական լայն զանգվածները համախմբելով Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի շուրջ:

Բոլոր հայրենակցական միությունների գլխավոր նպատակն է մասնակցել Հայաստանի շինարարական ու մշակութային ձեռնարկներին:

Համաերգնկացիական վերաշինաց միությունը, Կեսարիայի և Կյուրինի հայրենակցական միությունները Կոմիտեի հիմնադրությունից հետո դիմեցին մեզ, խնդրելով միջնորդել հանրապետության վերադաս մարմինների առջև՝ հավերժացնելու համար Արևմտյան Հայաստանում իրենց բնակած հայրենի քաղաքների անունները:

Անցյալ տարի այդ խնդրանքները հայրենակցական միությունների ղեկավարների կողմից անձամբ ներկայացվեցին հանրապետության Սինիստրների սովետի նախագահին և արժանացան բարյացական վերաբերմունքի:

Խնդրում ենք, նկատի ունենալով այդ միությունների խնդրանքները, Արարտյան դաշտի մեջ մտնող նոր կազմակերպված սովետական երեք տնտեսություններին, որոնք անուն չունեն /թիվ 40 և 41-րդ սովետական տնտեսությունները/, կամ կրում են այն ոչ պաշտոնական ձևով /թիվ 36 տնտեսությունը՝ Մրգաշատ/ շնորհել՝ Նոր Երզնկա /կամ «Երիզա» պատմական անունով/, Նոր Կեսարիա /կամ «Մաժակ» պատմական անունով/ և Նոր Կյուրին անունները:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 9, թ. 37: Պատճեն: Սեքնագիր:

162. Հարությունյան Նազուշ Խաչատուրի (1912, Երևան – 1993, Մոսկվա) – Մեխանիկ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1950), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1961), 1960-1961թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ, 1961-1963թթ.՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, 1962-1975թթ.՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահ:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ո. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
Դ. ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գրականության և արվեստի թանգարանի դիրեկտոր ընկ. Ս. Մելիքսեթյանը դիմել է մեզ Դ. Վարուժանի արխիվները Հայաստան բերելու հարցով:

Ինչպես պարզվել է, Դանիել Վարուժանի արխիվի մի կարևոր մասը /անտիպ/ և 500 օրինակ «Հացին երգը» հրատարակությունը գտնվում են Մարոկկոյի Կասաբլանկա քաղաքում, բանաստեղծի տիկնոջ երկրորդ ամուսնու՝ Ժիրայր Աբիկյանի տրամադրության տակ: Վերջինս Կուլտուրայի մինիստրության աշխատակցուհի Գոհար Ազնավուրյանի հետ Կասաբլանկայում ունեցած հանդիպման ժամանակ նախ խոստացել է Հայրենիք՝ Սովետական Հայաստան ուղարկել վերոհիշյալ արխիվը, իսկ հետո հրաժարվել է այդ անելուց՝ պատճառաբանելով, որ արխիվի տնօրինության իրավունքը պատկանում է Վարուժանի օրինական ժառանգին՝ դստերը՝ տիկ. Վերոն Վարուժան-Սաֆրազյանին:

Ստանալու համար Վարուժանի արխիվի Սովետական Հայաստան առաքելության թույլտվությունը, հարկ կլինի Հայրենիք հրավիրել ԱՄՆ-ում բնակվող տիկին Վերոն Վարուժան-Սաֆրազյանին:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը՝ Վերոն Վարուժան-Սաֆրազյանին Հայաստան հրավիրելու համար:

Կից ուղարկում ենք Գրականության և արվեստի թանգարանի դիրեկտոր ընկ. Ս. Մելիքսեթյանի գրության¹⁶³ պատճենը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 5, թ. 35: Պատճեն: Մեքենագիր:

163. Գրությունը տե՛ս ֆ. 875, ց. 2, գ. 5, թ. 37:

ՆԱՆ ԳԱՌՉՈՒԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ
ՍՏԱՅԱԾ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն

Վաղուց ուզում էինք Ձեզ գրել: Բայց դուք ճանապարհորդում էիք Բուլղարիայում: Հետո Գառնիկը մնաց Ժնև՝ իր ցուցահանդեսի փակման համար և վերադարձավ հիվանդ: Քանի որ նա անկողնում է, ես եմ Ձեզ գրում, ախտս ֆրանսերեն. ես դեռ հայերեն չգիտեմ: Բայց հուսով եմ, որ Դուք ունեք լավ թարգմանիչ:

Ամենից առաջ ես ուզում եմ Ձեզ սրտանց շնորհակալություն հայտնել ընդունելության համար, որ Ձեր շնորհիվ մենք ստացանք Երևանում: Դա երբեք չենք մոռանա: Մենք Հայաստանում անցկացրինք 3 հրաշալի շաբաթ, որոնք դրախտի մի անկյան պես մնացին մեր սրտերում:

Միանգամից պաշտեցինք Հայաստանը իր վայրի գեղեցկություն ունեցող տեսարանների համար, Արարատի համար, որին ողջունում էինք ամեն օր, իր թանգարանների անգին զանձերի, անմոռաց եկեղեցիների, այդքան արագ ժամանակակից դառնալու և իր այնքան ազնիվ ու խանդավառ բնակիչների համար: Երևանը մեզ համար մի մեծ ընտանիք էր: Մենք իսկապես հոգով ու սրտով դժբախտացանք թողնելով այդ հրաշալիքները և մեծ դժվարությամբ ենք կրկին հարմարվում Փարիզի կյանքին:

Հուսով ենք, որ տիկին Համազասպյանի հետ լավ ժամանակ անցկացրեցիք Բուլղարիայում: Հուսով ենք կրկին հաճույքն ունենալ Ձեզ ընդունելու Փարիզում:

Ընդունեցե՛ք մեր ջերմագին շնորհակալությունները:

Նան Գառզու

Ֆ. 875, ց. 2, գ. 451, թ. 19 և շրջ.: Թարգմանություն ֆրանսերենից:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Բ. ՄՈՒՐԱՆՅԱՆԻՆ՝ ՄԻՍԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ Ս. ՂԱԶԱՐԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ
ՕԳՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նոյեմբեր ամսում տարերային մեծ աղետ պատահեց Բոտալիայում՝ հորդա-
ռատ անձրևների, գետերի բարձացման և ջրհեղեղների պատճառով: Աղբիա-
տիկ ծովի ամեհի ալիքները ողողեցին նաև ողջ Վենետիկը: Միևնույն ժամանակ
Ս. Ղազարի Մայրավանքը 1,5 մետր բարձրությամբ ջրի տակ մնաց:
Ողողվեցին տպարանը, շտեմարանները, եկեղեցին և տնտեսական ապրանք-
ների պահեստները: Քարուքանդ եղան մրգատու ծառերը: Տասնյակ միլիոնա-
վոր լիբերտների հասնող վնաս է կրել վանքը: Տպագրական մեքենաները երկար
ժամանակվա համար գրկվել են աշխատելու հնարավորությունից: Փչացել են
արժեքավոր հրատարակություններ: Լուրջ վնասներ է կրել նաև Մուրատ-Ռա-
ֆայելյան վարժարանը:

Վերահաս աղետի պատճառած վնասները վերականգնելու և դժվարու-
թյունները մեղմելու համար ամբողջ սփյուռքում սկսվել է հանգանակության
կոմպանիա:

Ս. Ղազարի Միևնույն ժամանակ ժողովրդին ունի շուրջ 300 տարի¹⁶⁴ Եվրո-
պայի կենտրոնական քաղաքներից մեկում՝ Վենետիկում, Միևնույն ժամանակ
անգնահատելի ծառայություն են մատուցել ոչ միայն հայագիտության զար-
գացման, հայրենասիրական ոգու դաստիարակման, այլ նաև հայ մշակույթը
օտարներին ծանոթացնելու շնորհակալ գործում: Ավելի քան չորս հազար ար-
ժեքավոր ձեռագրեր և դասական մեծ վարպետների նկարների հավաքածուներ
պահպանվում են ամենայն խնամքով:

Միևնույն ժամանակ Միաբանությունը թեև դավանանքով կաթոլիկ է, բայց էությամբ
և գործունեությամբ խորապես հայկական և հայրենասիրական կազմակերպու-
թյուն է, որը նյութական ոչ մի օժանդակություն չի ստանում Վատիկանից: Նրա
եկամուտները գոյանում են ազգային նվիրատվություններից, եկեղեցական
կալվածներից և տպագրական գործից:

Միևնույն ժամանակ մեծ երախտիք ունեն հատկապես ուսումնական գործում:
Նրանք աշխատել են ամեն տեղ բացել հայկական դպրոցներ:

Ս. Ղազարը սփյուռքահայ մշակույթի խոշորագույն օջախներից մեկն է:

Այժմ վանքն ու միաբանությունը ապրում են նյութական շատ ծանր օրեր:
Կարծում ենք՝ նաև մեր պարտքն է օգնության ձեռք մեկնել այդ դարավոր մշա-
կույթի օջախին:

Մեր դրական վերաբերմունքով Հայրենիքի վարկն ու պատիվը մեծապես
կբարձրանային հաշտ ամբողջ սփյուռքահայության, մի անգամ ևս կհաստատե-
ինք, որ Սովետական Հայաստանը այլևս հանդիսանում է ամենայն հայոց հայ-
րենիքը, հայ ժողովրդի ճակատագրի և բախտի տերն ու պաշտպանը: Անտար-

բերությունը կարող էր նսեմացնել մեզ մեր հայրենակիցների և բարեկամների
աչքում:

Խնդրում եմ Ձեր կարգադրությունը հայրենական օգնություն կազմակերպե-
լու Ս. Ղազարի Միևնույն ժամանակ Մայրավանքին՝ մեղմելու համար Միաբանության
ծանր վիճակը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 9, թթ. 27-28: Պատճեն: Մեքենագիր:

164. «300 տարի» նշումը այնքան էլ ճիշտ չէ. Խախտնիցի պիտի լինե՞ր գրել «շուրջ 250 տարի»:
Արդարև, Ս. Ղազարի կղզին 1701թ. հիմնված Միևնույն ժամանակ Մայրավանքի հատկացվել է
1717թ.:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԴԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ՝ ՍՓՅՈՒՌՔԱԴԱՅ ՈՐԲ ԵՐԵՎԱՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԵՎ
ՊԱՏՊԱՐԵԼՈՒ ԱՆՉՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մերձավոր և Միջին Արևելքի հայկական մի շարք գաղթօջախներում կան զգալի թվով որբ և նյութապես անապահով երեխաներ, որոնց խնամակալության և դաստիարակության համար արտասահմանում քիչ են հայկական մանկատներն ու որբանոցները:

Սփյուռքահայ կազմակերպություններն ու մամուլը անհանգստացած են բազմաթիվ հայ որբերի ճակատագրով՝ Լիբանանում, Սիրիայում, Իրանում, Թուրքիայում և այլ երկրներում:

Լիբանանում գործող «Թռչնոց բույն» օտար հաստատությունը,¹⁶⁵ որտեղ պատսպարվել են զգալի թվով նաև հայ երեխաներ, դեռ 1965թ. մամուլի միջոցով հայտնել էր ի գիտություն, որ ընդհատում է որբերի ընդունելությունը՝ տեղ չլինելու պատճառով:

Հայ որբերի և չքավոր երեխաների համար ստեղծվել է ծանր կացություն:

Այս մասին մենք գրել էինք Կենտկոմին դեռ 1965թ. հոկտեմբերի 6-ին:

Սփյուռքահայ առաջադիմական բազմաթիվ կազմակերպություններն ու հայրենակցական միություններն և անհատ գործիչներ շեշտում են սփյուռքահայ որբ և չքավոր երեխաների համար Հայաստանում գիշերօթիկ դպրոց բանալու անհրաժեշտությունը: Այդ հաստատությունը ոչ միայն երեխաներին կփրկի ֆիզիկապես, այլև նրանց կդաստիարակի հայրենասիրական ոգով:

Մեր կոմիտեն նույնպես նպատակահարմար է գտնում, որ սփյուռքահայ որբ և չքավոր երեխաներին պատսպարելու և դաստիարակելու գործը ստանձնի Հայաստանի կառավարությունը և Երևանում կառուցի համապատասխան գիշերօթիկ դպրոց:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 5, թ. 50: Պատճեն: Սեքրետարի:

ՖՐԱՆՍԱԴԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ՝ ՆՐԱ ԴԻՍԿ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՏԳԱՄԱԿՈՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐՈՎ

Մեծայարգ ընկեր,

Ֆրանսահայ մշակութային միությունը կարդալով Հայաստանի Գերագույն Խորհուրդի ընտրություններուն առթիւ Ձեր դեպուտատ ընտրուած ըլլալու ուրախալի լուրը, կու գայ ջերմապէս շնորհաւորել Ձեզ այս նոր եւ այլապէս պատասխանատու պաշտօնին համար:

Արդարեւ, այն ձեռնհասութեամբ ու հայրենանուէր գործունէութեամբ զորս կը վարէք սփյուռքահայութեան այնքան սիրելի մարմին մը, մեզ չի զարմացներ, որ նաեւ ունենաք պատասխանատուութեան բաժին մը մեր Հայրենիքին եւ ժողովուրդին ընդհանուր վերելքին ի խնդիր տրուելիք որոշումներուն մէջ:

Ցաջողութեան սրտագին մաղթանքներով,

Ի դիմաց Ֆրանսահայ Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան.

Ընդհանուր քարտուղար՝

Ձ. Չաքմշյան

Ֆ. 875, ց. 2, գ. 462, թ. 4: Բնագիր: Ձեռագիր:

165. «Թռչնոց բույն» որբանոցը Հայոց ցեղասպանությունից մազապուրծ ծնողագուրկ երեխաների համար հաստատել է Դանիացի միսիոներների եկեղեցասեր տիկնանց միությունը՝ 1927թ.: Հաստատությունը պաշտոնապես Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության է փոխանցվել 1971թ.:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ԼԱՄԱԿԸ ՀԻՍՅ ԼԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԱԽԱԳԱՀ
Բ. ՄՈՒՐԱՂՅԱՆԻՆ ԼՍԵՐԻԿԱՅԱՅ Վ. ԹԱԹՈՍՅԱՆԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՈՐԲ ԵՐԵՆԱՆԵՐԻՆ ԱՐԱԾ ԼՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մոնրեալում եղած ժամանակ ԱՄՆ-ի ռամկավար կուսակցության ղեկավարներին Էդմոնդ Կոտալյանը, որը Բոստոնից եկել էր ինձ տեսնելու, զրույցի ժամանակ հայտնեց, որ երկար տարիներ ամերիկյան բանակում ծառայած հայազգի Վարթիվոս /Մարտիրոս/ Թաթոսյանը Սովետական Հայաստանի մանկատների սաներին ու ծնողագուրկ երեխաներին կտակել է 90 հազար դոլար:

Կանադայից վերադառնալուց հետո ստացանք Ֆրեզնոյի «Ֆրեզնո Բի» օրաթերթի 1967թ. օգոստոսի 10-ի համարում տպագրված ազդի լուսանկարային պատճենը 90 հազար դոլարի մասին, որի կտակարարն է ամերիկյան բանակի նախկին տասնապետ Վարթիվոս Թաթոսյանը: Նա Արևմտյան Հայաստանից որբացած վիճակում հասել է Ամերիկա և քառասուն տարի ծառայել ամերիկյան բանակում:

Թերթի հաղորդման համաձայն, որբության դառնությունը խորապես զգացած Թաթոսյանը իր ամբողջ խնայողությունը՝ 90 հազար դոլար, կտակել է Սովետական Հայաստանի որբերին՝ հայ եկեղեցու միջոցով:

Վ. Թաթոսյանը մահացել է 1967թ. հուլիսի 28-ին, 79 տարեկան հասակում:

Խնդրում ենք համապատասխան կարգադրություն անել Հայ եկեղեցու գործերի խորհրդին, որպեսզի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը հետաքրքրություն հանդես բերի ամերիկյան առաջնորդարանի միջոցով ստանալու այդ գումարը:

Կից ներկայացնում ենք «Ֆրեզնո Բի» օրաթերթի 1967թ. օգոստոսի 10-ի հաղորդագրության լուսանկարային պատճենը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 18, թ. 6: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ԼԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ո. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
ԼՍԵՐԻԿԱՅԱՅ «ԼՐԱԲԵՐ» ԹԵՐԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամերիկահայ առաջադիմական միությունը հայրենասիրական մեծ աշխատանք է կատարում ամերիկահայ զանգվածների շրջանում: Նրա պաշտոնաթերթ «Լրաբեր» խիզախ ու անձնվեր կերպով և սկզբունքային հետևողականությամբ պայքարում է խաղաղության պաշտպանության և աշխատավորների շահերի հետապնդման համար: Սովետական Միության և Սովետական Հայաստանի նվաճումների պրոպագանդումը առաջնային տեղ է գրավում թերթի էջերում և միության աշխատանքներում: Սակայն թե՛ միությունը և թե՛ թերթը գտնվում են ծանր կացության մեջ նյութական և կադրային տեսակետներից. նրանց եկամուտը իրենց անդամների և համակիրների նվիրատվությունից է գոյանում, իսկ այդպիսի խեղճ միջոցներով հնարավոր չէ ապահովել թերթի կանոնավոր հրատարակումը: Միության գլխավոր քարտուղարը միաժամանակ հանդիսանում է թերթի խմբագիրը, որը կատարում է նաև սրբագրիչի, առաքիչի և հաճախ բանվորի պարտականություններ: Ծանր վիճակը արդեն քայքայել է Վահան Ղազարյանի առողջությունը, որն այլևս հագիվ թե կարողանա շարունակել քարտուղարի և խմբագրի պարտականությունները միաժամանակ: Անհրաժեշտ է մտածել նրան փոխարինողի մասին: Ամերիկահայ առաջադիմական միության ընկերները առաջարկում են Անահիտ Զեմանյանի թեկնածությունը՝ թերթի խմբագրական աշխատանքները ղեկավարելու համար: Ա. Զեմանյանը առաջադիմական-աշխատավորական ու հայրենասիրական աշխատանքի մեծ փորձ ունի. միության նվիրված և գործուն ղեկավարներից մեկն է: Նա ունի միանգամայն բոլոր հնարավորությունները ձեռնահաստորեն ղեկավարելու համար թերթի աշխատանքները: Սակայն, անհրաժեշտ է 6 ամսից մինչև մեկ տարի ստաժորական կուրսեր անցնել Հայաստանում՝ խորանալու համար հայոց լեզվի իմացության և ժուռնալիստիկայի մեջ:

Կոմիտեն նպատակահարմար է գտնում, որ հնարավորություն ստեղծվի Ա. Զեմանյանի համար ստաժորական կուրսեր անցնելու Հայաստանում: Նա ունի ամուսին՝ Զեք Փրովինգանոն, որը գտնվում է վատառողջ վիճակում և կարիք ունի ընտանեկան հոգատար խնամքի, հետևաբար նա պարտավոր է ընկերանալու իր կնոջը Հայաստանում ստաժորական ժամանակաշրջանում: Նկատի ունենալով, որ նրանք գտնվում են նյութական շատ ծանր պայմաններում, անհրաժեշտ է դառնում Զեք Փրովինգանոյին նույնպես ձևակերպել ստաժորական կուրսերում և վճարել ուսանողական թոշակ: Միաժամանակ, անհրաժեշտ է նրանց երկուսին միասին հատկացնել առանձին բնակարան, կամ մեր կոմիտեին իրավունք տալ նրանց բնակությունը ապահովելու Երևանի հյուրանոցներից մեկում՝ մեր հաշվին:

Կից ներկայացնում ենք տեղեկանք՝ Ա. Զեմանյանի և նրա ամուսնու մասին: Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 18, թթ. 1-2: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱՁԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ա. ՔՈՂԻՆՅԱՆԻՆ՝ ԲԵՅՐՈՒԹԻ ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ
ԱՆՀԱՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բեյրութի Սահակյան լիսեն Լիբանանահայ առաջադիմական ճակատի հաստատանասեր հնագույն և ճանաչված ուսումնական հաստատություններից մեկն է։ Այստեղ իրենց կրթությունն ու դաստիարակությունն են ստացել հարյուրավոր հայրենասեր հասարակական գործիչներ, գրողներ, լրագրողներ, որոնցից մի զգալի մասն այժմ գտնվում է Սովետական Հայաստանում։

Նյութապես անապահով այս դպրոցը դժվարին պայմաններում շուրջ կես դար գոյատևում է անշեղ կերպով շարունակելով իր կրթական և դաստիարակչական գործունեությունը՝ միշտ առաջին գծի վրա դնելով պատանիների հայրենասիրական դաստիարակությունը։ Սակայն դպրոցի շենքը գտնվում է շվեյցարական մի ընկերության պատկանող հողատարածության վրա։ Դատարանի որոշմամբ, այդ հողատարածությունը պետք է հանձնվի ընկերությանը կամ գնվի գումարով։

Այդ հողատարածությունը գտնվում է երեք կարևոր պողոտաների խաչաձևման կետում, որտեղից պետք է կապ հաստատել Բեյրութ քաղաքի և Պուրժ Համուտի միջև։ Սահակյան լիսեն մարզադաշտը օգտագործվում էր նաև Հնչակյան կուսակցության ենթակա ՀՄՄ երիտասարդական-մարզական կազմակերպության և այլ առաջադիմական միությունների կողմից։ Այդ վայրը կից է Նոր Հաճըն թաղին, որը համարվում է առաջադիմական ուժերի միջնաբերդը։

Սահակյան լիսեն, նրա գրաված տարածությունը և մարզական դաշտը հայրենասիրական ճակատի յուրահատուկ ամրոց է։

Կորցնելով Սահակյան դպրոցի այժմյան հողը և մարզադաշտը՝ հայրենասիրական ճակատը ծանր հարված կկրի։

Այժմ 16 հազար քմ այդ հողատարածությունը գնելու համար պահանջվում է 650-700 հազար դոլար։

Այդ նպատակով ստեղծված է Սահակյան դպրոցի հողի գնման կենտրոնական հանձնաժողով, որը աշխարհի տարբեր կողմերում հանգանակություն է կազմակերպել, և առայժմ հավաքված է 150 հազար դոլար։

Հողատիրոջ և «Սահակյանի» միջև բանակցություններին խանգարում են հակառակորդ ուժերը, որոնք շահագրգռված են հայաստանասեր ուժերի քայքայմամբ։

Սահակյան դպրոցի՝ արծարծված խնդրով մեր կոմիտեին են դիմել Կենտրոնական հանձնաժողովը և դպրոցի տնօրինությունը։

Մեր կոմիտեն ևս, որի հետ սերտ կապեր ունեն այդ դպրոցը և ՀՄՄ-ը, անհանգստացած է ստեղծված ծանր կացությունով և փնտրում է ուղիներ՝ օգնելու համար «Սահակյանին»։

Մեր կարծիքով, հնարավոր է օգտագործել հետևյալ միջոցները.

ա/ Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից Հայաստանին

հատկացված կտակները Էջմիածնի կաթողիկոսության միջոցով տրամադրել Սահակյանի ֆոնդին։

բ/ Էջմիածնի կաթողիկոսարանից խնդրել արտասահմանում ունեցած միջոցներից վալյուտային որոշ գումար հատկացնել «Սահակյանին», փոխարենը հատուցելով սովետական դրամով։

գ/ Բոստոնից Վարթիվոս Թաթոյանի՝ Հայաստանին որբերի համար ուղարկած 90 հազար դոլարը, որը պետք է օգտագործվի Հայաստանի եկեղեցու միջոցով, հնարավոր է փոխադրել «Սահակյանի» ֆոնդին։

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը։

Ներփակ ուղարկում ենք Կենտրոնական հանձնաժողովի նամակի պատճենը։

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 18, քք. 25-26: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
ԵՎ ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՅՐՅԱՆԻՆ¹⁶⁶
ԱՄԵՐԻԿԱՅԱՆ ԿԻՆՈՔԵՄԱՂՐԻՉ Մ. ՀԱԿՈՔՅԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱԶԱԳՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամերիկահայ կինոռեժիսոր Միքայել Հակոբյանը հայտնի անուն է միջազգային կինոյի աշխարհում: Նա «Ատլանտիս պրոդակշնս ինկորպորեյտիտ» վավերագրական և ուսումնական կինոընկերության նախագահն է: Նկարահանել է մի շարք նկարներ, որոնցից ամենահայտնիներից մեկը՝ «Ո՛ր է իմ ժողովուրդը» վերաբերվում էր Արևմտահայաստանին:

Մ. Հակոբյանը ս.թ. հունիսի ամսին իբրև տուրիստ տասը օր եղավ Երևանում: Նա Հայաստան էր եկել Թուրքիայի ճամփով, որտեղ նկարահանել էր հայկական պատմական հուշարձանները: Սովետական Հայաստանի նվաճումներից մեծապես տպավորված, նա դիմեց մեր կոմիտեին՝ թույլատվություն և աջակցություն խնդրելով, որպեսզի հնարավորություն տրվի իրեն նկարահանելու շուրջ կես ժամյա վավերագրական ֆիլմ՝ նոր Հայաստանի մասին: Հեղինակի նպատակն է հակադրել հին ու նոր Հայաստանները, մանավանդ Սովետական Հայաստանի նվաճումները ծանոթացնել ամերիկացիներին և այլ ժողովուրդներին:

Մեր կոմիտեն նպատակահարմար է գտնում ընդառաջել Մ. Հակոբյանին՝ նկարահանելու Հայաստանի նվաճումներն ու նոր կենցաղը:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը, որպեսզի Հայաստանի կինեմատոգրաֆիայի կոմիտեն ցույց տա համապատասխան աջակցություն ռեժիսոր Մ. Հակոբյանին:

Կից ներկայացնում ենք Մ. Հակոբյանի դիմումի պատճենը, նկարահանման ծրագիրը և այլ լրացուցիչ տեղեկանքներ:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 18, թ. 29: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ա. ՔՈԶԻՆՅԱՆԻՆ՝ ԲՈՒԼՂԱՐԱՅԱՅ «ԵՐԵՎԱՆ» ՄԵԼԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Գ. ԳԱՔՐԻԵԼՈՎԻՆ ԿԱՌԱՎԱՐՎԱԼ ՊԱՐԳԵՎ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես Ձեզ հայտնի է, ս.թ. սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 7-ը Երևանում և հանրապետության մի շարք քաղաքներում, գյուղերում և արդյունաբերական ձեռնարկություններում անցկացվեց բուլղարահայ «Երևան» մշակութային ընկերության թատերական և երգչախմբային ինքնագործունեության արվեստի տասնօրյակը: Տոնախմբություններին մասնակցեցին 500 կատարողներ և 25 հոգուց բաղկացած բուլղարական պատվիրակության անդամները: Բոլոր ելույթներն էլ անցան բացառիկ հաջողությամբ և Հայաստանի արվեստասեր հասարակայնության և աշխատավորության կողմից ընդունվեցին ջերմությամբ:

Այս մեծ միջոցառումը նվիրված էր Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության պանծալի 50-ամյակին: Այն արտահայտեց բուլղար և սովետական ժողովուրդների մեծ եղբայրությունը և է՛լ ավելի ամրապնդեց բուլղար և սովետահայ բարեկամության կապերը:

Բուլղարահայ խմբերի կատարողական բարձր մակարդակը և բարեկամության գնացքի կազմակերպումը մի անգամ ևս ապացուցեցին Հոկտեմբերյան գաղափարների առավել կենսունակությունը և սոցիալիստական հասարակարգի մեծ ուժը՝ ազգային արվեստների բարգավաճման գործում:

Բարեկամության գնացքի կազմակերպման և տասնօրյակի հաջող անցկացման գործում բացառիկ մեծ դեր ունեցավ բուլղարահայ «Երևան» մշակութային ընկերության վարչության նախագահ ընկ. Գ. Գաբրիելովը, որը և՛ Բուլղարիայում, և՛ Երևանում ներդրեց իր անսպառ եռանդն ու հնարավորությունները: Ոչ միայն Բուլղարիայում անձամբ հետևեց խմբերի պատրաստությանն ու կազմակերպմանը, այլև Երևանում գլխավորեց 500 հոգու տեղավորման գործը և աչալջոթեց հսկեց յուրաքանչյուր խմբի ելույթներին: Ուսումնասիրեց բոլոր մանրամասնությունները և ամենայն բժախնդրությամբ հետևեց նրանց իրագործմանը: Չնայած իր առաջացած տարիքին, ընկ. Գաբրիելովը զոհեց իր հանգիստը և երիտասարդի կորուվով աշխատեց զիշեր և ցերեկ: Նա շատ մեծ աջակցություն ցույց տվեց մեր կոմիտեին, որպեսզի ելույթներն ու հանդիպումները պսակվեին հաջողությամբ:

Կարծում ենք, որ թե՛ բուլղարական պատվիրակության անդամները, թե՛ տասնօրյակի մասնակիցները հայրենիք վերադարձան մեծ գոհունակությամբ:

Նկատի ունենալով ընկ. Գ. Գաբրիելովի դերը բուլղարահայ համայնքի ազգապահպանման, հայ մշակույթի և արվեստի զարգացման, բուլղար և հայ բարեկամության ամրապնդման և «Երևան» մշակութային ընկերության և մեր կոմիտեի միջև կապերի առավել սերտացման ուղղությամբ ու բարձր գնահատելով նրա մեծ ծառայությունը բուլղարահայ ինքնագործունեության արվեստի տասնօրյակի հաջող կազմակերպման և անցկացման գործում, խնդրում ենք

166. Հայրյան Գևորգ Արմենակի (1913, գյուղ Մավ, Ղափանի շրջան – 1999, Երևան) – Գրող, բանաստեղծ, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Թղթակցել է մի շարք թերթերի: Աշխատել է ՀԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ: Եղել է ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար, ապա ՀԽՍՀ կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեի նախագահ, «Սովետական գրող» հրատարակչության տնօրեն: Ունի գրականագիտական գործեր:

Ձեր միջնորդությունը, որպեսզի ՀՍՍՀ Գերագույն Սովետի Նախագահությունը ընկ. Գաբրիել Գաբրիելովին պարգևատրի ՀՍՍՀ Պատվոգրով:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 18, թ. 45: Պատճեն: Մեքենագիր:

№ 80

25 դեկտեմբերի 1967թ., Երևան

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐԱԼՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻ՝ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱԶԱԿՅԵԼՈՒ
ԱՆՉՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերջերս սփյուռքահայ թերթերից, սիրիահայ տուրիստներից և բարեկամների նամակներից տեղեկացանք, որ ամբողջ Սիրիայի տերիտորիայի վրա ազգայնացվել են բոլոր տեսակի մասնավոր դպրոցները, այդ թվում նաև՝ շուրջ 80 հայկական դպրոցներ: Շենքերը գրավված են, հայ տնօրեններն ու ուսուցիչները հեռացված են, և դպրոցների անունները՝ արաբականացված: Նամակագիրները խնդրում են մեզ դադարեցնել մեր բոլոր առաքումները սիրիահայ դպրոցների համար:

Ծանր վիճակ է ստեղծվել սիրիահայ համայնքի կյանքում՝ բազմահազար հայ պատանիներ գրկվել են հայեցի դաստիարակությունից:

Սիրիահայ համայնքը միշտ էլ հավատարմորեն ծառայել է սիրիական հայրենիքին, որի պաշտպանության համար երբեք չի խնայել նաև իր որդիների կյանքը: Թե անգլո-ֆրանսիական գաղութարարների, թե՛ ամերիկյան մոնոպոլիաների և թե՛ իսրայելական նախահարձակների դեմ հայ ժողովուրդը միշտ էլ կանգնել է արաբ եղբոր կողքին, այժմ էլ իսրայելա-սիրիական սահմանն են պաշտպանում հայ և արաբ երիտասարդները միասնաբար:¹⁶⁷

Սիրիացի արաբ ժողովուրդը ջերմ ասպնջականությամբ հյուընկալել է եղեռնից փրկված հայ գաղթականներին, որոնց հետ կիսել է իր հացն ու հողը, տուն և գործ է տվել նրանց:

Հայ ժողովուրդը երախտապարտ է եղել այս բոլորի հանդեպ, սակայն վերջին իրադարձությունը ցնցել է համայնքը, և այժմ տիրում է հուզումնալի և դառնադեմ կացություն: Ժողովուրդը գտնվում է շփոթված վիճակում: Ըստ հասած լուրերի, ԱՆՉԱՆ¹⁶⁸ դարձյալ սկսել է ակտիվանալ, որպեսզի հայ զանգվածներին փոխադրի հեծավոր Կանադա, Ավստրալիա կամ այլուր: Սիրիահայ ժողովրդի համար սկսվում է մի նոր գաղթականություն, նոր պանդխտություն: Մակայն, ինչպես Ձեզ հայտնի է, սիրիահայությունը մեծապես տենչում է վերադառնալ իր Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստան:

Ձեր ուշադրությանը ներկայացնելով մեր ժողովրդի մի մեծ հատվածի համար կենսական նշանակություն ունեցող այս հարցերը, խնդրում ենք Ձեր կարգադրությունները:

Կից ներկայացնում ենք սիրիահայ ուսուցիչ Հովսեփ Ծատարնյանի պատմածների գրառումը՝ սիրիահայ դպրոցների արդի վիճակի մասին և Հայ Մարմ-

167. 1967թ. հունիսի 6-ին իսրայելական զորքերը հարձակվեցին հարևան արաբական երկրների վրա: Վեցօրյա պատերազմի ավարտին Իսրայելը գրավեց Սիրիային պատկանող Գոլանի բարձունքների շրջանը:

168. ԱՆՉԱՆ՝ Անտոն հայերի ամերիկյան ազգային կոմիտեի անգլերեն անվան հապավումը: Ստեղծվել է Մերձավոր Արևելքի ու Բալկանյան երկրների գաղթօջախների հայերին ԱՄՆ տեղափոխելու նպատակով:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ա. ՔՈԶԻՆՅԱՆԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑՈՎ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅԵՐԻ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՏՐԱՄԱՐՈՒԾ
ԿՏԱԿՆԵՐԻ ՏԵՕՐԻՆԱՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական Բարեգործական ընդհանուր միությունը իր գործունեությամբ սփյուռքում արժանացել է հայ հասարակական որոշ խավերի վստահությանը: Այդ է պատճառը, որ շատ հայեր /գլխավորապես ԱՄՆ-ում/ իրենց խնայողություններից զոյացած գումարները հանձնում են Բարեգործականին՝ այդ մարմինը նկատելով որպես հաստատություն, որը կարող է կատարել իրենց կամքը:

Բարեգործականին հանձնած կտակների մի զգալի մասը վերաբերվում է Հայաստանին, Երևանի համալսարանին: Շատ կտակներ կատարվեցին հատկապես վերջին մեկ-երկու տասնամյակների ընթացքում: Ներկայումս ամեն տարի Բարեգործականի գծով կատարվում է 100 հազար դոլարը՝ գերազանցող 2-3 կտակ: Վերջին տարիների կտակներից են.

Խաչիկ Դերձակյան ֆոնդը՝ 176 հազար դոլար /1963թ./

Գրիգոր Գուրոնյան ֆոնդը՝ 200 հազար դոլար /1965թ./

Սուրեն Հանեսյան ֆոնդը՝ 200 հազար դոլար /1965թ./

Ստեփան Տեր-Այվազյան /Այվազ/ ֆոնդը՝ 154 հազար դոլար /1966թ./, և այլն:

Բարեգործականի ֆոնդերից է նշանավոր Ռաֆայել Մարկոսյան ֆոնդը, որի մեծ մասը պատկանում է Հայաստանին: Մելքոնյան ֆոնդի Երևանի համալսարանին վերաբերող բաժինը 30 տարվա ընթացքում հասած կլինի մոտ 300 հազար դոլարի:

Սակայն Հայաստանը չի օգտվում ոչ միայն վերոհիշյալ, այլև մյուս ֆոնդերից, իսկ դա եղել է կտակարարների կամքը:

Մեզ հասած ոչ լրիվ տվյալներով, վերջին 2-3 տասնամյակների ընթացքում Հայաստանին կտակված գումարները հասնում են 5 միլիոն դոլարի:

Բարեգործականի պարբերականները երբեք ճշգրտորեն չեն հրապարակում կտակներում եղածը:

Ամերիկահայ փաստաբան Արման Կիզիրը մեր կոմիտեին ուղղված նամակներից մեկում գրում է. «Այդ կարելի է ստուգել Բարեգործականի քով վերապահված կտակներու ընթերցումեն, եթե Բարեգործականը բարեհաճի իր տետրակները բանալ: Սակայն ո՞վ է հետաքրքրվողը, հետապնդողը, հետազոտողը, պահանջողը...»:

Բարեգործականի մոտ իբրև ավանդ դրված են նաև հայրենակցական միությունների գումարներից՝ քղեցի Փիթըր Դազարյանը 50 հազար դոլար է կտակել Նոր Քղի /Գեղի/ ավանին: Սակայն Բարեգործականը զանազան անհիմն պատճառաբանություններով ընթացք չի տալիս Համաքղեցիական միության դիմումներին:

Տեսնելով, որ Սովետական Հայաստանը հետաքրքրություն հանդես չի բերում իրեն պատկանող գումարների խնդրում, ՀԲԸ Միության ղեկավարները օգտագործում են այդ հանգամանքը, որպեսզի հավատացնեն, թե Սովետական

Հայաստանը հրաժարվում է այդ գումարներից: Դրանով իսկ նրանք Սովետական Հայաստանին պատկանող գումարները ազատ տնօրինելու իրավունք են ուզում ձեռք բերել: Վերջերս ՀՀ Միության նախագահ Ալեք Մանուկյանը¹⁶⁹ դիմել է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին, խնդրելով միջնորդ հանդիսանալ Հայաստանի կառավարության առաջ, որպեսզի իրենց արտոնվի տնօրինելու Հայաստանի անունով դրված ֆոնդերի տոկոսներից գոյացած միջոցները:

Ճիշտ չէր լինի ՀՀ Միության ղեկավարությանը նման արտոնություն տալը, որովհետև դրանով կանտեսվեր կտակարարների կամքը, իսկ դա բացասաբար կանդրադառնար Հայաստանի գծով առաջիկայում կտակներ անելու պատրաստակամ անձանց վրա: Առաջիկա տարիներին /մեկ տասնամյակից ոչ ավելի/ Սովետական Հայաստանի անունով սպասվում են բազմաթիվ կտակներ, որոնց չափերը անհամեմատ կգերազանցեն նախորդ տարիների գումարները: Կյանքից հեռանում է Արևմտյան Հայաստանում ծնված, եղեռնը տեսած ու տառապած հայրենասեր մի սերունդ, որը հպարտանում է Մայր Հայրենիքի վերածնունդով ու առաջադիմությամբ՝ Սովետական Հայաստանի գոյության ու բարգավաճման մեջ տեսնելով անմեղ զոհերի հիշատակը, նվիրական իդեալի մարմնավորումը: Այդ սերունդն իր խնայած միջոցներով ուզում է մասնակից լինել Մայր Հայրենիքի շինարարությանը:

Բարեգործականին նման արտոնություն տալու փաստը կօգտագործեին Սովետական Հայաստանի նկատմամբ անբարյացակամորեն տրամադրվածները՝ ի լուր ամենքի հայտարարելով, որ Սովետական Հայաստանը չի ընդունում իր սփյուռքահայ զավակների մասնակցությունը Մայր Հայրենիքի վերելքի գործին, չի հարգում նրանց հայրենասիրական զգացմունքները:

Իրենց կյանքի վերջալույսն են ապրում հայրենակցական միությունները, գլխավորապես գյուղական, որոնց թիվը 200-ից անցնում է: Նրանց հետ լավ աշխատելու դեպքում առաջիկա 5-6 տարիների ընթացքում հնարավոր է 1-1,5 միլիոն դոլար դնել Հայաստանի կառավարության տրամադրության տակ՝ գիտական ու բժշկական սարքավորումներ ձեռք բերելու համար:

Հայրենակցական միությունների մեծագույն մասի ցանկությունն է եղած միջոցները ամբողջովին տրամադրել Մայր Հայրենիքին: Նրանց միակ խնդրանքն է Սովետական Հայաստանում որևէ ձևով հավերժացնել Առաջին աշխարհամարտի ժամանակ կործանված հայրենի գյուղի կամ քաղաքի անունը /ավանի, փողոցի, դպրոցի, գրադարանի, սրճարանի անվանակոչություն, աղբյուր-հուշարձանի կառուցում և այլն/:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն նպատակահարմար է գտնում:

1. Բանակցությունների մեջ մտնել Հայկական Բարեգործական ընդհանուր միության /ԱՄՆ/, ինչպես նաև Եվրոպական բաժանմունքի ղեկավարների հետ, որպեսզի Սովետական Հայաստանին պատկանող գումարները փոխադրվեն Եվրոպա, որտեղից համեմատաբար ավելի դյուրին է օգտագործել իրենց նպատակին:

2. Եթե դա չհաջողվի, ապա բանակցությունների միջոցով հասնել նրան, որ Բարեգործականը հայկական ֆոնդերից¹⁷⁰ կարողանա օգտվել միայն մեր համաձայնությամբ:

3. Հայրենակցական միությունների հետ բանակցությունների մեջ մտնել Սովետական Հայաստանին հատկացվող գումարները Եվրոպա փոխադրելու համար:

4. Աշխատանք տանել /հատկապես ԱՄՆ-ում/, որպեսզի Սովետական Հայաստանի համար կատարվող կտակները գրվեն իրավաբանորեն ճիշտ /շատ կտակներից այժմ օգտվել հնարավոր չէ, որովհետև ճիշտ չեն կազմված/:

Վերոհիշյալ խնդիրների հետ մոտիկից ծանոթանալու և կենդանի բանակցությունների միջոցով դրանց կարգավորման ուղիներ գտնելու համար Կոմիտեն նպատակահարմար է գտնում, որպեսզի Կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Անդրանիկ Մարտիրոսյանը անհատական տուրիզմի գծով 20-25 օրով մեկնի Ֆրանսիա /բանակցություններ վարելու Բարեգործականի եվրոպական բաժանմունքի ղեկավարության հետ/ և ԱՄՆ /բանակցելու Բարեգործականի Կենտրոնական վարչության, ինչպես նաև հայրենակցական միությունների ղեկավարների և առանձին անհատ գործիչների ու բարերարների հետ/:

Մենք նկատի ունենք ընկ. Ա. Մարտիրոսյանի թեկնածությունը, որովհետև նա ոչ միայն լավատեղյակ է կտակների գործին, այլև տիրապետում է անգլերենին, որը նրան հնարավորություն կտա փաստաթղթերով ստուգել կտակների աուկայությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 29, թթ. 1-4: Պատճեն: Սեքրեմարի:

169. Մանուկյան Ալեք Թադևոսի (1901, ավան Բասաբա, Ջմյուռնիայի շրջան – 1996, Դեսոբոյ) – Սփյուռքահայ հասարակական գործիչ, մեծահարուստ, արդյունաբերող ինժեներ, Հայկական Բարեգործական ընդհանուր միության նախագահ (1953-1989), 1989-ից մինչև մահը՝ ՀՀԸՄ ցկյանս պատվո նախագահ, ազգային բարերար, ՀՀ ազգային հերոս (1994): 1968-ին հիմնել է «Ալեք Մանուկյան մշակութային հիմնադրամը», որի նպատակն էր զարգացնել սփյուռքահայ մշակույթը, խրախուսել սփյուռքահայ ստեղծագործողներին: Մեծապես օգնել է սփյուռքահայ հասարակական կազմակերպություններին, դպրոցներին, գրադարաններին և գիտական կենտրոններին, Հայրենիքի ուսումնական հաստատություններին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Մեծ ներդրում ունի Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման գործում:

170. «Հայկական ֆոնդեր» ասելով Վ. Համազասպյանն այստեղ նկատի ունի Խորհրդային Հայաստանին հատկացված ֆոնդերը:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԴԽԱՅ ԼԱՍԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԱՍԱԳԱՅ
Բ. ՍՈՒՐԱՂՅԱՆԻ ԵՎ ՖԻԼԱՆՍՆԵՐԻ ԼԱՍԱՐԱՐ Ա. ՇԵԿՈՅԱՆԻ
ԿՈՄԻՏԵԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԱՆՂՐԱԺԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի աշխատանքները մեծապես աճել ու ծավալվել են. ակտիվ կապեր են ստեղծվել շուրջ 1000 սփյուռքահայ կազմակերպությունների ու ավելի քան 2000 անհատ գործիչների հետ, որոնց հասցեներով ուղարկում ենք տասնյակ հազարներով գրքեր, զանազան լուսանկարային հավաքածուներ, կինոֆիլմեր, ձայնապնակներ, լաբորատոր սարքավորումներ, դասագրքեր, թերթեր, ամսագրեր և այլ նյութեր: Աշխատանքի մեծ ծավալը նկատի ունենալով դեռ 1967 թվի հուլիսի 22-ին դիմել էինք Մինիստրների սովետին՝ հաստիքների ավելացման համար, սակայն մեր հարցմանը ֆինանսների մինիստրի տեղակալ ընկ. Ց. Պալյանը իր 13/7-67թ. նո. 4-1 գրությամբ գտել է նպատակահարմար նախատեսել 1968թ. բյուջեի նախագծում, միջոցներ՝ լրացուցիչ միավորներ պահպանելու համար: Այդ եզրակացության հետ հուլիսի 22-ին նո. 94-3077 գրությամբ համաձայնվել էր Մինիստրների սովետի նախագահի տեղակալ ընկ. Լ. Ստեփանյանը: Սակայն 1968թ. Կոմիտեն չստացավ ոչ մի լրացուցիչ հաստիք: Մենք ստիպված ենք նորից բարձրացնել լրացուցիչ հաստիքների հարցը, նկատի ունենալով այն ծանր վիճակը, որ ապրում է Կոմիտեն աշխատանքների ընդլայնման հետևանքով:

Կոմիտեն կապեր է պահում սփյուռքահայ բոլոր գաղթօջախների հետ, բայց մի շարք երկրներում սկսել են կազմակերպվել նոր օջախներ, ինչպես Կանադա, Ավստրալիա, Քուվեյթ: Մի շարք երկրների գաղթօջախները կարիք ունեն խորապես ուսումնասիրվելու և կապերի ծավալման հնարավորություններ որոնելու, ինչպես Թուրքիա, Իրան, Իրաք: Ակտիվացել են նաև Լեհաստանի, Հունգարիայի, Հոլանդիայի, Շվեյցարիայի, Բելգիայի և Ավստրալիայի հայ գաղթօջախները: ԱՄՆ-ի գաղթօջախը հաշվում է շուրջ 400 հազար հոգի, այնտեղ գործում են մի քանի հարյուր կազմակերպություն, հրատարակվում են բազմաթիվ թերթեր ու ամսագրեր, գործում են մի քանի տասնյակ ռադիոժամեր: Սակայն ամբողջ ԱՄՆ-ին սպասարկում է միայն մեկ խորհրդական, իսկ դա ֆիզիկապես հնարավոր չէ: Կոմիտեն դեռևս աշխատում է իր սկզբնական կոմպլեկտավորումով: Անհրաժեշտ են նոր խորհրդականներ՝ բոլոր հին ու նոր գաղթօջախների հետ կապերը զարգացնելու համար թե՛ խորությամբ և թե՛ ծավալով:

Սփյուռքում լույս են տեսնում տասնյակ հայկական թերթեր ու ամսագրեր նաև անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն: Նման պարբերականների թիվը տարեցույտի ավելանում է, որովհետև գնալով ավելանում են նաև հայերեն չիմացող երիտասարդները: Որպեսզի կարողանանք նրանց կապել Մայր Հայրենիքին, ծանոթացնենք Սովետական Հայաստանի նվաճումների հետ, անհրաժեշտ է, որ մեր մամուլի բաժինը կապ հաստատի և Սովետական Հայաստանի կյան-

քը պատկերող բազմազան նյութեր ուղարկի մամուլի այդ օրգաններին նաև համապատասխան լեզուներով /անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն/:

Խիստ կարևորություն ներկայացնող այս գործը կազմակերպելու համար մամուլի բաժնում պետք է ունենալ անգլերենին տիրապետող թարգմանիչ-խորհրդական:

Կոմիտեն ունի նախագահի 3 տեղակալներ, տարբեր բաժիններ՝ բաժնի վարիչներով ու խորհրդականներով, երկու խմբագրություն:

Շատ հաճախ Կոմիտեում տեղի են ունենում հանդիպումներ սփյուռքահայ հասարակական ու քաղաքական գործիչների, գրողների ու արվեստագետների հետ, որոնց հարցազրույցները սղագրվում են և կազմվում արձանագրություններ՝ գրույցների բնույթն ու բովանդակությունը վերադաս մարմիններին հաղորդելու նպատակով: Այդ բոլոր աշխատանքները համադրելու, Կոմիտեի և բաժինների ու խմբագրությունների միջև աշխատանքը առավել կազմակերպված տանելու, ինչպես նաև Կոմիտեի նախագահին այցելող բազմաթիվ հյուրերի ու տուրիստների պահանջները անմիջականորեն բավարարելու և եղած առաջարկություններին ընթացք տալու համար անհրաժեշտ է ունենալ նաև նախագահի օգնականի մեկ հաստիք:

Տարեկան հարյուր հազարավոր հասցեներ ենք բազմացնում պարբերականներ ու գրքեր սփյուռք ուղարկելու համար, որի վրա տարեկան ծախսվում են հսկայական միջոցներ: Կոմիտեի նախաձեռնությամբ, հայրենակցական միությունների միջոցներով ԱՄՆ-ից ստացվել է հասցեագրող հատուկ մեքենա, սակայն մեքենան դատապարտված է անգործության, մինչդեռ հաստիք ունենալու դեպքում միջոցների խնայողություն կլիներ և առաքումները կկատարվեին առավել կազմակերպված և արդյունավետ:

Սփյուռքում բազմաթիվ հայեր գրկված են մայրենի լեզվի խմբությունից և նրանց հետ կապը պահպանվում է օտար լեզվով: Առանց մեքենագրողի՝ մեր աշխատանքները տուժում են մեծապես:

Կապերի ընդլայնման հետևանքով բազմապատկվել են նամակագրությունն ու բազմապիսի գրագրությունները, զեկուցումներն ու առաքումները, որը անհնար է հասցնել գոյություն ունեցող հաստիքներով: Մեկ նոր հայերեն մեքենագրողի պահանջը նույնպես դարձել է անհրաժեշտություն:

Կոմիտեն ունի մեծ քանակությամբ գույք, հուշանվերներ, գրականություն, և սփյուռքից հաճախ ստանում է գրականություն, մեքենաներ և այլ նյութեր: Այդ բոլորը պահպանելու համար անհրաժեշտ է ունենալ հատուկ պահեստապետ:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը 1968 թվի համար Կոմիտեին լրացուցիչ հատկացնել հետևյալ հաստիքները. նախագահի օգնական՝ 1, խորհրդականներ՝ 3, մեքենագրող հայերեն լեզվով՝ 1, օտար լեզվով մեքենագրող՝ 1, պահեստապետ՝ 1, օտար լեզվով հասցեներ բազմացնող մեքենայի վրա աշխատող՝ 1: Ընդամենը 8 հաստիք:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍՓՅՈՒՌԱՅԱՅ ԱՎԱՆԱԿՈՐ ԵՐԱԺԻՇՏ Բ. ԿԱՆԱԶՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ԵՎ ՆՐԱ ԱՅՐՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱԿԻՐԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Բարսեղ Կանաչյանը՝ Կոմիտասի արժանավոր աշակերտներից մեկը, սփյուռքահայ երաժշտության ամենաակնազարկ գործիչներից էր։ Երաժշտական-կատարողական, խմբավարական և մանկավարժական բազմաբնույթ գործունեության հետ, նա արդյունավետ զբաղվել է նաև ստեղծագործելով։ Նրա գրչին են պատկանում մի քանի տասնյակ խմբերգեր և մեներգեր, այդ թվում՝ խոշոր կտավի երգչախմբային գործեր, որոնք այժմ են ընկնում հուզական մեղեդիներով, ազգային մաքուր նկարագրով, երգչախմբային խիստ և ամփոփ հնչականությամբ։ Նրա ամենախոշոր և արժեքավոր երկը «Աբեղա» օպերան է՝ գրված Շանթի¹⁷¹ «Հին աստվածներ» դրամայի թեմատիկ նյութերով։

Բարսեղ Կանաչյանը կապված էր Սովետական Հայաստանի հետ և ջերմ փափագ ուներ այցելելու Հայրենիք։

Նա վախճանվեց 1967թ. մայիսի 21-ին, Բելյուրում։

Բարսեղ Կանաչյանի այրին՝ տիկին Քրիստինե Կանաչյանը, Միհրան Թումանյանին¹⁷² զրած նամակում պատրաստակամություն է հայտնել իր ամուսնու արխիվը՝ նամակներ, լուսանկարներ, երաժշտական ձեռագրեր, որոնց մեջ «Աբեղա» անտիպ օպերայի կլավիրները և պարտիտուրը, անձամբ հանձնել Երևանի Գրականության և արվեստի թանգարանին։

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն նպատակահարմար է գտնում ընդառաջել սփյուռքահայ նշանավոր գործիչ Բարսեղ Կանաչյանի այրուն՝ տիկին Քրիստինե Կանաչյանին տասնհինգ օրով հրավիրել Հայրենիք։

Տիկին Կանաչյանի ճանապարհի և այստեղ մնալու ծախսը Կոմիտեն վերցնում է իր վրա։

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը։

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 26, թ. 6: Պատճեն: Մեքենագիր:

171. Շանթ (Մեղրյան, բուն ազգանունը՝ Նաղաշպետյան) Լեոն (1869, Սյուրտար, Կ. Պոլիս - 1951, Բելյուր) - Գրող, մանկավարժ, պետական և հասարակական գործիչ: Ավարտել է Սյուրտարի ճեմարանը, սովորել Էջմիածնի Գեորգյան ճեմարանում: Բարձրագույն կրթությունն ստացել է Գերմանիայի համալսարաններում: Աշխատակցել է թերթերի, գրել մի շարք վեպեր ու թատերախաղեր: Զբաղվել է նաև քաղաքական գործունեությամբ: Հիմնադրել անդամ Թիֆլիսի «Վերնատուն» գրական խմբակի և Համազգային հայ կրթական և մշակութային միության: Եղել է Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի պատգամավոր, Համազգայինի Բելյուրի շաղկապների (հետագայում՝ Նշան Փալանճյան ճեմարան) առաջին տնօրենը:

172. Թումանյան (ազգանվան ճիշտ ձևն է) Միհրան Թովմասի (1890, Կյուրիկ, Մեքսիկայի նահանգ - 1973, Երևան) - Երաժշտագետ, ազգագրագետ-բանահավաք: Կրթությունն ստացել է Մեքսիկայի ամերիկյան դպրոցում, ապա Մարգվանի կոլեջում, ավարտել Կ. Պոլսի համալսարանը: Աշակերտել է Կոմիտասին: Կազմակերպել է «Հայ երգ» երգչախումբը ԱՄՆ-ում, հավաքել և գրի առել հարյուրավոր ժողովրդական երգեր ու բանահյուսական նյութեր: 1965թ.ին հայրենադարձվել է, աշխատել ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում: Նրա հավաքած նյութերով լույս են տեսել «Հայրենի երգ ու բան» երեք հատորները՝ 1973-1986թթ.ին:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՔՈՇԻՆՅԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՄԵԿԱՌԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱՇԱՏ ՔԱՂԱՔՆԵՐ ՀՅՈՒՐԱՆԱԴՐԵՐԻ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ֆրանսիայի սովետական դեսպանությունը գնահատելով այն բարերար ազդեցությունը, որ ունի Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Ֆրանսիայում բնակվող հայ զանգվածների վրա, ընդունել է Բարեգործականի Եվրոպական բաժանմունքի առաջարկը՝ առաջիկա համագումարի կապակցությամբ Փարիզ հրավիրել Սովետական Հայաստանի կատարողական արվեստի մի խումբ ներկայացուցիչների: Այդ խումբը լինելու է ոչ միայն Բարեգործականի, այլև ԺԱՖ-ի, Ֆրանսահայ մշակութային միության հյուրը և համերգներով հանդես է գալու Ֆրանսիայի հայաշատ քաղաքներում:

Միաժամանակ հայտնում ենք, որ Անգլիայի սովետական դեսպանությունը նպատակ ունենալով ընդլայնել ու սերտացնել Սովետական Հայաստանի և Անգլիայի հայ գաղութի միջև եղած կապերը, ինչպես նաև ուժեղացնել իր ազդեցությունը հայրենասեր հայ զանգվածների վրա, ընդառաջել է Լոնդոնի Հայ տան խնդրանքին և դիմել է ՀՍՄՀ Արտաքին գործերի մինիստրությանը՝ խնդրելով մի խումբ արվեստագետների ուղարկել Անգլիա:

Նկատի ունենալով Ֆրանսիայի և Անգլիայի սովետական դեսպանությունների ներկայացրած առաջարկները, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն նպատակահարմար է գտնում տասը հոգուց բաղկացած արվեստագետների մի խումբ մայիսի 20-28-ը գործուղել Անգլիա, որից հետո՝ 15 օրով Ֆրանսիա:

Կոմիտեն առաջարկում է հետևյալ կազմը.

1. Մարտիրոսյան Անդրանիկ - խմբի ղեկավար
2. Միրաքյան Վահան - ՀՍՄՀ վաստակավոր արտիստ, օպերային թատրոնի մեներգիչ
3. Գալաջյան Գոհար - ՀՍՄՀ ժող. արտիստուհի, օպերային թատրոնի մեներգչուհի
4. Աբրահամյան Մեդեա - ՀՍՄՀ վաստակավոր արտիստուհի, Հայֆիլհարմոնիայի թավջութակահար
5. Ահարոնյան Ռուբեն - ջութակահար, Չայկովսկու անվան մրցանակի դափնեկիր
6. Հարությունյան Ալեքսանդր¹⁷³ - կոմպոզիտոր, դաշնակահար, ՀՍՄՀ ժող. արտիստ, հանրապետական մրցանակի դափնեկիր
7. Բաբաջանյան Առնո - կոմպոզիտոր, դաշնակահար, ՀՍՄՀ ժող. արտիստ, հանրապետական մրցանակի դափնեկիր

173. Հարությունյան Ալեքսանդր Գրիգորի (1920, Երևան) - Երգահան, ՀԽՍՀ (1962) և ԽՍՀՄ (1970) ժողովրդական արտիստ: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործության և դաշնամուրի բաժինները: 1954-1991թթ. եղել է Հայֆիլհարմոնիայի գեղարվեստական ղեկավարը: Հեղինակ է երաժշտական տարբեր ժանրերի բազմաթիվ ստեղծագործությունների՝ օպերա, սիմֆոնիկա, կոնցերտներ են.:

8. Ավետիսյան Խաչատուր¹⁷⁴ – կոմպոզիտոր, մենակատար, ՀՍՍՀ արվեստի վաստ. գործիչ¹⁷⁵

9. Առաքելյան Յուրի – մենակատար /սրինգ/

10. Հարությունյան Մարիանա – դաշնակահարուհի, ՀՍՍՀ վաստակավոր արտիստուհի:

Խմբի ղեկավար առաջարկելով Կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Անդրանիկ Մարտիրոսյանի թեկնածությունը, մենք նկատի ունենք հետևյալը. Բարեգործականի առաջիկա համագումարին կմասնակցի Հայկական բարեգործական ընդհանուր միության ղեկավարությունը Ալեք Մանուկյանի գլխավորությամբ /ԱՄՆ/: Կոմիտեն անհրաժեշտ է գտնում Բարեգործականի մոտ գտնվող և Հայաստանին պատկանող գումարների առնչությամբ բանակցությունների մեջ մտնել Բարեգործականի ինչպես ընդհանուր կենտրոնի, այնպես էլ Եվրոպական բաժանմունքի ղեկավարների հետ՝ վերականգնելու մեր իրավունքները: Նույն խնդիրների կապակցությամբ 1968թ. մարտի 15-ի Ձեզ ուղղված նամակում մենք հիմնավորել էինք ընկ. Ա. Մարտիրոսյանի Ֆրանսիա կատարելիք այցելության անհրաժեշտությունը:

Մեծ կարևորություն տալով վերոհիշյալ խնդիրների լուծմանը, Կոմիտեն անհրաժեշտ է համարում, որ արվեստագետների այդ խումբը ղեկավարի Կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Անդրանիկ Մարտիրոսյանը:

Մեկնող խմբի ճանապարհածախսը սովետական դրամով Կոմիտեն վերցնում է իր վրա, իսկ տեղերում ծախսերը հոգալու են հրավիրողները:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի Նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 26, թթ. 11-12: Պատճեն: Մեքենագիր:

174. Ավետիսյան Խաչատուր Մեխակի (1926, Լենինական, այժմ՝ Գյումրի -1996, Երևան) – Երգահան, քանոնահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1984), պրոֆեսոր: Երաժշտական կրթությունն ստացել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական դպրոցում և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որտեղ հետագայում դասավանդել է: Ղեկավարել է քանոնահարների համույթ, 1958-1972թթ. եղել է Հայաստանի պարի պետական անսամբլի երաժշտական ղեկավարը, 1972-1978թթ.՝ Հայաստանի երգի-պարի պետական անսամբլի գեղարվեստական ղեկավարը: Հորինել է կանտատներ, սոնատներ, երգեր, պարեղանակներ, երաժշտություն կինոյի և թատրոնի համար:

175. Ինչպես նշվել է նախորդ ծանոթագրության մեջ, իս. Ավետիսյանը արժանացել է ՀՍՍՀ ժողովրդական արտիստի և ոչ թե ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՍՈՒՋԻՆ ՔԱՐՏՈՒՐԱՐ Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅ ՈՒՂԻՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արտասահմանյան բազմաթիվ երկրներում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Կիպրոսում և այլուր կազմակերպված են մի քանի տասնյակ հայկական ռադիո-ժամեր, որոնց նպատակն է տեղի հայ զանգվածներին օրվա նորությունները մայրենի լեզվով պատմել Սովետական Հայաստանի կյանքի, տնտեսական ու մշակութային նվաճումների մասին:

Հայկական ռադիոժամերը հայ լեզվի պահպանմանը, հայ մշակույթի տարածմանը մեծապես նպաստող ազդակներ են: Շատ բնակավայրերում նրանք փոխարինում են հայերեն թերթերին և դպրոցներին: Նրանց հաղորդումները, որ գաղթօջախներում արդեն դարձել են պահանջ, ընդունվում են խանդավառությամբ ու հետաքրքրությամբ:

Բազմահազար հայերին Սովետական Հայաստանի մասին ճշմարտությունը պատմող այդ հաղորդումները, ինչ խոսք, չէին կարող վրիպել արևմտյան կառավարող և ռեակցիոն շրջանների ուշադրությունից:

Նրանք մեծագումար ծախսեր են ներդնում ձեռք բերելու համար այդ ռադիոների ղեկավարությունը: ԱՄՆ-ում «Ամերիկայի ձայն», Արևմտյան Գերմանիայում «Ազատության ձայն» և այլ ռադիոկայանների հայկական հաղորդումները ուղղակի կերպով ֆինանսավորում և ղեկավարվում են ամերիկյան իշխանությունների կողմից: Լիբանանի ռադիոժամի նկատմամբ, կառավարող շրջանների հովանավորությամբ, ազդեցություն են գործում դաշնակցականները: Սակայն ափսոսաբանաբար առաջադիմական կազմակերպություններն ու հայրենասեր գործիչները ամեն ջանք գործադրում են հակազդելու ռեակցիոն շրջաններին և շարունակելու հայրենասիրական հաղորդումները: Այժմ բուռն պայքար է մղվում առաջադիմական և հետադիմական ուժերի միջև՝ տիրելու համար այդ ռադիոկայաններին: Հայրենասիրական ուժերը հենվում են Սովետական Հայաստանի աջակցության վրա: Բայց եթե ամերիկյան պրոպագանդիստական մեքենան օժանդակում է հակասովետական ուժերին, ապա մեր բարեկամները շատ քիչ աջակցություն են ստանում մեր կողմից: Մեր կոմիտեի կողմից առաքվող ձայնագրությունները շատ հեռու են նրանց պահանջները բավարարելուց: Հայկական ռադիոժամերի հետ կապված հարցերի ուսումնասիրությունը և սովետական դեսպանություններից ստացված տեղեկությունները մեզ բերել են այն եզրակացության, որ առանց մեր լուրջ ծանդակության, այդ ռադիոժամերը ի վիճակի չեն լինի հաջողությամբ շարունակելու իրենց հայրենասիրական գործողությունը և ստիպված կլինեն զիջելու դիրքերը:

Ուժերի բախման օրինակ է Կիպրոսի հայկական ռադիոժամի հաղորդումների շուրջ ծավալվող պայքարը: Կիպրական կառավարությունը հարգեց հայերի խնդրանքը՝ հայկական հաղորդումներ կատարելու պետական ռադիոյով, սակայն պայմանով, որ երկու հակադիր ուժերն էլ իրենց մասնակցությունը բերեն այդ գործին: Դաշնակցականները անմիջապես ակտիվացան և ռադիոժամի

գլխավոր տնօրեն առաջարկեցին կիպրահայ համայնքի հոգևոր հովվին, որը Անթիլիասական կաթողիկոսության ներկայացուցիչն է Կիպրոսում: Առաջադիմական ուժերը ընդդիմացան: Կազմվեց հանձնախումբ՝ ներկայացուցիչների հավասար թվով, իսկ նախագահ ընտրվեց կիպրոսցի մի հոյն: Պայքարը ավելի բուռն բնույթ ստացավ հաղորդումների հարցում. մինչ դաշնակցականները ուզում էին գործել Բեյրութի օրինակով, այսինքն Անթիլիասի թեմանդրանքով, հայրենասեր ուժերը անցկացրին իրենց տեսակետը, շեշտը դնելով Սովետական Հայաստանի աջակցության վրա: Այս առթիվ, ռադիոժամի տնօրեն Բ. Փափաղոպուլոսը մեր կոմիտեին ուղղված նամակում գրեց.

«Կիպրոսի ռադիոն հայերեն հաղորդումները ավելացնում է շաբաթական եւ մեկ ժամով: Մեր հայերեն հաղորդումները լսվում են ոչ միայն Կիպրոսում, այլ նաև մերձավորարևելյան շատ երկրներում, հատկապես Լիբանանում: Խնդրում ենք Ձեր կոմիտեին օգնել մեզ երաժշտությամբ, ձայնապնակներով, հայկական արվեստի և մշակույթի վերաբերյալ դասախոսություններով և զրույցներով»:

Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության տնօրեն Ա. Պետյանը¹⁷⁶ ավելացնում է.

«Կիպրոսի ռադիոկայանի վարչությունը որոշեց շաբաթական երկու ժամ տրամադրել հայկական ժամին: Այս գեղեցիկ առիթը լավագույնս օգտագործելու համար անհրաժեշտորեն պետք ունինք բազմաթիվ երգացանկներու, ասմունքներու և այլն: Վստահ եմ՝ Ձեր ուշադրությունեն չի վրիպիր հարցին կարևորությունը, և կջանաք առավելագույն չափով օգտակար ըլլալ»:

Հայկական ռադիոժամ է գործում նաև Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում, որի ժամերը նույնպես ավելացան նոր տարվանից սկսած:

Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում ավելի քան 33 տարի է, ինչ գործում է «Ռադիո Արմենիան», որի տնօրենն է հայրենասեր գործիչ Հարություն Ռուբենյանը: Հիմնադրության 33-րդ տարեդարձի առթիվ «Ռադիո Արմենիայի» տնօրենը մեր կոմիտեին ուղարկած նամակում գրեց:

«Անկեղծորեն խոստովանինք, որ ազգապահպանման նվիրական տեսչական է, որ մեզ կապած է այս դժվար, փշոտ, սակայն անուշիկ գործին, որ կկատարենք անտրտուն»:

Անմահ ուրախությամբ կստանանք Ձեր ուղարկած գրական-գեղարվեստական բոլոր մեծ ու փոքր ծրարները: Հուզմունքով և հիացմունքով կհետևինք Հայրենիքի շինարարությանը: «Ռադիո Արմենիայի» ունկնդիրները մասնավոր ուշադրությամբ կհետևին այն հաղորդումներուն, որ մենք կհրամցենք Հայրենիքին մասին»:

Մոնտեվիդեոյում հայրենասիրական եռանդուն գործունեություն է ծավալում նաև «Հայաստանի արձագանք» ռադիո լսարանը, որը ջանք չի խնայում Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման ու հայ զանգվածներին հայեցի դաստիարակման ուղղությամբ:

Հայկական ռադիոժամեր են գործում նաև Բրազիլիայում՝ «Մելոդիաս Արմենիա» և «Հայաստանի ձայն»:

176. Ասատուր Պետյան:

ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքի «Հայկական ռադիոժամի» ղեկավարն է հայրենասեր, ազգային-հասարակական ակտիվ գործիչ Արա Շիրազյանը, որի ջանքերի շնորհիվ մեծ չափերով ամրապնդվել է ամերիկահայ գործարար շրջանների կապը Սովետական Հայաստանի հետ:

ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում գործում է Հարություն Հադիկյանի «Ամերիկահայ ռադիո և հեռուստատեսության ժամը», որը հաճախակի խնդրում է հայկական կինոնկարներ, ռադիոհաղորդումներ, ձայնաձայնակներ, ձայնապնակներ և այլ նյութեր:

Նա գրում է.

«Ինձ համար մեծ ուրախություն կլինի մշակութային հարաբերություններ զարգացնել մեր երկու երկրների ռադիոյով և հեռուստատեսությամբ»:

ԱՄՆ-ի Դետրոյթ քաղաքում գործող «Հայկական ռադիոժամը» գլխավորում է Ալիս Տեր-Վարդանյանը: Նա Կոմիտեին ուղղված նամակում գրում է.

«Շնորհակալությամբ ստացա Ձեր ուղարկած երգացանկները, որոնք արդեն ամեն շաբաթ երեկո կնվագեմ հայ ձայնասփյուռքին և գնահատանքի արտահայտություններ կստանանք ունկնդիր հասարակությունեն: «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը կանոնավոր կստանամ, շատ անգամ նյութեր կկարդամ ձայնասփյուռքի ժամեն, նաև լուրեր կուտանք հայրենի աշխարհեն: Եթե կարելի է, հայ մշակույթին ծառայող և Հայրենիքի վերելքին վերաբերող նյութեր ուղարկել մեզի»:

Նման ռադիոժամեր կան նաև ԱՄՆ-ի և Կանադայի շատ այլ քաղաքներում:

Եվ ահա այս ամենը մեզ բերել են այն եզրակացության, որ առանց մեր գործուն ու ամենօրյա օգնության, այդ ռադիոժամերը չեն կարող հաջողությամբ կատարել իրենց հայրենասիրական գործը և իրենց պրոպագանդիստական ներգործող խոսքն ուղղել սոցիալիստական երկրների դեմ ծավալվող գաղափարական դիվերսիայի դեմ: Անհրաժեշտ է, որ Հայրենիքից ձայնագրված գրույցներ, դասախոսություններ, գրականության, արվեստի, գիտության նշանավոր գործիչների ելույթներ, երգ-երաժշտության ու ասմունքի ձայնապնակներ և պրոպագանդիստական ու մշակութային այլ կարգի նյութեր սիստեմատիկաբար առաքվեն այդ ռադիոժամերին:

Այդ դեպքում զգալիորեն կբարձրանա այդ ռադիոժամերի գաղափարական ու գեղարվեստական մակարդակը և նրանց ներգործությունը բազմաազար ռադիոլսողների վրա:

Սակայն մեր կոմիտեն իր ֆինանսական ու հաստիքային ներկա պայմաններով ի վիճակի չէ կազմակերպելու այդ մեծ ու աշխատատար գործը: Ի նկատի ունենալով գործի կարևորությունը, կարծում ենք, որ անհրաժեշտ է մեր կոմիտեին տրամադրել ֆինանսական լրացուցիչ միջոցներ և ստեղծել նյութական բազա՝ Հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի հետ համագործակցած, իրականացնելու այդ գործը:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Վ. ՀԱՄԱՉԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ԹՈՒԹՈՒՆՅԱՆԻՆ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՑ ՈՒ
ԵԳԻՊՏԱՅԱՑ ԱՐԿԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՏՅՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի պրն. Թութունյան,

Ստացանք «Հայ ժողովրդի վերածնունդը» նյութին նվիրված հիսնամյա-
կի ցուցահանդեսին մասնակցող լիբանանահայ և եգիպտահայ նկարիչների
և քանդակագործների գործերը, որ ուղարկել էիք մեր հասցեով: Այդ գործերը
հավաքելու և Հայրենիք ուղարկելու Ձեր ջանքերը արժանի են բարձր գնա-
հատանքի: Դուք կատարում եք հայրենասիրական արժեքավոր գործ: Այս երկ-
րորդ անգամ է, որ Ձեր ջանքերով Հայաստանի պատկերասրահը հարստանում
է սփյուռքահայ արվեստագետների ստեղծագործություններով:

Խնդրում ենք ընդունել, սիրելի պրն. Թութունյան, մեր և Երևանի պատկե-
րասրահի վարչության խորին շնորհակալությունները:

Խնդրում ենք մեր երախտագիտական զգացումները փոխանցել նաև նվի-
րատու արվեստագետներ Աշոտ Ջոռյանին,¹⁷⁷ Ժորժ Գյուլերճիսյանին, Ալիս
Մինասյանին, Լյուսի Թութունյանին, Փոլ Կիրակոսյանին,¹⁷⁸ Հարություն Թո-
րոսյանին,¹⁷⁹ Թորոս Տեր-Հակոբյանին, Հովհաննես Դարբինյանին, Ժոզեֆ Ժի-
րաքոյին,¹⁸⁰ Սիմոն-Պալթաքսե Մարթայանին¹⁸¹ և Եվգինե Եփրեմյանին

Առանձնահատուկ ուշադրության արժանացավ նաև Ձեր՝ «Վերածնած Հա-
յաստան» մակետ-արձանը:

177. Ջոռյան Աշոտ (1905, Կիրասոն, Թուրքիա – 1970, Կահիրե) – Գեղանկարիչ: Սովորել է Վի-
ենայի Նկարչական դպրոցում, ավարտել Հռոմի Գեղարվեստի ակադեմիան: Ունեցել է ցուցա-
հանդեսներ մի շարք երկրներում:

178. Կիրակոսյան Փոլ (Պոդոս) Մանուկի (1926, Երուսաղեմ – 1993, Բեյրութ) – Գեղանկարիչ:
Սովորել է ծննդավայրում, իր արվեստը կատարելագործել Ֆլորենցիայում և Վիեննայում: Անհա-
տական ցուցահանդեսներ է ունեցել բազմաթիվ քաղաքներում, այդ թվում՝ Երևանում: Համար-
վում է Լիբանանի արդի գեղանկարչության հիմնադիրներից:

179. Թորոսյան Հարություն (ծն. 1933, Բեյրութ) – Գեղանկարիչ, մանկավարժ: Գեղանկարչական
կրթությունն ստացել է Լիբանանի Գեղարվեստից ակադեմիայում, Փարիզի Գեղարվեստից ազ-
գային բարձրագույն դպրոցում, Փարիզի Ժյուլիեն և Գրանտ Շոմիեր ակադեմիաներում: Ունեցել
է շուրջ 20 անհատական ցուցահանդես Փարիզում, Բեյրութում, Երևանում և ԱՄՆ քաղաքնե-
րում, մասնակցել ավելի քան 50 խմբային ցուցահանդեսի աշխարհի տարբեր երկրներում: Գե-
ղանկարչություն է դասավանդել Լիբանանի Գեղարվեստից ակադեմիայում և լիբանանյան այլ
բուհերում:

180. Ժիրար ժոզեֆ (1920, ավան Ռայաթ, Լիբանան – ?) – Գեղանկարիչ: Կրթությունն ստացել
է Փարիզի Գեղարվեստից ազգային բարձրագույն դպրոցում: Անհատական ցուցահանդեսներ է
ունեցել տարբեր երկրներում:

181. Մարթայան Սիմոն-Պալթաքսե (1924, Փարիզ – ?) – Գեղանկարչուհի: Կրթությունն ստացել
է Փարիզի Գեղարվեստից ազգային բարձրագույն դպրոցում: Անհատական ցուցահանդեսներ է
ունեցել տարբեր երկրներում:

Խնդրում եմ հավաստիացնել մեր հարգելի արվեստագետներին, որ իրենց
գործերը կարժանան պատշաճ ուշադրության և իրենց արժանի տեղը կգրավեն
Երևանի պատկերասրահում:

Խորին հարգանքով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 555, ք. 33: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՈՒ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բեյրութի Լիբանանահայ բժշկական միության անունով պրոֆ. Գ. Կերկերյանն ու բժ. Այանյանը¹⁸² դիմել են մեր կոմիտեին, խնդրելով առավել զարգացնել հայրենի և լիբանանահայ բժիշկների փոխհարաբերությունները: Նրանք սրտագին ցանկություն են հայտնում «Հաստատուն պահել արձակված կամուրջը և ավելի լայն ու իրական մշակութային կապերով հաղորդել հայ հոգիները»: Այդ նպատակով Լիբանան են հրավիրում սովետահայ բժիշկների պատվիրակություն:

Մեր կոմիտեն նպատակահարմար է գտնում ընդառաջել լիբանանահայ բժշկական միության խնդրանքին և Լիբանան գործուղել հինգ հոգուց բաղկացած հայ բժիշկների պատվիրակություն, հետևյալ կազմով.

Բժիշկ Հ. Ե. Վարդանյան – Հայկ. ՍՍՀ առողջապահության մինիստրի տեղակալ, պատվիրակության ղեկավար

Պրոֆ. Սուրեն Մկրտչի Գալստյան – Բժշկական ինստիտուտից

Բժշկական գիտությունների դոկտոր Զավեն Լևոնի Դոլաբչյան – Սրտաբանության և սրտային վիրաբուժության ինստիտուտից

Բժշկական գիտությունների դոկտոր Սեպուհ Ջհանգիրի Թումանյան – Տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի ինստիտուտից

Բժիշկ Շահեն Բազրատի Մաթևոսյանին – Հանրապետական սան-համաճարակային կայանից

Ցուցակը համաձայնեցված է ՀՍՍՀ Առողջապահության մինիստրության հետ: Կից ուղարկում ենք հրավեր-նամակի պատճենը ու Լիբանանահայ բժշկական միության մասին տեղեկանք:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 26, թ. 21: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՈՒ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Բեյրութից Լիբանանահայ տպարանների համախմբումը դիմել է մեզ խնդրելով տպարանական աշխատողների մի պատվիրակություն հրավիրել Հայաստան՝ փոխադարձ կապերը առավել ամրապնդելու և տեխնիկական փորձի փոխանակում կատարելու նպատակով: Լիբանանահայ տպարանների համախմբումը գործում է շուրջ տասը տարի: Բեյրութահայ տպարանները հանդիսանում են հայ գրքի և մամուլի տարածման կարևոր կենտրոններից. համախմբման մեջ մտնող մի շարք տպարաններ ունեն հայրենասիրական գործունեության երկարամյա ավանդույթ. այսպես. «Տոնիկյան» տպարանում են տպագրվել հնչակյան, կոմունիստական և այլ հայրենասիրական կազմակերպությունների պրոպագանդիստական գրականությունը և թոռուցիկները. «Շիրակ» տպարանը երկար տարիներ հրատարակում է հայաստանյան երգերի ժողովածուներ և հայրենական ալբոմներ. «Մեր նշանաբանն է «Յառաջ» շաբաթաթերթը տպագրվում էր «Ատլաս» տպարանում և այլն: Հայ տպարանները կատարում են ոչ միայն առևտրական գործարք, այլ նաև հայրենասիրական լուրջ աշխատանք: Ուստի, նրանց գործունեությունը առավել ոգևորելու և հայրենական տպագրության գործի հետ փորձի փոխանակման նպատակով մեր կոմիտեն նպատակահարմար է գտնում ընդառաջել կատարված խնդրանքին և 10 օրվա ժամկետով, 1969 թվականի ընթացքում Հայաստան հրավիրել հետևյալ տպարանագործներին.

Գրիգոր Համաձյան¹⁸³ – կոմունիստական տպարանի պատասխանատու, Լիբանանի կոմկուսի Կենտկոմի անդամ

Փարամազ Տոնիկյան – հնչակյան, «Տոնիկյան» տպարանից

Նազարեթ Էլմաձյան – «Ատլաս» տպարանից

Հովհաննես Հովհաննեսյան¹⁸⁴ – «Շիրակ» տպարանից

Նշան Նալբանդյան – ռամկավար, տպարան «Նշան»

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 26, թ. 26: Պատճեն: Մեքենագիր:

183. Համաձյան Գրիգոր (1920 – 2006, Բեյրութ) – Մշակութային և հասարակական գործիչ: Ավարտել է Մեյգոնյան կրթական հաստատությունը: Եղել է Լիբանանի կոմկուսի Կենտկոմի անդամ, Լիբանանահայ գրական շրջանակի վարչության երկարամյա անդամ, Բեյրութի «Նաժահ», «Թեքնոգրավյուր», «Թեքնոպրես» և Դամասկոսի «ալ-Նուր» տպարանների տնօրենը, որոնցից լույս են տեսել կոմունիստական պարբերական մամուլի օրգաններ և առաջադիմական գրողների բազմափայլող գրքեր:

184. Բնագրում՝ «Հովհաննեսյան» է: Հովհաննես Հաննեսյանն ու եղբայրը՝ Գարապետ Բեյրութի «Շիրակ» հրատարակչատան և տպարանի համախմբադիրներն են:

182. Այանյան Հովհաննես (1925, Քեսապ – 2008, Բեյրութ) – Մասնագիտությամբ՝ ներքին հիվանդությունների բժիշկ: Երկար տարիներ եղել է լիբանանահայ բժշկական միության վարչության անդամ:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԶԵՅԹՈՒՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ
ՀՈՒՇԱՐՁԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԶԵՅԹՈՒՆԻ
ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Զեյթունի հայրենակցական միությունը /Ուրուզվայ/ խնդրանք է ներկայացրել Երևանի Նոր Զեյթունի թաղամասում իր միջոցներով հուշարձան կառուցելու մասին:

Ի տարբերություն մի շարք հայրենակցական միությունների խնդրանքով մինչ այժմ կառուցված հուշարձանների, որոնք նվիրված են 1915թ. զոհերի հիշատակին, Նոր Զեյթունում կառուցվելիք հուշարձանը խորհրդանշելու է Զեյթունի պատմական հերոսամարտերը և նրա վերածնունդը Մայր Հայրենիքում:

Հուշարձանի շինարարության համար հայրենակցական միության հատկացնելիք գումարը կարելի է դնել Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի տրամադրության տակ՝ Երևանի գիտահետազոտական հաստատություններին կարևոր սարքավորումներ ձեռք բերելու համար, իսկ փոխարենը համապատասխան գումար հատկացնել և Երևանի Քաղաքի Գործկոմի միջոցով իրականացնել հուշարձանի կառուցումը:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 26, թ. 35: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Բ. ՍՈՒՐԱՂՅԱՆԻՆ ԻՏԱԼԱՅԱՅԵՐԻ ՀԵՏ ԻՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ
ԱՌԱՋԱՐԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Միլանում հայ ճարտարապետությանը նվիրված ցուցահանդեսի կապակցությամբ Իտալիա կատարած իմ այցելությունների ընթացքին առիթ եղավ հանդիպել Եվրոպայի Բարեգործականի նախագահ Երվանդ Հյուսիսյանի և մի շարք այլ գործիչների հետ: Եղա Իտալիայի գրեթե բոլոր հայկական օջախներում: Հանդիպումներին առաջ քաշվեցին և հնարավորին չափ պարզվեցին մի շարք մեզ հետաքրքրող հարցեր, որոնց մասին անհրաժեշտ եմ համարում տեղյակ պահել Ձեզ:

1. Հայկական Բարեգործական ընդհանուր միության տրամադրության տակ գտնվող՝ Հայաստանին վերաբերող կտակների հարցը երբ շոշափվեց Բարեգործականի մի քանի աշխատողների և նախագահ Երվանդ Հյուսիսյանի հետ, այն կարծիքը հայտնվեց, որ մոտ երեք միլիոն դոլար կազմող այդ գումարները հնարավոր կլինի օգտագործել միայն այն դեպքում, երբ Բարեգործականի ընդհանուր գումարների մի մասը փոխադրվի Ժնև կամ Եվրոպական որևէ չեզոք մի երկիր: Այդ հարցը հավանաբար դրական լուծում կստանա 1969 թվի մայիսին գումարվող Բարեգործականի ընդհանուր համագումարում:¹⁸⁵ Ըստ Հյուսիսյանի, պատվիրակների զգալի մասը բաժանում է այդ տեսակետը:

2. Մեր պայմանավորվածության համաձայն, Երվանդ Հյուսիսյանը Հայաստանի Տեղարդ մինիստրության համար պետք է կանաչի զարդաշղթաներ պատրաստող մեքենաների գնումներ կատարել, սակայն գնումները ձգձգվել են Տեղարդ մինիստրության կողմից համապատասխան մասնագետներ չուղարկելու պատճառով: Հյուսիսյանը խնդրում էր, եթե հնարավոր է, ուղարկել մեկ-երկու մասնագետ, զոնե մեկ ամսով, արտադրության տեխնոլոգիային ծանոթանալու, մեքենաները ստուգելու և լրացուցիչ մեքենաներ ձեռք բերելու համար, որոնք կարող են նպաստել արտադրության ընդլայնմանը: Ընդ որում նա խոստանում է մասնագետների մեկամսյա ծախսերը Իտալիայում վերցնելու իր վրա:

3. Միջնադարյան հայ ճարտարապետությանը նվիրված ցուցահանդեսը, որը լայն արձագանք էր գտել ոչ միայն Միլանում, այլև ամբողջ Իտալիայում, հանդիսացավ հայ ճարտարապետության պրոպագանդման հետ միասին նաև նրա ուսումնասիրության կարևոր ազդակը: Միլանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետում ստեղծվել է հատուկ բաժին հայ ճարտարապետության ուսումնասիրման համար և այդ բաժինը ունի հատուկ կաբինետներ, շուրջ 4000 դիապոզիտիվներ, հարուստ գրադարան, ուր կենտրոնացած է հայ ճարտարապետության վերաբերյալ ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում տպագրված գրականությունը:

185. ՀԲԸՄԻ համահավաքները պաշտոնապես կոչվում են «ընդհանուր անդամական ժողովներ»:

Վերջին կուրսի մի շարք ուսանողներ իրենց դիպլոմային աշխատանքը ընտրել են հայ ճարտարապետությունից:

Մի շարք հայ ճարտարապետների, ինչպես և ֆակուլտետի ղեկավար ճարտարապետ Ալպագոյի¹⁸⁶ գլխավորությամբ /Մանուկյանների¹⁸⁷ ֆինանսավորումով/ իտալերեն լեզվով հրատարակվել է «Հաղպատ» գիրքը¹⁸⁸ գունավոր բարձրակարգ տպագրությամբ: Առաջաբանը գրել են Ստեփան Մնացականյանը¹⁸⁹ և Ադրիանո Ալպագոն: Այդ գործի հրատարակությունը մեծ չափով նպաստել է նաև վերջերս հայրենադարձված ճարտարապետ Արմեն Զարյանը,¹⁹⁰ որը մեծ ջանքեր է թափել առանց որևէ նյութական ակնկալության կազմակերպել է և արագացրել գործի թարգմանությունն ու տպագրությունը: Ծանապահորդությունն էր ղեկավարող ղեկավար պրոֆ. Ա. Մանուկյանի հետ, որն ապրում է Կոմոյում և ունի քիմիական նյութերի և ներկերի մեծ արտադրություն: Այս արտադրությունը հատկապես հնարավորություն է տալիս Մանուկյանին ֆինանսավորելու հայ ճարտարապետությանը նվիրված ձեռնարկումները: Այդ գործում նա հատուկ շահագրգռվածություն է հանդես բերում նաև այն պատճառով, որ իր որդիներից Արմեն Մանուկյանը¹⁹¹ զբաղվում է ճարտարապետության պատմության խնդիրներով, իսկ հայ ճարտարապետությունը հող է հանդիսանում նրա համար ավելի ճանաչելու Իտալիայում և Իտալիայից դուրս:

Հանդիպման ժամանակ ցանկություն հայտնվեց, որպեսզի Մանուկյանի ֆինանսավորմամբ «Հաղպատի» օրինակով տպագրության հանձնվեն իտալերեն

186. Ալպագո Նովելլո Ադրիանո (1932, Բելլունո, Իտալիա – 2005, Միլան) – Իտալացի ճարտարապետ, արվեստաբան: 1968թ. Միլանի Պոլիտեխնիկական ինստիտուտում հիմնել է հայկական միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության կենտրոն: Գլխավորել է իտալական գիտաբաններ Նորիդոյի և Հայաստան (1967, 1969), Վաստուրական, Անի և Կյուլիկիա (1970): Հեղինակ է հայ միջնադարյան ճարտարապետությանը նվիրված աշխատությունների:

187. Միլանաբնակ Արմեն և Հակոբիկ Մանուկյան եղբայրներ:

188. Լույս է տեսել 1967թ. Միլանում՝ իտալերեն և անգլերեն լեզուներով, Ադրիանո Ալպագո Նովելլոյի և Ստեփան Մնացականյանի համահեղինակությամբ:

189. Մնացականյան Ստեփան Խաչատուրի (1917, Նոր Բայազետ, այժմ՝ Գավառ – 1994, Երևան) – Հայկական ճարտարապետության պատմաբան, ճարտարապետության դոկտոր: Ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը: 1950թ. մինչև իր մահը աշխատել՝ ՀԽՍՀ ԳԱ (այսպ.՝ ՀՀ ԳԱ) Արվեստի ինստիտուտում: Մի շարք արժեքավոր գրքերի համահեղինակ է:

190. Զարյան (Եղիազարյան) Արմեն Կոստանի (1914, Կ. Պոլիս – 1994, Երևան) – Ճարտարապետ, ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1976): Կրթությունն ստացել է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, բարձրագույնը՝ Վենետիկի համալսարանի ճարտարապետական ֆակուլտետում, ապա Հռոմում, Փարիզում: Աշխատել է որպես ճարտարապետ Վիեննայում և Մարնիկոյում, հայրենադարձվելուց հետո՝ Երևանում: Նրա նախագծով կառուցվել է Երևանի Գլխավոր պողոտան: Համահեղինակ է Երևանի կենտրոնի բարեկարգման և զարգացման ճարտարապետական նախագծի:

191. Մանուկյան Արմեն (ծն. 1932, Կոմո, Իտալիա) – Ճարտարապետ, արվեստաբան: Կրթությունն ստացել է Հռոմում: Միլանում բացել է նախագծային արվեստանոց: Մեծ ներդրում ունի հայ ճարտարապետության ուսումնասիրման բնագավառում: 1966թ. Իտալիայում իտալիացի ճարտարապետների խմբի ու Նորիդոյի Հայաստանից Արմեն Զարյանի հետ միասին ձեռնարկել է հայ ճարտարապետությունը օտարերկրի ծանոթացնելու գործը, Միլանում միասին հիմնել «Հայ ճարտարապետության նմուշներ» մատենաշարը:

լեզվով հայ ճարտարապետությանը նվիրված բոլոր նշանավոր գործերը, սկսած Թորոս Թորամանյանից¹⁹² մինչև Տոկարսկի,¹⁹³ Երեմյան, Մնացականյան, Հարությունյան¹⁹⁴ և այլն: Սակայն այս մեծ ու լուրջ աշխատանքը հնարավորին չափ արագացնելու համար նպատակահարմար է թարգմանության գործը կազմակերպել Երևանում, թեև Մանուկյանները այդ մասին որևէ ակնարկ չեն արել: Մենք կարծում ենք, որ լավ կլինի նաև այն տեսակետից, որ այդ գործը գլխավոր նախաձեռնողներից և շատ ջանքեր թափած ճարտարապետ Արմեն Զարյանը հնարավորություն կունենա Հայրենիքի մեջ ավելի լավ և բարձր որակով կատարել այդ թարգմանությունը հեղինակների հետ միասին, որը միաժամանակ կստանա նյութական օգնություն մեր հրատարակչական կազմակերպությունների կողմից:

4. Միլանի Պոլիտեխնիկ ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետի ղեկավարության հետ գրույցի ժամանակ ռեկտորի, դեկանի և հայկական բաժնի կողմից ցանկություն հայտնվեց կապեր հաստատել Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետի հետ և հնարավորության սահմաններում դիպլոմային աշխատանքների գործում ուսանողների փոխանակություն կատարել երկու ինստիտուտների միջև փոխադարձ համաձայնությամբ: Այս կապակցությամբ իմ պատասխանը եղավ լոյալ՝ թողնելով հարցի լուծումը տեղի կազմակերպություններին:

5. Վենետիկի Միսիթարյանների հրավերով այցելեցի նաև Վենետիկի Մուրադ Ռաֆայելյան միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում են 70 երեխաներ՝ 13 երկրներից: Ս. Ղազար կղզում հանդիպում ունեցա ինչպես Աբբահայր Կետիկյանի,¹⁹⁵ այնպես էլ միաբնակության մյուս անդամների հետ: Մանրամասնորեն դիտեցի մատենադարանը, պատկերասրահը, տպարանը, բնակելի շենքերը:

Աբբահայրը հայտարարեց, թե «մեր փոքրիկ կղզին մանրանկարն է մեր Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի: Մենք պատրաստ ենք կատարելու Հայաստանի կառավարության բոլոր ցանկությունները, նույնիսկ եթե վաղը Հայաստանի կառավարությունը որոշում ընդունի, որ մենք մեր ամբողջ հարստությամբ Հայրենիք վերադառնանք: Պատրաստ ենք նաև այդ առաջարկին:

192. Թորամանյան Թորոս Հարությունի (1864, Շապին-Գարահիսար – 1934, Երևան, թաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում) – Նշանավոր ճարտարապետ, հայկական ճարտարապետության պատմաբան, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1933), հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիրը: Բարձրագույն կրթությունն ստացել է Կ. Պոլսի Գեղարվեստից վարժարանի ճարտարապետության բաժնում: Աշխատել է Անիում, Զվարթնոցում: Ունի մի շարք գիտական հետազոտություններ ու աշխատություններ:

193. Տոկարսկի Նիկոլայ Միխայլովիչ (1892, Սանկտ Պետերբուրգ – 1977, Լենինգրադ, այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) – Հայ ճարտարապետության պատմաբան, արվեստագիտության դոկտոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1961): Մասնակցել է հայաստանյան մի քանի արշավախմբերի: Առաջին և շարադրել հայկական ճարտարապետության ընդհանուր պատմությունը:

194. Խոսքը վերաբերում է Վարազդատ Հարությունյանին, տե՛ս թիվ 11 ծանոթագրությունը:

195. Կետիկյան Հմայակ ծ. թղ. (1905, Տրապիզոն – 1999, Ս. Ղազար, Վենետիկ) – Բանասեր, Միսիթարյան միաբնակության վենետիկյան հատվածի աբբահայր: Կրթությունն ստացել է ծննդավայրի Միսիթարյան վարժարանում, այնուհետեւ՝ Ս. Ղազարում: Ավարտել է Հռոմի Գրիգորյան համալսարանը՝ փիլիսոփայության դոկտորի աստիճանով: Վենետիկյան Միսիթարյանների 1964թ. հուլիսի 15-ին կայացած ընդհանուր ժողովում ընտրվել է աբբահայր (1964-1982թթ.):

Մեր Միաբանությանը ջերմացրեց ընկ. Ա. Քոչինյանի այցը և մենք մեկ անգամ ևս ազգային հպարտությամբ մեր հյուրընկալ ժողովրդին ասացինք, որ մենք ոչ միայն հարուստ անցյալով ազգ ենք, այլև՝ պետություն ունենք: Մտերիմ գրույցի ժամանակ, բոլոր վանականների ներկայությամբ Աբբահայրը արեց մի շարք առաջարկներ և խնդրանքներ:

Առաջին խնդրանքը վերաբերում է Միաբանությանների գրադարանին, ավելի ճիշտ կլինի ասել՝ գրապահոցին, Հայաստանում հայոց լեզվով տպագրված բոլոր գրքերի ու հրատարակությունների առաքմանը: Ավելի քան 250 տարի Ս. Ղազարում աշխարհի բոլոր ծայրերում տպագրված բոլոր հրատարակությունները հավաքվել և խնամքով պահվել են գրապահոցում: Վերջին տասնամյակում Հայաստանից ստացվում են միայն առանձին հրատարակություններ:

Երկրորդ խնդիրը Ս. Ղազար կղզում հայերեն մի խաչքար ունենալու փափակն է, որը պետք է դրվի նշանավոր գրող, գիտնական, բանասեր Ղևոնդ Ալիշանի¹⁹⁶ գերեզմանին:

Աբբահայրը հայտնեց, որ տարին շուրջ 30.000 այցելուներ են գալիս կղզի, որոնց մեջ քիչ չեն կազմում հայերը: Երբեմն Ամերիկայի խորքից և աշխարհի հեռավոր ծայրամասերից գալիս են այնպիսի հայեր, որոնք նույնիսկ պատկերացում չեն ունենում հայերի գոյության ու Հայրենիքի մասին:

Այսպիսով, կղզին մի տեսակ կամուրջ է դառնում օտարացած զավակներին Հայրենիքի հետ կապելու, Հայրենիքը ճանաչել տալու և Հայաստանը պրոպագանդելու գործում:

«Բավական է դիտեք մեզ որպես օտարների, մենք նույն հայերն ենք՝ քրիստոնեական եկեղեցու տարատեսակությամբ. ինչպիսի վերաբերմունք ունեք Ս. Էջմիածնի նկատմամբ, նույնը պիտի ունենաք մեր նկատմամբ»:

Երրորդ խնդրանքը վերաբերում էր մեր պատկերասրահի նկուղում գտնվող նկարներից մեկին, որը տասնամյակներ առաջ Սևանի վանքից տեղափոխվել է Մատենադարան, իսկ 10 տարի առաջ հանձնվել է պատկերասրահին ի պահ: Դա մի անհայտ նկարչի գործ է, որը գեղարվեստական մեծ արժեք չի ներկայացնում, բայց պատկերում է Սուրբ Մարիամ Աստվածածինը: Այդ նկարի առաջ, Սևանա կղզում, 18-րդ դարի սկզբներին երդում է տվել Միաբար Սեբաստացին¹⁹⁷ և ներշնչված հեռացել է Հայրենիքից, հետագայում մեկնել Սուրբ

Ղազար կղզի և հիմնադրել Միաբարյան Միաբանությունը:¹⁹⁸ Այդ նկարը նրանք ցանկանում են անպայմանորեն ունենալ իրենց մոտ՝ Սուրբ Ղազար կղզում:

Այդ բոլոր հարցերի մասին ես խոստացա զեկուցել Հայաստանի կառավարությանը և եթե հարցերը լուծվեն դրականորեն, հայտնել իրենց գրավոր:

Իմ կողմից մի շարք առաջարկներ արվեցին Միաբանությանը և ընդունվեցին սիրով:

6. Թումանյանի¹⁹⁹ 100-ամյակի կապակցությամբ ես խնդրեցի, որպեսզի Միաբանությունն իր մասնակցությունը բերի այդ նշանակալից տարելիցին, քանի որ Միաբանությունն ունի հրատարակչական մեծ հնարավորություններ և կարող է օգտակար աշխատանք կատարել Թումանյանի երկերից խտվերեն հրատարակելու և Իտալիայում պրոպագանդելու գործում: Առաջարկը ընդունվեց պայմանով, որ մենք նրանց ուղարկենք համապատասխան նյութեր: Խոստացան հրատարակել Թումանյան ոչ մեծ ծավալով, բայց գունավոր, շքեղ տպագրությամբ, մասսայական տիրաժով՝ Իտալիայում և Իտալիայից դուրս տարածելու համար:

Առաջարկ եղավ նաև հրատարակչական աշխատանքներ կատարել Կոմիտասի հոբելյանի կապակցությամբ: Առաջարկն ընդունվեց, այս դեպքում Կոմիտասի երգերն ու ձայնագրությունները հրատարակել ոչ թե միայն իտալերեն, այլ՝ հայերեն և իտալերեն լեզուներով:

Իմ կողմից առաջարկություն արվեց «Բազմավեպում»²⁰⁰ տպագրել Ղևոնդ Ալիշանի անավարտ «Վասպուրական» հնագիտական բանասիրական աշխատությունը, որը հարուստ նյութ կարող է տալ մեր պատմաբաններին՝ այդ շրջանի ուսումնասիրման համար: Որոշ առարկություններից հետո համաձայնվեցին այն տպագրության հանձնել 1969-ի երկրորդ կեսին:

7. Դեսպան Ռիժովը²⁰¹ և խորհրդական Աղայանը,²⁰² որոնք եկել էին Միլան, ցուցահանդեսի բացմանը, հրավիրեցին ինձ Հռոմ: Այնտեղ հանգամանորեն ծանոթացա Լևոնյան վարժարանի գործունեությանը, հանդիպում ունեցա ուսանողության հետ, որոնք ստանում են բարձրագույն աստվածաբանական կրթություն: Ջրույց ունեցա վարժարանի տեսուչ Սեթյանի²⁰³ և Միաբանության մյուս

198. Ինչպես եջել ենք, Միաբար Սեբաստացին հետագայում իր անունով կոչված միաբանությունը հիմնել է Ս. Ղազար կղզի տեղափոխվելուց ուղիղ 16 տարի առաջ:

199. Թումանյան Հովհաննես Թադևոսի (1869, գյուղ Դսեղ, Լոռու մարզ – 1923, Մոսկվա, քաղված է Թիֆլիսիում, սիրտը՝ ծննդավայրում) – «Ամենայն Հայոց բանաստեղծ», արձակագիր, խմբագիր, փիլիսոփա, հասարակական գործիչ: Մովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Թիֆլիսի իր տանը գործել է «Վերնատուն» գրական խմբակը: Եղել է 1921թ. հիմնված Հայաստանի Օգնության կոմիտեի նախագահության առաջին նախագահը: Ունի բանաստեղծությունների շարքեր, երկեր, պոեմներ, թարգմանություններ: Երևանում գործում է Հովհաննես Թումանյանի թանգարանը, ծննդավայր Դսեղում՝ տուն-թանգարանը:

200. «Բազմավեպ» – Միաբարյան միաբանության՝ Վենետիկում լույս տեսնող պատմաբանասիրական հայագիտական ամսագիրն է: Առ այսօր անխափան հրատարակվող հայերեն ամենից երկարակյաց պարբերականն է աշխարհում (սկսել է լույս տեսնել 1843թ.):

201. Իգոր Ռիժով: Եղել է ԽՍՀՄ դեսպանը Իտալիայում:

202. Գուրգեն Աղայան՝ Իտալիայում ԽՍՀՄ դեսպանության խորհրդական, 1970ականներին՝ փոխդեսպան:

203. Ներսես Ժ. վրդ. Սեթյան (1918, Ջառա, Սեբաստիայի նահանգ), հետագային՝ եպիսկոպոս:

196. Ալիշան Ղևոնդ վրդ. (1820, Կ. Պոլիս – 1901, Ս. Ղազար, Վենետիկ) – Միաբարյան միաբան, բանաստեղծ, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ: Մովորել է Միաբարյանների Ս. Ղազար կղզում, հիմնականում այնտեղ էլ ստեղծագործել: Տիրույթներ է մի շարք լեզուների: Եղել է անդամ եվրոպական մի շարք գիտահետազոտական կենտրոնների և ընկերությունների: Ունի բանաստեղծական ժողովածուների շարք, պատմաբանասիրական շատ արժեքավոր բազմաթիվ աշխատություններ, թարգմանություններ:

197. Միաբար Սեբաստացի (1676, Սեբաստիա – 1749, Ս. Ղազար, Վենետիկ) – Հայագետ, մշակութային, եկեղեցական գործիչ: Կրթությունն ստացել է Հայկական լեռնաշխարհի տարբեր վանքերում: 1701թ. սեպտեմբերի 8-ին Կ. Պոլսում հիմնադրել է հետագայում իր անունով կոչված հայ կաթողիկե միաբանությունը, որը 16 տարի անց՝ 1717թ. նույն օրը հաստատվել է Ս. Ղազար կղզում: Այստեղ նա և միաբանները կառուցել են վանք և օժանդակ շինություններ, հիմնել տպարան, սկսել պատմաբանասիրական բեղուն գործունեություն: Հայագիտական արժեքավոր բազմաթիվ երկերի հեղինակ է:

անդամների հետ, որոնք ցանկություն հայտնեցին է՛լ ավելի ընդլայնել կապերը Հայրենիքի հետ և սփյուռքի կաթոլիկական համայնքի հետ:

6. Միլանի հայ գաղութը, որը միակն է ամբողջ Իտալիայում, խնդրում է, որ այսուհետև ավելի մեծ ուշադրություն դարձվի միլանահայ գաղութի վրա և հատկապես իտալական առանձին քաղաքներում գտնվող այն խմբերի ու խմբակցությունների, որոնք տարերայնորեն կազմակերպվում և կազմալուծվում են, սակայն հեռու են մնում Հայրենիքից՝ կտրված լինելու պատճառով: Նրանք նկատի ունենն առաջին հերթին հայ ուսանողական միությունները, երիտասարդական կազմակերպությունները, որոնք իրենց զգացնել են տալիս Իտալիայում, և եթե անհրաժեշտ օգնություն չստանան, կարող են գործիք դառնալ հակասովետական, հակահայկական խմբավորումների ձեռքին:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 29, թթ. 9-14: Պատճեն: Սեքրետագիր:

№ 91

9 հունվարի 1969թ., Երևան

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱԽԱԿԸ Կ. ՂԱԶԱՐՅԱՆԻ՝²⁰⁴ ԱՐԵՎՄՏԱՅԱՅ ԱՐՁԱԿԱԳԻՐ
Հ. ՄՆՁՈՐԻՐՈՒՄ՝²⁰⁵ ԱՐԽԻՎԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ
ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Ղազարյան

Վերջերս նամակ ստացանք թուրքահայ հայտնի արձակագիր Հակոբ Մնձուրիից, որն ուզում է իր գիտական ամբողջ արխիվը տեղափոխել Հայաստան: Հ. Մնձուրին տաղանդավոր գրող է, նրա գործերը մեծ արժեք են ներկայացնում հայ գրականության համար:

Նրանք օգտակար կլինեն հատկապես արևմտահայ գրականությունը ուսումնասիրողների համար:

Ինչպես Ձեզ հայտնի է, Հ. Մնձուրին գտնվում է շատ առաջացյալ տարիքում, նրանից հետո, լրջորեն կղժվարանար նրա գործերի տեղափոխումը Մայր Հայրենիք: Դուք անձնական գործուն կապեր ունեք Ստամբուլի հետ: Խնդրում ենք, եթե կարելի է, հետաքրքրվել և մեզ հայտնել, թե ի՞նչ միջոցներ է հնարավոր գտնել Հ. Մնձուրիի գրական արխիվները Հայաստան տեղափոխելու համար: Շնորհակալ կլինենք գործնական աջակցության համար:

Խորին հարգանքով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 525, թ. 26: Պատճեն: Սեքրետագիր:

204. Ղազարյան Կարապետ (1905, Կեսարիա – ?) – Գեղանկարիչ: Կրթությունն ստացել է Կ. Պոլսում: Ունեցել է մի շարք անհատական ցուցահանդեսներ Ժնևում, Երևանում:

205. Մնձուրի (Տեմիրճյան) Հակոբ Իգնատիոսի (1886, գյուղ Փորը Արմտաե, Երզնկայի գավառ – 1978, Ստամբուլ) – Արձակագիր: Կրթությունն ստացել է Կ. Պոլսում: Տպագրվել է մի շարք պարբերականներում: Գրել է պատմվածքներ, նորավեպեր, հեքիաթներ:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Բ. ՍՈՒՐԱՂՅԱՆԻՆ՝ ԱՐԵՎՍՏԱՅՍ ՄԻ ՇԱՐՔ ԱՆՎԱՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱՃՅՈՒՆՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՓՈԽԱՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

Ինչպես Ձեզ հայտնի է, արևմտահայ մի շարք առաջավոր գրողներ, արվեստագետներ, հասարակական գործիչներ և ազգային ազատագրական շարժման ականավոր մարտիկներ թաղվել են արտասահմանյան զանազան երկրներում՝ Ֆրանսիայում, Եգիպտոսում և այլուր։ Նրանք իրենց գործունեությամբ, գրականությամբ և արվեստով մարտնչել են հայ ժողովրդի բարօրության և Մայր Հայրենիքի փառքի համար, սակայն զրկվել են նույնիսկ հայրենի հողում ամփոփվելու հետ մահու երանությունից։ Նրանք երազեցին պետականացած Հայաստան, բայց չկարողացան տեսնել ու վայելել վերածնված ու պետականացած Հայաստանը։ Այժմ արդեն նրանց պանդխտացած աճյունները դարձել են նվիրական սրբություններ ամբողջ հայության համար։

Միյուրոքահայ առաջադիմական կազմակերպությունների և հայրենասեր միությունների ներկայացուցիչներ, ականավոր մտավորականներ, գրողներ և արվեստագետներ բազմաթիվ առիթներով գրավոր ու բանավոր խնդրել են, Կոմիտասի օրինակով, նրանց աճյունները նույնպես հայրենադարձել և ամփոփել հայրենի հողում։

Եգիպտոսում հրատարակվող «Մավառնակ» պարբերաթերթի 1968 թվականի օգոստոսի 31-ի համարում տպագրվել է Հայաստանի կառավարության նախագահին և հասարակական ու մշակութային կազմակերպությունների ղեկավարներին ուղղված բաց նամակ,²⁰⁶ խնդրելով Հայաստան տեղափոխել

206. ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 39, թ. 2-ը «Մառնակ» թերթից կատարված, գրամբեռնայով շարվածքն է՝ արեղյանական ուղղագրությամբ։ Գործում պահպանված է նաև «Մառնակ» թերթի 54-րդ տարի, թիվ 21-22, 1968թ. օգոստոսի 31-ի համարը, որի առաջին էջում տպագրվել է հետևյալ կոչումը, որի հեղինակը, շատ հավանաբար, թերթի արտոնատեր և պատասխանատու տնօրեն Երվանդ Մսրըլյանն է։ Արտատպում ենք կույնությամբ՝ պահպանելով մեծատառերը և շարադրական առանձնահատկությունները։

Բաց նամակ Հայաստանի վարչապետ Հնկ. Բաղդա Մուրատեանին և պետական անձնակազմին,

Միյուրոքահայության Հետ Մշակութային Կապի Կոմիտեի («Կոմիտեի» փոխարեն բնագրում տպագրվել է «Միութեան» - կազմողներ) Նախագահ Հնկ. Վարդգես Համազասպեանին, Գրողներու Միութեան Նախագահ Հնկ. Եղուարդ Թովչեանին,

Երեւան,

Թանկագին Հնկերներ,

Բերանիս մագ բուսա խնդրելով՝ Հայաստան - Երեւանի Հանրապետական փանթեոնը փոխադրելու համար գրականության և արուեստի հետեւեալ հիկց Տիտաններու՝ Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆԻ, ԵՐ. ՕՏԵԱՆԻ, Վ. ԹԵՔԵԱՆԻ ԵՒ ՄԵՐ ՄԱՌԱ ՊԵՐՆԱՐԻ՝ ԱՄԱԶՆ ՍԻՐԱՆՈՅԵՐԻ, նաեւ Փարիզի մէկ գերեզմանատան մէջ հանգչող ԱԶԳ. ՀԵՐՈՍ ԱՆՄԱԶՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ Սրբազան Աճիւնները։

Հայաստանէն իբր թուրիսթ Եգիպտոս այցելող բոլոր Հայրենակիցները՝ Միլվա Կապուտիկեան, Տիգրիսի Բրուտեան, Եղ. Թովմեան, Գաբրիել Արեւեան, Ա. Սարոյեան, Բերաբէ Գրիգորեան, են., անպայման կը փափագին այցելել անոնց Գերեզմանները - Վկայ Հնկ. Արշալոյս Արշալոյսին - և ցաւ կը յայտեն անոնց Սրբազան Աճիւնները դէռ հոս մնալուն։

Վստահ կրնաք ըլլալ որ տեղույս Սովետ. Դեպքանատան մէջ գտնուող աւագ պաշտօնեա-

Ա. Արփիարյանի,²⁰⁷ Եր. Օտյանի,²⁰⁸ Վ. Թեքեյանի, Միրանուշի²⁰⁹ և ազգային հերոս Անդրանիկի²¹⁰ աճյունները։

Հայրենի կառավարության ուշադրությունը ամբողջ սփյուռքահայության կողմից կգնահատվի ջերմ երախտագիտությամբ, Մայր Հայրենիքի հմայքը առավել կմեծանա ու կտարածվի առաջավոր և հայրենասեր լայն զանգվածների շրջաններում, որոնք նոր եռանդով և ոգևորությամբ կկապվեն Սովետական Հայաստանի հետ։

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը Հայաստան տեղափոխելու Ա. Արփիարյանի, Եր. Օտյանի, Վ. Թեքեյանի, Միրանուշի և Անդրանիկի աճյունները։

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 39, թ. 1: Պատճեն: Մեքենագիր:

ներեն՝ Պօղոս Ակոբով, Մերկել Առաքելեան և Պարոյր Թալալեան իրենց օժանդակությամբ սիրով կը մատուցանեն՝ նուիրական այս սրբազան նպատակին իրագործման։

Վստահ ենք որ մեր այս նուիրական պարտքը կատարել իրենց ալ ջերմ փափագն է, որուն չենք տարակուսիր երբեք։

Յայտնելով կանխառ մեր երախտագիտական շնորհակալությունները, կը սպասենք ակնդէտ ձեր բարեհաճ կարգադրութեան։

յարգալիր զգացումներով՝ Մառնակեան Շրջանակ

3. Գ. Անհուսթեկն ուրախ ենք, որ Միյուրոքեն՝ Ամմանի ԿՈՄԻՏԱՍԻ Սրբազան Մատուցները միայն արժանացան հայրենի բանթեոնի մէջ ամփոփուելու, որպէսզի ծառայէ ուխտատեղի հայ տոհմիկ արուեստի հրաշքով ապրող հայրդիներու։

Գործում պահպանվել է նաև (թ. 4) ՀԽՍՀ Նախարարների խորհրդի գործերի կառավարչի տեղակալ Ռ. Թումանյանի ռուսերեն գրությունը՝ ուղղված Վ. Համազասպյանին և Էղ. Թովչեյանին, ուր եւս հայտնում է, թէ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Լ. Ա. Ստեփանյանը իրեն հանձնարարել է «Մառնակի» հրապարակումը վերահասցեագրել այս երկու կառույցների ղեկավարներին՝ բարձրացված հարցի վերաբերյալ իրենց առաջարկները ներկայացնելու համար։

207. Արփիարյան Արփիար Փիլիպպոսի (1851, Մամսոն - 1908, Կահիրե) - Գրող, հրապարակագիր, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսում և Վենետիկում։ Հնկերների հետ հիմնել է «Արարատյան» ընկերությունը, որի նպատակն էր դպրոցներ բացել Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղական բնակավայրերում։ Խմբագրել է մոտ տասը անուն պարբերականներ, երեք տասնամյակ աշխատակցել Թիֆլիսի «Մշակ» օրաթերթին։ Եղել է Վերակազմվալ Հնչակյան կուսակցության ղեկավարներից և ներկուսակցական հարցերի պատճառով սպանվել։ Ունի պատմվածքների շարք, ժողովածուներ։

208. Օտյան Երվանդ Խաչիկի (1869, Կ. Պոլիս - 1926, Կահիրե) - Ավանի երգիծագիր, խմբագիր և հրապարակագիր։ Սովորել է ծննդավայրի Պերպեյան վարժարանում։ Մեծ եղենից հրաշքով է փրկվել, վարել աստանդական կյանք։ Գրել է ֆելիետոններ, պամֆլետներ, երգիծական պատմվածքներ, որոնց մեջ առանձնանում են «Հնկեր Փանջունու» կերպարով ստեղծագործված երկերը։

209. Միրանուշ (խակական անունով՝ Գանթարճյան Մեհրյուբե Սահակի (1857, Կ. Պոլիս - 1932, Կահիրե) - Նշանավոր դերասանուհի։ Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում։ Անձնավորել է շուրջ 300 կերպար։ Հյուրախաղերով հանդես է եկել բազմաթիվ երկրներում՝ իր տաղանդով գերելով հանդիսատեսներին։

210. Օզանյան Անդրանիկ Թորոսի (1965, Շապին-Գարահիսար - 1927, Ֆրեզնո, աճյունները հանգչում են Երևանում՝ Ետաբուրի պանթեոնում) - Հայ ազգային հերոս, ազգային ազատագրական շարժման քաղաքական և ռազմական գործիչ, ֆիդայապետ, գեներալ-մայոր։ Նրան ձուլվել են ժողովրդական բազմաթիվ երգեր, ասեր և այլ ստեղծագործություններ։

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՓՈԽԱԴԱՐԱՂ ԿԱՊԵՐԻ
ԱՄՐԱԴՆԱՄԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻ ՂԱՇՆԱՄՈՒՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի բարեկամ,

Նախ պիտի հայտնեմ մեր խորին շնորհակալությունը Կոմիտեին նվիրված այս հրաշալի լուսարձակ մեքենայի համար, և՛ լավ նկարի, և՛ Հակոբ Մեծուրու արվեստի տեղափոխման գործի կազմակերպման, և՛ առհասարակ այն բոլոր հայրենանվեր գործերի, որ արել եք մինչև այժմ ու շարունակում եք այդպիսի սիրով:²¹¹ Սակայն ուզում եմ շեշտել, որ ամենանշանակալից ու կարևոր գործը կլինի, իհարկե, եթե Դուք իսկապես կարողանաք Կոմիտասի դաշնամուրը դուրս բերել Պոլսից: Ձգուշացնեմ, որ այդ պետք է արվի չափազանց զգույշ, քանի որ կարող ենք բոլորովին կորցնել այն: Մինչև այժմ գաղտնի է պահվել, որ դա Կոմիտասի դաշնամուրն է: Մեր կարծիքով, երկրի տերերը եթե իմանան, անմիջապես կարող են բռնագրավել այն: Երեք տարի է արդեն, այս մասին մտախոցված են և ցանկանում են մեզ օգնել բավական գործարար և ազդեցիկ սփյուռքահայ բարեկամներ, բայց մինչև այժմ գործը տեղից չի շարժվել, ամենանշանակալիցությունը կարող է մեծ վնաս բերել: Բոլորիս վերջնական եզրակացությունն այն է, որ առանց հայտնելու, թե ում է պատկանում դաշնամուրը, պետք է ձևակերպել կեղծ վաճառք և դուրս բերել Պոլսից որպես գնված գործիք: Եթե Դուք կարող եք վճռել ավելի լավ ելք ու ճանապարհ՝ Պոլսից դուրս բերելու, խնդրում ենք այդ մասին հայտնեք մեզ: Եթե կարողանաք այն բերել Ցյուրիխ, այն ժամանակ Ձեզ հետ միասին կխորհրդակցենք և կորոշենք հետագա անելիքը: Փոխադրության ծախսերը ինչպես նաև վարժարանի համար նոր դաշնամուր գնելը և ուղարկելը Կոմիտեն վերցնում է իր վրա:

Եթե Ձեզ հաճելի լինի, դաշնամուրը կարող եք բերել ինքներդ և դա ամենամեծ նվերը կլինի Հայրենիքին:

Համոզված եմ, որ այդ օրերին մենք ժամանակ կգտնենք հանդիպելու և ավելի հանգիստ պայմաններում խոսելու և որոշելու մեր հետագա անելիքները:

Շնորհակալության և հարգանքի զգացումով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 525, թ. 45: Պատճեն: Մեքենագիր:

211. Նկատի ունի նույն տարի Կոմիտասի ծննդյան 100-ամյակի հանդիսավոր նշումը Խորհրդային Հայաստանի մեջ:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՅ Բ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՍՓՅՈՒՌՔԻՑ ՍՏԱՅԿՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ ԱՎԵԼԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության, գիտության, մշակութային հաջողությունները որոշակի տեղաշարժ են կատարել սփյուռքահայ զաղթօջախներում: Մայր Հայրենիքի հետ ունեցած մշակութային կապերի սերտացմանը զուգընթաց վերջին տարիներին նկատվում են տրամադրություններ, երբ սփյուռքի բարեսիրական, բարեգործական, հայրենակցական միություններն ու առանձին անհատներ հայրենասիրական զգացմունքներից դրդված մեծ չափերի հասնող գումարներ կամ իրենց միջոցներով ձեռք բերված սարքավորումներ, գրականություն և այլ արժեքներ են նվիրում Սովետական Հայաստանի գիտահետազոտական, առողջապահական, մշակութային, տնտեսական կազմակերպություններին ու հաստատություններին: Վերջին երկու տարիների ընթացքում ստացված սարքավորումների ու գիտական գործիքների արժեքը արդեն անցնում է 500 հազար դոլարից: Ամեն տարի միայն Գալուստ Գյուլբենկյան հիմնարկությունը Երևանի բարձրագույն հաստատությունների և գիտական հիմնարկների համար ձեռք է բերում 150 հազար դոլարի սարքավորում: Հայրենակցական միությունների հատուկ ֆոնդ է ստեղծվել Փարիզում, և շուրջ 80 հազար դոլար գտնվում է հասարակական գործիչ Ադասի Դարբինյանի տրամադրության տակ, որը գնումներ է կատարում մեր հանրապետության համար՝ համաձայն Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և հայրենակցական միությունների պայմանավորվածության:

Վերջին հինգ տարիների ընթացքում սփյուռքահայ հայրենասիրական կազմակերպությունների և առանձին անհատների նվիրատվությունների ընդունման, սարքավորումների ձեռք բերման ու պատկան կազմակերպություններին հանձնելու գործը ՀՍՄՀ Միխիստրների սովետի համաձայնությամբ կատարել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն՝ մշակութային կապերի հետագա սերտացման ու զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներին զուգընթաց:

Մեր տրամադրության տակ եղած նյութերի ուսումնասիրությունը և վալյուտայի օգտագործման անցած տարիների փորձը մեզ բերել են այն եզրակացության, որ անհրաժեշտ է հատուկ որոշմամբ արտասահմանյան վալյուտայի օգտագործման միասնական կարգ սահմանել՝ հետագայում այդ գումարներն ավելի նպատակային օգտագործելու համար:

Ձեր ուշադրությանն ենք հանձնում վալյուտայի գոյացման հետևյալ աղբյուրները.

1. Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության տարեկան հատկացումները /150 հազար դոլար/, որ համապատասխան աշխատանքի դեպքում կարող է ավելանալ:

2. Հայրենակցական միությունների հատկացումները /տարեկան 50-60 հազար դոլար/:

3. Հայաստանի անունով կատարված կտակներ:

4. Մեծահարուստների նվիրատվություններ:

5. Հայկական բարեգործական ընդհանուր միության տրամադրության տակ գտնվող Մեղգոնյան և Մարկոսյան ֆոնդերը /կտակներ/, որոնց ընդհանուր գումարը անցնում է 2 միլիոնից:

Անհրաժեշտ է, որ ամեն տարի ՀՍՍՀ Մինիստրների սովետի համապատասխան բաժինը և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն նախապատրաստեն, մշակեն և կառավարությանը ներկայացնեն նախորդ տարվա հաշվետվությունը, ինչպես նաև առաջիկա տարում սպասվելիք աղբյուրներն ու բաշխումը:

Ձեզ հայտնի է, որ Մշակութային կապի կոմիտեն անցած տարիներին այդ կարևոր տնտեսական ու ֆինանսական գործը կազմակերպել է ոչ մասնագետ և սակավաթիվ աշխատակիցների միջոցով, որը մեծ դժվարություններ է ստեղծել աշխատանքի ընդգրկման ու հետագա ծավալման համար: Ուստի կարծում եմ, որ այդ աշխատանքներն ավելի կազմակերպված հունի մեջ դնելու և վալյուտային ֆոնդերին առընչվող գործարքները բարձր պատասխանատվությամբ ու մասնագիտորեն ղեկավարելու համար անհրաժեշտ է մեր կոմիտեին առանձնացնել ինժեների և տնտեսագետի հաստիքներ:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 2, թթ. 12-14: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԵԱՌԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ԴԲԸՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՎԱՐՏԻՆ ՏՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

Գերաշնորհի հայրեր,

Պարոն Ալեք Մանուկյան,

Պարոն Երվանդ Հյուսիսյան,

Պարոնայք,

Այստեղ նստած ես և մեր անվանի բանաստեղծ Վահագն Դավթյանը մտովին անցանք քանական թվականների վերջերը, երբ ստեղծվեց ֆրանսահայ գրող Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի» նշանավոր գործը: Շահնուրը տեսնելով իր հարազատ ժողովրդի մղձավանջը և նոր երկրների ձուլող հնոցը, կարծում էր, թե մի քանի տասնամյակից հետո սփյուռքահայությունը կնահանջի, կձուլվի, կանեանա և այլևս չի լսվի դարերի խորքից եկող մաշտոցյան հարազատ լեզուն, ոչ ոք չի խոսի Խորենացու և Նարեկացու հանճարի մասին, այլևս չի հնչի Սայաթ-Նովայի երգը: Հուսահատություն ապրող գրողը ի՞նչ իմանար, որ իր ժողովուրդը տասնամյակների հետ այնքան ուժ կգտնի իր մեջ, որ ոչ միայն կուղղի իր կորացած մեջքը, այլև Փարիզի շքեղության սրահներից մեկում կհավաքի այնքան հայ բազմություն, որը հաստատ հավատով կխոսի հայապահպանության, մատաղ սերնդի հայեցի դաստիարակության, գոյատևման մասին, հնչեցնելով հայ երգն ու պարը նման սրահներում և ոչ միայն նման սրահներում, այլև Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի դահլիճում և Ֆրանսիայի մի շարք քաղաքներում, ֆրանսիացի ժողովրդի հետ փառահեղորեն կտոնի իր վերածնված հայրենիքի մայրաքաղաք Երևանի 2750-ամյակը: Այդ ուժը մեր ժողովուրդը իր մեջ գտավ շնորհիվ այն փոքրիկ երկրի, որը աշխարհի քարտեզի վրա գծագրվեց 50 տարի առաջ որպես հայոց նոր պետություն: Այդ փոքրիկ Հայաստանը, անցած տասնամյակներում, որքի, գաղթականության, աղքատության երկրից դարձավ աշխարհի ճանաչում գտած առաջավոր երկրներից մեկը, իր զարգացած արդյունաբերությամբ, իր մշակույթով, իր ծաղկուն գիտությամբ:

Մեր հայրենիքը՝ Հայաստանը, ոչ միայն դարձել է տնտեսապես հզոր երկիր, այլ՝ կրթության և բարձրագույն դպրոցների լայն ցանցի երկիր, ավելի քան 670 հազար պատանիներ են սովորում Հայաստանում, այսինքն երկրում ապրող ամեն 4 բնակչից մեկը սովորող է: Հայ երիտասարդը, որ անցյալում, երկրում բարձրագույն դպրոցի բացակայության պատճառով թափառում կյանք էր վարում և իր բարձրագույն կրթությունը ստանում օտար երկիրներից տակ, այսօր, շնորհիվ նոր Հայաստանի, հնարավորություն ունի բարձրագույն կրթություն ստանալ բոլոր մասնաճյուղերի գծով Երևանում և հանրապետության այլ քաղաքներում: Շուրջ 60 հազար հայ երիտասարդներ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն են ստանում Հայրենիքում:

Ոչ միայն Հայրենիքում ապրողների համար, այլև սփյուռքահայ երիտասարդության համար իր համալսարանների դռները լայնորեն բացել է հայրենի կառավարությունը: Ավելի քան 360 սփյուռքահայեր մեր պետության միջոցներով սովորում են Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, շուրջ

200 սփյուռքահայ դպրոցականներ ամեն տարի ամռանը իրենց հանգիստն են անց կացնում Հայրենիքի ամառանոցային գեղատեսիլ վայրերում, 30 ուսուցիչներ ամռանը կատարելագործվում են Երևանում: Հայրենիքը հսկայական միջոցներ է տրամադրում սփյուռքահայ դպրոցների դասագրքերի տպագրությանը՝ ձրիաբար դպրոցներին ուղարկելու համար: Ինչպես տեսնում ենք, Հայրենիքը 20-ական և 30-ական թվականների աղքատ երկիրը չէ, որը ՀՕԿ-ի²¹² կարիքն էր զգում, Հայրենիքը մեծ ուժի հասած հանրապետություն է, որը իր օգնության ձեռքն է մեկնում հարազատներին, սփյուռքահայերին հայապահպանության, մատաղ սերնդի հայեցի դաստիարակության, ամբողջ հայությանը Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի շուրջը համախմբելու համար: Մեր հայրենիքի ուժը նրա ստեղծագործ ժողովրդի մտքի թռիչքի մեջ է, այն թռիչքը, որը աշխարհին տվեց Բյուրականը, որը Երևանում գործարկեց իր հզորությամբ Եվրոպայում 2-րդ արագացուցիչը, որը հսկայական միջոցներ և եռանդ է դնում 50 կիլոմետրանոց փակուղին բացելու՝ մեր չնաշխարհիկ Սևանը հավերժ պահելու համար:

Ինձ համար դժվար է այս հանդիսությանը մեկ առ մեկ թվել այն նվաճումները, որ ձեռք է բերել մեր ստեղծագործ ժողովուրդը անցած տարիներին: Ապագա պատմաբանները այլևս արցունքն աչքներին չեն ողբա մեր ժողովրդի դժբախտ ճակատագիրը. նրանք ոսկի տառերով կքանդակեն այն հերոսական աշխատանքը, որի ջնդիրով հայ ժողովուրդը իր արժանավոր տեղը գրավեց քաղաքակրթության շարքերում:

Սիրելի հայրենակիցներ, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն իր համեստ նվերն է բերել Հայկական բարեգործական ընդհանուր միությանը, այն հաստատությանը, որը 60 տարի շարունակ հետևել է այն իմաստությանը, որն ասում է՝ ավելի լավ է ամեն օր մեկ մոմ վառել, քան նստել և անիծել խավարը:

Ահա՛ մենք բերել ենք մեր ժողովրդական նկարիչ Սուրեն Ստեփանյանի²¹³ փայտյա մի աշխատանքը, որը պատկերում է Մեսրոպյան երեք տառեր՝ Ա, Բ, Գ և մոմակալ: Մենք հույս ունենք, որ Բարեգործականի ամենօրյա վառված մոմերը կբազմապատկեն և կանհետացնեն այն խավարը, որը կոչվում է ձուլում:

Թույլ տվեք այս հանդիսավոր պահին այս համեստ նվերը հանձնել Բարեգործական ընդհանուր միության արժանավոր նախագահ Պ. Ալեք Մանուկյանին:

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 42, թթ. 1-3: Պատճեն: Մեքենագիր:

212. ՀՕԿ՝ Հայաստանի Օգնության կոմիտե – Խորհրդային Հայաստանի կառավարության նախաձեռնությամբ 1921թ. սեպտեմբերին ստեղծված հասարակական կազմակերպություն՝ սփյուռքահայ գաղթօգնականների օգնություն ստանալու նպատակով: Ունեցել է բազմաթիվ մասնաճյուղեր աշխարհի շատ երկրներում, նաև՝ ԽՍՀՄ քաղաքներում: Գործել է 1921-1937թթ.: Ղեկավար մարմինը կազմակերպության նախագահությունն էր: Առաջին նախագահն է եղել Հովհաննես Թումանյանը:

213. Ստեփանյան Սուրեն Շավարշի (1915, Ալեքսանդրապոլ, այժմ՝ Գյումրի – 1977, Երևան) – Գեղանկարիչ: Ավարտել է Երևանի Գեղարվեստա-արդյունաբերական և Լենինգրադի Գեղարվեստա-մանկավարժական ուսումնարանները: ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ է (1961): Նկարազարդել և ձևավորել է հայ գրողների շուրջ 300 գրքեր, աշխատակցել պարբերականների, մասնակցել բազմաթիվ ցուցահանդեսների:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԵՎ Վ. ՂԱՎԹՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԴԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՍՈՍԻՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ ԴԲԸՄ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԱՅՂ ԿԱՊԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԵՆՑ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես Ձեզ հայտնի է, Հայկական բարեգործական ընդհանուր միության հրավերով մենք ս.թ. մայիսի 5-ից 26-ը եղանք Ֆրանսիայում և մասնակցեցինք Միության համագումարին, որն իր բնույթով առաջինն էր Ետպատերազմյան տարիներին:

Մեր առջև խնդիր էր դրված, մասնակցելով համագումարին, նպաստել, որպեսզի այսուհետև առավել նպատակասլաց օգտագործվեն Բարեգործականի տրամադրության տակ դրված այն կտակները, որոնք վերաբերում են Սովետական Հայաստանին, քայլեր անել, որպեսզի փոփոխություն մտցվի ՀԲԸ Միության կանոնադրության մեջ, միջոցներ ձեռնարկել, որպեսզի Բարեգործականի ղեկավարությունն ավելի մերձենա Հայրենիքին, մոտիկից ճանաչի հայրենի իրականությունը:

Ձեզ սկզբից նշենք, որ համագումարը խորհրդակցական բնույթ էր կրում: Նրա աշխատանքներին մասնակցում էին հետևյալ երկրների ներկայացուցիչները. Ֆրանսիայից՝ 20 պատվիրակ, Բելգիայից՝ 3, Պորտուգալիայից՝ 1, Շվեյցարիայից՝ 3, Իտալիայից՝ 4, Սիրիայից՝ 3, ԱՄՆ-ից՝ 8, Լիբանանից՝ 8, Անգլիայից՝ 3, Հունաստանից՝ 1, Իրանից՝ 2, Բրազիլիայից՝ 1, Ավստրալիայից՝ 1, Մոնակոյից՝ 1, Արգենտինայից՝ 1, Եթովպիայից՝ 2, ընդամենը 63 պատվիրակ: Համագումարին մասնակցում էին նաև շուրջ 15 հյուրեր:

Համագումարի նախօրյակին մենք մոտ 2 և կես ժամ տևող զրույց ունեցանք ՀԲԸ Միության նախագահ Ալեք Մանուկյանի հետ: Զրույցի ընթացքում, որին ներկա էր նաև Բարեգործականի փոխնախագահ և Եվրոպականի նախագահ Երվանդ Հյուսիսյանը, մենք հիմնականում շոշափեցինք Հայաստանին վերաբերող կտակների օգտագործման, ինչպես նաև կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու հարցերը: Ինչպես հայտնի է, Բարեգործականի 1906 և 1924 թվերի կանոնադրության առաջին հոդվածը ձևակերպված է եղել այսպես. «Օժանդակել հայ ժողովրդի և իր հայրենիքի մտավոր և բարոյական զարգացման»: Սակայն 1955թ. Բարեգործականի ղեկավարությունը նոր կանոնադրության մեջ հայրենիքը դուրս է թողել և նշել, որ ՀԲԸ Միությունը պետք է գործի «ապաքաղաքական գետնի վրա, առանց սեռի և դավանանքի խտրության, հոգուտ հայ ժողովրդին բարոյական, մտավորական, մշակութային և տնտեսական ընդհանուր բարօրության»:

Զրույցի ընթացքում Մանուկյանը նշեց, որ կանոնադրության այդ փոփոխությունը կատարվել է ոչ թե հայրենասիրության պակասից, այլ՝ սառը պատերազմի մթնոլորտում ստեղծված քաղաքական հանգամանքների հետևանքով, ինչպես նաև այն պատճառով, որ ըստ ամերիկյան օրենքների, եթե բարեգործական հաստատությունները գործ են ունենում պետականություն ունեցող

ժողովուրդների հետ, ապա պարտավոր են տարեկան շուրջ կես միլիոն դոլար հարկ վճարել պետությանը:

Սակայն մենք նշեցինք, որ այնուամենայնիվ հնարավոր է գտնել Հայրենիքին վերաբերող կտակները նպատակահարմար օգտագործելու ուղիները, և առաջ քաշեցինք Միության Շվեցարական մասնաճյուղի համար Հայրենիքի իրավունքները վերականգնող հատուկ կանոնադրություն ընդունելու և Շվեյցարիայում, ուր չեն գործում ամերիկյան օրենքները, դրամագլուխ պահելու և Հայաստանի կտակները այնտեղ տեղափոխելու հարցերը: Որոշ առարկություններից հետո Մանուկյանը խոստացավ մեր նկատառումները դնել համագումարի հայեցողությանը:

Ջրույցի ընթացքում մենք կարծիքներ փոխանակեցինք նաև հայապահպանության հետ կապված մի շարք հարցերի և այդ ասպարեզում Հայրենիքի և Բարեգործականի փոխհարաբերության և անելիքների մասին: Մենք մանրամասնորեն պատմեցինք այն բոլոր միջոցառումների մասին, որ ձեռնարկում է Սովետական Հայաստանի կառավարությունը Հայրենիքի և սփյուռքի կապերն ամրապնդելու հայապահպանությանը նպաստելու, սփյուռքի աճող սերնդին հայրենասիրության ոգով դաստիարակելու ուղղությամբ: Եվ պետք է ասել, որ մեր հաղորդումները մեծապես ոգևորեցին Մանուկյանին:

Ջրույցի ընթացքում մեզ համար պարզ դարձավ, որ թեև Մանուկյանը քաղաքական նկատառումներով մեծ զգուշություն է ցուցաբերում Հայրենիքի և Բարեգործականի կապերի ընդլայնման հարցում, սակայն մեծապես գոհ է, որ համագումարին մասնակցելու են եկել Հայրենիքի ներկայացուցիչները, դրա մեջ տեսնելով ՀՀԸ Միության գործունեության գնահատությունը:

Այդ զրույցի անմիջական հետևանքն այն եղավ, որ չնայած մենք նախապես համագումար էինք հրավիրված սոսկ որպես դիտորդներ, Բարեգործականի Կենտրոնական վարչության որոշմամբ համագումարի պատվիրակների իրավունք և տոմս ստացանք, ընտրվեցինք նախագահության կազմում, որը մեզ հնարավորություն տվեց ակտիվորեն մասնակցել համագումարի աշխատանքներին, հարցերի քննարկման ժամանակ մի շարք ելույթներ ունենալ և ազդել համագումարի ընթացքի վրա:

Այդ զրույցի անմիջական արդյունքը պիտի համարել նաև այն, որ բացելով համագումարը, Մանուկյանն իր ելույթը սկսեց հետևյալ խոսքերով.

«Մենք իբրև ներկայացուցիչները ՀՀԸ Միության, բացառիկ կերպով պատվրված և բախտավորված կզգանք այս պատկառելի ժողովին մասնակից տեսնելով հայրենի ժողովուրդին արժանավոր ներկայացուցիչները, որոնց ներկայությունը հավելյալ երաշխիք մը կնկատեմ ժողովին գտնելիք հաջողության»:

Համագումարում քննարկվեցին մի շարք խնդիրներ՝ կրթական, մշակութային, հրատարակչական, մարմնամարզական և այլն, սակայն հիմնականը միության նոր կանոնադրության մշակման հարցն էր: Կանոնադրության նախագիծը նախօրոք առաքված էր եղել համագումարի պատվիրակներին, որոնք տեղերում ուսումնասիրել էին այն և համագումար եկել իրենց առաջարկություններով:

Ինչպես վերևում նշեցինք արդեն, նոր կանոնադրության մեջ ամենակարևորը Հայրենիքի իրավունքների վերականգնման հարցն էր: Եվ պիտի ասել, որ համագումարի պատվիրակների հայրենասիրական թևը /Ե. Չյուսիսյան, Կ. Զրբաշյան²¹⁴ և ուրիշներ/ Մանուկյանին և նրա համախոհներին հասկացնել տվեց, որ եթե կանոնադրության մեջ չվերականգնվեն Հայրենիքի իրավունքները, ապա իրենք ստիպված կլինեն իրենց կտակները չդնել Բարեգործականի տրամադրության տակ: Ինչպես երևաց համագումարի հետագա ընթացքից, նրանց ճնշումը և մեր միջամտությունը թուլացրին Մանուկյանի դիրքերը: Նա համաձայնեց Միության Շվեցարական մասնաճյուղի կանոնադրության մեջ վերականգնել Հայրենիքի իրավունքները և խոստացավ, ի նկատի ունենալով քաղաքական մթնոլորտի փոփոխությունը, օրենսդիր համագումարի ժամանակ այդ կետն անցկացնել նաև հիմնական կանոնադրության մեջ:

Կրթական, մշակութային, հրատարակչական, մարմնամարզական և այլ հարցերի քննարկման ժամանակ մենք մի քանի անգամ ելույթներ ունեցանք, մի շարք առաջարկություններ արեցինք, ցույց տալով Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի պատրաստակամությունն այդ բոլոր հարցերում օգնելու և օժանդակելու Բարեգործականին: Պիտի նշել այն ջերմությունն ու աշխուժությունը, որ համագումարի պատվիրակները հանդես էին բերում մեր ելույթների նկատմամբ՝ հանձին մեզ տեսնելով Սովետական Հայաստանի կառավարության և հայրենի մշակույթի ներկայացուցիչներին: Պիտի նշել նաև, որ համագումարի մթնոլորտը հայրենասիրական ջերմ շնչով էր համակված, քանի որ պատվիրակների մի զգալի մասը այցելել էր Հայրենիք, հաղորդվել նրա իրականությանը և իրենց ելույթներում ոգևորությամբ ու սիրով էին նշում Հայրենիքի տնտեսական ու մշակութային վերելքը և պատրաստակամություն հայտնում իրենց մասնակցությունը բերելու Հայաստանի վերաշինությանը:

Անհրաժեշտ ենք համարում, նշել, որ համագումարի ընթացքը շատ բան փոխեց Բարեգործականի դեկավարության և այն պատվիրակների մեջ, որոնք չէին եղել Հայրենիքում և աղոտ պատկերացում ունեին Սովետական Հայաստանի իրականության վերաբերյալ: Դա հատկապես դրսևորվեց համագումարի ավարտման առթիվ Բարեգործականի տված ճաշկերույթի ժամանակ պատվիրակների և առանձնապես Ալեք Մանուկյանի արտասանած գրավոր ընդարձակ ճառի մեջ, ուր նա շեշտված ոգևորությամբ խոսեց Սովետական Հայաստանի վերելքի, սփյուռքի դպրոցներին, մշակութային կազմակերպություններին և ընդհանրապես հայապահպանության գործին հայրենի կառավարության ցույց տված մեծ օգնության ու օժանդակության մասին: Դա դրսևորվեց նաև այն բանի մեջ, որ Ալեք Մանուկյանը, որը նախկինում լռությամբ էր պատասխանել Հայրենիք այցելելու մեր հրավերին, այժմ ոգևորությամբ ընդունեց դա և խոստացավ առաջիկա սեպտեմբերին անպայման գալ Հայաստան:

Համագումարի ընդմիջումներին, ինչպես նաև համագումարից հետո, մենք հնարավորություն ունեցանք անձնական զրույցներ ունենալ մի խումբ մեծա-

214. Զրբաշյան Կարպիս (ծն. 1928-ին) – Ֆրանսահայ գործարար, մտավորական և հասարակական գործիչ: Եղել է ՀԲԸՄ Կենդրոնական վարչական ժողովի անդամ: Զվարթաբանությամբ համեմված հրապարակումներով հանդես է գալիս Բեյրութի «Նայիրի» պարբերաթերթում:

հարուստների և սփյուռքի հասարակական-մշակութային մի շարք գործիչների հետ և շոշափել հայապահպանությանը, Հայրենիքի և սփյուռքի մշակութային կապերի ամրապնդմանը վերաբերող մի շարք հարցեր: Այդպիսի անձնական գրույցներ ունեցանք Ալեք Մանուկյանի /ԱՄՆ/, Երվանդ Հյուսիսյանի /Խուսիս/, Բարունակ Թովմասյանի²¹⁵ /Լիբանան/, Մարտիրոս Դարակչյանի /Եթովպիա/, Հայկաշեն Ուզունյանի²¹⁶ /Եթովպիա/, Մուրեն Ֆեսճյանի /ԱՄՆ/, Վարդգես Բոյաջյանի /Անգլիա/, Մուշեղ Ճիերճյանի /Մոնակո/, Կարպիս Զրբաշյանի /Ֆրանսիա/, Տատուր Տատուրյանի /ԱՄՆ/, Գրիգոր Թովմասյանի /Ֆրանսիա/, Վարդան Մուրտիկյանի /Բելգիա/, Ռոբերտ Գյուլբենկյանի /Պորտուգալիա/, Անդրանիկ Ծառուկյանի /Լիբանան/, Վահրամ Մավյանի /Պորտուգալիա/, Էոժեն Փավազյանի²¹⁷ /Շվեյցարիա/, Վիլյամ Մարոյանի²¹⁸ /ԱՄՆ/, Գառգուի /Ֆրանսիա/, Անրի Վեռնոյի /Աշոտ Մալաթյան, Ֆրանսիա/, Էդգար Շահինի որդու՝ Պետրոս Շահինի /Ֆրանսիա/ և այլոց հետ:

Զրույցներից մեկի ժամանակ Ալեք Մանուկյանը մեզ տեղեկացրեց, որ Վիեննա է հրավիրել Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին և ամերիկահայ մեծահարուստ Տատուր Տատուրյանին, քննարկելու Արփա-Սևան թունելի համար անհրաժեշտ ագրեգատներ ձեռք բերելու հարցը, և հավաստիացրեց, որ դա դրական լուծում կստանա: Հետագայում Մանուկյանի հանձնարարությամբ, Տատուրյանը Վիեննայից եկավ Փարիզ, գրույց ունեցավ մեզ հետ և հայտնեց, որ հարցն, իսկապես, սկզբունքորեն դրական լուծում է ստացել: Անհրաժեշտ ենք

215. Թովմասյան Բարունակ Վարդանի (1910, Գյուլդաղ, Բուրսայի նահանգ, Թուրքիա – 1991, Ռոթերդամ, ԱՄՆ) – Հասարակական գործիչ, ՌԱԿ Կենտրոնական վարչության ատենապետ, Հայ երիտասարդաց ընկերակցության հիմնադիրներից և երա Կենտրոնական վարչության ատենապետ, Թեքեյան մշակութային միության հիմնադիր և երա Հիմնադիրներու մարմնի երկրամաս ատենապետ, ՀԲԸՄ Լիբանանի Երջանակային հանձնաժողովի ատենադպիր, ՌԱԿ օրգան «Զարթոնք» օրաթերթի արտոնատեր-տնօրեն:

216. Ուզունյան Հայկաշեն (1920, Աղանա – 2006, Լաոնակա) – Հասարակական գործիչ, ՌԱԿ, ԹՄՄ և ՀԲԸՄ ղեկավար, բարերար: Ավարտել է Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունը և Բելյուրի Ֆրանսիական համալսարանը՝ ինժեների մասնագիտությամբ: Եղել է ՀԲԸՄ Կենտրոնական վարչական ժողովի փոխնախագահ, Լիբանանի Երջանակային հանձնաժողովի ատենադպիր: 1947-ին մի խումբ ընկերների հետ հիմնել է Թեքեյան մշակութային միությունը: Մեծ ներդրում ունի Մելգոնյան կրթական հաստատության բարեկարգման մեջ: Իր անունով հաստատել է ԹՄՄ-ի կառույցում ընդգրկված գրական մրցանակը:

217. Փավազյան Էոժեն (1887, Բզմիր – 1963, Կահիրե) – ՌԱԿ ղեկավար, հասարակական գործիչ: Կրթությունն ստացել է Ալեքսանդրիայի Պողոսյան և Ֆրերների Սենտ Կատրին վարժարաններում: 1942թ. մի քանի գործակիցներով Կահիրեում հիմնադրել է Հայ ազգային հիմնադրամը: Եղել է ազգային բազմաթիվ կառույցների անդամ՝ երբեմն ղեկավար պաշտոններ ստանձնելով: Եղել է Կահիրեի Հայ գեղարվեստախրաջ միության ատենապետ:

218. Մարոյան Վիլյամ (Ուլիյամ) Արմենակի (1908, Ֆրեզո, Վաշինգտոն, Կալիֆոռնիա) – մի մասը ամփոփվել է Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում, մյուս մասը՝ ծննդավայրում: Ամերիկահայ անգլիագիր աշխարհափոխ գրող: Աշխատակցել է պարբերական մամուլին: Ունի պատմվածքների շարքեր, քննադատական երկեր, գեղարվեստական մեծ արտահայտչականությամբ ու ընդհանրացումներով հարուստ գրվածքներ, վեպեր:

219. Մալաթյան Աշոտ Հակոբի (Անրի Վեռնոյ) (1920, Ռոդոսթո – 2002, Փարիզ) – Աշխարհափոխ կինոռեժիսոր, գրող, Ֆրանսիայի Գրականության և արվեստի ակադեմիայի անդամ (2000): Կրթությունն ստացել է Մարսելում, հայերենը սովորել է ընտանիքում: Նկարահանել է երեք տասնյակից ավելի ֆիլմեր, այդ թվում՝ իր հեղինակած «Մայրիկ» ինքնակենսագրական բնույթի վեպի էկրանավորումն եղող նույնանուն ֆիլմը (1991):

համարում հայտնել, որ այդ խորհրդակցությունը խիստ գաղտնի է եղել, նրա մասին տեղեկություններ չունեին նույնիսկ Բարեգործականի այն ղեկավարները, որոնք մշտապես ուղեկցում էին Մանուկյանին:

Եթովպահայ մեծահարուստ Մարտիրոս Դարակչյանի հետ մեր ունեցած գրույցի ժամանակ, ուր շոշափվում էին հայ մշակութային արժեքները, հայ ժողովրդի պատմությունը, հայկական գենոցիդի հետ կապված փաստաթղթերը աշխարհին ներկայացնելու անհրաժեշտության հարցերը, վերջինս պատրաստակամություն հայտնեց տրամադրել 100.000 դոլար՝ Մ. Ներսիսյանի²²⁰ կազմած հայկական գենոցիդի փաստաթղթերի ժողովածուն,²²¹ ինչպես նաև այդ տիպի այլ գրքեր անգլերեն թարգմանելու և հրատարակելու համար:²²² Մարտիրոս Դարակչյանը միաժամանակ պատրաստակամություն հայտնեց գումար տրամադրել Հայաստանի որևէ ձեռնարկության կամ գիտական հաստատության համար ձեռք բերելու անհրաժեշտ մեքենաներ կամ սարքավորումներ: Նա խնդրեց իրեն ուղարկել այդ մեքենաների անվանումը և արտադրող ֆիրմաների հասցեները՝ դրանք ձեռք բերելու և Հայաստան առաքելու համար:

Ֆրանսահայ մեծահարուստ Կարպիս Զրբաշյանը, որ «Էրեբունի» հրատարակչության նախաձեռնողներից ու ղեկավարներից է, ցանկություն հայտնեց մինչև Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու 50-ամյա հոբելյանը, հայերեն, ֆրանսերեն և անգլերեն հրատարակել հայ ժողովրդի պատմությունը պրակներով՝ եթե ժամանակին իրենց հասցենք պատրաստի աշխատությունը:

Իր բնակարանում հանդիպում և գրույց ունեցանք նաև ֆրանսահայ խոշորագույն նկարիչ Էդգար Շահինի որդու՝ Պետրոս Շահինի հետ: Նա մեզ հայտնեց, որ իր մոտ է պահվում հոր հարուստ ժառանգությունը՝ շուրջ 1000 օֆորտ և գեղանկար, որոնք սիրով պատրաստ է տրամադրել Հայաստանին, պայմանով, որ Հայաստանի պետական հրատարակչությունը համաձայնի տպագրել Էդգար Շահինի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված մի սովոր կատալոգ: Մենք խոստացանք նրան բանակցել հրատարակչության հետ և արդյունքների մասին հայտնել իրեն: Բայց մինչև այդ նա մեր միջոցով Հայաստանի պատկերասրահին նվիրեց 8 նկար:

Նախքան համագումարը և համագումարից հետո հանդիպում ու գրույց ունեցանք նաև Գյուլբենկյան ֆոնդի ղեկավարներից մեկի՝ Ռոբերտ Գյուլբենկյանի հետ: Համագումարն ավարտվելուց անմիջապես հետո նա մեկնեց Հայաստան, շրջագայեց այնտեղ, և վերադառնալով Փարիզով՝ բանակցեց մեզ հետ:

220. Ներսիսյան Մկրտիչ Գեղամի (1910, գյուղ Փարպի, Աշտարակի շրջան – 1999, Երևան) – Պատմական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1950), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1961): 1950-1962թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ, 1966-1977թթ.՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր: 1958-ին հիմնադրել է «Պատմաբանասիրական հանդեսը», որի գլխանս խմբագիրն էր: Ունի մի շարք գիտական աշխատություններ: Առանձնապես հայտնի է Հայոց ցեղասպանության առնչված իր մենագրություններով ու կազմած փաստաթղթերի ժողովածուներով:

221. Խոսքը վերաբերում է «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուին, որը լույս էր տեսել 1966-ին՝ Երևանում:

222. Ժողովածուի անգլերեն թարգմանության այս ծրագիրը չի իրականացվել:

Նա հայտնեց, որ Գյուլբենկյան ֆոնդը պատրաստ է 250.000 դոլար տրամադրել Երևանի Կոմիտասյան սրահի կառուցման, ամբողջ ներքին կահավորումը և երգեհոնը արտասահմանում ձեռք բերելու նպատակին, պայմանով, որ սրահի ներսում որևէ տեղ չըլի, որ այդ ամենը Գյուլբենկյան ֆոնդի նվերն է Կոմիտասի ծննդյան 100-ամյակին:

Ինչպես հայտնի է՝ Փարիզի Նուբարյան գրադարանում է պահվում Պողոս Նուբարի²²³ արխիվը, որի մեջ բազմաթիվ են հայ ժողովրդի պատմության 1914-1925 թվականներին վերաբերող արժեքավոր փաստաթղթերը: Այդ արխիվը Հայաստան տեղափոխելու նպատակով բանակցություններ վարեցինք Բարեգործականի ղեկավարության, հատկապես Ե. Հյուսիսյանի հետ, որը հայտնեց մեզ, որ այդ արխիվները պատկանում են Ամենայն Հայոց կաթողիկոսությանը, քանի որ Պողոս Նուբարը եղել է Մայր աթոռի ներկայացուցիչը, ուստի բավական է Կաթողիկոսի գրությունը Բարեգործականի Եվրոպական շրջանային բաժանմունքին, այսինքն Հյուսիսյանին, որպեսզի այդ արխիվը տեղափոխվի Հայրենիք:

ՀԲԸ Միության համագումարին բերած մեր մասնակցությունը հնարավորություն տվեց մեզ ավելի մոտիկից ծանոթանալ սփյուռքի այդ ամենազանգվածային կազմակերպությանը և գալ հետևյալ եզրակացություններին.

ա/ Քանի որ Բարեգործականի տրամադրության տակ դրված կտակների, այդ թվում նաև Հայաստանին վերաբերող կտակների, հիմնադրամը օգտագործելու իրավունք չունի և ոչ մի կազմակերպություն, իսկ դրանց տոկոսները մեծ գումար չեն կազմում, ապա լիովին ճիշտ պիտի համարել մեր կողմից այդ տոկոսների օգտագործման իրավունքը Բարեգործականին հանձնելու քայլը, քանի որ դա քաղաքական շատ մեծ էֆեկտ ունեցավ, սփյուռքում առավել բարձրացրեց Հայրենիքի հեղինակությունը և հնարավորություն տվեց մեզ ավելի սերտ կապերի մեջ մտնելու սփյուռքի կազմակերպությունների, հատկապես Բարեգործականի ու նրա մեծահարուստ անդամների հետ, կապ, որ մեզ առաջիկայում հնարավորություն կտա շատ ավելի մեծ միջոցներ ձեռք բերել Հայաստանի գիտական հիմնարկներին ու արտադրական ձեռնարկություններին անհրաժեշտ սարքավորումներ և այլ նյութեր ձեռք բերելու համար:

բ/ Բարեգործականի Շվեյցարական մասնաճյուղի կանոնադրության ընդունումը մեզ հնարավորություն կտա Հայաստանին վերաբերող կտակներից ստացվող տոկոսների որոշ մասն օգտագործել արտասահմանում հայ մշակույ-

թի պրոպագանդան, հայ գրականության ու պատմագրության մեծարժեք գործերի թարգմանությունն ու հրատարակությունը կազմակերպելու, սփյուռքում մշակութային կարևոր ձեռնարկումներ անցկացնելու համար:

գ/ Բարեգործականի հետ սերտ կապեր հաստատելու դեպքում Հայրենիքն առավել լայն հնարավորություններ կունենա պատրաստելու սփյուռքի կրթական և մշակութային հիմնարկների հիմնական կադրերը, պրոպագանդիստական նպատակներով օգտագործելու նաև այն հիմնալի սրահներն ու մշակութային օջախները, որոնք ստեղծված են աշխարհի հայաշատ կենտրոններում և գտնվում են Բարեգործականի տրամադրության տակ:

դ/ Հայրենիքի հետ կապելով մի այնպիսի հեղինակավոր ու զանգվածային կազմակերպություն, ինչպիսին Բարեգործականն է, մենք այսուհետև հնարավորություն կունենանք սփյուռքում ավելի դյուրին և համազգային ծավալով իրագործել այն բոլոր ձեռնարկումները, որոնք նվիրված կլինեն Սովետական Հայաստանի պրոպագանդանը:

Այս ամենից ելնելով առաջարկում ենք.

ա/ Բարեգործականի տրամադրության տակ թողնել Մելքոնյան և Մարկոսյան կտակների տոկոսները՝ սփյուռքի կրթական և բարեսիրական նպատակներին օգտագործելու համար:

բ/ Բարեգործականի Շվեյցարական մասնաճյուղի համար կանոնադրության վերջնական հաստատման և ֆոնդերը Շվեյցարական բանկ տեղափոխելու դեպքում ներկայացնել նոր առաջարկներ՝ այդ ֆոնդերի հասույթների օգտագործման համար:

գ/ Հավանություն տալ Վիեննայում կայացած եռյակի խորհրդակցության արդյունքներին և հետևել նրանց իրականացմանը:

դ/ Համաձայնել Գյուլբենկյան ֆոնդի առաջարկությանը և հանձնարարել Մինիստրների սովետին՝ բանակցություններ վարել առաջարկությունն իրականացնելու համար:

ե/ Ընդունել Էդգար Շահինի որդու՝ Պիեռ Շահինի առաջարկը՝ Շահինի ժառանգությունը Հայաստանի պատկերասրահին հանձնելու վերաբերյալ և հանձնարարել Մամուլի կոմիտեին՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հետ նախապատրաստելու և հրատարակելու Էդգար Շահինի գործերի կատալոգը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

զ/ Հանձնարարել Մամուլի կոմիտեին՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հետ միասին օգտագործել Մարտիրոս Դարակչյանի առաջարկը՝ հրատարակչական մեքենաների ձեռք բերման համար:

223. Պողոս Նուբար, Պողոս փաշա Նուբարյան (1851, Կ. Պոլիս – 1930, Փարիզ) – Եգիպտահայ հասարակական-քաղաքական գործիչ, մեծահարուստ, բարերար: Կրթությունն ստացել է Շվեյցարիայում, բարձրագույնը՝ Փարիզում, վկայվել ճարտարագետ: Եղել է Եգիպտոսի երկաթուղիների վարչության տնօրեն: Նրա նախաձեռնությամբ 1906թ. ապրիլի 15-ին Կահիրեում հիմնադրվել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ): Հայկական բարենորոգումների հարցը եվրոպական տնտեսությունների առջև վերստին արձարծելու նպատակով, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը Պողոս Նուբարին նշանակել է Ազգային պատվիրակության նախագահ: Պողոս Նուբարի տրամադրած միջոցներով բացվել են հիվանդանոցներ, դպրոցներ, մշակութային կենտրոններ են., հայրենադարձների համար Երևանի մերձակայքում 1930ականների սկզբին կառուցվել է ներկայումս Երևանի վարչական մաս կազմող Նուբարաշեն ավանը:

է/ Հանձարարել Մինիստրների սովետին՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի միջոցով Հայաստան տեղափոխելու Պողոս Նուբարի արխիվները:

զ/ Հանձնարարել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին՝ գործնական միջոցներ ձեռնարկել սփյուռքով մեկ ցրված հայ նյութական և հոգևոր մշակույթի արժեքները հայտնաբերելու, ձեռք բերելու և Մայր Հայրենիք տեղափոխելու ուղղությամբ:

*Սփյուռքահայության հետ մշակութային
կապի կոմիտեի նախագահ՝*

Վ. Համազասպյան

*Սփյուռքահայության հետ մշակութային
կապի կոմիտեի նախագահի տեղակալ՝*

Վ. Դավթյան

Ֆ. 875, ց. 2, գ. 41, թթ. 15-23: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԻՏԱԼԱԳԱՅ Ս. ՍՐԱՊՅԱՆԻՆ՝²²⁴ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ
ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ «ԽԱԶՁԱՐԵՐ» ԳՐԹԻ ՍՏԱՅՄԱՆ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սիրելի Ստեփան

Ստացանք «Խաչքարերը» անսահման գոհունակությամբ: Ինքդ գիտես թե այդպիսի հրատարակությունը, այդքան գեղեցիկ ու խորը գիտական, ինչ արժե մեր մշակույթը պրոպագանդելու համար, եթե դա գրված է Իտալիայի պես մեծ արվեստների երկրում, իրենց լեզվով: Գիտես նաև՝ մեր մասնագետները պակաս չեն և մենք շատ բարձր մակարդակի գործեր ենք ստեղծում մեր ակադեմիայում, այնպիսի ուսումնասիրություններ, որոնցով ամբողջ աշխարհն է հիանում: Սակայն Իտալիայի ճարտարապետների այդքան սրտագին եվրոպա-ծությունը մեզ համար շատ թանկ արժե:

Եվ ահա ընդառաջելով իրենց խնդրանքին՝ նորից գալու և շարունակելու աշխատանքները, մենք որոշեցինք երեք շաբաթով հրավիրել մեր թանկագին բարեկամ մեծահարգ ճարտարապետ Ալպագո Նովելլոյին, Արմեն Մանուկյանին, Հարություն Ղազանչյանին: Նկատի ունեցանք նաև այն հանգամանքը, որ մասնագետ լավ լուսանկարչի աշխատանքը ևս շատ կարևոր է այս գործում, որոշեցինք իրենց չորրորդ ընկերոջն էլ բերեն, որպես տուրիստ, մնացածը մենք այստեղ կդասավորենք: Մինևոյնն է՝ բոլոր եկողներն էլ գալիս են իրենց ծախսով՝ իրենց երկրից մինչև մեզ հասնելը՝ առաջին ճանապարհածախսը միշտ վճարում են իրենք: Այնպես որ, սիրելի Ստեփան, դու իրենց բացատրիր, թող իմանան, որ փաստորեն տարբերություն չկա: Իրենք գիտեն երևի, որ վիզա ստանալու համար պիտի դիմեն դեսպանատուն. որքան շուտ կատարեն այդ ձևական կողմերը՝ այնքան լավ: Մենք օգոստոսի առաջին կեսից՝ 10-12-ից կսպասենք իրենց:

Ջերմ բարևներս հաղորդիր տիկնոջդ (ծնթ. Ջինա Սրապյան) ու բոլոր բարեկամներին:

Սիրով՝

Կոմիտեի նախագահ

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 4, գ. 300, թ. 3: Պատճեն: Մեքենագիր:

224. Սրապյան Ստեփան (1906, Քոբֆու կղզի, Հունաստան – 1972, Միլան) – Իտալահայ գործարար, բարերար, մշակութային և հասարակական գործիչ: Եղել է Իտալահայ միության վարչության նախագահը, ՀԲԸՄ Իտալիայի Շրջանային հանձնաժողովի ատենապետը: Մեծ օժանդակություններ է կատարել «Նայիրի» շաբաթաթերթին և Մայր Հայրենիքին, հատկապես՝ Մաշտոցի անվան Մատենադարանին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ռ. ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻՆ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՍՐԱԳԻ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅԱԿՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Համագասպյան,

Ստացած եմ Ձեր 4 սեպտեմբեր 1969 թվակիր նամակը Կոմիտասյան սրահին կապակցությամբ:

Ինչպես Փարիզի մեջ ունեցած մեր զրույցի ժամանակ և ավելի վերջ 24 հունիսի նամակով հայտնած էի Ձեզի, մեր հասկացողությունը այն էր, թե հիմնարկության բերելիք նյութական մասնակցությունը պիտի օգտագործվեր առանձնապես սրահին կառուցման և կահավորման: Երկու պարագային ալ նկատի ունեինք զլիավորաբար արտասահմանեն ներածվելիք առարկաներ և կարասիք, որոնք ուղղակիորեն կապված պիտի ըլլային ընդհանուր կառույցին, հարդարանքին և ներքին կահավորման, շենքին տալով բացառիկ շքեղություն մը՝ արժանի այն գնահատանքին ու երախտագիտության, որ մեր ժողովուրդը կտածեր հայ երգի աննման Վարպետին՝ Կոմիտասի հանդէպ:

Այս հիման վրա ալ էր, որ մեր Լիզպոն վերադառնալէն ետք, հարցը ներկայացուցինք մեր Վարչական խորհուրդին և ապահովեցինք վավերացումը 250.000 դոլարի հատկացումին՝ տրամադրելու համար առաջադրված նպատակներուն:

Այս սովորներով չեմ խորհիր թե մեր Վարչական խորհուրդը հավանի տրամադրելի գումարը գործածել խնդրո առարկայ սրահին ուղղակիորեն մաս չկազմող գործիքներու ձեռք բերման:

Պիտի փափագէինք, եթէ կարելի է, առաջին հերթին ունենալ ցանկը Տուն-Համերգասրահին շինության վերաբերյալ և կահավորման համար անհրաժեշտ այն բոլոր առարկաներուն և գործիքներուն – երգեհոն և այլն, որոնք արտասահմանեն պիտի ապահովվին: Այսպիսով կարելի պիտի ըլլա նաև զադափար մը ունենալ, թե տրամադրված գումարը ի՞նչ համեմատությամբ պիտի բաժնվի կառուցման և բարեգարդման վերաբերյալ նյութերու և կահավորման հատուկ առարկաներու միջև:

Ինչ կվերաբերի Ձեր վերջին պարբերության, պրն. Մավյանէն կիմանամ, թե ինք արդէն 3 սեպտեմբերին գրած է Ձեզի, հայտնելու համար թե դժբախտաբար պիտի չկարենա ընդառաջել Ձեր հրավերին՝ ներկա ըլլալու համար Երևանի մեջ տեղի ունենալիք Հովի. Թումանյանի ծննդյան 100-ամյակի հանդիսություններուն:

Ձեզմէ մոտ ատենեն լսելու ակնկալությամբ,

Հարգանք՝

Ռոբեր Գյուլբենկյան

Ֆ. 875, ց. 2, գ. 39, թթ. 24-25: Պատճեն: Սեբեմագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒԴԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
ՀԱՐԱԿԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ
ՀԱՆԳՍՏԱՆԱԼՈՒ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամեն տարի ամռանը, արտասահմանյան տարբեր երկրներից մեծ թվով սփյուռքահայ երեխաներ են ժամանում Սովետական Հայաստան՝ հանգստանալու պիտներական ճամբարներում:

Այդ հնարավորությունից գրկված են Հարավային Ամերիկայի երկրների հայկական գաղթօջախների դպրոցական երեխաները՝ բնակլիմայական պայմանների պատճառով. երբ մեզ մոտ ամառ է, Հարավային Ամերիկայի երկրներում ձմեռ է, և երեխաները չեն կարող կտրվել դպրոցական պարապմունքներից:

Արգենտինայից «Հայ կենտրոն»-ի հայկական ամբողջօրյա երկրորդական վարժարանի տեսուչ Հարություն ծայրագույն վարդապետ Մուշյանը, ինչպես նաև Արգենտինահայ մշակութային միությունը, որ միավորում է համայնքի առաջադիմական ուժերին, բազմիցս դիմել են մեր կոմիտեին՝ հնարավորություններ ստեղծելու հունվար կամ փետրվար ամիսներին Երևանում ընդունելու Արգենտինայում ապրող հայ երեխաներին:

Արգենտինայի սովետական դեսպանության միջոցով օրերս կրկին անգամ ստացվել է Հայ մշակութային միության և հայ դպրոցի տեսուչ Մուշյանի խնդրանքը 1970թ. հունվար-փետրվար ամիսներին Արգենտինայից հրավիրելու երկրորդական վարժարանի 12 շրջանավարտներին:

Նկատի ունենալով, որ Արգենտինայի հայ գաղութից դեռևս ոչ մի դպրոցական և ուսուցիչ չի հրավիրվել Սովետական Հայաստան, խնդրում ենք թույլ տալ մեր կոմիտեի ծախսերով 1970թ. հունվարին մեկ ամսով Երևան հրավիրելու 12 հոգուց բաղկացած շրջանավարտների խմբին՝ դպրոցի տեսուչ Հարություն Ծ. Վ. Մուշյանի զլիավորությամբ: Մինչև սովետական սահման ծախսը ժամանողների հաշվին է:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համագասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 26, թթ. 56-57: Պատճեն: Սեբեմագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Բ. ՄՈՒՐԱՂՅԱՆԻՆ՝ Գ. ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԿՈՌՈՒՅԱՎՈՂ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՍՐԱՅԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

1969թ. հուլիսի 17-ի թիվ 427 գրությամբ Ձեզ տեղեկացնելով, որ Գոմիտասի 100-ամյակի առթիվ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկությունը 250 հազար դրարի նվիրատվություն է կատարել Երևանում կառուցվող Գոմիտասյան սրահի շինարարությանն ու կահավորմանը, միաժամանակ Գոմիտեն հարց էր բարձրացրել ստեղծելու մասնագիտական հատուկ հանձնաժողով, որը կազմի արտասահմանից ձեռք բերվելիք սարքավորումների ու կահավորման ցանկը և ներկայացնի Գոմիտե՝ ուղարկելու Գ. Գյուլբենկյան հիմնարկությանը՝ համապատասխան ֆիրմաներին պատվերներ տալու համար:

Գ. Գյուլբենկյան հիմնարկության «Հայկական ձեռնարկներ» բաժնի վարիչ Ռոբերտ Գյուլբենկյանը կրկին անգամ դիմել է մեր կոմիտեին՝ խնդրելով հնարավորին չափ արագացնել Գոմիտասյան սրահի կահավորման համար անհրաժեշտ սարքավորումների ցանկի ուղարկումը:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 39, թ. 23: Պատճեն: Մեքենագիր:

Ե. ՀՅՈՒՄԻՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Միքելի՛ Պրն. Համազասպեան,

Ձեր վերջին երկու նամակները ստացած եմ, որոնց ուշացայ պատասխանելու. հիմա կը գրեմ՝ քանի առելի հանգիստ կը զգամ ինքզինքս:

Պրն. Շատուրեան եւ ընկերը հարկաւ քեզի տուին իրենց լուրերը: Միլանէն չմեկնած՝ շղթայի գործարանը իմացուցած էր, թէ մեքենաները արդէն ճամբուած են ձեր քովի՝ անունին եւ բեռնագիրներն ալ ուղղակի ձեզի դրկուած են. յուսամ արդէն ժամանած ըլլան ապահով կերպով: Կը մաղթեմ յաջող աշխատանք:

Տիկին Մայտա՛,

Պրն. Ստեփան Սրապեան ինծի խօսած էր իր մասին, թէ որքան անհանգստացուցած է Ձեզ եւ ձերինները: Ես իրեն արտայայտուած էի, թէ ես ինքս ոչ մէկ բանէ լուր ունիմ: Տիկին Մայտայի Հայրենիք երթալիք ըլլալը ձեր մէկ հեռագրէն լուր ունեցայ: Ուրեմն, ես որ բանէ մը լուր չունիմ, ոչ յանձնարարած եմ զինքը, ոչ ալ դուք հարկ տեսած էիք ինծի խօսելու իր մասին: Ի՞նչ կ'ուզէք որ պատասխանեմ: Կը յուսայի որ Պրն. Ստեփանին իմ այդ արտայայտութիւնէս վերջ, այս հարցը ինծի համար գոցուած էր, քանի յանձնարարած էի, որ ձեզի ալ գրէր թէ ես ոչ մէկ կապ ունիմ, ոչ ալ միջամտած եմ անոր Հայրենիք երթալուն առիթովը: Այո՛, միքելի՛ Պրն. Համազասպեան, դժբաղդաբար, Տիկին Մայտան դժուար բնաւորութիւն մը ունի, իր ջղային դրոթիւնն ալ լաւ չգործեր, իրենները իսկ շատ կը նեղուին այդ կողմէն, բայց ի՞նչ ընել: Ես ձեր տեղը ըլլայի՝ կը վարուէի իրեն հանդէպ այնպէս, ինչպէս կը տնօրինէր ձեր կազմակերպութիւնը: Եթէ գոհ չէր կրնար վերադառնալ՝ ոչ մէկ բան զինքը կը ստիպէր հող մնալու: Իր վերադարձին՝ խօսեցայ, ձեր նամակներուն բովանաղակութիւնը յայտնեցի առանց այլ եւ այլի: Ի՞նչ կ'ուզես: Ինք չզգար կոր, կը զարմանայ թէ ինչպէս ատանկ տպաւորութիւն թողած է ձեր վրայ: Ուրեմն, կը տեսնէք թէ նորմալ չէ, ի՞նչ ընես: Անդին կ'ըսէ, թէ Մարօ Մարգարեանը իրեն ըսած ըլլայ, որ յաջորդ գալուն իրեն տունը պիտի տանի եղեր զինքը: Ամեն պարագայի, ձեզի պատճառուած անհանգստութեանը համար ցաւելէ զատ բան չեմ կրնար ըսել:

Բարեգործական.՝ Նորութիւն մը չունիմ, ամսոյս 12-13 ին Նիւ Եորքի մէջ կայացաւ Ընդհանուր Անդամական Ժողովը, կը սպասեմ ունենալ ատենագրութիւնը: Բարիզի Շրջանակային Յանձնաժողովը կազմուելու վրայ է, իսկ Զուիցերիականին կանոնագրութիւնը իր վերջնական ձեւը առնելու է եւ, շատ հաւանաբար, առաջին Ընդհանուր Ժողովը, որուն անդամները պիտի ըլլան Նիւ Եորքի Կեդրոնական Վարչութեան 19 անդամները, ժողովի հրաւիրուին Լոզան կամ ժընեւ եւ կանոնագրութեան տան վերջնական ձեւը եւ արձանագրուի Զուիցերիական դատարանին մօտը: Կը յուսամ ձեզի տալ շատ քաջալերական լուրեր մօտ ապագային՝ ի մասնաւորի Զուիցերիականին վերաբերմամբ:

Ուրիշ գրելիքներ չկան: Անհամբեր սպասող եմ Սեւան-Արփա գետնուղիի շինութեան աշխատանքներու եւ մեքենաներու վերաբերմամբ առնուած քայլե-

րու, որոնց մասին Տատուրէն իմացած էի, բայց ի՞նչ բանի յանգեցաւ՝ այլեւս լուր չունիմ:

Անհամբեր սպասող եմ շղթաներու մեքենաներու ժամանման եւ անոնց գործածութեան մասին ձեր տալիք յաջող լուրերուն:

Մնամ բարեկամական զգացումներով՝

Ե. Հիւսիսեան

3. 9. Հոս կը մնամ մինչեւ Զատիկ, ուրեմն, կրնաք հոս գրել վարը տուած հասցէիս մինչեւ 31 Մարտ 1970:

Ֆ. 875, ց. 2, գ. 301, թթ. 35-36: Բնագիր: Մեքենագիր:

№ 102

26 դեկտեմբերի 1969թ., Երևան

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՍՅ ՀԱՍՏԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՈՒՄԱՐ Բ. ՍՈՒՐԱԴՅԱՆԻՆ՝ «ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՅՆ» ՀԱՐԱԹԱԹԵՐԹԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՍՓՅՈՒՌՔԱԴԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԵԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՅԵԼ ԹՈՒՅԼ ՏԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

Արդէն 5-րդ տարին է գոյություն ունի Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն (հիմնադրվել է 1964թ.): Ներկայումս Կոմիտեի և նրա երկու պարբերականների՝ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի և «Սովետական Հայաստան» ամսագրի աշխատակիցների թիվը հասնում է 83-ի: Նրանց զգալի մասը կա՛մ բնակարան չունի, կա՛մ ապրում է բնակարանային ոչ նորմալ պայմաններում: Արտասահմանյան հյուրերի հետ աշխատելու ընթացքում քիչ չեն պատահում դեպքեր, երբ հյուրը ցանկանում է լինել մեր այս կամ այն աշխատակցի բնակարանում և մենք նման հանգամանքներում, բնականաբար, կանգնում ենք անախորժ վիճակի առջև: Միաժամանակ հայտնում ենք, որ սկսած 1964 թվականից մինչև օրս, Կոմիտեն և նրա խմբագրությունները բնակարանային ֆոնդ գրեթե չեն ստացել:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի որոշման համաձայն, Կոմիտեն 1968-69 թվականների ընթացքում տարեկան 15 հազար օրինակ «Հայրենիքի ձայն» ձրի առաքում է արտասահմանյան երկրների հայ անհատ գործիչների և կազմակերպությունների:

Քաղաքական կարևոր նշանակություն ունեցող այդ միջոցառման համար, թերթի խմբագրությունը պետությունից պետք է ստանար դոտացիա, տարեկան 50 հազար ռուբլի, որ 2 տարում կազմում է 100 հազար ռուբլի, այնինչ խմբագրությունը առաքումները կատարել է առանց ֆինանսավորում ստանալու, պետությանը տալով 100 հազար ռուբլու եկամուտ: Հիշյալ ծախսերը ծածկելուց բացի, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը 1968 թվականի ընթացքում ունեցել է 21 հազար ռուբլու եկամուտ, որը ՀՍՍՀ Մինիստրների սովետի նո. 538-24-6/1969թ. որոշմամբ թույլատրված է օգտագործել բնակարանային շինարարության համար, որը փոխանցված է Երքադսովետի բնակարանային շինարարության բաժին և Քաղսովետի հետ կնքված է պայմանագիր: Սակայն 21 հազար ռուբլի գումարով հնարավոր չէ իրականացնել շինարարությունը:

Խմբագրության 1969թ. օգուտների գումարը այսօրվա դրությամբ կազմում է 70 հազար ռուբլի:

Նկատի ունենալով այս ամենը, խնդրում ենք Ձեր կարգադրությունը թույլ տալ «Հայրենիքի ձայն» թերթի 1969թ. եկամուտները՝ 70 հազար ռուբլին օգտագործել բնակելի շենքի կառուցման համար: Այս հարցի դրական լուծումը մեծապես կօգնի մեր բնակարանագուրկ աշխատակիցներին:

Կոմիտեի նախագահ՝

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագիր՝

Վ. Համազասպյան

Կամո Վարդանյան

Ֆ. 875, ց. 2, գ. 39, թթ. 32-33: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Բ. ՄՈՒՐԱՂՅԱՆԻՆ՝ ՆՈՐ ԲԱԼԱՅՈՎԻՏԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱՎՈՎ
ԱՄԵՐԻԿԱՅԱՅԵՐԻ ՆՎԻՍԿՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՍՍՀ Գերագույն սովետի հրամանագրով Աբովյանի շրջանի Միուբ գյուղը
անվանակոչվեց Նոր Բալահովիտ:

Ի՛նչան հայրենի իշխանությունների հոգատարության նկատմամբ իրենց
հայրենասիրական զգացմունքների արտահայտության, Համաբալուցիական
հայրենակցական միությունը /ԱՄՆ/ խնդրում է Նոր Բալահովիտի բարե-
կարգման նպատակներով օգտագործելու համար իբրև նվեր ընդունել 15 հա-
զար դուլար:

Նպատակահարմար է այդ գումարը փոխադրել Փարիզ և ՀՍՍՀ Մինիստր-
ների սովետի համաձայնությամբ հատկացնել ՀՍՍՀ Շինանյութերի արդյու-
նաբերության մինիստրության համար անհրաժեշտ սարքավորումների ձեռք
բերմանը, իսկ փոխարենը մինիստրությունը համապատասխան գումար տրա-
մադրի Նոր Բալահովիտին: Նոր Բալահովիտի տեղական իշխանությունները
անհրաժեշտ են համարում հատկացվելիք գումարով ամենից առաջ վերանո-
րոգել ու կահավորել ակումբը, ասֆալտապատել կենտրոնական փողոցները:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 39, ք. 30: Պատճեն: Սեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ՝ ԱՆՎԱՆԻ ԴԵՐԱՍԱՆՈՒԴԻ ՍԻՐԱՆՈՒՅՇԻ ԱՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անգնահատելի է դերասանուհի Սիրանույշի /Մեհրյուբե Գանթարճյան/
դերը հայ թատերական արվեստի պատմության մեջ: Նա իր հսկա տաղանդի
ուժով մեծապես նպաստել է հայ թատերական արվեստի զարգացմանը և աշ-
խարհի խոշորագույն քաղաքների բեմերում ունեցած իր ելույթներով հռչակվել
որպես հանճարեղ դերասանուհի:

Սիրանույշի կյանքն ու գործունեությունը հարազատ ժողովրդի մշակույթին
ծառայելու պայծառ օրինակն է:

Հանգամանքների բերումով՝ մեծ դերասանուհին աստանդական կյանք է
վարել և 1932 թվին իր մահկանացուն կնքել Եգիպտոսում: Թաղված է Կահիրեի
հայ ազգային գերեզմանատանը:

Եգիպտոսի հայկական մշակութային կազմակերպությունները դիմել են մեր
կոմիտեին և պատրաստակամություն հայտնել իրենց միջոցներով Սիրանույշի
աճյունը փոխադրել Հայաստան՝ Երևանի պանթեոնում ամփոփելու և կորստից
փրկելու համար:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 26, ք. 61: Պատճեն: Սեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԲԱՅԱՅՐ Դ. ՀԱՄԱԿ Ծ. Վ. ԿԵՏԻԿՅԱՆԻՆ՝ ՈՐՈՇ
ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՐԲԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

Գերազայծառ աբբահայր,

Երևանի Խ. Արովյանի անվան Մանկավարժական ինստիտուտի գիտահե-
տազոտական աշխատանքների մեջ հատուկ տեղ է հատկացված անցյալի հայ
մաթեմատիկական դասագրքերի բաղդատական քննարկման հարցերին: Մխի-
թարյան միաբանությունը ինչպես մյուս մարզերում, այնպես էլ մաթեմատի-
կական կրթության մեջ մեծ ներդրումներ ունի, սակայն ցավոք, Հայրենիքում
չկան այդ հրատարակությունների շատ օրինակներ, ինչպես նաև անբավարար
են դասագրքերի հեղինակների կյանքի ու գործունեության վերաբերյալ եղած
տվյալները:

Ինստիտուտի գիտաշխատողները կամենում են քննարկվող աշխատության
մեջ պատշաճը հատուցել միաբանությանը և այն գործիչներին, որոնք ստեղծել
են նման արժեքավոր դասագրքեր:

Այժմ խնդրում ենք, հնարավորության սահմաններում, օգնել պարզաբանելու
նամակին կից ներկայացված մաթեմատիկական դասագրքերի հեղինակների
անձը, նրանց կենսագրական տվյալները: Ցանկալի է ունենալ նաև լուսանկար-
ներ և այլ մանրամասնություններ: Միաժամանակ, եթե նշված ցուցակից դուրս
Ձեզ մոտ կան և ուրիշ մաթեմատիկական դասագրքեր, կխնդրեինք տեղեկու-
թյուններ տալ նրանց մասին, իսկ հնարավորության դեպքում մեկական օրի-
նակ ուղարկել Կոմիտեին՝ Հանրային գրադարանին հանձնելու համար:

Խնդրում ենք ներել Ձեզ այդչափ նեղություն պատճառելու համար:

Ընդունեցե՛ք մեր խորին հարգանքներն ու լավագույն ցանկությունները:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 4, գ. 300, ք. 25: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Գ. ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ
ՁԵՌՆԱՐԿՆԵՐ» ԲԱԺԻՆ ՎԱՐԻՉ Ռ. ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻՆ՝ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ
ՈՒՂԱՐԿԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Գյուլբենկյան,

Կոմիտասյան սրահին Ձեր հիմնարկության նվիրաբերած 250 հազարը
կյանդրեինք օգտագործել հետևյալ կերպ. 107 հազարը հատկացնել կախավոր-
մանն ու երաժշտական սարքավորումների ձեռքբերմանը, իսկ 143 հազարը
հատկացնել արտասահմանից գնելու շինարարական մեքենաներ, նկատի ու-
նենալով, որ առանց այդ մեքենաների հնարավոր չէ իրականացնել սրահի կա-
ռուցման հետ կապված քարային աշխատանքները:

Փողային երգեհոնը կյանդրեինք պատվիրել ներքոհիշյալ ֆիրմաներից որևէ
մեկին:²²⁵

Նպատակահարմար է գնել ամերիկյան «Ստեյնվել» մակնիշի երկու դաշնա-
մուր. մեկը՝ համերգային մեծ «Ստեյնվել», իսկ մյուսը՝ փոքր: Մեծի արժեքն է
մինչև 20 հազար դոլար, իսկ փոքրինը՝ մինչև 10 հազար:

Երգեհոնին 60 հազար և դաշնամուրներին 30 հազար հատկացնելուց հե-
տո, մնացած 17 հազարը օգտագործել ձեռք բերելու 2 հազար քառակուսի մետր
սինթետիկ գորգ և այլ նյութեր /առաստաղի ծածկույթի ծակոտկեն նյութ՝ տրա-
վերտին, 2 հազար քառակուսի մետր, կաթնագույն, ինչպես նաև հատակի ծած-
կույթի սև գույնի պլաստիկներ՝ 1500 քառակուսի մետր, և պաստառներ/:

Սրահի կառուցման աշխատանքների համար հարկավոր է ունենալ հետևյալ
չորս մեքենաները. 1. Մարմար մշակող կոնվեյերային սարքավորումների մեկ
լրիվ կազմվածք, «Դիագս» մակնիշի, որն արտադրվում է Գերմանիայի Ֆեդե-
րատիվ Հանրապետությունում, «Հիմլեր» /կամ «Խիմլեր»/ ֆիրմայի կողմից: Ար-
ժեքն է 100 հազար դոլար: Դժբախտաբար, մեզ չհաջողվեց ձեռք բերել ֆիրմայի
հասցեն և մեքենայի գերմանական անվանումը:

Մնացած 3 մեքենաների անուններն ու ֆիրմաների հասցեները ներփակում
ենք:

Խնդրում ենք հնարավոր ուղիներ որոնել՝ ձեռք բերելու վերոհիշյալ սարքա-
վորումները:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 5, գ. 303, ք. 1-2: Պատճեն: Մեքենագիր:

225. Նշված են ֆիրմաների անունները:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՀԵՌՐԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ Ս. ՍՐԱՊՅԱՆԻՆՆԵՐԱ՝
ԻՏԱԼԱՆԴԱՅ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՈՒ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆՔ

Միտելի բարեկամ,
Խնդրում եմ ներել նամակիդ պատասխանը այսքան ուշացնելու համար:
Հիվանդ էի և այն ուշացումով անցավ ձեռքս:

Ուրախությամբ տեղեկացա, որ վերընտրվել ես Իտալահայ միության նախագահ: Ձերմորեն շնորհավորում եմ քեզ և մաղթում անսպառ եռանդ, նորանոր հաջողություններ՝ հայրենասկեր գործունեությանը:

Գիտեմ, որ խիստ ծանրաբեռնված ես անձնական գործերով և սակայն, չխնայելով թանկագին ուժերդ և ժամանակդ, անկեղծորեն նվիրված ես նաև ազգային գործերիդ, սիրով օժանդակում ես հայրենակիցներիդ թե՛ բարոյապես, թե՛ նյութապես:

Մանրամասն ծանոթացա Միության վարչության վերջին տարիների գործունեությանը, չնայած, որ բավական քաջատեղյակ էի արդեն: Պետք է ասել, որ շնորհիվ իր նվիրված և ազգասեր ղեկավարների, Միությունը կատարել է իրապես մեծ և օգտակար աշխատանք:

Իտալահայ գաղութի հայրենասեր և միասնական գործունեությունը լավագույն օրինակ կարող է հանդիսանալ սփյուռքահայ մեր մյուս գաղթօջախների համար:

Կրկին անգամ շնորհավորում եմ Միության նորընտիր կազմը և մաղթում հաջողություններ:

Ձերմ բարևներս հարազատներին:

Բարեկամական անկեղծ սիրով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 4, գ. 300, թ. 55: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԵՍՅ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ «ԱՆՈՒԸ» ՕՊԵՐԱՅԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆրանսահայ մշակութային միության Մարսելի շրջանային վարչությունը նախապատրաստական աշխատանք է տանում առաջիկայում բեմադրելու «Անուշ» օպերան:

Միությունն իր 4 նոյեմբերի 1969 թվակիր նամակներով խնդրել էր Կոմիտեին իրենց ուղարկել «Անուշ» օպերայի գործիքավորումը: Ընդառաջելով միության խնդրանքին, Կոմիտեն ձեռք է բերել և 1969թ. նոյեմբերի 15-ին ուղարկել է օպերայի գործիքավորումը: Մարսելի մշակութային միությունը 9 դեկտեմբեր 1969 թվակիր իր նամակով շնորհակալություն է հայտնել Կոմիտեին՝ գործիքավորումը ստանալու կապակցությամբ /կից ներկայացնում ենք նամակի պատճենը/:

Ինչ վերաբերում է օպերայի պարտիտուրային, ապա վերջերս միայն նամակ ենք ստացել այդ մասին և բանակցել ենք պետական մարմինների հետ: Հավանաբար ժամանակին կհասցնենք նաև նոր գործիքավորումը:

Խնդրում ենք այդ մասին տեղյակ պահել ընկ. Զորինին:²²⁶

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 4, գ. 14, թ. 6: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱՁԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ե. ՀՅՈՒՄԻՍՅԱՆԻՆ՝ ՆՐԱ ՀԱՅՐԵՆԱՆՎԵՐ
ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Թանկագին բարեկամ,

Ստացանք հունվարի 12-ի Ձեր նամակը, ինչպես նաև ներփակ ուղարկված թերթիկը:

Ցանկանում եմ հայտնել անկեղծ ուրախությունս՝ Երևանի ֆիլիարմոնիայի մեծ դահլիճի համար պատվիրված երգոհոներ ապահովաբար ստանալու առիթով:

Անհունորեն շնորհակալ եմք այն մեծ աշխատանքի և ջանքերի համար, որ ներդրել եք Դուք այդ հայրենանվեր դժվարին գործը իրականացնելու ուղղությամբ: Անշուշտ, Դուք եք հանդիսանում /սփյուռքում/ երգեհոնի հարցով զբաղվող միակ գործարար անձնավորությունը և միակ ֆինանսական պատասխանատուն:

Խորապես ցավում եմ «Հայրենիքի ձայն»-ի ղեկավարների 24-ի համարում թույլ տրված կոպիտ սխալի համար:

Փետրվարի 6-ը թվակրով Ձեզ տեղյակ եմք պահել կատարված թյուրիմացության մանրամասնություններին:

Հավանաբար արդեն ստացած կլինեք նամակը: «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի նո. 6-ում տպագրված «Երգեհոնը հասավ Երևան» ինֆորմացիայի միջոցով աշխատել ենք որոշ ճշտում մտցնել երգեհոնի գնման և Հայրենիք ուղարկելու հարցում:

Ներփակ ուղարկում եմք այդ ինֆորմացիայի կտրոնը:

Խորին հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 301, թ. 14: Պատճեն: Մեքենագիր:

Ռ. ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱՁԱՍՊՅԱՆԻՆ՝ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՍՐԱԴԻ
ԿԱՌՈՒՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԳԵՅՈՒՆԻ ԳՆԱՄԱ
ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Յարգելի Պրն. Համազասպեան,

Ուրախ եմ ներկայիս յայտնելու, թե Հիմնարկությանս Կեդրոնական Վարչական Ժողովը համաձայն գտնուեցաւ Ձեր 27 փետրուար 1970 թուակիր նամակով թելադրուած ծրագրին հետ, ըստ որուն Կոմիտասեան Սրահին համար Հիմնարկութեանս 250.000 տոլարի նուիրատուութիւնը կարելի է օգտագործել նամակին մէջ ճշդուած բաժանմունքներու հիման վրայ:

Արդ, սկսած ենք յարաբերութեան մէջ մտնել զանազան երկիրներու հետ: Արդէն իսկ ստացած ենք իտալական Gregont ընկերութեան հաշուեցոյցը. անոր պատճէնը, ինչպէս նաեւ ստացուած նամակին լուսանկարուած պատճէնը ներփակ Ձեզի կը յանձնենք: Անշուշտ պիտի նկատեք դուք ալ թէ Levimatic մեքենայի արժէքը կը յանգի 15.800 տոլարի՝ փոխանակ նախատեսուած 10.000 տոլար գումարին:

Նոյնպէս պատասխան ստացած ըլլալով Cari Meyer ընկերութենէն, ներփակ կը փոխանցենք այդ երկու մեքենաներուն վաւերաթուղթերը: Այս պարագային եւս, իրական եւ նախատեսուած գիններու տարբերութիւնը զգալի է. 22.000 առաւել, 11.000 տոլարի Ձեր ցուցմունքներուն փոխարէն կը տեսնենք 31.490 առաւել 17.426 տոլարի գումարները:

Չենք գիտեր տակաւին, թէ ինչ տարբերութիւններ երեւան կու գան երբ ստանանք զանազան այլ պատուէրներու հաշուեցոյցները: Ընդհանուր պիտոճէն ըլլալով 250.000 տոլար, կը խորհինք, որ այժմէն զերծ պէտք է մնանք սինթետիկ գորգ եւ այլ նիւթերու, ինչպէս նաեւ ասոնց համար պահանջուող 17 հազար տոլար ծախսի հարցերէն: Այս մանր-մունր առարկաներու հայթայթումի գործին համար գուցէ կարենաք աւելի ձեռնտու տարբեր կարգադրութիւն մը ընել:

Երգեհոնի գնումի պարագան մասնաւոր ուշադրութեան առարկայ կը դարձնենք ներկայիս: Նկատելով այս գործին կարեւորութիւնը, մտադիր ենք մասնաւոր խորհրդատու մը ուղարկել Երեւան, յանձին հոլանտացի փրոֆ. Dr. M. A. Vente-ի, որպէսզի տեղւոյն վրայ կարենայ ճշդել, թէ ո՞րն է լաւագոյն կարգադրութիւնը սրահի մէջ երգեհոնի զետեղումին նկատմամբ: Իր ճամփորդութեան մասին պիտի կարենանք աւելի տեղեկութիւն հաղորդել յաջորդիւ:

Վերջին կարելոր հարց մը կայ, որուն կ'ուզենք անդրադառնալ, այսինքն՝ սրահին մէջ մասնաւոր արձանագրութիւն մը զետեղելու հարցը, ինչպէս որ բացատրած էինք մեր 24 յունիս 1969 թուակիր նամակով: Նպատակայարմար պիտի ըլլար գուցէ յիշատակել հոս այդ պարբերութիւնը:

Այդ նամակին մէջ կ'ըսէինք հետեւեալը.

«Մեր ցանկութիւնն է, որ ծրագրին իրագործումէն ետք, պատշաճօրէն զետեղուած արձանագրութեամբ մը յիշատակուի, թէ Կոմիտասի հարիւրամեակին առիթով եւ անոր յիշատակին նուիրուած այս «Տուն-Համերգասրահ»-ին կառուցման եւ կահաւորման ծախսերը հոգացուած են Լիզպոնի Գալուստ Կիւլ-

պէնկեան Հիմնարկութեան կողմէ՝ իր հիմնադիրին՝ Գալուստ Կիւլպէնկեանի ծննդեան հարիւրամեակի առիթով»:

Վստահ ենք, որ դուք եւս համախորհուրդ կը գտնուիք այս արձանագրութեան խորհրդանշան իմաստին հետ եւ կը բարեհաճիք Ձեր հաւանութիւնը յայտնելու մեզ:

Յարգանքներով՝

Ռոպէր Կիւլպէնկեան

Ֆ. 875, ց. 5, գ. 303, թթ. 11-12: Բնագիր: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱՋԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՉՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոմիտէին աջակցությամբ վերջին տարիներին բարեկամական կապեր են հաստատվել Հայաստանի Առողջապահության մինիստրության և Լիբանանահայ բժշկական ընկերության միջև: Ստեղծված կապերի ամրապնդման գործում մեծ դեր են կատարել պատվիրակությունների փոխալցելությունները:

1969թ. Բժշկական ընկերության հրավերով Լիբանան մեկնեց Հայաստանի 4 հոգուց բաղկացած բժշկական պատվիրակությունը:

Կապերի հետագա ընդլայնման նպատակով, ՀՍՍՀ Առողջապահության մինիստրությունը ցանկություն է հայտնում այս տարվա ընթացքում, կամ 1971թ. սկզբներին Հայաստան հրավիրել Լիբանանահայ բժշկական պատվիրակություն, բաղկացած 6-8 հոգուց:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Լիբանանահայ բժշկական ընկերության շարքերում ազդեցիկ դիրք ունեն դաշնակցական անդամները, խնդրում ենք Ձեզ հարցնել Լիբանանի ՍՍՀՄ դեսպանության կարծիքը՝ պատվիրակության հրավերի նպատակահարմարության մասին: Դրական կարծիքի դեպքում, ցանկալի կլիներ դեսպանությունից ստանալ պատվիրակության թեկնածուների ցուցակը:

Կոմիտէի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 4, գ. 14, թ. 22: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ռ. ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻՆ ԿՈՄԻՏԱՄՅԱՆ ՍՐԱՅԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ՊՐՈՖԵՍՈՐ ԱԹԱՅԱՆԻ ԼԻՍԱԲՈՆ ՄԵԿԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Գյուլբենկյան,

Ստացել ենք Ձեր ապրիլ 9, 23 և 27 թվակիր նամակները: Ուրախ ենք, որ հիմնարկության Կենտրոնական վարչական ժողովը համաձայնություն է տվել մեր կողմից առաջադրված ծրագրին – 250.000 դրվարի օգտագործման կապակցությամբ:

Սրահի կառուցման աշխատանքների համար 1970թ. փետրվարի 27 համարի նամակում հիշատակված 3 մեքենաները և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում արտադրվող «Խիլմեր-Դիագո» ֆիրմայի մարմարի մշակման տեխնոլոգիական գծի լրիվ կազմվածքը խնդրում ենք ձեռք բերելու հնարավորություն ստեղծել:

Պրոֆ. Աթայանի մեկնումը հեռագրով կտեղեկացնենք. նա գալու է Փարիզի վրայով, մայիսի վերջերին: Նպատակահարմար կլիներ, որ Փարիզի պորտուգալական դեսպանությունը նույնպես վիզա տալու ցուցում ստանար:

Դոկտ. Վենթի Երևան գալու կապակցությամբ²²⁷, Մոսկվա-Երևան-Մոսկվա ճանապարհաձախսը, հյուրանոց և սնունդը կլինեն Կոմիտեի հաշվին: Սրահը դեռևս դոկտորի կատարելիք ուսումնասիրության պայմաններում չէ. երբ պատրաստ լինի նման ուսումնասիրության, մենք Ձեզ կտեղեկացնենք: Ամստերդամի սովետական դեսպանության վիզայի դիմումը պետք է կատարվի Ձեր կողմից:

Գալով Կոմիտասի Տուն-համերգասրահում տեղադրվելիք արձանագրությանը՝ ապա այդ մասին մենք նախորդ նամակներում գրել ենք: Ես կարծում եմ, որ կառավարությունը պատշաճ ցուցատախտակ կփակցնի սրահում:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 5, գ. 303, թ. 6: Պատճեն: Մեքենագիր:

227. Նույն օրը՝ 1970թ. մայիսի 19-ին Վ. Համազասպյանը նամակով դիմել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահին՝ երգեհոնի տեղադրման կապակցությամբ հոլանդացի մասնագետ Մ. Վենթիին Խորհրդային Հայաստան հրավիրելու անհրաժեշտության մասին. տե՛ս ֆ. 875, ց. 4, գ. 14, թ. 26:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍՓՈՒՌՔԱԴԱՅ ԿԱՆԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱԿԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սփյուռքահայ կանանց կազմակերպությունների հետ մշակութային կապերի առավել զարգացման նպատակով Կոմիտեն նախատեսել է Հայաստան հրավիրել լիբանանահայ ակտիվ կին գործիչների:

Բեյրութի Թեքեյան մշակութային միության կանանց բաժնի վարչությունը ս.թ. հուլիսի 20-ի թվակիր նամակով ներկայացրել է մեզ իր ակտիվի՝ ստորև բերվող ցուցակը.

1. Պեաթրիս Դավիթյան – ատենապետուհի
2. Արմինե Սեդրակյան – գանձապահուհի
3. Անահիտ Թիթիզյան
4. Ջելա Դավիթյան-Պրիտի
5. Սյուզի Պահատրյան
6. Հռիփսիմե Գյուլեսերյան
7. Լյուսի Թովալյան
8. Մարի Գասպարյան – ատենադպրուհի

Խնդրում ենք հարցում կատարել Լիբանանում ՍՍՀՄ դեսպանությանը՝ նշված միջոցառումների իրագործման և ցուցակում նշված անձանց ՀՍՍՀ հրավիրելու նպատակահարմարության մասին:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 4, գ. 14, թ. 34: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱՁԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ՝
Ո. ՃԵՊԵՃՅԱՆԻ ԳՐԹԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՆՅ ՄԱՔՍԱՏՈՒՐԹԻ
ԱՌԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հալեպահայ հասարակական գործիչ Ռոբերտ Ճեպեճյանը Հայաստանի հայագիտական օջախների համար հավաքում և ուղարկում է արխիվային և մատենագիտական գրքեր: Նա խնդրել է դյուրացնել այդ գրքերի առաքումը, այսինքն՝ ուղարկել առանց մաքսի:

Խնդրում ենք դիմել Հալեպի հյուպատոսարանին՝ նվիրատուի գրքերը առանց մաքսի Հայաստան տեղափոխելու համար:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 4, գ. 14, թ. 35: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱՁԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՖԻԼԱՂԵԼՖԻԱՅԻ ՄԱԼԱԹԻԱՅԻ
ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՏԵՆԱԴՊԻՐ
Ս. Գ. ՏԱՆՏԻԿՅԱՆԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Տանտիկյան

Ուրախությամբ տեղեկացանք Ձեր ընկերության 67-րդ համագումարի հայրենանվեր որոշումների մասին:

Մեզ նույնպես մտահոգում է Ձեր հայրենակիցների ներգաղթի խնդիրը, որ շարունակում է մնալ մեր ուշադրության կենտրոնում: Հետապնդում ենք հնարավորին չափով արագ ընթացք տալու այդ գործին: Հուշարձանի կառուցումը դեռևս չի ավարտված: Ամենայն հավանականությամբ բացումը կկատարենք 1971-ին: Ամիսն ու ստույգ օրը կհայտնենք հետագայում:

Երևանի պետական համալսարանը և բարձրագույն մյուս հաստատությունները սիրով են ընդունում սփյուռքահայ ուսանողներին: Եթե ձեր միության անդամները կցանկանան, որ իրենց զավակները կրթություն ստանան Երևանում, սիրով կընդառաջենք:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 5, գ. 264, թ. 63: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄԱՆՆԻ ՆԱՄԱԿԸ Ե. ՀՅՈՒՄԱՆԻՏԱՐԻ ԻՐ ՈՐԴԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԲԸՄ ԳՈՐԾՈՒԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՎԵԿԱԼԻՔՈՎ

Մեծահարգ բարեկամ,

Անչափ ուրախ եղա ստանալով Ձեր նամակը:

Խնդրում եմ ներել ուշացումով պատասխանելու համար: Պատճառն, իհարկե, իմ երկարատև բացակայությունն էր քաղաքից: Հավանաբար, մեր բարեկամներից և մամուլից տեղյակ եք Մերձավոր Արևելք կատարած ուղևորության մասին:²²⁸ Այն շատ նպաստավոր եղավ ծանոթանալու համար Արևելքի հայ գաղութներին:

Մեծ ուշադրությամբ և հանգամանորեն ծանոթացա Ձեր նամակի բովանդակությանը, որն անչափ օգտակար եղավ ինձ, միաժամանակ լայն լույս սփռելով Բարեգործականի վերջին տարիների գործունեության վրա: Նամակը պարզաբանեց նաև ինձ համար երկար ժամանակ անհասկանալի մնացած շատ հարցեր: Այն վերհիշեցրեց Ձեր կեցվածքն ու առողջ մտածողությունը շատ կարևոր հարցերի վերաբերյալ: Երանի թե նման հստակ մտածողներ և հարցը պարզորոշ պատկերացնողներ մի քանիսն էլ ունենայինք գոնե որոշ գաղութներում: Եվ այդ դեպքում կշահեր ոչ միայն Բարեգործականը, այլև ամբողջ սփյուռքն ու Հայրենիքը:

Նամակում ինձ համար պարզ չէր միայն Ձուիցերիականի կանոնադրության հարցը, քանի որ ես ծանոթ չեմ նրան ամբողջությամբ: Միայն մի քանի հոդված իմանալով, դժվար է որևէ եզրակացության հանգել:

Շատ կուզենայի ձեռքիս տակ ունենալ մեկ օրինակ՝ այդ մասնաճյուղի հետագա գործունեության վերաբերյալ իմ խոսքն ասելու համար: Որքան հիշում եմ, Դուք նույնպես պնդում էիք Ձուիցերիականի ստեղծման և կանոնադրության մեջ բաց թողած այն հոդվածի անհրաժեշտության մասին, որը վերաբերում էր Բարեգործականի և Հայրենիքի միջև եղած փոխհարաբերությանը:

Եթե Ձեզ հաջողվել է անցկացնել այդ հոդվածը, ապա կատարվել է և՛ Ձեր բարձրագույն, և՛ մեր բոլորի ցանկությունը:

Ինձ համար մութ է այդ բաժանմունքի իրավասությունը կտակների, եղած դրամագլխի և դրամական միջոցների նկատմամբ: Այդ հարցը, ինձ թվում է, հետաքրքրում է նաև Ձեզ: Չնայած նամակում հիշատակվում է թե Եվրոպայի և Արևելքի խնայողությունները պետք է Ձուիցերիական բաժանմունքում կուտակվեն, սակայն անհասկանալի է, թե ո՞վ պետք է տնօրինի այդ գումարները: Պարզ չէ նաև, թե Ամերիկյան բաժանմունքին փոխանցված Ձուիցերիականի

նախկին գումարները պետք է մնան Բարեգործականի Ամերիկյան բաժանմունքի տնօրինության տա՞լ, թե՞ պետք է նորից փոխադրվեն Ձուիցերիա: Այդ հարցը մեզ բոլորիս շատ է հետաքրքրում, որովհետև, ինչպես գիտեք, կտակների մի մասը վերաբերում է Հայաստանին և մենք կցանկանայինք, որ դա անցներ Ձուիցերիական բաժանմունքին: Ես կարծում եմ՝ Դուք ինձ շատ լավ եք հասկանում, քանի որ Փարիզում մեր գրույցների ժամանակ ինքներդ էիք բարձրացնում Ձուիցերիական բաժանմունքի վերականգնման և նրա ֆինանսական իրավունքների հարցը:

Բեյրութում տեղեկացա Ալեք Մանուկյանի հրաժարականի մասին²²⁹, որը ծանր տպավորություն թողեց ինձ վրա: Անչափ ցավում եմ Ալեք Մանուկյանի այդ քայլի համար: Ես դեռ նրան որևէ նամակ չեմ ուղարկել այդ առիթով, մտածելով, որ հրաժարականը չի ընդունվի ո՛չ Բարեգործականի և ո՛չ էլ հայրենասեր շրջանակների կողմից:

Փարիզյան համագումարից հետո Մանուկյանը այնպիսի խորը տպավորություն է թողել, որ կարծում էի մոտ մեկ տասնամյակ Բարեգործականն ապահովված է սթափ, շրջահայաց և հայրենասեր ղեկավարությամբ: Ինձ համար միանգամայն անակնկալ և անբացատրելի էր հրաժարականը: Հավանաբար, նրա հրաժարանը որոշ բոկնման կամ ջղային պահերի հետևանք է և ոչ պատճառաբանված ու մտածված քայլ: Կարծում եմ՝ իմ նամակի կարիքը չի լինի նրան այդ մտածումից հետ կանգնեցնելու համար, առանց այն էլ այնքան նամակներ ու հոդվածներ են գրվել այդ առթիվ, որոնք կհամոզեն Մանուկյանին հրաժարվելու իր մտադրությունից:

Սիրելի բարեկամ, մեծապես ցավում եմ, որ չկարողացաք մասնակցել 50-ամյակի տոնակատարության հանդիսություններին,²³⁰ անձամբ տեսնել համաժողովրդական այդ մեծ ցնծությունը: Ցավալի է նաև, որ անձամբ չկարողացաք ստանալ 50-ամյակի առիթով, լավագույն ծառայությունների համար մեր հայրենակիցներին տրվող հուշամեդալը: Ես Ձերը և պրն. Սրապյանին վերցրել էի Բեյրութ՝ այնտեղից ուղարկելու համար: Բարեբախտաբար Բեյրութում հանդիպեցի պրն. Հայկ Ղազարոսյանին,²³¹ և նրա միջոցով էլ ուղարկեցի երկուսիդ հուշամեդալները:

Ջերմորեն շնորհավորում ենք Ձեր հայրենանվեր գործունեության համար Հայաստանի կառավարության կողմից լավագույն պարգևի արժանանալու ուրախալի առիթով:

Նախքան մեկնելս ստացա Ձեր հեռագիրը, որը շատ ուրախացրեց ինձ: Այն

229. ՀԲԸՄ-ի ամերիկյան ու եվրոպական (շվեյցարական) իրավափճակների իրավասությունների շուրջ լուրջ տարաձայնություններ էին առաջացել ՀԲԸՄ ԱՄՆ-ի ու Եվրոպայի ղեկավարների միջև: Վերջիններս նույնիսկ սպառնում էին դուրս գալ ՀԲԸՄ անդամակցությունից: Այս պայմաններում, Ալեք Մանուկյանը ներկայացրեց իր հրաժարականը ՀԲԸՄ նախագահությունից, ինչը մերժվեց, տարաձայնությունները հարթվեցին ու նա շարունակեց ղեկավարել այդ համահայկական կազմակերպությունը:

230. Նկատի ունի Հայաստանի մեջ խորհրդային իշխանության հաստատման 50-ամյակը:

231. Ղազարոսյան Հայկ՝ միլիաներակ մեծահարուստ, Մաշտոցի անվան Մատենադարանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերար:

228. Վ. Համազասպեանը 1970թ. վերջին երեք շաբաթով այցելել էր Լիբանան՝ Լիբանանահայ գրական շրջանակի, Թերեյան մշակութային միության և Նոր սերունդ մշակութային միության հրավերով՝ նախագահելու Խորհրդային Հայաստանի 50-ամյակին նվիրված հորեյլանական համալիբանանյան հանդիսությունը: Այնուհետև նա մեկական շաբաթով գտնվել էր Միդիայի և Եգիպտոսի հայկական գաղթօջախներում: Երեք երկրներում նա բազմահարյուր հանդիպումներ էր ունեցել հայ մտավորականության, հայկական դպրոցների աշակերտների, հասարակական տարբեր շրջանակների ներկայացուցիչների հետ: Այս ուղևորության մասին Վ. Համազասպյանի հետ հարցազրույցը տե՛ս «Հայրենիքի ձայն», թիվ 7 (291), 17 փետրվարի 1971թ., էջ 3 և 6:

տպագրվել է «Հայրենիքի ձայն»-ում: Չգիտեմ ստացե՞լ եք այդ համարը, թե՞ ոչ, բայց ներփակ ուղարկում եմ:

Ինձ բոլորից շատ անհանգստացնում է Ձեր առողջական վիճակը: Ուրախ կլինեի Ձեզ միշտ տեսնել այնպես առույգ, ինչպես Երևան կատարած այցելության օրերին:

Խնդրում եմ ներել պատճառած հոգնության համար:

Ձերմ բարևներ սիրելի Մարիին, Զավենին:

Խորին հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 2, գ. 301, թթ. 37-39: Պատճեն: Մեքենագիր:

№ 117

28 հոկտեմբերի 1971թ., Երևան

Գ. ԷՄԻՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ ԻՐԵՆ ԱՄՆ ՄԵԿԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ
ՕԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջադիմական միության (ԱՄՆ) նախաձեռնությամբ, ես մասնավոր հրավերով մեկնելու եմ ԱՄՆ երկու-երեք ամսով: Քանի որ ես այնտեղ կատարելու եմ նաև Սփյուռքի կոմիտեի հանձնարարությունները (ելույթներ և այլն), ապա խնդրում եմ ինձ ապահովել Երևան-Նյու Յորք ինքնաթիռի տոմսով, որովհետև հնարավորություն չունեմ հոգալ այդ ուղևորության հետ կապված բազմաթիվ ծախսերը և հոգալ իմ ընտանիքի ապրուստը այդ ժամանակամիջոցում:

Գրող, Սփյուռքի կոմիտեի անդամ

Գևորգ Էմին

Ֆ. 875, ց. 4, գ. 69, թ. 53: Ինքնագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՃԱՌԸ, ԱՐՏԱՍՏԱՆՎԱԾ ՀԲԸՄ ՆԱԽԱԳԱՀ ԱՆԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
ԵՎ ՆՐԱ ԿՆՈՋ՝ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊԱՏԿԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ
ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Հարգելի բարեկամներ,

ՀՍՄՇ Միևիստրների սովետին կից Եկեղեցական խորհուրդը²³² և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն այս ողջերթի ճաշկերույթը կազմակերպել են ի պատիվ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հրավերով Հայաստան ժամանած Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ, ազգային գործիչ պարոն Ալեք Մանուկյանի և նրա ազնիվ տիկնոջ՝ Մարի Մանուկյանի:

Պարոն Ալեք Մանուկյանը սփյուռքի այն գործիչներից է, որոնք մոտիկից հետևել են Սովետական Հայաստանի վերելքին, ուրախացել մեր վերածնված հայրենիքի նվաճումներով և սփյուռքի գոյատևման գլխավոր կռիվն համարել Հայրենիքը: Չնայած մինչև Հայրենիք գալը պարոն Մանուկյանը շատ բան գիտեր Հայաստանում կատարված մեծ ու լավ գործերի մասին, բայց մենք վստահ ենք, որ նրա այցը, ակնհաստեսի նրա տպավորությունները մեծապես հարստացրին նրա ծանոթությունները հայրենի երկրի մասին և գորացրին նրա հավատը հայ ժողովրդի պայծառ ապագայի, ինչպես նաև սփյուռքի հայապահպանման ճիգերի հաջողության մասին:

Բոլորին հայտնի է այն կարևոր դերը, որ խաղացել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունն իր գոյության 65 տարիների ընթացքում:

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը ծնունդ առավ ոչ միայն որպես բարեսիրական, այլ որպես շատ ավելի մեծ, համահայկական նպատակներ հետապնդող կազմակերպություն:

Բայց, դժբախտաբար, 1915 թվականի եղեռնը, բռնագաղթը հայ ժողովրդի աստանդական հատվածում ստեղծեցին այնպիսի ողբերգական իրադրություն, որ Բարեգործականը իր ամբողջ ուշադրությունը նվիրեց որբանոցների, գաղթականների, ապաստարան-արհեստանոցների, դարմանատների կառուցման վրա, որպեսզի օգնի եղեռնից տուժածների վերապրումի ճիգերին:

Ուրախությամբ պիտի նշել, որ սփյուռքահայության նյութական վիճակի կայունացման, նրա համեմատաբար բարեկեցիկ վիճակի ապահովման գույքնթաց, Բարեգործականը աստիճանաբար սկսեց ստանձնել հայապահպանության բնագավառում իրեն վերապահված կարևոր դերը: Եվ դարձյալ գոհունակությամբ պիտի նշել, որ այդ ժամանակաշրջանը համընկավ պարոն Ալեք Մանուկյանի նախագահության ժամանակաշրջանի հետ: Պարոն Մանուկյանը, որպես արժանավոր հետնորդը Բարեգործականի նախկին նախագահների և որպես ազգային մտահոգություններ ունեցող մտավորական, արդեն տասնյոթ տարի է ինչ իմաստությամբ ղեկավարում է սփյուռքի այս ամենագանգվածային կազմակերպություններից մեկը: Նրա օրոք Բարեգործականը մեծ ծաղկում ապրեց և ավելացան նրա հեղինակությունն ու ժողովրդականությունը: Բա-

վական է նշել, որ պարոն Ալեք Մանուկյանի նախագահության օրոք Բարեգործականի դրամազուլսը ութ միլիոնից բարձրացավ քսան միլիոնի, Մերձավոր Արևելքում նախկին անշուք դպրոցական շենքերի փոխարեն կառուցվեցին արդիական շենքեր, ավելի ապահով հիմքերի վրա դրվեց կրթական գործը: Պարոն Ալեք Մանուկյանը, որպես հայրենասեր և հեռատես գործիչ, առաջնահերթ նշանակություն տվեց երիտասարդական շարժումներին, քանի որ գիտեր, որ սփյուռքահայ երիտասարդության հայեցի դաստիարակությամբ է պայմանավորված սփյուռքի գոյատևումը: Երիտասարդական շարժումները հովանավորելու, երիտասարդների համար համախմբման վայր ապահովելու նպատակով պարոն Ալեք Մանուկյանը մեծ զարկ տվեց երիտասարդական կենտրոնների և մշակութային տների կառուցմանը: Այսպես է, որ հատկապես վերջին տասնամյակում, մեկը մյուսի ետևից տարբեր քաղաքներում՝ Ֆրանսիայի Մարսել, Վալանս, Լիբանանի Զահլե, Բեյրութ քաղաքներում, Բուենոս Այրեսում բարձրացան Բարեգործականի բարեկարգ մշակութային տները, երիտասարդական հիանալի ակումբներն ու Բեյրութի երիտասարդական նորակառույց պալատը:²³³

Եվ, վերջապես, չենք կարող գոհունակությամբ չնշել դպրոցաշինության այն մեծ գործի մասին, որ պարոն Ալեք Մանուկյանի նախաձեռնությամբ Բարեգործականը ձեռնարկեց Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որտեղ ապրում է 400 հազարից ավելի հայություն, որի հայեցի դաստիարակության գործը ամբողջ մի հիսնամյակ բարձիթողի էր արված:

Ամերիկահայ գաղութը վերջին տասնամյակում աշխուժացում է ապրում, այնտեղ նկատվում են վերագարթնումի ճիգեր: Այս ամենի մեջ, իհարկե, առաջին հերթին, կարևոր դեր ունի մեր ներկա Հայաստանի վերելքը, նրա հեղինակության բարձրացումը, հայրենի արվեստագետների, մտավորականների այցելությունները Ամերիկա, ինչպես նաև ամերիկահայ բազմաթիվ զբոսաշրջիկների, մտավորականների և հատկապես երիտասարդական խմբերի այցելությունները: Բայց մինևույն ժամանակ, մեր կարծիքով, այս գարթոնքի մեջ քիչ չէ նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության դերը, հայ մշակութային նվիրված նրա փառատոները, նրա հովանու տակ գործող «Անդրանիկ», «Արարատ», «Մասիս», «Վահագն» երգի-պարի համույթները, որոնց շուրջ համախմբվել են հարյուրավոր հայ երիտասարդներ, մարդիկ, որոնք շատ հեռու էին կանգնած հայ շրջանակից:

Պարոն Ալեք Մանուկյանը նաև սփյուռքի այն գործիչներից է, որոնք իրենց անձնական օրինակով գիտեն ոգևորել ուրիշներին: Բարձր գնահատելով հայ մշակութային պահպանման դերը սփյուռքի հայապահպանման գործում, ինչպես նաև քաջալերելու համար սփյուռքահայ գրականության ծաղկումը, նա անձնական նվիրատվությամբ սահմանեց «Ալեք Մանուկյան մշակութային հիմնադրամ» ու «Ալեք Մանուկյան գրական մրցանակը»: Նա կարողացավ նաև իր անձի հեղինակությամբ Բարեգործականին մոտեցնել, այդ նշանակում է հայ

232. Նկատի ունի Հայ եկեղեցու գործերի խորհրդին:

233. Նկատի ունի Բեյրութում ՀԲԸՄ-ՇԵԸ-ի Ալեք Մանուկյան երիտասարդական կեդրոնը, որի բացումը կատարվել է 1970թ., բարերարի՝ Ալեք Մանուկյանի Բեյրութ այցի օրերին:

կյանքին մոտեցնել, բազմաթիվ կարևոր անձնավորությունների, հայրենասեր ուժերի, գործիչների և հատկապես երիտասարդությանը:

Մենք հավատում ենք, որ պարոն Ալեք Մանուկյանի այս այցը պիտի նպաստի ինչպես Հայրենիքի և Բարեգործականի մշակութային կապերի, այնպես և առհասարակ սփյուռք-Հայրենիք կապերի սերտացմանը:

Մենք հավատում ենք, որ սա պարոն Մանուկյանի միակ այցը չի լինի, նա նորից ու նորից կայցելի Հայրենիք՝ իր ազնիվ տիկնոջ հետ, որը միշտ քաջալերել է նրա բոլոր ազգօգուտ գործերը:

Մենք այսօր ողջերթ ենք մաղթում տեր և տիկին Մանուկյաններին և ցանկանում նրանց քաջաոռողջություն և նորանոր հաջողություններ անձնական և հասարակական կյանքում:

Ֆ. 875, ց. 4, գ. 75, թթ. 1-4: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԽՍՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ԱՍԼԱՆՅԱՆԻՆ²³⁴ ՕԲՔՖՈՐԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՊԻՐԱՆՏ Գ. ԲԱՐԱԿԵՅԱՆԻՆ²³⁵ ԱԶԱԿՅԵԼՈՒ ԽՆԴՐԱՄՔՈՎ

Օբսֆորդի համալսարանի ասպիրանտ, Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ լիբանանահայ Գևորգ Բարդակճյանը դիմել է Կոմիտեին՝ խնդրելով աջակցել իրեն 3 ամսով Երևանում մնալու, ստանձնած դիսերտացիայի՝ «Հ. Պարոնյանի էսթետիկական հայացքները» թեմայի վրա աշխատելու համար:

ՀՄՍՀ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտը պատրաստակամություն է հայտնել օգնել Բարդակճյանին ղեկավարել նրա աշխատանքները դիսերտացիոն թեմայի նյութերի ուսումնասիրման և համապատասխան կոնսուլտացիաներ ստանալու գործում:

Կից ներկայացնելով Արվեստի ինստիտուտի միջնորդագիրը և Գ. Բարդակճյանի դիմումը, խնդրում ենք Ձեր կարգադրությունը նրան ստաժյոր ձևակերպելու մասին:

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 5, գ. 304, թ. 19: Բնագիր: Մեքենագիր:

234. Ասլանյան Աշոտ Տիգրանի (1919, Քարվառա, այժմ՝ Իջևան – 1989, Երևան) – Երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆ., ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1986), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1961): Ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1965-1966թթ. եղել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր: 1966-1975թթ. եղել է ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար:

235. Բարդակճյան Գևորգ – Հայագետ, դոկտոր, պրոֆեսոր, 1987թ.ին հիմնադրման օրից՝ Միջինասիական համալսարանի Մարի Մանուկյանի անվան ամպիոնի հայոց լեզվի և գրականության դասախոս, Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության նախագահ: Օնվել է Բեյրութում, կրթությունն ստացել տեղի հայկական դպրոցներում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը, դոկտորական ատենախոսությունը պաշտպանել Օբսֆորդի համալսարանում: Դասախոսել է Հարվարդի համալսարանում:

Արխիվային նույն գործում պահպանվել է Գ. Բարդակճյանի նամակը ուղղված Վ. Համազասպյանին (27 փետրվարի 1972թ.). տե՛ս ֆ. 875, ց. 5, գ. 304, թթ. 20-21:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԻԼԱՆԱԳԱՅ ԳՈՐԾԻՉ Ս. ՍՐԱՊՅԱՆԻՆ՝
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆՐԱ ԱԶԱԿՈՒԹՅԱՄԲ ԵԿԱՐԱՅԱՆՎԱԾ
ՎԱԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԺՄՈՒԿԵՆԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Միրելի բարեկամ

Վստահ եմ, որ դու, ինչպես նաև ընտանիքիդ բոլոր անդամները լավ եք:

Ցանկանում եմ Ձեզ ամենայն բարիք և միայն հաջողություններ: Ստիպված եմ անհանգստացնել քեզ հետևյալ խնդրանքով:

1971 թվականի հուլիսի 3-ի համարում «Հուսաբեր» թերթը իր «Հայկական ցեղասպանության մասին իտալական ժապավեն մը» խորագրով հոդվածում գրում է այն մասին, որ իտալացի բեմադրիչ Լուիջի Ալբերտոնին պատրաստել է «Ո՞վ կհիշե հայերը» վավերագրական ժապավենը, ներկայացնելով հասարակությանը հայկական ցեղասպանությունը և նրա շարժառիթները, ինչպես նաև ներկա Հայաստանը:

Տեղյակ ենք նաև, որ ֆիլմը ստեղծվել է քո անմիջական ջանքերով և ծախսերով: Ջարմանում եմ, թե մինչև օրս ինչպե՞ս չենք անդրադարձել այդ հարցին:

Կխնդրեի, սիրելի բարեկամս, ավելի մանրամասն գրել վերոհիշյալ ժապավենի մասին և թե ինչպե՞ս կարելի է այն ձեռք բերել:

Ընդունի՛ր կանխահայտ շնորհակալություններս:

Խորին հարգանքներով և ջերմ ողջույններով՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 5, գ. 304, թ. 47: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ե. ՀՅՈՒՄԻՍՅԱՆԻՆ՝ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ ԻՏԱԼԱՅԻ ԲԵՄԱԴՐԻՉ Լ. ԱԼԲԵՐՏՈՆԻ ՖԻԼՄԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգարժան բարեկամ,

Հուսով եմ, որ բոլորիս համար անչափ թանկ Ձեր առողջությունը լավ է: Ցանկանում եմ Ձեզ առաջին հերթին քաջ առողջություն:

Խնդրում եմ ներել կրկին անհանգստություն պատճառելու համար:

Բանն այն է, որ «Հուսաբեր»-ի 1971թ. հուլիս 3-ի համարից տեղեկացանք, որ իտալացի բեմադրիչ Լուիջի Ալբերտոնին պատրաստել է «Ո՞վ կհիշե հայերը» վավերագրական ժապավենը՝ ներկայացնելով հասարակությանը հայկական ցեղասպանությունը և նրա շարժառիթները, ինչպես նաև ներկա Հայաստանը:

Կխնդրեիք տեղյակ պահել մեզ, թե ինչպե՞ս կարելի է ձեռք բերել այդ ֆիլմը:

Կանխահայտ շնորհակալություններով և
առողջության լավագույն մաղթանքներով՝

Վ. Համազասպյան

Հ. Գ. Ձերմ ողջույններս ազնիվ Մարիին և Զավենին:

Նույն:

Ֆ. 875, ց. 5, գ. 304, թ. 48: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ռ. ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻՆ՝ Գ. ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԿԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Գյուլբենկյան,

Ստացանք Ձեր հոկտեմբեր 20, 27 և 31 թվակիր նամակները:

Ուրախությամբ տեղեկացանք, որ հիմնարկության Կենտրոնական վարչական ժողովը նոր որոշումով սահմանել է նա 250.000 դրարի վարկ գործադրել Հայաստանի գիտական և ուսումնական հաստատությունների համար: Այս առթիվ, խնդրում ենք մեր շնորհակալական ջերմ զգացմունքները հաղորդել Կենտրոնական վարչական ժողովի անդամներին:

Գրադարանների համար հատկացվելիք 50.000 դրարի հաշվում նկատի կունենանք նաև Մյասնիկյանի գրադարանը:

Հոլանդական ընկերության գործատերի փոխանորդի Երևան գալու մասին պետք է ասել, որ շինարարության ներկա պայմաններում օգտակար չենք գտնում նրա այցը. առաջիկայում կտեղեկացնենք այդ մասին:

Կից ուղարկում ենք Ռենտգենոլոգիայի ինստիտուտից պահանջված ծանոթությունները:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 5, գ. 283, թ. 67: Պատճեն: Սեքրեմագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ԽՍՀՄ ԴԵՍՊԱՆ Ս. ԱԶԻՄՈՎԻՆ՝²³⁶
ԵՐԳՉՈՒՅԻ Թ. ԹԵՔՅԱՆԻ²³⁷ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Сообщаем, что в апреле 1972г. ливанская певица Такуи Текян обратилась в Комитет по культурным связям по вопросу организации ее выступлений в Армянской ССР.

Исходя из того, что Текян малоизвестна музыкальной общественности Армении, в ответном письме Комитет рекомендовал Текян приехать в Ереван в качестве туриста для организации ее встречи со специалистами и решения возможности ее гостролей в Армении (об этом еще раз мы написали Текян, после получения Вашего письма).

От Текяна согласия не получили и решить вопрос ее гостролей, не имея мнения руководства Армфилармонии и других специалистов, мы не можем.

Просим, в случае согласия Текян, рекомендовать ей приехать в Армянскую ССР на указанных выше условиях.

Председатель Комитета

В. Амазаспян

Ֆ. 875, ց. 5, գ. 12, թ. 66: Պատճեն: Սեքրեմագիր:

236. Սարվար Ազիմով, ադրբեջանցի:

237. Փաստաթղթում միշտ ներկայացվել է «Թեքյան» սխալ տեսքով: Թեքյան Թագուհի - Լիբանանահայ երգչուհի: Ավարտել է Բեյրութի պետական կոնսերվատորիան: 1980թ. վերջին եկել է Խորհրդային Հայաստան իբրև Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հյուր, կատարելագործել իր արվեստը Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ աշխարհահռչակ երգչուհի Գոհար Գասպարյանի դասարանում: Ելույթներով հանդես է եկել բազմաթիվ երկրներում:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ՝ ՖՐԱՆՍԱԳԱՅ «ԱՇԽԱՐՀ» ՀԱՐԱԹԱԹԵՐԹԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գաղտնի

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար ընկ. Ռ. Խաչատրյանին
Ինչպես Ձեզ հայտնի է, յուրաքանչյուր տարի ֆրանսահայ «Աշխարհ» թեր-
թին նյութական օգնություն ցույց տալու նպատակով Ֆրանսահայ մշակութային
միության կողմից կազմակերպված գրոսաշրջիկների՝ թվով 70 հոգի, Մոսկվա –
Երևան և Երևան – Մոսկվա ճանապարհածախսը հոգում էր Կոմիտեն:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը այս տարվա կատարվող ծախսերը
(4800 ռ.) ստանալ Մինիստրների սովետից, նկատի ունենալով, որ մեր բյուջեում
նախատեսումներ չեն կատարված և նման ծախսերը ֆինանսական օրգանները
չեն իրականացնում:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան²³⁸

Ֆ. 1, ց. 126, գ. 14, թ. 41: Բնագիր: Սեքնագիր:

238. Փաստաթղթի վերը, ձախին կա Ռոբերտ Խաչատրյանի հայերեն ստորագրությամբ «Ընկ.
Լ. Մանասարյանին» (ճիշտն է՝ «Մանասերյան»,- Գ. Ե.) հայերեն մակագրությունը:

Էջի վարի ձախ կողմում կա ՀԿԿ Կենտկոմի Ինֆորմացիայի և արտասահմանյան կապե-
րի բաժնի վարիչ Լևոն Մանասերյանի հայերեն ստորագրությամբ և 23 հուլիսի 1973թ. հե-
տևյալ հայերեն մակագրությունը. «Ընդունված է համապատասխան որոշում ՀԿԿ ԿԿ-ի քար-
տուղարության կողմից: Կցել գործին»:

Գործում կա նաև այս գրության հիման վրա կազմված, «հույժ գաղտնի» ու «հատուկ թղթապա-
նակ» նշումները կրող, ՀԿԿ Կենտկոմի Բյուրոյի որոշման նախագծի շարադրանքը, որը բաղկա-
ցած է երկու կետից: Առաջին կետով, հանձնարարվում է Սփյուռքահայության հետ մշակութային
կապի կոմիտեին՝ «խորհրդային ռուբլով վճարել Ֆրանսահայ մշակութային միության գծով
ծամանող 70 հոգանոց գրոսաշրջիկների խմբի Մոսկվայից Երևան և հակառակ ուղղությամբ
ինքնաթիռի ճանապարհածախսը»:

Հայաստանի Ազգային արխիվում կան այս և հաջորդ տարիների համար՝ Ֆրանսահայ մշա-
կութային միության ու «Աշխարհ» շաբաթաթերթին նյութական օգնություն տրամադրելու վե-
րաբերյալ ՀԿԿ Կենտկոմի Բյուրոյի՝ «հույժ գաղտնի» և «հատուկ թղթապանակ» նշումները կրող
որոշումների արձանագրություններ (Ֆ. 1, ց. 126, գ. 15, թ. 58; Ֆ. 1, ց. 126, գ. 17, թ. 34; Ֆ. 1, ց. 126,
գ. 20, թ. 25; Ֆ. 1, ց. 126, գ. 21, թ. 11; Ֆ. 1, ց. 126, գ. 22, թ. 26, 85; Ֆ. 1, ց. 126, գ. 23, թ. 27; Ֆ. 1, ց. 126,
գ. 24, թ. 57; Ֆ. 1, ց. 126, գ. 25, թ. 1; Ֆ. 1, ց. 126, գ. 26, թ. 34 և այլն): Այդ որոշումները կայացվել են
չնայլ ֆրանսահայ կառույցներին նյութական օժանդակություն տրամադրելու խնդրանքով ՀԿԿ
Կենտկոմի Վ. Համազասպյանի ուղղած դիմում-գրությունների հիման վրա (Ֆ. 1, ց. 126, գ. 20, թ.
26; Ֆ. 1, ց. 126, գ. 21, թ. 12; Ֆ. 1, ց. 126, գ. 22, թ. 27; Ֆ. 1, ց. 126, գ. 23, թ. 28; Ֆ. 1, ց. 126, գ. 24, թ. 58; Ֆ.
1, ց. 126, գ. 25, թ. 2; Ֆ. 1, ց. 126, գ. 26, թ. 35-36 և այլն):

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ս. ԹՈՎԱՄԱՅԱՆԻՆ՝ ԻՏԱԼԻԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՀԵՏ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1966 թվին, Միլանից՝ ճարտարապետներ Արմեն Մանուկյանը, Ադրիանո
Ալպագո Նովելլոն, Հռոմից՝ ճարտարապետներ Պաոլո Կունեոն²⁴⁰ և Տոմմազո
Բրեչչիա Ֆրատադոկկին²⁴¹ Երևանից՝ ճարտարապետ Արմեն Զարյանը հիմք
դրեցին հայ ճարտարապետության ուսումնասիրության և մեր արվեստը Իտա-
լիայում ծանոթացնելու համագործակցությանը:

Իտալացի ճարտարապետների ծավալած աշխատանքը բազմակողմանի է՝
դասախոսություններ, ցուցահանդեսներ, կատալոգներ, մենագրություններ,
հոդվածներ: Առաջին ցուցահանդեսը, որը կոչվեց «Հայկական միջնադարյան
ճարտարապետություն», բացվեց Հռոմի Միջնադարյան և արդի արվեստ-
ների ինստիտուտի նախաձեռնությամբ /10 հունիսի 1968թ./, մայրաքաղաքի
Վենետիկյան պալատի սրահներում, իսկ երկրորդը՝ Վենետիկի Դոժերի պա-
լատում:

Հռոմի համալսարանի և իտալական պետության հովանավորությամբ լույս
է տեսել՝ «Հայկական հուշարձաններ»-ի շարքի գրքերից «Զորադիրի սուրբ Էջ-
միածինը» և լույս են տեսնելու «Մբանչելագործ վանքը», «Ղվին», Դատվանք և
Թուլիս 6-7-րդ դարերի երկու բազիլիկաները:

Միլանում 1968թ. Արմեն և Հակոբիկ Մանուկյան եղբայրների նախաձեռ-
նությամբ և ղեկավարությամբ հիմնադրվեց «Հայկական ճարտարապետության
նմուշագրեր» մենագրությունների շարքը, որից լույս են տեսել «Հաղպատ»,
«Խաչքար», «Սուրբ Թադեի վանք»: Ծրագրված են և շուտով լույս են տեսնելու
«Երերույք», «Տաթև», «Կեչադիս», «Գոշավանք», «Հովհաննավանք»:

Իտալիայի «Հայկական տան», Հայկական մշակութային միության մասնակ-
ցությամբ կազմակերպված է «Հայկական ճարտարապետությունը 4-ից մինչև
18-րդ դարերը» շրջիկ ցուցահանդեսը, որը մինչև օրս եղել է հետևյալ քաղաք-

239. Թովմասյան Ստեփան Սուրենի (1923, Երևան – 1996, Երևան) – Փիլիսոփայական գիտու-
թյունների դոկտոր, պրոֆեսոր: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության
ֆակուլտետը: Աշխատել է ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՄՀ ԳԱ համակարգերում, այդ թվում՝ Կենտկոմի
քարտուղար (1973-1976):

240. Կունեո Պաոլո (1936, Հոմ – 1995, Հոմ) – Իտալացի ճարտարապետ, արվեստաբան,
ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (1994): Ավար-
տել է Հոմի համալսարանի ճարտարապետության ֆակուլտետը, նույն համալսարանում Տոմ-
մազո Բրեչչիա Ֆրատադոկկիի հետ 1965թ. հիմնել Հայկական ճարտարապետության ուսումնա-
սիրության կենտրոնը և ղեկավարել այդ կառույցը: Հայկական ճարտարապետությանն առնչված
գեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում: Հայկական ճարտարապետու-
թյանը և նրա առանձին կոթողներին նվիրված մի շարք արժեքավոր մենագրությունների հե-
ղինակ է:

241. Բրեչչիա Ֆրատադոկկի Տոմմազո (ծն. 1936, Հոմ) – Իտալացի ճարտարապետ, արվեստա-
բան: Հոմի համալսարանում Պաոլո Կունեոյի հետ 1965թ. հիմնել է Հայկական ճարտարապե-
տության ուսումնասիրության կենտրոնը: Մասնակցել է հայկական ճարտարապետությանը
նվիրված միջազգային բազմաթիվ գիտաժողովների, դրանցում հանդես եկել գեկուցումներով և
մի քանի մենագրություններ հրատարակել նույն թեմայով:

ներում. Պարմա, Ջենովա, Բարի, Թորինո, Միլան, Վիեննա, Բուենոս Այրես, Բարսելոնա, Բեյրութ:

Այսօր Իտալիայում գոյություն ունեն հայ ճարտարապետությունը ռառմանա-սիրող կենտրոններ՝ Հռոմում և Միլանում, իսկ Թորինո քաղաքում համալսարանի ճարտարապետության ֆակուլտետում ճարտարապետ Ադրիանո Ալպագո Նովելլոյի նախաձեռնությամբ անց են կացվում հայ ճարտարապետությանը նվիրված դասընթացներ:

Իտալիայի ճարտարապետների գործունեությունը հովանավորվում է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Արվեստի, Հռոմի համալսարանի Միջնադարյան և արդի արվեստների պատմության, Միլանի ճարտարապետության ֆակուլտետի Հումանիստական գիտությունների ինստիտուտների, Երևանի Քաղաքային սովետի, ինչպես և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կողմից:

Համագործակցում են Սովետական Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեն և Մատենադարանը:

Նպատակ ունենալով զարգացնել գիտական համագործակցությունը և հաստատված բարեկամական կապերը, իտալացի ճարտարապետները վերջերս գրված նամակով առաջ են քաշել մի շարք հարցեր:

Ձեր ուշադրության ենք ներկայացնում նամակի պատճենը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 5, թթ. 7-8: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԴԿԿ ԿԵՆՏԿՈՄ՝ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԼԱ ՊԼԱՏԱՅԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՎԵՐՈՎ Վ. ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՐԳԵՆՏԻՆԱ ՄԵԿՆԵԼՈՒ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արգենտինայի հայկական հայրենասիրական «Մյուրեքյան հիմնարկությունը»²⁴² 1973թ. դիմել էր մեր կոմիտեին, խնդրելով ընթացք տալ Արգենտինայի Լա Պլատայի համալսարանի հրավերին և կազմակերպել ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի այցելությունը Արգենտինա, որը լավագույն առիթը կհանդիսանա արգենտինահայ գաղութում ծավալելու հայրենասիրական աշխատանքներ:

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանը ժամանակին տվել էր իր համաձայնությունը Արգենտինա մեկնելու սեպտեմբերի երկրորդ կեսին, 21 օրով, և խնդրել էր որպես ուղեկցողների նկատի ունենալ իր կնոջը՝ Վերա Ֆեոդորովնա Համբարձումյանին և Բյուրականի աստղադիտարանի աշխատակից, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Էլմա Սուրենի Պարսամյանին:²⁴³

Սակայն այդ այցելությունը տեղի չունեցավ Վ. Համբարձումյանի բազմազբաղ լինելու պատճառով, որի մասին ժամանակին տեղյակ պահեցինք «Մյուրեքյան հիմնարկությանը»:

Այժմ «Մյուրեքյան հիմնարկությունը» կրկին դիմել է մեր կոմիտեին, տեղեկացնելով, որ ուժի մեջ է մնում եղած հրավերը և խնդրում է հայտնենք իրենց, թե 1974թ. ո՞ր ամսին է ակադեմիկոս Վ. Համբարձումյանը մեկնելու Արգենտինա:

Նկատի ունենալով, որ Վ. Համբարձումյանը գտնվելով Արգենտինայում հնարավորություն կունենա հանդիպումներ ունենալ հայկական կազմակերպությունների հետ և իր այցելությունը օգտակար դարձնել արգենտինահայ գաղութի հայրենասիրական հատվածները սերտորեն կապելու Սովետական Հայաստանին, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն նպատակահարմար է համարում ընդունել Արգենտինայի Լա Պլատայի համալսարանի և «Մյուրեքյան հիմնարկության» համատեղ հրավերը:

Հրավիրագրերի պատճենները մեր համապատասխան նամակի հետ /թիվ 392/ 1973թ. օգոստոսի 7-ին ներկայացվել են ՀԿԿ կենտրոնական կոմիտե:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 5, թթ. 10-11: Պատճեն: Մեքենագիր:

242. Հիմնվել է արգենտինահայ բարերար, մեծահարուստ Տիգրան Մյուրեքյանի տրամադրած միջոցներով:

243. Պարսամյան Էլմա Սուրենի (1929, Երևան) – Աստղաֆիզիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ (2000): 1954թ. Երևանի պետական համալսարանն ավարտելուց անմիջապես հետո աշխատանքի է անցել Բյուրականի աստղադիտարանում: Նրա անունով են կոչվել տիեզերական մի քանի մարմիններ:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Տ. ԺԱՄԿՈՉՅԱՆԻՆ ՆՐԱՆ ՀԱՄԵՐՁԵՐՈՎ ՀԱՆԴԵՍ
ԳԱՆՈՒ ՀԱՄԱՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի հայրենակից²⁴⁴

Ուրախությամբ տեղեկացանք, որ Վաշինգտոնում Դուք եղել եք անվանի
բանաստեղծուհի Սիլվա Գապուտիկյանի հետ հանդիպման կազմակերպման
հանձնաժողովի նախագահը և ցույց եք տվել Ձեր աջակցությունը այդ հարցում:
Հայտնում ենք մեր շնորհակալությունները:

Արտասահմանյան հայերի հետ մշակութային կապի կոմիտեն ընդառաջելով
Ձեր բազմիցս հղած նամակներին, հնարավոր է համարում 1974թ. ընթացքում
հրավիրել Ձեզ Սովետական Հայաստան՝ համերգներով հանդես գալու նպա-
տակով: Նպատակահարմար է Ձեր համերգները կազմակերպել Լենինական և
Կիրովական քաղաքներում: Ինչ վերաբերում է Ձեր ցանկությանը՝ ձայնագր-
վել Սովետական Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ, առայժմ
որոշակի չենք կարող խոստանալ, այդ խնդրանքի իրականացման հնարավո-
րությունը կքննարկենք Ձեր Երևան գտնվելու ժամանակ:

Մեր պայմանները հետևյալն են՝ Դուք կգնեք Վաշինգտոնում 3 օրվա զբո-
սաշրջիկի ուղեգիր և Երևան կժամանեք որպես զբոսաշրջիկ: Այնուհետև, Մշա-
կութային կապի կոմիտեն կընդունի Ձեզ որպես իր հյուրը և կհոգա Ձեր հյուրա-
նոցային և այլ ծախսերը: Ձեր համերգները կկազմակերպվեն ոչ առևտրական
սկզբունքով:

Հաճեցե՛ք հայտնել մեզ այն ժամկետի մասին, որը ավելի նպաստավոր է Ձեզ
Երևան այցելելու համար:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 509, թթ. 1-2: Պատճեն: Մեքենագիր:

244. Ամերիկահայ օպերային երգիչ Տիգրան Ժամկոչյանի՝ համերգներով Խորհրդային Հա-
յաստան այցի մասին կան ԱՄՆ-ում ԽՍՀՄ դեսպանատան խորհրդական Յ. Վորոնցովի,
ևսև Տ. Ժամկոչյանի ու Վ. Համազասպյանի նամակները. Տե՛ս ֆ. 875, ց. 5, գ. 12, թթ. 54-55;
ֆ. 875, ց. 6, գ. 509, թթ. 7-9, 13:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ «ԼՈՆԴՈՆ»²⁴⁵ ԱՄՍԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ
Ա. ԳՅՈՒԶԵԼՅԱՆԻՆ ԱՄՍԱԹԵՐԹԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ ԵՎ ԱՆԳԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԵՏ ՀԵՏԱԳԱ ԿՄՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Ասատուր Գյուզելյան,

Շատ հաճելի է տեղեկանալ, որ անգլահայ գաղութն էլ ունեցավ իր ամսա-
թերթը /առայժմ ամսաթերթ/: Կարդալով «Լոնդոնի» առաջին համարները, ող-
ջունում ենք Ձեր նախաձեռնությունը և ցանկանում հետագա աշխատանքնե-
րին հաջողություններ:

«Լոնդոնը» իրավացի է հավատալով, որ «Ժողովուրդի ուժը, հայության մի-
ասնականությունը կախված է գաղթօջախներում իրար, իսկ Հայրենիքը գաղ-
թօջախներում կապող կամուրջներու ամրութենեն»²⁴⁶ և որ «հայ մամուլին վե-
րապահված է կարևոր դեր մը այդ կամուրջներու ստեղծման ու ամրապնդման
մեջ»:²⁴⁷

Սովետական Հայաստանի Սփյուռքահայության հետ մշակութային կապի
կոմիտեն իր հերթին խոստանում է ամեն կերպ օժանդակություն ցույց տալ
Ձեր սկսած շնորհակալ գործին, «Լոնդոնին» ուղարկելով Հայրենիք-սփյուռք
կապերն ամրապնդող համապատասխան հոդվածներ, ակնարկներ, որտեղ
կպատկերվեն Հայաստանի շինարարությունը, աշխատանքային առօրյան և
մշակութային կյանքը:

Սրտագին ողջույններով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 552, թ. 18: Պատճեն: Մեքենագիր:

245. «Լոնտոնը» սկսել է լույս տեսնել 1974թ. մարտ ամսին՝ Ասատուր Գյուզելյանի խմբա-
գրությամբ: Հրատարակվել է ընդամենը 24 համար, վերջինը կրում է 1976թ. մարտ ամսի նշումը:

246. Բնագրում բերված է «ամրությունեն» տեսքով:

247. Մեջբերված հատվածը վերցրած է «Լոնտոնի» առաջին համարի խմբագրականից:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
 Վ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ²⁴⁸ ՍՓՈՒՈՔԱՅԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ
 ՆՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱԿԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սփյուռքահայ գաղթօջախներում գործում են մեծ թվով կանանց առաջադիմական կազմակերպություններ, որոնք մեծ դեր են կատարում աշխարհի խաղաղության, ժողովուրդների բարեկամության, մանուկների դաստիարակության, ինչպես նաև հայապահպանության գործում:

Բացի կազմակերպություններից, կան միջազգային համաժողովի տեր կին գիտնականներ, արտիստներ, արվեստագետներ, որոնց խոսքը մեծ նշանակություն ունի միջազգային լայն շրջանակների համար և որոնք ջերմ բարեկամություն են պահպանում սովետական հայրենիքի հետ՝ ինչպես Հայաստանի Գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, նշանավոր բյուզանդագետ Սիրարփի Տեր-Ներսեսյանը,²⁴⁹ Համաշխարհային արևելագիտության ընկերության վարչության անդամ Նինա Գարսոյանը,²⁵⁰ Արգենտինայի Կոմպոզիտորների միության նախագահ Ալիսա Թերզյանը,²⁵¹ նշանավոր գրող Ալիսիա Կիրակոսյանը,²⁵² Մետրոպոլիտեն Օպերայի մենեջերներ Լիլի Չուգասյանը,²⁵³ Լուսին Ամարան,²⁵⁴ Հնդկաստանի կանանց շարժման ղեկա-

248. Դեմիրճյան Կարեն Սերոբի (1932, Երևան – 1999, Երևան, թաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում) – ՀԽՍՀ և ՀԿԿ գործիչ: Ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի ֆակուլտետը: Եղել է ՀԿԿ Երևանի քաղկոմի քարտուղար, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար, Կենտկոմի առաջին քարտուղար (1974-1988), ՀՀ Ազգային ժողովի նախագահ (1998-1999): Մալանվել է ՀՀ Աժում՝ 1999թ. հոկտեմբերի 27-ին: Հետմահու նրան շնորհվել է ՀՀ ազգային հերոսի կոչում: Նրա անունով են կոչվում Երևանի մետրոպոլիտենը, մարզահամերգային համալիրը և այլ կառույցներ: Երևանում գործում է Կարեն Դեմիրճյանի թանգարանը, գործում է նրա անվան բարեգործական հիմնադրամը:

249. Տեր-Ներսեսյան Սիրարփի Միհրանի (1896, Կ. Պոլիս – 1989, Փարիզ) – Արվեստաբան, բյուզանդագետ, հայագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ (1966): Ավարտել է Ժնևի և Սորբոնի (Փարիզ) համալսարանները: Բազմաթիվ գիտական աշխատությունների հեղինակ է:

250. Գարսոյան Նինա Գևորգի (1923, Փարիզ) – Ամերիկահայ հայագետ, բյուզանդագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հրատարակվել է հայ ժողովրդի պատմությանը նվիրված մենագրություններ, կատարել է գիտական թարգմանություններ:

251. Ճիշտը՝ «քարտուղար»։ Թերզյան Ալիսա Հովհաննեսի (1938, Կորդոբա, Արգենտինա) – Երգչուհի, դաշնակարուհի, խմբավար, հասարակական գործիչ: Ավարտել է Բուենոս Այրեսի կոնսերվատորիան, որտեղ հետագայում դասախոսել է պրոֆեսորի կոչումով: Եղել է Արգենտինայի Կոմպոզիտորների միության քարտուղար: Գրել է դաշնամուրային պիեսներ, երգեր, ռոմանսներ, սիմֆոնիա, խմբերգեր: Հանդես է եկել նաև մենահամերգներով: Նրա ստեղծագործությունները կատարվել են Հարավային ու Հյուսիսային Ամերիկաներում, Եվրոպայում:

252. Կիրակոսյան Ալիսիա Գուրգենի (1936, Կորդոբա, Արգենտինա, 1971թ. ապրիլի 18) – Բանաստեղծուհի: Գրել է բանաստեղծություններ երեք լեզուներով՝ հայերեն, իսպաներեն և անգլերեն, կատարել թարգմանություններ:

253. Չուգասյան Լիլի Վահանի (1920, Չիկագո) – Օպերային երգչուհի (կոնտրալտ): Չայեր մշակել է հայտնի երաժիշտ Ֆիլիպ Մանուելի մոտ: Երգել է եկեղեցական երգչախմբերում և նվագախմբերի հետ, Արևելասի, Բուլղարիայի, Նյու Յորքի, Մոնթեպելի, Մեխիկոյի և Երևանի օպերային բեմահարթակներում:

254. Ամարա (Արմադանյան) Լուսին Գևորգի (1927, Հարդիորդ, ԱՄՆ) – Օպերային երգչուհի

վար, պատմաբան Մարջրի Հովսեփյանը²⁵⁵ և շատ ուրիշներ: Ինչպես հայտնի է, 1975թ. հայտարարված է կանանց միջազգային տարի:

Կոմիտեն գնահատելով սփյուռքահայ կանանց ակտիվությունը, նրանց կատարած գործի մեծ նշանակությունը, գտնում է անհրաժեշտ այս տարի սեպտեմբերին հրավիրել սփյուռքահայ նշանավոր կին գործիչների, սովետական հայրենիքի հետ կապված առաջադիմական միությունների ներկայացուցիչների հավաք, որտեղ կլավեն զեկուցումներ աշխարհի խաղաղության, ժողովուրդների բարեկամության, սովետական կանանց ձեռք բերած նվաճումների, ինչպես նաև Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման գործում սփյուռքահայ կանանց դերի մասին: Անհրաժեշտ ենք համարում այդ օրերին հրավիրել 20-30 նշանավոր կանանց՝ 7-10 օրով:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 12, ք. 4: Պատճեն: Մեքենագիր:

(սուրբանո): Երգել է Սան Ֆրանցիսկոյի հայկական եկեղեցում, ապա օպերային երգչախմբում, Լոս Անջելեսի, Սան Ֆրանցիսկոյի, Նյու Յորքի ու Երևանի օպերային բեմահարթակներում:

255. Հովսեփյան (Հուսեփյան) Մարջրի – գրող, պատմաբան, բանասեր և հասարակական գործիչ (ԱՄՆ):

Վ. ՀԱՄԱՁԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՒՐ ԵԳԻՊՏԱՅԱՅ ԱՆՎԱՆԻ ՆԿԱՐԻՉ
Օ. ԱԿԵՏԻՍՅԱՆԻ ԿՏԱԿԻ ՄԱՍԻՆ

Անցյալ տարի Կահիրեում վախճանված եգիպտահայ անվանի նկարիչ Օննիկ Ավետիսյանի կտակով նախատեսված է Հայաստանի Պետական պատկերասրահին հանձնել արվեստագետի կարևորագույն ստեղծագործություններից 6 յուղաներկ կտավներ և 40 օֆորտներ՝ 22 կգ ընդհանուր քաշով: Բացի այդ, պետք է Հայրենիք տեղափոխվի նաև նկարչի հարուստ արխիվը, որը կազմում է 4 ճամպրուկ: Այս ամենի տեղափոխությունը հանձն է առնում հանգուցյալ նկարչի ազգական, սփյուռքահայ Պետրոս Վրթանեսյանը:

Վերոհիշյալի կապակցությամբ պատշաճ ենք համարում Պետրոս Վրթանեսյանին տասը օրով հրավիրելու Հայրենիք՝ իբրև Կոմիտեի հյուր:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 12, թ. 5: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱՁԱՄՊՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՒՐ ԼԻԲԱՆԱՆԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ԱՂԵՏԱԼԻ ՎԻՃԱԿԻ ԵՎ ՆՐԱՆ ՕԳՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երկար ամիսներ ի վեր, Լիբանանում տեղի ունեցող ներքին ընդհարումների հետևանքով ինչպես ողջ երկիրը, այնպես էլ լիբանանահայ գաղութը գտնվում է տագնապալի և աղետալի վիճակում: Բախվող ուժերի գոհ դարձած, հիմնականում առաջադիմական ուժերին հարող Սովետական Միության և իր վերածնված հայրենիքի նկատմամբ անսահման սեր տածող մոտ 250 հազարանոց հայ համայնքը գտնվում է ծայրահեղ թշվառ վիճակում: Մեծ է մահացածների, հատկապես վիրավորների թիվը: Վերջիններիս համար չկան բուժման անհրաժեշտ պայմաններ, և մի շարք հայկական դպրոցներ ժամանակավորապես վեր են ածվել հիվանդանոցների, որտեղ ամենախղճով պայմաններում վիրավորներին ցույց է տրվում բժշկական օգնություն: Մեծապես տուժել են հայկական մշակութային և կրթական հաստատությունները, ավերվել են վերջին տարիներին կառուցված Լևոն Նազարյան վարժարանը, Հայ ավետարանական կոլեջը, մոխրացել է Հայկազյան կոլեջի հայագիտական հարուստ գրադարանը: Բայց ամենից ծանրը բանվոր ու չքավոր դասակարգի, ուսուցիչների, առաջադիմական հասարակական գործիչների վիճակն է: Նրանք ամիսներ ի վեր գործազուրկ են, միջոցներ չունեն երկրի սահմաններից դուրս գալու՝ փրկելու համար իրենց ընտանիքների կյանքը և գտնվում են սովի սպառնալիքի տակ:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն իր միջոցներից 20.000 դոլար տրամադրել է լիբանանահայ աղետյալներին և միաժամանակ կոնդակով դիմել բոլոր հայ գաղթօջախներին՝ կոչ անելով օգնություն կազմակերպել լիբանանահայությանը: Հայկական Բարեգործական ընդհանուր միությունն իր հերթին լիբանանահայ աղետյալներին տրամադրել է 600.000 դոլար և ձեռնարկել համազաղութային մի հանգանակություն՝ ամոքելու համար սփյուռքի ամենակենսունակ, ամենահայրենասեր այս գաղութի վերքերը:

Բայց լիբանանահայությունը, ինչպես նաև ողջ սփյուռքն առաջին հերթին օգնություն է ակնկալում իր հայրենիքից՝ Սովետական Հայաստանից և նրան է ուղղել իր հայացքը:

Սփյուռքից ստացված բազմաթիվ նամակները, որոնց մեջ շնորհակալության զգացումով է խոսվում ներգաղթի կազմակերպման նկատմամբ սովետական կառավարության ցուցաբերած մեծ հոգատարության մասին, վկայում են, որ սփյուռքահայությունը հանձին Սովետական Միության տեսնում է այն մեծ ուժը, որը հույս է ներշնչում իրեն, ապրելու, գոյատևելու, համախմբվելու Մայր Հայրենիքի շուրջը:

Նկատի առնելով նման օգնության քաղաքական մեծ նշանակությունը, ինչպես նաև մեր երկրի մարդասիրական սկզբունքները, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն խնդրում է միջնորդել վերադաս մարմինների առջև, Կարմիր խաչի միջոցով անհրաժեշտ օգնություն կազմակերպել Լիբանանի աղետյալներին: Այս քայլը կհանդիսանա Սովետական Միության խաղաղասիրական և մարդասիրական քաղաքականության մի նոր ու վառ

ապացույց: Նման օգնությունը, ինչ խոսք, կտարածվի նաև հայ համայնքի վրա, հատկապես՝ աշխատավորության և գյուղացիության:

Կոմիտեն խնդրում է նաև հնարավորություն տալ իր ունեցած միջոցների և իր տրամադրության տակ գտնվող կտակների հաշվին Հայրենիքի անունից օգնություն ցույց տալ լիբանանահայությանը, հատկապես՝ ուսումնական հաստատություններին, հիվանդանոցներին, առաջադիմական մշակութային կազմակերպություններին՝ գույքի, գրենական և այլ պիտույքների, դեղորայքի ձեռք բերման համար: Կոմիտեն միաժամանակ խնդրում է դյուրություններ ստեղծել, որպեսզի առաջիկա ամիսներին 1-2 ամիս ժամկետով Հայաստան գան և իրենց հարազատների մոտ բնակություն հաստատեն լիբանանահայերը, հատկապես երեխաները, որոնք գտնվում են հոգեպես ցնցված և ֆիզիկապես հյուծված վիճակում:

Կասկածից վեր է, որ նման միջոցառումները մեծապես կնպաստեն մեր երկրի հեղինակության ամրապնդմանը, կվկայեն Սովետական Հայաստանի՝ դեպի սփյուռքահայությունն ունեցած հոգատար, հայրական վերաբերմունքը: Լիբանանահայ գաղութը աշխարհագրականորեն և հոգեպես Սովետական Հայաստանին ամենամոտ կանգնած հայաժողովուրդն է, որն իր ներգործությունն է ունենում ամբողջ սփյուռքի վրա: Ինչքան շուտ ամոքվեն նրա վերքերը և վերականգնվի նրա մշակութային-հասարակական կյանքը, այնքան ավելի քիչ կլինի այդտեղից արտագաղթը դեպի հեռավոր ափեր:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 23, թթ. 1-2: Պատճեն: Սեքրետագիր:

№ 132

28 հունվարի 1976թ., Երևան

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ՝
ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻԽՈՐԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ Ս. ՂԱԶԱՐ ԿՂԶՈՒՄ
ԱՌԱՋԱՅԱԾ ԳՐԴԵՅԻ ԵՎ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ ԱԶԱՅՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ
ԱՆՀՐԱՊԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1975թ. դեկտեմբերի 9-ի գիշերը Վենետիկի Մխիթարյան միաբանության Ս. Ղազար կղզում հրդեհ է առաջացել, որի հետևանքով հրո ճարակ են դարձել ավանդատունը՝ թանկարժեք սպասեղենով, հարյուրավոր տարիների ընթացքում հավաքված Մխիթարյան գրադարանի մի մասը՝ պատմական իրերով և 17-18-րդ դարերի հայերեն հնատիպ գրականության եզակի նմուշներով: Բարեբախտաբար, փրկված են հայերեն ձեռագրական հավաքածուները:

Միլանի Պոլիտեխնիկ ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետի պրոֆեսոր Ալպագո Նովելլոյի նախաձեռնությամբ իտալական կառավարությունը Բոտալիայի մի շարք մշակութային կազմակերպությունների, այդ թվում նաև Բոտալիայի մշակութային միության մասնակցությամբ ա.թ. հունվարի 14-ին հրավիրել է հավաքույթ ապահովելու Բոտալիայի, ինչպես նաև աշխարհի տարբեր երկրների մշակութային, գիտական կազմակերպությունների և հայ գաղութների մասնակցությունը Մխիթարյանների կյուրական կորուստների վերականգման գործին:

Նկատի ունենալով, որ Հայրենիքի օժանդակությունը մեծ տպավորություն կգործի արտասահմանյան շրջանակների վրա, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն քաղաքական կարևոր նշանակություն է տալիս այս խնդրին և անհրաժեշտ գտնում այդ գործին մասնակից դարձնել Հայկական ՍՍՀ ԳԱ ֆունդամենտալ գրադարանին, Պետական համալսարանի գրադարանին, Մաշտոցի անվան մատենադարանին, Հանրային գրադարանին, որոնք ունեն մեծ հավաքածուներ և փոխանակային ֆոնդեր:

Կարծում ենք, որ կառավարության հատուկ որոշումով հնարավոր է նշված ֆոնդերից Մխիթարյանների ներկայացրած ցուցակներով, առանց փոխհատուցման, դուրս գրել առկա կրկնօրինակները և Սփյուռքի կոմիտեի միջոցով առաքել Մխիթարյաններին:

Խնդրում ենք ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 23, թ. 3: Պատճեն: Սեքրետագիր:

Վ. ՍԱՐՈՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱՉԱՍՊՅԱՆԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԻՐ ՊԻԵՍՆԵՐԻ ԲԵՄԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ Ա. ԲԱԲԱՉԱՆՅԱՆԻ
ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ ինձ ուղարկվող բոլոր թերթերը, ամսագրերը և գրքերը առաքել իմ նոր հասցեով:

Եթե հնարավոր է, խնդրում եմ պրն. Գրիգոր Աղամյանի հետ ուղարկել տեղեկություններ հայերեն լույս տեսած իմ պիեսների մասին: Ես կցանկանայի տեսնել «Իմ սիրտը լեռներում է» ներկայացման տեսարանների և գործող անձանց լուսանկարները և առանձնապես կցանկանայի ունենալ այդ պիեսի համար Առնո Բաբաջանյանի գրած երաժշտության ձայնագրությունը կամ ձայնագրակը: Նույնը վերաբերվում է նաև իմ մյուս՝ «Խաղողի այգի» պիեսին: Ենթադրում եմ, որ այս պիեսներից յուրաքանչյուրն ունի իր բեմականացման պատմությունը և ես կուզենայի մի քանի տեղեկություններ իմանալ այս առթիվ: Ե՞րբ է առաջին անգամ բեմադրվել այդ պիեսը, դրանից հետո ե՞րբ են եղել այլ ներկայացումներ: Ցավում եմ, որ բացի անգլերենից ոչ մի այլ լեզվով կարդալ չեմ կարողանում, ոչ հայերեն և ոչ էլ ռուսերեն: Եվ ես կարծում եմ, որ կգտնվի որևէ մեկը, ով անգլերեն կմեքենագրի իմ այս նամակի պատասխանը և իմ խնդրած տեղեկությունները: Կուզենայի իմանալ նաև, թե իմ գրքերից որո՞նք են թարգմանվել հայերեն, որո՞նք են հրատարակվել և վաճառվել: Ենթադրում եմ, որ թե՛ պիեսների բեմադրության և թե՛ գրքերի հրատարակման համար գոյություն ունի վճարման կարգ, համաձայն Ժնևի հեղինակային իրավունքի: Եվ, եթե այն գոյություն ունի, կարո՞ղ եք Դուք ինձ հայտնել, թե որքա՞ն է յուրաքանչյուր գործի վճարման գումարը: Նամակս մի քիչ գործարարական բնույթ ունի: Խնդրում եմ ինձ ճիշտ հասկանալ: Ես որևէ կառավարությունից, մշակութային ընկերությունից, որևէ խնամակալից դրամական նպաստ չեմ ստանում: Իմ փողը ես վաստակում եմ գրելու շնորհիվ, հետևաբար այս վճարումների հարցը ինձ համար ունի ամենակարևոր նշանակություն:

Ես ցանկություն ունեմ այցելել Հայաստան: Եթե իմ պիեսներից և գրքերից եկած գումարը պահվում է, ապա ես կցանկանայի իմանալ, թե ինչպե՞ս է օրենքը տրամադրված այդ դրամի օգտագործման նկատմամբ: Ես գիտեմ, որ թույլատրվում է այդ դրամով գնումներ կատարել: Կթույլատրվի՞ր արդյոք այդ դրամով նվիրատվություն կատարել ընկերներին, ծանոթներին, բարեկամներին: Երբ ստանամ Ձեզանից այս նամակումս խնդրած տեղեկությունների պատասխանը և եթե այցելեմ Հայաստան, ապա մեծ ցանկություն ունեմ թարմացնելու իմ հարաբերությունները մի շարք մարդկանց հետ, այդ թվում՝ Փարիզի իմ հարևան Էդուարդ Աղամյանի, բիթլիսցի դրամատուրգ Արամ Արշակի Բաբոյանի /Ճիշտ եմ գրել ազգանունը/, որի հետ ես ծանոթացել եմ 1960թ., Սունդուկյանի թատրոնի ռեժիսոր Աճեմյանի,²⁵⁶ Խարկովի թե Ռոստոմի երկա-

թուղային կայարանում ծանոթացած մի կինոռեժիսորի հետ, որի ազգանունը նույնպես Սարոյան է, և Պատրիկ Մելյանի²⁵⁷ հետ, որը մի ժամանակ ապրում էր Լոս Անջելեսում, և որը մեծապես օգնեց ինձ, երբ ես 1960թ. այցելել էի Երևան: Գուցե նա կարողանա օգնել Ձեզ, որպեսզի իմ այս նամակի պատասխանը գրվի անգլերեն, որից հետո պրն. Գրիգոր Աղամյանը դա իր հետ կբերի Փարիզ: Եթե ունեք հայերեն լույս տեսած իմ գրքերից, ապա կխնդրեի, որպեսզի դրանցից յուրաքանչյուրից երկու-երեք օրինակ ուղարկեք ինձ՝ Սան Ֆրանցիսկոյի վերնում նշված իմ հասցեով:

Հուսով եմ, որ Դուք շատ լավ եք և խնդրում եմ իմ ողջույնները հաղորդել ընկերոջս՝ Վահագն Դավթյանին և Հովհաննես Բաղալյանին, բոլոր մյուս ընկերներին, որոնց հանդիպելու հաճույքն ունեցել եմ Երևանում, Փարիզում, Նյու Յորքում, Սան Ֆրանցիսկոյում և Ֆրեզնոյում: Առանձնահատուկ ողջույններս խնդրում եմ հաղորդել Վիկտոր Համբարձումյանին:

Մնամ անկեղծորեն՝

Վիլյամ Սարոյան

Ֆ. 875, ց. 6, գ. 517, թթ. 139-140: Մեքենագիր: Թարգմանություն ամգլերենից:

ստուդիան, Լենինականի (Գյումրի) Ա. Մոսկովյանի անվան թատրոնը: Եղել է Սունդուկյանի անվան ու Երաժշտական կոմեդիայի թատրոնների (երկուսն էլ՝ Երևանում) գլխավոր ռեժիսորը: Ստեղծել է բեմավրվեստի դասական բարձրարժեք գործեր:

257. Մելյան Պատրիկ Աբրահամի (1895, ավան Թալաս, Կեսարիայի շրջան – 1978, Երևան) – Գրող, խմբագիր, հասարակական գործիչ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ: Ավարտել է Կեսարիայի Մբ. Կարապետ ճեմարանը: Եղել է Նյու Յորքի «Բանուոր» թերթի հիմնադիրներից, «Լրաբեր» թերթի խմբագիրը, հայրենադարձվելուց հետո՝ «Մովեստական Հայաստան» ամսագրի գլխավոր խմբագիրը:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ՝ ԱՆՎԱՆԻ
ԳԵՂԱՆԿԱՐԻՉ Ս. ԽԱԶՆՍՈՒՐՅԱՆԻ ԱՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամերիկահայ առաջադիմական շրջանակին պատկանող, Սովետական Հայաստանի ջերմ բարեկամ, նկարչուհի Վալա Խաչատուրյանը,²⁵⁸ որը Սովետական Հայաստանին է նվիրել իր հանգուցյալ ամուսնու, հայ անվանի նկարիչ Սարգիս Խաչատուրյանի²⁵⁹ իր մոտ գտնվող բոլոր գործերը²⁶⁰, ինչպես նաև իր ստեղծագործություններից լավագույններն ու արխիվային արժեքավոր նյութեր, դիմել է մեր կոմիտեին՝ խնդրելով Փարիզում թաղված Սարգիս Խաչատուրյանի աճյունը փոխադրել Սովետական Հայաստան: Նկարչի այրին միաժամանակ տեղեկացնում է, որ ֆրանսիական օրենքների համաձայն, թաղումից 30 տարի հետո գերեզմանները հողին են հավասարեցվում, և Ս. Խաչատուրյանի գերեզմանն անհետ կորստյան կենթարկվի:

Նկատի ունենալով, որ Վալա Խաչատուրյանը ինքն է լուծելու աճյունասափորի փոխադրության հետ կապված բոլոր հարցերը և հոգալու է համապատասխան ծախսերը, Կոմիտեն նպատակահարմար է համարում ընդառաջել Վալա Խաչատուրյանի խնդրանքին և նրա կողմից աճյունասափորը փոխադրելուց հետո այն ամփոփել Երևանի քաղաքային գերեզմանատան պանթեոնում, հաշվի առնելով հայ գեղանկարչության բնագավառում Ս. Խաչատուրյանի ունեցած մեծ վաստակը:

Խնդրում ենք ձեր համապատասխան կարգադրությունը:²⁶¹

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 24, թ. 11: Պատճեն: Մեքենագիր:

258. Խաչատուրյան Վալա (Վարդանուշ) (1898, Տրապիզոն – 1984, Նյու Յորք) – Գեղանկարչուհի: Կրթությունն ստացել է Բաթումի գիմնազիայում: Նրա նկարները ցուցադրվել են տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Երևանում:

259. Խաչատուրյան Սարգիս Կարապետի: (1886, Մալաթիա – 1947, Փարիզ, աճյունը թաղված է Երևանում) – Գեղանկարիչ: Կրթությունն ստացել է Կարինի Սանասարյան վարժարանում, Հռոմի Գեղարվեստի ակադեմիայում, Փարիզի Դեկորատիվ արվեստների դպրոցում: Ցուցահանդեսներով հանդես է եկել Եգիպտոսում, Իտալիայում, Ավստրիայում, Հնդկաստանում, Փարիզում, Լոնդոնում, ԱՄՆ-ում:

260. Վալա Խաչատուրյանը ամուսնու՝ Սարգիսի որմնանկարները Խորհրդային Հայաստան էր բերել դեռևս 1971թ. ապրիլին. տե՛ս «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, հուլիս 1971թ., էջ 19:

261. Ս. Խաչատուրյանի աճյունի հայրենադարձը կատարվեց Վ. Համազասպյանի սույն գրությունից ավելի քան 1.5 տարի հետո և 1977թ. դեկտեմբերի 28-ին նրա աճյունը թաղվեց Երևանում:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՔԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ՝ ՄԵՔՍԻԿԱՅԱՅ ԳՅՈՒՏԱՐԱՐ Ս. ՀԱՅՅԱՆԻ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Մայիսի 9-ին Մեքսիկայից Երևան է ժամանելու արհեստական մարմարի գծով անվանի մասնագետ, գյուտարար Մկրտիչ Հաճյանը, որի նկատմամբ որոշակի հետաքրքրություն կա ՀՍՍՀ Շինանյութերի արդյունաբերության մինիստրության Քարի ու սիլիկատների գիտահետազոտական ինստիտուտում: Մեր կարծիքով՝ օգտակար կլինի կազմակերպել նրա հանդիպումը մեր մասնագետների հետ:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 23, թ. 11: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՍԱՐԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՍՏԱՆԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐ
ԳՐԹԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԻԵՏՆԵՐԻ ԲԵՄԱՂՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի ընկ. Վ. Համազասպյան

Շատ շնորհակալ եմ իմ ապրիլի 20-ի նամակի Ձեր ապրիլի 30-ի պատասխանի համար, որը ինձ հանձնեց պրն. Գրիգոր Աղամյանը: Հատկապես շատ շնորհակալ եմ, որ Դուք այդ պատասխանը անգլերենով էիք գրել, քանի որ Դուք գիտեք, որ ես կարողանում եմ խոսել և հասկանալ, երբ ուրիշներն են խոսում հայերեն, սակայն ես չիմանիս չեմ գրել և կարդալ հայերեն:

Ձեր նամակում ինձ ուղղված շատ անուշ խոսքեր կային, սակայն միաժամանակ մի շարք կետերի պատասխանը չէիք տվել:

1. Որևէ մեկը կնշի՞ր իմ այն գրքերի անունները, որոնք թարգմանվել են հայերեն և հրատարակվել Հայաստանում: Եվ արդյո՞ք կարող եք այդ գրքերից 2-ական օրինակ ուղարկել իմ Սան Ֆրանցիսկոյի հասցեով:

2. Կարո՞ղ եք արդյոք ուղարկել իմ պիեսների և թատերական գործերի բեմադրության պատմությունը և, միաժամանակ, յուրաքանչյուր բեմադրության ծրագիրը /եթե Դուք ունեք այդ ծրագրից միայն 1 օրինակ, ապա խնդրում եմ ուղարկել դրանց լուսապատճենը/: Կիսնդրեի ինձ ուղարկել նաև ամեն մի ներկայացման բեմադրությունից առնվազն 1 լուսանկար, որը պատկերում է բեմական տեսարան և գործող անձանց:

3. Կարո՞ղ եք մագնիսոֆոնի ժապավենի վրա ձայնագրել և ինձ ուղարկել «Իմ սիրտը լեռներում է» պիեսի համար Առիտ Բաբաջանյանի գրած երաժշտությունը: Եթե ձեր տրամադրության տակ կա այս պիեսի շարժանկարի երաժշտությունը՝ ապա կխնդրեի, որ դա նույնպես ձայնագրեիք և ինձ ուղարկեիք: Պետք է ասեմ՝ դա ավանդույթ է, որ ժնկի կոնվենցիայի մասնակից երկրները նախքան որևէ հեղինակի գործը շարժանկարի վերածելը, պետք է թույլտվություն ստանան հեղինակից: Ասեմ ինչի համար: «Իմ սիրտը լեռներում է» պիեսի կինոնկարի ռեժիսորը, դիրեկտորը, դերակատարները՝ կարող են չհամապատասխանել այդ պիեսի բովանդակությանը-պոտենցիալին, քանի որ դրանց ոչ ճիշտ ընտրությունը կարող է վնաս պատճառել պիեսին, հեղինակին, բայց որ ամենակարևորն է՝ հայ հանդիսատեսին: Այժմ, երբ շարժանկարն արդեն պատրաստ է, կցանկանայի իմանալ ովքե՞ր են ֆիլմի ռեժիսորը, դիրեկտորը, սցենարի հեղինակը, դերակատարները: Նաև կցանկանայի ունենալ մի շարք լուսանկարներ, ինչպես նաև ֆիլմի մասին ազդագրերից /առնվազն 2-ական օրինակ յուրաքանչյուրից/:

Գոյություն ունի այսպես կոչված տեսագրություն: Եթե դժվար չէ և մեծ ծախսերի հետ չի կապված, կարո՞ղ եք դուք ինձ ուղարկել այդ կինոնկարի տեսագրությունը:

Այս ամենը մեծ հոգս կարող է թվալ, սակայն պիտի ասեմ, որ գրելը նույնպես մեծ հոգս: Եվ այն, ինչ էս եմ գրում, իմ երկար տարիների դժվարին աշխատանքի հետևանքն է, և ես ուզում եմ, որ բոլոր ժողովուրդներն ընդհանրապես և հայ ժողովուրդը ու քաղաքականության հետ չկապված աշխատավոր ժողո-

վուրդը, որոնք մարդկային ռասայի իսկական ազնվականական շերտն են կազմում մասնավորապես, իմ գործերը կարդան այնպես, ինչպես ես եմ գրել, չաղավաղված, չփոփոխված, պարզ և շիտակ:

Այո՞, ես շատ մեծ ցանկություն ունեմ կրկին անգամ այցելելու մեր սիրելի հայրենիքը: Եվ ես բարկանում եմ, երբ հիշում եմ, թե ինչպես Վաշինգտոնում մի քանի հայեր և ռուսներ պառտած պատասխանատվություն չցուցաբերեցին իմ հանդեպ, երբ ես իմ իրերը հավաքել և պատրաստվում էի թռչել Երևան և այդպիսով խանգարեցին ինձ իրագործելու իմ ձգտումը՝ Գ. Մահարու²⁶² և Մարտիրոս Մարյանի²⁶³ հետ տեսնվելու համար: Եվ այսպես, այժմ այդ 2 ընկերները մահացան և ես չկարողացա նրանց հանդիպել մի վերջին անգամ:

Զգիտեմ թե Ձեզանից կրկին անգամ նամակ կստանամ՝ թե՞ ոչ, բայց երբ ես նորից այցելեմ Հայաստան, պետք է զգամ, որ Հայաստանում կան պատասխանատու անձինք, որոնք կբավարարեն իմ խնդրանքները և թույլ կտան ինձ հավատալու, որ իմ այցը կլինի թե՛ ուշիմ /խելացի/ և թե՛ հաճելի: Կրկին անգամ շնորհակալություն Ձեզ՝ Ձեր ջերմ բարեմաղթությունների համար:

2. Գ. Խնդրում եմ բարևներս հաղորդել Աղամյանի զարմիկին՝ Գրիգոր Քեշիշյանին և ասել նրան ինձ անգլերեն գրի, թե իմ գործերից ինքը որո՞նք է թարգմանել և այդ թարգմանություններից մի քանի օրինակ ինձ ուղարկի:

Մնամ անկեղծորեն՝

Վիլյամ Մարոյան

Ֆ. 875, ց. 6, գ. 517, թթ. 127-128: Մեքենագիր: Թարգմանություն անգլերենից:

262. Մահարի (Աճեմյան) Գուրգեն Գրիգորի (1903, Վան – 1969, Պալանգա, Լիտվա, թաղված է Երևանում) – Գրող, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1965): Մանկությունն անցկացրել է որբանոցներում: Ուսանել է Երևանի պետական համալսարանի պատմագրության ֆակուլտետում: Բռնադատվել է և 1936-1947 ու 1949-1954թթ. գտնվել է սիբիրյան քարտրավայրերում: Թղթակցել է մի շարք պարբերականների: Ունի արձակ ստեղծագործություններ՝ ինքնակենսագրական բնույթի վեպ, վիպակ, են., բանաստեղծությունների ժողովածուներ:

263. Մարյան Մարտիրոս Մարգարի (1880, Նոր Նախիջևան, Ռուսաստան – 1972, Երևան, թաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում) – Աշխարհառչակ գեղանկարիչ, ՀԽՍՀ (1926) և ԽՍՀՄ Ժողովրդական նկարիչ (1960), ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի (1947) և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1956), սոցիալիստական աշխատանքի հերոս (1965): Մոլորել է ծննդավայրում, իր արվեստը կատարելագործել Մոսկվայում՝ Վ. Սերովի և Կ. Կորովիկի դիմանկարի արվեստանոցում: Մտեղծել է պանեոներ, բնանկարներ, դիմանկարներ, նատյուրմորտներ ևն.: Ունեցել է բազմաթիվ ցուցահանդեսներ, արժանացել բարձր մրցանակների: Նրա գործերը զարդարում են աշխարհի շատ ցուցասրահներ և անհատական հավաքածուներ: Երևանում գործում է Մարտիրոս Մարյանի անվան տուն-թանգարանը:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
 Վ. ԴԱՆԼԱԹՅԱՆԻՆ՝ ՀԲԸՄ 70-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
 ՆՇԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս տարի լրանում է Հայկական բարեգործական ընդհանուր միության 70-ամյակը:

Բարեգործական միությունը սփյուռքում մեծ հեղինակություն վայելող և ամենամասսայական կազմակերպություններից է, որը մասնաճյուղեր ունի աշխարհի բոլոր հայաշատ վայրերում: Միությունը տարեկան մեծ գումարի հասնող հատկացումներ է կատարում սփյուռքի կարիքների համար, պահելով հայկական դպրոցներ, մշակութային տներ, պարախմբեր և այլն: Բարեգործականը միշտ էլ բարեկամական կապերի մեջ է եղել Սովետական Հայաստանի հետ: Սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին Բարեգործականը նյութական միջոցներ էր ուղարկում Հայրենիք, որպեսզի Արևմտյան Հայաստանից տեղահանված հայ ընտանիքների համար բնակարաններ կառուցվեն և հիմնադրվեն առանձին ավաններ: Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո Բարեգործական միությունը գլխավորեց ներգաղթի օգտին հանգանակության արշավը, հավաքեց շուրջ 1,5 միլիոն դոլար և մեծ չափով նպաստեց հայրենադարձության գործին: Տարեցտարի Բարեգործականը ավելի է սերտացնում իր կապերը Մայր Հայրենիքի հետ:

Խնդրում ենք թույլ տալ Կոմիտեի դահլիճում պատշաճ հանդիսությամբ, ինչպես նաև «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում և «Սովետական Հայաստան» ամսագրում նշել Հայկական բարեգործական ընդհանուր միության 70-ամյակը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 23, ք. 14: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ԵՎ Վ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԿԿ
 ԿԵՆՏՐՈՆԻ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ ՎԱՐԻՉ
 Լ. ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻՆ՝ ՖՐԱՆՍԱԿԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՆՅՈՒԹԱԿԱՆ
 ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1975թ. սկսած սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների համար Երիտասարդական կազմակերպությունների կոմիտեն հատկացվող գումարը զգալիորեն կրճատվել է, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն համաձայն է ընդառաջել Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների կոմիտեի խնդրանքին՝ 1975-76թթ. ֆրանսահայ առաջադիմական ԺԱՖ միության զբոսաշրջիկների խմբի ընդունման հետ կապված ծախսերը կատարելու համար (ընդհանուր գումարը կազմում է ինն հազար հիսուն ռուբ. 87 կոպ.):

Սփյուռքահայության հետ մշակութային
 կապի կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Հայաստանի երիտասարդական
 կազմակերպությունների կոմիտեի նախագահ՝

Վ. Ենգիբարյան

Ֆ. 1, ց. 126, գ. 17, ք. 70: Բնագիր: Մեքենագիր:

Վ. ՍԱՐԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻՆ ԻՐԵՆ ԱՌԱՔՎԱԾ ԳՐԹԵՐԻ
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒ ՁԱՅՆԱՊԵՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Շատ շնորհակալություն Ձեր հունիսի 15-ի նամակի համար, որը ինձ հասավ հունիսի 29-ին: Իսկ մեկ ամիս անց Վարազ Սամվելյանը ինձ բերեց «Իմ սիրտը լեռներում է» պիեսի համար Առնո Բաբաջանյանի գրած երաժշտության ձայնագրությունը, ինչպես նաև այդ պիեսի բեմադրության և հեռուստատեսային ֆիլմի լուսանկարները: Վարազ Սամվելյանի մեքենայով գնացինք Էլեկտրոնիկայի խանութ, ուր Ձեր ուղարկած ժապավենը փոխադրեցինք կասետի վրա, որպեսզի հնարավոր լինի դա լսել: Ես լսեցի այդ երաժշտությունը ամենամեծ հաճույքով և հիացմունքով: Իմ խորագրաց հարգանքները և սրտագին մաղթանքները ընկերոջս՝ Առնո Բաբաջանյանին: Երաժշտությունը տևում է 8 րոպե, և ըստ իմ ենթադրության՝ դա պիեսի և հեռուստաֆիլմի ընթացքում: Ես ուշադրությամբ ծանոթացա լուսանկարների հետ և թաքուն սիրահարվում եմ պիեսներիս բեմադրության և էկրանացման վրա:

Նատալի Գոնչարի ռուսերեն լեզվով գրած երկու գրքերը տակավին տեղ չեն հասել:²⁶⁴ Հավանաբար Դուք դրանք ուղարկել եք Սան Ֆրանցիսկոյի հասցեով, և քանի որ ես երկար ժամանակ չեմ եղել Սան Ֆրանցիսկոյի իմ տանը, որն այժմ գրադեցրել է ավագ քույրս՝ Կոստեր, ուստի չգիտեմ, թե այդ գրքերը տեղ հասել են, թե՞ ոչ: Դուք գիտեք, որ ես կարողանում եմ կարդալ միայն անգլերեն և ֆրանսերեն լեզվով: Մակայն իմ գրքերը թարգմանվում են իսպաներեն, իտալերեն, գերմաներեն: Եվ ես ցանկանում եմ ունենալ այդ բոլոր լեզուներով թարգմանված իմ գրքերը: Բնարկե, ստացել եմ Տիկին Գոնչարի ձեռագիր նամակը, որը կարդացի մեծ հաճույքով և ջերմ հետաքրքրությամբ: Ես նրան եմ ուղարկում իմ անկեղծ ողջույնները և շնորհակալությունները՝ իր նամակի և գրածներին համար, անկախ նրանից, թե նրա գրածները իմ վերաբերյալ են, թե՞ ոչ:

Համոզված եմ, որ Դուք գիտեք, որ երկու անգամ այցելելուց հետո /1935թ. մայիսին և 1960թ. հոկտեմբեր/ տարիներ ի վեր ցանկություն եմ ունեցել այցելել Հայաստան: Մի անգամ Փարիզում ես փորձեցի վիզա ստանալ, սակայն հանդիպեցի այնպիսի սոսկալի բյուրոկրատական վերաբերմունքի, որ վրդովված մերժեցի այդ վիզան: Իմ այս քայլը անհրաժեշտ էր և անխուսափելի: Ռուսաստանի դպրոցները, որոնք իրենց ներկայացուցիչներին ուղարկում են աշխարհի 4 ծագերը, պետք է այս մարդկանց սովորեցնեն անկեղծ և պարկեշտ վարք, վարվեցողություն: Բայց, ինչևէ, այս մարդկանց վերաբերմունք սովորեցնելը իմ գործը չէ: Իսկ իմ պատասխանը այդ դեպքում այն էր, որ ես այդ վիզայի կարիքը չեմ զգում: Իմ այս այցելության նպատակն էր մի վերջին անգամ հարգանքներս մատուցել զառամյալ Մարտիրոս Մարյանին և իմ հին ընկերոջը՝ Գուրգեն Մահարուն: Ինչպես Դուք գիտեք, մի ուրիշ անգամ ես հավաքել էի իմ բոլոր իրերը և պատրաստ էի թռչել Հայաստան, սակայն Վաշինգտոնի դեսպանատանը

նույնպես հանդիպեցի նման կոպտության և կասկածելի վերաբերմունքի: Այս անգամ ես ստիպված էի հետաձգել այցելությունս:

Այժմ արդեն սեպտեմբեր ամիսն է և ցանկանում եմ ընդունել Ձեր հրավերը և գալ Երևան: Ուզում եմ Հայաստան այցելել հոկտեմբեր ամսին: Խնդրում եմ ուղարկել բաց վիզա և հայտնել, թե ինչպե՞ս կարող եմ առանց գլխացավանքի իմ վիզան ստանալ Սան Ֆրանցիսկոյում կամ Նյու Յորքում: Այս նամակս ստանալուն պես, միաժամանակ կիսնդրեի անհապաղ ինձ հայտնել հետևյալ երեք բաների մասին.

1. Եթե Երևան գամ հոկտեմբերին, կարո՞ղ եմ դիտել «Իմ սիրտը լեռներում է», «Խաղողի այգին» պիեսների բեմադրությունը, ինչպես նաև հեռուստատեսային ժապավենը:

2. Կարո՞ղ եմ իմ գրքերից և պիեսներից ստացված հոնորարների դիմաց փող ստանալ: Եվ կարո՞ղ եմ օրինական թույլտվություն ստանալ այդ գումարը ծախսելու համար: 1960-ին Մոսկվայում Գենադի Գենոտսկին ինձ տարավ իմ գրքերի հրատարակիչների մոտ, որոնք ինձ իմ գրքերի համար գումար տվեցին: Այդ գումարով ես բանկում հաշիվ բաց արեցի: Եթե Մոսկվայում լինեմ, կարող եմ այդ հաշիվի դիմաց փող ստանալ: Բանկի գրքույկը դժբախտաբար չցիտեմ որտեղ եմ թողել: Բայց գուցե մեկը գտնվի, որը կարողանա գտնել հաշիվի համարը և ինձ տա այդ հաշիվի բալանսը:

3. Եթե գամ Երևան, շատ-շատ կցանկանամ ինձ ապահովել հյուրանոցային մի շատ հանգիստ և մասնավոր համարով:

Կցանկանայի այցելել Մատենադարան, կոնյակի գործարան, հնագույն արհեստների թանգարանը, մի շարք գործարաններ, դպրոցներ, տարբեր տեսակի վայրեր, հատկապես հին եկեղեցիներ և նման շինություններ:

Գոյություն ունի բիրթիսերեն մի հին արտահայտություն՝ կուզես-կուզես, շատ բան կուզես:

Հուսով եմ, որ այս նամակը Ձեզ կհասնի 7-8 օրում, իսկ Ձեր պատասխանը ես կստանամ սեպտեմբերի կեսերին:

Ձեզ և Ձեր ընկերներին եմ ուղարկում իմ լավագույն բարեմաղթությունները:

2. Գ. Սա միայն պայման է. եթե իմ այցելության ժամանակ ինձ ուղեկցի մի լուսանկարիչ, սա արդյոք դժվարություններ չի՞ հարուցի Ձեզ: Գուցե ես իմ այս այցելության մասին գիրք գրեմ: Ես չեի ուզի Չոլաքյանի²⁶⁵ նման լուսանկարիչ, այլ՝ մի նոր լուսանկարիչ, որը իմ ցանկացած նկարները աներ:

Վ. Մարոյան

Ֆ. 875, ց. 6, գ. 517, թթ. 144-146: Մեքենագիր: Թարգմանություն անգլերենից:

264. Խոսքը վերաբերում է Նատալիա Գոնչարի՝ 1976թ. Երևանում լույս տեսած Вильям Сароян и его рассказы մենագրության:

265. Խոսքը վերաբերում է «Մովսեսյան Հայաստան» օրաթերթի երկարամյա ֆոտոթղթակից Պարզն Չոլաքյանին (1902, Ձեյթուն – 1987, Երևան):

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՉ Ռ. ՃԵՊԵՃՅԱՆԻՆ՝
ՓՈԽԱՐԱՐՁ ԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Ճեպեճյան,

Ստացա 24 փետրվար 1977 թվակիր նամակը, որից տեղեկացա, որ ակտիվորեն շարունակում եք գիտական և տեխնիկական կապերը Սովետական Հայաստանի առողջապահական հաստատությունների հետ:

Ուրախալի է, որ Ձեր ազգօգուտ գործունեությունը զնալով ավելի մեծ թափ է ստանում, որի վառ ապացույցն է «Բժշկական հանրագիտարան»-ի՝ ակնաբուժությանը նվիրված հատորների նվիրաբերումը Երևանի Բժիշկների կատարելագործման ինստիտուտի գրադարանին:

Միաժամանակ հաճելի էր տեղեկանալ, որ արդեն համաձայն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի նվիրաբերած գումարի, կազմել եք Երևանի երեք ակնաբուժարանների վիրահատարաններին անհրաժեշտ գործիքների ցանկը:

Հուսով եմ, որ առաջիկայում հնարավորություն կունենամ Ձեզ հետ հանդիպելու Երևանում:

Ձերմ ողջույններս Ձեզ և ակնաբուժարանի բժշկական կազմին:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 6, գ. 572, թ. 69: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՎԱՍԿՈՒՐԱԿԱՆ ԴԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ
ԱՄՆ-Ի ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՓՈԽԱՏԵՆԱՊԵՏ Տ. ԹԵՐԼԵՄԵՉՅԱՆԻՆ՝²⁶⁶ ԵՎ ՔԱՐՏՈՒՐԱՐ՝
Վ. ՏԵՐ-ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ՝ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՇՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի հայրենակիցներ

Ստացել ենք ձեր հունիսի 23-ի նամակը:

Ուրախ ենք տեղեկացնելու, որ այս տարվա հունիսի 17-ին Սիլվա Կապուտիկյանը, հուշարձանի նախագծի հեղինակ, Երևանի գլխավոր ճարտարապետ Ջիմ Թորոսյանը,²⁶⁷ Կարալիս Ջրբաշյանը /Փարիզից/ և ես վերջնականապես ընտրեցինք հուշարձանի²⁶⁸ տեղը: Շուտով կսկսվի շինարարությունը և առաջիկայում մենք կկարողանանք ձեզ ուղարկել կառուցման ընթացքը պատկերող որոշ լուսանկարներ: Այդ նպատակի համար կուտակված գումարի գործադրության մասին առանձին կգրենք:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 8, գ. 80, թ. 27: Պատճեն: Մեքենագիր:

266. Թերլեմեզյան Տաճատ (1888, Վան – 1982, Նյու Ջերզի, ԱՄՆ) – Վրիժառու, հասարակական գործիչ: Շուրջավել է ՀՅԴ՝ Վասպուրականի զինապահեստները թուրքական իշխանությունների մատնած ու նրանց պաշտպանության տակ գտնվող դավաճան Դավոյի՝ Վանում 1908թ. մարտի 10-ին օրը ցերեկով ահաբեկումով, որից հետո ապաստան է գտել ԱՄՆում: Մասնակցել է հայկական կամավորական շարժմանը, ծառայել Իշխանի (Հովսեփ Արղության) հրամանատարած 7-րդ զեղում և Հայաստանի առաջին հանրապետության բանակում: Խորհրդայնացումից հետո կորից անցել է ԱՄՆ, ուր գրավել է հասարակական գործունեությամբ:

267. Թորոսյան Ջիմ Պետրոսի (ծն. 1926, Երևան) – Ճարտարապետ, ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1968), ՌԽՖՍՀ Գեղարվեստի ակադեմիայի (1983), Ճարտարապետության միջազգային ակադեմիայի Մոսկվայի մասնաճյուղի (1992), ՌԴ Ճարտարապետության և շինարարական գիտությունների ակադեմիայի օտարերկրյա անդամ (1994): Ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը և Մոսկվայի Ճարտարապետության ակադեմիան: 1971-1981թթ. եղել է Երևանի գլխավոր ճարտարապետը: Աշխատել է Երևաննայնագիծ ինստիտուտում: Բազմաթիվ կոթողների և քաղաքացիական կառույցների ճարտարապետության հեղինակը կամ համահեղինակն է:

268. Վասպուրականի 1915թ. հերոսամարտի՝ Աշտարակի շրջանում բարձրացված կոթողի պաշտոնական բացումը կատարվեց հերոսամարտի 66-րդ տարեդարձի օրը՝ 1981թ. մայիսի 4-ին: Հանդիսությունը բացեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը: Հանդիսությունը մասնակցում էին Տաճատ Թերլեմեզյանն ու Կարալիս Ջրբաշյանը. տե՛ս «Վասպուրականի արժիվը» հրապարակումը, «Հայրենիքի ձայն», 13 մայիսի 1981թ., էջ 3:

Վ. ՀԱՄԱՉԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԴԲԸՄ «ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՏԵՆԱԴԵՏ Ե. ԱԶՏՅԱՆԻՆ ԴԵՏՐՈՅԹՈՒՄ ՈՒ ԼՈՍ ԱՆՁԵԼԵՍՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՅՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Ազատյան,

Ստացանք հունիսի 16-ի Ձեր նամակը: Տեղեկացանք, որ պրն. Ռիչարդ Թաշ-ճյանի նախաձեռնած ալբոմի տպագրության գործին ձեր վարչությունը օգնել չի կարող: 1975թ. հրատարակված Մինաս Ավետիսյանի²⁶⁹ ալբոմը վաղուց սպառված է, հետևաբար, վաճառքի համար ուղարկել չենք կարող:

Այս տարվա հոկտեմբերին Բարեգործականի և Դետրոյթի եկեղեցու գործակցությամբ կայանալիք հայկական տարազների ցուցադրությանը մաղթում ենք հաջողություններ: Լոս Անջելեսում կազմակերպվելիք Սովետական Միության ցուցահանդեսում թեև Սովետական Հայաստանն ունի հատուկ տաղավար, սակայն հայկական գինիների վաճառք չի լինելու: Բայց ցուցահանդեսի հայկական տաղավարի տնօրենի տրամադրության տակ կլինեն որոշ չափով հայկական գինիներ ու կոնյակներ, որոնք որպես հուշանվերներ, տրվելու են ցուցահանդեսի այցելուներին: Մենք խնդրել ենք տնօրենին, որ հուշանվերների այդ ֆոնդից որոշ բաժին հանի՝ Դետրոյթ ուղարկելու համար: Մինչ այդ, կխնդրեինք մեզ տեղեկացնել, թե Լոս Անջելեսում ո՞ւմ պետք է հանձնվեն այդ խմիչքները /ազգանունը, անունը, հասցեն, հեռախոսի համարը/, որպեսզի նա ուղարկի Դետրոյթ:

Մեզ ուրախացրեց Ձեր հայտնած լուրն այն մասին, որ Ֆրանսիայում հրատարակության է պատրաստվում հայ արվեստին նվիրված աշխատություն՝ պրոֆ. Սիրարիի Տեր-Ներսեսյանի առաջաբանով և բացատրություններով, որի հրատարակության ծախսերի մի մասը հոգում է «Ալեք Մանուկյան» մշակութային հիմնադրամի վարչությունը:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 8, գ. 80, ք. 42: Պատճեն: Մեքենագիր:

269. Ավետիսյան Մինաս Կարապետի (1928, գյուղ Ջաջուռ, Ախուրյանի շրջան – 1975, Երևան) – Գեղանկարիչ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1967): Մոլորել է Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտում, Լենինգրադի Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտում: Մտեղծել է բարձրարվեստ, ինքնատիպ կոմպոզիցիաներ, բնանկարներ, դիմանկարներ, նատյուրմորտներ, որմնանկարներ են: Զբաղվել է նաև բեմանկարչությամբ: Երևանում գործում է Մինաս Ավետիսյանի արվեստանոց-թանգարանը, Ջաջուռում՝ տուն-թանգարանը:

Վ. ՍԱՐԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱՉԱՄՊՅԱՆԻՆ ԵՎ Վ. ԴԱԿԹՅԱՆԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՏԵԼԵԼՈՒ ԻՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Իմ սիրելի Վարդգես և Վահագն Դավթյան,

Անցյալ հոկտեմբերի համար ես շատ երախտապարտ եմ Ձեզ: Եթե նամակ չեմ գրում, դա չի նշանակում, որ Ձեզ չեմ հիշում: Իմ այցելության ժամանակ ցուցաբերած Ձեր բարեհոգությունը հիշում եմ անսահման ուրախությամբ: Հիրավի, դա ամենալավ այցն էր՝ որ ես երբևէ ունեցել եմ իմ կյանքում և դուք պետք է շնորհակալություն հայտնեք Ձորի Բալայանին²⁷⁰ այդ լավ մարդուն, որն ինձ ապահով հասցրեց Օդեսա, նավ նստեցրեց, և որը հրաժարվեց վերցնել մրգերով և այլ ապրանքներով լի զամբյուղը: Այդ զամբյուղը, որը կախված է իմ աշխատանքների պատից, ինձ հիշեցնում է Ձորիին և նրա տուն կատարած իմ այցելությունը, որի ժամանակ ես վայելեցի նրա սիրալիք կնոջ պատրաստած համեղ կերակուրները և տեսա նրա փոքրիկ երեխաներին: Ես կցանկանայի, որպեսզի Ձորին գրեք սովետական էսկիմոսների հետ անցկացրած իր ժամանակի մասին, քանի որ նրանց մասին Ձորիի գրած պատմվածքներն անմոռանալի են:

Այժմ ցանկանում եմ խոսել մի շարք կարևոր հարցերի մասին.

1. Այո, ես ուզում եմ այցելել Հայաստան հաջորդ տարի, ոչ թե իմ 70-ամյակը նշելու, այլ՝ նորից վայելելու մեր փառահեղ երկիրը, մեր ազգին և ժողովրդին: Բայց կցանկանայի, որ դուք ինձ Գեղարդում մի տուն հատկացնեք, ոչ թե այնպիսի տուն, ինչպիսին է Գրիգոր Գուրգադյանի²⁷¹ առանձնատունը՝ իր վարդի պարտեզով, բայց մի փոքրիկ տուն, որտեղ ես կարող եմ վայելել հանգստություն և զբոսանքի գնալ Հայաստան այդ հեքիաթային և չոր վայրում: Ուզում եմ խորապես զգալ Հայաստանի աշունը իմ մեջ, և կենսախիղճ ու առողջ մարդկանց հետ զրուցել, ծիծաղել, ուրախանալ, խնդալ և գոռալ նրանց հետ:

2. Ուզում եմ որ Դուք ուղարկեք երկրորդ գորգը, այն փոքր գորգը, որը սլացող սպիտակ եղնիկ էր պատկերում: Մյուս մեծ գորգը գեղեցիկ է, բայց ուզում եմ որ դուք ուղարկեք փոքր գորգը:

3. Կցանկանայի, որ այդտեղ մեկը մտածեք հրավեր ուղարկելու իմ զարմիկ Խաչիկ /Արչի/ Մինասյանին և նրա տիկնոջը՝ Հելենին, որպեսզի նրանք առանց ծախսի այս տարվա հոկտեմբերին գան Հայաստան: Նրանք Փարիզ են գալու սեպտեմբերի կեսերին, և եթե դուք նրանց նամակ գրելու կամ հեռագրելու լի-

270. Բալայան Ձորի Հայկի (ծն. 1935, Ստեփանակերտ) – Գրող, հրապարակագիր, ճանապարհորդ, հասարակական գործիչ: ԽՍՀՄ սպորտի վարպետ (1967): Ավարտել է Ռյազանի բժշկական ինստիտուտը: Աշխատել է Կամչատկայում որպես բժիշկ: Աշխատակցել է մի շարք պարբերականների: Ունի պատմվածքների շարք, վիպակներ, ուղեգրություններ են:

271. Գուրգադյան Գրիգոր Արամի (ծն. 1922, Բաղդադ) – Աստղաֆիզիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1986): Մշակել է «Օրիոն» և «Օրիոն – 2» տիեզերական համակարգերը: Հրատարակված ունի մի քանի գիտական և գիտահանրամատչելի երկեր:

ներ, պետք է այդ աներ Փարիզի իմ հասցեով: Նրանք Երևան կժամանեն Փարիզից՝ Մոսկվայի վրայով: Նրանք ունեն իրենց վերադարձի տոմսակը Փարիզից մինչև Պալո Ալտո, որը գտնվում է Սան Ֆրանցիսկոյի մոտ և որտեղ բնակվում են նրանք: Վ. Դավթյանը ծանոթ է Խաչիկի բանաստեղծություններին: Կարծում եմ, որ Խաչիկը այն անձն է, որը պետք է Հայաստան այցելի, տեսնի Հայաստանը, քանի որ նա մշտի է, ծնված Ֆրեզնոյում և սիրում է Հայաստանը ամբողջ հոգով: Հուսով եմ որ Դուք այս գործը զույն կբերեք:

4. Կխնդրեի, որ այս նամակն ստանալուն պես ինձ հեռագրով տեղյակ պահեիք դրա ստացման մասին: Կխնդրեի նաև ուղարկել ինձ «Հայրենիքի ծայն» և «Գրական թերթ» շաբաթաթերթերի վերջին 12 համարները: Ենթադրում եմ, որ նրանք ուղարկվում են Ֆրեզնոյի իմ հասցեով, սակայն կխնդրեի, որ դուք ձեզ մոտ կատարեիք իմ հասցեի փոփոխությունը... Երևի դուք Ֆրեզնո եք ուղարկում ա՞յն մեծ ամսագիրը, որի առաջին էջում մի ժամանակ երևաց իմ գունավոր պատկերը: Կխնդրեի, որ իմ հասցեին ուղարկվող բոլոր ամսագրերը առաքվեն նոր հասցեով: Կցանկանայի, որ դուք ստույգ գրեիք, թե ի՞նչ եք ուղարկում իմ հասցեին:

5. Զեր ուշադրությունն եմ հրավիրում Բուլղարիայի «Օբզոր» եռամսյա ամսագրի վրա:

Բացարձակապես շատ հոյակապ ամսագիր է: Հրատարակվում է չորս լեզուներով՝ անգլերենով, իսպաներենով, ֆրանսերենով և ռուսերենով: Շատ շքեղ հանդես է, գուցե մենք էլ կարողանանք այդպիսի մի եռամսյա հրատարակել:

Ես շատ հիասթափված էի որ Վ. Դավթյանը Սոֆիայում չէր. համոզված էի որ նա այնտեղ կլինեք: Նույնը նաև Ռազմիկ Դավթյանի,²⁷² Լևոն Մկրտչյանի²⁷³ և Հրանտ Մաթևոսյանի²⁷⁴ վերաբերյալ: Ինչ որ տանտերերը պահանջեցին ինձանից՝ ես սիրով և ուրախությամբ կատախեցի: Կարծում եմ, որ այդ հանդիպումը աշխարհի բոլոր գրողներին պարտավորեցրեց կատարել իրենց պարտականությունը պատմության և կործանումից անխուսափելի մարդկության առջև,

272. Դավթյան Ռազմիկ Նիկողոսի (ծն. 1940, գյուղ Մեծ Պարեի, Սպիտակի շրջան) – Բանաստեղծ: Ավարտել է Երևանի խաչատուր Մբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: Եղել է Հայաստանի գրողների միության նախագահ: Ունի բանաստեղծությունների շարքեր, պոեմ, կինովիպակներ, ուղեգրություններ:

273. Մկրտչյան Լևոն Մկրտչի (1933, Ախալցխա – 2001, Երևան) – Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996), ՀնՄՀ գիտության վաստակավոր գործիչ (1981): 1980-1998թթ. եղել է ԵՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի ղեկավար, 1998-ից մինչև մահը՝ Հայ-ռուսական (սլավոնական) պետական համալսարանի ռեկտոր: Բացի գիտական աշխատություններից, ունի հայերենից ռուսերեն բազմաթիվ թարգմանություններ, հուշագրությունների հատորներ, կազմել է անթոլոգիաներ:

274. Մաթևոսյան Հրանտ Իգնատի (1935, գյուղ Անիծոր, Լոռու մարզ – 2002, Երևան, թաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում) – Գրող: Ավարտել է Երևանի խաչատուր Մբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը: Եղել է Հայաստանի գրողների միության նախագահ: Ունի բազմաթիվ վեպեր, վիպակներ, պատմվածքներ: Երկերը թարգմանվել են աշխարհի շատ լեզուներով: Նրա գրվածքների հիման վրա ստեղծվել են բեմադրություններ ու կինոնկարներ:

այն է՝ նոր պատերազմ չսանձագերծել: Հարկավ մենք մեզ չպետք է սպանենք մեր իսկ ստեղծած զենքերով: Մենք այդպիսի զենքեր միշտ էլ ունեցել ենք, ծանր քարը միշտ էլ զենք է եղել:

Հուսով եմ, որ այս նամակովս Ձեզ շատ չեմ ծանրաբեռնում և անհանգստացնում: Ուզում եմ ասել, որ այդ նամակին ես պատասխանում եմ ամենայն ճշգրտությամբ, ես Ֆրեզնոյի հասցեիս ուղարկած ձեր նամակը ստացա ուղիղ մի ժամ առաջ և անմիջապես պատասխանում եմ այդ նամակին: Հուսով եմ, որ նման վերաբերմունք կցուցաբերեք նաև դուք նամակս ստանալուն պես:

Ես գրեթե ավարտել եմ իմ նոր գործը Փարիզում, ուր գտնվում էի հունիսի 18-ից: Հավանաբար թոչնձ Լոնդոն, այնտեղից Իսլանդիա՝ համալսարանում ելույթ ունենալու համար, և հետո Նյու Յորք, իսկ այնտեղից էլ Կալիֆորնիա, ուր կլինեմ հոկտեմբերի սկզբներին: Ուստի եթե դուք ինձ գրելու լինեք, խնդրում եմ այդ նամակի կրկնօրինակը ուղարկեք Ֆրեզնոյի իմ հասցեով, բայց հուսով եմ որ մինչև Փարիզից մեկնելս ձեզանից պատասխան կստանամ:

Հուսով եմ, որ ձեր առողջությունը տեղին է: Հիշում եմ այն փառահեղ ճաշը, որ դուք տվեցիք ինձ ձեր տանը. առաջին անգամն էր, որ ես այդպիսի արտակարգ ճաշատեսակ ճաշակեցի, այդ փառահեղ քյուֆթան: Իսկապես կցանկանայի իմանալ՝ ո՞վ է պատրաստում այդ ճաշատեսակը /ըստ հայկական ավանդույթի/: Ֆրեզնոյում ես չգիտեմ մեկին, որը կարողանա պատրաստել այդպիսի ճաշատեսակ և կամ էլ որը իր կյանքում երբևէ կերած լինի դա:

Խորապես վշտացա իմանալով իմ եղբոր՝ թատրոնի մեծ հանճար Վարդան Աճեմյանի մահվան մասին:²⁷⁵ Ցավում եմ, որ նախորդ անգամ Հայաստան այցելելիս երբ նրան առաջարկեցի հանգստանալ նա ասաց. «Ոչ, ո՛չ, առաջմ ո՛չ»: Շատ պարզ փաստ է այն, որ նույնիսկ ամենափոքր մարդը հանգստանում է իր սիրած աշխատանքը կատարելիս: Մենք շատ բան գիտենք մարմնի և հոգու առեղծվածների մասին: Ձորին գիտի էսկիմոսների մասին: Նա ասում է, որ երբ նրանք զգում են իրենց մոտալուտ մահը, լքում են այն շրջապատը ուր բնակվում են...

Վահագն, խնդրում եմ իմ բարևները հաղորդել քո կնոջը և նրան ասել, որ հիշում եմ կարմիր կանաչ պղպեղով և ձվով պատրաստված կերակուրը, որը սեղան էկավ այնպես, ինչպես լույսն է գալիս գեղեցիկ և փոքրիկ արևից: Խնդրում եմ շնորհակալություն հայտնել Ադասուն՝ իր հոյակապ ընկերակցության համար: Նա մեզ անընդհատ դես ու դեն էր տանում:

Վարդգես, նորից շնորհակալություն քո նամակի համար: Այստեղ՝ Փարիզում իմ այս նամակի պատասխանին եմ սպասում: Գիտեմ թե որքան հմուտ մարդ եք դուք, քանի որ դուք ինձ Օդեսա-Աթենք նավի տոմսը ձեռք բերեցիք ամենայն արագությամբ:

Օդեսայում, աշխարհի այդ լավ քաղաքում, հիանալի ժամանակ անցկացրեցի, այնտեղից նավով մտա Դարդանել և Էգեյան ծով: Դա փառահեղ ճամբորդություն էր:

Դուք ինձ նորից նամակ կգրե՞ք, թե՞ սրան կհետևի լռության երկար շղթան:

Իմ լավագույն բարեմաղթությունը ձեզ և ձեր ընտանիքին, իմ ընկերներին,

275. Վ. Աճեմյանի մահացել էր 1977թ. հունվարի 24-ին, Երևանում:

եթե թշնամիներ ունեւ՝ նաև նրանց, քանզի մենք բոլորս հայ ենք և թող նրանք
էլ ստանան իմ լավագույն բարեմաղթությունները: Պետք է շնորհակալ լինել
մեր թշնամիներից, քանի որ նրանք մեզ չեն թողնում հանգստանալ, իսկ երբ
ակտիվ եք՝ կռվելով Ձեր թշնամիների հետ, նրանց ուղարկելով ձեր ողջությունե-
րը՝ դուք երբեք մահանալ չեք կարող:

Վիլյամ Սաթոյան

Ֆ. 875, ց. 8, գ. 84, թթ. 24-28: Մեքենագիր: Թարգմանություն անգլերենից:

№ 144

12 հոկտեմբերի 1977թ., Երևան

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՍԱՐԴՅԱՆԻՆ՝ ՎԵՐԶԻՆԻՍ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեծահարգ բարեկամ,

Մեծ սիրով կարդացինք Ձեր օգոստոսի 19-ի նամակը և իսկույն հեռագրե-
ցինք Ձեզ: Իսկ այսօր անհրաժեշտաբար անդրադառնում ենք նամակում ար-
ժարծված խնդիրներին: Ամենից առաջ մեզ մեծ գոհունակություն պատճառեց
այն, որ Դուք հաստատ վճռել եք գալիք տարի այցի գալ Հայրենիք: Մենք ամեն
ինչ կանենք, որպեսզի Դուք հաճելի ժամանակ անցկացնեք և ունենաք բարձր
տրամադրություն: Մենք կցանկանայինք, որպեսզի Հայրենիքում Դուք հանգս-
տանայիք Դիլիջանի Կոմպոզիտորների տանը: Հայաստանի այդ հեքիաթային
և խաղաղ վայրում Դուք կարող եք հանգստանալ Ձեր ուզած ձևով, Ձեր ցանկա-
ցած շրջանում: Կարող եք և՛ հանգստանալ, և՛ ստեղծագործել: Ինչ վերաբերվում
է գորգին, մենք արդեն Ձեզ գրել էինք, որ Ձեր հավանած գորգը թերություն ու-
նեք: Խոստանում ենք մինչև Ձեր գալը ձեռք բերել Ձեր ուզած գորգից: Այնպես,
որ, սիրելի բարեկամ, Հայրենիքում Դուք անպայման կստանաք այդ գորգը: Ցա-
վում ենք, որ այս տարի Ձեր զարմիկին՝ Արչի Մինասյանին և իր տիկնոջը Հա-
յաստան հրավիրել չենք կարող: Կաշխատենք այդ այցելությունն իրականացնել
1978-ին:

Հաճույքով տեղեկացանք, որ դուք ավարտել եք Ձեր վերջին թատերական
գործը: Ուրախ կլինեինք, եթե ունենայինք Ձեր այդ պիեսի պատճենահանված
օրինակը:

Ձեր 2729 West Griffith Way հասցեով մենք արդեն ուղարկել ենք «Հայրենիքի
ձայն» շաբաթաթերթի հուլիս-օգոստոս-սեպտեմբեր ամիսների համարները:
Առաջիկայում մեր պարբերականները և գրականությունը նույնպես կուղար-
կենք Ձեր այդ հասցեով:

Ձեզ քաջառողջություն և բարձր տրամադրություն մաղթելով, մնամ Ձեր բա-
րեկամ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 8, գ. 84, թթ. 20-21: Մեքենագիր: Թարգմանություն անգլերենից:

Վ. ՀԱՄԱՉԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՊՐՈՖԵՍՈՐ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ²⁷⁶ ԵՐԵՎԱՆՈՒՄ
ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԿԵՍՏԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՄՊՈԶԻՈՒՄԻՆ
ՆՐԱՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Հովհաննիսյան,

Այս տարվա սեպտեմբերի 10-ին Երևանում իր աշխատանքներն է սկսելու հայկական արվեստին /ճարտարապետություն, մանրանկարչություն, երաժշտություն, զարդաքանդակ և այլն/ նվիրված համաշխարհային սիմպոզիումը:

Մենք կցանկանայինք, որ Դուք ներկա լինեիք այդ կարևոր գիտաժողովին: Ձեզ 10 օրով հրավիրում ենք Երևան: Այստեղ կատարվող ծախսերը /հյուրանոց, սնունդ/, ինչպես նաև վերադարձի տոմսակը մեր հաշվին են: Եթե Ձեր ժամանակը ներում է և ընդունում եք մեր հրավերը, կխնդրեինք նախապես տեղեկացնել Ձեր համաձայնության մասին՝ վիզայի համար անհրաժեշտ կարգադրություններ անելու նպատակով:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 8, գ. 75, ք. 46: Պատճեն: Մեքենագիր:

276. Հովհաննիսյան Ռիչարդ (Տիգրանի) Գասպարի (ծն. 1932, Թուլերի, ԱՄՆ) – Ամերիկահայ պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (1990), Կալիֆորնիայի համալսարանի (Լոս Անջելես) հայագիտության ամբիոնի վարիչ: Ունի հայագիտության, մասնավորաբար Հայաստանի առաջին հանրապետության պատմության վերաբերյալ գիտական աշխատություններ:

Վ. ՀԱՄԱՉԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՄՆ ԵՎ
ԿԱՆԱԴԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ Ա. ՓՈԼԱՂՅԱՆԻՆ²⁷⁷
Վ. ԹԵՔԵՅԱՆԻ ԾՆԱՂՅԱՆ 100-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Փոլադյան,

Հաճույքն ունեցանք ծանոթանալու Ձեր փետրվար 23 թվակիր նամակի հետ և տեղեկանալու այն բազմաթուփանդակ աշխատանքների մասին, որոնց Միության Կենտրոնական վարչությունը ձեռնամուխ է եղել արժանավայել կերպով նշելու Վահան Թեքեյանի ծննդյան 100-ամյակը: Վստահ ենք, որ այս հոբելյանը բանաստեղծի անունը հավերժացնող միության համար կհանդիսանա նոր իրագործումների մեկնակետ՝ ազգաշեն-հայրենասովեր առաքելության ճանապարհին:

Ողջունում ենք այս առթիվ Ձեր միության հղացած ծրագիրը՝ բանաստեղծի 100-ամյակի առթիվ դեպի Մայր Հայրենիք 100-հոգիանոց զբոսաշրջիկների խմբի այցելություն-ուխտագնացություն կազմակերպելու ուղղությամբ: 6 օրվա փոխարեն Երևանում 9 օր մնալու հարցին կանդիդատանք առանձին, երբ ընդհանուր կարգով լուծվեն տուրիստական այցելություններին վերաբերող հարցերը:

Հայրենիքը ևս պատրաստվում է պատշաճ ձևով նշելու Վ. Թեքեյանի հոբելյանը: Այս առթիվ ստեղծվել է հանրապետական հոբելյանական հանձնաժողով: Նախապես այն կարծիքն էր հայտնված, որ հանդիսությունն անցկացվեր մայիս ամսին, բայց վերջնականապես չլճովեց այդ հարցը: Գուցե հնարավոր լինի նշել աշնանը: Բոլոր դեպքերում, այդ թվականը որոշելիս Կենտրոնական վարչության խնդրանքը կաշխատենք նկատի ունենալ: Առաջիկայում ավելի որոշակի կգրենք:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 8, գ. 75, ք. 95: Պատճեն: Մեքենագիր:

277. Փոլադյան Անդրանիկ (1929, Կըրեկխան, Ալեքսանդրեոսի շրջան – 2005, Նյու Ջերսի, ԱՄՆ) – Գրող, խմբագիր, հասարակական գործիչ: Ավարտել է Հայկաի Մեսրոպյան և Նիկոսիայի Մելգոնյան վարժարանները, Բեյրութի Ամերիկյան համալսարանի Պատմության և քաղաքական գիտությունների ֆակուլտետը: 1954-ին հաստատվել է ԱՄՆ-ում, ուր տարբեր տարիներ խմբագրել է բազմաթիվ պարբերականներ («Պայքար», «Նոր օր», «Յուշարձան-Միություն», «Գերմանիկ»): 1971-1979-ին եղել է Թեքեյան մշակութային միության ԱՄՆ և Կանադայի Կենտրոնական վարչության ատենապետը, 1983-1995-ին՝ Մարաշի հայրենակցական միության Կենտրոնական վարչության ատենապետը: Մի քանի գրքերի հեղինակ է, բազմաթիվ գրքերի խմբագիր:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ
Ա. ՍԱՆՃՅԱՆ՝²⁷⁸ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻՆ ԻՐԵՆ ՀԱՅ
ԱՐՎԵՍՏՆԵՐԻՆ ԵՎԻՐՎԱԾ ՍԻՄՊՈԶԻՈՒՄԻՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Յարգելի պրն. Համագասպեան,

Մեծ հաճոյքով ստացած եմ Ձեր 15 մարտի նամակը, որով կը հրաւիրէք զիս
յառաջիկայ սեպտեմբերին Երեւանի մէջ գումարուելիք հայկական արուեստ-
ներուն նուիրուած սիմպոզիումին: Շատ շնորհակալ եմ այս հրաւերին համար,
եւ ինչպէս նախապէս, 18 մարտի նամակով, հաղորդած էի Ձեզի, հաճոյքով
կ'ընդունիմ զայն: Տարակոյս չունիմ, թէ այս սիմպոզիումը խիստ կարեւոր ան-
կիւնադարձ մը պիտի ըլլայ հայկական գանազան արուեստներու առաւել ճա-
նաչման եւ գնահատման՝ համաշխարհային տարողութեամբ:

Վերստին յայտնելով խորագգաց շնորհակալութիւնս Ձեր ազնիւ հրաւերին
համար,

Յարգանքներով՝

Աւետիս Գ. Սանճեան
Տնօրէն Հայագիտական ամբիոնի

Ֆ. 875, ց. 8, գ. 95, թ. 103: Բնագիր: Մեքենագիր:

278. Սանճեան Ավետիս Գրիգորի (1921, Մարաշ – 1995, Լոս Անջելես) – Ամերիկահայ պատ-
մաբանասէր, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր: Ավարտել է Բեյրութի Ամերիկյան և
ԱՄՆ Միչիգանի համալսարանները: 1965-ից գասախոսել է Կալիֆոռնիայի համալսարանում,
1969-ից մինչև մահը՝ նույնի հայագիտության ամբիոնի վարիչ: Հրատարակված ունի բազմաթիվ
բանասիրական և պատմագիտական աշխատություններ:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՍԱՐՈՅԱՆԻՆ ՎԵՐՋԻՆԻՍ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԳՐՔԵՐ ԱՌԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի բարեկամ,

Մեկ ամիս առաջ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի ընթերցողները հաճույքն
ունեցան թերթի էջերում ծանոթանալու Ձեր «Պատահական հանդիպումներ»
գրքից թարգմանած մի պատմվածքի հետ: Իսկ օրերս ընթերցողների սեղանին
դրվեց Լևոն Մկրտչյանի «Սարոյանը մոտիկից» խորագիրը կրող գիրքը: Թե՛
պատմվածքը և թե՛ Լևոն Մկրտչյանի գիրքը հաճելի նվեր էին Ձեր երևանյան
բազմահազար երկրպագուների համար, որոնք Ձեր մասին գրված գրքի էջերից
հնարավորություն ունեցան ավելի մոտիկից ճանաչելու Ձեզ, զրուցելու Ձեզ
հետ, հիանալու Ձեզանով:

Այսօր, մեր այս նամակի հետ Ձեր Ֆրեզնոյի հասցեով փոստին ենք ուղարկում
մի քանի օրինակ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթից: Լևոն Մկրտչյանի գիրքը
կուղարկենք ապագայում:

Սիրելի բարեկամ, նախկինում 2 նամակ ենք գրել Ձեզ /1978թ. հոկտեմբեր
12, թիվ 988 և 1977թ. մարտ 31, թիվ 323/, խնդրելով մեզ տեղեկացնել Հայաստան
ժամանելու Ձեր ամսաթվի մասին: Մենք այս նամակների պատճեններն ուղար-
կել ենք նաև Փարիզի հասցեով: Սակայն մինչև օրս Ձեզանից ոչ մի պատաս-
խան չենք ստացել: Կխնդրեիք այս նամակը ստանալուն պես մեզ հայտնել Ձեր
մտադրության մասին՝ ժամանակին կարգավորելու Հայաստան ժամանելու
հետ կապված հարցերը: Ձեր շուտափույթ պատասխանը մեծապես գնահատե-
լի կլինի մեր կողմից:

Ձեզ առողջություն մաղթելով և այս տարի անձամբ Ձեզ Հայրենիքում տեսնե-
լու լիաժողովս ակնկալությամբ մնամ ջերմ սիրով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համագասպյան

Ֆ. 875, ց. 8, գ. 95, թ. 72: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Է. ՎԱՐԱՆԴՅԱՆԻՆ՝ ՆՐԱ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մեծահարգ պրոֆեսոր,

Ուրախությամբ ստացել ենք Ձեր հունվար 1 թվակիր նամակը, ինչպես նաև ներփակ ուղարկված Ձեր կենսագրական տեղեկությունները: Հաճելի է գիտենալ, որ ժամանակին ստացել եք մեր առաքած գրքերը, որոնք մեծ բավականություն են պատճառել Ձեզ:

Մենք մեծ գոհունակությամբ տեղեկացանք, որ Դուք ներկայումս ուսումնասիրում եք հայ ժողովրդի ազգային սովորությունները՝ դրանք թարգմանելու և անգլախոս ընթերցողներին ներկայացնելու նպատակով: Մեր ժողովրդի դարերից եկող ազգային սովորություններն ու ծեսերը օտարազգիներին ծանոթացնելու Ձեր այդ մտահղացումը ողջունելի է և արժանի խրախուսանքի:

Մաղթում ենք, որպեսզի Ձեր ձեռնարկը պսակվի հաջողությամբ:

Մենք մեր պարտքն ենք համարում հնարավորության սահմաններում մեր օգնությունը ցուցաբերել այդ ձեռնարկի նկատմամբ: Առաջիկայում Ձեր հասցեով կուղարկենք ազգագրական բնույթի գրքեր և ուսումնասիրություններ, որոնք, վստահ ենք, մեծապես կօգտաբերեն Ձեզ: Մենք այդ Ձեզ ենք ուղարկում առանց որևէ վարձատրության: Թող Ձեր ձեռնարկի հաջող իրականացումը լինի լավագույն վարձատրությունը:

Հարգանքներով և հաջողության լավագույն մաղթանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 8, գ. 108, ք. 40: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԱՐՎԱԾ ԼՎԻՐԱՍՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Մեծարգո պրն. Ա. Մանուկյան,

Վերջերս ստացանք պրն. Մ. Հայկենցի²⁷⁹ նամակը, որով հայտնում է մեզ, որ Հայաստանին արված կտակների 1978 թվականի եկամուտներից 25.000 դոլար հատկացրել եք բեյրութահայ վարժարաններին, որի համար ընդունեք մեր խորին շնորհակալությունը:

Ես Ձեզ պետք է ուրախացնեմ, որ վերջերս՝ փետրվար ամսին, Հայրենիքը նորից մեծ օգնություն կազմակերպեց, որը իր չափերով ու ծավալով գերազանցում է մինչ այդ եղած բոլոր տեսակի օգնություններին՝ միասին վերցրած: Գաղութին ուղարկվեցին մեծաքանակ սննդամթերք, հագուստեղեն, կոշիկեղեն, դեղորայք, անկողնային պարագաներ, մահճակալներ, դպրոցական զանազան բնույթի լաբորատոր սարքավորումներ, սպորտային ապրանքներ, մեծաքանակ երաժշտական գործիքներ և դաշնամուրներ, գրենական պիտույքներ և այլն: Ամենակարևորը՝ հարյուրավոր տոնաներով ապրանքներ մենք հնարավորություն ունեցանք արագությամբ բեռնատար օդանավերի միջոցով տեղափոխել և այդ գործի համար մեր կառավարությունը ոչ մի միջոց չխնայեց: Մեր կառավարության հատուկ ցուցումով ու նրա անմիջական օգնությամբ հանգստի ու բուժման կարոտ զգացող բազմաթիվ լիբանանահայերի հնարավորություն տրվեց հանգստանալու և բուժվելու հայրենի առողջարաններում, հանգստյան տներում ու հիվանդանոցներում: Իսկ այս տարվա ամռանը լրացուցիչ 120 տեղ հատկացվեց լիբանանահայ պիոներ-դպրոցականներին՝ հայրենի պիոներական ճամբարներում իրենց ամառային արձակուրդն անցկացնելու համար: Հատուկ որոշում ընդունվեց նաև լիբանանահայ գաղութին օգնություն ցույց տալու վերաբերյալ: Այդ միջոցներից մեկն էլ համարվեց հայրենի կտակների գումարը:²⁸⁰

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 8, գ. 108, ք. 49: Պատճեն: Մեքենագիր:

279. Հայկենց (իսկական ազգանունը՝ Քյուփեյան) Միսաք (ծն. 1937, Ալեքսանդրիա) - Գրող, խմբագիր, հասարակական գործիչ: ՀԲԸՄ Կեդրոնական վարչական ժողովի վարիչ-քարտուղարն էր փաստաթղթի հեղինակման ժամանակաշրջանին:

280. Հայաստանի Ազգային արխիվի Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ֆոնդում (թիվ 875 ֆոնդ) պահվող այս փաստաթուղթը այսպես անավարտ է:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՍԱՐՈՅԱՆԻՆ ՎԵՐԶԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ
ՆԱԳԱԴԵՏ ՔՈՒԶԱԿԻ ԳՐԱԾՔՆԵՐԸ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
ՄԵԾ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Հարգելի բարեկամ,
Շուրջ 4 ամիս է անցել այն օրից, ինչ մենք բաժանվեցինք, սակայն մինչև օրս Ձեզանից որևէ լուր չունենք:

Մեզ զարմացնում է այն, որ Դուք հաճախ լրության եք մատնում կամ անպատասխան թողնում մեր կողմից ուղարկված նամակները, որ մենք, ժամանակին, թեև ոչ հաճախ, ուղարկում ենք Ձեզ: Մենք հասկանում ենք, որ Դուք բազմազբաղ եք և հնարավորություն չունեք պատասխանելու բոլոր նամակներին, սակայն Կոմիտեն այն հաստատությունն է, որի միջոցով մեր ժողովրդին կարող եք հասցնել Ձեր ցանկություններն ու մտորումները:

Մենք մեծ խորհուրդ ենք տեսնում այն բանում, որ Դուք՝ մեր ժողովրդի ծոցից դուրս եկած ու համաշխարհային ճանաչումի արժանացած հայագրի զավակդ, աշխարհին եք ներկայացնում հայ միջնադարյան գրականության ականավոր դեմքերից մեկին՝ Նահապետ Քուչակին: Շնորհավորում ենք և հաջողություններ մաղթում:

Մեր այս նամակի հետ այսօր Ձեր Ֆրեզնոյի հասցեով փոստին ենք հանձնում մի քանի օրինակ «Թրեյսիի վագրը» գրքից: Ստանալուն պես կխնդրենք մեզ տեղյակ պահել: Միաժամանակ հաճելի կլիներ իմանալ ինչպիսի՞ տպավորություններով եք վերադարձել Մայր Հայրենիքից, ինչպե՞ս հասաք Ալեքսանդրիա, ինչպե՞ս գտաք Ձեր բարեկամներին ու ընկերներին՝ երկարատև բաժանումից հետո:

Ձերմ ողջույններով և հաջողության լավագույն մաղթանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 8, գ. 55: Պատճեն: Սեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԽԱՉՔԱՐԻ
ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մեծարգո պրն. Ա. Մանուկյան,

Դեռևս անցած տարվա աշնանից մեզ մտահոգել էր Ձեր այն խնդրանքը, որ Դուք բարձրացրել էիք մեր պատվիրականության առաջ՝ խաչքարի հարցով:

Ես պետք է ասեմ, որ մեր ընկերներին բավականին դժվար կացության առաջ էիք կանգնեցրել, որովհետև խաչքարը համարվելով ազգային հարստություն, արգելված է հայրենի և ընդհանրապես Սովետական Միության սահմաններից նրա դուրս բերումը: Սակայն ուրախությամբ Ձեզ պետք է հայտնեմ, որ ընկերների ջանքերով իրականացվում է Ձեզ տրված խոստումը:

Հայտնի Միևնախորհրդի սովետի նախագահի առաջին տեղակալ Ալեքսան Կիրակոսյանը,²⁸¹ որը ճանաչված է որպես լավագույն պետական ու հասարակական գործիչ, օրերս հայտնեց, որ կառավարությունը արդեն որոշում ընդունեց Ձեր հասցեին խաչքար ուղարկելու մասին:

Ես հուսով եմ, որ այն անվթար տեղ կհասնի և կտեղավորվի Ձեր թանգարանի ամենաներկայանալի ցուցասրահում:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 8, գ. 108, թ. 73: Պատճեն: Սեքենագիր:

281. Կիրակոսյան Ալեքսան Մաթևոսի (1918, գյուղ Այգաբազ, Ախուրյանի շրջան – 2007, Երևան) – ՀԽՍՀ պետական և ՀԿԿ գործիչ: Եղել է շրջխորհրդի գործկոմի նախագահ, շրջկոմների քարտուղար, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ: Հեղինակ է «Մայրամուտի շեմին» հուշագրական հատորի (Երևան, 2002):

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՒՄ ԼԻԲԱՆԱՆԱԳԱՅ «ԿԱՆԶ»
ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻՆ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԱԳԱՅ ԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԿԿ Կենտրոնական կոմիտեին

Ս.թ. հուլիսի 21-ին Երևան կժամանի լիբանանահայ «Կանչ» շաբաթաթերթի տուրիստական խումբը, իսկ սեպտեմբերի 8-ին՝ առաջադիմական շրջանակի «Գրական շրջանակ» կազմակերպության²⁸² խումբը: Երկու խմբերն էլ կազմված են 50-ական հոգուց և կժամանեն մեկ շաբաթվա տուրիստական ուղեգրերով:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը՝ նրանց լրացուցիչ մեկ շաբաթվա հյուրանոցային, սննդի և շրջապատույտի ծախսերի վերաբերյալ:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 1, ց. 126, գ. 20, թ. 38: Բնագիր: Մեքենագիր²⁸³:

282. Շաբաթաթերթն այսպես է փաստաթղթում:

283. Հայաստանի Ազգային արխիվում կան այս, նախորդ և հաջորդ տարիների համար՝ Լիբանանահայ գրական շրջանակին ու «Կանչ» շաբաթաթերթին նյութական օգնություն տրամադրելու վերաբերյալ ՀԿԿ Կենտկոմի Բյուրոյի՝ «հույժ գաղտնի» և «հատուկ թղթապանակ» նշումները (Ֆ. 1, ց. 126, գ. 15, թթ. 53-55, 59, 60; Ֆ. 1, ց. 16, գ. 20, թ. 37; Ֆ. 1, ց. 126, գ. 21, թ. 38; Ֆ. 1, ց. 126, գ. 22, թ. 69; Ֆ. 1, ց. 126, գ. 23, թ. 40; Ֆ. 1, ց. 126, գ. 24, թ. 83 նն.): Այդ որոշումները կայացվել են նշյալ լիբանանահայ կառույցներին նյութական օժանդակություն տրամադրելու խնդրանքով ՀԿԿ Կենտկոմին Վ. Համազասպյանի ուղղած դիմում-գրությունների հիման վրա (Ֆ. 1, ց. 126, գ. 21, թ. 39; Ֆ. 1, ց. 126, գ. 22, թ. 70; Ֆ. 1, ց. 126, գ. 23, թ. 41; Ֆ. 1, ց. 126, գ. 24, թ. 84 նն.):

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՒՄ ԱՐԳԵՆՏԻՆԱԳԱՅ «ՍԵՎԱՆ»
ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԿԿ Կենտրոնական կոմիտեին

Արգենտինահայ Գրիգոր Լուսավորիչ կյոթական հաստատությունը և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը դիմել են Կոմիտեին՝ խնդրելով 1980 թվականի հունվարին հյուրընկալել իրենց կողմից կազմակերպվող դպրոցների շրջանավարտներից կազմված տուրիստական խմբին: Խումբը Մովետական Հայաստան է բերելու «Սևան» շաբաթաթերթի խմբագիր Խուան Դիսիդասը:

Ինչպես Ձեզ հայտնի է, այդ ճանապարհով թերթին հնարավորություն կտրվի որոշ չափով բարելավելու իր նյութական վիճակը:

Խումբը Երևան կժամանի 10 օրվա տուրիստական ուղեգրով: Կոմիտեն պետք է հոգա 50 հոգիանոց խմբի 10 օրվա հյուրանոցային և սննդի ծախսերը:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կից ներկայացնում ենք նախահաշիվը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 1, ց. 126, գ. 20, թ. 52: Բնագիր: Մեքենագիր²⁸⁴:

284. Կցված է նախահաշիվը Վ. Համազասպյանի և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գլխավոր հաշվապահ Պ. Ջոհրապյանի ստորագրություններով (թ. 53):

Փաստաթղթում առկա են հետևյալ մակագրությունները. «Ընկ. Կ. Դավթյանին: [Ստոր.] Կ. Դեմիրճյան»: «Ընկ. Լ. Մանասեթյանին. Խնդրում եմ ձևակերպել ըստ մեր ընդունած կարգի: [Ստոր.] Կ. Դավթյան. 16 IX 79»:

Հայաստանի Ազգային արխիվում կան այս և հաջորդ տարիների համար՝ «Սևան» շաբաթաթերթին նյութական օգնություն տրամադրելու վերաբերյալ ՀԿԿ Կենտկոմի Բյուրոյի՝ «հույժ գաղտնի» և «հատուկ թղթապանակ» նշումները կրող որոշումների արձանագրություններ (Ֆ. 1, ց. 126, գ. 20, թ. 51; Ֆ. 1, ց. 126, գ. 22, թթ. 19-20; Ֆ. 1, ց. 126, գ. 22, թ. 193 նն.): Այդ որոշումները կայացվել են արգենտինահայ «Սևան» շաբաթաթերթին նյութական օժանդակություն տրամադրելու խնդրանքով ՀԿԿ Կենտկոմին Վ. Համազասպյանի ուղղած դիմում-գրությունների հիման վրա (Ֆ. 1, ց. 126, գ. 22, թ. 21; Ֆ. 1, ց. 126, գ. 22, թ. 194 նն.):

Վ. ՄԱՎՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՄԱՅՈՒՆԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ-ՍՓՅՈՒՌՔԻ
ՍԻՄՊՈԶԻՈՒՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միրելի՛ պր. Համագասպեան,

Ձեր 7 օգոստոսի նամակին չպատասխանեցի աւելի կանուխ՝ որովհետեւ սիմպոզիումի մասին պր. Ռուբերին²⁸⁵ ուղղում անմալկին մէջ արծարծուած հարցերուն առնչին, պաշտօնապէս պատասխանած էինք արդէն: Ուրախ եմ, որ Ձեր ցանկութեան համաձայն, կարելի եղաւ գտնել յանձնառու ըլլալ ծրագրին նիւթապէս մասնակցելու, զայն այլ միջոցներով կազմակերպելու պարագային:

Աւելորդ է ըսել, թէ Հիմնարկութեան մօտ բարի տրամադրութեան պակասը չէր, որ պատճառ դարձաւ սկզբնական առաջարկէն հրաժարելու, այլ պարզապէս կազմակերպչական եւ նիւթական անհրաժեշտ միջոցներու չգոյութիւնը այստեղ՝ նման հսկայ ձեռնարկ մը յաջող կերպով իրագործելու համար: Բաշխուելու համար մեր տրամադրութեան տակ գտնուած գումարները անսահման չեն դժբախտաբար, ինչպէս սխալմամբ կ'ենթադրեն շատեր: Ունինք տարեկան որոշ պիւտճէ մը, որուն 70 տոկոսին համար, այսպէս ասած, մնայուն յանձնառութիւններ ունինք արդէն: Մնացեալ փոքր մասով է որ պիտի հասնինք միւս բոլոր ծրագիրներուն: Եւ որովհետեւ գրած էիք թէ սիմպոզիումին համար այլ առաջարկներ ստացած էիք արդէն Փարիզէն եւ այլն, մտածուեցաւ թէ Հիմնարկութեան նախաձեռնողի, հովանաւորողի հաւանական հանգամանքէն այդպէս, ակամայ հրաժարիլը շատ ալ մեծ անպատեհութիւն մը ստեղծած չըլլար ի վերջոյ:

Ձեր նոյեմբերի նամակէն համակ գոհունակութեամբ էր, որ կը տեղեկանայինք թէ հայ արուեստով խանդավառ իտալացի բարեկամներու հետ սկսած էք նախնական բանակցութիւնները եւ ծրագիրը դրած լաւ ճամբու մէջ:

Նոր Տարուան առթիւ ընդունեցէք, միրելի՛ պր. Համագասպեան, Իվոնին²⁸⁶ եւ իմ սրտագին բարեմաղթանքները Ձեզի, Ձեր հարազատներուն եւ ազնիւ գործակիցներուն քաջաոգոջութեան, «գործոց բարեաց» յաջողութեան եւ երջանկութեան համար:

Ձերմագոյն ողջոյններով՝

Վահրամ Մավեան

Վաղը կը մեկնինք Փարիզ եւ քանի մը օր վերջ կ'անցնինք Պէյրուի՝ 3-4 շաբթուան արձակուրդով:

Ֆ. 875, ց. 13, գ. 127, թթ. 4-5: Բնագիր: Սեքեմագիր:

285. Նկատի ունի Ռոբերտ(ո) Գյուլբենկյանին. տե՛ս էջ 87, թիվ 129 ծանոթագրութիւնը:
286. Իվոն Գասարճեան-Մավեան՝ Վահրամ Մավեանի կինը:

Վ. ՀԱՄԱԶԱՄԱՅՈՒՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԶՈՒՄԻ
Վ. ԽԱՂԱՏՈՒՐՅԱՆԻՆ²⁸⁷ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ ՆՐԱ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Միրելի Վալա

Ուրախությամբ կարդացինք Ձեր 11 նոյեմբերի 1979 թվակիր նամակը և տեղեկացանք, որ ցանկանում եք երկար ժամանակով լինել Հայաստանում: Մեզ շատ է ուրախացնում այն իրողությունը, որ Դուք առաջվա եռանդով ու ավյունով շարունակում եք ոչ միայն արվեստի նորանոր բարձր արժեքներ կերտել և դրանով ուրախացնել Ձեր արվեստի երկրպագուներին, այլ թղթին հանձնելու Ձեր հուշերը սփյուռքահայ այն արվեստագետների, հասարակական ու մշակութային գործիչների մասին, որոնց Դուք մոտիկից ճանաչել եք և որոնք իրենց գործունեությամբ նպաստել են Հայրենիք-սփյուռք մշակութային կապերի ամրապնդմանը: Դրանով Դուք մեծապէս օգնած կլինեք հայ մշակույթի պատմությամբ զբաղվողներին:

Հարգելի տիկին Վալա, մենք սիրով Հայրենիքում մայիս ամսին կարող ենք երկար ժամանակով ընդունել Ձեզ՝ բուժման անվան տակ և ստեղծել անհրաժեշտ բոլոր պայմանները, որպէսզի կարողանաք իրականացնել այդ հայրենասիրական մեծ գործը: Ապրիլի վերջերին կստանաք Կոմիտեի կողմից ուղարկված վիզան:

Օգտվելով առիթից, շնորհավորում ենք Ձեր Ամանորը և բարեմաղթում քաջաոգոջություն ու ստեղծագործական նոր հաջողություններ:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համագասպյան

Ֆ. 875, ց. 13, գ. 65, թ. 7: Պատճեն: Սեքեմագիր:

287. Գեղանկարիչ Սարգիս Խաչատուրյանի կինն է. տե՛ս էջ 218, թիվ 259 ծանոթագրութիւնը:

ԱՄԵՐԻԿԱՐԱՅ Ա. ՏՈՆՈՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻՆ ԱՐՎԵՍՏԱԳԵՏ
Վ. ՄԱԼՃՅԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԳՈՐԳԵՐ ԵՎԻՐԵԼՈՒ
ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Միրելի՛ պրն. Համագասպեան,
Վատահ եմ, որ ստացած էք նամակս, բայց ահաուր զբաղումները առիթը չեն
ընծայեր պատասխանելու:

Այս տողերը աւելի առաջ պիտի գրէի, բայց հարցի մը կարգադրութեան աշ-
խատանքները որոշ տեղ մը հասցնելէ ետք կ'ուզէի ձեզի տեղեկագրել: Ուրեմն,
հաւանաբար մօտ քսան տարի սուրիական մամուլէն – հայ թէ արաբական –
լսած էք անունը Վարդավառ Մալճեանի, իբր արուեստագէտ գորգագործ, որ
ունի ձեռքով եւ գեղարուեստական հրաշալի նրբութեամբ բանուած մօտ տասը
կտոր պատի գորգեր: Մալճեան 18 տարիէ ի վեր Նիւ Ճըրզի կը գտնուի եւ մօտ
բարեկամ է ինծի: Գորգերը ծալած դրած է խոնաւ մառանը եւ ամէն օր վախի
մէջ է, որ անոնք ոչ միայն կրնան փճանալ, այլեւ սեւամորթներու թաղը ըլլա-
լով իրենց տունը՝ կրնան գողցուիլ: Ես իրեն խօսեցայ Հայաստան ուղարկելու
մասին, եւ բաւական մտածելէ ետք իր հաւանութիւնը յայտնեց, պայմանաւ, որ
թանգարանին մէջ իր անունով առանձին բաժանմունք մը ունենայ: Մալճեանը
հարուստ մարդ չէ, բայց մեծարժէք իր այս գործերը փրկելու համար պատրաստ
է Հայրենիքին նուիրելու: Անոնց մէջ կան Մեծն Տիգրան եւ չորս գերեզմարուած
թագաւորները, Տը Կոյ, Արտաշէս Աշխարհակալ, Քենըտի, Կանայի Հարսանի-
քը եւայլն: Զանազան Նիւ Եորքեան թանգարաններ կարելուր գումարներ առա-
ջարկեցին այս կամ այն կտորը ունենալու, բայց ինք այնքան տարուած է իր
գործերով, որ կը փափաքի բոլորը մէկ տեղ հաւաքուած տեսնել: Ուստի պիտի
խնդրեմ, քանի տակաւին մարդը ողջ է եւ այլ կարգադրութիւն մը չէ կատա-
րած, այս մասին մտածէիք, մէկը լիազօրէիք եւ մեկնասա մը գտնէիք, որ իր հետ
բանակցէր եւ անոնց փոխադրութեան ծախսերը ապահովելու պատրաստա-
կամութիւնը յայտնէր: Ունի նաեւ բազմաթիւ նկարներ, որոնք բարոյական եւ
ինաստասիրական պատգամներով երկնուած են: Երանի՛ Ձեր մարդիկը, որոնք
այս ափերը կու գան, առիթը ունենան ժամանակ տրամադրելու եւ քիչ մը մեզ
լսելու:

Կը սպասեմ Ձեր պատասխանին:

Նաեւ կու գամ շնորհակալութիւն յայտնելու, որ ազնուաբար սկսած էք ինծի
ուղարկել ձեր հրատարակութիւնները: Անկանոն կը հասնին, բայց այդ մէկը հա-
ւանաբար նամակատան սիսթեմին պէտք է վերագրել: Բայց պիտի խնդրէի, որ
այսուհետ բոլոր առաքումները տան հասցէին կատարէիք, որովհետեւ գործս
ձգած ըլլալով՝ կը վախճամ, որ կորսուին առաքուածները:

Դուք եւ Շահէ Տատուրեանը Ձեր նամակներուն մէջ գրած էիք իմ Հայաստան
այցելութեանս մասին: Ինծի համար ալ կեանքիս գեղեցկագոյն պատեհութիւնը
պիտի ըլլայ գիր ու գրականութեամբ հոգիիս խորը հաստատուած Հայրենիքս
տեսնել, շօշափել, ապրիլ զայն իր աշխարհագրական, պատմական եւ մտաւո-

րական իրականութեամբ: Բայց այս մասին ես կը սպասեմ Ձեր կարգադրու-
թիւններուն, որպէսզի դասաւորեմ գործերս:

Շնորհաւորելով Ձեր Նոր Տարին, լաւագոյնը կը մաղթեմ, սպասելով պա-
տասխանի:

Միրով՝

Արմէն Տօնոյեան

Ֆ. 875, ց. 14, գ. 73, թ. 2: Բնագիր: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՐԻԿԱՅԱՅ Ա. ՏՈՆՈՅԱՆԻՆ՝ Վ. ՄԱԼԵՅԱՆԻ՝
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԳՈՐԳԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Ա. Տոնոյան,

Հավաստում ենք Ձեր 3 հունվարի 1980 թվակիր նամակի ստացումը, որով
հայտնում եք Ձեր բարեկամ Վարդավառ Մալճյանի մտադրությունների մասին՝
Երևանի պատմության թանգարանին նվիրաբերելու իր տասը ձեռագործ հազ-
վագյուտ գորգերը:

Պրն. Վ. Մալճյանին հայտնեք, որ Երևանի պատմության պետական թանգա-
րանում իր անվամբ հատուկ սրահ կառանձնացվի, որտեղ և միշտ կցուցադր-
վեն ու կպահպանվեն վերոհիշյալ գորգերը, այնպես ինչպես սփյուռքահայ
շատ հայրենասերների կողմից նվիրաբերած գորգերն ու հոգևոր այլ արժեք-
ները: Գորգերը Հայրենիք տեղափոխելու հարցով եթե Դուք չեք կարող զբաղվել,
խնդրում ենք գրել մեզ: Իսկ Ձեր նամակում շոշափված մյուս հարցին կանդրա-
դառնանք հետագայում:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 73, թ. 1: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՄԱԿՅԱՆԻՆ՝ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼԻՔ ՍԻՄՊՈԶԻՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Թանկագին Վահրամ,

Մենք միշտ ուրախանում ենք Ձեր նամակներով: Նախ տեղեկանում ենք,
որ Դուք առողջ եք. նորից ու նորից նամակի միջից տեսնում ենք Ձեր մեղմ
ժպտացող դեմքը, զգում այն հույսը, որը մշտապես թաքնված է Ձեր ժպտի
մի անկյունում... վերջապես՝ տեսնում այն հայրենանվեր գործերը, որ Ձեր աշ-
խատանքի միջոցով հասնում է աշխարհի տարբեր ծայրերը: Երբեք չէինք կաս-
կածում, որ Գյուլբենկյան հաստատությունը իր սրտաբուխ մասնակցությունը
կրերի սիմպոզիումի կազմակերպմանը, միաժամանակ լավ գիտակցում էինք
այն դժվարություններն ու կազմակերպական անհարմարությունները, որոնք
կարող էին ստեղծվել, եթե Գյուլբենկյան հաստատությունը հանձն առներ կազ-
մակերպելու այդ գործը:

Ներկայումս մեզ համար պարզ է թե ինչ ընթացքով պիտի գնան 1980թ. նա-
խապատրաստական աշխատանքները. քանի որ մեր ձեռքի տակ են ոչ միայն
Իտալիայի և Ֆրանսիայի ընկերների համաձայնությունը, այլև հարգարժան Ռ.
Գյուլբենկյանի սատարող նամակը, որը ուժ ու հավատ է ներշնչում վստահո-
րեն սկսելու աշխատանքները:

Սիրելի՛ Վահրամ, մեզ համար թանկ են նաև Ձեր անձնական կյանքին և
ստեղծագործական աշխատանքին վերաբերող տեղեկությունները: Եթե կարող
եք՝ մեկ-մեկ էլ մեր կողմը ուղարկեք անձանոթ մարդկանց մասին անտիպ գոր-
ծերը. մեր հանդեսները ևս սիրով կտպագրեն:

Մենք շատ ուրախ կլինենք եթե Դուք Իվոնի հետ միասին Բեյրութից բացի այ-
ցի գայիք նաև Հայաստան: Ինքներդ գիտեք, թե որքան հաճելի է հանդիպումը
Ձեզ հետ: Ձերմ բարևներ ազնվափայլ տիկին Իվոնին և մեր սիրելի բարեկամին:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 13, գ. 127, թ. 3: Պատճեն: Մեքենագիր:

Շ. ՍԵՎԳՆԱՅԱՆ²⁸⁸ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՄԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՎԵՅԻՆԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳՈՐԾՈՒՆԵՐԻՑՈՒՄ ԵՎ «ԵՐՎԱՆԴ ԴՅՈՒՄՆԱՅԻՆ» ԴԻՄԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

Ազնուայարգ Տիար Համագասպեան,

Ձեր 5 մարտ 1980-ի նամակը հասաւ ինձի ամսոյս 17-ին, ու սրտագին շնորհակալութիւն կը յայտնեմ Ձեր գնահատական ջերմ տողերուն եւ բարեմաղթութեանց համար:

1. Տիար Կ. Աւետիքեանի՝ Վալանս՝ 40.000-ի ֆ. ֆ.-ի նուիրատուութեան վերաբերմամբ՝ Ձեր թելադրութիւնը անմիջապէս հաղորդեցի յիշեալին, կը խորհիմ թէ կ'ընդունի ու իր հաւանութիւնը ստանալուն՝ անմիջապէս կը հաղորդեմ զայն ձեզի առ ի պատշաճ տնօրինութիւն:

2. Նմանօրինակ ուրիշ հարցի մը առջեւ կը գտնուինք ու պիտի փափաքէի ունենալ այդ մասին եւս ձեր կարծիքը:

Գիտէք անշուշտ թէ «ԵՐՈՒՄԱՆԴ ՀԻՒՄԻՍԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» մը ունինք՝ 250.000 տոլարի: Այդ գումարը հիմա բարձրացաւ 300.000 տոլարի՝ ողբացեալին հարազատները 50.000 տոլարի նոր նուիրատուութիւն մը կատարած ըլլալով յիշեալին մահուան տարելիցին առթիւ: Այդ մասին հայ մամուլին հաղորդագրութիւն մը դրկեցինք, «Հայրենիքի Ձայն»-ին ալ առ ի տեղեկութիւն – ներփակ օրինակ մը եւս ձեզի -, ուր անգամ մը եւս յիշեցինք թէ Հիմնադրամին տոկոսներէն տարեկան յատկացում կ'ալ Երեւանի «ՄԱՇՏՈՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»-ին: Այդ յատկացումը 5.000 տոլար է՝ ամէն տարի:

Առաջին վճարում մը ընելու ենք այս օրերս: Ի՞նչ կը խորհիք, այդ գումարը ինչպէ՞ս դրկենք որ նպատակայարմար ըլլայ: Եթէ Մատենադարանը այս կողմերէն գնումներու հարկը տեսնէ, համապատասխանօրէն 5.000 տոլարին, կրնանք այդ կերպով հաշուակցիլ: Հաճէիք իրենց տեսակէտը ունենալ ու պիտի շարժինք համաձայն Ձեր պատասխանին:

3. Կը հաստատեմ 12 փետրուար 1980-ի նամակս՝ ձեր փափաքած թուղթին առնչութեամբ որուն համար դիմած էիք նախագահ Տիար Ալեք Մանուկեանի:

Տիար Մկրտիչ Եղլէֆեանէ²⁸⁹ իմացայ քանի մը օր առաջ որ կրցած է հեռաձայնով Ձեր գրասենեակէն ստանալ անհրաժեշտ ճշդումը թուղթին չափին ելնի մասին: Կը յուսայ քանի մը օրէն տալ գինը:

Վերջերս իմացայ, որ նախագահ Տիար Ալեք Մանուկեան գրեր է նաեւ Լոն-

288. Սեհոնքյան (խակական ազգանունով՝ Գարագաշյան) Շավարշ (1901, Կիրասոն – 1992, Լոգան) – ՌԱԿ ղեկավար, իրավաբան, հրապարակագիր, խմբագիր եւ հասարակական գործիչ: Եղել է Կապիթի Հայ գեղարվեստասիրաց միության ատենապետ, երկար տարիներ՝ ՀԲԸՄ Շվեյցարական իրավափնձակի գրասենյակի տնօրէն եւ իրավական խորհրդատու:

289. Եղլէֆեան Մկրտիչ – Մեծահարուստ վաճառական: Եղել է անդամ Թուրքիայի Դեմոկրատ կուսակցության, որի ընտրացանկով 1957թ. հոկտեմբերին ընտրվել է Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր: 1950ականների երկրորդ կեսին եղել է Ստամբուլի Քաղաքապետական խորհրդի անդամ, ղեկավարել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի Հոգեւոր խորհուրդը: Գնեթալ Ջեմալ Գյուրսելի պետական հեղաշրջումից հետո 1960թ. մայիսի վերջին ձերբակալվել է եւ բանտարկվել: Ազատ արձակվելուց հետո հաստատվել է Շվեյցարիայում, որի հայկական գաղթօջախում տարել է հասարակական գործունեություն:

տոն՝ Տ. Յ. Մուրաֆեանի եւ Պրիւքսէլ՝ Տ. Արքակ Մխիթարեանի՝ տեղույն գինեւոր իմանալու համար:

Պիտի ուզէի, որ փութով արդիւնքի մը յանգինք եւ ապապրանքը տրուի որ յապաղումի մը անպատեհութենէն զերծ մնայ Ձեր նախաձեռնութիւնը՝ գեղարուեստական հատոր նուիրում Մարտիրոս Սարեանի՝ անոր ծննդեան հաւիւրամեակին առթիւ:

Յուսամ Ձեզ լսել մօտ օրերս՝ նամակիս նպատակայարմար պատասխանով մը:

4. Առիթով մը պիտի ջանամ, ինչպէս այդ ցանկութիւնը յայտնած էք Ձեր 5 մարտի նամակով, ամփոփում մը տալ Հ. Բ. Ը. Միութեան Զուիցերիականին գործունեութեան եւ հարցերու շուրջ:

Միութեան Զուիցերիականը իր դերին բարձրութեան վրայ կը շարունակէ մնալ: Նոր կտակներ՝ կարեւորներ իսկ, ու նուիրատուութիւններ եւս անպակաս են:

Փա՛րք Տիրոջ, լաւ եմ առողջութեամբ ու կը ջանամ ամէն կողմ հասնիլ՝ Եւրոպա թէ Եգիպտոս: Անցեալ տարի 19 ճամբորդութիւններ կատարած եմ՝ բոլորն ալ Միութեան հարցերուն առթիւ, ինչ որ կը բացատրէ խճողեալ կեանքս:

Այս բոլոր աշխատանքիս ընթացքին լաւ պիտի ըլլար, եթէ կարելի է, Ձենէ ցանկ մը ունենալ անհրաժեշտ կարիքներու ու ըստ այնմ կը ներշնչեմ կտակարարներու եւ նուիրատուներու, որոնց հետ միշտ շփման մէջ եմ ճամբորդութիւններովս թէ թղթակցութեամբ կամ հեռաձայններով:

5. Յառաջիկայ դեկտեմբերի սկիզբը, հաւանաբար Եշ, 4-ին կամ 11-ին, Փարիզի Ուսանողական Միջազգային Ուստանին մէջ հանդիսաւորապէս պիտի տօնակատարուի Մարի Նուպար Հայ Ուսանողական Տան հիմնադրութիւն յիսունամեակը, ֆրանսացի պաշտօնական անձնաւորութիւններու եւ հայ ընտրանիի մը ներկայութեան, ընդամենը 300 հոգի. Ուստանին հանդիսասրահը աւելին չ'առնէր:

Առաջին մաս մը՝ երեք կարճ ուղերձներ՝ Միջազգային Ուստանին նախագահին, Նուպար ընտանիքէն՝ Կոմս տ'Արսքօթի²⁹⁰ եւ նախագահ Տիար Ալեք Մանուկեանի կողմէ:

Երկրորդ մաս մը՝ գեղարուեստական բաժին՝ հայկական երգեր ու մանաւանդ պարեր՝ ժամ մը տեւողութեամբ:

Հանդիսութիւնը պիտի աւարտի ճոխ «քօքէյլ»-ով մը:

Խորհրդային Հայաստանի տարեդարձին առթիւ միտք ունի՞ք գեղարուեստական ուժեր դրկելու Ֆրանսա, որու պարագային Հ.Բ.Ը. Միութիւնն ալ կրնայ անոնցմէ ոմանց տեղ տալ վերոյիշեալ յիսունամեակի գեղարուեստական Յայտագրին մէջ: Այլապէս պիտի ջանանք տեղական ուժերով դիմաւորել այդ պահանջը:

Հաճէիք այս մասին եւս զիս լուսաբանել ատենին, որ ըստ այնմ ծրագրենք: Ամիսները շուտ կը սահին ու դեկտեմբերը այնքան ալ հեռու չէ:

Ջերմ զգացումներով, լաւագոյն բարեմաղթութիւններով ու յարգանք,

Սեյօնքեան Շաւարշ

Ֆ. 875, ց. 13, գ. 133, թթ. 12-13: Բնագիր: Մեքենագիր:

290. Պոդոս Նուպարի միակ դուստրը՝ Եվան (1883-1973) 1907թ. ամուսնացել էր Կ. Պոլսում Բելգիայի դեսպանատան ավագ քարտուղար, այնուհետև Բելգիայի Ալբերտ թագավորի դիվանապետ կոմս Գիյոմ դ'Արսքօթի հետ: Այստեղ խոսքը վերաբերում է նրանց որդուն՝ Պոդոս Նուպարի թոռան:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՍԱՐԴՅԱՆԻՆ՝ ՓՈԽԱԴԱՐՁ ԿՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Սարգյան.

«Նաիրի»-ում կարդացի Մարգարետ Մարկոսյանի «Ծիրանի անթառամ տերևներ» հուշագրությունը, որը գրվել է Ձեր Բոստոն այցելության առիթով: Այդ նոթերը մեկ անգամ ևս ցույց տվեցին, թե որքանով եք Դուք կապված Ձեր արմատի՝ ժողովրդի հետ: Ամբողջ գրությունը լեցուն է Ձեր աֆորիզմներով, հետաքրքրական մտքերով:

Շատ ուրախ եմ, որ բոլոր դեպքերում աշխարհի ո՛ր անկյունում էլ լինեք, փառաբանում եք Հայրենիքը, Հայաստանը, որը ամուր նեցուկն է ամբողջ հայության:

Ուրախալին այն է, որ այցելության ժամանակ միշտ հիշում ես քո Հայրենիքի ընկերներին, հասկապես գրողներին, որոնք Ձեր միջոցով լայն ճանաչում են ստանում: Օրերս հանդիպեցի Լևոն Մկրտչյանին, որը ուղարկել է Ձեր նոր գրքի ռուսերեն հրատարակությունից մեկ օրինակ:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն, թեև այն տպագրվել է կես միլիոն տպաքանակով Մոսկվայում, սակայն դեռ երեսը մենք չենք տեսել, և ասում են, որ արդեն սպառված է:²⁹¹

Հայրենիքում մեծ տպավորություն թողեց նաև Քուչակի նոր, շքեղ հրատարակության անգլերեն և հայերեն տպագրված Ձեր առաջաբանը:

Գիտեմ, որ նամակներ գրել և կարդալ չես սիրում, դրա համար էլ մանրամասն չեմ գրում մեզ մոտ եղած նորությունների մասին: Երևի մոտիկ ապագայում քեզ համար շատ մեծ նորության մասին մանրամասն նամակ գրեմ:

Ես շատ ուրախ կլինեի, եթե քեզ այս տարի նորից տեսնեի Հայաստանում, այս անգամ Հայաստանի 60-ամյակին, ես կարծում եմ, որ այդ օրը Արմիան և Սևանը կմիանան, լավ կլինի, որ այդ օրը Դուք նույնպես ներկա լինեք:

Օրերս իմ թոռնիկին հեքիաթի փոխարեն պատմեցի քո պատմվածքը «Բաղնիքի մասին», որը հայացրել էր Հովհաննես Շենոմեյանը:²⁹² Հետաքրքիրն այն է, որ թոռնիկիս հարցին թե ո՞վ է գրել այդ հեքիաթը, երբ ասացի Վ. Սարգյանը, նա չգարմացավ և միայն ասաց, թե եթե հայ է, ինչո՞ւ Հայաստանում չի ապրում: Ես ասացի, որ նա Ամերիկայում է ապրում: Թոռնիկս զարմացավ, թե ինչպե՞ս են Ամերիկայում հայերեն գրում. նա դեռ չի հասկանում, որ դա թարգմանություն է: Թոռնիկիս պատճառով, մեր ընտանիքի բոլոր անդամները կար-

դացել են այդ պատմվածքը: Դուք չեք կարող պատկերացնել, թե ինչ անհամբերությամբ են սպասում հայ ընթերցողները Ձեր գործերի թարգմանությանը:

Բարևներ Ձեր լավ բարեկամներին և հարազատներին:

Ջերմ ողջույններով՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 72, թթ. 5-6: Պատճեն: Մեքենագիր:

291. Լևոն Մկրտչյանը հեղինակել ու 1978թ.ին հայերենով Երևանում լույս էր ընծայել «Վիլյամ Սարգյանը՝ մոտիկից» գրական դիմանկար-մենագրությունը:

292. Շենոմեյան Հովհաննես (1909, Այնթապ - 1988, Նիկոսիա) - Մանկավարժ, ռեժիսոր և թարգմանիչ: Կրթությունն ստացել է Հալեպում, բարձրագույնը՝ Բեյրութի Ամերիկյան համալսարանում: Երկար տասնամյակներ իբրև անգլերենի ուսուցիչ պաշտոնավարել է Հալեպի և Բեյրութի հայկական դպրոցներում ու Մեզոնեան կրթական հաստատությունում (Կիպրոս): Հայերենի է թարգմանել և Բեյրութում հրատարակել Վիլյամ Սարգյանի մի քանի երկերը՝ «Պատմութեան», «6 Թատերախաղ», «Մարդկային Կատակերգութիւն» և այլն, բեմադրել հայերեն և անգլերեն պիեսներ:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ա. ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ ԳՐԱԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅԱՄԲ

Սիրելի բարեկամ,

Ստացա նամակդ Վ. Խոլոյանի²⁹³ միջոցով: Ես շատ ուրախ եմ, որ ժամանակ եք գտել բավական մանրամասն տեղեկություններ հաղորդելու Ղազարոսյանի, ինչպես և թերթի վիճակի մասին: Իհարկե, երկուսս էլ շահած կլինեինք, եթե Ղազարոսյանը կարողանար Հայաստան գալ: Ես դեռ չգիտեմ ուղևորվեցի՞ր Իտալիա թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ վախճան ունեցավ Ձեր առաքելությունը: Ամեն պարագայի՝ մաղթում եմ հաջողություններ:

Գալով նամակիդ երկրորդ հատվածին, ուզում եմ պատասխանել մի փոքր ժպտախառն եղանակով, ավելի ստույգ՝ այլաբանորեն: Հայտնի է, որ Էնգելսը²⁹⁴ առանց կարդալու Դյուրինգի աշխատությունը, պատասխանել է հեղինակին՝ կանխավ գուշակելով, թե ինչ կարող էր գրած լինել Դյուրինգը: Էնգելսը մեծություն էր և նրան ներելի էր, մանավանդ, որ նրա կոախումները ճշմարիտ են եղել: Բայց ես, որ երկար ժամանակից ի վեր գիտեմ, ճանաչում եմ բարեկամիս՝ Անդրանիկ Ծառուկյանին, չէի կարող ենթադրել, որ առանց կարդալու մեր ոչ անհայտ հեղինակների գրածները, կարող էր իմանալ դրանց բովանդակությունը և գնահատել «փուչ ընկույզներ, որ կտրել է տորը բան մը չես կրնալ ուտել»: Թերևս համարելիք ոչ այնքան հաջողված շարադրանքներ, կամ Ձեր թերթին ոչ նպատակահարմար նյութեր, կամ թե մերժելիք մեկ այլ արտահայտությամբ: Փառք Աստուծո, պատճառներու սով չէ, ինչպես ասում է Հ. Պարոնյանը:

Սիրելի բարեկամս, լավ իմանալով քո ճաշակն ու նախասիրությունները Աբաջյանի²⁹⁵ հետ մեկտեղ /մամուլի բաժնի վարիչ/ ընտրեցինք մեր ունեցած լավագույն նյութերը: Ընտրություն կատարելիս մտածել եմ թերթիդ մի քանի էմպիրիկ մտածելակերպ ունեցող ընթերցողներին հաղորդակից դարձնել անալիտիկ մտքի գորավոր տրամաբանությանը, ոչ այնքան մեր ժամանակա-

293. Խոլոյան Վարուժան (ծն. 1937, ավան Ալեյ, Բելյուրից արևելք) – Անդրանիկ Ծառուկյանի աներորդին: Թատերական ռեժիսոր, դերասան, Բելյուրում գործած «Թատրոն – 67» թատերախմբի հիմնադիր, նույնի, Համագրայինի «Գասպար Իփեկյան» և այլ թատերախմբերի ռեժիսոր: Արվեստի բարձրագույն կրթությունն ստացել է Լոնդոնում: Սկսած 1980թ. փետրվարից, ներկայացումներ է բեմադրել Նաեմ Երևանի բեմահարթակներում, որոնց արձագանքել է հայրենի մամուլը. տե՛ս, օրինակ, «Առաջին հաջողությունը հայրենի բեմում», «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 13 փետրվարի 1980թ., Գևորգ Աբաջյան, «Հանդիպում երկրորդ», «Հայրենիքի ձայն», 6 օգոստոսի 1980թ., «Երկրորդ հանդիպումը բեմադրիչի և առաջինը՝ դերասանի հետ», «Գրական թերթ» շաբաթաթերթ, 8 օգոստոսի 1980թ.:

294. Էնգելս Ֆրիդրիխ (1820-1895) – Գերմանացի արդյունաբերող, սոցիոլոգ, փիլիսոփա, կոմունիստական գաղափարախոսության համահիմնադիրներից: Թողել է բազմաթիվ երկեր, այդ թվում՝ գերմանացի իրավաբան և փիլիսոփա Էռնեստ Կարլ Դյուրինգի հայացքների քննադատությանը նվիրված «Անտի Դյուրինգ» աշխատությունը (1878):

295. Աբաջյան Գևորգ Համբարձումի (1920, գյուղ Շևող, Ալավերդու շրջան – 2003, Երևան) – Թատերագետ, գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1972): 1979թ. մինչև լուծարումը աշխատել է Մփուտքահայության հետ մշակութային կապի կոմիտեում՝ իբրև մամուլի բաժնի վարիչ: Ունի թատերագիտական և գրականագիտական բազմաթիվ հոդվածներ, մի քանի մենագրություններ:

կից հայ բանասերների, որքան հին ժամանակների մեծագույն մտածողներից մեկի, մեր Դավիթ Անհաղթի իմաստասիրությամբ, որի 1500-ամյա հոբելյանը նշվելու է այս տարի ոչ միայն Հայաստանում: Գիտեմ, որ թերթդ հոբելյանական չէ, բայց Դավիթ Անհաղթը այն հսկա մտածողն է, որին ներկայացնելը պատվաբեր պիտի լինի ամեն մի հրատարակչի, մանավանդ հայ հրատարակչի համար: Իսկ այդ նյութի հեղինակը Ս. Արևշատյանն²⁹⁶ է, գիտական բազում երկասիրությունների հեղինակ, որի գործերից շատերը թարգմանաբար հայտնի են Ռուսաստանում և ավելի հեռուներում: Իսկ Ս. Աղաբաբյանի «Ակսել Բակունցը» պարզապես գրված է փայլուն: Ինչ վերաբերում է մյուս նյութերին՝ Ս. Ղուկասյանի²⁹⁷ «Խոսք առ ճարտարապետ», Գ. Աբաջյանի «Հովհաննես Չեքիջյան» և այլն, ըստ իս, լրագրական պատշաճ մակարդակ ունեն: Կարծում էի, թե մի երկու «պիտանի ընկույզ» կգտնեիք, բայց ինչպես երևում է, առանց «պարկը» բացելու շտապել եք եզրակացնել, թե Համագրասայանը չի ծանոթացել նյութերին և հենց այնպես ուղարկել է՝ ուղարկած լինելու համար միայն:

Սիրելի Անդրանիկ, ես նույնպես բժախնդիր եմ նման դեպքերում, բայց բժախնդրությունը հախոռն ժխտումը չէ: Հարկ է, որ «Նաիրին» իր պատուհանները ավելի լայն բացի:

Անդրանիկ, բարեկամս, երևի մոտ ապագայում մեկնեմ աշխարհի մյուս ծայրը: Վերադարձիս ավելի մանրամասն տեղեկություններ կունենամ Ղազարոսյանի մասին: Նա խնդրել էր, որ ես քո անձնական հյուրը լինեմ: Ես այդ հնարավորությունը չունեմ պաշտոնիս ու աշխատանքիս բերումով, թեկուզ հյուրընկալը հարազատս լինի:

Լիբանանի վրա կրկին մութ ամպեր են ծանրանում: Ես հավատում եմ ողջախոհության, ճշմարտության, արդարության վերջնական հաղթանակին:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համագրասյան

Ֆ. 875, ց. 14, գ. 233, թթ. 53-54: Պատճեն: Մեքենագիր:

296. Արևշատյան Սեն Սուրենի (ծն. 1928, Երևան) – Փիլիսոփա, հայագետ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ (1982), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996): Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1959թ. աշխատում է Մաշտոցի անվան Մատենադարանում, 1982-2007թթ.՝ տնօրեն: Աշխատությունները վերաբերում են հայ հին և միջնադարյան փիլիսոփայության պատմության, աղբյուրագիտության և տեքստաբանության հարցերին: Ունի հրատարակված բազմաթիվ գիտական հոդվածներ և մենագրություններ, այդ թվում՝ 1980թ. Երևանում լույս տեսած «Դավիթ Անհաղթը՝ հին Հայաստանի ակադավոր փիլիսոփա» աշխատությունը:

297. Ղուկասյան Մարգո (Մեղա) (ծն. 1927, Լեինական, այժմ՝ Գյումրի) – Բանաստեղծուհի, լրագրող: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը: Աշխատել է «Պիոներ կանչ» թերթի և «Գարուն» ամսագրի խմբագրություններում: Ունի բանաստեղծությունների մի քանի զրբեր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՏԱՆԻ ԼԱՍՎԿ ԴԲԸՄ ՄՅՈՒՆԻՏԵՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
 Դ. ԱԶԱՐՅԱՆԻՆ Թ. ԱԼԹՈՒՆՅԱՆԻ²⁹⁸ ԱՆԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԻ - ՊԱՐԻ ԱՆՍԱՐԲԻ
 ՄՅՈՒՆԻՏԵՆՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ազնիվ բարեկամ,

Մայիսի սկզբներին ստացանք 24-ը ղեկտեմբերի թվակիր նամակը:

Մենք նույնպես ուրախ եղանք, որ երկարատև բանակցություններից հետո հաջողվեց կազմակերպել Թաթուլ Ալթունյանի անվան Հայկական երգի և պարի պետական անսամբլի ելույթը Սյունիսենում:

Հաճելի էր մեկ անգամ ևս հավաստիանալ, որ անսամբլի ելույթը մեծ հաջողություն և աննկարագրելի ոգևորություն է առաջացրել ոչ միայն հայ, այլ նաև գերմանացի հանդիսատեսի մոտ:

Կարծում ենք, որ անսամբլի այցելությունը Գերմանիա մեր համագործակցության առաջին քայլն է միայն, և հուսով ենք, որ մեր ապագա գործունեությունը կլինի շատ արդյունավետ:

Այս տարի այլևս որևէ խմբի այցելություն չենք կարող իրագործել, քանի նամակը ստացանք 1980 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատվելուց հետո միայն:

Կխնդրեինք այժմվանից գրել մեզ, թե 1981 թվականի համար ի՞նչ ծրագրեր ունենք և փոքրաթիվ ի՞նչ խմբեր կուզենայիք հրավիրել: Պարի պետական անսամբլը հրավիրելու կապակցությամբ անհրաժեշտ է դիմել «ԳՈՍԿՈՆՏԵՐՏ»-ին:

Սպասում ենք Ձեր լուրերին:

Հաջողության լավագույն մաղթանքներով և հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ, 875, ց. 13, գ. 138, թ. 1: Պատճեն: Մեքենագիր:

298. Ալթունյան Թաթուլ Տիգրանի (1901, Ադանա - 1973, Երևան) - Երգահան, խմբավար, մանկավարժ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1965): Ուսանել է Երևանի և Լենինգրադի կոնսերվատորիաներում: Դեկավարել է Երևանի կոնսերվատորիայի երգչախումբը, կազմակերպել է Հայաստանի պետական երգչախումբը, Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլը, որոնց հետ համերգներով շրջագայել է աշխարհի շատ երկրներում:

Վ. ՀԱՄԱԶԱՍՏԱՆԻ, Լ. ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻ²⁹⁹ ԵՎ Մ. ՅՈՒԶԲԱՆՅԱՆԻ³⁰⁰ ՀԱՄԱՏԵՂ
 ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՒՄ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՐԱԿԱՆ
 ՉԵՂՈՔՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Сов. Секретно

ЦК КП Армении

Как известно, в ходе гражданской войны в Ливане и в период некоторого затишья, между армянскими партиями и организациями - гнчаков, рамкаваров и дашнаков - выработались единые действия. Перед лицом подрыва армянской общины Ливана создалось нечто вроде национального фронта всех армянских организации. В частности, дашнаки установили контакты не только с армянскими прогрессивными организациями, но и с Ливанской Компартией. Показателен факт, что лидеры дашнаков, члены Ливанской парламента сочли возможным присутствовать на приеме, организованном в Бейруте по случаю успешного окончания IV съезда Ливанской Компартии. Далее, один из лидеров дашнаков посетил посла СССР в Ливане А. А. Солтадова³⁰¹ и выразил благодарность Советскому правительству за помощь, оказанную армянской общине.

Следует отметить, что в период вооруженных столкновений в Ливане, дашнаки сумели завоевать определенный авторитет в армянской общине действиями своих вооруженных дружинников, которые встали в защиту мирного армянского населения против действий правохристианских сил, показав при этом хорошую организованность и слаженность действия в сложных условиях гражданской войны.

Такое поведение руководства дашнакской партии вызвало некоторое замешательство среди гнчаков и рамкаваров, руководство гнчаков стало проявлять склонность пойти на некоторое сближение с дашнаками и подписать с

299. Մանասեյան Լևոն (1921, Երևան - 1986, արտասահման, թաղված է Երևանում) - 1951-1955թթ. եղել է Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի ընկերության նախագահի տեղակալ, 1961-1965թթ.՝ Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանության առաջին քարտուղար, 1965-1966թթ.՝ ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարությունում խորհրդական: 1966-1984թթ. աշխատել է ՀԿԿ Կենտկոմի վարչամեթոդական, ընդ որում՝ 1967-1984թթ. վարել է Կենտկոմի Ինֆորմացիայի և արտասահմանյան կապերի բաժնի վարիչի պաշտոնը: 1984թ. մինչև մահը եղել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի նախագահը:

300. Յուզբաշյան Մարիոս Արամի (1924, Բաթումի - 1993, Երևան, թաղված է Մոսկվայում) - ԽՍՀՄ պետական անվտանգության գեներալ-լեյտենանտ: 1945-1988թթ. գործել է ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի համակարգում, ընդ որում՝ 1960-1970թթ.՝ Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունում, 1972-1978թթ.՝ ԽՍՀՄ ՊԱԿ-ի Առաջին գլխավոր վարչության (արտաքին հետախուզություն) պետի տեղակալ, 1978-ից մինչև 24 հոկտեմբերի 1988թ.՝ ՀԽՍՀ ՊԱԿ-ի նախագահ: 1993թ. հուլիսի 21ին սպանվեց Երևանի մի զրոսայցում՝ խորհրդավոր պայմաններում:

301. Ալեքսանդր Սոլդաթով:

ними и рамкаварами «соглашение о совместных действиях» армянских политических партий и организаций на Ближнем Востоке.

Анализ современной ситуации, сложившейся в армянской общине Ливана, позволит сделать вывод о том, что идея создания так называемого Национального фронта для нас не желательна и чревата отрицательными последствиями для наших интересов. Положение усугубляется тем, что гнчаки поддаются давлению возросшего авторитета дашнаков и считают возможным пойти на такое сближение. Иную позицию занимают рамкавары, заявляя о своем несогласии участвовать в новом блоке патриотических сил, где главенствующую роль возьмут на себя дашнаки. Тут сказывается извечная оппозиция рамкаваров, которые ясно представляют, что усиление позиции дашнаков неминуемо приведет к вытеснению рамкаваров из ведущей роли в жизни общины. Поэтому последние стоят на точке зрения сдержанности в нынешних отношениях с дашнаками.

Учитывая вышеизложенное, считаем целесообразным всячески удерживать гнчаков от подписания какого бы-то ни было соглашения с дашнаками, прямо указав им на опасность в таком случае подрыва авторитета гнчаков. Вместе с тем следует вести терпеливую работу с рамкаварами, удерживая их в сфере нашего влияния. При этом следует учитывать и то, что среди рамкаваров сильны прозападные тенденции и что американцы уже давно подбираются к этой организации, предпринимают меры к переводу руководства партии в США. При этом, по имеющимся сведениям, американцы в отношении армянской общины Ливана вынашивают далеко идущие планы. Речь идет о ликвидации политического, культурного и национального центра армян на Ближнем Востоке, переносе центров армянских организации в США, подчинении их американской политике и использовании против СССР. Американское посольство в Ливане усиленно приглашает на беседу руководителей гнчаков и рамкаваров, как об этом сказал генеральный секретарь³⁰² Аветис Демирчян³⁰³ в беседе с председателем Комитета по культурным связям с армянами за рубежом т. Амазаспьяном В. Е.

В работе с рамкаварами следует учесть и длительное соперничество за овладение руководством партии между сторонниками Герсама Агароняна³⁰⁴ и Барунака Товмасыана, с одной стороны и, сторонниками Айкашена Узуняна, с другой, который оттеснен сейчас на второй план. Представляется целесообразным в нашей работе с рамкаварами негласно содействовать усилению позиции Айкашена Узуняна, который дружественно настроен к нам, вместе

302. ՄՂՀԿում նման պաշտոն չկա: Հիշտն է՝ Կեղրոնական վարչության առննապետ:

303. Դեմիրճյան Ավետիս – ՄՂՀԿ ղեկավար:

304. Ահարոնյան Գերսամ Փանոսի (1916, Մարաշ – 1981, Բեյրութ) – ՌԱԿ ղեկավար, խմբագիր, հրապարակագիր, պատմաբան, մանկավարժ: Սովորել է Հալեպի Բերել վարժարանում, Ալեքսի կոլեջում, ավարտել Մեկզոնյան կրթական հաստատության վարժապետանոցը: Դեկավար պաշտոններ է վարել նաև Թեբեյան մշակութային միության և ՀԲՀՄ-ի Լիբանանի կառույցներում: 1948-ից մինչև մահը եղել է ՌԱԿ օրգան «Զարթոսեր» օրաթերթի խմբագրապետը: Պատմագիտական բնույթի մի քանի աշխատությունների հեղինակ է:

с тем, пользуется значительным влиянием в прозападных кругах. Узуняну 55 лет. Родился в Алеппо (Сирия).³⁰⁵ Окончил лицей «Мелконяна» на Кипре. Женившись на дочери состоятельного коммерсанта Таракчяна,³⁰⁶ Узунян стал совладельцем сольных разработок в Эфиопии. После революции в этой стране³⁰⁷ переехал в Бейрут и активно включился в общественную жизнь армянской общины Ливана. В настоящее время Узунян временно проживает во Франции, не прекращая свою активную деятельность в рамкаварской партии и во Всеобщем армянском благотворительном союзе – Барегорцакан. Дважды бывал в СССР по приглашению Комитета по культурным связям с армянами за рубежом.

В настоящее время руководство Ливанской Компартии (т. Ж. Хауи)³⁰⁸ и посольство СССР в Ливане (т. А. Солдатов) считают, что всячески надо укреплять наши связи с армянскими организациями в Ливане, в том числе и с дашнаками, которые пользуются там значительным весом, имея в виду дальнейшее укрепление нашего влияния как в армянской общине, так и в этой стране в целом.

В этой связи полагаем целесообразным активизировать нашу работу в направлении укрепления союза гнчаков, рамкаваров с армянскими коммунистами на патриотической просоветской основе.

В то же время по согласованию с посольством СССР в Ливане и в соответствии с мнением ЛКП вести работу с лояльно настроенными деятелями из дашнацкого руководства с тем, чтобы удерживать их на патриотических, лояльных к нам позициях.

Учитывая сложившуюся ситуация, полагали бы в настоящее время целесообразным приезд гнчацких и рамкаварских руководителей в Армянскую ССР на консультации, как это предусматривалось ранее. Думается, что перед предстоящими съездами гнчаков и рамкаваров этот визит может быть использован оппозицией против дружественно настроенных к нам руководителей указанных патриотических организаций.

305. Չ. Ուզունյանի ծննդավայրի և տարիքի տվյալները սխալ են: Նա ծնվել է Կիլիկիայի Ադա-նա քաղաքում՝ 1920 թվականին, հետևաբար, փաստաթղթի հեղինակման օրերին 60 տարեկան էր:

306. Չ. Ուզունյանը ամուսնացել է եթովպահայ մեծահարուստ Մարտիրոս Դարակչյանի դստեր՝ Մարիի հետ:

307. Նկատի ունի Հայլե Սելասիե կայսեր դեմ գնդապետ Մենգիստու Հայլե Մարիամի ղեկավարությամբ պետական հեղաշրջումը 1973 թվականին և երկրում սոցիալիստական կարգերի հաստատումը (1973-1991թթ.):

308. Ժորժ Հաուի (1938, գյուղ Բթըղրին, Մերնի գավառ, Լիբանան – 2005, Բեյրութ) – Լիբանանի կոմկուսի Կենտկոմի գլխավոր քարտուղարը 1979-1993թթ.: Ամուսնացել էր Լիբանանի կոմկուսի առաջնորդներից Արթին Մադեյանի դստեր՝ Սոսիի հետ: Մականվեց 2005թ. հունիսի 21-ին, Բեյրութում, խորհրդավոր պայմաններում:

С целью разъяснения нашей позиции по вопросам взаимоотношения между армянскими партиями и организациями Ливана считаем целесообразным командирование в Бейрут товарища Амазаспьян В. Е. в июле сего года, сроком на две недели.

Л. Манасерян, М. Юзбашян, В. Амазаспьян.

Ֆ. 1, ց. 126, գ. 21, թթ. 89-91: Պատճեն: Մեքենագիր³⁰⁹:

309. Փաստաթուղթն առաջին անգամ լույս է տեսել Պրնմտահայերեն թարգմանությամբ՝ Բեյրութի «Զարթոսթ» օրաթերթի 2004թ. սեպտեմբերի 5ի համարում, էջ 2:

Արխիվային գործում պահպանվել է նաև մեկ փաստաթուղթ (թ. 88), որը ՀԿԿ Կենտկոմի Բյուրոյի Ե-175 նշումով արձանագրությունն է: Հայտնվում է, թե համաձայնություն է տրվել զեկուցագրի երեք հեղինակների առաջարկություններին: Փաստաթղթի ներքևի մասում ստորագրությունը դժվարընթեռնելի անձնավորությունը կատարել է հետևյալ ռուսերեն նշումը. «Քննարկվել է Բյուրոյի նիստում: Որոշվել է՝ ընդունել ի գիտություն, արձանագրության մեջ չընդգրկել»:

1975թ. ապրիլին սկսված Լիբանանի քաղաքացիական պատերազմից անմիջապես հետո հայկական երեք կուսակցությունների համագործակցությունը հենց սկզբից ՀԽՍՀ ղեկավարության դժգոհությունն էր հարուցել: «Դրական չեզոքություն» անունով ծանոթ այդ գործակցության համար հատկապես մեղադրվել էր ՄԴՀԿ Կեդրոնական վարչության ատենապետ Հարություն Կուժունին, ում վրա խիստ ճնշում էր բանեցվել: Այդ մասին տե՛ս Ավետիս Դեմիրճյանի, Մանվել Աղամյանի և Փանոս Թիթիզյանի վկայությունները Պեպո Միմոնյանի խմբագրած «Լիբանանահայության ղեկավար տիպարներն» Յարութիւն Կուժունի» հատորում (Բեյրութ, 2002), էջ 443, 471, 491, 496:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԼԻԲԱՆԱՆԱԳԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐ Ա. ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ, Գ. ԱՅՈՐՈՆՅԱՆԻՆ ԵՎ Գ. ԱՂԿԱՐՅԱՆԻՆ ԼԻԲԱՆԱՆԱԳԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՆՎԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՐԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Միրելի բարեկամներ,

Ձեր ս.թ. հունիսի 12-ի նամակից ուրախությամբ տեղեկացանք Լիբանանահայ հայրենասիրական ճակատի նախաձեռնությամբ Բեյրութում Մովսեսյան Հայաստանի 60-ամյակը հանդիսավորապես նշելու նպատակադրության մասին:

Լիբանանյան արդի ծանր պայմաններում կրկնակի արժեքավորում է ստանում լիբանանահայության հայրենասիրական ջերմ զգացումների արտահայտությունը հանդիսացող Ձեր այդ որոշումը: Ի սրտե ողջունում ենք այն ու մաղթում հաջողություններ:

Նոյեմբերի երկրորդ կեսին նախատեսվում է հայրենի արվեստագետների փոքրիկ խմբի այցելություն Լիբանան՝ Կոմիտեի նախագահի տեղակալ, բանաստեղծ Վահագն Դավթյանի գլխավորությամբ /խմբի կազմում կլինեն երգչուհի Բելլա Դարբինյանը,³¹⁰ դուդուկահար Զիվան Գասպարյանը,³¹¹ ինչպես նաև «Հայիամերգի» մեկ մեներգիչ: Խմբի ժամանման ստույգ թվականը կհայտնենք առաջիկայում:

Այս կապակցությամբ հայտնենք, որ ուրախ կլինենք, եթե նշված նախաձեռնությանը ընգրկված լինեին նաև լիբանանահայ շրջանային կազմակերպությունները:

Լավագույն ցանկություններով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 233, թ. 35: Պատճեն: Մեքենագիր:

310. Դարբինյան (Կուզնեցովա) Բելլա Պավլի (1936, Կիրովական, այժմ՝ Վանաձոր – 2005, Երևան) – Երգչուհի, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1966): Ուսանել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, Մոսկվայի Մեծ թատրոնի ստուդիայում: Երգել է ՀԽՍՀ (ՀՀ) էստրադային և սիմֆոնիկ նվագախմբերում:

311. Գասպարյան Զիվան Արամայիսի (ծն. 1928, գյուղ Մոլակ, Հրազդանի շրջան) – Դուդուկահար, մանկավարժ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1978): Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, որտեղ հետագայում դասավանդել է: Տարբեր խմբերի կազմում կամ անհատապես համերգներով շրջագայել է աշխարհի շատ երկրներում, արժանացել բազմաթիվ մրցանակների:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՄԱԿՅԱՆԻՆ՝ ՍՓՅՈՒՌՔԻ ՎՐԴԻ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սիրելի Վահրամ,

Անչափ ուրախ եղանք երկարատև լռությունից հետո ստանալով Ձեր նամակը: Երևի անցած տարիների ընթացքում ամենաընդարձակ նամակն է, որ գրում եք: Ինչպես տեսնում եմ, Դուք ես մեծապես մտահոգված եք սփյուռքում ստեղծված խառնակ վիճակով:

Սփյուռքի ներկա իրավիճակը և մեր սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ինչ խոսք, խորը ուսումնասիրության կարիք են զգում, որով պետք է զբաղվեն սոցիոլոգները, պատմաբաններն ու այն բոլոր ուժերը, որոնք կարող են ուղիներ որոնել և գտնել՝ նոր պայմաններին համապատասխան գործելու, սփյուռքի ներկա վիճակը ճիշտ հասկանալու և ուղղություն տալու համար:

Ես կարծում եմ, որ մեր սոցիոլոգները կօգնեն մեզ ոչ միայն հասկանալու, այլ նաև հասկացնելու սփյուռքահայ կազմակերպություններին նոր պայմանների վտանգավորությունը հայապահպանության հարցում:

Եթե մամուլին հետևելու լինենք՝ նախնական քայլեր արվում են ՀԲԸՄ-ի գծով: Թե որքանով է այդ արդյունավետ, դժվար է ասել, սակայն մեզ հասած տեղեկությունների համաձայն, բազմաթիվ հարցեր են քննարկվել Իտալիայում, այնուհետև Փարիզում՝ «սփյուռքագետների» մասնակցությամբ:

Մի խոսքով՝ կարելի է երկար, շատ ավելի մանրամասն անդրադառնալ այդ հարցերին, սակայն նամակի շրջանակները թույլ չեն տալիս ծավալվելու: Կհանդիպենք, կխոսենք ավելի հանգամանորեն:

Օշականի³¹² որդու՝ Վահե Օշականի³¹³ խնդրանքի կապակցությամբ պետք է ասեմ, որ բոլոր միջոցներով աշխատել ենք օգնել նրան: Վերջերս էլ գոհունակության նամակ ենք ստացել նրանից այդ առիթով:

Ինչ վերաբերում է հորը՝ վաստակաշատ գրող, ուսուցիչ, մտավորական Հակոբ Օշականի աճյունը փոխադրելուն, ապա առաջարկը ոչ միայն աշակերտի երախտագիտության խոսքն է,³¹⁴ այլ՝ հայրենասիրական լավագույն նախաձեռնություն, որին ես կարծում եմ, Հայաստանի պատկան մարմինները անպայման կընդառաջեն:³¹⁵

Սիրելի բարեկամ, ինչ վերաբերվում է երաժիշտներին, ես կարծում եմ, Դուք

312. Օշական (Քյուֆեճյան) Հակոբ Հովհաննեսի (1883, ավան Սեղեռոզ, Բուրսայի նահանգ – 1948, Հալեպ) – Գրող, գրականագետ, խմբագիր և մանկավարժ: Ունի պատմվածքների շարքեր, գրականագիտական մատենաշար, բազմաթիվ ուսումնասիրություններ ու հոդվածներ:

313. Օշական (Քյուֆեճյան) Վահե Հակոբի (1922, Ֆիլիպե (այժմ՝ Պլովդիվ) Բուլղարիա – 2000, Լոս Անջելես) – Գրող: Ունի մի քանի հատորներ:

314. Վահրամ Մամյանը Հակոբ Օշականին աշակերտել է Երուսաղեմի Սրբոց Թարգմանչաց վարժարանում:

315. Հակոբ Օշականը մահացել է 1948թ. փետրվարի 17 – լույս 18-ի գիշերը, Հալեպ այցի ժամանակ և թաղվել քաղաքի ազգային գերեզմանատանը: Նրա աճյունը առ այսօր այնտեղ է: Տեղին է հայտնել, թե ամբողջ երկու տարի՝ 1946-ի փետրվարից մինչև Օշականի մահը, Խորհրդային Հայաստանի ինքնակոչ «պաշտպան» և ինքնակոչ «առաջադիմական» մարդիկ շատ բռնի պայքար են մղել Օշականի դեմ: Պատճառը Անդրանիկ Օստունյանի խմբագրած «Նայիրի»-ի

ինձ լավ եք հասկանում, որ կան պայմաններ և հնարավորություններ, որոնք մենք աշխատում ենք բոլոր դեպքերում հարմարացնել հաստատությանն ընդառաջելու համար. առաջին հերթին նկատի ունենք նրա շահերը, որոնք ոչ միայն մեկ տարվա, այլ, ըստ իս, բավական երկար տարիների համար են:

Ճորձ Սկրտչյանի Հայաստան գալու կապակցությամբ պետք է ասեմ հետևյալը:

Քանի որ այցելությունը նախօրոք նախատեսված և հաստատված չէր Կոմիտեի 1980 թվականի ծրագրի մեջ, այդ իսկ պատճառով փետրվար ամսին նրան զրկված նամակով հայտնել էին, որ Հայաստան կարող է գալ իբրև զբոսաշրջիկ և տեղում կկազմակերպենք համերգները: Հայտնել էինք նաև համերգի որոշակի օրերը:

Սակայն ես հրաժարվեց այդ առաջարկից:

Կոմիտեի հաջորդ տարվա ծրագրի մեջ նկատի կունենանք նրա հրավերը:

Ի դեպ չմոռանալ ասելու, որ օգոստոսի վերջերին մեկնելու եմ Արևելք: Կայցելեմ Դամասկոսի, Ամմանի, Բեյրութի հայ գաղութները: Ուրախ կլինեմ, անշուշտ, եթե պատահաբար հանդիպենք:

«Նայիրի» էջերում հաճախ ենք կարդում Ձեր ստեղծագործությունները և ամեն մի տողի մեջ տեսնում Ձեզ, Ձեր ժպիտն ու անբաժան թգրեհը:

Ջերմ ողջույններս ու լավագույն մաղթանքներս սիրելի Իվոնին:

Անկեղծ զգացումներով՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 13, գ. 127, թթ. 8-10: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԴԲԸՍ ՍԱՆ ՊԱՌԻՆՈՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ՝ ՍՓՅՈՒՔԱՅԱՅԵՐԻ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ
ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Հարգելի բարեկամներ,

Նոյեմբերի 24-25-ը Սփյուռքահայ կոմիտեի նախաձեռնությամբ Երևանում տեղի ունեցավ սփյուռքահայ ներկայացուցիչների համաժողով:³¹⁶ Հանդիսավոր նիստերին մասնակցեցին բազմաթիվ ներկայացուցիչներ, որոնց ներկայությամբ նոյեմբերի 25-ին մեծ շուքով դրվեց հիմնաքարը «Բարեկամության տան», որը հանդիսանալու է սփյուռքահայության տունը Հայաստանի մեջ:³¹⁷

Սփյուռքահայ ներկայացուցիչների կողմից առաջարկներ եղան, որ համայնքները սիմվոլիկ մասնակցություն բերեն Բարեկամության Տան կառուցման գործին:³¹⁸

Պրն. Գառնիկ Լազարյանը³¹⁹ ավելի հանգամանորեն կպատմի Ձեզ: Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 75, ք. 5: Պատճեն: Մեքենագիր:

316. Համաժողովը կայացավ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում: ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանի ողջույնի խոսքից հետո ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Վարդգես Համազասպյանը. նրա զեկուցումը տե՛ս «Հայրենիքի ձայն», թիվ 48 (800), 1980, էջ 4-7: Համաժողովի նյութերը հետագայում լույս տեսան առանձին հատորով. «Վերածնված հայրենիքը եւ սփյուռքը. Հանուն խաղաղության և առաջադիմության. Նյութեր սփյուռքահայության ներկայացուցիչների համաժողովի (24-26 նոյեմբերի 1980)», կազմող և խմբագիր՝ Սպարտակ Բաղդասարյան, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1982, 214 էջ:

317. Ըստ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Կարլեն Դալլաբյանի՝ Կենտկոմ ուղղած զեկուցագրի, «Բարեկամության տան» շինարարությունը նախատեսվել է Խորհրդային Միության Կոմկուսի Կենտկոմի՝ 1978թ. դեկտեմբերի 27-ի թվականը կրող «Արտասահմանի հայոց մեջ աշխատանքը ուժեղացնելու մասին» որոշումով. տե՛ս ՀԱՄ, ֆ. 1, ց. 126, գ. 23, ք. 61:

«Բարեկամության տան» հիմնաքարը հանդիսավորությամբ զետեղվել է 1980թ. նոյեմբերի 25-ին՝ այդ օրերին Երևանում կայացած սփյուռքահայության ներկայացուցիչների համաժողովի շրջանակներում: «Տունը» նախատեսված էր կառուցել Երևանում՝ Կոնյանց-Մոսկվյան փողոցների անկյունում, Վարդան Մամիկոնյանի արձանի հարևանությամբ:

318. Մեզ անհայտ պատճառներով, «Սփյուռքահայության տան» կամ «Բարեկամության տան» ծրագիրը չի իրականացվել:

319. Ազգանվան ճիշտ ձևն է՝ «Ղազարյան»: Գառնիկ Ղազարյանը եղել է ՀԲԸՄ Սան Պատույթի մասնաճյուղի և Մարաշի հայրենակցական միության հիմնադրողներից:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԵՎԵՅՅԱՐԱՅԱՅ ԳՈՐԾԻՉ Մ. ՇԵԼԵՖՅԱՆԻՆ
ՓՈԽԱՂԱՐՁ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՂՆԱՄԱՆ ՄԱՍԻՆ

Միրելի Մկրտիչ,

Օրերս միայն ստացա Նոր Տարվա առիթով ուղարկած շնորհավորական քարտը: Խորին շնորհակալություններս առողջության և երջանկության ջերմ մաղթանքներիդ համար:

Վստահ եմ, ժամանակին ստացել ես մեր քարտը, սակայն օգտվելով առիթից, կրկին ցանկանում եմ շնորհավորել բոլոր Շելեֆյանների՝ սիրելի Երջանիկի, զավակներիդ և հարսիդ Ամանորը, մաղթելով առողջություն և ամենայն բարիք: Ինչ խոսք, որոշ չափով հանդարտվել է մեր աշխատանքը, մանավանդ վերջին ծանր ամիսներից,³²⁰ սակայն զբաղումներս դեռևս այնքան շատ են, որ մինչև օրս չեմ կարողացել գնալ հանգստանալու:

Շատ հաճելի է լսել և իմանալ ամեն կողմից, որ սփյուռքահայ ներկայացուցիչների համաժողովը լավ էր կազմակերպված և արդարացրեց բոլոր մասնակիցների հույսերը:

Ուրախ եմ, որ թափած անձևներ ջանքերը իզուր չանցան:

Սիրելի բարեկամ, համամիտ եմ, անշուշտ, որ Հայրենիքը ապրում է իր ոսկեդարը: Իր կերպով «ոսկեդար» է ապրում նաև սփյուռքը: Սակայն կովանը եղել է, կա ու մնում է Հայրենիքը. երկուսը հավասար արժեք չունեն:

Անտարակույս այսօրվա մեր սփյուռքի պայմաններում ազգային նկարագիրը վառ պահելու համար խիստ անհրաժեշտ է օրգանական կապը Մայր Հայրենիքի հետ: Այս իմաստով, մենք խորապես գնահատում ենք քեզ նման ազգայինների իմաստուն կողմնորոշումը, որոնք հասկանալով սփյուռքին սպասվող վտանգը, իրենց ճակատագիրը չեն բաժանում Մայր Երկրի ժողովրդից և դրանով իսկ իմաստավորում իբրև հայ ապրելու իրենց պայքարը:

Միրով՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 13, գ. 130, թթ. 7-8: Պատճեն: Մեքենագիր:

320. Վ. Համազասպյանը հավանաբար եկատի ունի նախորդ տարվա վերջին Երևանում կայացած՝ Խորհրդային Հայաստանի 60-ամյակի հանդիսություններն ու սփյուռքահայության համագումարը:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ԼԱՄԱԿԸ Լ. ՔԵՆԻՇՅԱՆԻՆ՝³²¹ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԵՅՈՒԹԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի Քեշիշյան,

Նամակը ստացա շատ մեծ ուշացումով, այն ժամանակ, երբ Դուք արդեն Ժնևից վերադարձել էիք ԱՄՆ: Մոտ ապագայում կաշխատենք հանդիպել և հանգամանորեն գրուցել նամակում արծարծված հարցերի մասին:

Սիրելի Լևոն, վերջերս Կարայիս Պողոսյանի միջոցով ստացանք մեր ժամանակի մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի կողմից ԱՄՆ-ում տված համերգների, նշանավոր հայ և օտար մտավորականների հետ հանդիպումների լուսանկարները: Դրանք ամփոփված են 8 ալբոմներում, որոնք իրենց մշտական տեղը գտան հանձարեղ արվեստագետի շքեղ տուն-թանգարանում: Ձեր մեղվաջան աշխատանքն ու հայրենասիրական նվիրումը շատ բարձր գնահատվեց հայրենի արվեստագետների կողմից. այդ առթիվ ընդունեք մեր և թանգարանի տնօրենի խորագրաց շնորհակալությունները: Հարգարժան Լևոն, Արամ Խաչատրյանի 80-ամյակի կապակցությամբ 1983թ. ծրագրված է նկարահանել 4 ֆիլմ, որը պատմելու է նրա ստեղծագործական ուղու, հասարակական ու մշակութային գործունեության, ինչպես նաև մեծ արվեստագետի կողմից արտասահմանյան մի շարք երկրներում, այդ թվում և ԱՄՆ-ում տված համերգների ու հանդիպումների մասին: Այդ առթիվ շատ օգտակար կլինեն, եթե Դուք կարողանալիք ձեռք բերել և Կոմիտեի հասցեին ուղարկել ԱՄՆ-ում եղած բոլոր ժապավեններն ու այլազան նյութերը, որոնք վերաբերվում են Ա. Խաչատրյանի կյանքին ու գործունեությանը: Այդ հարցում Ձեզ կարող է օգնել Արշակ Տիգրանյանը: Ֆիլմի ռեժիսոր Լաերտ Վաղարշյանը³²² խնդրեց Ձեզ հայտնել, որ ֆիլմի առաջաբանում երախտագիտությամբ նշվելու է Ձեր կողմից տրված մեծ օգնության ու այն մասին, որ Դուք դառնալու եք ապագա ֆիլմի հեղինակակիցներից մեկը:

Ձերն ու անկեղծ բարեններով՝

Վ. Համազասպյան

2. Գ. Եթե դժվար չի լինի՝ կխնդրեիք ուղարկել նկարների մակագրությունը:

Ֆ. 875, ց. 13, 68, թ. 14: Պատճեն: Մեքենագիր:

321. Քեշիշյան Լևոն (1917, Հալեպ - 1984, Նյու Յորք) - Միջազգային լրագրող: Աշխատել է Միավորված Ազգերի Կազմակերպության կառույցում: Աշխատակցել է նաև սփյուռքահայ պարբերական մամուլին:

322. Վաղարշյան Լաերտ Վաղարշի (1922, Կրասնոդար - 2000, Երևան) - Կինոռեժիսոր, սցենարիստ, դասախոս՝ պրոֆեսորի կոչումով, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1976): Կինեմատոգրաֆիական բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայում: 1941թ. աշխատել է Հայֆիլմ կինոստուդիայում (1967-1969թթ.)՝ տնօրեն: Ռեժիսորը և/կամ սցենարիստն է գեղարվեստական և վավերագրական բազմաթիվ ֆիլմերի, այդ թվում՝ «Արամ Խաչատրյան. Արվեստագետ, քաղաքացին» չորսամասնոց վավերագրական ֆիլմի, որն արժանացել է Կինոմ կայացած Հեռուստաֆիլմերի համամիութենական փառատոնի մեծ մրցանակին:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ԼԱՄԱԿԸ Վ. ՄԱՎՅԱՆԻՆ ԻՐԵՆՅ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սիրելի բարեկամ,

Չնայած բավական ժամանակ է անցել իմ վերադարձից, բայց դեռևս Արգենտինայի և Բրազիլիայի տպավորությունների տակ եմ և ավելի շատ այն անմոռանալի օրերի, որ անցկացրիք միասին Բուենոս Այրեսում և Ման Պաուլոյում:

Ես չգիտեմ հաջորդ տարվա ծրագրերիդ և նախագծումներիդ մասին, սակայն ինչպես տեսնում եմ, «Եթե Տերը կամենա», հաճախ պետք է հանդիպենք ոչ միայն Հայրենիքում, այլև արտասահմանում: Մեր միասին լինելը, ես կարծում եմ, լրացնում է մեկս մյուսին և՛ գործերի առումով, և՛, ինչու չէ, նաև հաճելի ժամանցի:

Բուենոս Այրեսի հյուրասիրությունները նայքան մեծ տպավորություն չթողեցին վրաս, որքան այն 1-2 օրերը, որ անցկացրիք միասին այժիկների ռեստորանում կամ մայրաքաղաքի երաժշտական փողոցներում /արգենտինական տանգոների ձայնագրությունները բավականին հաջող են/: Զարմանալիորեն, անքուն գիշերներն իսկ հանգստի էին վերածվում, երբ միասին էինք լինում: Երբեք չեմ մոռանում զեյթունցի Նշան Մխիթարյանի ոսկե պսակի պատմությունը, և կարծում եմ, որ այդ օրը դու ոչ միայն շահեցիր նոր ծանոթություններ հաստատելով և բազմազան տեղեկություններ հավաքելով քո ընտանիքի, ծնողների և մասնավորապես հայրիկիդ³²³ բարության վերաբերյալ, այլ՝ պատմվածքի համար հրաշալի թեմա ձեռք բերեցիր: Ես, որ գրականությունից այնքան էլ հեռու կանգնած մարդ չեմ, բանաստեղծական մեծ ներշնչանքով կգրեի այդ հիանալի պատմությունը ոսկե պսակի մասին, ուր մնաց Վահրամ Մավյանը, որը սփյուռքի բոլոր անկյուններում փնտրում է նման հետաքրքիր նյութեր, առանձին հայերի կենսագրություններ:

Մի խոսքով, ինձ համար դեռ չի պարզվել այն մեծ շփոթը, որ ստեղծվել է կարճ այցելության ժամանակ ստացված տպավորություններից, դիտումներից, հանդիպումներից: Առայժմ հստակորեն հիշում եմ միայն ոսկե պսակը և Ման Պաուլոյի վերջին գիշերը, երբ պաղպաղակ չգտանք «Շիրաստոն» շքեղ օթելի և ոչ մի հարկի ռեստորաններում, ստիպված բավարարվեցինք ձմերուկով, և որպես ձմերուկի մեծ սիրահարներ՝ կերանք անհուն հաճությամբ ու բավականությամբ:

Պարզվեց ինձ համար վերջնականապես նաև այն, որ ուր էլ որ լինես լավ ու գեղեցիկ ընդունելությունների համար, քեզ հետ միասին պետք է լինի սրտիդ անփոխարինելի ընկերը՝ Բվոնը, որին այդքան մեծ սիրով վերջապես սիրեցիր դու՝ թողնելով մեզ հեռվից համակրանքով դիտելու այդ գեղեցիկ սերը:

Հուսով եմ շուտով կտպագրես Հարավային Ամերիկա կատարած առաջին այցելությանդ տպավորությունները: Կցանականայի, որ բոլոր այցելություն-

323. Ջեյթունցի Տեր Հակոբ քահանա Մավյանի ապրած ծանր կյանքի մասին որդին՝ Վահրամը գրել է Նիկոսիայից Բեյրութ՝ Սիմոն Հովհաննիսյանի հղած 1963թ. հուլիսի 21-ի նամակում. նամակը տե՛ս «Գրական թերթ», 4 դեկտեմբերի 2009թ., էջ 7:

ներդ լինեին օգտակար հայապահպանման, համախմբման և հայ ոգու ամրացման գործին: Ինչ-որ տեղ նմանվում էս հայրիկիդ մասին պատմածներին...

Ջերմ բարևներս սիրելի Իվոնին:

Խորին հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 13, գ. 127, թթ. 24-25: Պատճեն: Մեքենագիր:

№ 171

12 փետրվարի 1982թ., Երևան

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՐԻԿԱԴԱՅ ԳՐՈՂ Լ.-2. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆԻՆ
ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի բարեկամ,

Ուրախությամբ կարդացի 7 հունվար 1982 թվակիր նամակը: Մրտագին ողջույնների ու բարի մաղթանքների համար ընդունեցե՛ք իմ անկեղծ շնորհակալությունները:

Սիրելի բարեկամ, շատ եմ ափսոսում, որ Ձեր առողջությունը թույլ չտվեց օգտվելու մեր հրավերներից, հատկապես 1981թ. մարտին մասնակցելու հայրենի գրողների 8-րդ համագումարի աշխատանքներին:

Մայր Հայրենիքում Ձեզ տեսնելու հաճելի առիթը չունեցա:

Ձեր հրավերը վերստին մնում է ուժի մեջ և, եթե առողջական վիճակը ներում է, կարող եք Հայրենիք գալ ցանկացած ժամկետում: Հարկավ, ամենահարմար ժամանակը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներն են: Այստեղ պայմաններ կունենաք Ձեր հանգստի և բուժվելու համար:

Հուսով եմք, որ աշխատում եք նոր ստեղծագործությունների վրա, որոնք շատ պիտի ուրախացնեն անձամբ ինձ և Ձեր արվեստի բազմաթիվ երկրպագուներին:

Մաղթում եմք Ձեզ քաջառողջություն, արևշատություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 73, թ. 35: Պատճեն: Մեքենագիր:

Ռ. ՄԵԼԻՔԻՍ³²⁴ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻՆ՝ ՓՈԽԱՂԱՐՁ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի նախագահ և սիրելի բարեկամ,

Ձեր շատ սիրալիկ մաղթանքներին պատասխանում եմ, ինչպես տեսնում եք, մեծ ուշացումով: Ներող եղեք: Կոկորդի ցավերից տառապում էի և ստիպվեցի վիրահատության ենթարկվել: Հիմա հարկավոր է գյուղ գնալ՝ որոշ ժամանակ հանգստանալու համար:

Թույլ տվեք, խնդրեմ, Ձեզ և Ձեր ընտանիքին հայտնելու հաջողության մաղթանքներ Նոր Տարվա առթիվ, խնդրելու Ձեզ իմ թարգմանը հանդիսանալ Հայաստանի իմ բարեկամների մոտ, որոնց, այս րոպեին, անհատապես գրել ինձ համար դժվար է: Վստահեցրեք նրանց, որ լավագույն տպավորություններ և ջերմ հիշողություններ եմ պահում երկրիս մեջ ստացած ընդունելությունից, լինի դա Ձեր կազմակերպության կամ Գրողների միության կողմից:

Նաև պիտի խնդրեի փոխանցել իմ շնորհավորանքները Շաքե Վարսյանին³²⁵ կառավարական ուշադրության արժանանալու առթիվ: Նա լրագրողի և գրողի իր ամբողջ տաղանդը անմնացորդ նվիրում է: Բարեկամական հատուկ ողջույններս Վահագն Դավթյանին ու Ձեր բոլոր աշխատակիցներին: Ողջույններ գրող և բանաստեղծ իմ բարեկամներին՝ Սիլվա Կապուտիկյանին, Մետաքսեին,³²⁶ Վարդգես Պետրոսյանին,³²⁷ Ալաջաջյանին,³²⁸ Սաղաթել Հարությունյանին³²⁹ և բոլորին ու բոլորին: Բարի եղեք բարեխոսել նրանց, որ ներող լինեն առանձին-առանձին գրել չկարողանալու համար: Անմիջապես, որ ինձ

324. Մելիք (Մելիք-Մինայանց) Ռուբեն Լևոնի (ծն. 1921, Փարիզ) – Խրանսահայ բանաստեղծ: Հայերենը սովորել է ընտանիքում: Բարձրագույն կրթությունն ստացել է Սորբոնի համալսարանում: Ստեղծագործել է ֆրանսերեն, որոշ ստեղծագործություններ հորինել է հայկական թեմաներով: Ունի բանաստեղծությունների մի շարք ժողովածուներ:

325. Վարսյան Շաքե Հակոբի (իսկական անունով՝ Բոյաջյան Վարսենիկ, 1925, Նիկոսիա – 1996, Երևան) – Ավարտել է Կիպրոսի Մեղգոնյան կրթական հաստատությունը, հայրենադարձվել: ՀԽՍՀ վաստակավոր լրագրող, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի սփյուռքի բաժնի վարիչ:

326. Մետաքսե (Պողոսյան Մետաքսե Մերոբի) (ծն. 1928, գյուղ Եզանլար, այժմ՝ Արևշատ, Արթիկի շրջան) – Բանաստեղծուհի: Ավարտել է Երևանի խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական և Մոսկվայի Մ. Գորկու անվան Գրականության ինստիտուտները: Ունի բանաստեղծական շարքեր, պոեմներ: Ստեղծագործությունների մի մասը թարգմանաբար լույս է տեսել օտար լեզուներով:

327. Պետրոսյան Վարդգես Համազասպի (1932, Աշտարակ – 1994, Երևան, թաղված է Աշտարակում) – Գրող, հրապարակագիր, խմբագիր, հասարակական գործիչ: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը: Աշխատակցել է մի շարք պարբերականների, 1966-1975թթ. եղել է «Գարուն» ամսագրի գլխավոր խմբագիրը, 1975-1981թթ. Հայաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղարը, 1981-1988թթ.՝ նախագահը:

328. Ալաջաջյան Ստեփան Եղիայի (1924, Հալեպ – 2010, Լոս Անջելես) – Գրող, գրականագետ, խմբագիր, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1970): Աշխատակցել է պարբերականների, 1967-1975թթ. եղել է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: Ստեղծագործել է առավելաբար պատմվածքներ և վիպակներ:

329. Հարությունյան Սաղաթել Մամիկոնի (1921, գյուղ Մոլլա Բայազետ, այժմ՝ Բամբակաշատ, Արմավիրի շրջան – 2005, Երևան) – Բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1968): Ավարտել է Երևանի խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտը: Աշխատակցել է մի շարք պարբերականների:

լավ զգամ ու ավելի լավ լսեմ, աշխատելու եմ ինձ վերստին տեսնել այդ եղբայրական շրջապատում և վայելել, սիրելի բարեկամ, Ձեր և բոլորի ասպնջակա-նությունը:

Մինչ այդ, խնդրեմ ընդունել իմ լավագույն և սրտագին ողջույններիս հավաստիքը:

Ռուբեն Մելիք

Ֆ. 875, ց. 14, գ. 132, թ. 21: Թարգմանություն ֆրանսերենից:

1978-1994թթ. եղել է Հայաստանի Գրողների միության վարչության քարտուղար: Հեղինակ է բանաստեղծական ժողովածուների, պատմվածքների, վիպակների և պիեսների:

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿ Կ. ՀԱՄԱՉԱՄՊՅԱՆԻ ՓՈԽԱՂԱՐՉ ԿԱՊԵՐԻ ԵՎ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Միրելի ընկ. Համագասպեան,

Ստացած եմ Ձեր եւ ընկ. Միքայելեանի³³⁰ նամակը, որ մեծ ուրախություն պատճառեցին ինձի: Ներողամիտ եղե՛ք, որ չկարողացայ նոր տարւոան քարտ ուղարկել Ձեզի, որովհետեւ նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներուն Եւրոպա կը գտնուէի:

Դէպի Սպանիա ճամբորդութիւնս շատ յաջող էր: Հոն ակադեմիայի նախագահին հետ շահեկան ծրագիրներ մշակեցինք:

Կ'ուզեմ ձեզի տեղեակ պահել նաեւ զգայացունց պատահար մը: Սպանիա գտնուած միջոցիս, տեղացիները նոր յայտնաբերած էին կարծես Հայկական Հարցը, եւ հայկական ջարդերը, այս ալ շնորհիւ Հայկական Գաղտնի Բանակի³³¹ գործունէութեան Եւրոպայի մէջ: Հեռուստատեսիլէն ելոյթ ունեցաւ «EL PUEBLO» թերթին փոխտնօրէնը, պր. JOSE ANTONIO GURRIARAN, ինքնին գոհ մը ըլլալով հայերու կողմէ դրուած ռուբերէն մէկուն, որուն հետեւանքով ոտքերը վնասուած են: Հակառակ անոր, այս մարդը մէկ հիմնական անձնափոխութեամբ ինքզինքը նուիրած է հայերու արդար դատին եւ սկսած է պրպտել եւ ուսումնասիրել հայոց պատմութիւնը: Տարբեր լեզուներով կարողացած է մօտ 150 գիրքեր եւ այժմ հայութեան կատարեալ սիրահար-հիացող մըն է: Իր տպաւորութիւնը գրած է հայութեան մասին, եւ Սպանիա ամէնէն մեծ հրատարակչական տունէրէն մէկը՝ «PLANETA» յանձն առած է մեծ տպաքանակով հրատարակել:³³²

Ես տեսակցեցայ այս անձին հետ: Նա լաւատեղեակ էր իմ մասին, քանի որ հայկական թերթեր ու պարբերաթերթեր կը ստանայ: Հիացումով, խորունկ բարեկամութիւն մը սկսանք մշակել:

Իմացայ, որ հրատարակուելիք գիրքը մեծ բաշխումով պիտի տարածուի բոլոր սպանախօս երկրներու մէջ, մեծ աղմուկ ու հետաքրքրութիւն պիտի յառաջ բերէ հեղինակը, սակայն համաձայն չեմ, որ գիրքը հրատարակուի առանց որ նախ Հայաստան այցելէ: Կ'ուզէ Հայաստանի իր ապրումներն ալ պարփակել իր գիրքին մէջ: Անցեալ շաբաթ հեռաձայնով կանչեց տունս Սպանիայէն եւ խնդ-

330. Կարլեն Միքայելեան՝ Կ. Համագասպայանի տեղակալներից:

331. Այսպէս է բնագրում: Ճիշտն է՝ Հայաստանի ազտագրության հայ գաղտնի բանակ (ծանոթ է նաև օտար անվան հապավումով՝ ԱՍԱԱ): Ռազմաքաղաքական կազմակերպություն: Հիմնվել է Բեյրութում՝ 1975թ. հունվարի 20-ին: Հատկանշվել է թուրքական և արևմտյան պետությունների թիրախների դեմ կատարած զինյալ գործողություններով:

332. 1980թ. դեկտեմբերի 29-ին Մադրիդում Շվեյցարական ավիաուղիների գրասենյակի մոտակայքում տեղադրված ռուբրի պայթյունից խոսե Անտոնիո Գուրրիարանի երկու ոտքերը մեծապես վնասվեցին: Դա եղավ խթան, որպեսզի իսպանացի լրագրողը հետաքրքրվի հայոց պատմությամբ՝ հասկանալու բռնարարքի դրդապատճառները: Իրեն պատուհասած ողբերգության և ԱՍԱԱ-ի մարտիկների հետ Լիբանանում իր հանդիպումների մասին Գուրրիարանը գրել է 1982թ. Մադրիդում առաջին անգամ լույս տեսած և առ այսօր տասն անգամ իսպաներենով վերահրատարակված «Լա բոմբա» («Ռումբը») գրքում: Շուշան Միրունյանի հայերեն թարգմանությամբ՝ այդ ինքնապատումը 2011թ. լույս տեսավ Երևանում:

րեց, որ իր փափաքը Ձեզի փոխանցեմ: Իմ թելադրութիւնն այն է, որ ան շուտով հրաւիրուի Հայրենիք, որպէսզի իր սէրը հայութեան համար ստանայ մարմին եւ հող: Վստահ եմ, որ մեծ արձագանգ կ'ունենայ իր այցելութիւնը եւրոպական մամուլին մէջ: Քանի որ ֆիզիքական տկարութիւն ունի, կ'ուզէ Հայրենիք այցը կատարել իրեն օգնական ընկերակիցի հետ: Յոյսով եմ, որ այս առիթը կ'օգտագործուի Հայրենիքի սիրոյն համար:³³³

Ընկեր Միքայելեանի նամակէն չկրցայ յստակ հասկնալ Կարէն Միմոնեանի³³⁴ այցելութեան հարցը: Ինչպէս համաձայնած էինք ես կը ստանձնեմ հիւրասիրութիւնը, բայց Կոմիտէն պիտի հոգար երթեւեկը: Կը յուսամ լուսաբանուիլ այս մասին:

Իսկ միւս զարդեղէններուս մասին, կը փափաքիմ 1983-ի ընթացքին այցելել Հայրենիք զաւակիս հետ (զինք կ'ուզեմ մկրտել Էջմիածին): Եթէ հնարաւոր է, պիտի ուզէի, որ համալսարանի գրական ամպիոնը հրաւեր դրկեր Ձեր միջոցաւ, որ գոնէ ամիսով մը արդի բանաստեղծութեան հոսանքները դասաւանդէի:

Կը մնամ անհամբեր Ձեր լուրերուն սպասող,

Սիրով ու կարօտով՝

Այլսա

Ֆ. 875, ց. 14, գ. 73, թթ. 72-73: Ինքնագիր:

333. Նշված է հասցեն:

334. Միմոնյան Կարեն Արամի (ծն. 1936, Երևան) – Արձակագիր, թատերագիր, թարգմանիչ, խմբագիր և հասարակական գործիչ: Ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենագիտության ֆակուլտետը: Աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում, «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրում (1975-1982՝ գլխավոր խմբագիր), 1982թ.ից՝ «Սովետական Հայաստան» (1989թ. առաջին համարից՝ «Վերածնված Հայաստան») ամսագրի խմբագրությունում իբրև գլխ. խմբագրի տեղակալ, այնուհետև՝ գլխ. խմբագիր: 1989-1991թթ. եղել է ՀԽՍՀ (ՀՀ) Նախարարների խորհրդին առընթեր Մամուլի պետական կոմիտեի նախագահ: 1992թ.ից ապրում է Փարիզում:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՒՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ Հ. ՃԵԼԱԼՅԱՆԻՆ՝³³⁵
 ՆՐԱ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ ԳԱԼՈՒ
 ՀՐԱՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի բարեկամ,

Ստացանք 18 հունվարի թվակիր նամակը՝ որով տեղյակ եք պահում ապրիլ ամսին Հայաստան գալու Ձեր ցանկության մասին:

Կոմիտեն հրավիրում է Ձեզ և Ձեր տիկնոջը Հայրենիք, որպես իր հյուրը, 10 օրով: Այցելության օրերին հնարավորություն կունենաք Ձեր բերած ազգագրական իրերը անձամբ նվիրաբերելու Սարդարապատի թանգարանին, ինչպես նաև մոտիկից ծանոթանալու Հայրենիքի նվաճումներին մշակութային և այլ բնագավառներում:

Ճանապարհածախսը մինչև Երևան պետք է հոգաք Դուք, իսկ վերադարձի տոմսակը և տեղում կատարվելիք բոլոր ծախսերը կհոգա Կոմիտեն:

Ինչպես արդեն գրել էինք մեր նախորդ նամակում, Մոսկվայում Ձեզ կդիմավորի մեր ներկայացուցիչը: Ինչ վերաբերվում է տեղի /Աթենք/ օդանավակայանի դժվարություններին, ցավոք Ձեզ օգնել չենք կարող:

Խորհուրդ կտայինք, սակայն, դիմել ՄՍՀՄ դեսպանության աշխատակից ընկեր Մարտիկյանին: Թերևս նա կարողանա որևէ ձևով օգտակար լինել Ձեզ:

Կիսնդեինք գալու մասին նախօրոք հեռագրով տեղյակ պահել մեզ:

Մինչ շուտափույթ հանդիպում Հայրենիքում:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Հ. Գ. Մուսքի վիզայի համար պետք է դիմեք ՄՍՀՄ դեսպանություն:

Նույն

Ֆ. 875, ց. 14, գ. 130, թ. 71: Պատճեն: Սեբեմագիր:

335. Ճելալյան Հակոբ – Հունահայ հավաքորդ և հասարակական գործիչ: Ունեցել է հայկական և համաշխարհային պատմա-մշակութային նյութական արժեքների վիթխարի հավաքածուներ, որոնց վաճառքն էր իրականացնում Աթենքի կենտրոնում գտնվող իր անտիկվարիատի խանութում:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՅԻ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ՝ ՓՈԽԱԴԱՐՁ
 ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Սիրելի Ալիսա,

Ժամանակին ստացել ենք հունվար 15 թվակիր նամակդ, որը մեծ ուրախություն պատճառեց մեզ: Հաճելի էր գիտենալ, որ անցնող նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ուղևորության մեջ եք գտնվել Իսպանիայում, ուր հետաքրքիր պատեհություն եք ունեցել ծանոթանալու պրն. Խոսե Գուրրիարանի հետ: Սիրելի Ալիսա, մեզ համար անշուշտ հաճելի կլինեք գոհացում տալ խնդրանքիդ և Հայաստան հրավիրել Գուրրիարանին, սակայն Ձեզ պետք է հայտնի լինի, որ մեր կոմիտեն իրավունք ունի Հայաստան հրավիրել միայն սփյուռքում ապրող հայերին. օտարներին Հայաստան հրավիրելու հարցը մեր իրավասությունից դուրս է: Եթե պրն. Գուրրիարանը տուրիստի հանգամանքով այցելի Հայաստան, մենք մեր հնարավորության սահմաններում կանենք ամեն ինչ, որպեսզի նրա՝ Հայաստանի և հայ ժողովրդի մասին ունեցած պատկերացումները լրացվեն և ամբողջացվեն:³³⁶

Սիրով տեղեկացանք, որ մտադիր եք 1983 թվականի ընթացքում այցելել Հայաստան: Ցավոք, համալսարանի միջոցով այդ հրավերն իրականացնելը կապված է որոշ դժվարությունների հետ: Մենք կաշխատենք Ձեզ հրավիրել որպես մեր կոմիտեի հյուր և այդ այցելության ընթացքում կազմակերպել Ձեր դասախոսությունները համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողության համար:

Գալով Կարեն Սիմոնյանի՝ Ձեր հրավերով ԱՄՆ այցելության խնդրին, ապա նա կարող է ընդունել այդ հրավերը և այցելել ԱՄՆ որպես Ձեր անձնական հյուրը: Իսկ անձնական հանգամանքով արտասահման մեկնողների երթևեկության ծախսերը Կոմիտեն, բնականաբար, հոգալ չի կարող:

Բանաստեղծ Վահագն Դավթյանը, որը, ինչպես գիտեք, ներկայումս խմբագրում է «Սովետական Հայաստան» ամսագիրը, խնդրեց իր ջերմ բարևները հաղորդել Ձեզ և միաժամանակ ցանկություն հայտնեց ունենալ քո վերջին բանաստեղծություններից՝ ամսագրում տպագրելու համար:

Ես կարծում եմ, որ Դուք մշտապես ստեղծագործական վերելք եք ապրում և այդ ճանապարհի գործերը հարազատ ժողովրդին հասցնելը նոր փայլ կբերի Ձեր անվանը:

Ձերմ բարևներով՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 73, թթ. 70-71: Պատճեն: Սեբեմագիր:

336. Խոսե Անտոնիո Գուրրիարանը Հայաստանի Հանրապետություն առաջին անգամ այցելեց 2007թ.:

Վ. ՀԱՄԱՉԱՍՏՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՄԱՎՅԱՆԻՆ ՓՈԽԱՂԱՐՁ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Սիրելի բարեկամ,

Ինչպես արդեն գրել եմ նախորդ նամակում, ինձ համար անմոռաց են հաճախվածներիկյան այցելության ընթացքում Իվոնի և Ջեզ հետ ունեցած հանդիպումները՝ թերևս այս ճամփորդության ամենահաճելի և ուրախալի պահերը:

Անչափ զգացված եմ Բրազիլիայում ունեցած ելույթս գնահատող ջերմ խոսքերից: Իմ տպավորությունները «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի միջոցով հանձնեցի ընթերցողների ուշադրությանը:

Այս տարի նախատեսել ենք Կոմիտեից որևէ մեկի այցելությունը դեպի «Լիզպոն»: Ի՞նչ մեղքս թաքցնեմ, ես ինքս էի ցանկանում լինել և մոտիկից ծանոթանալ Գյուլբենկյան հիմնարկության գործունեությանը, սակայն մի շարք անհետաձգելի ուղևորություններ ունեմ, հավանական և անհավանական:

Նպատակահարմար գտանք գործուղել Վահագն Դավթյանին: Վեջինիս այցելությունը թե՛ որպես գրողի և թե՛ որպես «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրի ու Կոմիտեի նախագահության անդամի շատ օգտակար կլինի հայրենիքի և Գյուլբենկյան հիմնարկության գործունեության հետագա լուսաբանման համար, ինչպես նաև գեղարվեստական բարձրաժեղ գործեր ստեղծելու նոր նյութ կտա:

Մեծապես շնորհակալ կլինենք, եթե Ջեզանից մեկը՝ Ռոբերտը կամ Դուք ուղարկեիք հաստատության հրավերը՝ պաշտոնական ձևակերպումները կատարելու համար:

Եթե հիշում եք՝ մեր հանդիպման ժամանակ բավական երկար զրուցեցինք Ռոբերտի և Ջեզ, կանանց հետ միասին, Հայրենիք այցելության մասին:

Ի՞նչ մտադրություններ ունեք, կցանկանայի՞ք արդյոք, այս տարի աշնանը գալ: Ես անձամբ շատ ուրախ կլինեի, եթե Իվոնը և Դուք զիջեիք իջնել Սան Պաուլոյի առաջնակարգ հյուրանոցի 46-րդ հարկից մինչև Ջերմուկ և այս տարվա հանգիստը, մեր հյուրընկալությամբ, անցկացնեիք Հայրենիքում:

Կարծում եմ, մեզ մոտ կգտնեք պաղպաղակը, որը չկարողացաք գտնել փառահեղ օթելի ռեստորանում...

Շնորհակալությամբ ստացանք 1982 թվականի Գյուլբենկյան հատկացումների մասին գրությունը և, հավանաբար մոտ ապագայում կուղարկենք պատվերները, այս անգամ՝ բավական ճշտված:

Ուրախ եղանք իմանալով, որ Դանիել Վարուժանի դիմաքանդակի կապակցությամբ հարաբերության մեջ եք մտել բրուսելաբնակ տիկին Հասմիկ-Ժանին Կարապետյանի հետ: Մայիսի սկզբներին Բելգիա պետք է մեկնի Կոմիտեի ներկայացուցիչների փոքրիկ խումբը, հավանաբար նաև Ինգա Նազարյանը: Տեղում կհանդիպեն տիկին Կարապետյանին և կճշտեն քանդակի փոխադրության հարցը:

Ջերմ ողջույններս սիրելի Իվոնին:

Հարգանքներով՝

Վ. Համազասպյան

Հ. Գ. Դժվարանում ենք ասել, թե «Կենսագրական բառարանի» 2-րդ հատորը ինչո՞ւ մինչև օրս չէք ստացել: Օրերս կրկին ուղարկեցինք մեկ օրինակ նշված բառարանից, ինչպես նաև «Գրականագիտական բառարան»:

Շուտով կառաքենք նաև Հանրագիտարանի 7-րդ հատորը:

«Հայկազյան բառարանի» Բ հատորը դեռևս չի հրատարկվել:

Նույն

Ֆ. 875, ց. 13, գ. 127, թթ. 26-27: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱՉԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԲԸՄ-Ի ՇՎԵՅՑԱՐԱՎԱՆ ԻՐԱՎԱՎԻՃԱԿԻ
ՊԱՏՎԱԿԱԼ ՎԱՐԻՉ-ՊԱՏՎԻՐԱԿ Ա. ՉԱՔԵՐԹԵՆԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿՏԱԿՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգարժան պր. Արա Չամբերթեն,

Տարիներ առաջ Կոմիտեն որոշ տեղեկություններ է ստացել Հայկական Բարեգործական ընդհանուր միությունից՝ Հայաստանին վերաբերող կտակների մասին և այդ առիթով ժամանակին նամակ է գրել Բարեգործականի մեծարգո նախագահ Ալեք Մանուկյանին:

Ցավոք, հետագայում հնարավորություն չենք ունեցել հանդիպելու և հանգամանորեն խոսելու այս հարցերի շուրջ:

Քանի որ, Բարեգործականի ընդհանուր ժողովի որոշման համաձայն ստեղծված Շվեյցարական իրավավիճակը պետք է զբաղվի նաև Հայաստանին վերաբերող կտակների իրականացման հարցերով, հարկ ենք համարում, որ պետքի առաջիկա ժողովում, եթե հնարավոր է, հանգամանորեն քննարկվի այդ կտակների օգտագործման միջոցների հարցը: Անհրաժեշտ է կոնկրետ որոշում ընդունել Հայաստանի մշակութային, ուսումնական-կրթական հաստատություններին, կտակարարների կամքով, նախկինում պատկանող հատկացումների վերաբերյալ:

Նկատի պետք է ունենալ այն հանգամանքը, որ Հայաստանի կրթական և ուսումնական հաստատությունները, որոնք անցյալում օգտվել են այդ կտակներից, վերջին շրջանում հաճախ են դիմում մեզ՝ իրենց պատկանող կտակների օգտագործման և հասանելիքի հնարավորությունների առթիվ, ինչպես նաև այն, որ այդ հաստատությունները իրենց աշխատանքի ծավալման հետևանքով մեծ պահանջ ունեն գիտատեխնիկական և արտասահմանյան սարքավորումների: Այդ պատճառով Ձեզ ենք ուղղում այս նամակը, քանզի համագումարի որոշման համաձայն՝ Հայաստանին վերաբերող կտակների գումարները պետք է ամբողջովին տեղափոխվեն Շվեյցարական իրավավիճակին, որպեսզի հնարավոր լինեն դրանք օգտագործել հայրենի հաստատությունների համար:

Որքան էլ անցած տարիների ընթացքում դժվարությունների և բարդությունների է հանդիպել Բարեգործականը որոշ կտակների իրականացման ճանապարհին, այնուամենայնիվ նա մշտապես հավատարիմ է մնացել իր հիմնադրի՝ Պողոս Նուբարի սկզբունքներին՝ Հայրենիքի հանդեպ մշակութային վերելքի ուղեգծին:

Մենք շատ գոհ կլինենք, եթե այդ հարցը քննարկվեր Ալեք Մանուկյանի ներկայությամբ, որովհետև նա եղել է այդ գործի նախաձեռնողը, իրականացնողը և քաջատեղյակը բոլոր կտակների ու օրենքների:

Ալեք Մանուկյանն իր բարոյական և նյութական աջակցությամբ մշտապես նպաստել է ազգաշեն գործին: Հավատացած ենք, այս հարցին նույնպես կանդորադառնա ու կտա անհրաժեշտ ընթացք:

Օգտվելով Բարեգործականի Կենտրոնական վարչության անդամ Ռոմե

Ջրբաշյանի³³⁷ Հայաստանում գտնվելու պատեհ առիթից, նամակը ուղարկում ենք նրա միջոցով:

Ընդունեցե՛ք հաջողության մեր լավագույն մաղթանքները:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 13, գ. 130, թթ. 24-25: Պատճեն: Մեքենագիր:

337. Ջրբաշյան Ռոմե – Նույն Կարպիս Ջրբաշյանն է, որը ֆրանսիական շրջանակներում ծանոթ էր Ռոմե անունով: Կարպիս Ջրբաշյանի մասին տե՛ս թիվ 214 ծանոթագրությունը:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄ «ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ» ԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԿԱԶՄԻ ՆՈՐԱՅՄԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Անցած տարիների ընթացքում «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագրական կոլեգիայի անդամներից չորսը մահացել են, երկուսն ընդգրկվել «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրական կոլեգիայի կազմում, իսկ երկուսն անցել են այլ բնության աշխատանքի, ուստի և անհրաժեշտություն է դարձել վերանայել կոլեգիայի կազմը:

ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի հաստատման ենթ ներկայացնում «Հայրենիքի ձայն» թերթի խմբագրական կոլեգիայի նորացված կազմը, որ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահության հավանությանն է արժանացել:

Զաքարյան Լևոն Հովհաննեսի – Գլխավոր խմբագիր

Բաղդասարյան Սպարտակ Բենիամինի – Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի տեղակալ

Գասպարյան Գոհար Միքայելի – ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի

Զարդարյան Հովհաննես Մկրտիչի – Հայկ. ՍՍՀ ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի թղթակից-անդամ

Խանզադյան Սերո Դիկուլայի – գրող

Հարությունյան Վարագդատ Մարտիրոսի – Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, Հայկ. ՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ

Հովհաննիսյան Էդգար Սերգեյի – կոմպոզիտոր, Հայկ. ՍՍՀ ժող. արտիստ

Ղազանչյան Ռաֆայել Հովհաննեսի – գլխավոր խմբագրի տեղակալ

Մաթևոսյան Հրաչյա Իգնատի – թերթի պատասխանատու քարտուղար

Վարդանյան Յուրի Նորայրի – ծանրորդ, ՍՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ

Վարսյան Շաքե Հակոբի – վաստակավոր լրագրող, խմբագրության սփյուռքի բաժնի վարիչ

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 23, ք. 2: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՖԻԶՆՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Դ. Կ. ՈՒԱՅՈՐԴՐԱԾԻՆ՝
Վ. ՍԱՐԴՅԱՆԻ ԱՃՅՈՒՆԱՍՏՈՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՈՒ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգարժան պրն. Ուայթիրսթ,

Հաճույքն ունեինք ստանալու Ձեր կողմից հղված ուղերձը՝ գրված մեծ ֆրեզնոցի և ժամանակի ակնավոր գրող Վիլյամ Սարոյանի աճյունաստեղծությունը Երևան փոխադրելու կապակցությամբ:

Ձեր ջերմ ողջույններն ու լավագույն ցանկությունները ընթերցվեցին աճյունաստեղծությունը հողին հանձնելու արարողության ժամանակ,³³⁸ այն հազարավոր մարդկանց, որոնք եկել էին պանթեոն՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու և վերջին հրաժեշտը տալու մեր ժողովրդի մեծ գավակ Վիլյամ Սարոյանին:

Ֆրեզնո քաղաքի թատրոնը Սարոյանի անվամբ կոչելու լուրը ժողովուրդն ընդունեց մեծ ոգևորությամբ և բարձր գնահատանքով:

Թող Ձեզ հայտնի լինի, որ Վիլյամ Սարոյանի աճյունաստեղծությունը հողին հանձնեցինք համաձայն իր վերջին ցանկության: Այժմ, որ նրա աճյունները հանգչում են Ամերիկայում և Հայաստանում, մենք կարող ենք մեզ հանգիստ զգալ, որ մեծագույն գրողի ցանկությունը պատվով ի կատար է ածված:

Ցավում ենք, որ Դուք ներկա չգտնվեցիք այդ մեծ համաժողովրդական արարողությանը, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության պետական, կուսակցական ղեկավարները՝ Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը՝ իր գործակիցներով, վարչապետ Ֆադեյ Սարգսյանը՝ իր տեղակալներով և նախարարներով, ինչպես նաև հասարակայնության, մշակութի նշանավոր գործիչներ, գրողներ, Ֆրեզնո քաղաքից ժամանած հատուկ պատվիրակությունը: Մենք մեծ ափսոսանք զգացինք, որ Դուք չէիք գլխավորում այդ պատվիրակությունը, որովհետև Սարոյանը ինքը ոչ միայն ծնվել, այլև իր ողջ մանկությունը, պատանեկությունը և ծերությունը անց էր կացրել Ֆրեզնոյում, մինչև վերջ էլ մնալով իր քաղաքի մեծագույն քաղաքացին: Երևի երբեմնի Ֆրեզնոյի փողոցներում վազող ցրիչ Վիլյամի մտքով չէր անցել, որ Ֆրեզնոյի հիանալի թատրոնը, որի դռներից ակնածանքով էր ներս մտել, մի օր պետք է կոչվի իր անվամբ: Եվ այդ հավերժացումը եղավ Ձեր շնորհիվ, որը մեկ անգամ ևս վկայում է Ձեր սերն ու հարգանքն այն մարդու նկատմամբ, որը ժողովուրդների միջև բարություն, բարեկամություն և խաղաղություն էր քարոզում:

Հայաստանի կառավարությունը ըստ արժանվույն է գնահատել ու գնահատում է Վիլյամ Սարոյանին՝ որպես աշխարհի խոշորագույն գրողներից մեկի և նրա անվան հավերժացման համար նույնպես իր բաժինը կբերի: Առաջիկա տարում նրա գերեզմանը կձևավորվի ազգային ոճով կերտված շիրմաքարով, ոճ, որն այնքան հարազատ էր Սարոյանի ոգուն: Եվ մենք շատ ուրախ կլինենք, հարգելի պրն. Ուայթիրսթ, եթե շիրմաքարի ավարտման ժամանակ Դուք կարողանայիք մեկ անգամ ևս այցելել Հայաստան, այս անգամ արդեն ոչ միայն

338. Վիլյամ Սարոյանի աճյունի մի մասը պարունակող սափորը Երևանի Կոմիտասի անվան գրոսայգու պանթեոնում հայրենի հողին հանձնվեց 1982թ. մայիսի 29-ին:

Ձեր տիկնոջ, այլև Վիլյամի որդու՝ Արամի և դստեր՝ Լուսիի հետ միասին: Այդ ժամանակ Դուք առիթ կունենայիք շատ ավելի մոտիկից ճանաչելու հայ ժողովրդին, ոչ միայն նրա բաժակաճառերով, այլև նրա իսկական հնադարյա մշակույթով և ստեղծագործ աշխատանքով:

Կցանկանայի Ձեզ և Ձեր ազնիվ տիկնոջն՝ առաջին հերթին քաջառողջություն և տոկունություն մաղթել: Թող աշխարհում լինի հավերժ խաղաղություն ու սովետական և ամերիկյան ժողովուրդների միջև մշտապես բարեկամություն:

Ընդունեցե՛ք հարգանքներիս հավաստիքը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 72, թթ. 37-38: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԶԻԿԱԳՈՅԱԲՆԱԿ ՊՐՈՖԵՍՈՐ Լ. ԹՈՓՈՒԶՅԱՆԻ՝³³⁹
ՀԱՅՐԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՐԱ ԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի պրոֆ. Լ. Թովուզյան,

Թեև մեր վերջին հանդիպումից բավական ժամանակ է անցել, սակայն հաճախ ենք վերհիշում այն և Ձեր նախանձախնդրությունը, որ հանդես եք բերում օգտակար լինելու հայրենի բժշկական հաստատություններին:

Հանրապետական հիվանդանոցի տնօրինությունը բազմիցս շնորհակալությամբ նշել է սույն փաստը:

Հուսով եմ, որ Դուք և Ձեր բարեկամները բարեհաջող վերադարձել եք և նոր նվիրումով ձեռնամուխ եղել հայրենանպաստ նոր ձեռնարկումների:

Օրերս Հանրապետական հիվանդանոցի ղեկավարությունը շնորհակալությամբ վերստին անդրադարձավ Ձեր նվիրատվությանը, հատկապես «Կուլխիցին»-ին, որի շնորհիվ Երևանյան հիվանդությամբ տառապող բազմաթիվ հայրենակիցներ բուժման լավագույն ընթացքի մեջ են:

Նկատի ունենալով սույն հանգամանքը և Ձեր հայրենասիրական պատրաստակամությունը, Հանրապետական հիվանդանոցը և մեր կոմիտեն խնդրում են հիշյալ նպատակով վերստին Հայրենիք առաքել «Կուլխիցին»:

Խնդրում եմ մեր ողջույնները փոխանցեք Ձեր շատ հարգելի բարեկամներին և հատկապես Ձեր տիկնոջը:

Հայրենական լավագույն ողջույններով և հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 88, թ. 8: Պատճեն: Մեքենագիր:

339. Թովուզյան Լևոն Գրիգորի – Օրթոպեդիկ վիրաբույժ, պրոֆեսոր:

Վ. ՀԱՄԱՁԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆ՝ ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

1970 թվականից ի վեր ավանդույթ է դարձել ամերիկահայ էջմիածնական թեմին պատկանող եկեղեցասիրաց երիտասարդական խմբի 20-օրյա այցելությունը Հայաստան: Հայրենիքում գտնվելու օրերին Կոմիտեն նրանց համար կազմակերպում է դասախոսությունների հատուկ շարք նվիրված Մովսեսական Հայաստանի տնտեսական, մշակութային ու գիտական կյանքում ձեռք բերված նվաճումներին: Հատուկ ժամեր են նվիրվում հայոց լեզվի, հայկական պարերի և երգերի ուսուցմանը: Նրանք լինում են Հայաստանի տեսարժան վայրերում, խանդավառված Հայրենիքով՝ վերադառնում և շատ ավելի մոտիկից կապվում հայկական կյանքին ու Հայրենիքի հետ:

Խմբի ճանապարհածախսը իրենց հաշվին է, իսկ տեղում կատարվող ծախսերը հոգում է Էջմիածնի եկեղեցին՝ նրանց տեղավորելով Հայկաշենի ամառանոցում:

Այս տարվա սկզբներին Վազգեն Ա կաթողիկոսը ընդառաջելով Կիլիկյան թեմի խնդրանքներին, խոստացել է նույն պայմաններով ընդունել նրանց 21 հոգուց բաղկացած երիտասարդական խմբին, նկատի ունենալով, որ այդ խմբի այցելությունը լայն արձագանք կգտնի ԱՄՆ-ի հայ գաղութում և դրանով ավելի կբարձրանա էջմիածնական թեմի հեղինակությունը:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 23, թ. 4: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱՁԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՖՐԱՆՍԱԿԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԹԱԹԻՎՅԱՆԻՆ ՓՈԽԱՐԱՐՁ
ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգարժան բարեկամ,

Մաշտոցի անվան Մատենադարանի փոխտնօրեն Բաբկեն Չուբասզյանը³⁴⁰ պատմեց Մշակութային ընկերների հետ ունեցած հանդիպումների մասին:

Գոհունակությամբ տեղեկացանք նաև, որ Միությունը կազմակերպել է ընկ. Չուբասզյանի հետաքրքիր և շահեկան դասախոսությունը մեր հայրենակիցների համար:

Ուշադրությամբ ծանոթացանք ավյուրքահայ դպրոցականներին Հայրենիք հրավիրելու կապակցությամբ վարժարանների տնօրինություններին և ծնողներին ուղարկած Ձեր շրջաբերականներին:

Կիսնդրեինք երեխաների ընտրության հարցում առաջնորդվել լավագույն առաջադիմության ցուցանիշներով, առաջին հերթին՝ հայոց լեզվի, գրականության և պատմության առարկաներից:

Լավ կլիներ տեղեր տրվեին նաև կիրակնօրյա վարժարաններին:

Հուսով ենք, որ այս տարի հատուկ ուշադրությամբ կընտրվեն երեխաները և ղեկավարը:

Մեզ զարմացրեց Ձեր դժգոհությունը դեսպանության աշխատակցին՝ անցյալ տարվա ճամբարային կյանքի, հատկապես սննդի, էքսկուրսիաների կազմակերպման և երեխաների հետ շփումների վերաբերյալ:

Ձեզ հայտնի էր, որ անցյալ տարիների մեղքը ոչ այնքան Մոսկվայի ընկերներին է, որքան Ձերը, քանի որ ժամանակին չէիք ներկայացրել ցուցակը՝ տոմսերը ապահովելու համար:

Չիմանալ, թե ինչ ճամբարներում են տեղավորվել Ձեր երեխաները և բողոքել, նշանակում է տեղյակ չլինել մեր ճամբարային կյանքի պայմաններին:

Ֆրանսահայ երեխաները տեղավորվել են «Արտեկ» միջազգային ճամբարում, ուր հանգստանում են 800 երեխա: «Արտեկ»-ի ճամբարային կյանքն իր քննությունը տվել է և ճանաչվել հանրապետության լավագույնը ամեն տեսակետից:

Տարօրինակ է, որ անցյալ տարվա մեր դժգոհությունը կոնտինգենտի նկատմամբ տարբեր ճանապարհով ներկայացվում է մեզ և այն էլ Մշակութային ընկերների կողմից, որոնք տասնյակ անգամներ և՛ գրավոր, և՛ բանավոր շնորհակալություններ են հայտնել ամառային հանգստի կապակցությամբ և մշտապես խնդրել ավելացնել հրավիրյալների թիվը:

340. Չուբասզյան Բաբկեն Լևոնի (1923, Թավրիզ - 1997, Երևան) - Բանասեր, արևելագետ, բանասիրական գիտությունների թեկնածու (1962), ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1984): Աշխատել է Երևանի պետական համալսարանի հրատարակչությունում, 1965 - 1994թթ.՝ Մաշտոցի անվան Մատենադարանում, որպես փոխտնօրեն: Զբաղվել է պարսկական մշակույթի, հայ-իրանական առնչությունների, բնագրերի հայտնաբերման և հրատարակման խնդիրներով, հեղինակել է բազմաթիվ ուսումնասիրություններ և «Հայրենադարձ իրանահայ դեմքեր» կենսագրական բառարանը:

Պատճառն, անշուշտ, եղել է այն, որ երեխաները անմոռանալի հիշողություններով են վերադարձել Հայրենիքից, իրենց տպավորություններին հաղորդակից դարձրել շրջապատին և այդպիսով ավելացրել այցելուների թիվը:

Ես չեմ կարող ասել, իհարկե, որ ճամբարային պայմանները անթերի են, սակայն, կարծում եմ, այդքան ողբալի վիճակ չէ, ինչպես ներկայացված է Ձեր գրույցի մեջ:

Ես պետք է ասեմ, որ Ավստրալիայից մինչև Ամերիկա ու Միջին Արևելք /վերջինիս երեխաները տեղավորվել են այլ ճամբարում/ եկել են հարյուրավոր դպրոցականներ, սակայն շնորհակալական խոսքից բացի, որևէ բողոքի ձայն չենք լսել նրանցից, և առաջինը տարօրինակ է լսել Մշակութային մեր ընկերներից, որոնք ոչ մի անգամ չեն եղել այդ ճամբարում և անձամբ ծանոթ չեն պայմաններին:

Ինձ զարմացրեց նաև այն, որ այս անգամ ևս չեք ընդունել մեր հրավերը՝ մասնակցելու Կոմիտեի կողմից, ս.թ. հոկտեմբերի 20-ին նախաձեռնվող սփյուռքահայության մշակութային կազմակերպությունների ղեկավարների հավաքին և առաջարկել եք Ավետիս Ալեքսանյանի թեկնածությունը:

Ուրախ ենք, անշուշտ, որ այդ առիթով հնարավորություն կունենանք այս տարի ևս հանդիպելու մեր սիրելի Ավետիսին, սակայն նա միշտ կարող է զալ և առանց այդ էլ նրան տիկին Անժելի հետ միասին, այս տարի պետք է հրավիրենք մեկ ամսով Հայաստան՝ տեղի առողջարաններից որևէ մեկում հանգստանալու համար:

Մեր ցանկությունն էր, որ հավաքին մասնակցեր Մշակութային գործարար ընկերներից մեկը: Գիտենք, իհարկե, որ բոլորդ էլ շատ բազմազբաղ եք ձեր անհատական և հասարակական գործերով, այնուամենայնիվ, կարծում ենք, մեկն ու մեկը կարող էր ժամանակ գտնել գալու հավաքին, այդ առիթով մոտիկից շփվելու սփյուռքահայ գործիչների հետ, ինչպես նաև մասնակցելու սփյուռքի համար շատ կենսական հարցերի քննարկման աշխատանքներին:

Քաջառողջության և հաջողության լավագույն մաղթանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 133, թթ. 14-16: Պատճեն: Մեքենագիր:

ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅԻ «ՈՒՂԻՈ ԱՐՄԵՆԻԱ»-Ի ՏԵՕՐԵՆ Դ. ՌՈՒԲԵՆՅԱՆԻ³⁴¹ ՆԱՍԱԿԸ
Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ ՓՈՆԱՐԱՐՁ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴԱՆ ՄԱՍԻՆ

Սիրելի հայրենակից,

Անցեալ տարի Ձեր Պուկնոս Այրես այցելութեան առիթով մանրամասնօրէն ըսած էիք մեր ապրած երկրին քաղաքական կացութիւնը, որով կարելի չէր մեր յարաբերութիւնները շարունակել Ձեր հետ ուղղակիօրէն: Յամենայն դէպս, մենք կ'աշխատինք դժմ դնելով այդ բոլոր արգելքներուն, և կը յուսանք, որ օր մը դարձեալ կարելիութիւններ պիտի ունենանք ազատօրէն այցի գալու Ձեր մօտ, համբուրելու կրկին Մայր Հողը:

Անցեալ տարուայ 13 նոյեմբերին մեծ շուքով եւ պետական, զինուորական ու քաղաքապետական երեւելի անձնաւորութեանց ներկայութեամբ, կատարուեցաւ բացման հանդիսութիւնը Արմենիա Հրապարակի Յուշակոթողին, ուր ինծի տրուեցաւ ժապաւեղ կտրելու պատիւը, ինչ որ ծրագրին մէջ չկար: Կը յուսամ, որ այդ մասին խօսած պէտք է ըլլայ մանրամասնօրէն «Շարժում»³⁴² խմբագիր Սամօ Սարգիսեանը: Թէպէտ Երեւանի ռատիօն անդրադարձած է այս մասին, պիտի խնդրէի, որ առ այժմ որեւէ գրութիւն մը լոյս չտեսնէ Հայաստանի մէջ, մինչեւ որ ներկայ քաղաքական կացութիւնը փարատի: Կ'իմացնենք ձեզի նաեւ, որ վերջին յունիսի 19-ին, Ազատարար եւ Ուրուկուայի մեծ ռաիվիրա զօրավար Արթիկասի ծննդեան տարեդարձին առիթով, տեղի ունեցաւ բացումը Արմենիա անունը կրող փողոցի մը Բիրիաբուլիս ծովագերայ քաղաքի մէջ՝ նահանգային եւ զինուորական բարձրաստիճան պաշտօնեաներու մասնակցութեամբ: Սոյն բոլոր նուաճումները կը պատկանին «Ռատիօ Արմենիա»-ի շրջանակի բարեկամներու ջանքերուն:

Սիրելի՛ փրօֆեսոր. իմացանք, որ լոյս տեսած է Համայնագիտարանի 7-րդ հատորը եւ շատեր ստացած են, ինչպէս մեզի դրացի Պուկնոս Այրեսի ծանօթ բարեկամները: Դուք լաւ գիտէք, թէ ինչպիսի կարեւորութիւն ունին նմանօրինակ հրատակութիւնները «Ռատիօ Արմենիա»-ի համար, որով պիտի խնդրէիք, որ մեզի ալ ուղարկէիք վերոյիշեալ հատորը, նաեւ յաջորդները եւ բոլոր տեսակի բառարաններ, գրագէտ, բանաստեղծ եւ պատմաբաններու հրատարակութիւնները, որոնք անհրաժեշտ են մեր առօրեայ աշխատանքին համար: Բարի եղէ՛ք առաքումները կատարելու ձեզի ծանօթ եւ անխնջ հայրենասէր պր. Գեորգ Պաքրճեանի Բարիգի հասցեով, ուրկէ մեզի կը հասնի անյապաղ:

Առ այդ ընդունեցէ՛ք նախայայտ շնորհակալութիւններով միասին մեր եղբայրական ողջոյնները եւ քաջառողջութեան մաղթանքները: Նմանապէս Կոմիտեի բոլոր անդամներուն եւ համբոյրներ Արամ Տէյիրմէնճեանին:

Յ. Ռուբէնեան

Ֆ. 875, ց. 14, գ. 95, թ. 1: Բնագիր: Մեքենագիր:

341. Ռուբենյան Հակոբ Մոնտեվիդեոյի «Ռադիո Արմենիա»-ի հիմնադիր ու երկար տասնամյակների տնօրէն և հաղորդավար:

342. «Շարժում» - Հասարակական-քաղաքական շարաքաթերթ: Եղել է ՄԴՀԿ օրգանը Հարավային Ամերիկայում: Սկսել է հրատարակվել 1937-ին՝ Բուենոս Այրեսում: Դադարել է 1991թ. հունիսին:

Վ. ՄԱՎՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱՁԱՍՊՅԱՆԻՆ ՓՈԽԱՂԱՐՁ ԿՈՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Միրելի՛ պր. Համագասպեան,

Ձեր 16 յունիսի նամակին եւ բարի մաղթանքներուն համար շնորհակալ եմ շատ եւ անկեղծօրէն զգացուած: Այս անգամ պրծանք:³⁴³ Լաւ եմ հիմա եւ արդէն վերադարձած առօրեայիս:

Կիւլպէնկեաններն ու մենք յոյս ունէինք յառաջիկայ հոկտեմբերին գալ Հայաստան՝ Էջմիածնի նոր գանձատան բացման առիթով: Գործի վերաբերեալ եւ նոյն շրջանին զուգահիստող կարգ մը անակնկալ պարտաւորութիւններ պատճառ դարձան, որ վերջին վայրկեանին հրաժարինք ծրագիրէն: Վեհափառին անցեալ շաբաթ հեռագրեցինք այս ուղղութեամբ: Իվոնն ու ես սակայն պիտի փորձենք օգտուիլ առաջին պատեհութենէն եւ գալ միասին – պաշտօնական ճաշկերոյթներու, բաժակաճառերու, խմբական այցելութիւններու բարոյական պարտաւորութիւններէն անկաշկանդ – վայելելու համար Հայրենիքն ու մեր բարեկամները:

Լիբանանի կացութիւնը, աւելորդ է ըսել, ամիսներէ ի վեր կը մտահոգէ բոլորս:³⁴⁴ Ստոյգ տեղեկութիւններ, մանրամասնութիւններ չունինք այստեղ ալ: Գրեթէ գոյութիւն չունի նաեւ հեռաձայնային հաղորդակցութիւնը: Ֆիզիքական քանդումներէն, անհատներու կրած նիւթական վնասներէն անդին կարելորդ, վերջին հաշուով, գաղութին ճակատագիրն է: Նոր կարգերը ինչպէ՞ս պիտի վարուին, պիտի հանդուրժէ՞ն մեր հաւաքական կեանքի եղանակը, կրթական, մշակութային, ընկերային եւ տնտեսական գոյութիւնը՝ տասնամեակներէ ի վեր այս մարզերուն մէջ վայելած մեր ազատութիւններով:

Կ'իմանամ թէ տիկին Ինկան Պրիւքսէլ արդէն հանդիպած է տիկ. Յասմիկ Կարապետեանին՝ առանց սակայն Դանիէլ Վարուժանի դիմաքանդակին Հայաստան փոխադրութեան համար գործնական որեւէ քայլ առնելու: Այդ պատասխանատւութիւնը ձգած են նուիրատուին, որ կ'ըսէ թէ որեւէ հնարաւորութիւն չունի զայն անձամբ տանելու: Հայաստան կամ ուղարկելու իր միջոցներով: Ամիսներ առաջ իմ առաջարկին ընդառաջելով տիկ. Կարապետեան համաձայնած էր դիմաքանդակը նուիրել Հայաստանին՝ պայմանաւ որ փոխադրութեան կարգադրութիւնները կատարուէին ձեր կողմէ: Ինծի յայտնած էիք այն ատեն,

343. Նամակագիրը հավանաբար ակնարկում է իր սրտի կաթվածը: Յավոք, հաջորդ հարվածը, չորս ամիս անց՝ 1983թ. հունվարի 11-ին, մահացու ելք էր ունենալու:

344. 1975թ. ապրիլի 13-ին սկսված Լիբանանի քաղաքացիական պատերազմը ողբերգական զարգացումներ էր գրանցել նամակի հեղինակման նախորդ օրերին և գրանցելու էր նույն ժամերին ու հաջորդ օրերին: Արդարև, իսրայելական զորքերը 1982թ. հունիսի 5-ին ներխուժել էին Լիբանան, գրավել մայրաքաղաք Բեյրութը: Նամակի հեղինակման օրն սպանվելու էր Լիբանանյան Ուժեր ծայրահեղ աջակողմյան զինված խմբավորման հրամանատար, իսրայելական զորքերի սվինների տակ Լիբանանի հանրապետության նախագահ ընտրված Բեշիր Ջեմայելը: Սեպտեմբերի 17-ին տեղի էին ունենալու Բեյրութի Սաբրա և Շաբիվա պաղեստինյան գաղթականների սարսափելի նախաձիւրները, որոնց զոհ գնացին 300 պաղեստինցիներ: Սեպտեմբերի 21-ին, նախագահության պաշտոնում Բեշիրի փոխարեն ընտրվելու էր երեց եղբայրը՝ Ամին Ջեմայելը:

թէ կարելի էր ատիկա տեղոյն վրայ ունեցած ձեր ներկայացուցիչներուն միջոցաւ:

Սիրալիք ողջոյններ մեր երկուքին կողմէ ձեզի, տիկին Համագասպեանին (ծնթ. Սեդա Համագասպյան) եւ Կոմիտէի մեր միւս բարեկամներուն:

Ջերմ զգացումներով՝

Վահրամ Մավեան

Ֆ. 875, ց. 13, գ. 127, ք. 35: Բնագիր: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ՆՇԱՆԱԿՈՐ
ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒՅԻՆ՝ ԿՏԱՎՆԵՐԻ ՅՈՒՑԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Կոմիտեն նամակ է ստացել ամերիկահայ նշանավոր նկարիչ Արշիլ Գորկու /Ոստանիկ Մանուկ Ադոյան/ քրոջ որդուց՝ դոկտոր, պրոֆեսոր Կարլեն Մուրադյանից,³⁴⁶ որով նա առաջարկում է Երևանում, ինչպես նաև Սովետական Միության մի շարք այլ քաղաքներում /Մոսկվա, Լենինգրադ, Թբիլիսի/ կազմակերպել մեծահամբավ նկարչի գործերի ցուցադրությունը: Նա նաև առաջարկում է Երևանում հիմնել Արշիլ Գորկի-Ադոյանի թանգարան և առանձին առիթով պատրաստակամություն է հայտնել այդ նպատակի համար Հաստանին նվիրել նկարչի գործերից:

Ինչպես Ձեզ հայտնի է, Արշիլ Գորկին համարվում է ամերիկյան գեղանկարչության ամենաճանաչված դեմքերից մեկը: Նա ստեղծել է բազմաթիվ գործեր, որոնք այսօր իրենցից մեծ արժեք են ներկայացնում: Գորկու գործերը հանգրվան են գտել ամերիկյան նշանավոր թանգարաններում և առանձին հավաքածուներում, բազմիցս ցուցադրվել աշխարհի տարբեր երկրներում:

Կից ներկայացնում ենք պրոֆ. Կարլեն Մուրադյանի՝ Կոմիտեին գրած նամակը և տեղեկանք Արշիլ Գորկու մասին:

Խնդրում ենք Ձեր համապատասխան կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 23, թ. 13: Պատճեն: Մեքենագիր:

345. Գորկի Արշիլ (իսկական անունով՝ Ոստանիկ (Մանուկ) Մեղրակի Ադոյան, 1904, գյուղ Խորգում, Հայոց ձորի գավառակ, Վանի նահանգ - 1948, Նյու Յորք) - Ամերիկահայ աշխարհահռչակ գեղանկարիչ: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի և Վանի դպրոցներում: Ավարտել է Նյու Յորքի Արվեստի կենտրոնական դպրոցը, որտեղ հետագայում դասավանդել է հինգ տարի: Ստեղծել է դիմանկարներ, բնանկարներ և նատյուրմորտներ: Ունեցել է անհատական ցուցահանդեսներ ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում: Նրա գործերը ցուցադրվել են աշխարհի շատ երկրներում: Կյանքին վերջ է դրել անձնասպանությամբ:

346. Մուրադյան Կարլեն (1935, Բոստոն - 1990, Չիկագո) - Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԱՄՆ-ի Նորստիստերի համալսարանի դասախոս, Արշիլ Գորկու Վարդուհի քրոջ որդին: Հրատարակել է գեղանկարչական ալբոմներ և արվեստաբանական ուսումնասիրական հատորներ քեռու մասին, կազմակերպել նրա ստեղծագործությունների բազմաթիվ ցուցահանդեսներ ԱՄՆ-ի ու Եվրոպայի քաղաքներում ու Երևանում:

ՊՐՈՖԵՍՈՐ Վ. ՍՈՒՐԱՂՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻՆ՝ Ա. ԳՈՐԿՈՒ
ԿՏԱՎՆԵՐԻ ՅՈՒՑԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Սիրելի ընկեր Համազասպյան,

Մեծ հաճույք էր, որ վերջապես կարողացա Ձեզ հետ հանդիպել Չիկագոյում, օգոստոսի 1-ին: Պատիվ կլիներ համագործակցել Արշիլ Գորկու ցուցահանդեսի կազմակերպումը իրականացնելու համար:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է իմանալ, թե իր գործերից որո՞նք պետք է ցուցադրվեն: Իմ գիրքը՝ «Արշիլ Գորկի-Ադոյան» անունով, որից մեկ օրինակ տվել եմ Հրայր Բաբայանին երբ նա գտնվում էր Չիկագոյում. պարունակում է շատ պատկերազարդումներ: Նաև անհրաժեշտ է իմանալ ցուցահանդեսի անցկացման թվականների մասին, քանի որ սա լինելու է շրջիկ ցուցահանդես, ցուցադրվելու է Երևանում, Լենինգրադում, Մոսկվայում և Թբիլիսիում, և, բնականաբար, թանգարանները պետք է նախապես ծրագրեն իրենց պլանները՝ կոնֆլիկտներից խուսափելու համար:

Կարելի՞ է դիտորդություն անել Հայկական հանրագիտարանում տպագրված «Արշիլ Գորկի» հոդվածի մասին, որը Գորկու մասին տպագրված աղբյուրների վերաբերյալ նշում է Հարութ Ռոզենբերգի և Շվաբաբերի անունները, որոնց գրքերը պարունակում են շատ սխալներ: Եվ ուստի այդ սխալները տեղ են գտել նույնությամբ նաև Հ. Ս. Հանրագիտարանում:

Խնդրում եմ անկաշկանդ զգալ և ազատորեն ուզած բանը ցիտել /մեջ բերել/ իմ գրքերից, քանի որ դրանք Գորկու մասին եղած ամենաճշգրիտ աշխատություններն են. «Արշիլ Գորկի-Ադոյան» /Չիկագո, 1978/, «Արշիլ Գորկու մի քանի աշխարհներ» /Չիկագո, 1980/, «Արշիլ Գորկու կյանքի դյաբան» /ճապոներենով, Տոկիո, 1982/, «Ադոյան, արցունք և ներկեր. Արշիլ Գորկու կյանքը» /սա իմ առաջին կենսագրականն է Գորկու մասին, Չիկագոյում պետք է լույս տեսնի 1983-ին/:

Արդյոք լավ նպատակ չի՞ լինի ապագայում Երևանում կառուցել Արշիլ Գորկի-Ադոյանի թանգարան:

Ես թողել եմ իմ պրոֆեսորական պաշտոնավարությունը՝ ամբողջովին էներգիա նվիրաբերելու գրելուն, նկարելուն, լուսանկարելուն և հրատարակությանը: Մինչև գալիք տարի ես կավարտեմ Գորկու կյանքի վերջին տարվա մասին պիեսս, որը կոչվելու է «Մնաք բարով, սիրելիներդ իմ»: 1978-ին ես հիմնադրեցի «Գիզամեշ» հրատարակչությունը, որն օգնում է ինձ հայ մշակույթն ու քաղաքակրթությունը Միացյալ Նահանգների և աշխարհի ժողովուրդներին ներկայացնելու գործում:

Մայրս Ձեզ է ուղղում իր բարեմաղթանքները:

Ես ամեն կերպ կօգնեմ Հայաստանին: Սրտանց բարևներով՝

Կարլեն Մուրադյան

Ֆ. 875, ց. 14, գ. 23, թթ. 14-15: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ Հ. ԳՈՎՀԱՆՆԵՍ
ՎՐԴ. ԴԵՐՁԱԿՅԱՆԻՆ՝ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԲԲԱՅԱՅՐ
ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

Գերապայծառ աբբահայր,
Վերջերս Հայրենիք ժամանած Հ. Լևոն Ջեքիյանից³⁴⁷ տեղեկացանք, որ մի քանի ամիս է, ինչ ընտրվել էր Մխիթարյան միաբանության աբբահայր:

Ընդունեցե՛ք մեր սրտանց շնորհավորանքները այդ առիթով:
Հավատացած ենք, որ անխնջ ջանադրությամբ և եռանդով կշարունակեք Ձեր հայրենանվեր գործունեությունը:

Հայաստանի Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի հայ գրքի մատենագիտության բաժնի վարիչ Նինել Ոսկանյանը շուրջ 25 տարի է, ինչ զբաղվում է հայ գրքի ամբողջական մատենագիտությունը կազմելու գործով: Այդ կապակցությամբ ժամանել է Վենետիկ՝ Մխիթարյան միաբանության հարուստ ֆոնդերը ուսումնասիրելու համար:

Խնդրում ենք, հնարավորության սահմաններում, օժանդակել նրա աշխատանքներին:

Կանխահայտ շնորհակալություններով և հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 143, ք. 82: Պատճեն: Մեքենագիր:

347. Ջեքիյան Լևոն վրդ. (ծն. 1943, Մտամբու) – Հայագետ, Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (1994): Կրթությունն ստացել է ծննդավայրի Մխիթարյան և իտալական վարժարաններում, այնուհետև՝ Մ. Ղազարում: Հռոմի Գրիգորյան համալսարանից ստացել է փիլիսոփայության և աստվածաբանության մագիստրոսի, Մտամբուի պետական համալսարանից՝ փիլիսոփայության դոկտորի աստիճանները: 1982-1985թթ. եղել է Մխիթարյանների Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի տնօրենը, 1980-1985թթ.՝ «Բազմավեպի» խմբագրապետը: Կարգացել է շուրջ 250 դասախոսություններ աշխարհի տարբեր քաղաքներում: Ունի հայերեն, անգլերեն, թուրքերեն և իտալերեն շուրջ 10 մենագրություններ, գիտական բազմաթիվ հոդվածներ:

ՀԲԸՄ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԻՔ
ԱՅՅԻ ՏՊԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՎԱՆԻ ԴԵՐԱՍԱՆ Մ. ՄԿՐՏՉԱՆԻ³⁴⁸
ԿԱՆԱԴԱՅՈՒՄ ՈՒ ԱՄՆ-ՈՒՄ ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Սիրելի Պր. Համազասպեան,

Հայաստանէն վերադարձին, տուն չհասած, տակաւին քանի մը օրեր կ'անցնենք Մոնթրէալի մէջ, Բարեգործականի աշխատանքներով:

Չենք ուզեր քանի մը խօսքով արտայայտել մեր սքանչելի տպաւորութիւնները Հայաստանէն եւ շնորհակալութիւն յայտնել այն անսխալեցող հիւրընկալութեան համար զոր վայելցինք Մայր Հայրենիքի մէջ. այդ պարտականութիւնը կ'ուզենք կատարել աւելի հանգամանօրէն, աւելի ուշ, երբ վերադառնանք Տիբրոյթ:

Այստեղ մենք հանդիպեցանք հայրենի տաղանդաւոր եւ անուանի դերասան Միքէ Մկրտչեանին, որ Քանատայի իր ներկայացումներէն ետք, հրաւիրուած է Միացեալ Նահանգներ՝ Բարեգործականի եւ այլ կազմակերպութեանց թատերախումբերուն հետ ձեռնարկներ տալու:

Անոր այցելութիւնը բացառիկ պատեհութիւն պիտի տայ ամերիկահայ թատերասէր հասարակութեան՝ վայելելու ֆիլմի եւ թատրոնի ամենէն ժողովրդական դերասանին անձնական ելոյթները:

Դիւրացնելու համար իր մուտքը Ամերիկա, կը խնդրենք որ հաճիք հեռագիր մը դրկել Քանատայի սովետական հիւպատոսարան, այս առընչութեամբ: Նոյնպէս, եթէ հեռագիր մըն ալ դրկուի Պր. Մկրտչեանին, յանձնարարելով իրեն, որ Մ. Նահանգներ անցնի՝ կը կարծենք որ կարելի կը դառնայ յաջողցնել այս ծրագիրը:

Կանխայայտ շնորհակալութիւններով եւ լաւագոյն զգացումներով՝

Ա. Մանուկեան
Նախագահ

Ֆ. 875, ց. 14, գ. 94, ք. 40: Պատճեն: Մեքենագիր:

348. Մկրտչյան Միքէ Մուշեղի (ծանոթ է նաև իր կերպավորած Ֆրունզիկի անունով) (1930, Լենինական, այժմ՝ Գյումրի – 1993, Երևան, թաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում) – Դերասան, ՀԽՍՀ, Վրացական ԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1970, 1980 և 1984): Ավարտել է Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտը: Խաղացել է թատրոնում, հայրենի և սփյուռքահայ հանդիսատեսին հիացրել իր խաղով, հատկապես՝ Հակոբ Պարոնյանի երկերի հերոսների կերպարներում: Նկարահանվել է բազմաթիվ կինոֆիլմերում: Գյումրիում գործում է Միքէ Մկրտչյանի թանգարանը, Երևանում՝ նրա անվան թատրոնը:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ռ. ԶՐԲԱՇՅԱՆԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի բարեկամ,

Ինչ խոսք, շատ հաճելի էր իմանալ, որ Անուշի³⁴⁹ վերջին ճամփորդությունը դեպի Հայաստան ոչ միայն արդյունավետ էր՝ իր հետաքրքրական և եզակի ուսումնասիրության համար, այլ նաև մեծապես օգտակար՝ ամենաջերմ ու անկեղծ զգացումներով կապվելու իր երկրի ու ժողովրդի հետ: Անուշը, վստահ եմ, խորապես գիտակցում է, որ կապը Մայր Հայրենիքի հետ է՛լ ավելի է իմաստավորում իր կյանքը: Իրոք, ամենաթանկ նվերը Ձեզ նման հայրենասերի համար:

Ժամանակին ստացել ենք Ձեր հեռագիրը՝ Երևանի քաղաքապետարանի համար սլայդների լուսարձակման ապարատներ ուղարկելու մասին:

Ինչպես գիտեք, ապարատները սխալմամբ ուղարկվել էին Թբիլիսի և օրերս միայն ստացանք ու հանձնեցինք Քաղսովետին:

Ինչ վերաբերում է Xerox ապարատներին, ապա կխնդրեինք չորսն էլ միանգամից ուղարկել:

Կխնդրեինք նաև տեղյակ պահել թե արդյո՞ք որևէ նորություն ունեք գորգերի լվացման մեքենաների կապակցությամբ:

Ձերմ բարևներ և լավագույն մաղթանքներ՝ Լիզետային:³⁵⁰

Սիրով՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 134, թ. 44: Պատճեն: Մեքենագիր:

349. Զրբաշյան-Դուրյան Անուշ՝ Կարպիս Զրբաշյանի դուստրը, դերասան և բեմադրիչ Նարեկ Դուրյանի կինը: Աշխատում է Փարիզում՝ հոր հիմնած չոր մրգերի ներածման ընկերությունում:

350. Լիզետա Զրբաշյան՝ Կարպիս Զրբաշյանի կինը:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ. ԴԱՆԱՔՅԱՆԻՆ ԼԻԲԱՆԱՐԱՅԱՆ ՉՈՐՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՈՒՍՄԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Լիբանանահայ Ռաֆֆի Խբոյանը, Կարապետ Խաչիկյանը, Հրաչ Մախբազյանը և Ռաֆֆի Փոլադյանը 1982-88թթ. ուսումնական տարվա համար ընդունվել էին Երևանի ԲՈՒՀ-երի նախապատրաստական բաժիններում սովորելու: Սակայն նրանք ժամանակին չեն կարողացել ժամանել Երևան, քանի որ զորակոչվել են ծառայելու քաթայիբների³⁵¹ բանակում: Օգտվելով այն հանգամանքից, որ այդ բանակը Լիբանանի կառավարության որոշումով ցրվել է նոր պետական բանակ կազմելու նպատակով, այդ երիտասարդները զորացրվելուց անմիջապես հետո եկել են Հայաստան: ՀՍՍՀ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությունը նրանց չի ընդունում սովորելու՝ 3 ամիս ուշացումով ժամանելու պատճառով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմորդները Լիբանան վերադառնալուն պես կգորակոչվեն տեղի բանակում ծառայելու մի քանի տարով և նրանց պատկանելիությունը Լիբանանահայ առաջադիմական կազմակերպություններին, խնդրում ենք Ձեզ հնարավորության դեպքում դրական լուծում տալ վերոնշված ուսանողներին ուսման հրամանագրելու հարցին:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 23, թ. 19: Պատճեն: Մեքենագիր:

351. Քաթայիբ՝ փաղանգավորներ (արաբերեն) – Լիբանանում գործող ծայրահեղ աջակողմյան «Լիբանանյան փաղանգավորներ» կուսակցության ժողովրդական կրճատ անվանումը: 1936թ. հիմնել է Պիեռ Ջեմալը: Գործուն մասնակցություն է ունեցել Լիբանանի 1958 և 1975-1991թթ. քաղաքացիական պատերազմներին, հատկապես 1978-1979թթ., նաև հաջորդ տարիներին հալածանքներ կիրառել Լիբանանահայության նկատմամբ՝ վերջինիս ստիպելու հրաժարվել որդեգրած «դրական չեզոքության» դիրքորոշումից և զենք վերցնել իր կողքին:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Հ. ԼԵՎՈՆ ՎՐԴ. ՁԵՔԻՅԱՆԻՆ՝ ԻՏԱԼԱՅԱՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Միքելի բարեկամ,

Ուրախ եղանք ստանալով Նինել Ոսկանյանի ձեռամբ ուղարկած Ձեր նամակը, որը նորից ու նորից վերհիշեցրեց Հայրենիքում ունեցած մեր հաճելի հանդիպումներն ու զրույցները:

Խորին շնորհակալություններ ենք հայտնում Ոսկանյանին ցույց տված Ձեր ջերմ ու հոգատար վերաբերմունքի համար:

Կիսնդրեինք այդ առիթով մեր երախտագիտությունն ու սրտանց շնորհակալությունները փոխանցել նաև գերապայծառ աբբահայր Հովհաննես Դերձակյանին:

Ինչպես արդեն խոսել ենք Կոմիտեում մեր հանդիպման ժամանակ, Ձեր դպրոցից³⁵² մի քանի աշակերտներ կիրավորենք ամռանը՝ հայրենի ճամբարներում հանգստանալու համար: Առաջիկայում տեղյակ կպահենք, թե քանի՞ տեղ ենք հասկացրել Ձեզ: Լավ կլինեք, որ Հայրենիք եկողները լինեին ինքնագործունեության մեջ ներգրավված աշակերտներ: Ի դեպ, կիսնդրեինք որոշ մանրամասնություններ հաղորդել դպրոցում այժմ գործող ինքնագործ խմբերի մասին:

Մեզ հետաքրքրում է նաև, թե արդյո՞ք տպագրվել են Հ. Միքայելյանի³⁵³ «Հայոց բերդերը» աշխատության և «Հայկական մանրանկարչության» /առաջաբան Ս. Տեր-Ներսեսյան/ երկրորդ հատորները: Եթե այդ գործերը հրատարակվել են, պիտի խնդրեինք մեկական օրինակ ուղարկել մեզ և միաժամանակ հայտնել յուրաքանչյուրի արժեքը, որպեսզի Հայաստանի գրադարանային ֆոնդերի հաշվին կարողանանք ձեռք բերել մի քանի օրինակ՝ մեր գրադարանների համար:

Այս տարվա սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար ծրագրված է հրավիրել միայն դպրոցների տնօրեններին: Ուրեմն հուսանք, որ այս անգամ Հայրենիք պետք է ժամանեք որպես Մուրադ-Ռաֆայելյանի վարժարանի ուսումնապետ:

Լավագույն մաղթանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 139, թ. 27: Պատճեն: Մեքենագիր:

352. Նկատի ունի Մխիթարյանների Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, որի տնօրենն այդ օրերին Հ. Լևոն Զեքիյանն էր, ինչպես դա պարզվում է նաև նամակի վերջին տողից:

353. Բնագրում այսպիսի վրիպակով է: Նկատի ունի Հ. Միքայել Հովհաննեսյանին:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԲՐՅՈՒՄԵԼԱԲԼԱԿ Մ. ԱՐՍԼԱՆՅԱՆԻՆ³⁵⁴
ՔԱՐՏԵՂՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեծահարգ պրն. Արսլանյան,

Հուսով եմ, Հայրենիքից վերադարձաք բարեհաջող և այժմ էլ լավ եք զգում Ձեզ: Արդեն բավական ժամանակ է անցել Հայաստան կատարած Ձեր այցելությունից, սակայն միևնույն թարմությամբ ու հաճությամբ վերհիշում ենք Ձեր կնոջ՝ հարգարժան տիկին Վիոլեթի և Ձեզ հետ ունեցած մեր հանդիպումները: Գոհ ենք, որ այս անգամ ավելի մոտիկից ծանոթանալու և երկար ու հանգամանորեն Ձեզ հետ զրուցելու առիթն ունեցանք: Հիշում եք, անշուշտ, որ զրույցներից մեկի ժամանակ խոսեցինք նաև Հայաստանի քարտեզների տպագրության համար խիստ անհրաժեշտ քարտեզագրական թղթի մասին և Դուք կարողացաք վերադարձից հետո անմիջապես զբաղվել այդ հարցով:

Կներեք, իհարկե, որ կրկին հիշեցնում և անհանգստացնում ենք Ձեզ այդ կապակցությամբ, սակայն բանն այն է, որ հրատարակող կազմակերպությունները խնդրում են հնարավորության սահմաններում արագացնել հարցի լուծումը, քանի որ քարտեզների տպագրության գործը արդեն բավական ժամանակ ձգձգվում է:

Եթե որևէ դժվարություն ունեք այդ առիթով, կխնդրեինք տեղյակ պահել մեզ:

Մեկ անգամ ևս խնդրում ենք ներել պատճառած նեղության համար և հղում ենք տիկին Վիոլեթին, Ձեզ և Ձեր զավակներին քաջառողջության և հաջողության մեր բարեմաղթանքները:

Խորին հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 13, գ. 142, թ. 32: Պատճեն: Մեքենագիր:

354. Արսլանյան Մելանթոն՝ - Մեծահարուստ, աղամանդի վաճառական, բարերար: Նրա և եղբոր՝ Հայկի տրամադրած միջոցներով Բեյրութի մերձակա Մրզիեր բնակավայրում 1980-ականների վերջին կառուցվեց Համազասպյանի կրթական նոր համալիրը, որը կոչվեց Մելանթոն և Հայկ Արսլանյան ճեմարան:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱԽԿԸ ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ՄԵԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՐԶՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԹԱԹԻԿՅԱՆԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ
ԿՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի բարեկամ,

Սփյուռքահայ մամուլից, ինչպես նաև մեր ընկերների հետ ունեցած զրույցներից տեղեկացանք, որ պարի անսամբլի հյուրախաղերը մեծ հաջողությամբ են անցել, որոշ տեղերում նույնիսկ հաջողությունը սպասածից ավելի վեր է եղել: Մեզ հետաքրքրում է նաև, թե արդյո՞ք հյուրախաղերը արդարացրեցին Ձեր հույսերը:

Մշակութային կողմից Կոմիտեին ներկայացված 1983թ. փոխհարաբերությունների ծրագրի մեջ նախատեսել էր Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի արտիստների խմբի /15-20 հոգանոց/ այցելությունը Ֆրանսիա: Կոմիտեն, այս տարվա հաստատված ծրագրի համաձայն, չի կարող կազմակերպել նման մեծ խմբի այցելությունը: Մենք ունենք մեկ այլ առաջարկ, որը, կարծում ենք, շատ ավելի գործնական է:

Անցյալ տարվա վերջերին անհատական հրավերով Կանադա և Ամերիկա էր մեկնել հայրենի նշանավոր արվեստագետ Միկեր Մկրտչյանը: Բարեգործականը կազմակերպել էր նրա ելույթները տեղի թատերախմբի հետ: Անշուշտ, այցելության ընթացքում Մկրտչյանը աշխատել էր դերասանների հետ և պատրաստել «Պաղտասար ախպար» ներկայացումը: Շուրջ 4 ամիս տևող հյուրախաղերը անցան բացառիկ հաջողությամբ:

Կարծում ենք, լավ կլինեք, եթե նույն ձևով, անհատական հրավերով, հարգարժան արտիստը ժամաներ Ֆրանսիա, և Դուք, Բարեգործականի հետ միասին կազմակերպեիք նրա ելույթները՝ օգտագործելով տեղի սիրողական ուժերը:

Ֆրանսահայ մամուլից տեղյակ ենք «Հայ թատրոնի ընկերակցության» ստեղծման մասին: Թերևս, ընկերակցության անդամները օգտակար լինեն Ձեզ այդ հարցում: Միկեր Մկրտչյանը ցանկանում է գալ իր տիկնոջ՝ դերասանուհի Թամար Հովհաննիսյանի հետ, որը հանդես կգա Անուշի /«Պաղտասար ախպար»/ դերով:

Մյուս հարցը վերաբերում է Փարիզում դրոշմանիշների ցուցահանդես կազմակերպելու Ձեր խնդրանքին, որը ներկայացրել էիք դեռևս անցյալ տարի: Այդ առիթով նույնպես ունենք մեկ առաջարկ:

Հայաստանի ֆիլատելիստների միության անդամ Արտաշես Թառումյանը ունի դրոշմանիշների, մեդալների, դրամների, կրծքանշանների և բացիկների ունիկալ հավաքածու: Լավ կլինեք, որ նրա այցելությունը Փարիզ նույնպես կազմակերպվեր անհատական հրավերով, որի համար մենք, անշուշտ, կաջակցենք և այցելության օրերին կազմակերպվեն նրա հավաքածուի ցուցադրությունը:

Խնդրում ենք այդ հարցերի շուրջ խորհրդակցել մյուս ընկերների հետ և Ձեր որոշման մասին տեղյակ պահել մեզ, որպեսզի ժամանակին ուղարկենք Մկրտչյանների և Թառումյանի տվյալները՝ անհատական հրավերի համար:

Միքելի բարեկամ, նամակաբերը՝ Արտաշես Կարապետյանը, ղեկավարում է Ֆրանսիա ժամանած հայրենի զբոսաշրջիկների խումբը: Այդ խմբում կան հանրապետության նշանավոր մտավորականներ: Խնդրում ենք, հնարավորության սահմաններում, օգտակար լինել նրանց և կազմակերպել ելույթներն ու հանդիպումները հայ համայնքի հետ:

Ի դեպ ասենք, որ մայիսի 12-ին Ֆրանսիա է ժամանելու «Ռոդինա» համամիութենական ընկերության տուրիստական խումբը, կազմում՝ երգչուհի Վարդուհի Խաչատրյան, երգիչ Արտաշես Ավետյան, «Հայրենիքի ձայնի» խմբագիր Լևոն Զաքարյան և Կոմիտեի մամուլի բաժնի վարիչ Գևորգ Աբաջյան: Կիսնդրենք նախապատրաստական աշխատանք տանել՝ նրանց ելույթները նույնպես կազմակերպելու համար: Խումբը Փարիզում կլինի 12-ից 16-ը, Լիոնում՝ 16-17-ը, Նիսում՝ 18-ից 20-ը:

Սպասում ենք Ձեր շուտափույթ պատասխանին:

Հաջողության լավագույն մաղթանքներով և հարգանքներով՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 139, թթ. 107-108: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՈՍԿԱՆ ԵՊՍ. ԳԱՓԱԿՅԱՆԻՆ՝³⁵⁵
ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ՝³⁵⁶ ԵՎ ՀԱՅՐԵՆԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՅԼ ԱՐԿԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ
ՀՈՒՆԱՍՏԱՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգարժան բարեկամ,

Գոհունակությամբ ստացանք 15 փետրվարի թվակիր նամակը, որով անդրադառնում եք Ձեր մեկ գեղեցիկ նախաձեռնությանը՝ Հունաստան հրավիրել հայրենի արվեստագետների փոքր խումբ:

Ինչպես տեսնում եմ, վերջին շրջանում բավական աշխուժացել է ազգային կյանքը հունահայ գաղութում: Վստահ եմ, այդ գործում մեծ են Ձեր անձնվեր ջանքերն ու ազգային ծառայությունները:

Մի րոպե պիտի աշխատենք անել կարելին, որպեսզի հաջողվի իրականացնել վերոհիշյալ ծրագիրը, հնարավոր է, ոչ թե Ձեր նշած ժամկետում, այլ մեկ-երկու շաբաթ հետո:

Նկատի ունենալով Ձեր խնդրանքը, խմբում հավանաբար կընդգրկվի երգչուհի Լուսինե Զաքարյանը: Այցելության ժամկետը ճշտելուց հետո անհապաղ կտեղեկացնենք Ձեզ:

Ընդունեցե՛ք արևշատության և Ձեր ազգօգուտ ձեռնարկներին նորանոր հաջողության լավագույն մաղթանքներս:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 140, թ. 6: Պատճեն: Մեքենագիր:

355. Գալիական Ոսկան Եպս. (այժմ՝ արք., ծն. 1941, Բեյրութ) – Աբեղա է ձեռնադրվել 1965թ., Եպիսկոպոս՝ 1982թ.: Մինչև 1980ական թթ. կեսը եղել է Դամասկոսի թեմի փաստական առաջնորդը, 1980-ականների առաջին կեսին, համատեղության կարգով, Հունաստանի Էջմիածնական թեմի առաջնորդը:

356. Զաքարյան Լուսինե (1937, Ախալցխա – 1992, Երևան, թաղված է Ս. Գայանե եկեղեցու բակում, Էջմիածին) – Երգչուհի, (քնար. սուպրանո), ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհի (1972): Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Եղել է Հայֆիլհարմոնիայի մեներգչուհի, համերգներով հանդես է եկել արտասահմանում:

ԵԳԻՊՏՈՍԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԶԱՎԵՆ ԱՐՔ. ՉԻՆՉԻՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻՆ՝ ԴՊՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ՝ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ ՀԱՏՈՐՆԵՐԸ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ազնիւ եւ սիրելի Տիար Վ. Համազասպեան,

Կը տեղեկացնեմ Ձեզի թէ Գահիրէի Ղպտի թանգարանի նախագահ Տիար Միրրիթ Ղալի, որ գաւակն է Պութրոս Փաշային և Պօղոս փաշա Նուպարի քրոջ աղջիկ՝ Տիկին Աննա Նէկիպ փաշայի, նաև հօրեղբոր գաւակն է Եգիպտոսի այժմու արտաքին գործոց նախարար Պութրոս Ղալիի, ներկայացուց ինծի հետեւեալ խնդրանքը:

Տիար Միրրիթ Ղալի, լսած ըլլալով որ Երևանի մէջ հրատարակուած են հայերէն լեզուով Համայնագիտարանի ութը հատորները, կը փափաքի Ղպտի թանգարանի մատենադարանին համար բաժանորդագրուիլ և ունենալ Հայկական Համայնագիտարանի լրիւ շարքը: 8 Ապրիլ 1983 թուակիր ինծի ուղղուած իր նամակով, որը հաճեցէ՛ք ներփակ գտնել, կը գրէ, թէ եթէ հնարաւորութիւնը կայ Համայնագիտարանի շարքը ընդունիլ որպէս նուէր, շնորհակալ պիտի ըլլան: Իսկ եթէ հարկ ըլլայ վճարում կատարել բաժանորդագրութեամբ լրիւ շարքը ստանալու, թանգարանի վարչութիւնը պատրաստ է վճարելու պահանջուած սակը: Կը խորհիմ, թէ ցանկալի պիտի ըլլար այսպիսի հաստատութիւններու տրամադրել Համայնագիտարանի ցարդ հրատարակուած հատորները և ապա հայթայթել լրիւ շարքը:

Տեղեկացնելով վերոյիշեալը Ձեզի և յանձնելով այս հարցին կարգադրութիւնը Ձեր հայեցողութեան, մնամ

Բարեկամական զգացումներով և սրտագին մաղթանքներով՝

Ձերդ յարգանքօք,

Զաւէն Արքեպիս. Չինչինեան
Առաջնորդ Հայոց Եգիպտոսի

Մակագրություն – «Գրություն է ուղարկված Հրատպետկումի նախագահ
Մուդնեցյանին:³⁵⁷ 25. 05. 83թ.»:

Ֆ. 875, ց. 14, գ. 256, թ. 34: Բնագիր: Մեքենագիր:

357. Մուդնեցյան Գեղամ Մինոյի՝ ՀԽՍՀ Հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի պետական կոմիտեի նախագահը:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ա. ԿԼՈՐԻԿՅԱՆԻՆ՝ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՏԱՆ»
ԵՒՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐՆԵՐ ՓՈԽԱՆՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պրն. Կլորիկյան,

Հուսով ենք մեր այս նամակը Ձեզ կգտնի առողջ և բարձր տրամադրության մեջ: Հաճույքն ունենք Ձեզ տեղեկացնելու, որ այս տարվա փետրվարին Ժնևի «Ունիոն դը Բանկ Սուիս» դրամատունը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անունով բաց է արել հատուկ հաշիվ «Մշակութային տուն» անվան տակ, ուր պետք է կենտրոնացվեն բոլոր այն գումարները, որոնք նվիրաբերվում են «Բարեկամության տան» շինարարության նպատակով:³⁵⁸

Արդ, հավատացած լինելով, որ այս կապակցությամբ կատարած Ձեր 5000 մարկի նվիրատվությունը ուժի մեջ է, պիտի խնդրեինք, որպեսզի այդ գումարը փոխանցվի:

Փոխանցման մասին հաճեցե՛ք մեզ տեղյակ պահել:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 141, ք. 73: Պատճեն: Մեքենագիր:

358. «Բարեկամության տան» համար շվեյցարական բանկում Վազգեն Ա-ի անունով հաշվեհամարի բացումը, ըստ երևույթին, հարուցել է Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցության Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ, ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի նախագահ Յուրի Անդրոպովի վրդովմունքը: Դա է վկայում ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի օրագրի 1982թ. հունիսի 2-ի գրառումը. Մոսկվայում Անդրոպովի հետ այդ օր հանդիպման ընթացքում, ՊԱԿ-ի նախագահին առաջարկել է «մի անգամ ևս մտածել [կաթողիկոսի արտաբնականության հաշվեհամարին «Բարեկամության տան» համար գումարներ հավաքելու նպատակահարմարության մասին – խմբ.], և եթե այլ տարբերակներ չգտնվեն, [ԽՍՀՄ Կենտկոմ – խմբ.] մտնել այդ առաջարկությամբ» «Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна», Ер., 2010, с. 153):

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՖՐԱՆՍԱԿԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԹԱԹԻԿՅԱՆԻՆ՝ ՄԻՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Միրելի բարեկամներ,

Ի սրտե շնորհավորում եմ Ֆրանսահայ մշակութային միության 13-րդ համագումարում ընտրված Կենտրոնական վարչության անդամներին՝ այդ մեծ պատվին և վստահությանը արժանանալու առթիվ:

Ֆրանսահայ մշակութային միությունն իր հայրենանվեր, բազմաբեղուն գործունեությամբ, լինի դա Մայր Հայրենիքի նվաճումները, հայ մշակույթի արժեքների պրոպագանդումը, հոգևոր մշակույթի արժեքավոր նմուշների հայրենադարձումը, տուրիզմի կազմակերպումն ու զարգացմանը նպաստելը թե խաղաղության համար մղվող անդուլ պայքարը, իր խոշոր, անգնահատելի նպաստն է բերում մեր ժողովրդի գոյատևման, Հայրենիք-սփյուռք կապերի հետագա ամրապնդման, ազգապահպանման գործում:

Այդ առաքելության մեջ իրենց նշանակալից ծառայություններն ունեն Կենտրոնական վարչության այնպիսի վաստակաշատ անդամներ ինչպիսիք են Ավետիս Ալեքսանյանը, Սարգիս Թաթիկյանը, Արտավազդ Պերպերյանը,³⁵⁹ Գևորգ Սարյանը, Միշել Քաշքաշյանը, Շավարշ Մարտիրոսյանը, Հարություն Յաղճյանը և շատ ուրիշներ:

Համոզված ենք, որ նախկինում վարչության կազմում եղած ղեկավար ընկերները այսօր էլ նույն նվիրվածությամբ ու կորովով կշարունակեն իրենց հայրենանվեր գործը:

Թանկագին բարեկամներ, վստահ ենք, որ Ֆրանսահայ մշակութային միության Կենտրոնական վարչության նորընտիր կազմը ջանք ու եռանդ չի խնայի պահպանելու և հարստացնելու համար այն հիմնալի ավանդույթները, որ տասնամյակների ընթացքում բնորոշ են եղել Միության գործունեությանը:

Լավագույն մաղթանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 142, ք. 20: Պատճեն: Մեքենագիր:

359. Պերպերյան Արտավազդ Շահանի (ծն. 1923, Վառնա) - Ֆրանսահայ գեղանկարիչ, հրապարակագիր, հասարակական գործիչ: Կրթական գործիչ, Պոլսի Պերպերյան վարժարանի հիմնադիր-տնօրեն Ռեթեոս Պերպերյանի թոռը և փիլիսոփա, գեղագետ, երաժշտագետ ու մանկավարժ Շահան Պերպերյանի որդին է: Մովորել է Կահիրեում և Երուսաղեմի Սրբոց Թարգմանչաց վարժարանում: Ունեցել է անհատական ցուցահանդեսներ տարբեր երկրներում: Եղել է Ֆրանսահայ մշակութային միության Կենտրոնական վարչության նախագահը:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԻՄՊԱՆԱՅԱՅ Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՄԱՂԻՐԻ
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊԵՐԱՆ ՄԱՍԻՆ

Հարգարժան բարեկամ,

Վերջերս Մադրիդ ժամանած հայրենի արվեստագետների խումբը մեծ հիացմունքով է պատմում տեղի փոքրիկ հայ համայնքի և հատկապես Ձեր կողմից ցույց տրված ջերմ ու սրտանց ընդունելության մասին: Անչափ հաճելի էր, որ այդ այցելությունը առիթ հանդիսացավ ծանոթանալու Ձեզ նման հայրենա-սեր անձնավորության հետ:

Ուրախ կլինեիք, եթե շարունակեիք կապերը Կոմիտեի հետ: Որպես առաջին քայլը մեր համագործակցության, Ձեր հասցեով բաժանորդագրել ենք «Հայրենիքի ձայն» և «Սովետական Հայաստան» պարբերականները, որոնք կօգնեն Ձեզ մոտիկից ծանոթանալու հայրենի իրականությանը, շփվելու հարազատ հոգի հետ:

Հավատացած եղեք, որ երբ էլ այցելեք Հայաստան, ապա մշտապես կվայելեք մեր բոլորի ջերմ ու անկեղծ վերաբերմունքը:

Հավանաբար արդեն ստացած կլինեք Երևանի քաղաքագլուխ Մուրադ Մուրադյանի ձեռամբ բերած Նարեկացու հատորը:

Հարգելի բարեկամ, Մադրիդ է ժամանել սովետահայ երաժշտության վաստակաշատ գործիչ, անվանի թավջութակահար Գուրգեն Աղամյանը:³⁶⁰ Խնդրում ենք հնարավորության սահմաններում, օգտակար դարձնել նրա այցելու-թյունը տեղի հայ համայնքի համար:

Ընդունեցե՛ք մեր կանխահայտ շնորհակալությունները, ինչպես նաև քաջա-ռողջության և հաջողության լավագույն մաղթանքները:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 13, գ. 144, ք. 23: Պատճեն: Մեքենագիր:

360. Աղամյան Գուրգեն Լևոնի (1911, Օդեսա – 1987, Երևան) – Թավջութակահար, երգահան, ՀԽՍՀ Ժողովրդական արտիստ (1968): Ավարտել է Երևանի և Մոսկվայի կոնսերվատորիաները, դասախոսել առաջինում, 1972-ից՝ պրոֆեսոր: Հորինել է երկեր թավջութակի համար: Մենահամերգներով և խմբային համերգներով հանդես է եկել տարբեր քաղաքներում:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԲԵՐԿԼԻԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊՐՈՖԵՍՈՐ Լ. ՏԵՐ-ՄԿՐՅԱՆԻՆ ՓՈԽԱՊԱՐԶ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պրոֆ. Լ. Տեր-Մկրյան,

Հավաստում ենք հունիս 6, 1983 թվակիր նամակի ստացումը: Ուրախ ենք, որ Սան Ֆրանցիսկոյի ՄՍՀՄ գլխավոր հյուպատոսության միջոցով ստացել եք մեր ուղարկած նյութերը:

Ինչպես գրել էիք մեր նախորդ նամակում, Ձեր կողմից ներկայացված ցանկում նշված նյութերի մեծ մասը հրատարակվել է, մնացյալները, ինչ հնարավոր էր, ուղարկեցինք Ձեր հասցեին:

Ձեր ձեռքի տակ եղած նյութերը միանգամայն բավարար են Ավ. Իսահակյանի³⁶¹ մասին գիտական բարձրարժեք ուսումնասիրություն հրատարակելու համար:

Նամակից սիրով տեղեկացանք նաև, որ Բերկլիի համալսարանում, տասնի-նը տարվա ընդմիջումից հետո, 1983թ. վերսկսվելու են հայագիտական դասընթացները: Վերոհիշյալի մասին խնդրում ենք գրել հանգամանորեն, և թե ինչն՞վ կարող ենք օգտակար լինել:

Ցանկանում ենք հաջողություններ:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 107, ք. 27: Պատճեն: Մեքենագիր:

361. Իսահակյան Ավետիք Սահակի (1875, Ալեքսանդրապոլ, այժմ՝ Գյումրի – 1957, Երևան, թաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում) – Բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943): Սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, եղել է ունկնդիր Լայպցիգի համալսարանում: 1946-1957թթ.՝ Հայաստանի Գրողների միության նախագահ: Ունի բանաստեղծական շարքեր, պոեմներ, չափածո ստեղծագործություններ, թարգմանություններ: Ժողովուրդը նրան պատվել է Վարպետ կոչումով: Երկերը թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով: Երևանում և Գյումրիում գործում են Ավ. Իսահակյանի տուն-թանգարանները:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՄՆ-Ի ՄԱԼԱԹԻԱՅԻ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՏԵՆԱՐԴԻՐ Ս. ՊԱՐՏԱՍԱՐՅԱՆԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԵՐ
ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարգարժան բարեկամ,

Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ գերազնորի Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը Կոմիտեին գրած հունիս 2 թվակիր նամակով տեղեկացնում է, որ Ձեր կողմից Առաջնորդարանին հանձնված 2100 դոլարը փոխանցվել է Ժնևում բացված հատուկ հաշվին:

Խնդրեմ ընդունեցե՛ք շնորհակալության մեր անկեղծ զգացումները և նույնը փոխանցել Կրթասիրացի անդամներին՝ Միության կողմից կատարված նվիրատվության համար:

Մենք մեծապես գնահատում ենք Ձեր ջանքերը՝ ապահովելու համայնքի՝ մալաթիացիների մասնակցությունը մեր տան, ձեր տան, Սփյուռքի տան կառուցման գործում: Այս տան կառուցման մեջ մենք մեծ ու բացառիկ խորհուրդ ենք տեսնում: Համոզված ենք, որ այն նոր ու հզոր մեկնակետ է հանդիսանալու Հայրենիք-սփյուռք փոխադարձ կապերի է՛լ ավելի զարգացման գործում: Արտասահմանում ապրող մեր յուրաքանչյուր հայրենակցի մասնակցությունը այս կառույցին ունենալու է զուտ բարոյական-խորհրդանշական բնույթ. ամեն մի սփյուռքահայ պետք է գիտենա, որ գոնե մեկ աղյուսով իր համեստ մասնակցությունն է բերում այս շենքի վեր խոյացմանը, որ իր քրտինքից նույնպես կաթիլ կա այդ ընդհանուր ծովացած քրտինքների մեջ: Բարեկամության տան համար կատարվող հանգանակությունը չպետք է կրի մեկ անգամվա կամպանիայի բնույթ, այլ այն պետք է դիտվի որպես հայրենասիրական հարատև աշխատանք: Ահա այս իրողությունը պետք է հասցվի Միությանը յուրաքանչյուր անդամի, յուրաքանչյուր մալաթիացու, որպեսզի նրանք միշտ պատկերացնեն գործի մեծությունը: Եվ այս աշխատանքը պետք է կազմակերպվի միասնականության մթնոլորտում, այն պետք է դիտվի որպես հայրենասիրության մի նոր դրսևորում և խորհրդանշի մեր ժողովրդի միասնությունն ու համախմբվածությունը հանուն այն նպատակների իրագործման, որ մեր բոլորիս դարերի երազանքն է եղել:

Թույլ տվեք հույս հայտնել, որ Մալաթիո կրթասիրաց ընկերությունը մինչև վերջ կմասնակցի Բարեկամության և Սփյուռքի տան կառուցման հոյակապ ձեռնարկին:

Կրկին անգամ հայտնելով մեր շնորհակալությունները Ձեր ջանքերի համար, Ձեզ ցանկանում ենք քաջառողջություն և նորանոր հաջողություններ Ձեր հայրենասիրական աշխատանքներին:

Հայրենական ջերմ ողջույններով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 13, գ. 73, թ. 88. 18-19: Պատճեն: Սեքրետագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՐԻԿԱԴԱՅ ԳՈՐԾԻՉ Ժ. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՏԱՆԸ Վ. ՍԱՐՈՅԱՆԻ ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ՍԵՆՅԱԿԻ ՏՐԱՍԱՐՄԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի տիկ. Ժակլին,

Հավաստում ենք 19 հունիս 1983 թվակիր նամակի ստացումը, որ կարդացինք մեծ հաճույքով, վերհիշելով մեր անմահ Վիլյամին, և՛ Ձեզ, և՛ խմբացի բոլոր անդամներին:

Շնորհակալություն անձամբ ինձ և մեր կոմիտեի աշխատակիցներին հղած գնահատանքի ջերմ տողերի համար:

Հարկավ, ուշադրությունը Ձեր նկատմամբ մեծ մասամբ հարգանքի տուրքն էր հայ ժողովրդի կողմից մեծագույն գնահատանքի արժանացած Վիլյամ Սարոյանի շնորհիվ: Սակայն մենք ուրախ ենք Ձեզ հետ ծանոթ լինելու համար ու բարձր ենք գնահատում Ձեր հայրենասիրությունը և չենք կասկածում, որ միշտ կապված կմնաք Հայրենիքին և կվայելեք նրա սերը:

Ձեր առաջարկը միանգամայն ընդունելի է, սակայն մենք ոչ միայն Վիլյամ Սարոյանի անունը կրող սենյակ կառանձնացնենք Բարեկամության տանը, այլ նաև Երևանի լավագույն դպրոցներից և քաղաքի բանուկ փողոցներից մեկը շուտով կկոչենք նրա անունով:

Միրելի տիկ. Ժակլին, ինչ վերաբերում է Բարեկամության տանը նվիրաբերելիք գումարի օգտագործման ձևերին, ապա մենք մանրամասնորեն կգրենք առաջիկայում:

Խնդրում ենք հայրենական մեր ամենաջերմ ողջույնները փոխանցել ընտանիքիդ բոլոր անդամներին, Սարոյան գերդաստանին և Հայաստան կատարած խմբացի բոլոր անդամներին:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 107, թ. 40: Պատճեն: Սեքրետագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Լ. ՔԵՇԻՇՅԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սիրելի Լևոն,

Անցած մեկ ամսվա մեջ գտնվում էի արձակուրդում և բացակայում էի քաղաքից: Վերադարձին ծանոթացա Կոմիտեին գրած Ձեր վերջին նամակների հետ, որոնցում արծարծած հարցերին սիրով պատասխանում ենք:

Ձեր առաջարկը՝ կազմելու հատուկ մարմին, որ կենտրոնացվեն Բարեկամության և Սփյուռքի տան համար կատարվող նվիրատվությունները, ոչ միայն ընդունելի, այլև ողջունելի է մեր կողմից: Այդ մարմնի հանգանակած գումարները հետագայում պետք է փոխանցվեն Առաջնորդարանին, որպեսզի վերջինս էլ իր հերթին այն փոխանցի Ժնևում բացված համապատասխան հաշվին:

Մենք ուրախ կլինեինք, եթե Ձեր ջանքերով համագաղութային նման մի մարմին ստեղծվեր ԱՄՆ-ում և Դուք էլ գլխավորեիք այն: Համոզված ենք, որ այդ գործը Դուք կկատարեք մեծ նվիրատվությամբ և եռանդով:

Ինչ վերաբերվում է Ձեր խոստացած գումարին, պիտի խնդրեինք, որպեսզի դա չկապեք թերթին պարտք տված գումարի հետ և Առաջնորդարանին հանձնեք 20.000-ը: Երբ պարտքը ետ վերադարձվի, այն ժամանակ Դուք էլ կավելացնեք մայր գումարին:

Ձեր հուլիսի 18-ի թվակրում դժգոհել եք, որ Ձեզ հասցեագրված նամակում գրել ենք, որ Բարեկամության տան համար Դուք խոստացել եք նվիրաբերել 20.000, այնինչ իրականում խոստացել եք 25.000: Ձեր դժգոհությունը ցրելու և մեր անճշտությունը շտկելու համար, տեղին ենք գտնում հիշեցնել, Ձեզ, որ բացի 25.000-ի Ձեր խոստումից, Դուք խոստացել եք ամեն տարի Բարեկամության տան շինարարությանը հատկացնել 5.000 դոլար, մինչև շենքի վերջնական կառուցումը:

Սիրելի Լևոն, կատակը՝ կատակ /եթե ինչպես ասում են՝ ամեն մի կատակի մեջ էլ ճշմարտություն կա/, սակայն Բարեկամության տան շինությունը շատ լուրջ ձեռնարկ է, թերևս ամենալուրջը Հայրենիք-սփյուռք հարաբերությունների պատմության մեջ և մեզ վրա այս կապակցությամբ շատ լուրջ պարտականություններ կան դրված, որոնք մենք պետք է ամենալայն ձևով իրագործենք:

Հայրենի կառավարությունը հետամուտ է եղել հայապահպանության սրբազան գործին, որ կենսական պահանջ է մեր ժողովրդի համար: Այս առումով մենք ականատես ենք եղել բազմազան ու բազմաթիվ դրսևորումների, որոնցից մեկն էլ ահա Բարեկամության տան ստեղծումն է քաղաքամայր Երևանում: Այս Տան կառուցման մեջ մենք մեծ ու բացառիկ խորհուրդ ենք տեսնում, և համոզված ենք, որ այն նոր ու հզոր մեկնակետ է հանդիսանալու Հայրենիք-սփյուռք փոխադարձ կապերի է՛լ ավելի զարգացման գործում: Արտասահմանում ապրող մեր յուրաքանչյուր հայրենակցի մասնակցությունը այս կառույցին, ունենալու է զուտ բարոյական-խորհրդանշական բնույթ. ամեն մի սփյուռքահայ պետք է գիտենա, որ գոնե մեկ աղյուսով իր համեստ մասնակցությունն է բերում այս շենքի վեր խոյացմանը, որ իր քրտինքից նույնպես կաթիլ կա այդ ընդհանուր

ծովացած քրտինքների մեջ: Բարեկամության տան համար կատարվող հանգանակությունը չպետք է կրի մեկ անգամվա կամպանիայի բնույթ, այլ այն պետք է դիտվի որպես հայրենասիրական հարատև աշխատանք: Ահա այս իրողությունը պետք է հասցվի գաղութի յուրաքանչյուր անդամի, յուրաքանչյուր ամերիկահայի, որպեսզի նրանք ճիշտ պատկերացնեն գործի մեծությունը: Եվ այս աշխատանքը պետք է կազմակերպվի միասնականության մթնոլորտում, այն պետք է դիտվի որպես հայրենասիրության մի նոր դրսևորում և խորհրդանշի մեր ժողովրդի միասնությունն ու համախմբվածությունը հանուն այն նպատակների իրագործման, որ դարերի երազանքն է եղել մեր ժողովրդի:

Հարգելի Բարեկամ, գործը մեծապես կշահեր, եթե ստեղծված մարմնի կազմում ընդգրկվեին հայրենասիրական, ազգային ու մշակութային կազմակերպությունների լավագույն ներկայացուցիչներ, մամուլի գործիչներ, այնպիսի մարդիկ, որոնք պատրաստ են երկարատև գործունեության և կարող են օրինակ ծառայել համայնքի լայն խավերին:

Ցանկանում եմ հույս հայտնել, որ մեր առաջարկն ընդունելի կլինի Ձեր կողմից և Դուք մեծ նվիրումով կփարվեք այս գործին:

Ձեզ մաղթում ենք քաջառողջություն և առավել հաջողություններ հայրենասիրական Ձեր գործունեությանը:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Հ. Գ. Ա. Խաչատրյանի վերաբերյալ երկու ժապավենները ստացվել և հանձնվել են տուն-թանգարանին:

Ֆ. 875, ց. 13, գ. 68, թթ. 90-92: Պատճեն: Մեքենագիր:

Ռ. ԶՐԲԱՇՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Միտելի բարեկամ,

Որոշել էինք Լիզետայի հետ Երեւան լինել այս օրերս: Ամէն ինչ պատրաստ էր: Վերջին պահին, գործի լուրջ արգելք ունեցայ, ուստի բարբարոս «խաղէինս» ինձ բաց չթողեց...

Յուլիս ամսին Լոնդոնից ուղարկուեց XEROX պատճենահան մի մեքենայ՝ Ջոն Կիրակոսեանի նախարարութեան գրասենեակի համար: Յոյսով եմ, որ ստացել էք: Պիտի խնդրէի, որ մի երկտողով գրէիք Լոգանի Հ. Բ. Ը. Միութեան, որ ստացել էք այդ XEROX-ը:

Երէկ Ա. Ծառուկեանն իր տիկնոջ (ծնթ. Սոնա Խտշյան-Ծառուկյան, մահացել է 2009, Բեյրութում) հետ հասաւ Փարիզ, ուր հաւանաբար պիտի հաստատուեն:

Զերմ բարեկներով՝

Ռ. Զրբաշեան

Ֆ. 875, ց. 14, գ. 143, ք. 72: Ինքնագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՄՊՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴ՝ ԱՍԵՐԻԿԱՅԱՅ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ Խ. ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամերիկահայ քանդակագործ Խորեն Տեր-Հարությանի հետ կապված հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ հանրապետության կուլտուրայի մինիստրության, Հայաստանի Նկարիչների միության հետ միասին համաձայնության ենք եկել կազմակերպելու նրա ստեղծագործությունների ցուցահանդեսը Պետական պատկերասրահի Էջմիածնի մասնաճյուղում, առաջիկա հոկտեմբեր ամսին:

Միաժամանակ ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրությունը, Հայաստանի Նկարիչների միությունը և Կոմիտեն այն համատեղ կարծիքին են, որ Երևանում առանձին շենք պետք է հատկացվի՝ Խ. Տեր-Հարությանի շուրջ 90 կտոր փայտե, բրոնզե և քարե արձանների, ինչպես նաև 300 նկարչական գործերի մշտական ցուցադրության համար:

ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրի առաջին տեղակալ Մ. Խարազյանի³⁶² և ճարտարապետ Ջիմ Թորոսյանի հետ միասին այս կապակցությամբ դիտել ենք մի շարք շենքեր քաղաքի տարբեր փողոցներում, որոնք կարելի է վերածել թանգարան-արվեստանոցի: Մենք առավելապես գնել ենք Երևանյան հին ռճով, սև տուֆ քարից կառուցված շենքերը, ելնելով այն առանձնահատկությունից, որ թանգարանի վերածելու համար այդօրինակ շենքերը ունեն ներշնչող արտաքին տեսք: Այս կարգի շենքեր կան Սվերդլովի, Սպանդարյանի, Պուշկինի, Ալավերդյան փողոցներում: Այդպիսի մի շենք էր Սպանդարյան փող. նո.³⁶³ տունը, որի գնման համար արդեն նախնական համաձայնություն էր կայացվել: Սակայն քաղաքի ճարտարապետական պլանից և մեզ հասած տեղեկությունից պարզվում է, որ հիշատակված տունը ամբողջովին ենթակա է քանդման: Պլանով նախատեսված է կենտրոնական հանրախանութից մինչև Տերյան փողոցի անկյունը և այդտեղից մինչև³⁶⁴ փողոցը ընկած հատվածում կառուցել հանրախանութի շարունակությունը և ռուսական թատրոնի նոր շենքը:

Նմանատիպ մեկ այլ շենքի հանդիպեցինք Ալավերդյան փողոցում /նո. 15/: Այս տունը, որտեղ ապրում է 11 բնակիչ, հիմնականում թոշակառուներ, քանդման ենթակա չէ և օժտված չէ այնպիսի հարմարություններով, որոնք կարելի է օգտագործել որպես ցուցասրահներ: Սակայն շենքը գտնվում է վթարային վիճակում և կապիտալ վերանորոգման կարիք ունի:

362. Խարազյան Մարատ (1931-2006, Փարիզ) – Պատմաբան, լրագրող, դիվանագետ և պետական գործիչ: Սովորել է Ալավերդու միջնակարգ դպրոցում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, զբաղվել ուսուցչությամբ և լրագրությամբ: 1966-1970թթ. աշխատել է առաջին քարտուղար Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանությունում: Եղել է ՀԽՍՀ մշակույթի փոխնախարար: Դոկտորական է պաշտպանել Սորբոնի համալսարանում 2005թ.: Հրատարակված ունի ռուսերեն երկու մենագրություն հայոց պատմության մասին:

363. Այսպես է փաստաթղթում՝ բացակայում է համարը:

364. Փաստաթղթում փողոցի անունը չի նշված:

Վերոհիշյալ նպատակի համար հարմար շենք է նաև Ալավերդյան փողոցի նո. 19 տունը, որտեղ տեղավորված են մեթոդական հիմնարկներ և Օրջոնիկիձեի շրջանի ԴՕՍԱԱՖ-ը:³⁶⁵

Դիտարկված բոլոր շենքերից ամենառեալը և նպատակահարմարը՝ դա Աբովյան փողոցի նո. 4/4 մեկ հարկանի շենքն է՝ ընդամենը մի քանի մետր տարածություն է բաժանում Պետական պատկերասրահի շենքից: Բակում ընդամենը հինգ ընտանիք է բնակվում, որից երկուսը՝ հիշատակված շենքում: Զարմանալին այն է, որ այս շենքը, բակով հանդերձ, ոչ Քաղսովետին և ոչ էլ որևէ անձնավորության չի պատկանում: Շենքի հիմնական տերը եղել է Մուշեղյանը, որը վաղուց մահացել է և անհասկանալի պատճառներով տան տեր է դարձել ուն թերեզյան:³⁶⁶ Այս անձնավորությունը պետական բնակարան է ստացել և ավելի քան տասը տարի չի ապրում խնդրո առարկա շենքում: Բացի այդ, նրա բնակարանը փակ է և չի օգտագործվում ոչ մեկի կողմից: Բակում բնակվողների երկու ընտանիք, ըստ բնակիչների հայտարարության, բնակվարձ են վճարում թերեզյանին: Շենքի շարունակությունն է կազմում կոշիկի սալոնը, որը կարելի է միացնել այս տանը և օգտագործել որպես ցուցասրահ: Սա ոչ միայն իմ առաջարկն է, այլև կուլտուրայի միևնույն առաջին տեղակալ Մ. Խարազյանի և ճարտարապետ Ջիմ Թորոսյանի: Այս տարբերակը կարող է իրականություն դառնալ, եթե Միևնույնների սովետը Երթադսովետին 5 բնակարանային ֆոնդ հատկացնի, որը տրվի բակի բնակիչներին: Բակի բնակիչներն իրենք անձամբ գոհ կլինեն, եթե բավարարվեն բնակարաններով, թեկուզ քաղաքի ամենահեռավոր թաղամասերում:

Անկախ նրանից, թե ինչ շենք կտրամադրվի Խորեն Տեր-Հարությանի գործերի ցուցադրության համար, Կոմիտեն անհրաժեշտ է գտնում մշտապես քանդակագործի տրամադրության տակ թողնել Հին Նորքում եղած այն տունը, որը Քիմիական ռեակտիվների գործարանի կողմից վերակառուցվել է հատկապես Խորեն Տեր-Հարությանին որպես արվեստանոց և բնակարան տրամադրելու նպատակով:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 13, գ. 1, թթ. 34-35: Պատճեն: Մեքենագիր:

365. ԴՕՍԱԱՖ – «Խորհրդային բանակի, ավիացիայի և նավատորմի կամավոր ընկերություն» հասարակական կազմակերպության ռուսերեն անվան հապավումը:

366. Այստեղ և հետո այսպես է բնագրում: Հավանաբար պետք է լինի «Թերեզյան»:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄՍԿԸ Ռ. ՋՐԲԱՇՅԱՆԻՆ՝ Ա. ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Մեծահարգ բարեկամ,

Շատ ուրախ պիտի լինեիք տեսնել Ձեզ, Լիզետայի հետ միասին, Երևանում: Ցավում ենք, որ վերջին պահին գործի արգելքի պատճառով չեք կարողացել ժամանել:

Արտաքին գործերի մինիստրությունը ժամանակին ստացել է Xerox-ը: Եթե չեմ սխալվում, այդ մասին արդեն հայտնել էիք Ձեզ: Կգրենք նաև Լոզանի ՀԲԸ Միությանը:

Ինչպես տեղեկացա, Անդրանիկ Ծառուկյանը Փարիզում է այժմ և ցանկանում է հաստատվել այդտեղ: Խնդրում ենք, եթե դժվար չէ, տեղեկանալ, կցանկանա՞ր, արդյոք, առաջիկայում գալ Հայաստան բուժման համար, ինչպես նաև մասնակցելու սփյուռքահայ գրողների հավաքին, որը տեղի կունենա հոկտեմբերի 10-ից 25-ը:

Կխնդրեիք շտապ հայտնել որոշման մասին, որպեսզի կարողանանք ապահովել մուտքի վիզա:

Ձերմ բարևներով և լավագույն մաղթանքներով՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 143, թ. 71: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՒՆԱՐԱՅ ԳՈՐԾԻՉ Հ. ՃԵԼԱՆՅԱՆԻՆ
ՆՐԱ՝ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԻՐԵՐ ՆԿԻՐԵԼՈՒ
ԵՎ ՆՐԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի Բարեկամ,

Ստացանք պրն.³⁶⁷ ձեռամբ ուղարկված Ձեր նամակը: Ինչպես արդեն նշում
էր, 1982 թվականի ապրիլին սպասում էինք Ձեզ Հայրենիքում: Ափսոսում ենք,
իհարկե, որ գործերի բերումով չկարողացաք իրականացնել այդ այցելությունը:

Ուրախ եղանք իմանալով, որ այժմ արդեն ամեն ինչ կարգին է և ցանկանում
էք գալիք տարվա ապրիլ ամսին այցելել Հայաստան և այդ առթիվ Սարգսյան-
պատի Ազգագրական թանգարանին հանձնել տարիների Ձեր վաստակը՝ 250-ի
մոտ ազգագրական-կրոնական բնույթի իրեր, որոնց պահպանման տեղը, ինչ-
պես իրավացիորեն գրում եք Դուք, Մայր Հայրենիքն է:

Սիրով ընդառաջում ենք Ձեր խնդրանքին և 1984 թվականի ապրիլին հրա-
վիրում ենք Ձեզ, տիկնոջ հետ միասին, Հայրենիք, որպես Կոմիտեի թանկագին
հյուրեր:

Կխնդրեինք միայն հաջորդ տարվա փետրվար-մարտ ամիսներին հայտնել
Ձեր ժամանման ճշտված թվականները, որպեսզի կարողանանք ժամանակին
ապահովել մուտքի վիզաները:

Մեկ անգամ ևս, սիրելի Բարեկամ, ընդունեցե՛ք մեր անկեղծ շնորհակալու-
թյուններն ու քաջառողջության լավագույն մաղթանքները:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 143, ք. 73: Պատճեն: Սեբեմագիր:

367. Փաստաթղթում այսպես է բացակայում է անունը:

ՀԲԸՄ-Ի «ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏ Ե. ԱԶԱՏՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ «ԳԱՌՉՈՒ» ԳՐՔԻ
ՕՐԻՆԱԿՆԵՐԻՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Յարգելի պր. Համազասպյան,

«Պայքար»-ի խմբագիր պր. Գր. Քէօսէեան Ձեր մայիս 30 թուակիր նամա-
կին պատճենը փոխանցեց մեզի. ուրախ ենք, որ ջերմօրէն կը գնահատէք
«Գառզու»-ի հատորը որուն հեղինակն է պր. Քէօսէեան:

Ինչպէս ծանօթ է Ձեզի, այդ արժեքաւոր հատորը հրատարակութիւններէն
մէկն է ՀԲԸ Միության «Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամ»ին:

Ընդառաջելով սոյն նամակին մէջ Ձեր ներկայացուցած խնդրանքին, արդէն
Ձեր հասցէին ղրկած էինք 50 օրինակ իբր նուէր՝ «Գառզու»-ի վերոյիշեալ հա-
տորէն: Կը յուսանք, որ այդ հատորները Ձեր կողմէ կը յանձնուին արժանաւոր
հայ մտաւորականներու եւ արուեստի վարպետներու: Եթէ հարկ ըլլայ՝ տրա-
մադիր ենք յաւելածական օրինակներ եւս ղրկելու Ձեզի:

Կը մնամ,

Լաւագոյն զգացումներով՝

Երուանդ Ազատեան
Ատենապետ

Ֆ. 875, ց. 13, գ. 72, ք. 22: Բնագիր: Սեբեմագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԱՌՁՈՒՄՆԵՐԻ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՆՐԱ ՎԻՍԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՐԱՆԴԵՍԻ ԲԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Միքելի բարեկամ,

Ուրախ եմ տեղեկացնելու Ձեզ, որ հոկտեմբերի 11-ին Երևանի Նկարչի տանը մեծ շուքով բացվեց Ձեր վիմագրական աշխատանքների ցուցահանդեսը, ուր տեղ են գտել Ձեր առաքած մեծաթիվ գործեր, ինչպես նաև «Ալ կարմիր սենյակը» հիանալի կտավը: Ցուցահանդեսի բացմանը մասնակցում էին հանրապետության կուսակցական և կառավարական բազմաթիվ գործիչներ, պետական և հասարակական կազմակերպությունների, հասարակայնության հարյուրավոր ներկայացուցիչներ:

Ցուցահանդեսը առաջին իսկ օրերից մեծ հաջողություն է վայելում և շուտով մենք Ձեզ կուղարկենք մամուլում հրապարակված հոդվածներն ու կարծիքները, որոնցում միահամուռ կերպով հիացական գնահատական է տրված Ձեր աշխատանքներին:

Ցուցահանդեսի առաջին այցելուների թվում էր Հայաստանի Կոմունիստական Կուսակցության առաջին քարտուղար³⁶⁸ Կարեն Դեմիրճյանը, որը շատ բարձր գնահատեց Ձեր ստեղծագործությունը:

Անշուշտ, ցավալի է, որ հանգամանքների բերումով հնարավոր չէրավ ստանալ և ցուցադրել կատալոգում նշված յուղաներկ և ջրաներկ աշխատանքները, որոնք, ինչ խոսք, այցելուներին ավելի ամբողջական պատկերացում կտային Ձեր արվեստի մասին:

Միքելի Գառզու, խորապես ափսոսում ենք նաև, որ չկարողացաք անձամբ ներկա գտնվել ցուցահանդեսի բացմանը և այս անգամ իրար հանդիպելու, զրուցելու և կարծիքներ փոխանակելու առիթը փոքր ինչ հետաձգվեց:

Հուսով ենք, որ զարնանը Ձեզ ոչինչ չի խանգարի ծրագրված այցելությունը իրականացնելու համար, և մեր հանդիպումը անպայման կկայանա:

Ուղարկում ենք Երևանյան ցուցահանդեսի ազդագիրը և կատալոգները:

Թանկագին Գառզու, ջերմորեն շնորհավորելով ցուցահանդեսի առթիվ, Ձեզ ենք հղում քաջառողջության և ստեղծագործական նոր թռիչքների մեր ջերմագին մաղթանքները:

Խորին հարգանքներով՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 143, թթ. 112-113: Պատճեն: Մեքենագիր:

368. Այսպես է բնագրում: Ճիշտն է՝ «Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար»:

ՍՓՅՈՒՌՔԱՅԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՑ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ներկա էին՝

Վ. Ե. Համազասպյանը

Ա. Ս. Մարտիրոսյանը

Կ. Կ. Միքայելյանը

Լ. Հ. Զաքարյանը

Է. Մ. Միրզոյանը

Շ. Ս. Տատուրյանը

Ն. Ն. Հակոբյանը

Ռ. Հ. Պարսամյանը

Ս. Ս. Մուրադյանը

Հ. Ց. Լիլոյանը

Գ. Ա. Գալոյանը

Գ. Տ. Խրլովյանը

Ս. Ս. Արևշատյանը³⁶⁹

Նախագահության նիստին մասնակցում են Կոմիտեի բաժնի վարիչները:

Նախագահությունը վարում է Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը:

Ընկ. Վ. Համազասպյանը, բացելով նախագահության նիստը, հայտարարեց, որ երկու տարին մեկ անգամ մրցանակներ են բաշխվում սփյուռքի մշակույթի և գիտության հայ գործիչներին: Փոքր նախագահությունը ընտրել է 7 հոգի 1983թ. համար, որոնց և ներկայացրեց նախագահության ուշադրությանը:

1. Լևոն-Զավեն Սյուրմելյան /ԱՄՆ/ – Գերագույն սովետի մրցանակ

2. Հովսեփ Սվաճյան /Ֆրանսիա/ – ԳԱ Անանիա Շիրակացու անվան մրցանակ

3. Խորեն-Տեր-Հարության /ԱՄՆ/ – Նկարիչների միության Մարտիրոս Մարյանի անվան մրցանակ

4. Ալիսա Թերզյան /Արգենտինա/ – Կոմպոզիտորների միության Կոմիտասի անվան մրցանակ

5. Պերճ Ժամկոչյան³⁷⁰ /ԱՄՆ/ – Կուլտուրայի մինիստրության Պետրոս Ադամյանի անվան մրցանակ

369. Համապատասխանաբար՝ Անդրանիկ Մարտիրոսյան, Կարլեն Միքայելյան, Լևոն Զաքարյան, Էդուարդ Միրզոյան, Շահեն Տատուրյան, Նորա Հակոբյան, Ռուբեն Պարսամյան, Մարգիս Մուրադյան, Հենրիկ Լիլոյան, Գալուստ Գալոյան, Գևորգ Խրլովյան, Սեն Արևշատյան:

370. Ժամկոչյան Պերճ (1930, Բոստոն – 2004, Բոստոն) – Երաժիշտ, երգեհոնահար, արվեստի պատվավոր դոկտոր: Ավարտել է Նյու Ինգլենդի կոնսերվատորիան, կատարելագործվել Փարիզում: 1957թ. աշխատել է Բոստոնի սիմֆոնիկ նվագախմբում իբրև առաջին երգեհոնահար: Մենահամերգներով հանդես է եկել տարբեր երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում:

6. Բենիամին Ժամկոչյան³⁷¹ /Լիբանան/ – Լուսավորության մինիստրության Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակ

7. Անդրանիկ Ծառուկյան – Հայաստանի Գրողների միության Խ. Աբովյանի անվան մրցանակ.

– Խնդրեմ, եթե կան առարկություններ, արտահայտվեք:

Է. Միրզոյան – Եթե կան առարկություններ Պ. Ժամկոչյանի թեկնածության համար, ես կպատասխանեմ:

Ռ. Պարսամյան – Ճիշտ է, Ժամկոչյանը բերում է գործիքներ և այլն, բայց որպես մարդ, նա մարդ չէ և փայլուն էլ կատարող չէ, որ նրան առաջադրենք: Ունի վատ վարքագիծ և նրանից ավելի լավ երգեհոնահարներ էլ կան:

Է. Միրզոյան – Նրա առաջին իսկ այցելությունից զիտեմ մոտիկից, որպես արվեստագետ և երաժիշտ՝ չի կարող լինել կասկած: Այսքան տարի նա Բոստոնի մենակատարն է, մեր հասարակությունը սպասում է նրան, և կասկածից դուրս է նրա կատարումը: Հայրենասեր է, օգնել է Հայաստանին գործիքներով և երգեհոններով, որպես մարդ անկեղծ է, անմիջական, նեղացկոտ, հայրենասեր, ներքինը իսկույն արտահայտում է, բայց այդ ամենը չի անդրադառնում նրա վրա բացասաբար: Նա իր մայրիկի հետ եղել է Երևանում, օդանավակայանում կորել էին նրանց ճամպուկները, մեկ ամիս հետո պարզվեց, որ դրանք գողացել է մի հայրենադարձ Պերճուհի անունով կին: Ժամկոչյանը հրաժարվեց ստանալ վնասի գումարը: Կարող է ուղիղ խոսել և շատ անկեղծ է: Արժանի թեկնածություն է: Այլսա Թերզյանը առաջնակարգ կոմպոզիտոր է, ճանաչված, հեղինակություն է վայելում երկրում, Կոմպոզիտորների միության գլխավոր քարտուղարն է, մեզ տեղում ընդունեց այնպես, որ մենք չգզացինք, թե Մյուրեքյանի հյուրերն ենք: Նա կազմակերպեց համերգ «Կոլոն» սրահում, արձագանքեց ողջ երկրի մամուլը և դուրս եկավ նեղ ազգային շրջանակներից: Ստեղծագործություններն ավանդական են և ժամանակակից, ակունքները՝ ազգային: Նա ունի մի առաջնակարգ ջութակային կոնցերտ:

Ս. Մուրադյան – Ժամկոչյանի մասին կարծիքս կիսում եմ Միրզոյանի հետ: Շփվել եմ նրա հետ և ստացել դրական տպավորություն, լավ մարդ է, անկեղծ: Խորեն-Տեր Հարությունը լավ մարդ է, անմնացորդ նվիրված Հայրենիքին: Սովորաբար, սփյուռքահայերը սպասում են պատասխան վերաբերմունքի, իսկ նա՝ երբեք: Լավ թեկնածություն է:

Հ. Լիլյոյան – Գերագույն սովետիկը ամենաբարձր մրցանակն է: Առաջին անգամ այն տրվեց Վ. Մարոյանին: Պետք է լավ մտածենք, որ թեկնածուն ճիշտ ընտրվի: Նա անվանի գրող է, բայց պետք է լինի նաև հասարակական գործիչ:

Վ. Համազասպյան – Նա մշակույթի մեծ պրոպագանդիստ է: Շատ պոպուլյար է նրա «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք» գիրքը: Նա բարձրացնում է Ռուսաստանի դերը մեր ժողովրդի կյանքում, այդ թեմային է նվիրված նաև «Ռուս զինվորի գլխարկը»: Նա առաջինը «Մասունցի Դավիթ» էպոսը անգլերեն

371. Ժամկոչյան Բենիամին Կարապետի (1895, գյուղ Հայնի, Տիգրանակերտի նահանգ – 1984, Բեյրութ) – Կրթական և հասարակական գործիչ: Կրթությունն ստացել է Խարբերդի գերմանական ուղղակուղում: Աշխատել է Արգաթյան, Մահակյան վարժարաններում, վերջինիս տնօրենի պաշտոնը վարել շուրջ չորս տասնամյակ: Ունի մի շարք դասագրքեր, թարգմանություններ:

ներկայացրեց ժողովրդին: Դեռ Թեքեյանից սկսած, «Լույս զվարթ» գրքով նա ներկայացավ ժողովրդին:

Ռ. Պարսամյան – Բայց մենք ունենք Ռ. Մելիք:

Վ. Համազասպյան – Նա դեռ այնքան հայտնի չէ, նրա բնագավառն այլ է և նրան կարող ենք տալ շքանշան:

Շ. Տատուրյան – Ճիշտ են Միրզոյանի ասածները: Պերճը լավ կատարող է և գործնական հայրենասեր: Ես նրան հանդիպել եմ երգեհոնի ուղարկման օրերին: Նա ինձ ասաց, որ ուղարկում է այդ ամենը հայության ուժերով և միայն մեկն է ինքը ուղարկում:

Ն. Հակոբյան – Ես տեսել եմ նրա ափերից դուրս եկած վիճակը և շատ կուզեի, որ դափնեկիրները լինեին իրենց ափերի մեջ:

Ռ. Պարսամյան – Կատարողական արվեստը չի չափվում նրանով, թե քանի անգամ է եղել Հայաստանում, այլ՝ ինչ է իրենից ներկայացնում: Օրինակ՝ Շ. Ազնավուրը:³⁷²

Վ. Համազասպյան – Նա բացի հայ լինելուց, այլն ոչինչ չէ: 20 տարի գոյություն ունի Կոմիտեն, բայց նա ոչինչ չի արել հայության, Կոմիտեի և սփյուռքի համար:

Գ. Աբաջյան – Անցյալ տարի ընտրությունը ավելի հեշտ էր, այս տարի ավելի դժվար է: Սփյուռքում արժանի մարդիկ այնքան լեցուն չեն, որ երկու տարին մեկ ճիշտ ընտրենք: Արվեստագետը պետք է ունենա խառնվածք: Տաղանդավոր Վահրամ Փափազյանը³⁷³ նույնպես ուներ իր տարօրինակությունները:

Գ. Գալոյան – Պաշտպանենք նախագահության առաջարկած թեկնածությունները:

Ռ. Պարսամյան – Պետք է լուրջ մտածենք, երբ գործ ունենք ոչ բացարձակ տաղանդների հետ:

Վ. Համազասպյան – Խնդրեմ, առաջարկե՛ք:

Ռ. Պարսամյան – Հիմա անմիջապես պատասխանելու պատրաստ չեմ, բայց 2 տարի հետո՝ կլինի:

Ն. Հակոբյան – Համաձայն եմ, բայց ունեմ երկու հայտարարություն: 1. Կարելի է տալ ավելի քիչ արժանիք ունեցող մարդու թեկնածություն, բայց լինի երիտասարդ, որը 20-30 տարվա ընթացքում շատ ավելի բան կտա Հայրենիքին

372. Ազնավուր Շառլ (Ազնավուրյան Վաղինակ Միքայելի) (ծն. 1924-ին, Փարիզ) – Ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ, երգահան, դերասան: Մենահամերգներով հանդես է եկել բազմաթիվ երկրներում, խաղացել մի շարք ներկայացումներում, նկարահանվել մի քանի ֆիլմերում: Մեծ բարերար, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան, ՀՀ ազգային հերոս (2004): Արժանացել է Ֆրանսիայի և շատ երկրների պետական բարձր պարգևների:

373. Փափազյան Վահրամ Գամբերի (1888, Կ. Պոլիս – 1968, Լենինգրադ, թաղված է Երևանում՝ Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում) – Դերասան, Հայաստանի (1932), Վրաստանի (1933), Ադրբեջանի (1935) և ԽՍՀՄ (1956) ժողովրդական արտիստ: Սովորել է ծննդավայրում և Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում, հետևել Միլանի Արվեստների ակադեմիայի թատերական դասընթացներին: 1920ական թվականներից ստեղծագործել է Խորհրդային Հայաստանում, հյուրախաղերով գտնվել խորհրդային բազմաթիվ հանրապետություններում և արտասահմանում: Համարվում է 20-րդ դարի հայ թատրոնի մեծագույն դերերից: Նկարահանվել է նաև կինոյում:

և սփյուռքին: 2. Պետք է քաջալերենք նրանց, ովքեր իրենց տաղանդը ներդնում են ինքնագործունեության մեջ՝ սփյուռքի դժվարին պայմաններում:

Վ. Համագասպյան – Համաձայն եմ, բայց երկու տարի է, մենք լավ չենք նախապատրաստվել: Մի երեք ամիս առաջ պետք է ուղարկենք թեկնածուներին նախագահության անդամներին փակ ծրարով, ընտրությունը ընթանա երեք փուլով: Առաջին փուլում ընտրենք առաջարկված թեկնածություններից ամենաարժանիներին, 2. Այդ թեկնածությունները նորից քննարկենք և ներկայացնենք վերադասին ու երրորդ փուլում՝ հաստատենք:

Այազայում ավելի լավ կկազմակերպենք աշխատանքները դեսպանատների և ապարատի միջոցով:

Թեկնածություններն անցնում են միաձայն, ընկ. Պարսամյանը Պերճի հարցում՝ ձեռնպահ:

Ֆ. 875, ց. 14, գ. 55, թթ. 4-8: Պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԼԱՄԱԿԸ ՀԲԸՄ ՍԱՆ ՊԱՌԼՈՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՐԻ ԱՏԵԼԱՊԵՏ
2. ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ³⁷⁴ ԵՎ ԱՏԵԼԱՊԵՏԻ Օ. ՄՈՍՏԻՉՅԱՆԻՆ³⁷⁵
ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի բարեկամներ,

Հաճույքով կարդացինք Ձեր ս.թ. հոկտեմբերի 31 թվակիր գույգ նամակները:

Ուրախալի է իմանալ, որ պարոններ Արմեն Գարսայոյաճյանն ու Զաքարիա Մեքալեքյանը³⁷⁶ Հայրենիք կատարած այցելությունից վերադարձել են խանդավառ, հայրենասիրական վառ տպավորություններով ոգևորված:

Կոմիտեին ուղղած ջերմ ու անկեղծ խոսքերի համար ընդունեցե՛ք մեր շնորհակալությունները: Մենք մշտապես պատրաստ ենք ընդունելու նման պատվավոր հայորդիներին, որոնք տրամադիր են օգտակար լինել հայապահպանման և հայրենասիրական վեհ նպատակներին:

Հարգելի պրն. Զավեն, հաճելի է իմանալ, որ 1984թ. որոշել էք այցելել Հայրենիք: Դուք, Ձեր ազնվափայլ տիկ. Նվերի հետ կլինեք Կոմիտեի հյուրը: Խնդրում ենք հայտնել այցելության ամիսը՝ վիզայի հարցը կարգադրելու համար:

Օգտվելով առիթից, շնորհավորում ենք Ձեր Նոր Տարին և ցանկանում հայրենասիրական բեղուն գործունեություն:

Հարգանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համագասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 75, թ. 76: Պատճեն: Մեքենագիր:

374. Զավեն Տեր-Հարությունյան:

375. Օշին Մոստիչյան:

376. Ազգանվան ճիշտ ձևն է՝ Մեկպեխյան (առաջացել է «մեկ» և «պեխ» բառերի համակցումից):

ՍՓՅՈՒՌԱԳԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐՊԻ ԿՈՄԻՏԵԻ
 ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՍՓՅՈՒՌՔԻՅ ՍՏԱՅԿՈՂ ԳԵՂԱՐԿԵՍԱԿԱՆ
 ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՂՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱԿՄԱՆ
 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կոմիտեի նախագահությունը նշում է, որ սփյուռքից գեղարվեստական արժեքների տեղափոխման, պահպանման և ցուցադրման գործում զգալի աշխատանք է կատարվում: Հայրենիք-սփյուռք մշակութային կապերի ամրապնդման և զարգացման շնորհիվ նկատելիորեն ընդլայնվել են սփյուռքից Մովսեսի և Հայաստան գեղարվեստական արժեքների, նվիրատվությունների և առաքումների շրջանակները: Այդ արժեքները պահպանվում և ցուցադրվում են Հայաստանի Պետական պատկերասրահում, Մատենադարանում, Ժամանակակից արվեստի, Պատմության, Ազգագրության, Ժողովրդական ստեղծագործության տան թանգարաններում: Նվիրաբերած գործերի մեծ մասը սփյուռքի կերպարվեստի, հայ ժողովրդական կիրառական, ինչպես նաև գրքային արվեստի նմուշներ են, որոնք ի ցույց են տրվում ժողովրդին, ինչպես նաև գիտահետազոտական նպատակներին:

Վերջին տարիներին Հայրենիք են տեղափոխվել բազմաթիվ պատկերազարդ ձեռագրեր, այդ թվում՝ Թորոս Ռոսլինի³⁷⁷ գործերից, Աշխանի³⁷⁸ նվիրաբերած հայկական գործերի հավաքածուն, դրամների, արծաթագործական ու ասեղնագործական իրերի բազմաթիվ նմուշներ, Հովհաննես Այվազովսկու,³⁷⁹ Արշակ

377. Թորոս Ռոսլին (ծննդյան և մահվան թվականները՝ անհայտ) – Կիլիկիայի հայոց թագավորությունում XIII դարի երկրորդ կեսի մանրանկարիչ, Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի և առհասարակ հայկական մանրանկարչական արվեստի խոշորագույն ներկայացուցիչ: Ստեղծագործել է Հռոմկլայում և Միսում: Պահպանվել են նրա զարդանկարած մի քանի ձեռագիր մատյաններ: Ռոսլինի արվեստը հատկանշվել է երբեք զեղությամբ և թեմաների բազմազանությամբ:

378. Աշխան Ալբերտ – Ֆրանսիայում գործած «Հայկական Ժառանգության» Պահպանման Ընկերակցության» նախագահ: Հայաստանի Պատմության պետական թանգարանին նվիրել է ինը գորգ. տե՛ս Մ. Նադրյան, «Հայրենադարձվող արժեքներ – Վերներ հայրենի թանգարաններին», «Հայրենիքի ձայն», 17 սեպտեմբերի 1980թ., էջ 5:

379. Այվազովսկի (Այվազյան) Հովհաննես (Իվան) Կոստանդինի (1817, Թեոդոսիա – 1900, Թեոդոսիա, Ղրիմ, թաղված է քաղաքի Ս. Սարգիս հայկական եկեղեցու բակում) – Հայ աշխարհա-հոշակ ծովանկարիչ, Մանկա Պետերբուրգի, Հռոմի, Ֆլորենցիայի, Շտուտգարտի և Ամստերդամի Գեղարվեստի ակադեմիաների անդամ: Սովորել է ծննդավայրի հայկական ծխական դպրոցում, Միմֆերոպոլի ռուսական գիմնազիայում, Մանկա Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում: Արժանացել է բազմաթիվ պետությունների բարձր պարգևներին: Նրա ստեղծագործությունները ցուցադրվել են աշխարհի բազմաթիվ երկրներում, համարվում են աշխարհի թանգարանների և պատկերասրահների թանկարժեք գանձերից:

Ֆեթվաճյանի,³⁸⁰ Արմիսի,³⁸¹ Ժիրայր Օրաքյանի,³⁸² Հակոբ Գյուրջյանի,³⁸³ Աշոտ Չորյանի,³⁸⁴ Հովհաննես Ալխազյանի,³⁸⁵ Գառգուի և այլոց ստեղծագործությունների սովոր հավաքածուները, կիրառական արվեստի իրեր, հնագիտական նմուշներ և այլն:

Բացառիկ արժեք են ներկայացնում արևմտաեվրոպական այնպիսի նշանավոր նկարիչների գործեր, ինչպիսիք են Գոյան, Մոնտիչելլին, Թեոդոր Ռուսսոն, Դրագը, Բուդենը, Անկետտենը, Մանեն և ուրիշներ: Բոլոր այդ արժեքները կարևոր համարվում են հանդիսանում հանրապետության թանգարանային ֆոնդերում:

Մակայն ստացված գեղարվեստական արժեքների ցուցադրման գործում դեռևս կան թերություններ և բացթողումներ, որոնց մասին նշվում են սփյուռքից ստացված նամակներում և որոնք հաստատվել են Կոմիտեի կատարած ուսումնասիրություններով:

Պետական պատկերասրահի ցուցադրական հրապարակը նրա ֆոնդերի համեմատ տակավին փոքր է, որի հետևանքով սփյուռքի արվեստը դեռևս համակողմանիորեն չի ցուցադրվում, էքսպոզիցիայից դուրս են մնացել մի շարք անվանի նկարիչներ և ցուցադրման արժանի շատ ստեղծագործություններ: Ընդհանուր թերություն է այն, որ էքսպոնատներից քչերն ունեն նշումներ նվիրատուների մասին, պիտակներում կան առանձին վրիպումներ և անճշտություններ, ցածր է ար-

380. Ֆեթվաճյան Արշակ Աբրահամի (1866, Տրապիզոն – 1947, Մեղֆորդ, ԱՄՆ, աշխույժա-փորը 1948-ին տեղափոխվել է թաղվել է Երևանում) – Գեղանկարիչ, հասարակական գործիչ: Ավարտել է Կ. Պոլսի Գեղարվեստի վարժարանը, ուսանել Հռոմի Գեղարվեստի ակադեմիայում: Իր կտավներում պատկերել է հայկական կոտորածները, Մասունի 1896 և 1904թթ. ապստամբությունները, հայկական կամավորական զինների ազատագրական պայքարը, նկարել նաև հայ պետական գործիչների, հայոց պատմության, ազգագրության և դիցաբանության թեմաներ: Հեղինակ է Հայաստանի առաջին հանրապետության դրոշմանիշների և թղթադրամների գծագրերի:

381. Արմիս (Արմենակ Միսիրյան, 1901, Աղբյաման – 1977, Փարիզ) – Գեղանկարիչ: Կրթությունն ստացել է ծննդավայրում և Հայեստան, Փարիզում հաճախել Ժյուլիեն և Գրանդ Շամիեր ակադեմիաները: Նկարել է դիմանկարներ, ինքնանկարներ, Մեծ Եղեռնի և հայության վերապրումի թեմաներով կտավներ: Եղել է հայ ավետարանական հոգևոր հովիվ՝ վերապատվելի:

382. Օրաքյան Ժիրայր (Ջերարդո) Գրիգորի (1901, Կ. Պոլսի – 1962, Հռոմ) – Գեղանկարիչ: Սովորել է Հռոմի Գեղարվեստի ակադեմիայում: Դասավանդել է Հռոմի Վիլյա Մեդիչի գեղարվեստի վարժարանում: Ստեղծագործել է առավելաբար հայկական, հատկապես՝ Մեծ Եղեռնի թեմաներով:

383. Գյուրջյան Հակոբ Մարգարի (1881, Շուշի – 1948, Փարիզ) – Քանդակագործ: Սովորել է ծննդավայրի և Մոսկվայի ռեալական ուսումնարաններում, Փարիզի Ժյուլիեն ակադեմիայում, հաճախել Օգյուստ Ռոդենի արվեստանոցը: Հիմնականում դիմաքանդակներ է ստեղծագործել: Աշխարհի շատ քաղաքներում մասնակցել է անհատական և խմբային ցուցահանդեսների:

384. Չորյան Աշոտ (1905, Կիրասոն – 1970, Կահիրե) – Գեղանկարիչ: Սովորել է Վիեննայի նկարչական դպրոցում, ավարտել Հռոմի Գեղարվեստի ակադեմիան: Ստեղծել է դիմանկարներ, բնանկարներ, նատյուրմորտներ: Զբաղվել է նաև գրքերի ձևավորմամբ: Արաբական Արևելքի քաղաքներում, Փարիզում և Վենետիկում անհատական կամ խմբային ցուցահանդեսների է մասնակցել:

385. Ալխազյան Հովհաննես (Ժան) (1881, Վան – 1958, Փարիզ) – Գեղանկարիչ: Սովորել է Թիֆլիսի և Փարիզի գեղարվեստի դպրոցներում: Պատկերել է էտյուդներ և բնանկարներ: Տարբեր երկրներում մասնակցել է խմբային ցուցահանդեսների:

ժեքների ցուցադրման ընդհանուր կուլտուրան: Երբեմն նվիրատուները չեն ստանում շնորհակալական նամակներ:

Կոմիտեի նախագահությունը որոշում է.

1. Հարց հարուցել ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության առջև՝

ա/ Պատկերասրահի և մյուս թանգարանների ղեկավարների ուշադրությունը հրավիրել սփյուռքից ստացվող գեղարվեստական արժեքների հաշվառման, պահպանման և ցուցադրման վիճակը բարելավելու անհրաժեշտության վրա:

բ/ Ընդլայնել սփյուռքի արվեստի ցուցադրումը ինչպես Երևանի, այնպես էլ հանրապետության մյուս թանգարաններում:

2. Նկատի ունենալով սփյուռքի արդի կերպարվեստի միջազգային համբավը, և հաշվի առնելով, որ այդ արվեստի զարգացման առանձնահատկությունները թելադրում են մասնագիտական ուսումնասիրության անհրաժեշտություն, հարց հարուցել ՀՍՍՀ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության և Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահության առջև՝ երկու ասպիրանտական տեղ հատկացնել սփյուռքի արվեստի պատմության և տեսության գծով:

3. Քանի որ Պետական պատկերասրահը, Մատենադարանը և մյուս թանգարանները գեղարվեստական արժեքներ են ստանում ոչ միայն Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի միջոցով, անհրաժեշտ համարել, որ նվիրաբերումների վերաբերյալ անպայմանորեն տեղյակ պահվի Կոմիտեի բաժիններին և սփյուռքից ստացված գեղարվեստական արժեքների բաշխման հանձնաժողովին:

4. Նպատակահարմար է, որ սփյուռք ուղարկվող բոլոր շնորհակալագրերը հաշվառման ենթարկվեն Կոմիտեում և հասցեատերերին ուղարկվեն Կոմիտեի միջոցով:

5. Հանձնարարել «Սովետական Հայաստան» հանդեսի, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագրություններին և Կոմիտեի մամուլի բաժնին՝ պարբերաբար լուսաբանել սփյուռքից ստացված գեղարվեստական արժեքների ստացման և ցուցադրման հարցերը:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 14, գ. 55, թթ. 68-70: Հաստատված պատճեն: Մեքենագիր:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Կ. ՋՐԲԱՇՅԱՆԻՆ Ա. ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Սիրելի բարեկամ,

Բավական ժամանակ է, որևէ լուր չունենք Ձեզանից: Գիտենք, իհարկե, որ այդ երկարատև լռության պատճառը միայն խիստ զբաղվածությունն է: Այնուամենայնիվ, սպասում էինք Ձեր տեղեկություններին Անդրանիկ Ծառուկյանի մասին: Արդյո՞ք որոշել են վերջնականապես հաստատվել Փարիզում: Մեզ հետաքրքրում է նաև, թե կցանկանայի՞ն առաջիկայում այցելել Հայաստան:

Սիրելի Կարպիս, Երևանի Քաղաքային սովետը մի քանի անգամ դիմել է մեզ, խնդրելով իմանալ որքա՞ն է մնացել իրենց հատկացված գումարներից: Նրանց հաշվումներով՝ դեռևս բավական գումար կա և ցանկանում են այդ միջոցներով ստանալ վիդեոմագնիտոֆոններ: Կխնդրեինք ճշտել և տեղեկացնել, արդյո՞ք հնարավոր է ընդառաջել նրանց ցանկությանը:

Ներփակ ուղարկում ենք Քաղսովետի ներկայացրած ցանկը:

Օգտվելով առիթից, մեկ անգամ ևս ջերմորեն շնորհավորում ենք Լիզետայի, Ձեր և երեխաների Նոր Տարին, մաղթում ենք քաջառողջություն, երջանկություն, նորանոր հաջողություններ:

Կխնդրեինք մեր սրտանց և լավագույն մաղթանքները փոխանցել տեր և տիկին Ծառուկյաններին:

Սիրով՝

Վ. Համազասպյան

Ֆ. 875, ց. 13, գ. 165, թ. 9: Պատճեն: Մեքենագիր:

Վ.ՅԱՄԱԶՄԱՊՅԱՆԻ ՖՐԱՆՍԻԱ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՅԻ ԴԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՍԾՅՈՒՌՔԱՅԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԻ ԿՈՍՏԵԻ
ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

Ինչպես հայտնի է, ես Ֆրանսիա էի գործուղվել Ֆրանսահայ նախկին ռազմիկների միության հրավերով: Փարիզում ինձ համար պարզվեց, որ Միսաք Մանուշյանի գնդակահարության 40-ամյակը նշվում է ոչ թե Նախկին ռազմիկների միության նախաձեռնությամբ, ինչպես եղել է ամեն տարի, այլ Ֆրանսիայի պետության, Ֆրանսիացի ռազմիկների ընկերության նախաձեռնությամբ, որը կատարվել է շատ արագ և անակնկալի է բերել մեր շատ բարեկամների ու կազմակերպությունների:

Հունվարի 7-ին Վիեննայում Ֆրանսիայի պրեզիդենտ Միտերանն³⁸⁶ իր ելույթում շոշափելով հայկական գենոցիդի և հայկական իրավունքների պաշտպանության հարցերը, միաժամանակ խոսել է այն մասին, որ այս տարի պետական բարձր մակարդակով պետք է նշվի հայ և ֆրանսիացի ժողովուրդների մեծ գավակ Միսաք Մանուշյանի գնդակահարության 40-ամյակը: Եվ ահա այդ օրվա խորհուրդը ստացել է համաֆրանսիական բնույթ և այդ միջոցառմանը նախապատրաստվել էին ֆրանսիական բոլոր կազմակերպությունները, դիմադրական շարժման բոլոր մասնակիցները: Հայկական կազմակերպությունները մեծ ոգևորություն էին ապրում այդ նախաձեռնության առիթով և անխտիր բոլորը իրենց մասնակցությունն էին բերել այդ տարեդարձի ոգեկոչմանը:

Ֆրանսիական բոլոր թերթերը փետրվարի 24, 25, 26-ին տպագրեցին բազմաթիվ նյութեր, հաղորդումներ Մանուշյանի և նրա խմբի գործունեության ու ոգեկոչման վերաբերյալ: Ֆրանսիական հեռուստատեսությունն ու ռադիոն Մանուշյանին նվիրված հաղորդումներ հեռարձակեցին: Փետրվարի 26-ին ժամը 10-ին Իվրի գերեզմանատանը, որտեղ գտնվում է Մանուշյանի հուշարձանը /այն քանդակվել է Երևանում, հայկական տուֆից/ տեղի ունեցավ մեծ արարողություն Մ. Մանուշյանի և նրա 23 ընկերների հիշատակին: Գերեզմանատանը պատվո-պահակներ էին ֆրանսիական զորամասերից, գերեզմանատան ծառուղիներում զորամասեր և նվագախմբեր կային: Ներկա էին պետական, զինվորական, կուսակցական բարձրաստիճան անձնավորություններ, այդ թվում Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության քաղբյուրոյի անդամներ, բազմաթիվ թերթերի թղթակիցներ, հասարակայնության բազմահազար ներկայացուցիչներ: Նվագախումբը նվագում էր Մանուշյանի ջոկատի քայլերգը: Շիրմաքարի վրա խոնարհեցին Ֆրանսիայի պետական դրոշմը: Հիշատակի խոսք ասացին Մանուշյանի այրին՝ Մելինե Մանուշյանը, վետերանների միության նախագահը: Արարողության ավարտին նվագախումբը կատարեց «Մարսելյեզը»: Բարձրացվեցին դրոշները: Ժամը 1-ին զինվորական վարժարանի սրահներից մեկում տրվեց կառավարական ճաշկերույթ: Ինչպես գերեզմա-

նատանն, այնպես էլ ճաշկերույթին ներկա էին բազմաթիվ պետական, ինչպես նաև Բելգիայի, Լեհաստանի, Իսրայելի, Հունաստանի և Շվեյցարիայի ներկայացուցիչներ: Այս ճաշկերույթում հանդես եկավ նախկին ռազմիկների մինիստրի տեղակալ Ժան Լորենը, որը որպես պետության ներկայացուցիչ ասաց, որ ֆրանսիական կառավարությունն է այսօր իր հարգանքի տուրքը տալիս Միսաք Մանուշյանին և նրա ընկերներին, որը պատիվ է նաև հայկական համայնքին: «Ցեղասպանության հետևանքով որբացած սերունդն էր Ֆրանսիայում, որն իրեն նետեց ազատության, անկախության, արդարության համար մղվող պայքարի մեջ, քանի որ այդ ժողովուրդը զիտեր արժեքը ազատության ու անկախության»:

Այստեղ հայ ռազմիկների անունից հանդես եկավ Սուրեն Ակոպովը, որի ելույթը նվիրված էր Մանուշյանի կյանքին ու գործունեությանը: Ժամը 4-ին Մանուշյանի գնդակահարության վայրում՝ Վալիերենում տեղի ունեցավ պաշտոնական արարողություն՝ նվիրված Մանուշյանի, նրա խմբի ու առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ Ֆրանսիայի համար իրենց կյանքը զոհած հայերին: Այստեղ հավաքվել էին բազմահազար ֆրանսիացիներ, հանրապետության նախագահի ներկայացուցիչը, որը եվրոպական հարցերի մինիստր՝ Ռոլան Դյումասն է³⁸⁷, նախկին ռազմիկների մինիստրի տեղակալ Ժան Լորենը, պաշտպանության մինիստրի տեղակալ Ժան Կաթելը, Օտրասենի նախագահը, Ընդհանուր խորհրդի նախագահը, Փարիզի զինվորական կառավարիչը, քաղաքապետը, բազմաթիվ երկրների դեսպաններ, Սովետական Միության դեսպանատան զինվորական աստաշեն, պառլամենտի բազմաթիվ անդամներ, պառլամենտի փոխնախագահներ, Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության ղեկավարներ, բազմաթիվ օտարերկրյա թղթակիցներ և այլն: Կանգնեցված էին զինվորական պատվո-պահակներ, զինվորական նվագախումբ և զորամասեր: «Մարսելյեզի» նվագից հետո հուշարձանին ծաղիկներ դրվեցին Միտերանի, պաշտպանության մինիստրի, հայկական կազմակերպությունների անունից: Օաղկեսյակ դրեցին նաև ես Հայաստանի անունից: Նվագախումբը կատարեց ֆրանսիացի պարտիզանների քայլերգը: Արարողությունից հետո ներկաներից մի քանիսին թույլատրվեց մուտք գործել պանթեոն: Յոթ երկրների ներկայացուցիչների հետ միասին ես նույնպես պատիվ ունեցա ստորագրելու ոսկե մատյանում: Ապա շարժվեցինք գնդակահարվածների բացատը: Այս բացատում հուշասլաքարերի վրա Փարիզի Դպրոցասիրաց վարժարանի աշակերտուհիները ծաղիկներ դրեցին: Այստեղ թաղված են շուրջ 4.500 դիմադրականներ: Երբ հուշաքարերի վրա իջեցվեցին դրոշները, Ակոպովի որդին արտասանեց երկու բանաստեղծություն՝ Դանիել Վարուժանից և Վահան Թեքեյանից: Ապա հնչեց Լուի Արագոնի³⁸⁸ նշանավոր բանաստեղծությունը նվիրված Մանուշյանին և նրա խմբին:

387. Դյումաս Ռոլան (ծն. 1922, Լիմո, Ֆրանսիա) – Ֆրանսիացի իրավաբան, Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության ակնավոր գործիչ: 1983-1984թթ. նոյեմբերին՝ եվրոպական հարցերի գծով նախարար, 1984թ. նոյեմբեր-1986թ. մարտին և 1988թ. մայիս-1993թ. մարտին՝ արտաքին գործերի նախարար, 1995-1999թթ.՝ Սահմանադրական խորհրդի նախագահ:

388. Արագոն Լուի (Լուի Անդրիեո, 1897, Փարիզ – 1982, Փարիզ) – Ֆրանսիացի բանաստեղծ, վիպագիր, խմբագիր և հասարակական գործիչ, Պոլ Էյուսարի և Անդրե Բրետոնի հետ՝ ֆրան-

386. Միտերան Ֆրանսուա Մորիս Ադրիեն Մարի (1916, Ժառնակ, Ֆրանսիա – 1996, Փարիզ) – Իրավաբան, Ֆրանսիացի պետական և քաղաքական գործիչ, Ֆրանսիայի Սոցիալիստական կուսակցության նախագահ, 1981-1995թթ.՝ Ֆրանսիայի Հանրապետության նախագահ:

Մանուշյանի գնդակահարության 40-ամյակի ծիսակատարությունը մեծ չափով նպաստեց ֆրանսահայության համախմբմանը, առաջադիմական կազմակերպությունների հեղինակության բարձրացմանը: Չնայած որոշ տարաձայնությունների, այնուամենայնիվ, փառիզահայության մեծամասնությունը բարձր գնահատեց Հայ նախկին ռազմիկների միությանը, մասնավորապես նրա պատվո նախագահ Բաբրըջյանի հայրենասիրական գործունեությունը, որի ջանքերի շնորհիվ բավականին ծավալվել է այդ միության գործունեությունը: Պետք է նշել նաև, որ այդ օրերը Ֆրանսիայի ինչպես հետադիմական, այնպես էլ սոցիալիստական կուսակցությունները աշխատեցին օգտագործել իրենց նախընտրական կամպանիաների համար, նպատակ ունենալով միաժամանակ թուլացնել այն հեղինակությունը, որ ունի կոմունիստական կուսակցությունը Ֆրանսիայի աշխատավորության շրջանում, նրանց մամուլի էջերում այդ օրերին տպագրվեցին նյութեր, որոնցում Մանուշյանի խմբի և Մանուշյանի մատնության մեղքը բարդում էին կոմունիստների և կոմունիստական կուսակցության ղեկավարների վրա: «Յումանիտե»-ում տպագրված հոդվածը այդ առթիվ պարզաբանում էր Մանուշյանի գնդակահարության հանգամանքները և հակահարված տալիս գրպարտիչներին:

Օգտագործելով իմ ներկայությունը, ես հնարավորություն ունեցա մեկ-երկու օրվա ընթացքում դրականորեն լուծել «Աշխարհ» թերթի տպագրության հարցը, որը, ինչպես Ձեզ հայտնի է, նյութական ծանր պայմանների պատճառով փակման առաջ էր կանգնած: Վերջնականապես կարողացանք լուծել տպարանի հարցը և «Աշխարհ» թերթը ապրիլի 1-ից կտպագրվի Կլոդիկյանի տպարանում /մինչև Կլոդիկյանի մահը, ինչպես խոստացավ բարերարը/: Ընդ որում՝ թերթը չի վճարելու նրան տպարանի օգտագործման համար: Թերթը ուներ մոտ 95 հազար ֆրանկ բաց, այդ բացը կարողացանք ծածկել՝ Շվեյցարիայի Բարեգործականից խնդրելով 50 հազար ֆրանկ և «Աշխարհ» թերթին հատկացված տպարանային ծախսերի մնացորդի հաշվին: Խմբագիր Ալիքսանյանը խոստացավ ապրիլի 1-ից թերթը տպագրել Կլոդիկյանի տպարանում 8 էջով, եթե գործերը բարեհաջող ընթանան, սեպտեմբերի 1-ից՝ շաբաթը երկու անգամ: Ես կարծում եմ աշխատանքների լավ կազմակերպման և հասուն կադրեր ունենալու պարագայում Ալիքսանյանը հնարավորություն կունենա 1985թ. թերթը դարձնել ամենօրյա:

Շանր հարց էր նաև թերթի գրաշարի հարցը: Ամբողջ Ֆրանսիայում հնարավոր չէր գտնել բարձրորակ գրաշար, որ համաձայնեք աշխատել «Աշխարհ» թերթում: Եվ ահա այս հարցը նույնպես լուծեցինք և կարողացանք գրաշարական աշխատանքի վերցնել Կլոդիկյանի տպարանում աշխատող մի հիանալի երիտասարդի, որը համաձայնություն տվեց ոչ միայն գրաշարություն անել, այլև հետագայում սովորելուց հետո, կատարել նաև տպագրիչի գործը:

Հանդիպումներ ունեցա դպրոցականների հետ /Մերի Միխայիլյան դպրոց և Փարիզի Դպրոցասեր տիկնանց վարժարան/: Դպրոցների տնօրենների խնդրանքն էր՝ որքան հնարավոր է շատ գեղարվեստական և պատմական գրական-

սիական գրականության գերիքապաշտ ուղղության համահիմնադիր: Եղել է Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության ակադեմիկոս գործիչներից:

նություն ուղարկել, ինչպես նաև ձայնագրություններ և ամենակարևորը՝ տեղեր հատկացնել պիոներական ճամբարների և ուսուցիչների վերապատրաստման համար: Դժբախտաբար, Մշակութային միությունը և ԺԱՖ-ը, որոնք տնօրինում են այդ տեղերի բաշխման հարցը, այնքան էլ հաշվի չեն առնում ամենօրյա դպրոցների պահանջը և մեծ մասամբ տեղեր են հատկացնում իրենց բաժանմունքներին: Եվ որովհետև ժամանակի սղության պատճառով ես հնարավորություն չունեի այցելել տարբեր քաղաքներ, գումարվեց Մշակութայինի և ԺԱՖ-ի վարչությունների միացյալ ժողով, որին մասնակցում էին Մարսելի, Լիոնի, Վալանսի վարչություններից ներկայացուցիչներ: Այդ նիստում շոշափեցինք մի շարք հարցեր Միյուռ-Հայրենիք կապերի զարգացման հետ կապված, ինչպես նաև քննարկվեցին փառատոնի նախապատրաստության հետ կապված հարցեր: ԺԱՖ-ի ներկայացուցիչները մեծ վեճ բացեցին փառատոնի նշանաբանի վերաբերյալ և վախժով էին խոսում «Ֆառադություն և առաջադիմություն» նշանաբանի մասին: Առանձին ընկերներ իրենց թույլ տվեցին ասելու, որ եթե մենք այդ նշանաբանով առաջնորդվենք, մեր ետևից կազմակերպությունները չեն գա, և մենք կվտանգենք կազմակերպության աշխատանքը, քանզի Ֆրանսիայում հակասովետիզմը այնքան ուժեղ է, որ այդ նշանաբանը կարող է խափանել մեր աշխատանքը: Առաջարկում էին փառատոնը անցկացնել Դանիել Վարուժանի աշխատանքով և նախապատրաստական աշխատանքներ էին տարել այդ նշանաբանով: Երկար ժամանակ պահանջվեց համոզելու այդ ընկերներին, որ խաղաղությունը բոլոր ժողովուրդների ցանկությունն է, այդ թվում նաև ֆրանսիական ժողովրդի, և նույնիսկ ես ստիպված եղա ծայրահեղ հայտարարություն անել, որ ովքեր չեն ընդունում այդ նշանաբանը, նրանք չեն կարող մասնակից լինել երևանյան փառատոնին: Բանից պարզվեց, որ Դանիել Վարուժանի նշանաբանով արդեն բավականին ծրագրեր են կազմել, բլանկներ և թուղիկներ են տրվել տպագրության: Մշակութային միության և ԺԱՖ-ի ընկերները որոշ չկամությամբ, իհարկե տեղի տվեցին և ընդունեցին առաջարկը, իսկ առանձին ընկերներ նույնիսկ ներողություն խնդրեցին, որ չեն հասկացել դրա իմաստը: Ինձ համար պարզվեց նաև այն, որ Ֆրանսիայում նույնիսկ մեր առաջադիմական կազմակերպությունները զգույշ քաղաքականություն են վարում մասնավորապես անցյալ տարվա դեսպանատան որոշ աշխատողների հեռանալուց հետո: Նույնիսկ չափավորել են իրենց կապերը Սովետական Միության դեսպանատան հետ, որին խթանել է նաև այն, որ դեսպանությունում հատուկ հայ աշխատող չկա: Դեսպանատան առաջին քարտուղարը, ում հանձնարարված է այդ գործը, հնարավորություն չունի լայն շփումներ ունենալու հայկական համայնքի հետ: Այդ բանը ինձ համար շատ ավելի հասկանալի դարձավ, երբ ինձ ընդունեց սովետական դեսպանի առաջին խորհրդական Ա. Ի. Գլուխովը (դեսպանը բացակայում էր): Այդ գրույցի ժամանակ մենք շոշափեցինք բազմաթիվ հարցեր կապված Մշակութային միության գործունեության, թերթի 20-ամյակի կապակցությամբ Կոմիտասի քառյակի հրավերի, Մանուշյանի գնդակահարության 40-ամյակի և բազմաթիվ այլ հարցեր: Ինձ վրա շատ խորը տպավորություն թողեցին Գլուխովի դիվանագիտական կարողությունները և նրա հասկացողությունը հայկական համայնքի գործունեության վերաբերյալ: Նա մեծ

պատրաստակամությամբ ընդառաջեց բոլոր հարցերին: Կոմիտասի քառյակի հրավերի համար նա հանձնարարեց առաջին քարտուղարին: Այդ քարտուղարը, որը զբաղվում է հայ համայնքի հարցերով, հարցրեց խորհրդականին. «Իսկ դա ի՞նչ քառյակ է, լարայի՞ն, քանի՞ հոգուց է բաղկացած»: Գլուխովը զարմացած ասաց, որ քառյակը կազմված է լինում չորս հոգուց և Կոմիտասի անվան քառյակը նշանավոր քառյակ է, և այն ընդունվել է նույնիսկ Քենեդու կողմից, և զարմանք հայտնեց, թե առաջին քարտուղարը ինչպես չգիտի այդ քառյակի մասին: Իսկ վերջինս իրենն էր պնդում. «Գաղափար չունեմ»: Պարզ է, որ նման աշխատողը չէր կարող հայ համայնքի հետ մոտ շփումներ ունենալ, քանի որ չգիտի այդ ժողովրդի պատմությունն ու մշակույթը: Եվ ես հենց այս առիթով հարց բարձրացրեցի սովետական դեսպանությունում հայ աշխատող ունենալու անհրաժեշտության մասին: Նա ասաց, որ այդ մասին ինքը մտածել է և առաջիկայում, երբ լրանա որևէ աշխատողի ժամկետը, ինքը կբարձրացնի հայ աշխատող ունենալու հարցը: Չնայած աշխատողի բացակայության, և՛ մշակութային գործիչները և՛ ֆրանսահայ բազմաթիվ մտավորականներ գոհ էին ինչպես նախկին, այնպես էլ ներկայիս դեսպանի վերաբերմունքից, որոնք մշտապես ընդառաջում են ֆրանսահայության բոլոր խնդրանքներին:

Փարիզում գտնվելու օրերին հնարավորություն եղավ ստեղծել նաև փառատոնի նախապատրաստման հանձնախումբ, որի նախագահ համաձայնեց դառնալ Գառզուն: Այս հանգամանքը մեծ խանդավառություն առաջացրեց և կազմակերպվեց մեծ կոկտեյլ փառատոնի նախապատրաստման և անցկացման նպատակով: Կոկտեյլին մասնակցում էր շուրջ 30 մարդ, բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, մտավորականներ, կոմպոզիտորներ, խմբավարներ, պարուսույցներ, ինքնագործունեության ղեկավարներ, թերթերի թղթակիցներ: Այստեղ Գառզունի բացման խոսքից հետո փառատոնի նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդումով հանդես եկավ ԺԱՖ-ի նախագահ Մասիս Փախլանյանը, որը հիանալի շարադրեց այն անելիքները, որոնք ունեն կազմակերպությունները փառատոնին նախապատրաստվելու և հոկտեմբերին համաֆրանսիական փառատոն անցկացնելու համար: Ես նույնպես խոսեցի փառատոնի պայմանների և նախապատրաստության մասին: Անկեղծ ասած, ներքին վախ զգացի տեսնելով այդ խանդավառությունը և այն ծրագրերը, որ մշակված են կազմակերպությունների կողմից և մտովի հաշվումներ կատարեցի. եթե համաֆրանսիական փառատոնում տարբեր ժանրերի գծով մրցանակ շահած խմբերին մենք հրավիրենք 1985-ին, ապա այլ գաղութներից հազիվ թե հնարավորություն ունենանք հրավիրելու:

Կոկտեյլին մասնակցում էր «Նավասարդ» խմբի ղեկավարը, մի խումբ, որը արդեն վերջին տարիներին հաջող ելույթներ է ունենում ոչ միայն Ֆրանսիայում, այլև Եվրոպայի մի շարք երկրներում: Այս տարի հրավեր է ստացել ելույթներ ունենալ Ամերիկայում: Կամ Մարսելի ԺԱՖ-ի պարախումբը, որի համար արդեն երեք տարի է մենք պարուսույց ենք գործուղում: Իսկ եթե դրան ավելացնենք Բարեգործական քառյակի խումբը, դպրոցների խմբերը և դրամատիկ և այլ խմբեր, ապա թիվը կհասնի շուրջ 300-ի: Դեռ չենք ասում Մարսելում

գործող մեծ քառյակի խմբի մասին՝ Արշ. Բաբայանի ղեկավարությամբ, որը համերգներ է տալիս Մարսելի օպերային թատրոնում:

Մի խոսքով՝ ծանր կարող է լինել տեղերի բաշխումը, եթե մենք նախօրոք չնախապատրաստվենք սահմանված թվերը որոշ չափով փոփոխելու: Այդտեղ պարզվեց նաև, որ ԺԱՖ-ը նախապատրաստվում է 1985թ. հուլիսին մասնակցելու Մոսկվայում կայանալիք համաշխարհային փառատոնին: Եվ եթե ժամկետները չհամապատասխանեցվեն, ԺԱՖ-ը չի կարող երկու անգամ իր խմբերը ուղարկել Մոսկվական Միություն:

Փարիզում արդեն մեկ տարուց ավել գործում է «Ազգ» հայկական ռադիոկայանը, որը ամենօրյա 8-ժամյա հաղորդումներ է կազմակերպում Հայաստանի, հայ պատմության, հայ մշակույթի վերաբերյալ: Այն չեզոք կայան է և ավելի շատ կապված է Մոսկվական Հայաստանի հետ, մենք նույնպես բազմաթիվ նյութեր ենք ուղարկել: Ես հանգամանալից, մեկժամյա ելույթ ունեցա, որը հետաքրքարվեց ռադիոկայանով:

Մեկ տարի է նաև, որ հայ չեզոք երիտասարդների միջոցով ստեղծվել է հայկական կենտրոն՝ նպատակ ունենալով պրոպագանդել հայ մշակույթը, հայ ճարտարապետությունը, պատմությունը: Ավ. Ալիքսանյանի և Դարբինյանի³⁸⁹ հետ այցելեցինք այդ կենտրոնը: Փարիզի կենտրոնում հինգ սենյակ, ուր ստեղծվել են գրադարան, ցուցադրման սրահ/դիապոզիտիվներով/ և հեռուստացույց՝ տեսագրված ժապավեններով, աշխատանոցներ, գրասենյակ: Գրադարանը իհարկե առայժմ աղքատ է, նոր է ստեղծվել, խոստացանք օգնել: Կենտրոնում դիտեցինք այդ երիտասարդների կողմից Հայաստանում նկարահանված «Հայաստանի բնաշխարհը» ժապավենը: Հավանաբար մեր կոմիտեն ավելի ուշադիր պետք է լինի այդ կենտրոնի նկատմամբ: Ուրախալի է, որ այդ կենտրոնի շուրջ համախմբված են բազմաթիվ մտավորական երիտասարդներ, ինչպես նաև Հայաստանի ԲՈՒՀ-երի շրջանավարտներ:

Առանձին հանդիպումներ ունեցա նաև մշակութային գործիչների, խմբագրությունների աշխատողների, Հնչակյան կուսակցության ղեկավարների հետ: Պետք է խոստովանեմ, որ Լիբանանից եկած երիտասարդական ուժերի շնորհիվ աշխուժացել է հնչակյան կուսակցության գործունեությունը և արդեն ստեղծվել է նոր մշակութային կազմակերպություն, որը ծավալուն աշխատանք է կատարում Ֆրանսիայում և հավանաբար մոտ ժամանակներում կունենա իր հավաքատեղին:

Ֆրանսիայում մշակութային կազմակերպությունների, առանձին գործիչների մտահոգության առարկան էր նաև նոր Առաջնորդի ընտրությունը: Մերովրե արքեպիսկոպոս Մանուկյանի³⁹⁰ մահից հետո թափուր աթոռի թեկնածու է համարվում տեղապահ Գյուրո³⁹¹ եպիսկոպոսը, որի շուրջը մեծ խոսակցություններ

389. Ակատի ունի ֆրանսիահայ հասարակական գործիչ Ադամի Արտակի Դարբինյանին:

390. Մանուկյան Սերովրե արք. (1908, գ.Մվտան, Վանի նահանգ - 1984, Փարիզ) - Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ, Ֆրանսիայի թեմի առաջնորդ 1953-ից և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ մինչև վախճանումը:

391. Նազգաշյան Գյուրո արք. (ծնվ. 1933, Հալեպ) - Կուսակրոն քահանա է ձեռնադրվել 1955թ.՝ իբրև Գիլիկիո Աթոռի միաբան, հետագայում միացել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության: 1984թ. շուրջ 20 տարի վարել է Փարիզի թեմի առաջնորդի պաշտոնը:

են պատվում: Դժբախտաբար զգալի է բացասական կարծիքը, նույնիսկ ոմանք նրան համարում են քրեական տիպ: Այդ հարցով գաղութը շատ մտահոգ է, շատերը այդ հարցով զրույցներ ունեցան ինձ հետ: Ես հայտնեցի, որ առնչություն չունեմ հոգևոր գործերին, սակայն նրանք խնդրեցին իրենց մտահոգությունը հայտնել Վեհափառին: Նույնիսկ Նուրհան Ֆրանկյանը³⁹², որը հանդիսանում է Եկեղեցական խորհրդի նախագահ և Վեհափառի ամենավստահելի մարդկանցից մեկն է և Էջմիածնի մեծ նվիրատու, հայտնեց, որ եթե Գյուտը լինի Առաջնորդ, ապա ամբողջ ֆրանսահայ գաղութը տանուլ կտա իր գործունեությունը: Նա խնդրեց իր նամակը հանձնել Վեհափառին: Ես իհարկե ծանոթ չեմ նամակի բովանդակությանը, սակայն երբ Երևանում հանդիպեցի Վեհափառին և հայտնեցի այդ մասին, նա ասաց, որ ինքը տեղյակ է այդ ամենին, սակայն Գյուտը պետք է ընտրվի Առաջնորդ: Ինչպես երևում է, Գյուտը նույնպես նախապատրաստական աշխատանք է կատարել իր թեկնածության համար, որովհետև Վեհափառն ասաց, որ Փարիզից զանգել են մի քանի եկեղեցականներ և հայտնել, որ պետք է Գյուտին ընտրեն Առաջնորդ:

Փարիզում գտնվելու օրերին իմ պատվին ընդունելություն կազմակերպեց Իսի-լե-Մուլինոյի քաղաքապետը՝ Սանտընը: Այդ քաղաքում ապրում է շուրջ 10 հազար հայություն: Ինքնատիքյան հասկանալի է, որ քաղաքապետը նախընտրական կամպանիայի համար է կազմակերպել այդ ընդունելությունը: Ես չէի կարող մերժել, քանզի այդ քաղաքում վերջին տարիներին կառուցվել է Եղեռնի հուշարձան, առանձին հողամաս է հատկացվել հայկական դպրոց կառուցելու համար, ինչպես նաև տեղեկացրին, որ քաղաքապետը ցանկություն ունի Բանիո քաղաքի օրինակով բարեկամական կապեր հաստատել Հայաստանի որևէ քաղաքի հետ: Ընդունելությանը ներկա էին մեծ թվով պառլամենտի և քաղաքապետարանի անդամներ: Հանդես եկավ քաղաքապետը: Խոսեց հայանպաստ այն գործունեության մասին, որ ծավալել են իրենք: Ես շնորհակալություն հայտնեցի ընդունելության համար, ապա հայտնեցի, որ առաջարկը միջպետական հարց է և նրանք պետք է ուղղակի դիմեն մեր հանրապետության ղեկավարությանը:

Նույն քաղաքապետը իմ պատվին տվեց ճաշկերույթ շուրջ 100 հոգու համար: Ներկա էին Ֆրանսահայ մշակութային միության, ԺԱՖ-ի ներկայացուցիչներ, «Աշխարհ» թերթի խմբագիրը: Իմ պատվին ողջերթի ճաշկերույթ կազմակերպեց նաև Հայ նախկին ռազմիկների միությունը, որին մասնակցում էին բոլոր այն երկրների նախկին ռազմիկների ներկայացուցիչները, ովքեր մասնակցել էին Մանուշյանի գնդակահարության 40-ամյակի արարողություններին: Այս ճաշկերույթը վերածվեց հայ ժողովրդի և Հայաստանի փառաբանման երեկոյի: Հետաքրքիր էր իտալացի նախկին ռազմիկների միության ներկայացուցչի ելույթը, որը խոսելով հայ ժողովրդի հերոսական անցյալի, նրա զավակների մասին, անկեղծորեն խաստովանեց, որ ինքը բարի նախանձով էր լցվում այդ ամբողջ արարողությունների ժամանակ, տեսնելով թե ինչպես է փառաբանվում Մանուշյանը:

392. Ֆրանկյան Նուրհան – Ֆրանսահայ բարերար, հասարակական գործիչ, Մայր Աթոռի բարերար: Եղել է Փարիզի թեմի Թեմական խորհրդի նախագահը:

Հայ նախկին ռազմիկների միության առանձին ղեկավարներ, որոնք շատ ակտիվ դեր են խաղում Ֆրանսիայի պետական շրջանակներում և ակտիվ կապերի մեջ են Սովետական Միության պատերազմի վետերանների կազմակերպության հետ, խնդրեցին հայտնել նաև, որ Փարիզի քաղաքապետ Շիրակը³⁹³ նույնպես ցանկություն է հայտնել Հայաստան այցելելու: Նա սպասում է հրավերի և գտնում է, որ այդ հրավերը պետք է լինի Մոսկվայի միջոցով: Եթե այդ հրավերը կազմակերպվի, ապա այն մեծ դեր կխաղա հետագայում ֆրանս-սովետական հարաբերությունների բարելավման համար:

Բազմաթիվ հանդիպումներ ունեցաւ տարբեր երկրների ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումներից կարևորը իրանահայ առևտրական Գր. Ահարոնյանի հետ էր, որը եկել էր ինձ մոտ կեսժամյա տեսակցության՝ իրանահայ դուկտոր Փափազյանի հետ /վերջինս Երևանի Մատենադարանի ավագ գիտաշխատող, բաժնի վարիչ, ճանաչված պատմաբան Հակոբ Փափազյանի եղբայրն է/, որը մեկ տարի առաջ Հայաստան էր այցելել կոմիտեի հրավերով:

